ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԼԻՊԱՐԻՏԻ

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՆՐԱ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՐՁԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԵՏ

Ատենախոսություն

Ժ.02.01. «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի համար

Երևան - 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 5
ԳԼՈՒԽ I
ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐՈՐԵՆ ՆՐԱՆ ՄԵՐՁԱՎՈՐ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

1. Բայազետի բարբառը հայ բարբառագիտական մտքի գնահատմամբ..... 21
2. Բայազետի բարբառի տարածական հիմքերը..... 25
3.Տարբերակային դրսևորումներ Բայազետի բարբառում..... 29
4. Ընդհանուր տեղեկություններ Բայազետի բարբառին պատմաաշխարհագրորեն մերձավոր բարբառների վերաբերյալ 41

ԳԼՈՒԽ II

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՇՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

1. Հնչյունական համակարգ..... 54
2. Հնչույթային համակարգ..... 67
3. Շեշտ..... 86
4. Արտաբերական օրինաչափություններ, հնչյունական օրենքներ..... 89
4.1. ° և ° հնչյունները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը»..... 89
4.2. Հ-խ համապատասխանությունը..... 102
4.3. Հպական ու հպաշփական բաղաձայնների զուգորդելիությունը բառասկզբում՝ ըստ ձայնի և աղմուկի հարաբերության..... 109
5. Հնչյունափոխական իրողություններ..... 114
5.1. Պատմական հնչյունափոխություն..... 115

5.2. Փոխազդեցական հնչյունափոխություն 138
5.3. Շեշտափոխական հնչյունափոխություն 146
ԳԼՈՒԽ III
ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. Բառապաշարի շերտերը 152
2. Իմաստաբանական իրողություններ 193
3. Բառակազմական իրողություններ 211
ԳԼՈՒԽ IV
ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ՝ ՇՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
1. Գոյական անուն 222
1.1. Թվի կարգը 222
1.2. Հոլովի կարգը 236
1.3. Առկայացման կարգը 262
2. Ածական անուն 267
3. Թվական անուն 273
4. Դերանուններ 277
4.1. Անձնական դերանուններ 277
4.2. Ցուցական դերանուններ 281
4.3. Ստացական դերանուններ 292
4.4. Հարցաիարաբերական դերանուններ 294
4.5. Որոշյալ դերանուններ 297
4.6. Անորոշ դերանուններ 299

4.7. Փոխադարձ դերանուններ 300
4.8. Ժխտական դերանուններ 301
5. Բայ 301
5.1. Բայի կազմությունը 301
5.2. Խոնարհիչ և խոնարհում 307
5.3. Բայահիմքեր 309
5.4. Բայի սեռը 311
5.5. Դերբայներ 319
5.6. Եղանակաժամանակային ձևեր 333
5.6.1. Սահմանական եղանակ 338
5.6.2. Ըղձական եղանակ 345
5.6.3. Ենթադրական եղանակ 347
5.6.4. Հարկադրական եղանակ 349
5.6.5. Հրամայական եղանակ 350
5.7. Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր 351
5.8. Անկանոն բայեր 352
5.9. Պակասավոր բայեր 358
5.10. Հարադրական բայերի խոնարհումը 359
5.11. Ժխտական խոնարհում 360
6. Մակբայ 362
7. Կապ 364

8. Ծաղկապ..... 367
9. Վերաբերականներ..... 369
10. Ձայնարկություններ..... 370

ԳԼՈՒԽՎ

ԲԱՅԱԶԵՏԻ ԵՎ ԱՌՆՉԱԿԻՑ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ-ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայազետի բարբառի հնչյունաքերականական առնչությունները շրջակա բարբառների հետ..... 371
1.1. Առնչությունները ըստ հնչյունական հատկանիշների..... 375
1.2. Առնչությունները ըստ քերականական հատկանիշների..... 384
2. Բայազետի և շրջակա բարբառների բառային հիմնական տարբերություններն ու ընդհանրությունները..... 395
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 408
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 417
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 419
ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառագիտության զարգացման ներկա փուլում, երբ մեծ ուշադրություն է դարձվում բարբառագիտական այնպիսի խնդիրների, ինչպիսիք են բարբառային հատկանիշների ու զուգաբանությունների տարածական ընդգրկումը, բառապաշարի շերտերի, իմաստային խմբերի տարածագործառական բնութագրերը, քերականական առանձին իրողությունների դրսևորումների յուրահատկությունները, շարունակում են արդիական մնալ կարևորագույն այնպիսի հարցեր, ինչպիսիք են բարբառագիտական տեսական խնդիրների արծարծումը, առանձին բարբառների՝ համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով համակարգային քննությունը, մերձավոր բարբառների, բարբառային խմբերի համեմատական և պատմական ուսումնասիրությունը:

Հայ լեզվաբանական միտքը զգալի ձեռքբերումներ ունի բարբառների ուսումնասիրության հարցում թե՛ տեսական և թե՛ գործնական առումներով: Բարբառների ուսումնասիրության տեսական հարցեր արծարծվել են շատ հայ լեզվաբանների աշխատություններում[1]: Գործնական նպատակներ հետապնդող՝ առանձին բարբառների նվիրված աշխատություններում և բարբառային երևույթների համեմատական ու պատմական հետազոտությանը նվիրված աշխատանքներում արվել են նաև տեսական բնույթի դիտարկումներ[2]: Հայերենի բարբառներին առնչվող մի շարք հարցեր

---

[1] Նկատի ունենք Ք.Պատկանյանի, Ա.Այտընյանի, Լ.Մսերյանցի, Հ.Աճառյանի, Մ.Աբեղյանի, Ա.Ղարիբյանի, Ա.Գրիգորյանի, Է.Աղայանի, Գ.Ջահուկյանի, Հ.Մուրադյանի, Ա.Ե.Խաչատրյանի, Մ.Աղաբեկյանի, Գ.Գևորգյանի և այլոց աշխատանքները (տե՛ս գրականության ցանկում):

[2] Հիշատակելի են Է.Աղայանի «Մեղրու բարբառը» (Ե., 1954), Դ.Կոստանդյանի «Երզնկայի բարբառը» (Ե., 1979), Ա.Հանեյանի «Տիգրանակերտի բարբառը» (Ե., 1978), Ա.Ղարիբյանի «Հայ բարբառների ծագման հարցի շուրջ» (Պատմաբանասիրական հանդես /այսուհետ՝ ՊԲՀ/, Ե., 1958, 3, էջ 240-260), Լ.Հովհաննիսյանի «Գրաբարի և Ղարաբաղի բարբառների առնչության հարցի շուրջ» (ՊԲՀ, Ե., 1977, 1, էջ 144-153), Հ.Մուրադյանի «Լեզվաբանական աշխարհագրությունը և նրա խնդիրները» (Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 6-27), Մ.Աղաբեկյանի «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն» (Հայերենի բարբառագիտական ատլաս, պր.3, Ե., 2010, էջ 154-165), Ժ.Միքայելյանի «Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն)» (Ե., 2009), Ջ.Բառնասյանի «Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում» (Ե., 2009), Ա.Հանեյանի «Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում» (Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010, էջ 166-231), Հ.Մեսրոպյանի «Աճականական հոմանիշները հայերենի բարբառներում» (Ե., 2010), Գ.Գևորգյանի «Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի

գրավել են նաև օտար հետազոտողների ուշադրությունը[3]: Այդ ամենը հաշվի առնելով՝ հարկ ենք համարում նախ անդրադառնալ առավել էական որոշ հարցերի և ներկայացնել դրանց շուրջ մեր պատկերացումները, որոնցով առաջնորդվել ենք այս աշխատանքը կատարելիս:

Հայ լեզվաբանության մեջ, կարծում ենք, քննարկման կարիք ունի բարբառի ըմբռնման հարցը: Լեզվի այս գոյաձևը մեկնաբանելիս ուշադրության արժանի մի շարք դիտարկումներ են կատարվել: Կարևոր են Ք.Պատկանյանի՝ բարբառները իբրև լեզվի տեսակներ բնորոշումը, ցանկացած կենդանի լեզվում դրանց առկայության վերաբերյալ դրույթը[4], Ա.Այտընյանի՝ բարբառը իբրև լեզվի՝ մշակման չենթարկվող, փոփոխությունների առավել ենթակա տարբերակ ընկալումը[5], Հ.Աճառյանի՝ լեզուն իբրև անհամար բազմազանությունների շարք բնութագրումը[6], Աբեղյանի՝ բարբառը իբրև նույն լեզվին պատկանող մարդկանց մի մասի տեղական խոսվածք բնորոշումը ևն[7]: Մյուս կողմից՝ այսպես կոչված «ստալինյան լեզվաբանական ուսմունքի» լույսի ներքո հայ իրականության մեջ ընդունվել է բարբառների բնութագրումը իբրև ընդհանուր լեզվի ճյուղավորումներ[8]: Բարբառներին վերագրվել է ընդհանուր լեզվի ստորին ձևերի կարգավիճակ[9], անգամ համարվել, որ բարբառների հարատևումը ժողովրդի դարավոր հետամնացության

տարածագործառական բնութագրերը» (Ե., 2013), Հ.Խաչատրյանի «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» (Ե., 2009), Ա.Աբրահամյանի «Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում» (Ե.,2003) և այլ աշխատանքներ:

[3] J. J. S. Weitenberg, Aspects of Armenian dialectology, Present-day Dialectology, Problems and Findings, Berlin –New York, 2002, p. 141-158, W. S. Allen, Notes on the phonetics of an Eastern Armenian speaker. Transactions of the Philological Society of America, 1950, 200p., A.Pisowicz, Le developpement du consonantisme armenien, Krakow, 1976, 115p., B.Vaux, The Phonology of Voiced Aspirates in the New Julfa Dialect of Armenian, 25 p., http://www.academia.edu/4101967 ևն:

[4] Տե՛ս К.Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869, էջ 2:

[5] Ըստ Այտընյանի՝ «Բնական է մտածել՝ որ երբ մէկ կողմանէ դպրաց դասու մը տկար եղեգներուն յեցած ազնուագոյն լեզուն իւր գոյութիւնը հաստատ բռնել կը ջանար, միւս կողմանէ ժողովրդեան բազմութիւնն իւր ցածագոյն բարբառը՝ նորանոր փոփոխութիւններովն ու աղաւաղութիւններովը մէկտեղ կը շարունակէր» (Ա.Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 48):

[6] Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն (այսուհետ՝ ՀԼՊ), մաս 2, Ե., 2013, էջ 324-325:

[7] Մ.Աբեղյան, Երկեր, հ.2, Ե., 1974, էջ 47:

[8] Տե՛ս Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 39:

[9] Տե՛ս նշվ. աշխ., էջ 3:

հետևանք է[10]: Խորհրդային լեզվաբանության մեջ բարբառների ընկալումը իբրև անցյալի մնացուկներ, ինչպես նշվում է ռուս բարբառագիտության մեջ[11], պայմանավորված է եղել հասարակական և քաղաքական գործոններով: Մի կողմից՝ գյուղացիությանը գյուղատնտեսական բանվոր դասակարգի վերածելու նպատակով 20-րդ դարի երեսունական թվերից ձևավորվում է բացասական վերաբերմունք գյուղացիության, նրա մշակույթի և կենցաղի, բարբառների՝ իբրև գյուղական լեզվի նկատմամբ, մյուս կողմից՝ նույն այդ շրջանում առաջ է քաշվում ազգային մշակույթների և լեզուների մերձեցման գաղափարը, որի արդյունքում սոցիալիստական հասարակության մեջ աստիճանաբար պետք է վերանային տարբեր լեզուները, և ձևավորվեր միասնական լեզու, որի հիմքում պետք է ընկած լիներ գրական ռուսաց լեզուն[12]: «Համաձայն դրա էլ ռուսաց լեզվի բարբառները (բնականաբար նաև այլ լեզուների, այդ թվում՝ նաև հայերենի բարբառները – Վ.Կ.) հռչակվեցին անցյալի մնացուկ, շեղում գրական լեզվից, նրա աղավաղում»[13]: Հ.Աճառյանը դեմ էր բարբառները լեզվի ստորին վիճակներ համարելուն և նման պատկերացումներում որոշակի վտանգ էր տեսնում՝ գրելով. «Լեզուն, կամ նաև գրական լեզուն էլ բարբառներից մեկն է և հաճախ ավելի ուշ կազմված, քան մի ուրիշ բարբառ: Տգիտություն է բարբառներից մեկը մյուսին ստորադաս համարելը: ....Եթե կա նախապատվության զգացմունքը բարբառների միջև, ինքնին հասկանալի է, որ նույնը ավելի մեծ չափերով պիտի լինի նաև լեզվից լեզու և հատկապես տիրող ազգերի և նվաճված ազգերի լեզվի միջև»[14]: Բարբառի աճառյանական այս ըմբռնումին համահունչ պատկերացում ենք գտնում 20-րդ դարավերջի անգլիական բարբառագիտական աշխատանքում, որի հեղինակների համոզմամբ՝ ինչպես անգլերենի ցանկացած դրսևորում, ստանդարտ անգլերենը

[10] Նշվ. աշխ., էջ 4: Գուցե և Ա.Ղարիբյանը ստիպված էր բարբառների մասին հայտնել ստալինյան ուսմունքի ոգուց բխող կարծիք, մանավանդ որ մեծապես կարևորում էր բարբառների դերը լեզվի ուսումնասիրության հարցում (տե՛ս նույն տեղում), սակայն բարբառի նկատմամբ նման պատկերացումները լայն տարածում ստացան և հայ իրականության մեջ այսօր ևս գերիշխող են:
[11] Տե՛ս Русская диалектология, Под редакцией Л.Л.Касаткина, М., 2005, с 13-14.
[12] Տե՛ս նույն տեղում:
[13] Տե՛ս նշվ. աշխ., էջ 14:
[14] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետ՝ ԼՔՀԼ), Ներածություն, Ե., 1955, էջ 140:

ևս նույն հաջողությամբ բարբառ է, և չպետք է կարծել, թե որևէ բարբառ լեզվաբանական առումով գերադասելի է մյուսներից[15]: Հայ իրականության մեջ լեզվի ճյուղավորում լինելը մնում է իբրև բարբառի՝ համընդհանուր ընդունելության արժանացած որակում[16]: Է.Աղայանը, բարբառը ներկայացնելով իբրև լեզվի տարածական տարբերակ, այն բնորոշում է այսպես. բարբառ է կոչվում ընդհանուր լեզվի ճյուղավորումը հանդիսացող այն համակարգը, որն իր յուրահատկություններով ընդհանուր է հասարակության այս կամ այն հատվածին՝որոշ տարածքի վրա[17]: Նման մեկնաբանությամբ[18] երևույթը ներկայացվում է այլ, ավելի ընդհանուր, ինչպես նաև արտալեզվական (տարածություն) իրողությունների նկատմամբ ունեցած հարաբերությամբ: Է.Աղայանը պնդում է. «բարբառները իրենց քերականությամբ, բառապաշարով ու հնչյունական համակարգով ոչ այլ ինչ են, եթե ոչ ընդհանուր լեզվի ձևափոխված վիճակը՝ այս կամ այն տարածքային հատվածում»[19], որից ենթադրվում է, որ նախնական միասնական և ընդհանուր լեզվավիճակը այս կամ այն տարածքում ենթարկվել է ձևափոխությունների՝ առաջ բերելով բարբառներ: Բարբառների առաջացման վերաբերյալ նաև կարծիք է եղել, թե իբր պարտված, մահացող լեզուները, ենթարկվելով և խառնվելով հաղթած լեզվին, առաջացնում են նրա բարբառները[20]: Ըստ մեկ այլ տեսակետի՝ բարբառները հնագույն շրջանում առաջանում են տոհմերի, ցեղերի տրոհման միջոցով, ապա՝ դրանց միացման ճանապարհով ևն[21]: Բոլոր այս տեսակետներն էլ հիմնվում են այն ըմբռնման վրա, որ որևէ լեզվի գործառության ընթացքում բարբառները միշտ չէ, որ գոյություն են ունեցել, և միշտ չէ, որ գոյություն կունենան: Համարվում է, որ հասարակության զարգացմամբ մեծանում է գրական

---

[15] Տե՛ս J.K.Chambers, Peter Trudgill, Dialectology, C., 1980, p. 3.

[16] Տե՛ս Ա.Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957, էջ 9. Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարագյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975 (այսուհետ՝ ԼԲ), էջ 59:

[17] Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 92:

[18] Թերևս չբավարարվելով հիշյալ սահմանումով՝ Է.Աղայանը այնուամենայնիվ փորձել է լրացուցիչ բացատրություն տալ՝ գրելով, թե հենց այն, ինչը որ առանձնացնում, տարբերում է բարբառը ընդհանուր լեզվից՝կազմում է բարբառի էությունը (տե՛ս Է.Աղայան, նշվ աշխ., էջ 93)

[19] Նույն տեղում:

[20] Այս մասին տե՛ս Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 39:

[21] Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56:

լեզվի ազդեցությունը, և բարբառները աստիճանաբար վերանում են[22]:

Բարբառի էությունը գիտականորեն բնութագրելու համար թերևս անհրաժեշտ է վերադառնալ Ք.Պատկանյանի, Ա.Այտընյանի, Մ.Աբեղյանի և Հ.Աճառյանի՝ իրողությանը տրված բնութագրումներին, ըստորոնց՝ բարբառի ամենաէական հատկանիշը նրա՝ լեզվի բնական և գիտակցականորեն չնորմավորված վիճակ կամ տեսակ լինելն է: Բարբառը բնութագրվում է հնչյունական, բառապաշարային և քերականական ներքին անմիօրինակությամբ, ձևերի բազմազանությամբ, անկանոնություններով. այն լեզվի չկարգաբերված վիճակն է, որը տարածքից տարածք հանդես է բերում զանազանություններ: Այդ ամենով հանդերձ՝ բարբառը չի դադարում համակարգ լինելուց. լեզվի գոյության ցանկացած նման ձև ունի լեզվական հատկանիշների իր յուրահատուկ կազմությունը, որը այդ կարգի որևէ այլ ձևի հետ երբեք նույնական չէ[23]: Իրավացի է անգլիացի լեզվաբան Ջոն Լայոնզը, երբ գրում է, թե բարբառները բոլորովին էլ կանոնական գրական լեզվի անկատար ու աղավաղված տարբերակները չեն, չնայած առավել կամ պակաս ինքնուրույն են զարգանում: Քերականական կառուցվածքի, արտասանության և բառապաշարի առումներով բարբառները նույնքան համակարգային են և նույնքան պիտանի հաղորդակցման համար, որքան գրական լեզուն[24]: Ասվածը նկատի ունենալով՝ նպատակահարմար ենք համարում բարբառը բնութագրել իբրև տվյալ լեզվի՝ գիտակցական նորմավորման ու կարգաբերման չենթարկված, բնական գոյաձևը կամ վիճակը ներկայացնող համակարգ, որն իր հատկանիշների յուրահատուկ զուգորդումներով տարբերվում է նույն լեզվի՝ այլ

[22] Փաստորեն, բարբառները հակադրվում են գրական լեզվին: Ճիշտ է, հաճախ ընդգծվում է, որ բարբառները գրական լեզվի հարստացման աղբյուր են, կարևոր դեր ունեն ընդհանուր լեզվին առնչվող բազում հարցեր պարզաբանելու առումով, բայց միաժամանակ նշվում է, որ եթե գրական լեզուն ընդհանուր լեզվի բարձրագույն դրսևորում է, ապա բարբառները լեզվի ստորին ձևեր են և բռնել են մահացման ուղին (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 3-4, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 44-46):

[23] Իհարկե, տարածքից տարածք բարբառները միմյանցից տարբերվում են ոչ թե իրենց բոլոր հատկանիշներով, այլ բարբառային հատկանիշների յուրահատուկ զուգորդումներով: Բարբառները ամենևին էլ հեղհեղուկ, անկայուն ու կամայական իրողություններ չեն: Դարերի ընթացքում սերունդները ավանդույթի ուժով, ինքնաբերաբար պահպանել ու զարգացրել են իրենց բարբառը՝ առանց գիտակցական միջամտության ու վերահսկողության:

[24] Джон Лайонз, Введение в теоретическую лингвистику, Москва, 1978, с 52.

տարածքներում դրսևորվող համանման համակարգային դրսևորումներից: Լինելով նույն լեզվի դրսևորումներ՝ բարբառները իրենց հիմնական հատկանիշներով նույնական են, սակայն յուրաքանչյուր դեպքում ընդհանուր հատկանիշները ուղեկցվում են մասնավոր հատկանիշների յուրահատուկ փնջերով, որոնցով էլ բարբառները դառնում են նույն լեզվի տարբեր գոյաձևեր: Հետևում է, որ բարբառների առաջացման բուն պատճառը լեզվի բնական վիճակի անմիօրինակությունն է՝ պայմանավորված լեզուն կրողների և օգտագործողների բնական անմիօրինակությամբ[25] և ապանա՝ բոլոր լեզվակիրների միասնական հաղորդակցման անհնարինությամբ[26]: Իհարկե, բարբառների ձևավորման հարցում չի կարելի բացառել արտալեզվական գործոնների դերը[27]:

Նկատի ունենալով, որ հայերենի բոլոր բարբառները լեզվի նույն կարգի գոյաձևեր են, որոնք տարբերակվում են յուրահատկություններով, բայց և միավորվում են իրենց ընդհանրություններով՝ բարբառների ամբողջությունը կարելի է անվանել բարբառային հայերեն[28], որի հիման վրա էլ ձևավորվել են խոսակցական և գրական հայերենները: Բարբառային հայերենում դրսևորվող ընդհանուր հատկանիշները նաև լեզվի ընդհանուր հատկանիշներ են. չի կարող լինել հայոց լեզվի ընդհանուր որևէ հատկանիշ, որն իր արտահայտությունը չունենա բարբառային հայերենում: Այդ ընդհանրությունները լեզվի բոլոր դրսևորումների միջուկն են կազմում, դրանք հայոց լեզվի շրջա-

---

[25] Իբրև բարբառների առաջացման պատճառներ նշվող՝ ցեղերի անջատումն ու միացումը, ֆեոդալական մասնատվածությունը, աշխարհագրական ու տարբեր բնույթի այլ գործոններն իրականում բարբառային տարբերությունների խորացման պայմաններ են:

[26] Ինչպես նկատում է Մ.Աբեղյանը, «Նույնիսկ միևնույն լեզվական շրջանին պատկանող անհատները միմյանց բոլորովին նման չեն խոսում, այլ յուրաքանչյուրն ունի իր ուրույն անհատական լեզուն: Դա բնական հետևանք է խոսվածքի սովորական գործունեության» (Մ.Աբեղյան, Երկեր, Զ, Ե., 1974, էջ 36):

[27] Իրավացի է Հ.Մուրադյանը, երբ գրում է. «Բարբառային առանձին գոտիների գոյությունը (իրենց ուրույն բառային ու հնչյունաքերականական առանձնահատկություններով) ամենայն հավանականությամբ արդյունք են ոչ միայն լեզվի ներքին զարգացման օրինաչափությունների, այլև արտալեզվական որոշ գործոնների ազդեցության» (Հ.Մուրադյան, Լեզվաբանական աշխարհագրությունը և նրա խնդիրները, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 26):

[28] Ռուս լեզվաբանության մեջ *բարբառային լեզու* հասկացությունը ներմուծել է Ռ.Ավանեսովը (տե՛ս Русская диалектология, М., 2005, էջ 16):

նակներում գործառող լեզվական հանրույթներ են[29], որոնք կազմում են ընդհանուր հայերենի հիմքը, ատաղձը կամ միջուկը[30]: Հանրույթների այդ ամբողջությունը, համալրվելով մասնավոր հատկանիշների այս կամ այն խմբով, հանդես է գալիս իբրև լեզվի դրսևորման այս կամ այն տարբերակ, բարբառային հայերենում՝ առանձին բարբառային միավոր՝ բարբառ, ենթաբարբառ կամ խոսվածք[31]:

Եթե բարբառային հայերենի միասնականությունը ապահովում են ընդհանրությունները կամ հանրույթները, ապա նրա էությունը առաջին հերթին բնութագրում են լեզվական իրողությունների տարբերակային դրսևորումները: Ընդհանրապես, տարբերակայնությունը ոչ միայն բարբառի, այլև լեզվի կարևորագույն հատկանիշներից է[32]: Իրականության մեջ լեզվական ցանկացած

---

[29] 20-րդ դարի երկրորդ կեսին առաջադրվում է լեզվական հանրույթների (ունիվերսալիաների) խնդիրը, հրապարակվում է «Լեզվական հանրույթների մասին հուշագիրը», որի հեղինակները նշում են. «Աշխարհի լեզուների անսահման ու ապշեցուցիչ բազմազանության հետևում թաքնված են նրանց բոլորի համար ընդհանուր հատկություններ: Բոլոր անսահման տարբերություններով հանդերձ՝ պարզվում է, որ լեզուները ստեղծված են կարծես մեկ միասնական օրինակով» (Меморандум о языковых универсалиях, Новое в лингвистике, выпуск V, М., 1970, էջ 31): Լեզվական հանրույթը (ունիվերսալիան) Չ.Հոկետը սահմանում է հետևյալ կերպ. «Լեզվական հանրույթը որևէ հատկանիշ է կամ հատկություն, որը հատուկ է բոլոր լեզուներին կամ լեզվին՝ ամբողջությամբ վերցրած» (Կ. Ֆ. Хоккетт, Проблема языковых универсалий, Новое в лингвистике, выпуск V, М., 1970, էջ, 45), իսկ ընդհանուր առմամբ՝ լեզվական հանրույթ են համարվում նաև այն օրինաչափությունները, որոնք ընդհանուր են լեզուների բացարձակ մեծամասնության, այսինքն՝ ոչ բոլոր լեզուներին (Новое в лингвистике, выпуск V, М., 1970, էջ 10): Լեզվական հանրույթների ուսումնասիրությունը, վերջին հաշվով, նպատակ ունի պատասխանել հետևյալ հարցերին. ա) ընդհանրապես ի՞նչ կարող է լինել և ի՞նչ չի կարող լինել լեզվում, բ) այս կամ այն լեզվի կառուցվածքում հետաքրքրություն ներկայացնող ի՞նչ յուրահատկություն կա (նշվ. աշխ., էջ 10-11): Կարծում ենք՝ լեզվական հանրույթների հասկացությունը կիրառելի է նաև մեկ լեզվի շրջանակներում, եթե նկատի ունենանք տվյալ լեզվի բոլոր դրսևորումներում հանդես եկող հատկանիշները: Պարզ է, որ առանձին լեզվի հանրույթները իրենց բնույթով պակաս վերացական ու ավելի կոնկրետ կլինեն, քան ընդհանուր լեզվական հանրույթները, բայց առաջինների վերհանումն ու նկարագրությունը կարևոր նախապայման կարող են դառնալ երկրորդների ձևակերպման համար:

[30] Սրանց մասին է Է.Աղայանը իրավացիորեն գրել. «....յուրաքանչյուր լեզու ընդհանուր է ու միասնական այնչափով, որչափով որ նրա բոլոր տարբերակների մեջ պահպանվում են տվյալ լեզվի բառապաշարի, քերականական կառուցվածքի, հնչյունական համակարգի ամենաէական, բոլոր տարբերակներին ընդհանուր հատկանիշներն ու միավորները» (Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 92):

[31] Հանրույթների վերհանումը և նկարագրությունը կարևոր նշանակություն կարող են ունենալ ինչպես բարբառային, այնպես էլ ընդհանուր հայերենի հետագա ամբողջական ուսումնասիրության համար:

[32] Այս մասին տե՛ս նաև Վ.Կատվալյան, Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2014, էջ 273-277, Ж.Багана, Е.В.Бондаренко, О.О.Чернова,

համակարգ և լեզվի ցանկացած մակարդակի միավորներ դրսևորվում են տարբերակային ձևերով[33]: Լեզվական միավորների տարբերակային դրսևորումները դիտարկելի են ինչպես համակարգի գործառության ներսում, լեզվական նույն հանրույթի լեզվագործածության մեջ, այնպես էլ նույն համակարգի տարբերակային (բարբառային լեզվի դեպքում՝ տարածական) դրսևորումները համեմատելիս[34]: Ներհամակարգային տարբերակայնությունը պայմանավորված է նախ և առաջ լեզվի հասարակական բնույթով[35], ապա նաև՝ նրա զարգացման յուրահատկություններով, լեզվական փոխազդեցություններով, տնտեսման ձգտմամբ, համաբանությամբ, այլ գործոններով: Արտահամակարգային տարբերակայնության պատճառ են հանրության տարածական հատվածականությունը և այդպիսով՝ նաև մշտական միասնական հաղորդակցման անհնարինությունը[36]: Ներհամակարգա-

---

Теоретические основания изучения проблемы языковой вариативности, Научные ведомости Белгородского государственного университета, Серия Гуманитарные науки. 2012. № 6 (125). Выпуск 13, с. 41-49.

[33] Խոսքը ոչ թե լեզվի համակարգային նույնարժեք ձևերի մասին է, որոնք գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերությունների մեջ և իրար փոխարինել չեն կարող, այլ նույն իրողության ձևային զուգահեռ դրսևորումների մասին է, որոնք ազատ իրար փոխարինում են համակարգի ներսում կամ համարժեք են համակարգի տարբեր դրսևորումներում:

[34] Ներհամակարգային տարբերակայնություն ենք համարում նույն լեզվական արժեքով և իմաստով մեկից ավելի համազոր ձևերի զուգահեռ գործառությունը նույն լեզվական հանրության խոսքում, իսկ արտահամակարգային տարբերակայնությունը լեզվի տարածական դրսևորումներում (կամ լեզվական տարբեր հանրույթներում) նույն լեզվական արժեքով և իմաստով տարբեր ձևերի գործառությունն է: Տարբերակայնությունը արտահայտվում է և՛ գրական լեզվում (թե՛ գրավոր, թե՛ բանավոր), և՛ ժողովրդախոսակցական լեզվում, սակայն առավել ազատ դրսևորվելու հնարավորություններ ունի բարբառային խոսքում, որտեղ լեզվական ցանկացած ձև կարող է գոյատևել, եթե հասկանալի է և շատերի կողմից գործածական: Այլ կերպ ասած՝ բարբառում իրողությունները զանազանությունների ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան լեզվի այլ գոյավիճակներում: Եթե գրական լեզվում որպես կանոն տարբերակայնության դրսևորման մի եզրը նորմն է, իսկ մյուսը կամ մյուսները դիտվում են որպես շեղում նորմից, ապա բարբառում տարբերակների փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել՝ կախված տարբերակայնության առաջացման պատճառներից, նաև այն բանից, թե տարբերակայնությունը դիտարկվում է համակարգի ներսում, թե արտահամակարգային դրսևորումներում:

[35] Լեզուն տարբեր է ոչ միայն անհատից անհատ, այլ նաև ըստ հասարակության սեռատարիքային, զբաղմունքային և այլ խմբերի: Լեզվի հասարակական տարբերակներ ձևավորող այս կարգի տարբերությունները, ինչպես նշում է Է.Աղայանը, «....մեծ մասամբ վերաբերում են բառապաշարին, դարձվածաբանությանը, առանձնահատուկ արտահայտություններին» (Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 94):

[36] Եթե հասարակական անմիատարրությունը պայմանավորում է նույն հանրության համար ընդհանուր համակարգի և լեզվական միավորների յուրահատուկ կիրառություն տարբեր խմբերի կողմից, մի շարք այլ գործոններ պայմանավորում են նույն լեզվակիրների խոսքում զուգահեռ ձևերի գործածություն, ապա տարածական հատվածականությունը պայմանավորում է տարբեր հանրություններում բարբառային տարբերությունների, այսինքն՝ հատ-

յին տարբերակայնությունը, այսպիսով, պայմանավորում է բարբառային վիճակի կամ լեզվի առկայություն[37], իսկ արտահամակարգային տարբերակայնությունը պայմանավորում է բարբառային լեզվի համակարգային որոշակի տարբերակվածություն ըստ լեզվական տարբեր հանրությունների: Տվյալ լեզվի շրջանակներում տարբերակային միավորների ու հատկանիշների ոչ գիտակցական, պատմականորեն ձևավորված յուրօրինակ համատեղումը լեզվական որևէ հանրության խոսքում առաջ է բերում համակարգի առանձին դրսևորում՝ բարբառային միավոր:

Հայագիտության մեջ բարբառային հայերենը իբրև լեզվի դրսևորման առանձին եղանակ դիտարկել են Ա.Այտընյանը[38] և Ք.Պատկանյանը[39]: Այդ առումով հատկապես արժեքավոր են Հ.Աճառյանի[40] և Ա.Ղարիբյանի աշխատությունները[41], որոնցում բարբառային հայերենի վերաբերյալ դիտարկումներից, բարբառային իրողությունների քննությունից բացի նկարագրվում են նաև բարբառային առանձին միավորներ: Իր աշխատանքը նույն սկզբունքով է կառուցել Ա.Գրիգորյանը[42]: 19-րդ դարից սկսած՝ զգալի աշխատանքներ են կատարվել հայ բարբառների առանձնակի ուսումնասիրության ու նկարագրության ոլորտում[43]: Բազմաթիվ բարբառների վերաբերյալ հետազոտությունները մեծապես նպաստել են բարբառային հայերենի նկարագրական պատկերի ամբողջացմանը[44]:

կանիշների որոշակի խմբավորումներով ձևավորված յուրահատուկ համակարգերի, նաև՝ տարբերակային միավորների կիրառություն:

[37] Այդպիսով լեզվի բուն էությունից բխող տարբերակայնությունը հենց բարբառի առաջացման հիմնական պայմանն է դառնում:

[38] Տե՛ս Ա.Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:

[39] Տե՛ս К.Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869:

[40] Տե՛ս Հ.Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, Մոսկուա – Նոր-Նախիջեւան, 1911, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1-5, Ե., 1952 – 1965, ՀԼՊ, հ. 2, Ե., 1951:

[41] Տե՛ս Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

[42] Տես՛ Ա.Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:

[43] Հիշատակելի են Հ.Աճառյանի, Գ.Ախվերդյանի, Է.Աղայանի, Տ.Անդրեասյանի, Մ.Ասատրյանի, Ս.Անթոսյանի, Ռ.Բաղրամյանի, Կ.Դավթյանի, Դ.Կոստանդյանի, Գ.Հանանյանի, Ա.Հանեյանի, Ս.Բաղդասարյանի, Ռ.Մարկոսյանի, Ք.Մադաթյանի, Ա.Մարգարյանի, Հ.Մկրտչյանի, Հ.Մուրադյանի, Մ.Մուրադյանի, Հ.Չոլաքյանի, Վ.Պետրոսյանի, Ա.Պողոսյանի, Ս.Սարգսյանցի, Ա.Վարդանյանի, Լ.Մսերյանցի և այլոց աշխատությունները:

[44] Պետք է նշել, որ բարբառների ընկալումը իբրև անհետացման դատապարտված իրողություններ՝ կանխորոշել է դրանց ուսումնասիրության ընդհանուր առմամբ առավելաբար նկարագրական ուղղվածությունը: Ինչպես նկատել է Ա.Խաչատրյանը՝ Հ.Աճառյանը ուներ այն ըմբռնումը, որ յուրաքանչյուր բարբառագիտական աշխատանքի ամենահիմնական նպատակը պետք է լինի բարբառի՝ ըստ ամենայնի լիակատար ու ճշգրիտ նկարագրությունը (տե՛ս Ա.Ե.Խաչատրյան,

Այնուամենայնիվ դեռևս կան բարբառներ, որոնք համակողմանի և ամբողջական հետազոտության չեն ենթարկվել: Այդպիսի միավորներից է նաև Բայազետի բարբառը, որին ուսումնասիրողներն անդրադարձել են տարբեր առիթներով[45]: Կենդանի գործառող այս բարբառի հետազոտությունը ոչ միայն կլրացնի բարբառային հայերենի ուսումնասիրման գործում առկա բացը, այլ նաև կարևոր նշանակություն կունենա հայոց լեզվի պատմության, արդի հայերենի տարբերակային դրսևորումների ուսումնասիրության համար:

Բայազետի բարբառի ուսումնասիրությանը նվիրված այս աշխատանքում լեզվական իրողությունների քննությունը[46] կատարում ենք համաժամանակյա և տարաժամանակյա[47] հայեցակետերով: Բարբառում դրսևորվող իրողությունների, բարբառի հնչյունական ու քերականական, բառապաշարային համակարգերի յուրահատկությունները վեր հանելուն զուգընթաց փորձել ենք ըստ հնարավորին պարզաբանել դրանց ձևավորման պատմական ընթացքը, զարգացման

Աճառյանը և հայ բարբառագիտությունը, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1982, էջ 66), և հայ բարբառների մենագրական ուսումնասիրություններում հեղինակները հիմնականում հետևել են այդ սկզբունքին: Այդ աշխատանքներում սովորաբար բարբառները համարվել են գրաբարի քայքայման, գրական լեզվի աղավաղման արդյունք, հետևաբար բարբառային իրողությունները հաճախ դիտարկվել են իբրև շեղումներ՝ գրաբարյան և գրական լեզվի իրողությունների համեմատությամբ: Մյուս կողմից՝ բարբառները դիտվել են իբրև վերացող, անհետացող լեզվավիճակներ (հատկապես՝ գրական լեզվի տարածման և ազդեցության մեծացման պատճառաբանությամբ): Այստեղից էլ, կարծես թե արդարացնելով բարբառներին կատարվող անդրադարձը, բարբառագետները իրենց աշխատանքը կարևորում են նրանով, որ նպատակ ունեն անդառնալի կորստից փրկել անհետացող այս կամ այն բարբառի նկարագիրը (նման մեկնաբանությունը ճիշտ է միայն այն դեպքերում, երբ պատմական ճակատագրի բերումով տվյալ բարբառի կրողները այլևս իրենց բնօրրանում չեն, քիչ թե շատհոծ զանգված չեն կազմում և ապրում են լեզվական այլ միջավայրում): Փաստորեն, բարբառները ընկալվում են իբրև զարգացում չունեցող, ընդհանուր լեզվի ընթացքից դուրս լեզվավիճակներ:

[45] Այս մասին հանգամանորեն տե՛ս աշխատանքի 1-ին գլխում:

[46] Քննության ենթարկելով բարբառների հնչյունական, ձևաբանական համակարգերը և բառապաշարը՝ չենք անդրադառնում շարահյուսական իրողություններին՝ նկատի ունենալով աշխատանքի ծավալի սահմանափակվածությունը՝ մի կողմից, և համեմատվող բարբառների շարահյուսական համակարգերի չուսումնասիրվածությունը՝ մյուս կողմից:

[47] Գ.Ջահուկյանը կարծում է, որ տարաժամանակյա բարբառագիտությունը պետք է լինի «ա) լեզվի գրավոր պատմության տվյալների վրա հենվող պատմական բարբառագիտության և բ) բարբառների համեմատության և համապատասխան վերականգնումների վրա հենվող համեմատական բարբառագիտության որակական համադրությունը» (Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 6):

ուղին[48]: Ընդ որում՝ անդրադառնում ենք նաև միջինհայերենյան իրողություններին[49]: Ընդհանրապես, բարբառային լեզուն գտնվում է հարափոփոխվիճակում: Ըստ Գ.Ջահուկյանի՝ «Հայերենի ոչ մի բարբառ որևէ էպոխայում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ: Հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում»[50]: Ուրեմն, բարբառների հիշյալ հատկանիշները հարկ է դիտարկել նաև ըստ հայերենի զարգացման տարբեր շրջանների, և ինչպես հուշում է Գ.Ջահուկյանը, «բարբառներն ուսումնասիրելիս նրանց նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ունենալ. բարբառները միանգամից չեն կազմավորվել. նրանց տարբեր բաղադրիչները գալիս են տարբեր հնությունից»[51]: Նման դիտարկումը կարևորվում է երկու առումով. ա) հնարավորություն է տալիս պարզաբանել բարբառի զարգացման ընթացքին առնչվող հարցեր, որոշել բարբառային մի շարք հատկանիշների առաջացման ուղիներն ու աղբյուրները, բարբառի ձևավորման հետ կապված հանգամանքները, բ) բարբառային իրողությունների պատճառական կապերի, օրինաչափությունների բացահայտումը թույլ է տալիս մեկնաբանել լեզվի զարգացման նախորդ փուլերի համանման իրողությունները:

---

[48] Բարբառային խոսքի համաժամանակյա ուսումնասիրությունն կատարելու հնարավորություն տալիս է բարբառի կենդանի գործածությունը, աշխատանքին նպաստում են նաև հայ բարբառագիտության մեջ բարբառիս իրողությունների վերաբերյալ արված դիտարկումները: Տարաժամանակյա ուսումնասիրության հնարավորություն տալիս են բարբառում որոշակիորեն դրսևորվող պատմական շերտերը, լեզվի զարգացման նախորդ փուլերից մնացած լեզվական առանձին իրողությունները, ընդհանուր լեզվի զարգացման պատմությունից հայտնի փաստերի հետհամեմատությունները ևն:

[49] Դեռևս Լ.Մսերյանցն է կարևորել միջինհայերենյան փաստերը բարբառագիտական ուսումնասիրություններում ներառելու կարևորությունը՝ գրելով, որ նոր հայերենի այս կամ այն բարբառի փաստերը դիտարկելիս չի կարելի բավարարվել դրանք իրենց գրաբարյան համապատասխանությունների հետ զուգադրելով, այլ հարկավոր է դրանք համեմատել նաև միջինհայերենյան իրողությունների հետ, որովհետև միջին հայերենը միջնորդ օղակ է հինհայերենյան և նորհայերենյան բարբառների միջև: Դեպքերի մեծ մասում միջին հայերենի շրջանում արդեն սկսվել և շատ դեպքերում ավարտվել էր այն իրողությունների ձևավորումը, որոնք կազմում են նոր հայերենի բնութագրական գծերը (տե՛ս Л.Мсерианц, Этюды по армянской диалектологии, ч. I, М., 1897, էջ I):

[50] Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, Ե., 1959, 2-3, էջ 311:

[51] Նշվ. աշխ., էջ 315:

Մեր ուսումնասիրության առարկան Բայազետի բարբառի՝ բնօրրանում եղած վիճակին առավել մոտ խոսվածքներն են, որոնք նոր հայրենիքում չեն հայտնվել բարբառախոս այլ միջավայրում ու չեն ենթարկվել այլ բարբառների գերիշխող ազդեցության[52]: Դեռևս Հ.Աճառյանն է 20-րդ դարի սկզբին վկայել բարբառի նույնականությունը հին և նոր հայրենիքներում. «Երևանի բարբառը երեք ենթաբարբառ ունի, որոնք են. 1. Պայազիտի ենթաբարբառը՝ Տաճկահայաստանի մէջ. ասոր մէկ գաղութն է Նոր-Բայազէտ քաղաքը՝ Սևանայ լճին եզերքը՝ իր շրջակայ տասը հայաբնակ գիւղերով. ասոնք են՝ Օրդակլու, Նորադուզ, Ղշլաղ, Փաշաքէնդի, Քեօսա-Մահմադ, Ղուլալի, Քեարիմքենդ, Դալիղարդաշ, Քիւզաջը և Բաշքէնդ: Յիշեալ շրջանը բոլորովին նոյն բարբառը կը խօսի՝ ինչ որ Պայազիտի մէջ»[53]:

Լիովին համամիտ լինելով Հ.Աճառյանի դիտարկմանը, որ լեզվաբանական աշխատություններում ամենակարևոր կետը համեմատությունն է, և ամեն մի լեզվաբանական երևույթ իր կատարյալ բացատրությունը կգտնի այն ժամանակ, երբ համեմատված լինի ուրիշ բարբառների նման երևույթների հետ[54]՝ լեզվական իրողությունները դիտարկում ենք պատմական հայրենիքում Բայազետի բարբառին հարևան Արարատյան, Խոյ-Մարաղայի, Վանի, Մշո, Դիադինի բարբառների համակարգերի[55] հետ համեմատությամբ[56]: Նման

[52] Բարբառագիտական առանձին ուսումնասիրության նյութ են ինչպես բարբառային այլ միջավայրերում հայտնված բայազետցիների սերունդների խոսքը, այնպես էլ Մակուի, Կաղզվանի խոսվածքները (որոնք Հ.Աճառյանը ՀԼՊ 2-րդ հատորում /Ե., 2013. էջ 329/ ընդգրկում է Բայազետի ենթաբարբառի կազմում), այդպես նաև՝ Սուրմալուի խոսվածքը, որը Բայազետի բարբառի ենթաբարբառ է համարել Ս.Բաղդասարյանը «Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում» աշխատության մեջ (Ե., 1973, էջ 11): Այսօր մակվեցիների սերունդներ բնակվում են Հրազդանի և Սևանի տարածաշրջանների մի շարք բնակավայրերում, իսկ սուրմալուեցիների սերունդներ, ըստ Ս.Բաղդասարյան-Թափալցյանի (տե՛ս նշվ. աշխ., էջ 8-14)՝ նախկին Հոկտեմբերյանի շրջանի մի շարք բնակավայրերում: Մակուի խոսվածքի՝ Ռ.Բաղրամյանի տված ընդհանուր նկարագիրը (տե՛ս Ռ.Բաղրամյան, Հայերեն բարբառներ. Սևանալճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 93 - 107) վեր է հանում Բայազետի բարբառի հետ և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Բարբառային միավորների փոխհարաբերությունները ճշգրտելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է կատարել հիշյալ խոսվածքների հանգամանալի հետազոտություն, որը մեր այս աշխատանքի խնդիրներից դուրս է:

[53] Հ.Աճառյան, Հայ բարբառագիտություն (այսուհետ՝ ՀԲ), Մոսկվա - Նոր-Նախիջևան, 1911, էջ 33:

[54] Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Ե., 1925, էջ 9:

[55] Այս բարբառների իրողությունների դիտարկման համար իբրև հիմնական աղբյուր ծառայել են հետևյալ աշխատությունները՝ Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952 (այսուհետ՝ ՔՎԲ), Մ.Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Ե., 1962 (այսուհետ՝ ԽԲ), Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958 (այսուհետ՝ ՄԲ), Ռ.Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989 (այսուհետ՝ ԱԲ), Վ.Խաչատրյան, Վարդենիսի բարբառը, Ե., 2004 (այսուհետ՝ ԴԲ), նաև ՀՀ ԳԱԱ լեզվի

քննությունը թույլ է տալիս մեկնաբանել նաև շրջակա բարբառների որոշ իրողություններ: Ուսումնասիրության ոլորտում այդ բարբառների ընտրությունը հիմնականում պատմական հարևանությամբ պայմանավորված լինելուց զատ՝ պատճառաբանվում է նաև նրանով, որ դրանք ներկայացնում են հայ բարբառների երեք՝ Ում (Արարատյան), Կը (Վանի, Մուշի, Դիադինի), Լիս (Խոյ-Մարաղայի), ճյուղերն էլ[57]: Բացի այդ, հաշվի են առնվել մասնավոր բնույթի հետևյալ հանգամանքները. ա) երկար ժամանակ Բայազետի բարբառային միավորը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ, բ) կարծիք է հայտնվել, որ Բայազետի բարբառային միավորը ներկայացնում է Արարատյան և Մշո բարբառների խառնուրդ, գ) հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը հայերեն բարբառներում հատուկ է Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի, Բայազետի բարբառներին, Մշո բարբառի մի հատվածին[58]:

ինստիտուտի՝ ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերը, բարբառագիտական այլ աշխատություններ, Մշո և Դիադինի բարբառների հետազոտություններ կատարել ենք նաև ՀՀ Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում՝ դաշտային աշխատանքների ընթացքում:

[56] Ա.Խաչատրյանը կարծում է, որ Հ.Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունը, ուր ի մի են բերված մինչև 20-րդ դարի 50-ական թվականները գիտությանը հայտնի բոլոր բարբառների տվյալները և քննված պատմահամեմատական մեթոդով, որոշ իմաստով կարելի է համարել համեմատական ուսումնասիրություն (տե՛ս Ա.Ե.Խաչատրյան, Աճառյանը և հայ բարբառագիտությունը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 76): Ա. Ղարիբյանը «Հայ բարբառագիտություն» աշխատության բաժիններից մեկը վերնագրել է «Հայերենի համեմատական բարբառագիտություն» (տե՛ս նշվ. աշխ., էջ 107) և այդ բաժնում ըստ հնարավորին ներկայացրել է լեզվական յուրաքանչյուր իրողության բարբառային բոլոր դրսևորումները՝ որպես կանոն կատարելով ընդհանրացումներ և եզրակացություններ: Թերևս համեմատական բարբառագիտությանն են վերաբերում առանձին բարբառային միավորների փոխհարաբերություններին կատարված անդրադարձները (տե՛ս ԽԲ, Մ.Ասատրյան. Լոռու խոսվածքը, Ե., 1968, Դ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Ե., 1979, Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 108-183 ևն): Հայ իրականության մեջ բարբառների կամ բարբառային իրողությունների համեմատական ու պատմական քննության օրինակները, այնուամենայնիվ, սակավ են, և ինչպես նշվում է՝ «չունենք ինչպես առանձին բարբառային միավորների, այնպես էլ բարբառային խմբերի բավարար չափով պատմական և համեմատական ուսումնասիրություններ» (Մ.Աղաբեկյան, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե.,, 2010, էջ 66):

[57] Նման մոտեցմամբ հնարավոր կլինի ոչ միայն ստանալ տվյալ բարբառային համակարգի ամբողջական բնութագիրը, համեմատական քննություններով պարզել բարբառային հատկանիշների (նաև՝ մասնավոր իրողությունների) առաջացման հանգամանքներն ու որոշել տարածման սահմանները, այլ նաև ճշգրտել բարբառային այդ միավորի առնչություններն ու փոխհարաբերությունները շրջակա տարբեր ճյուղերի բարբառների հետ, դիտարկել մերձավոր բարբառների զարգացման ընդհանրություններն ու տարբերությունները:

[58] Նաև՝ շրջակամեկ-երկու այլ բարբառային միավորների (Ջուղա, Թավրիզ):

Հայտնի է, որ բարբառների հնչյունաքերականական հատկանիշները բավականին կայուն իրողություններ են և տասնամյակների ընթացքում էական փոփոխությունների չեն ենթարկվում, մանավանդ որ, ինչպես նշում է Գ.Ջահուկյանը, «Քննարկվող ենթաշրջանում (նկատի ունի 17-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի կեսերը – Վ.Կ.) հիմնական գծերով ձևավորված էին բարբառներն այն ձևով, ինչ ձևով նրանք նկարագրված են մեր բարբառագիտական աշխատություններում»[59]: Ուստի բարբառների համակարգերը համեմատելիս առավելաբար օգտվել ենք շրջակա բարբառների՝ նախորդ դարի երկրորդ կեսին վերաբերող ուսումնասիրություններից[60], մյուս կողմից՝ Բայազետի բարբառով 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին վկայված նյութերում, ներկա վիճակի հետ համեմատությամբ, հնչյունաքերականական զանազանություններ չենք արձանագրում:

Բարբառների փոխհարաբերությունները ճշգրտելուն են միտված հայ բարբառների տարբեր դասակարգումները: Է՛վ պատմաաշխարհագրական դասակարգումը, և՛ ձևաբանական ու հնչյունաբանական դասակարգումները թույլ են տալիս դիտարկել այդ փոխհարաբերությունները տարբեր տեսանկյուններով[61]: Գ.Ջահուկյանի առաջ քաշած բազմահատկանիշ դասակարգումը չի վերացնում նախորդ դասակարգումների անհրաժեշտությունը և կիրառական նշանակությունը[62]: Բնականաբար, մեր աշխատանքում նկատի ունենք բոլոր դասակարգումներն էլ[63]: Քանի որ բազմահատկանիշ դասակարգումը թույլ է տալիս առավել հստակ ու համակողմանիորեն որոշել բարբառային միավորների միջև եղած հարաբերությունները, շրջակա բարբառների հետ Բայազետի

[59] Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 52:

[60] Նկատի ունենք վերը հիշատակված աշխատությունները՝ ՔՎԲ, ԽԲ, ՄԲ, ԱԲ, ԴԲ, ինչպես նաև՝ Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985 ևն:

[61] Իրավացի է Ա.Խաչատրյանը, երբ գրում է. «Ամեն մի դասակարգում, որ նպատակ է հետապնդում հեշտացնել նյութի ուսումնասիրությունը, ըմբռնումն ու յուրացումը, յուրովի ընտրություն է» (Ա.Ե.Խաչատրյան, Աճառյանը և հայ բարբառագիտությունը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 43):

[62] Տե՛ս նաև, Ա.Ե.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 47:

[63] Ուսումնասիրության ոլորտում ընդգրկված բարբառների հատկանիշները նկատի ունենալով՝ նպատակահարմար ենք գտել ձևաբանական դասակարգման դեպքում հիմք ընդունել հայերենի բարբառները Ում, Կը և Լիս ճյուղերի բաժանումը:

բարբառի առնչությունները ներկայացրել ենք նաև զուգաբանական-վիճակագրական սկզբունքի գործադրմամբ[64]:

Որպես կանոն, գրավոր աղբյուրների բացակայության կամ սակավության պատճառով բարբառների զարգացման ընթացքը դժվար դիտարկելի է: Բայազետի բարբառով մեզ հայտնի գրավոր առաջին նյութերը վերաբերում են 19-րդ դարավերջին: Ծատ արժեքավոր է Տիգրան Նավասարդյանցի՝ 1889թ. հրատարակված «Հայ ժողովրդական հեքիաթների» 5-րդ գրքում «Հին Բայազեդու բարբառով» գրանցված հեքիաթը՝ «Ուստայ-նաջարի ասուածը» վերնագրով, որը, Տ.Նավասարդյանցի վկայությամբ, իրեն հանձնել է հինբայազետցի Հակ.Ղազարյանցը[65]: Բայազետի բարբառի Արծափի խոսվածքի մասին դիտարկումներ է կատարել[66] և ապա խոսվածքով մի ընդարձակ երկխոսություն ներկայացրել[67] Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, որը նույնպես որոշ տեղեկություններ տալիս է բարբառի՝ 19-րդ դարավերջի քերականական, բառապաշարային, որոշ չափով նաև հնչյունական իրողությունների մասին[68]: Բայազետի բարբառին առնչվող մի շարք նյութեր կան «Ազգագրական հանդեսի» էջերում: Հանդեսի 13-րդ գրքում (1906թ.) Ե.Լալայանը հրապարակել է հայկական էպոսի իր

---

[64] Ինչպես նշել է Գ.Ջահուկյանը, զուգաբանական-վիճակագրական սկզբունքը «...հնարավորություն է տալիս խուսափելու միակողմանիությունից, բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքներն առանձնացնելիս ելնել օբյեկտիվ չափանիշներից և հնչյունաբանական ու քերականական առանձնահատկությունները բաշխել ըստ պատմաշխարհագրական սկզբունքների» (Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972 /այսուհետ՝ ՀԲՆ/, էջ 28): Այս սկզբունքը գործադրվել է բարբառագիտական մի շարք աշխատանքներում, ինչպիսիք են՝ Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 108-183, Ա.Վարդանյան, Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004, Ռ.Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989 ևն:

[65] Տե՛ս Տ.Նավասարդեանց, Հայ ժողովրդական հէքիաթներ, 5-րդ գիրք, Տփխիս, 1889, էջ 79-80: Այս նյութը հիմնականում տեղեկությունների աղբյուր է բառապաշարի և քերականական իրողությունների և մասամբ միայն հնչյունաբանական առումներով, բայց և մեծ կարևորություն ունի բարբառի պատմական զարգացման դիտարկման և հին ու նոր հայրենիքներում լեզվավիճակների համեմատության առումներով:

[66] Մ.Սմբատյանցի հավաստմամբ՝ «Ինչպէս Հին Պայազիտու գաւառի Արծափնշանաւոր գիւղի Հայոց լեզուն բոլորովին տարբեր է այն ամբողջ գաւառի Հայոց լեզուէն՝ բառերով և ոճերով և հնչմամբ և շեշտերով. այնպէս էլ Արծափից 1830 թուին գաղթած և Նոր-Պայազիտու գաւառի Չիբուխլու և Թայչարուխգիւղերումն բնակուած, նմանապէս Էջմիածնայ գաւառի Ղարաջօրան գիւղումն բնակուած Հայոց լեզուն բոլորովին տարբեր է շրջակայ գիւղերի Հայոց լեզուէն, և աւելի մօտէ Արարատեան բարբառին. միայն է տառի հնչումն բոլորովին և խիստ է տառի փոխուած» (Մ.Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 377):

[67] Տե՛ս նշվ. աշխ., էջ 377-378:

[68] Տե՛ս նշվ. աշխ., էջ 452-453:

գրառած մի տարբերակ՝ «Սասմայ Ծռեր (Նոր-Բայազէտի բարբառով)»[69], իսկ 14-րդ գրքում՝ «Ռուստամ Զալ (Նոր-Բայազէտի բարբառով)» պատումը[70]: «Ազգագրական հանդեսի» 19-րդ գրքում (1910թ.) Ե.Լալայանը «Նոր Բայազէտի գաւառի բանահիւսութիւնից» խորագրի տակ հրապարակել է երեք հեքիաթ[71]: Դրանցից միայն մեկը՝ «Լալազար» հեքիաթն է ներկայացնում Բայազետի բարբառը[72], սակայն հնչյունական, հաճախ նաև քերականական իրողությունները այս դեպքում ևս հարազատորեն չեն ընկալվել և ներկայացվել: Բայազետի բարբառի ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» շարքի 11-րդ հատորը[73], որտեղ զետեղված են Նոր Բայազետի շրջանից հավաքված ազգագրական և բանահյուսական նյութեր: Այս գրքում ընդգրկված է Բայազետի բարբառով երբևէ գրի առնված ամենածավալուն և բազմաբնույթ նյութը (հեքիաթներ, զրույցներ, առակներ, անեկդոտներ, երգեր, առածներ, ասացվածքներ, դարձվածքներ, անեծքներ), որը նաև ուղեկցվում է բարբառային բառերի սեղմ բառարանով: Այդ նյութն ուշագրավ է և ժամանակի առումով. արտահայտում է 20-րդ դարի առաջին կեսի պատկերը[74]: *Մեր* «Քվռա խնքչնք (Զվարճապատումներ Բայազետի բարբառով)»[75] գրքում տրվում է Բայազետի բարբառի համառոտ բնութագիրը, հայ իրականության մեջ առաջին անգամ գիտական ճշգրիտ տառադարձությամբ բարբառակրի կողմից ներկայացվում է բարբառիս արդի վիճակն արտացոլող ծավալուն նյութ: Բայազետի բարբառի բառապաշարի վերաբերյալ զգալի նյութ է պա-

---

[69] Տե՛ս «Ազգագրական հանդես», XIII գիրք, 1906, 1, էջ 37-82:

[70] Տե՛ս «Ազգագրական հանդես», XIV գիրք, 1906, 2, էջ 69-85: Նկատելի է. որ ասացողները միշտ չէ, որ հարազատ են մնում բարբառին, և միշտ չէ, որ բարբառային իրողությունները ճիշտ են ընկալվել կամ ներկայացվել, սակայն եղած նյութը կարող է որոշակի պատկերացում տալ Բայազետի բարբառի՝ քսաներորդդարասկզբի վիճակի մասին:

[71] Տե՛ս «Ազգագրական հանդես», XIX գիրք, 1910, 1, էջ 115-150: Սրանցից երկուսը՝ «Զանգեզուրի հեքիաթը» և «Կիսլանջ», պատմում է Հին Բայազետցի գաղթականներից սերված, սակայն ալաշկերտցիներով բնակեցված գյուղում ծնված և հասակ առած վաթսունամյա անգրագետ գյուղացի (տե՛ս նշվ. աշխ., էջ 135), որի խոսքը, այդպիսով, ավելի շատ ներկայացնում է Ալաշկերտի խոսվածք, քան Բայազետի բարբառ:

[72] Տե՛ս նշվ. աշխ., էջ 150:

[73] Հայ ազգագրություն և բանահյուսություն, 11, Ե., 1980, էջ *166:*

[74] Նշվ. աշխ., էջ 7: Նյութը դարձյալ առավել արժեքավոր է բառապաշարի և քերականական իրողությունների առումով, իսկ հնչյունաբանական առումով լիակատար պատկերը չի արտացոլում՝ գիտական տառադարձության մասնակի կիրառության պատճառով:

[75] Վ.Կատվալյան.«*Քվռախնք-չնք*», Ե., 2009, 232 էջ:

ունակում Հ.Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանը» (Թիֆլիս, 1913), հետազոտության համար կարևոր աղբյուրներ են եղել նաև Ս.Ամատունու «Հայոց բառ ու բան» (Վաղարշապատ, 1912), Հայոց լեզվի բարբառային բառարան (1-7 հատորներ, Ե., 2001 - 20012), Տ.Նավասարդյանցի «Բառգիրք Արարատեան բարբառի» (Տփխիս, 1903), Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» (1-4 հատորներ, Ե., 1971-1979), Ռ.Ղազարյանի և Հ.Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (Ե., 2009) և այլ աշխատություններ:

ԳԼՈՒԽ I

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐՈՐԵՆ ՆՐԱՆ ՄԵՐՁԱՎՈՐ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

1. ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԸ ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Բայազետի բարբառի վերաբերյալ առաջին տեղեկությունները[76] գտնում ենք Հ.Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, որտեղ այն (ինչպես վերևում տեսանք՝ «Պայազիտի ենթաբարբառ» անվանումով) համարվում է Երևանի բարբառի երեք ենթաբարբառներից մեկը[77]: «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ «ենթաբարբառի» տարածման վայրեր են համարվում «Հին-Բայազետ քաղաքը Արևմտահայաստանում, Կաղզվան, Մակու (Պարսկահայաստանում) և Նոր-Բայազետ՝ Սևանի լճի եզերքը»[78]: Հեղինակը բարբառային այս միավորի համար բնութագրական է համարում ութ հատկանիշներ[79]: Հ.Աճառյանը նկատում է նաև, որ թե՛ Երևանի բարբառը, թե՛ նրա երեք ենթաբարբառները դեռ ուսումնասիրված չեն, բայց դրանցով հրատարակված են գրվածքներ, որոնք կարող են ուսումնասիրության համար առատություն մատակարարել[80]: Բայազետի բարբա-

---

[76] Նկատի ունենք գիտական, բարբառագիտական տեղեկությունները: Բարբառի վերաբերյալ գնահատողական կամ այլ կարգի կարծիքներ կարելի է գտնել նաև ավելի վաղ հրապարակված երկերում: Օրինակ, 1895թ. հրատարակված «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի» աշխատանքում հեղինակը՝ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատյանցը, խոսելով Նոր Բայազետքաղաքի բնակիչների մասին, գրում է. «Սոքա խօսում են գրաբառից և Էջմիածնայ աշխարհաբառից հեռու, որ և մի խառնուրդ կազմած է Հին Պայազիտի, Ալաշկերտի, Աբարանայ բառբառներից»: Նաև նկատում է, որ «բարուց և սովորութեանց, նաև խօսակցութեան կողմից նման են գիւղացւոց. երկու սեռի զգեստներն նման են Օսմանեան Հայաստանի Հայոց զգեստներին՝ սակաւ ինչ փոփոխութեամբ» (Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատյանց Նախիջևանցի, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 37):

[77] ՀԲ, էջ 33:

[78] ՀԼՊ, հ. 2, էջ 329:

[79] Այդ հատկանիշներն են. ա) երկբարբառային *ե,ո* հնչյունների, ° ձայնավորի առկայություն, բ) շնչեղ ձայնեղ *բ՛,գ՛,դ՛,ձ՛,ջ՛* բաղաձայնների առկայություն, գ) գրեթե առանց բացառության *հ*-ի վերածում *խ*-ի, դ) ձայնավորով ավարտվող բառերի վրա որոշիչ հոդի կրկնակի հավելում (կատունը, ձ՛ինը), ե) միավանկ բայերի անկատար դերբայի ձևավորումը *ում* մասնիկի հավելումով՝ *գ՛ալում, լ°լում, տ°լում,* զ) օժանդակ բայի կրկնություն դերբայից առաջ և հետո՝ *յես եմ ուզում եմ*, է) վաղակատար դերբայի ձևավորում *եր* մասնիկով, ը) կրավորական և չեզոք բայերի հարակատար դերբայի կազմություն *ուկ* մասնիկով (տե՛ս ՀԲ, էջ 44 – 45):

[80] «Պայազիտի ենթաբարբառի» համար իբրև այդպիսին նշվում է Ս.Փիլոյանի՝ 1880 թ. Թիֆլիսում լույս տեսած «Կորած Մարգարիտ» աշխատանքը (տե՛ս նշվ. աշխ., էջ 46-47): Իրականում այդ աշխատանքը գրված է ժամանակի աշխարհաբարով, և այնտեղ Բայազետի բարբառով մի քանի բառեր կամ արտահայտություններ կան ընդամենը:

ռային միավորի (արդեն *Նոր Բայազետի ենթաբարբառ* անվանումով) վերաբերյալ Ա.Ղարիբյանը գրում է. «Արարատյան բարբառը, խառնվելով Մշո բարբառի արևելյան և հյուսիս-արևելյան (Արճեշ) հատվածին, տվել է Նոր-Բայազեդի ենթաբարբառը, որին պատկանում են նաև Ախտայի շրջանի մի շարք գյուղերի խոսվածքները»[81]: Նկատելով, որ խոսվածքները երբեմն անցումային բնույթ ունեն մի բարբառից մյուս բարբառը՝ Ա.Ղարիբյանը գտնում է, որ «Ախտայի շրջանի խոսվածքները[82] կազմում են նույնպես անցումնային օղակ Արարատյան բարբառից դեպի Բայազեդի ենթաբարբառը, իսկ ինքը Բայազեդի ենթաբարբառը հանդիսանում է անցումնային օղակ Արարատյան բարբառից դեպի Մշո բարբառը: Այսպիսով, դժվար է լինում կատեգորիկ կերպով սահմանագծել որևէ բարբառ մեկ ուրիշից»[83]: Անդրադառնալով «Բայազեդի ենթաբարբառի» հատկություններին՝ Ա.Ղարիբյանը Հ.Աճառյանի նկատած իրողություններին հավելում է ° ձայնավորի առկայությունը[84]: Լեզվաբանը իբրև օրինակ բերում է Հ.Աճառյանի նմուշը՝ իր տառադարձությամբ և որոշ փոփոխություններով, որոնց արդյունքում նոր նմուշը թերի վիճակ է ներկայացնում Բայազետի բարբառի մի շարք իրողությունների, մասնավորապես՝ ° ձայնավորի գործածության ոլորտների առումով[85]: Ա.Գրիգորյանը բավարարվում է Հ.Աճառյանի բնութագրումներն ու հիշատակած հատկանիշները մեջբերելով[86]: Նախորդների համեմատությամբ Բայազետի բարբառի վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ է տալիս և առաջին անգամ բարբառիս հատկանիշները քիչ թե շատ հանգամանորեն ներկայացնում Ռ.Բաղրամյանը «Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները» աշխատությունում[87]: Գրքի 11–34 էջերն ընդգրկող «Բայազետի ենթաբարբառը» բաժնում հեղինակը ընդհանուր առմամբ հարազատորեն է ներկայացնում բարբառիս հնչյունական և ձևաբանական հիմնական առանձ-

---

Մինչդեռ իր աշխատության մեջ Աճառյանը բերում է մի պատառիկ (տե՛ս նշվ. աշխ., էջ 48), որը բավականին հարազատորեն է ներկայացնում բարբառիս իրողությունները և, թերևս, Բայազետի բարբառով գրի առնված և գիտական տառադարձությամբ հրապարակված առաջին նմուշն է:

[81] Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 219 – 220:

[82] Թերևս նկատի ունի Մակուի խոսվածքի դրսևորումները:

[83] Նշվ. աշխ., էջ 87:

[84] Նշվ. աշխ., էջ 227:

[85] Տե՛ս նշվ. աշխ., էջ 229:

[86] Ա.Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, 1957, էջ 224:

նահատկությունները, սակայն մի շարք դեպքերում վերագրվող հատկանիշները Բայազետի բարբառին բնորոշ չեն կամ ճիշտ չեն արտացոլում իրավիճակը: Այսպես, ա) հեղինակը բարբառի հնչյունական համակարգին վերագրում է քմայնացած *գʲ, կʲ, քʲ* բաղաձայնների առկայություն[88], բ) համարում է, որ բարբառումս ° ձայնավորը զուրկ է հնչյուն թային արժեքից[89], գ) երկբարբառային *ո* հնչյունին վերագրում է *ուէ*, երբեմն էլ՝ *ուо* հնչում[90], դ) նշում է, թե բոլոր հոլովները, սեռականից բացի, հոդ են ստանում[91], ե) թերևս հետևելով Հ.Աճառյանին՝ պնդում է, թե ներգործական բայերը հարակատար դերբայը կազմում են ոչ թե *ուկ*, այլ *ած* վերջավորությամբ[92] են: Ռ.Բաղրամյանը հայագիտության մեջ առաջին անգամ ներկայացնում է Բայազետի բարբառի մի շարք խոսվածքներով նմուշներ գիտական տառադարձությամբ, սակայն այս դեպքում էլ կան անճշտություններ (հատկապես՝ ձայնավորների արտահայտման հարցում), ինչպես նաև առկա են բազում շեղումներ բարբառից (բառապաշարի և քերականական իրողությունների առումով)[93]: Բարբառագետի պնդմամբ՝ 20-րդ դարի 60-70-ական թվականներին նոր սերնդի բերանում Բայազետի բարբառի *ո,ե* երկբարբառները արդեն հնչում են որպես պարզ ձայնավորներ, շնչեղ ձայնեղները վերածվել են սովորական ձայնեղների, հնչյունափոխության շատ կանոններ արդեն վերացել են, հարակատարի *ուկ* վերջավորությունը լիովին փոխարինվել է *ած*-ով, մյուս հոգնակերտները տեղի են տվել *եր, ներ* մասնիկներին[94], *ում*-ով ներգոյականը արդեն սովորական է[95] են: Սա-

---

[87] Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., Ե., 1972, 225 էջ:
[88] Նշվ. աշխ., էջ 13 – 14:
[89] Նույն տեղում:
[90] Նույն տեղում:
[91] Նշվ. աշխ., էջ 29:
[92] Նշվ. աշխ., էջ 31:
[93] Նշվ. աշխ., էջ 34 – 53: Ընդհանրապես, կատարված աշխատանքը էականորեն տուժել է նաև հեղինակի այն համոզումից, թե իբր «Նույնիսկ շրջկենտրոններից հեռու գտնվող գյուղերում մաքուր բարբառախոսներ այլևս անհնար է գտնել. մի տեղ, ուր դպրոցն ու գրականությունը, մամուլը, ռադիոն ու էլեկտրականությունը կենցաղ են, ուր մուտք են գործել ավտոբուսն ու գյուղատնտեսական մեքենաները, քամու բերանն են տվել գյուղերը կղզիացնող անջրպետները, բարբառները դատապարտվել են վերացման» (տե՛ս նշվ. աշխ., էջ 3-4): Այդ պատկերացմամբ է, որ Ռ.Բաղրամյանը Հ.Աճառյանի՝ Բայազետի բարբառով բերված նմուշի դարիբյանական տարբերակը համարում է նոր սերնդի խոսքի արտահայտություն (տե՛ս նշվ. աշխ., էջ 12-13), գտնում է, որ «և հնչյունական կազմը և քերականությունն ու բառապաշարը գնալով վերափոխվում, ավելի են մոտենում գրական լեզվին» (նշվ. աշխ., էջ 13):
[94] Նույն տեղում:

կայ այս պնդումները ճշմարիտ չեն նաև բարբառի այսօրվա վիճակի առումով[96]:

Բայազետի բարբառային միավորը առաջին անգամ առանձին բարբառ (*Բայազետի բարբառ* անվանումով) դիտարկվեց Գ.Ջահուկյանի կողմից՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման արդյունքում: Ըստ այդմ՝ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախումբը կազմում են Երևանի կամ Արարատյան, Ջուղայի, Բայազետի, Աստրախանի և Արդվին-Թբիլիսիի բարբառները[97], իսկ Բայազետի բարբառը ներկայացվում է մեկ՝ Կամո (այժմ՝ Գավառ), միավորով[98]: Առանձին դեպքերում Գ.Ջահուկյանի բերած տվյալները հարազատորեն չեն արտահայտում Բայազետի բարբառի իրողությունները, բայց կարևոր է, որ առաջին անգամ այլ բարբառների շարքում բարբառս ներկայացվում է հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների ամբողջությամբ, որոշվում է բարբառի դիրքը հայ բարբառների շարքում, և Բայազետի բարբառը հստակորեն սահմանազատվում է Արարատյան բարբառից: Գ.Ջահուկյանի բերած աղյուսակները վկայում են[99], որ Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներից Բայազետի բարբառը տարբերվում է երկուսուկես տասնյակից մինչև երեք տասնյակ հատկանիշներով: Նկատենք, որ հնչյունաբանական ու ձևաբանական տարբերություններն ուղեկցվում են բառապաշարային և շարահյուսական զանազանություններով, որոնք, հասկանալի է, Գ.Ջահուկյանի հարյուր հատկանիշներում ընդգրկված չեն: Գ.Ջահուկյանը կատարել է նաև 5-րդ դարի հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգում[100] և հնարավոր հարավարևելյան միջբարբառի շրջանակներում արձանագրել է Կոգովիտի (Կամո [Նոր-Բայազետ~Բայազեդ /Դարույնք/]), Ջուղայի, Չահարմահալի, Մարաղայի ենթաբարբառների, Պարսկահայքի միջեն-

---

[95] Նշվ. աշխ., էջ 27:

[96] Նկատենք նաև, որ Ռ.Բաղրամյանը հանդես է բերում իրողությունների որոշ շփոթ, երբ Բայազետի բարբառային միավորից («Բայազետի ենթաբարբառ» կոչված) անկախ և նրան զուգահեռ դիտարկում է «Նորատուսի ենթաբարբառ» բարբառային միավորը՝ իրականում հիմք ունենալով միայն մեկ տարբերակիչ հատկանիշ (տե՛ս նշվ. աշխ., էջ 53):

[97] ՀԲՆ, էջ 135:

[98] Տե՛ս նույն տեղում:

[99] Տե՛ս նշվ. աշխ., էջ 51 – 119:

[100] Տե՛ս նշվ. աշխ., էջ 180 – 192:

թաբարբառի առկայությունը[101]: Եթե Գ.Ջահուկյանի դասակարգումը «գոնե մասամբ ճիշտ է արտացոլում հայոց լեզվի զարգացման հին շրջանի բարբառային տարբերությունների վիճակը»[102], ապա կարող ենք արձանագրել, որ Բայազետի բարբառը իր հիմնական հատկանիշներով գալիս է մեր լեզվի գործառության հնագույն ժամանակներից, հետևաբար չէր կարող առաջանալ Արարատյան բարբառի և Մշո բարբառի մի հատվածի խառնումով, մանավանդ որ ըստ 5-րդ դարի բարբառների՝ Ջահուկյանի ներկայացրած փոխհարաբերությունների՝ Կոգովիտի ենթաբարբառը հարավ-արևելյան միջբարբառի կազմում էր, Այրարատի միջենթաբարբառը՝ հյուսիս-արևելյան բարբառի կազմում, իսկ Տարոնի միջենթաբարբառը՝ հարավ-կենտրոնական բարբառի կազմում[103]:

Բայազետի բարբառի առանձին իրողություններից ուշադրության առարկա են դարձել շնչեղ ձայնեղ բաղաձայնները: Դրանց փորձառական ուսումնասիրությամբ ու դիտարկումներով զբաղվել են Ա.Խաչատրյանը[104], Ա.Հանեյանը[105]: Բայազետի բարբառի հնչյունական իրողություններին ըստ անհրաժեշտության անդրադարձել է նաև Հ.Մուրադյանը[106]:

2. ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բայազետի բարբառով ներկայում խոսում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և շրջակա մեկ տասնյակից ավելի գյուղերում, որոնց բնակիչների նախնիները գաղթել են Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, մասամբ նաև Վանից, Խոյից, Մու-

[101] Տե՛ս նշվ. աշխ., էջ 185:
[102] Նշվ. աշխ., էջ 189:
[103] Նշվ. աշխ., էջ 185-186: Նկատենք նաև, որ ըստ այս դասակարգման՝ հարավկենտրոնական բարբառի Վասպուրական – Մոկքի ենթաբարբառի կազմում են ընդգրկված Վանը և Վարդենիսը /Դիադին/ (տե՛ս ՀԲՆ, էջ 185):
[104] Տե՛ս Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյուբանություն, Ե., 1988, էջ 146. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных в некоторых армянских диалектах, Лингвистическая география, диалектология и история языка, Ер., 1976, էջ 432-440. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных в армянских диалектах, Միջազգային հայերենագիտական գիտաժողով - 1982, Եր., 1984, էջ 327-336.
[105] Ա.Հանեյան, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., 2010, էջ 166-231:
[106] Տե՛ս Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, հնչյունաբանություն, Ե., 1982 (այսուհետ՝ ՀԼՊՔ):

շից, Ալաշկերտից և այլ վայրերից[107]: Մինչև 19-րդ դարի սկզբները Բայազետի բարբառը գործածվում էր Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառակում, որը Դիադինի, Խամուրի, Նահինի, Ալաշկերտի, Խալիյաղի գավառակների հետ կազմում էր Բայազետի գավառը՝ համանուն կենտրոնով: Գավառը զբաղեցնում էր Երզրումի նահանգի հարավարևելյան մի հատվածը՝ Վանալճից հյուսիս-արևելք: Հյուսիսից գավառին սահմանակից էին Կարսի մարզն ու Երևանի նահանգը, արևելքից՝ Պարսկաստանը, հարավից՝ Վանի նահանգը, արևմուտքից՝ Խնուսի և Բասենի գավառակները[108]: Այս աշխարհագրական միջավայրում Բայազետի բարբառը արևմուտքից սահմանակից էր Դիադինի, արևելքից՝ Խոյ-Մարաղայի բարբառներին, հարավից՝ Վանի, հյուսիսից՝ Արարատյան բարբառներին, հյուսիս – արևմուտքից՝ Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքին:

Բայազետի գավառը պատմականորեն մոտավորապես համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառին, որը նշանակալից դեր է խաղացել դեռևս Արարատյան թագավորության (Ուրարտու) ժամանակ, այնուհետև եղել է արքունի կալվածք: Արշակունիների թագավորության անկումից հետո (428թ.) Կոգովիտն անցնում է Բագրատունիներին: 10-12-րդ դարերում Կոգովիտը շարունակում էին տիրել Բագրատունի կրտսեր պայազատները, ու այդ պատճառով Դարույնքը այնուհետև սկսեց կոչվել նաև Պայազատ, որի աղավաղված ձևն է հետագա Բայազետը[109]: Բայազետի մասին («բերդն Բայազիտի» կապակցությամբ) հայ պատմիչներից առաջինը հիշատակել է Առաքել Դավրիժեցին՝ 1451թ. ընդօրինակված Հայսմավուրքի հիշատակարանից բերված հատվածում[110]: Օսմանյան զորքերն առաջին անգամ Կոգովիտեն մտել 1554 թ., երբ Սելիմ սուլթանը այն գրավեց Իրանից և հանձնեց Սիլվան կամ Սլիվան կոչվող քրդական

[107] Այլ վայրերից գաղթածների սերունդները Բայազետի բարբառով խոսողների հոծ և կայուն միջավայրում ժամանակի ընթացքում կորցրել են իրենց մայրենի խոսվածքները, սակայն բարբառիս տարբեր խոսվածքներում դեռևս պահպանվում են դրանց հետքերը:

[108] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 582-583:

[109] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Ե., 1979, էջ 503:

[110] «Զոր իմացեալ մեծ հայրապետն զնենգութիւն նորա, և առեալ զաջն սուրբ Լուսաւորչին՝ հանդերձ այլ սպասիւք յաւուրս ձմերայնոյ, և գնացեալ մինչ ի Բագուան, և անտի եկեալ ի բերդն Բայազիտի....» (տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Ե., 1958, էջ 175, նաև՝ Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 423):

տոհմին, որն էլ այստեղ կիսանկախ իշխեց մինչև 19-րդ դարը: Մինչև 1829թ. Կոգովիտը բազմամարդ էր, ուներ գրեթե միատարր հայ բնակչություն. հայաբնակ էին գավառի 60-ից ավելի գյուղեր, իսկ Բայազետ քաղաքը ուներ 7000 բնակիչ, որոնց ճնշող մեծամասնությունը հայեր էին: 1828 թ. օգոստոսին ռուսական զորքերը հայերի աջակցությամբ գրավում են Բայազետը: Սակայն 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանուպլսում ստորագրված ռուս-թուրքական հաշտության պայմանագրով Ռուսաստանը Բայազետը զիջում է Թուրքիային[111]: Այդ պայմանագրի 13-րդ հոդվածով արևմտահայերին իրավունք է տրվում ներգաղթելու ռուսական կայսրության սահմանները: 1830 թ. գարնանից սկսվում է զանգվածային արտագաղթը[112]: Վերաբնակիչները հաստատվում են նաև Սևանա լճի արևելյան, հարավային, մասամբ նաև արևմտյան ափերին: Բայազետ քաղաքից գաղթածները հիմնվում են պատմական Գեղարքունյաց գավառի Գավառ կամ Գավառենի ամայի բնակավայրում[113], որը 1850 թ. ստանում է քաղաքի կարգավիճակ և վերանվանվում Նոր Բայազետ[114] (հետագայում՝ Կամո, ներկայում՝ Գավառ): Բայազետ քաղաքի շրջակա գյուղերից եկածներն էլ հաստատվում են Գավառի մերձակա տարածքներում՝ Գավառագետի ավազանում, և հիմնում մոտ մեկ տասնյակ բնակավայրեր: Գավառ քաղաքը և բայազետցիների սերունդներով բնակեցված բնակավայրերը (ներկայումս՝ Հացառատ, Արծվաքար, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Ծովազարդ, Լճափ, Հայրավանք, Բերդկունք)[115] 1930թ. կազմում են Նոր Բայազետի շրջանը, որը 1959թ.

---

[111] Նույն տեղում:

[112] Նախապես ընդունված էր կարծել, թե մինչև 1830 թվի վերջերը Բայազետքաղաքից և նրա գավառներից գաղթել էր 4215 ընտանիք կամ շուրջ 25290 մարդ, սակայն վերջին ուսումնասիրությունները պարզել են, որ Բայազետից և նրա գավառներից ներգաղթած հայերի թիվը իրականում եղել է 2500 ընտանիք կամ մոտավորապես 15000 մարդ (տե՛ս Հ.Հարությունյան, Նոր Բայազետի գավառը 1828 – 1913 թթ., Ե., 2008, էջ 81. Ա.Մելքոնյան, Ազգաբնակչության տեղաշարժերը Երզրումի նահանգի Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ գավառներում 19-րդ դ. առաջին երեսնամյակին, ԼՀԳ, թիվ 5, 1988, էջ 22-23):

[113] Ամայացել էր 17-րդ դարի սկզբներից՝ Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988, էջ 920):

[114] Տե՛ս Հ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 123-124:

[115] Գավառ, Արծվաքար, Հացառատ, Կարմիրգյուղ բնակավայրերի բնակիչների նախնիները եկել են Բայազետ քաղաքից և շրջակա գյուղերից, Սարուխանի բնակիչների նախնիները՝ Բայազետի Զանգիզոր և Սուրբ Օհան գյուղերից, նաև Խոյի գավառից, Նորատուսի բնակիչների նախնիները՝ Քորուն, Մոսուն

վերանվանվում է Կամոյի շրջան[116]: Շրջանի տարածքը գտնվում է Ալաշկերտից և Մուշից, նաև Դիադինից գաղթածների սերունդներով բնակեցված Մարտունու[117] և հիմնականում Մակուից, ապա Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գաղթածների սերունդներով բնակեցված Սևանի տարածաշրջանների[118] միջև: Բայազետի բարբառը բայազետցիների սերունդների միատարր միջավայրում մինչ օրս անխաթար պահպանած Գավառի տարածաշրջանը ընդգրկված է Գեղարքունիքի մարզում և անմիջական շփումներ չունի ինչպես Արարատյան ու Խոյ-Մարաղայի[119], այնպես էլ Դիադինի բարբառները ներկայացնող բնակավայրերի հետ[120]:

Թե՛ 19-րդ և թե՛ 20-րդ դարերի սկզբներին պատմական հայրենիքից գաղթած բայազետցիներ բնակություն են հաստատել Արևելյան Հայաստանի նաև այլ վայրերում, հայտնվել բարբառային այլ միջավայրերում[121]: Ժամանակի ընթացքում սրանց սերունդները լրիվ կամ մասամբ կորցրել են մայրենի բարբառը: Բացի այդ՝ բարբառային այլ շրջապատը կամ նույն բնակավայրում այլ բարբառային խոսքի հետշարունակական շփումը ոչ միայն առաջ են բերել զգալի ազդեցություններ, այլ նաև հաճախ ստեղծել են տարբեր

գյուղերից, Գանձակի բնակիչների նախնիները՝ Բայազետի, Խոյի և Սալմաստի գավառներից, Լանջաղբյուրի և Գեղարքունիքի բնակիչները սարուխանցիների, նաև Ալաշկերտից ու Սալմաստից գաղթածների սերունդներ են, Ծաղկաշենի բնակիչները գանձակցիների, Հայրավանք և Բերդկունք գյուղերի բնակիչները՝ նորատուսցիների սերունդներ են: Լճափ և Ծովազարդ գյուղերի բնակիչները ալաշկերտցիների, մշեցիների և բայազետցիների սերունդներ են (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի համապատասխան բաժինները, Ռ.Բաղրամյան, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 7-8, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Ե., 2008):

[116] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988, էջ 923:

[117] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 744:

[118] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Ե., 1998, էջ 579:

[119] Սևանի տարածաշրջանի մի շարք գյուղերում բնակվում են Մակուից գաղթածների սերունդներ, որոնց ներկա խոսվածքները, թվում է, պարունակում են լեզվական տարրեր թե՛ Խոյ-Մարաղայի, թե՛ Բայազետի բարբառներից: Թերևս այդ, ինչպես նաև Հրազդանի տարածաշրջանի համանման խոսվածքները ենթակա են առանձին ուսումնասիրության:

[120] Վերջինս շարունակում է գործառել Գեղարքունիքի մարզի՝ դիադինցիների սերունդներով բնակեցված Վարդենիս քաղաքում:

[121] Այսօր նրանց սերունդները բնակվում են Արագածոտնի (Կարբի, Արուճ, Քուչակ, Վերին Բազմաբերդ, Վարդենիս գյուղեր), Արմավիրի (Փշատավան, Ալաշկերտ, Ջանֆիդա գյուղեր), Կոտայքի (Գողթ, Արագյուղ, Արզական, Բջնի, Կաթնաղբյուր, Ակունք գյուղեր) մարզերում և այլուր (տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Ե., 2008):

բարբառների հատկանիշները զուգորդող լեզվական նոր իրավիճակներ, որոնք ենթակա են բարբառագիտական առանձին ուսումնասիրությունների[122]:

1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Բայազետի գավառում մնացած հայությանը վիճակված էր իսպառ անհետացում՝ աղետների, պատերազմների, կոտորածների, տեղահանությունների ու գաղթերի պատճառով[123]: 1909 թվին Բայազետի գավառակի 110 գյուղերից միայն երեքն էին հայաբնակ: 1914 թվին Բայազետ քաղաքն ուներ 5000 բնակիչ, որից 2000-ը՝ հայ: 1918 թվին, երբ թուրքերը հերթական անգամ հետեն վերցնում Բայազետը, հայերն ամբողջովին տեղահան են արվում: Այժմ Բայազետը բնակեցված է թուրքերով և քրդերով[124]:

3. ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Լինելով բարբառային հայերենի տարբերակային դրսևորում՝ Բայազետի բարբառը բնութագրվում է տարբերակայնության[125]

---

[122] Արարատյան բարբառի խոսվածքների մասին խոսելով՝ Ս.Բաղդասարյան-Թափալցյանը նկատում է, որ «Բայազետի բարբառի ազդեցությունը կա Հոկտեմբերյան-Կոտայքի ենթաբարբառի վրա, բայց այդ ազդեցությունը անհամեմատ ուժեղ է դրսևորվում Կոտայքի շրջանում տեղակայված խոսվածքներում» (տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 21): Մյուս կողմից՝ Բայազետի բարբառային խոսքը, հայտնվելով մեկ այլ, օրինակ՝ Դիադինի բարբառի միջավայրում, ժամանակի ընթացքում զգալիորեն ազդվել է այդ բարբառից: Մեր դիտարկումով՝ Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը, որի բնակիչների նախնիները գաղթել են Բայազետից, զգալիորեն հեռացել է մայր բարբառից: Այստեղ, օրինակ, բացակայում է Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ամենաբնորոշ հատկանիշը՝ շրթնայնացած ա-ն, և ընդհակառակը՝ լիարժեքորեն արտահայտվում է Դիադինի բարբառին խիստբնորոշ մի հատկանիշ՝ ձայնավորների և բաղաձայնների ընդգծված քմայնացումը:

[123] Բավական է հիշել 1840 թվի հունիսի 20-ից մինչև սեպտեմբերի 28-ը տևած երկրաշարժերը, 1854, 1878, 1914 թվերին ռուսների կողմից Բայազետի գրավվելը և նորից թուրքերին հետ վերադարձվելը: Այդ ողջ ընթացքում շարունակվում է Արևմտյան Հայաստանից և մասամբ նաև Պարսկահայաստանից հայության ներգաղթը Արևելյան Հայաստան: Այն հատկապես լայն թափ է ստանում 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Այդ պատերազմի ժամանակ քրդերը հարձակվում են Բայազետի գավառակի 24 հայաբնակ գյուղերի վրա, հիմնահատակ կործանում դրանք և բնակիչներին ոչնչացնում: Բայազետից, Ալաշկերտից և նրանց մերձակա բնակավայրերից հայության մի խոշոր զանգված գաղթում է և վերաբնակեցվում Նոր Բայազետի գավառում: Իբրև ներգաղթի տարիներ են հիշատակվում նաև 1882-1884թթ., 1886-1888թթ., 1891-1896թթ. (տե՛ս Հ.Հարությունյան, նշվ.աշխ., էջ 137-140:):

[124] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 583-584:

[125] Ժամանակին Բայազետի բարբառում այս իրողությունը դիտարկել է Ռ.Բաղրամյանը՝ գրելով. «նույն բառը կամ քերականական ձևը տարբեր

բազմազան արտահայտություններով: Իրողությունը այստեղ դրսևորվում է երեք եղանակով. ա) ներհամակարգային տարբերակայնություն նույն լեզվակիրների խոսքում, բ) ներհամակարգային տարբերակայնություն տարբեր լեզվակիրների խոսքում և գ) տարհամակարգային տարբերակայնություն: Նույն լեզվակիրների խոսքում մեծ տարածում ունի հնչյունական տարբերակայնությունը, որը դիտարկվում է, երբ զուգահեռ գործածվում են՝ ա) նույն բառային միավորի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևեր (հ՛առավտընէ - հ՛առավնէ, պըլուլել - պըլուրել, պըռծընել - պըռզնել, հ՛ընցըցընել – հ՛ընսցընել, հ՛էրեսօվ – հ՛իրեսօվ – հ՛իրսօվ), բ) նույն նախնական ձևին հանգող և տարբեր զարգացման ընթացք ներկայացնող տարբերակներ (կ°ր – կէր /կայր/, հ՛արիր – հ՛արուր /հարեւր/, ղըրկել – հ՛ըղըրկել – հ՛օղըրկել /յուղի արկանել/, հ՛ըղեղ – հ՛ըղօղ /ուղեղ/), գ) փոխառյալ բառի հնչյունական տարբեր ձևեր (կ՛ութի - կութի, կ°*ստուրկա- կ°ստըրուլկա- կ°ստըրուտկա*, թ°*մըզ - թ°մուզ*), դ) գրական լեզվի ազդեցությամբ առաջացած և բուն բարբառային ձևեր (խառնիս – հ՛առսանիք, խավսար – հ՛ավասար, °վատալ – հ՛ավատալ, կէծակ - կ°յ-ծակ) ևն[126]: Ի դեպ, տարբերակային ձևերը միշտ չէ, որ հավասարաչափ գործածական են: Հաճախ թվում է, թե ձևերից մեկը դուրս է մղվում նոր սերնդի խոսքից: Օրինակ, այդպիսիք են հետևյալ բառազույգերից առաջինները. *խազար - հ՛ազար, շընոխկ - շընորք, օխտ- յօթ, տըսվէրկու - տըսնէրկու, հ՛օռթում - յեռթում* ևն: Սակայն այդ դուրսմղումը բավականին դանդաղ է ընթանում, և տարբերակային այս կամ այն ձևը շարունակում է գործառել լեզվական հանրության առանձին հատվածներում: Ներկայում Բայազետի բարբառում գործառում են տարբերակային ձևեր, որոնք միջինհայերենյան շրջանից են գալիս: Օր., միջին հայերենի *յղրկել - յողրկել* զուգաձևությանը համապատասխանում են բար-

---

բարբառախոսների մոտ արտասանվում է զանազան երանգներով.... նույն խոսվածքի տարբեր կրողներից առնված նմուշներում ու փաստերում հանդես են եկել բազմաթիվ տարբերակներ, երբեմն՝ իրարամերժ: Հենց այդ էլ խոսվածքի այժմյան իրական պատկերն է և գլխավորը» (Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 13):

[126] Ավելի հանգամանորեն տե՛ս Վ.Կատվալյան, Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2014, էջ 273-277:

բառային *հ՛ողրկել - հ՛օղրրկել* տարբերակները, նաև՝ միայ. *մուրադ - մուրատ- մուրազ*, Բ. *մուրադ - մուրազ*, միայ. *սֆաթ - սիֆաթ*, Բ. *սըֆաթ - սիֆաթ*, միայ. *սովրիլ - սորվել*, Բ. *սօվրել - սօրվել* ևն[127]:

Բազմազան արտահայտություններ ունի նաև ձևաբանական տարբերակայնությունը, որ դիտարկվում է հիմնականում անվանական և բայական համակարգերում: Անվանական համակարգում տարբերակայնություն դրսևորվում է, երբ նույն լեզվակիրների խոսքում զուգահեռաբար գործածվում են՝ ա) հոգնակիի կազմության տարբեր ձևեր (գ՛եղացիք - գ՛եղացիներ, քըվորտանք - քուրեր, գ՛իլվանք - գ՛էլեր, գ՛եղրանք - գ՛եղեր), բ) նույն բառերի՝ տարբեր հոլովումների վերաբերող ձևեր (տիրոչ - տիրու, հ՛առչից - հ՛առչուց, թոռան - թոռի, ձ՛ըմըռվա - ձ՛ըմռան, բ՛անակա - բանակից), գ) նույն հոլովի՝ տարբեր կազմությամբ ձևեր (ձ՛եռէն – ձ՛եռից, հ՛էսօրվընէ – հ՛էսօրվընից, կըթել կօվը – կըթել կօվին), դ) հոդի գործածության տարբերություններ ունեցող ձևեր (ձ՛ին – ձ՛ինը), ե) դերանունների կարճ ու երկար ձևեր (քե – քեզի – քեզիկ, էս – էսա, էսի – էսիկ, հ՛իր – հ՛իրա, էստա - էսակըդա) ևն: Բայական համակարգում տարբերակայնություն դրսևորվում է, երբ նույն լեզվակիրների խոսքում զուգահեռաբար գործածվում են՝ ա) նույն բայի՝ կազմությամբ տարբեր ձևեր (տ°փկել - տ°փկընալ, բ՛արկել – բ՛արկընալ, հ՛ընգընել – հ՛ընգել, գիդալ – գինալ, շինել – շիքել, խառվել – խառնըվել, շըշկըռել – շըշկըռվել), բ) նույն բայաձևի՝ տարբեր հիմքերից կազմված տարբերակներ (գ՛ըրի – գ՛ըրէցի, գալօղ – էկօղ, ծըղզօղ – ծըղզացօղ, դ՛ընօղ – դ՛ըրօղ, քէլէք – քէլացէք), գ) վերլուծական ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքի օժանդակ բայով և առանց դրա ձևեր (գ՛ըրում ա – գ՛ըրում, գ՛ըրեր ա – գ՛ըրե, չըգ՛ըրում ա – չըգ՛ըրում), դ) վաղակատար ժամանակաձևերի հոգնակի երրորդ դեմքի տարբերակներ (գ՛ըրէր են – գ՛ըրած – գ՛ըրած ա – գ՛ըրած են, գ՛ըրէր ին – գ՛ըրած ին), ե) պատճառական բայերի՝ կազմությամբ տարբեր ձևեր (մօտկըցում – մօտկըցընեմ, մօտկըցո՛ւ – մօտկըցըրա՛), զ) հրամայականի ձևեր (քէլա՛ - քէ՛լ, դ՛ի՛ր – դ՛ի՛)ևն:

[127] Միջինհայերենյան օրինակները քաղված են «Միջին հայերենի բառարանից» (Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Բ, Ե., 1992):

Բառապաշարային տարբերակայնություն դրսևորվում է, երբ նույն լեզվակիրների խոսքում զուգահեռաբար գործածվում են՝ ա) նույն արմատով նույնիմաստ տարբեր կազմություններ (խուփբ՛երան – փագբ՛երան, ջ՛առթուխուռդ – ջ՛առթուփըշուր, շ°նտըղա – շ°նվոռթի, մէ փըռթուճ – մէ փըռթիկ, տընաքանդ – տընակուլ), բ) բնիկ և փոխառյալ արմատներով կամ մասնիկներով տարբերակներ (էսքան - էստ°, կըռվըրար - կըռվըդ°ր, °ներ°մուս – բէն°մուս, թամախօվ – թամախք°ր), դ) բաղադրության կազմիչների՝ կապակցմամբ տարբեր ձևեր (°ռուտուր - °ռեվտուր, թուլ –թոք – թուլութոք, տեղ-սըթար – տեղ ու սըթար, կիսբ՛աց – կիսաբ՛աց, ընդե – էնատե), ե) բաղադրիչի քերականական տարբեր ձևավորմամբ տարբերակներ (գ՛ալ տ°րի – գ՛ալօղ տ°րի – գ՛ալիք տ°րի, տեղը տեղին – տեղին-տեղին), զ) բաղադրիչների տարբեր դիրքերով ձևեր (թ°զ°թօփ - թօփթ°զ°, կ°պիկ-մէյ-մուն - մէյմուն-կ°պիկ), է) նույն արմատի տարբերակներով ձևեր (օխտէք – յօթէք, լ°լկան - լ°սկան) ևն: Նկատենք, որ լեզվական նույն հանրության շրջանակում տարբեր լեզվակիրների համար կարող են ավելի սովորական լինել տարբերակներից մեկը կամ մյուսը, բայց նման դեպքերում էլ մյուս տարբերակները հավասարապես ընդունելի, հասկանալի և որոշ չափով գործածական են:

Ներհամակարգային տարբերակայնությունը տարբեր լեզվակիրների խոսքում պայմանավորված է հիմնականում լեզվական հանրության սեռային և տարիքային անհամասեռությամբ: Մասնավորապես, տղամարդկանց ու կանանց լեզվական տարբերությունները պայմանավորված են նրանց հոգեկերտվածքի տարբերություններով, ընտանեկան և հասարակական դերով, դիրքով, զբաղմունքով և այլ գործոններով[128]: Տարբերակայնությունն այս դեպքում որպես կանոն արտահայտվում է հնչերանգային, բառապաշարային, ոճական յուրահատկություններով: Հասկանալի է, որ կանայք իրենց էությամբ ավելի զգացմունքային ու հուզական են, քան տղամարդիկ: Սեռերի հոգեկերտվածքի այդ տարբերությունը իր զանազան դրսևորումներն է ունենում բարբառային խոսքում: Խոսքի հուզակա-

[128] Տե՛ս նաև Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 96: Է.Աղայանը համարում է, որ լեզվի սեռային տարբերակումները շատ որոշակի են դրսևորվում հասարակական զարգացման նախնական շրջաններում (տե՛ս նշվ. աշխ., էջ 96-97): Նկատենք, որ այդ տարբերակումները նկատելիորեն դրսևորվում են նաև մեր օրերում, հատկապես երբ դիտարկում ենք բարբառային լեզուն:

նությունը նախ և առաջ արտահայտվում է հնչերանգով: Եթե տղամարդկանց խոսքը ավելի զուսպ է և կտրուկ, ապա կանանց խոսքը սովորաբար երանգավորվում է ավելի արտահայտիչ հնչերանգով, որը դրսևորվում է ձայնի բարձրացում-իջեցումներով, առանձին վանկերի տևական արտասանությամբ[129]: Կանանց խոսքը առանձնանում է եղանակավորող այնպիսի արտահայտություններով հագեցվածությամբ, ինչպիսիք են՝ *ջանիտ մեռնեմ, վոտըտ աչեմ, կուրբանտ հ՛ըլնեմ, վոտիտ տըկի խողը հ՛ըլնեմ, լուսըս քոռնա, խողերը գ՛ըլխիս* ևն: Այս կարգի արտահայտություններ կարող են հանդիպել նաև տղամարդկանց խոսքում, սակայն պակաս հաճախականությամբ: Խոսքի սեռային տարբերակվածությունը դրսևորվում է նաև ուրախություն, ցավ, դժգոհություն, զարմանք և այլ զգացումներ ներկայացնող եղանակավորող արտահայտություններում: Օրինակ՝

Կանանց խոսք	*Տղամարդկանց խոսք*
Էս իմալ ջանըս թեթըվցավ	Էս ինչ լա՛վ հ՛ելավ
Էս ի՞նչ սեվ ու զուլում էր	Էս հընչի՞ էսենց հ՛ելավ
Քո ի՞նչ ցավն էր	Քո ի՞նչ գ՛ոռծն էր
Ցավըտկըդրե՞ր էր	Քեզի պե՞տք էր
Մեղասու °սված	Այ քեզի բ՛ա՛ն

Եթե երկրորդ շարքի արտահայտությունները նույն հաջողությամբ կարող են հանդես գալ նաև կանանց խոսքում, ապա առաջին շարքի արտահայտությունները տղամարդկանց խոսքում կարող են տարօրինակ թվալ: Կանանց խոսքը աչքի է ընկնում նաև ոճական պատկերավոր արտահայտություններով, բառերի փոխաբերական յուրահատուկ իմաստներով, ինչպես՝ *դ°ռդի մէջ կ°լեմ հ՛էլե* (ծանր վիշտ ունեմ), *°խը ընձի տ°րե* (մեծ վախ ունեմ), *կըտոր-կըտոր հ՛ըլնել* (սեթևեթել), *°նեսկօվ °նեսկաչոր °նել* (շատանիծել), *կըտոր խանել* (ատել), *հ°զ °նել* (դուրը գալ), *սեվի՞ն ա* (հոգ չէ), *քըրքըրվել* (տքնել), *տըրօրվուկ-տ°նջըվուկ* (շատ չարչարված), *ա°դըռել* (ատել), *դ՛աէթափուկ* (իրեն շրջապատից վեր դասող) ևն:

[129] Օրինակ, «Լավ, °րի էթանք, էլի» հորդորական նախադասությունը տղամարդիկ կարտասանեն հրամայական որոշակի տոնով, մինչդեռ կանայք կձգտեն իրենց խոսքին համոզչական երանգ հաղորդել առանձին վանկերի տևական արտասանությամբ՝ «Լա՛՛՛վ, °րի էթանք, էլի՛՛»:

Կանանց և տղամարդկանց խոսքերը միմյանցից տարբերվում են նաև կոչական բառերի ու ձայնարկությունների ընտրությամբ; Կանանց խոսքին հատուկ են, օրինակ, *յաման, ջանըմ, վաշ, վույ, վ°խկ, քաը22* ձայնարկությունները, *յեխպտ, °խճի, տըղա, քա կընիկ, կընիկ, այ քուր* կոչական բառերը: Տղամարդկանց խոսքին ավելի բնորոշ են *պահ, պահօ, թու, հօվ, °ր° հօվ, հայ գիդի հա* ձայնարկությունները, *գ°, °ր°, քուրօ, հ՛ընգեր, °խպէր, °խպօր բալա, քըվոր բալա* կոչական բառերը:

Խոսքի սեռային տարբերակվածությունը հատկապես ցայտուն է դրսևորվում հայհոյանքներում, նախատական արտահայտություններում, օրհնանքներում ու անեծքներում: Լիովին տարբեր է հայհոյանքների բառապաշարը, և բացառվում է մի սեռին հատուկ հայհոյանքը հակառակ սեռի խոսքում: Հայհոյանքների ոլորտում ավելի հնարամիտ են տղամարդիկ, որոնց այդ կարգի արտահայտությունները ծավալուն են ու արտահայտիչ: Տղամարդկանց խոսքում հաճախ հայհոյանքները հասցեատեր չունեն, ինքնանպատակ են կամ ունեն երանգավորող դեր, երբեմն էլ փոխարինում են սովորական բառերի: Սակայն տղամարդիկ զուսպ ու սակավախոս են օրհնանքների, անեծքների ու նախատական արտահայտությունների ոլորտում: Գործածական են, օրինակ, այսպիսի արտահայտություններ՝ *յես քօ հ՛է՛ն եմ °նիծե, °սված էլ բէթ°ռէն °զատա, °սված բ՛արին կ°տարա, °սված քօ բ՛անն °չ օղա, շ°տ °բրես, լավ տէնանք, օռշնըվի ծընունդըտ, զօրէնաս, օգռ°շ/օռ°շ, իշի ձ՛°ք, շ°նվոռթի, իշի քուռակ, դէլ* ևն: Հասկանալի է, որ տղամարդկանց խոսքում անեծքներին ու նախատական արտահայտություններին փոխարինում են հայհոյանքները: Մինչդեռ կանայք անիծելիս և նախատելիս շատ երևակայուն են և հնարամիտ: Օր.՝ *°սեղ տընգես՝ խօվը նըստես. °քլօր նըստես՝ բ՛ըփկօվ քըշես. բոյ ըտ խօրեմ. °սված մ°ռթ ու տըղէտ ա°խա, չոր տեղ էթաս՝ կ°նանչ բ՛ուսի. ումուդմեռ, սեվսիռտ, իդարախօրուկ* ևն:

Խոսքի սեռային տարբերակվածություն նկատելի է նաև բառակազմական առումով: Դիտարկումները ցույց են տալիս, որ, օրինակ, բաղհյուսական հարադրությունները ավելի շատ են գործառում կանանց խոսքում: Առավելաբար կանանց խոսքում հանդիպող նման

հարադրություններից են՝ *°վել-խոռթ, լըվասկ-թափ, խաց ու խըմոր, գ՛ող ու գ՛անգատ, բ՛ըռթըվուկ-կըտըռտըվուկ* ևն: Այսպիսով, թեկուզ նույն հանրության մեջ կանայք ու տղամարդիկ կիրառում են նույն լեզվական համակարգը, սակայն նրանց խոսքերը հաճախ հստակորեն տարբերակվում են[130]:

Ներհամակարգային տարբերակայնություն տարբեր լեզվակիրնե-րի խոսքում արձանագրվում է նաև ըստ լեզվական հանրության տարիքային տարբեր խմբերի: Լեզվական յուրաքանչյուր հանրության մեջ համատեղ ապրում են տարբեր սերունդներ, որոնք իրենց կենսափորձի, աշխարհայացքի, սովորույթների և այլ տարբերություններ դրսևորում են նաև իրենց խոսքում՝ այդպիսով ձևավորելով տվյալ սերնդին հատուկ լեզվական յուրահատկություններ: Այդպիսիք դիտարկվում են առավելաբար բառապաշարում՝ տարբեր սերունդների համապատասխան բառաշերտերով, բայց որոշ չափով նկատվում են նաև հնչյունական և ձևաբանական համակարգերում: Բայազետի բարբառում տարբեր սերունդների խոսքերի դիտարկումները երևան են հանում հնչյունական ու ձևաբանական տարբերակվածության սակավ դեպքեր. ա) եթե ավագ սերնդի խոսքում որոշակի տարածում ունի օտար *կ՛* հնչյունը, ապա երիտասարդ սերնդի խոսքում դրա դիմաց սովորաբար հանդիպում է *կ*, բ) Նորատուսի խոսվածքում *գ,կ,ք*-ի դիմաց *ջ,ճ,չ*-ի գործառությունը նույնպես ավելի բնորոշ է ավագ սերնդի խոսքին, գ) առանձին բառեր տարբեր սերունդների խոսքում ունեն հնչյունական ձևավորվածության տարբերություններ, այսպես՝ առավելաբար հին սերնդի խոսք՝ *լօխկընալ, օխտ, °բէլանցի, խառնիս, կէծակ, շընոխկ*, առավելաբար նոր սերնդի խոսք՝ *լօկընալ, յօթ, °պէրացյա, հառսանիք, կ°յծակ, շընորք* ևն, դ) ձայնավորով ավարտվող բառերի կրկնակի հոդառությունը (կ°տունը, կընգանը) ավելի բնորոշ է ավագ սերնդի խոսքին, ե) եթե ավագ սերնդի խոսքում *ությունն* ածանցի դիմաց սովորական է *ութունն* ձևը, ապա նոր սերնդի խոսքում ավելի տարածված են *ուցյունն*, *ուցյան*, երբեմն՝ *ուչյունն*,

[130] Նկատենք նաև, որ սովորաբար կանայք ավելի պահպանողական են լեզվական առումով և բարբառային խոսքը որպես կանոն ավելի կայուն են պահպանում, քան տղամարդիկ: Թերևս այդ մասին է վկայում նաև Հ.Աճառյանի հետևյալ դիտարկումը. «Իգական սեռն է, որ ....առհասարակ աւելի հաւատարիմ է իր մայրենի լեզուին, քան արական սեռը» (ՀԲ, էջ 30):

ության ձևերը (լավուցյուն – լավուցյան, լավուչյուն - լավուչյան)ևն[131]:

Բավականին հստակ է բառապաշարային տարբերակվածությունը: Սերունդները միմյանց հասկանալու խնդիրներ սովորաբար չեն ունենում, սակայն մի սերնդին (հատկապես՝ հին) բնորոշ բառաշերտը որպես կանոն մյուս սերնդի խոսքում չի գործածվում: Օրինակ, Բայազետի բարբառում միայն հին սերնդի խոսքում են հանդիպում անցյալին վերաբերող իրերի, իրողությունների անվանումներ, ինչպես՝ *°լ ըրտուն, °ռաբա, բ՛անօքի, գօնչօլ, դընգ, խոտաղ, ծ՛իթխաց, ս°ռայ* ևն: Հաճախ հին և նոր սերունդների խոսքերում նույն իրողությունը տարբեր կերպ է անվանվում: Ընդ որում՝ եթե հին սերունդը կարող է և օգտագործել նոր սերնդին բնորոշ բառերը, ապա նոր սերունդը սովորաբար հնին հատուկ տարբերակները չի գործածում: Հետևյալ բառազույգերում առաջինը բերում ենք հին տարբերակները. *դոդ – ջ՛ոչ °ման, հ՛ավուգ – բասէ, °ինջախ– հ՛ազիվ, °չօղում – բ՛արեվ, հ՛ութ° - հ՛առթուկ, բ՛էրնըկալ – խուփ, ս°բախտան – հ՛առավոտշուտ, թօփ– գ՛ընդակ, կըլ ավ – չաղ, ծ°մ-մ°գ* ևն: Ընդհանուր առմամբ նկատելի է օտար բառերի աստիճանական դուրսմղման միտում՝ թերևս գրական հայերենի ազդեցությամբ:

Բարբառային խոսքում առանձին խումբ են կազմում այսպես կոչված մանկական բառերը, որոնք որոշ դեպքերում պայմանավորված են խոսել սկսող երեխաների արտասանած բառերով, ինչպես՝ *ամ-ամ* (ուտել), *բուվա* (ջուր, խմել), *մ°մա* (մայրիկ), սակայն դեպքերի մեծ մասում փոքրերի հետ մեծերի շփման փաղաքշական բառապաշարն են կազմում, որը յուրացնում են խոսել սկսող երեխաները, ապա ժամանակի ընթացքում դրանք փոխարինում ընդհանուր գործածական բառերով: Այլ կերպասած՝ մանկական բառերը առավելաբար մեծերն

[131]Ռ.Բաղրամյանը անցյալ դարի վաթսունական թվականներին կատարած իր ուսումնասիրության մեջ նկատել է այդ ժամանակի հին և նոր սերունդների խոսքերը տարբերակող այս կարգի, նաև իրականությանը չհամապատասխանող այլ տարբերություններ (տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 13), սակայն այն ժամանակի նոր սերունդը այժմ հին սերունդն է, որի խոսքը մի շարք դեպքերում դարձյալ բնութագրվում է այն ժամանակվա հին սերնդի առանձնահատկություններով՝ ի տարբերություն ներկայիս նոր սերնդի: Ստացվում է, որ սերունդները փոխվում են, բայց նրանց լեզվական տարբերությունները առանձին դեպքերում մնում են նույնը: Հնարավոր է, որ յուրաքանչյուր ժամանակի նոր սերունդ ձգտում է իր խոսքը որոշ չափով մոտեցնել գրական լեզվին, սակայն ժամանակի ընթացքում, տարիք առնելով, դադարում է կարևորել այդ մղումը և շարունակում է կիրառել նախորդ սերնդի լեզվական կենսունակ տարրերը:

են սովորեցնում փոքրերին: Բայազետի բարբառում նման բառերից են՝ *կօկօ* (գլուխ), *չ°չիկ* (աչք), *թուշիկ* (այտ), *բօգիկ* (կոկորդ), *թ°թիկ* (ձեռք), *տօտօ, տօտիկ* (ոտք), *ծիծիկ*, *ճուճուլ /պուպուլ / պօթ* (տղա երեխայի անդամ), *տուտուգ* (հետույք), *փապա* (հաց), *ջ´ուջ´ուր / ջ´ուրիկ*, *միսիկ*, *կ°կա* (կոնֆետ), *°խկօ* (կղկղանք), *չիշ °նել*, *լուլու °նել* (միզել), *չըփիկ-չըփիկ °նել* – (լողանալ), *բօբօ*, *կուկու* (տիկնիկ), *վուվու* (ավտոմեքենա), *քըխ* (կեղտ), *տիտել / տիտիկ °նել* (նստել), *ն°ն° °նել* (քնել), *պուպուշ* (գեղեցիկ), *վավա* (վերք), *քուչօ / քուչիկ*, *բըժօ* (հորթ), *բ°յի* (գառ), *ճուճու* (հավ) են: Դեպքերի մեծ մասում մանկական բառերը սովորական բառերի փաղաքշական, նվազական ձևեր են, այլ դեպքերում առաջացել են ձայնարկություններից կամ բնաձայնություններից:

Բարբառային լեզվի բնորոշ հատկանիշներից է նաև տարհամակարգային տարբերակվածությունը, երբ լեզվական տարբեր հանրույթներ հանդես են բերում խոսվածքային յուրահատկություններ[132]: Բայազետի բարբառը դրսևորման յուրահատկություններ է հանդես բերում իր գործառությունն ունեցող բոլոր համայնքներում էլ, առանձին դեպքերում՝ նույնիսկ նույն համայնքի ներսում՝ պայմանավորված բնակիչների նախնիների ծագմամբ (հատկապես նման պատկեր են ներկայացնում Սարուխան[133] և Նորատուս համայնքները):

Հնչյունական համակարգում տարբերակայնությունը արտահայտվում է երեք կերպ՝ ա) իրողության արտահայտման զանազանություններով, բ) բարբառային հատկանիշներով, գ) առանձին բառերի հնչյունական ձևավորվածության տարբերու-

[132] Ինչպես որևէ լեզու միատարր չէ իր բոլոր դրսևորումներում, այնպես էլ ցանկացած բարբառ իր տարածման վայրերում հանդես է բերում զանազանություններ: Այդ մասին Հ.Աճառյանը գրել է. «...մարդկային հաղորդակցության միությունը բացարձակ չէ. ամեն մի համայնք իր ուրույն կյանքն ունի, և այս ուրույն կյանքը, միացած կլիմայական տարբեր պայմանների և ձայնական գործարանների տարբեր տիպի գործունեության հետ, առաջ է բերում մարդկային լեզվի մեջ տարբերություններ» (ՀԼՊ, 2-րդ մաս, էջ 114):

[133] Սարուխանի խոսվածքում ներքին տարբերություններ արձանագրել է նաև Ռ.Բաղրամյանը, սակայն նրա բերած լեզվական փաստերը հիմնականում իրականությանը չեն համապատասխանում (տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 9): Չկան համակարգային տարբերություններ, և խոսք կարող է լինել առանձին բառերի հնչյունական ձևավորվածության և բառային տարբերությունների մասին, ինչպես՝ հ՛առու – հ՛°ռու, գ՛ընա – գ՛ըն°, թըռչել – տըսկել (առաջինները բնորոշ են Զանգիզոր գյուղից եկածների սերունդներին, երկրորդները՝ Սուրբ Օհան գյուղից եկածների սերունդներին):

թյուններով: Հնչյունական զանազանություններ նկատվում են՝ ա) ըստիրողության դրսևորման աստիճանի, օրինակ, *ա*-ի շրթնայնացման աստիճանները տարբեր են Գավառ քաղաքում և Սարուխանում (վերջինում շրթնայնացումն ավելի ընդգծված է)[134], բ) ըստ իրողության տարածվածության, օրինակ, քմայնացած *ա*-ն ավելի տարածված է Գանձակում, Ծաղկաշենում և Նորատուսում, քան այլ վայրերում, գ) ըստ հնչյունափոխական իրողության ընդգրկած բառային միավորների կազմի, օրինակ, նկատվում են ձայնավորասկիզբ բառերում *հ՛*-ի հավելման տարբերություններ. *հ՛արի* (Նորատուս, Գավառ, Հացառատ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գանձակ, Արծվաքար, Հայրավանք, Կարմիրգյուղ) - °*ոի* (Սարուխան, Ծաղկաշեն)[135], *հ՛ուզընգան* (Ն, Հց, Գ, Հյր) - *ուզընգան* (Ճշ, Կ, Արծ, Գ, Լ, Ս)[136]:

Խոսվածքները միմյանցից տարբերակվում են բարբառային հետևյալ հնչյունական հատկանիշներով. ա) հետնալեզվային բաղաձայնների քմայնացում (իրեք^{ʲ}, գ^{ʲ}°). դիտարկվում է Գանձակում, Նորատուսում, Արծվաքարում, բ) *է, ե, ի,* ° ձայնավորներից առաջ *գ,կ,ք* - ի դիմաց՝ *ջ,ճ,չ* (գէժ – ջէժ, կիր°կի - ճիր°ճի, Քº վ°ռ - Չº վ°ռ). դիտարկվում է Նորատուսում և Հայրավանքում, գ) փոխառյալ բառերում *ու*-ի դիմաց *ի* (դուզը – դիզը, քուֆտ° - քիֆտ°, շուշ° - շիշ°). դիտարկվում է Գավառում և Կարմիր գյուղում, դ) *տր/դր*-ի դիմաց *յր* (կօդրել – կօյրել, կըդրել - կըյրել) ավելի հաճախ հանդիպում է Գանձակում և Ծաղկաշենում: Ավելի մեծ քանակություն են կազմում առանձին բառերի հնչյունական ձևավորվածության տարբերությունները, ինչպես՝ գ՛ըլօխկօնձի (Ս, Գվ, Գ, Կ, Լ, Արծ) – գ՛ըլըխկօնձի (Ճշ) – գ՛ըլխակօնձի (Հց) – գ՛ըլխըկօնձի (Գնձ). օղոռթ

[134] Բայազետի բարբառում *աշ*շրթնայնացած ձայնավորի դրսևորումների մասին տե՛ս Վ.Կատվալյան, «Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2012, 2, էջ 48 – 64:

[135] Այսուհետ՝ Նորատուս՝ Ն, Գավառ՝ Գվ, Հացառատ՝ Հց, Գեղարքունիք՝ Գ, Լանջաղբյուր՝ Լ, Գանձակ՝ Գնձ, Արծվաքար՝ Արծ, Հայրավանք՝ Հյր, Սարուխան՝ Ս, Ծաղկաշեն՝ Ծշ, Կարմիրգյուղ՝ Կ:

[136] Հնչյունական համակարգի այս զանազանությունները մեկնաբանելիս թերևս կարելի է կիրառել *խոսվածքային հատկանիշ* հասկացությունը: Եթե բարբառային հատկանիշները ներկայացնում են լեզվական յուրահատուկ իրողություններ, ունեն համակարգային բնույթ ու բարբառները միմյանցից տարբերող դեր, ապա խոսվածքային հատկանիշները ներկայացնում են բարբառային հատկանիշների դրսևորումների որակական և քանակական տատանումները, հաճախ ունեն մասնավոր բնույթ և խոսվածքները տարբերակող դեր:

(Ս, Լ, Գ) - օղառթ (Գվ, Ծշ, Ն, Հg, Արծ, Հյր), խորոխպէր (Գվ, Լ, Ն, Հյր, Արծ, Ս)– խորախպէր (Հg, Ծշ), թարախորով (Ն, Գվ, Կ, Հյր, Արծ, Գ, Լ, Ծշ)– թարախորում (Հg), հ՛էքուց չէ մէկէլ օր (Գվ, Հg, Ծշ, Գ, Կ, Արծ, Լ) - հ՛էքուց չէլ օր (Ն, Հյր), տիգնակըլ օնձ (Ս, Ծշ) - տիգնակըլ ունձ (Գվ, Հg, Գ, Ն, Գնձ, Հյր), թըթուց (Գվ, Գնձ, Հg, Գ, Լ) - թութուզ (Ծշ, Ս) - թըդուց (Ն, Հյր) - թըտուց (Կ), միրավ (Հg, Գ, Կ, Լ, Գնձ, Ծշ, Ս) - միրան (Ն), չըռկօթան (Ս,Լ) - չըռնակօթ (Ն, Գվ, Հg, Ծշ, Գ, Հյր, Արծ, Գնձ) - չօռնըկ°թ (Կ), ս°լ օմ (Գվ, Կ, Գ, Լ, Ս) - սօլ օմ (Ն, Հg, Ծշ, Արծ). բա (Ն, Հյր) - բ° (մյուսները) ան:

Ձևաբանական առումով տարբերությունները վերաբերում են և՛ անվանական, և՛ բայական համակարգերին: Առկա են ինչպես երևույթի առանձնակի, այնպես էլ համակարգային դրսևորումների տարբերություններ: Անվանական համակարգում տարբերակայնություն դրսևորվում է՝ ա) հոգնակիի կազմության մեջ. օրինակ, Գավառում °*ֆտո, վէդրо* բառերի հոգնակիի ձևերն են °*ֆտոք, վէդրոք,* իսկ մյուս խոսվածքներում՝ °*ֆտոներ, վէդրոներ*. Նորատուսին և Հայրավանքին հատուկ է *տիք* հոգնակերտը՝ մյուսների *տանք*-ի դիմաց (քըվորտիք - քըվորտանք), բ) ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը *հ*-ով է կազմում Գավառը (Կ°ոյ հ), մինչդեռ մյուս խոսվածքները կազմում են *յ*-ով (Կ°ոյ), գ) ածականի գերադրական աստիճանը խոսվածքների մի մասը (Ն, Հյր, Հg, Ծշ, Գ) *հ՛ըմընա* մասնիկով է կազմում (հ՛ըմընաջ՛ոչ), իսկ մյուսները (Գվ, Լ, Ս)՝ հ՛ըմընի բառաձևով (հ՛ըմընի ջ՛ոչ), դ) բոլոր խոսվածքներում *քեզի* ձևի հետ կա նաև կրճատ *քե*, իսկ Սարուխանում և Ծաղկաշենում՝ նաև *մեզի, ձեզի* ձևերի հետ՝ *մե, ձ՛ե*, ե) Գավառում և Հացառատում *ով*-ի դիմաց ունենք *վոն*, իսկ մյուսներում՝ *վորը*, զ) յուրահատուկ կազմություն է հանդիպում Նորատուսում և Հայրավանքում հոգնակի ստացականության իմաստով՝ *վոտը մե, ձեռը մե* (մեր ոտքերը, մեր ձեռքերը), է) Նորատուսն ունի *էսի, էտի, էնի* դերանունների՝ միայն իրեն հատուկ *ըստուրը, ըտուրը, ընդուրը* (սրան, դրան, նրան) ձևեր: Բայական համակարգում նկատելի են տարբերակայնության սակավ դրսևորումներ՝ ա) Գավառում գործառում են *հ՛իշկել, կըռվալ* ձևերը՝ ի տարբերություն մյուս խոսվածքների *հ՛իշկալ, կըռվել* ձևերի, բ) ներկայի հիմքում *ն* բայածանցի անկումով ձևեր ունի

Լանջաղբյուրը (հ՛ըլեմ, հ՛իչեմ, խաքեմ, գ՛ըթեմ, մըտեմ ևն), մեկ-երկու ձևեր էլ՝ Սարուխանը (հ՛ընգեմ, մըտեմ), գ) պատճառական բայերի խոնարհման յուրահատկություններ (խասկըցում, խասկըցո՛ւ) ունեն Սարուխանը, Լանջաղբյուրը և Գեղարքունիքը, դ) այս երեքը (Ս., Գ., Լ.) ունեն հաստատականի *կo* մասնիկ (կo բ՛էրի, կo բ՛էրէրեմ, կo բ՛էրումեմ):

Առավել ցայտուն են բառապաշարային տարբերությունները՝ հետևյալ դրսևորումներով՝ ա) հասկացության անվանում տարբեր բառերով, ինչպես՝ տ°նիս (Ս, Ծշ, Լ, Գ, Արծ, Գնձ) - կըտուր (Ն, Գվ, Հg, Գ, Կ, Հյր). մօծիլ (Ն, Գվ, Լ, Հյր, Արծ, Ս) - կ°յծ (Հg, Ծշ, Գ). կուլաբուկ (Հg) - դանդուռ (Ն, Գվ) - դօռդօփ(Արծ, Հյր, Գ, Լ, Ս) - ք°ըլուկ (Ծշ). Էրկում°տ (Գվ) - վիլկ (Ն, Հg, Ծշ, Գ, Կ, Լ, Ս). ձ՛ըցում (Ս, Գվ, Հg, Ծշ, Գ, Կ, Լ, Գնձ) - խընօցի (Ն, Արծ, Հյր). թուռշի (Ս, Լ, Գ, Ծշ, Հg) - կըվաս (Գվ). փուշ /մեղվի/ (Ն, Գվ, Հg, Գ, Արծ, Հյր, Լ, Գ, Ս) - շիշ (Հg) - նըշտ°ր (Ծշ) - °սեղ (Արծ). խօքու խաց (Գվ, Հg, Ծշ, Կ, Հյր) - պ°դարաք (Ս, Ն, Հg, Գ, Գնձ). քէրուկ (Գվ)– հ՛ավէլի (Ն, Հg, Արծ) - տըկուշկ (Ծշ, Ս). գ՛ըլօխկօնձի (Գվ, Գ, Կ, Լ, Արծ, Ս) - կըլըմբօստիկ (Ն, Հյր) - տընգըլատիզ (Լ) ևն, բ) հասկացության անվանում նույն արմատն ունեցող տարբեր բառերով՝ օցմօղօզիկ (Ս, Լ, Գ) - մօղօզըրիկ (Ն, Գվ, Հg, Ծշ, Գ, Կ, Արծ, Հյր). °դմախատիկ (Գվ, Հg, Գ, Ս) - °դմասօրիկ (Ն, Ծշ, Հյր, Լ). քարկ°պ / քըռկ°պ քըցել (Գվ, Ծշ, Գ, Ն, Ս) - կ°պ տալ (Ն) - կ°պ քըցել (Հg, Կ): Բառապաշարային տարբերակայնությունը կարող է արտահայտվել նաև նույն արմատի կամ կառույցի տարբերակների դրսևորմամբ, ինչպես՝ յեղըռճիկ (Ն, Հg, Ծշ, Գ, Լ, Հյր, Գնձ) - °ղինջ (Գվ, Կ) - °ղընջուկ (Արծ). կէսօրին (Ն,Հյր, Ս, Հg, Լ) - կէսօրան (Հյր, Արծ, Հg) – կէսավուր (Ծշ). գ՛եղացվարի (Գվ, Կ, Արծ, Հg) – գ՛եղավարի (Ս, Ծշ,Ն, Լ, Գ) ևն: Բառիմաստային տարբերակայնության արտահայտություններ են հետևյալները. Նորատուսում և Հայրավանքում *հoդա* բառը նշանակում է *գոմ*, այլ խոսվածքներում՝ *գոմում առանձնացված տեղ՝ նստելու համար*. խոսվածքների մեծ մասում *հ՛ախպուր*-ը բնական աղբյուրն է, իսկ Հացառատում, Ճաղկաշենում՝ նաև *ծորակը*: Կան նաև բառակազմական յուրահատկություններ, օր.՝ խոսվածքների մեծ մասում բաղհյուսական բարդությունները կազմվում են *ու* շաղկապով՝ *տուն ու տեղ, դ՛ուռ ու դ՛ուս,* իսկ Գավառում դրա դիմաց

հնչում է *ը* (*տունը տեղ, դ՛ուռը դ՛ուս*): Խոսվածքները որոշակի ընդհանրություններով կազմում են խմբեր. ա) Գավառ, Հացառատ, Կարմիրգյուղ և Արծվաքար, բ) Սարուխան, Լանջաղբյուր և Գեղարքունիք, գ) Նորատուս և Հայրավանք, դ) Գանձակ և Ծաղկաշեն: Այս խմբավորումը պայմանավորված է համայնքների բնակիչների ծագումնաբանությամբ. առաջին խմբի խոսվածքների կրողների նախնիները եկել են Բայազետ քաղաքից և հարակից գյուղերից, երկրորդ խմբինը՝ հիմնականում Բայազետի գավառի Զանգիզոր և Սուրբ Օհան գյուղերից, երրորդ խմբինը՝ Քորուն և Մոսուն գյուղերից, չորրորդ խմբինը՝ Խոյից, Սալմաստից և Բայազետից[137]: Երրորդ և չորրորդ խմբերի խոսվածքներում իրենց զգացնել են տալիս ենթաշերտային իրողություններ: Նկատելի է, որ խոսվածքները միմյանցից տարբերվում են ինչպես խոսվածքային, այնպես էլ բարբառային հատկանիշներով: Թերևս խոսվածքները տարբերակող բարբառային հատկանիշները հիմնականում այլ բարբառների ազդեցության կամ ենթաշերտային իրողությունների հետևանք են, բայց հնարավոր է, որ այդպիսիք լինեն նաև մարող կամ նոր ձևավորվող երևույթներ:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՊԱՏՄԱԱԾԽԱՐՀԱԳՐՈՐԵՆ ՄԵՐՁԱՎՈՐ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բայազետի բարբառը իր բնօրրանում շրջապատված էր Դիադինի, Մշո, Վանի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներով: Դիադինի բարբառի բնօրրանը՝ Դիադինի գավառակը, Բայազետի գավառի կազմում էր: Դիադին քաղաքը գտնվում էր Բայազետից մոտ 38 կմ դեպի արևմուտք՝ Ծաղկանց լեռների արևելյան փեշերին: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Դիադինի բնակչությունը գաղթում է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում

[137] Տե՛ս նաև Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 7-9:

հիմնականում Սևանի ափին՝ Բասարգեչար գյուղում (այժմ՝ Վարդենիս քաղաք)[138]:

Մշո բարբառը Բայազետի բարբառին աշխարհագրական մերձավորություն է ունեցել նախ և առաջ Ալաշկերտի խոսվածքով: Մշո բարբառը տարածված էր Վանալճի հյուսիսային, արևմտյան և հարավ-արևմտյան սահմաններում[139]: Ըստ Հ.Աճառյանի՝ «Իր կեդրոնն է Մուշ քաղաքը. ասոր հիւսիսէն կը տարածուի մինչև Խնուս և Ալաշկերտ, հարաւէն Բաղէշ, արևելքէն կը հասնի մէկ կողմէն Մոկս և միւս կողմէն Տիատին, արևմուտքէն Լճէ, Ճապաղջուրն»[140]: Լեզվաբանը Մշո բարբառի մեջ էր ներառում նաև Սասունը[141]: Ըստ Ա.Գրիգորյանի՝ Մշո բարբառով խոսում էին Մուշ քաղաքի և շրջակա 600 գյուղերի հայ բնակիչները[142]: Մուշի և Ալաշկերտի բնակչության մի մասը ևս ռուս-թուրքական պատերազմների շրջանում գաղթել ու բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում[143], իսկ բնօրրանում մնացածների սերունդները եղեռնի զոհ են դարձել կամ տարագրվել: Ներկայում Ալաշկերտի խոսվածքը հիմնականում գործառում է ՀՀ Մարտունու և Ապարանի տարածաշրջաններում[144], Մշո բարբառը տարածված է նաև Հայաստանի այլ վայրերում, Վրաստանի հայաբնակ որոշ շրջաններում[145]:

Վանի բարբառը ընդգրկել է Վանալճի ողջ արևելյան եզերքը: Ըստ Հ.Աճառյանի՝ «իր կեդրոնն է Վանայ մեծ քաղաքը՝ շրջակայ բազմաթիւ հայ գիւղերով. կը տարածուի հիւսիսէն մինչև Տիատին՝ Պայազիտի արևմտեան կողմը, հարաւէն Մոկս, Ոզմի, Ծատախ և Աղբակ կամ Պաշդալ է, արևելքէն մինչև Պարսկաստանի սահմանը, իսկ արև-

---

[138] Տե՛ս Թ.Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 107-108, ինչպես նաև՝ ՀԲ, էջ 140, 145-146:

[139] Տե՛ս ՄԲ, էջ 5: Ք.Պատկանյանը նշում է, որ այս բարբառը գործառում է Կարսի և Վանալճի արևմտյան ափերի միջև, Մուշի գավառի մեծ մասում (տե՛ս К.Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869, էջ 103): Լ.Մսերյանցը կարծում է, որ Պատկանյանը Մշո բարբառի տարածման սահմանները ընդլայնել է Վանի բարբառի հաշվին, և Մշո բարբառի գործառությունը տեսնում է Մուշ քաղաքում ու նրա շրջակայքում, այլ կերպասած՝ Մշո բարբառը Մշո դաշտի բարբառն է, հին Տարոնի գավառի բարբառը (տե՛ս Л.Мсерианц, Этюды по армянской диалектологии, ч. I, М., 1897, էջ XI-XII):

[140] ՀԲ, էջ 116:

[141] Նույն տեղում:

[142] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 363:

[143] Տե՛ս նույն տեղում:

[144] Տե՛ս Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 6:

[145] Տե՛ս ՄԲ, էջ 9-10, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 363:

մուտքէն կը քերէ Մշոյ բարբառին սահմանները»[146]: Հ.Աճառյանը նկատում է նաև, որ Վանի բարբառը սահմանակից է «արևելքից Ուրմիայի, Խոյի և Սալմաստի բարբառներին»[147]: Վանի հայ բնակչությունը ևս ենթարկվեց եղեռնի արհավիրքներին: Նրա զգալի մասը, այնուամենայնիվ, փրկվեց և ապաստան գտավ Արևելյան Հայաստանում ու աշխարհի զանազան անկյուններում[148]: Ներկայումս Վանի բարբառը որևէ բնակավայրում ընդհանուր հաղորդակցման միջոց չէ:

Ք.Պատկանյանը արևելյան բարբառների շարքում դիտարկել է նաև Խոյի բարբառը՝ նրա տարածման շրջաններ համարելով Խոյը, Սալմաստը, նաև որոշ վայրեր Ղարաբաղում՝ Ծուշիի շրջակայքում[149]: Խոյ-Մարաղայի բարբառի խոսվածքները Հ.Աճառյանը ժամանակին խմբավորել է երկու տարբեր բարբառներում: Ըստ նրա՝ Խոյի բարբառն ընդգրկել է «ո՛չ միայն Խոյի, Սալմաստի և Մակուի գաւառները Պարսկաստանի մէջ, այլ և Ռուսաստանի մէջ Իգդիր և Նախիջևան»[150], իսկ Մարաղայի բարբառը «կը խօսուի Ուրմիոյ լճին երկու երեսները. արևելեան երեսը կը գտնուի Մարաղա քաղաքը, իսկ արևմտեան երեսը Ուրմիա քաղաքը՝ իր խումբ մը հայ գիւղերով»[151]: «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում Հ.Աճառյանը Մարաղայի կազմում Ուրմիան այլևս չի հիշատակում[152], այն այստեղ արդեն Խոյի բարբառի միավոր է[153]: 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Խոյի և շրջակա բնակավայրերի շատ բնակիչներ զանգվածաբար գաղթեցին Արևելյան Հայաստան: Ներկայում այս բարբառի խոսվածքները գործառում են Սիսիանի, Վայոց ձորի, Արտաշատի, Կոտայքի, Ապարանի, Էջմիածնի, Արցախի և այլ տարածաշրջաններում[154]:

Արարատյան կամ Երևանի բարբառը, ըստ Հ. Աճառյանի, «....հարաւային կողմէն կը տարածուի մինչև Թաւրիզ՝ Ատրպատականի մայրաքաղաքը, արևմուտքէն Կաղզուան, հարաւային-արևմտեան

[146] ՀԲ, էջ 140:
[147] ՔՎԲ, էջ 12:
[148] Թ.Հակոբյան, նշվ. աշխ., էջ 238:
[149] Տե՛ս К.Патканов, նշվ. աշխ., էջ 74:
[150] ՀԲ, էջ 288:
[151] ՀԲ, էջ 281:
[152] Տե՛ս ՀԼՊ, մաս 2, էջ 356:
[153] Տե՛ս նշվ. աշխ., էջ 359:

կողմէն կը մտնէ Տաճկաստան և կը հասնէ մինչև Պայազիտ, հիւսիսային և հարաւային կողմերէն կը շփուի Կարնոյ և Ղարաբաղի բարբառներուն հետ»[155]: Ա.Ղարիբյանը փաստում է, որ «Արարատյան բարբառով խոսում են Արարատյան դաշտում, Վայոց ձորում, Նոր Բայազեդի, Լոռու և Սպիտակի շրջաններում: Գրականությունից հայտնի է, որ Արարատյան բարբառով խոսում էին Սուրմալվի ու Կաղզվանի շրջանները»[156]:

Բայազետը եզերող բարբառախոս տարածքները սահմանակից էին նաև իրար. Դիադինը սահմանակից էր Վանին և Մուշին, Վանը՝ Խոյ-Մարաղային, Դիադինին և Մուշին, Մուշը՝ Դիադինին և Վանին, Խոյ-Մարաղան՝ Արարատյանին և Վանին, Արարատյանը՝ Խոյ-Մարաղային: Այսպիսով, 19-րդ դարի առաջին քառորդում Վասպուրականի, Պարսկահայքի, Տարոնի ու Այրարատի տարածքներում գործառում էին հայ բարբառների երեք ճյուղերը ներկայացնող բարբառային միավորներ, որոնց նկատմամբ Բայազետի բարբառը գրավում էր կենտրոնական դիրք՝ տարատեսակ փոխհարաբերություններ ու շփման եզրեր ունենալով բոլորի հետ:

Հիշյալ տարածքում, ըստ ձևաբանական դասակարգման, հայ բարբառների Ում ճյուղը, Բայազետի բարբառից բացի, ներկայացնում է Արարատյան բարբառը: Ք.Պատկանյանը այն համարում է առավել մաքուր պահպանված բարբառներից մեկը և նրա հատկանիշներից նշում է *ոյ>ի*, *իւ>ի* հնչյունական անցումները (լոյս>լիս, ձիւն>ձին), օժանդակ բայի անցյալի ձևերի *է*-ի անկումը (էի>ի)[157]: Ըստ Հ.Աճառյանի՝ «Երևանի բարբառը շատ մաքուր և գրական լեզուին խիստ մօտիկ բարբառ մ'է և եթէ ի նկատի ունենանք միայն Ում ճիւղին բարբառները, ամէնէն մաքուրն է: Եւ ահա իր այս մաքրութեան և իր ընդարձակ ծաւալին համար է որ ծառայած է իբրև հիմ՝ ռուսահայ գրական լեզուին՝ կազմութեան համար»[158]: Լեզվաբանը Արարատյան բարբառի շրջանակներում դիտարկում է Բայազետի, Աստապատի և Թավ-

[154] Տե՛ս ԽԲ, էջ 17, Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 342, 360:
[155] ՀԲ, էջ 37: Բարբառիս ավելի սահմանափակ տարածում էր վերագրում Ք.Պատկանյանը՝ նշելով, որ այն տարածված է Երևանում, նրա շրջակայքում, Աշտարակում, Վաղարշապատում և այլ գյուղերում (տե՛ս К.Патканов, նշվ. աշխ., էջ 25):
[156] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 219:
[157] Տե՛ս К.Патканов, նշվ. աշխ., էջ 25:
[158] ՀԲ, էջ 38:

ոիզի ենթաբարբառները[159]: «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ, սակայն, Աճառյանը Արարատյան բարբառին վերագրում է երկու ենթաբարբառ՝ Բայազետ(Հին և Նոր) և Աստապատ: Ընդորում՝ Բայազետի ենթաբարբառի շրջանակներում են ընդգրկվում նաև Մակուն և Կաղզվանը[160]: Իբրև բարբառի հիմնական կենտրոններ նշվում են Երևանը, Նորքը, Քանաքեռը, Էջմիածինը, Օշականը և Աշտարակը[161]: Ինչպես նկատում է Աճառյանը, այս բարբառը «ձայնախտասական տեսակետով շատ հավատարիմ է հին հայերենին.... Ձևաբանական տեսակետով ներկայացնում է գրաբարից զանազան շեղումներ, բայց որովհետև արևելյան գրական լեզուն հիմնված է այս բարբառի վրա, ուստի սխալմամբ համարում են «ամենամաքուր» բարբառը»[162]: Ըստ Մ.Աբեղյանի՝ «հնչյունների կողմից, գրաբարի նկատմամբ, մեր բարբառների մեջ ամենից քիչ է փոփոխության ենթարկվել գրական լեզվի մայր՝ Այրարատյան բարբառը: Այստեղ բառերը մեծ մասամբ պահում են հին գրական լեզվի կերպարանքը....: Բայց որ գլխավորն է՝ Արարատյան բարբառի մեջ հնչյունները թվով ավելի փոքր են. ձայնավորներն, օրինակ, միայն վեց են...., որոնք բոլորն էլ կան բոլոր բարբառների ու հին գրական լեզվի մեջ, մինչդեռ ուրիշ բարբառների մեջ կան այնպիսի ձայնավոր և բաղաձայն հնչյուններ ևս, որ չունին Այրարատյան բարբառը և հին գրական լեզուն»[163]: Ա.Ղարիբյանը Արարատյան բարբառի հետքեր է տեսնում «հին գրականության, հին աղբյուրների մեջ սկսած 5-րդ դարից»[164]: Լեզվաբանը նկատում է, որ Արարատյան բարբառը իր ընդգրկման նախնական տարածքներում բնակչության տեղաշարժերի ու գաղթերի հետևանքով հաճախ ընդմիջվում է այլ բարբառներով, և Լոռին է միակ վայրը, որտեղ Արարատյան բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն, սակայն լոռեցիների խոսվածքը իր մեջ թույլ տարրեր ունի Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներից[165]: Ա.Ղարիբյանը գրում է, որ բարբառի մաքուր խոսվածքներ կարելի է գտնել Փարպի գյուղում, Հոկտեմբերյանի շրջանի (ներկայում՝ Արմավիրի

[159] Տե՛ս նշվ. աշխ, էջ 37:
[160] Տե՛ս ՀԼՊ, մաս 2, 2013, էջ 329:
[161] Տե՛ս նշվ. աշխ, էջ 329:
[162] Նշվ. աշխ, էջ 330:
[163] Մ.Աբեղյան, Երկեր, հ. Զ, Ե., 1974, էջ 53-54:
[164] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 218:
[165] Տե՛ս նշվ. աշխ, էջ 219:

տարածաշրջանի) գյուղերում[166]: Նա Արարատյան բարբառն ընդգրկում է քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների խմբում[167]: Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Արարատյան բարբառը ընդգրկված է արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում Ջուղայի, Բայազետի, Աստրախանի և Արդվին-Թբիլիսիի բարբառների հետ[168]: Ժամանակին Հ.Աճառյանը գրել է, որ թեև Արարատյան բարբառով կան բազմաթիվ գրվածքներ, սակայն այն դեռևս ուսումնասիրված չէ[169]: Բարբառը ընդհանուր գծերով ներկայացված է Ա.Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն»[170], Ա.Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց»[171] աշխատություններում: Բարբառի առանձին խոսվածքների ուսումնասիրությամբ զբաղվել են Մ.Ասատրյանը[172], Ս.Բաղդասարյան-Թափալցյանը[173]: Թերևս բարբառի ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն է Ռ.Մարկոսյանի «Արարատյան բարբառ» աշխատությունը[174], որտեղ հեղինակը բարբառային իրողությունները դիտարկում է ըստ խոսվածքների տարբեր խմբերի և առանձնացնում է Աստապատի ենթաբարբառը՝ չհամաձայնելով այն ուսումնասիրողների հետ, ովքեր Լոռու խոսվածքը ևս համարել են ենթաբարբառ[175]: Արարատյան բարբառով, ինչպես նկատում է Հ.Աճառյանը, հրատարակված շատ աշխատանքներ կան, որոնք կարող են ուսումնասիրության առատություն տալ[176]:

Դիտարկվող բարբառախմբում Կը ճյուղն են ներկայացնում Դիադինի, Վանի և Մշո բարբառները: Հ.Աճառյանը Դիադինը համարում է Վանի ենթաբարբառ՝ բերելով մի շարք ընդհանրություններ, ինչպես՝ *գ,կ,ք*-ի քմայնացում, *հ*-ի դիմաց *խ*, *ե,ո*-ի երկբարբառային արտասանություն, *այ*-ի դիմաց *է*, բացառականի *ից*-ով ձև ևն: Նշում է նաև Դիադինի մի շարք յուրահատկություններ, ինչպես՝ Վանի *իւ*-ի

[166] Տե՛ս նշվ. աշխ., էջ 220:
[167] Տե՛ս, նշվ. աշխ., էջ 60:
[168] Տե՛ս ՀԲՆ, էջ 135:
[169] Տե՛ս ՀԼՊ, մաս 2, էջ 330:
[170] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 218-229:
[171] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 205-232:
[172] Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, Ե., 1968:
[173] Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973:
[174] Տե՛ս ԱԲ, էջ 48:
[175] Տե՛ս նշվ. աշխ., էջ 50:
[176] Տե՛ս ՀԲ, էջ 46-47:

դիմաց *ու*, ձայնեղ բաղաձայնների առկայություն, էական բայի եզակի երրորդ դեմքի *ա*[177]: Հ.Աճառյանը նկատում է նաև, որ Վանի երեք (Դիադին, Մոկք և Ոզմի) ենթաբարբառներից Դիադինը ավելի մոտիկ է գրական լեզվին[178]: Բարբառային այս միավորը առանձին բարբառ է համարել Ա.Ղարիբյանը, որի կարծիքով՝ Հ.Աճառյանի բերած փաստերից իսկ երևում է, որ «այդ խոսվածքն իսկական բարբառ է և ոչ ենթաբարբառ»[179]: Լեզվաբանը բերում է այս խոսվածքը Վանի բարբառից զատող 11 հատկանիշ (եռաստիճան բաղաձայնական համակարգ, օժանդակ բայի 3-րդ դեմքի *ա, ու կ*-ով հարակատար դերբայ, Ու հոլովում հոգնակիում, բացառականի և՛ *էն*, և՛ *ից* վերջավորություններ, տարբերություններ դերանունների հոլովման մեջ ևն), ինչպես նաև 4 ընդհանրություններ (*հ*-ի դիմաց *խ, գ,կ,ք*-ի քմայնացում, *ո,ե*-ի երկբարբառային արտասանություն, օժանդակ բայի անցյալի ձևերի *է*-ի սղում) և եզրակացնում է, որ ենթաբարբառ համարված այս խոսվածքը սկզբունքային հատկությունների մի ամբողջ խմբով տարբերվում է և՛ Վանի, և՛ մյուս բարբառներից ու «պետք է այդ ենթաբարբառ կոչվածը համարենք միանգամայն *անկախ բարբառ*, անվանելով այն *Դիադինի բարբառ*»[180]: Հետևելով Հ.Աճառյանին՝ Դիադինը Վանի ենթաբարբառ է համարում նաև Ա.Գրիգորյանը[181], սակայն Գ.Ջահուկյանը այն իբրև առանձին բարբառ Վանի բարբառի հետ ընդգրկում է արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում[182]: Դիադինի բարբառի մասին ընդհանուր տեղեկություններ տալիս է Ռ.Բաղրամյանը[183]: Բարբառի մասին տեղեկություններ կարելի է քաղել Վ.Խաչատրյանի «Վարդենիսի (Դիադինի) բարբառը» գրքից[184]:

Վանի բարբառը, ըստ Հ.Աճառյանի, հայերեն լեզվի հարավային սահմանագիծն է, որից հետո քրդախոս ու արաբախոս հայերն են[185]: Ըստ լեզվաբանի՝ այն «թեև ունի բավական շատշեղումներ գրաբարի բառաձևերի համեմատությամբ, բայց դրանք չափազանց այլափոխված

[177] Տե՛ս նշվ.աշխ., էջ 146:
[178] Տե՛ս ՀԼՊ, մաս 2, էջ 340:
[179] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 91:
[180] Նշվ. աշխ., էջ 91-92:
[181] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 314:
[182] Տե՛ս ՀԲՆ, էջ 134-135:
[183] Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 116-134:
[184] Վ.Խաչատրյան, Վարդենիսի (Դիադինի) բարբառը, Ե., 2004:

չեն և սակավ վարժությամբ կարող են հասկանալի դառնալ բոլորին»[186]: Վանի բարբառը համեմատելով շրջակա բարբառների հետ՝ Աճառյանը նկատում է, որ այն Մշո բարբառից տարբերվում է նրանով, որ զուրկ է շնչեղ ձայնեղներից, գրաբարի ձայնեղների դիմաց ունի խուլեր, *հ*-ի դիմաց ունի *խ* և չի պահպանել հայցականի *զ* նախդիրը: Վանի և Մշո բարբառները նման են *ե,ո*-ի երկբարբառային արտասանությամբ: Ըստ Աճառյանի՝ Վանի բարբառը իր արևելյան սահմանակիցների՝ Ուրմիայի, Սալմաստի և Խոյի հետ նմանություն ունի «*հ>խ* ձայնափոխությամբ, թրթռունների խլացումով և *էo, իւ* ձայներով»[187], սակայն նրանցից տարբերվում է բայերի խոնարհման ձևով[188]: Փաստելով Արարատյան բարբառի հետ Վանի նմանությունը բացառական *հg* մասնիկով և շնչավորների դեպքում սեռի խնդրի՝ ինչպես հայցականով, այնպես էլ տրականով արտահայտությամբ՝ Հ.Աճառյանը նշում է, որ այդպիսով «Վանի բարբառը գտնվում է «արևելյան և արևմտյան» կոչված բարբառների միջև»[189]: Հ.Աճառյանը Վանի բարբառի ենթաբարբառներ է համարում Դիադինը, Մոկքը և Ոզմին, բայց և հավելում է, որ «Ենթաբարբառների սահմանը միշտ խախտե. այս հարցի որոշման մեջ ես նկատի եմ առել նաև շրջանի մեծությունը կամ կարևորությունը: Այժմ ուրիշները Մոկք և Ոզմի առանձին բարբառ են ուզում հաշվել»[190]: Ա.Ղարիբյանը գրում է, որ Վանի բարբառը ձայնավորներով հարուստ բարբառներից է, իսկ բաղաձայնական համակարգով պատկանում է արևելյան խմբին, «այսինքն՝ ենթարկվում է առաջին տեղաշարժի. ձայնեղները վերածվում են խուլերի, որով ստացվում է երկաստիճան ձայնեղազուրկ սիստեմ»[191]: Ըստ Ա.Ղարիբյանի՝ *հ*-ի դիմաց *խ* ունենալու հատկությունը, «որ ունեն Վանի բարբառը և նրա մոտիկ գտնվող բարբառները, ...Վանի բարբառը ժառանգած պիտի լինի բիայնական լեզվից»[192]: Ընդհանուր գծերով անդրադառնալով Վանի բարբառի անվանական և բայական հատկանիշներին՝ Ա.Ղարիբյանը

---

[185] Տե՛ս ՀԼՊ, մաս 2, էջ 339:
[186] ՔՎԲ, էջ 13:
[187] Նշվ. աշխ., էջ 12:
[188] Տե՛ս նույն տեղում:
[189] Նշվ. աշխ., էջ 13:
[190] Նույն տեղում:
[191] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 384:
[192] Նշվ. աշխ., էջ 384-385:

կարծիք է հայտնում, որ հարակատար դերբայի՝ բարբառում դրսևորվող *ած* և *ուկ* վերջավորություններից վերջինը Մշո բարբառից յուրացրած ձև է[193]: Լեզվաբանը Վանի բարբառի ենթաբարբառներ չի առանձնացնում, ինչպես Դիադինի, այնպես էլ Ոզմիի և Մոկքի խոսվածքները համարում է առանձին բարբառներ[194]: Վանի բարբառին որոշ չափով ավելի հանգամանորեն անդրադառնում է Ա.Գրիգորյանը[195], սակայն այս բարբառի ամբողջական գիտական նկարագրությունը ներկայացնում է Հ.Աճառյանի «Քննություն Վանի բարբառի» աշխատությունը[196]: Գ.Ջահուկյանը արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբի Վանի բարբառի շրջանակներում ներառել է Մոկսը, Ծատախը, Բաստը, Ոզմը և Վանը[197]: Վանից բացի՝ առանձին ուսումնասիրության ենթարկվել են Ծատախը[198] և Մոկսը[199]: Վերջինիս նվիրված ուսումնասիրության մեջ հեղինակը դիտարկել է նաև Մոկսի և հարևան շրջանների բարբառային առնչությունները և հանգել այն եզրակացության, որ «Մոկսին ամենից ավելի մոտեն Ոզիմն ու Ծատախը, այնուհետև՝ Վանը»[200]: Վանի և շրջակա խոսվածքների հնչյունական համակարգի որոշ առանձնահատկությունների քննություն է կատարել Ժ.Միքայելյանը[201]՝ հանգամանորեն անդրադառնալով նաև «Աճառյանի օրենքին» և փորձելով յուրովի մեկնաբանել այն[202]: Ըստ Հ.Աճառյանի՝ Վանի բարբառով տարբեր ժամանակներում հրապարակվել է զգալի գրականություն[203]:

Լ.Մսերյանցը, նկատի ունենալով հնչյունական համակարգը, Մշո բարբառը դասում է «արևելյան բարբառների» խմբին: Նա նկատում է, որ չնայած Վանի բարբառին Մշո բարբառի թվացյալ մերձավորությանը՝ վերջինս առանձնանում է իր հնչյունական համակարգով[204]: Լ.Մսերյանցն արձանագրում է նաև օտար լեզուների

[193] Տե՛ս նշվ. աշխ., էջ 387:
[194] Տե՛ս նշվ. աշխ., էջ 93, 383:
[195] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 314-332:
[196] Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952:
[197] Տե՛ս ՀԲՆ, էջ 134-135:
[198] Մ.Մուրադյան, Ծատախի բարբառը, Ե., 1962:
[199] Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1982, էջ 108-183:
[200] Նշվ. աշխ., էջ 178:
[201] Ժ.Միքայելյան, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները, Ե., 2009:
[202] Տե՛ս նշվ. աշխ., էջ 62-69:
[203] Տե՛ս ՔՎԲ, էջ 7-11:

ազդեցությունը Մշո բարբառի, հատկապես նրա բառապաշարի վրա, որն արտահայտվում է թուրքերեն և թուրքերենի միջոցով պարսկերեն, արաբերեն և քրդերեն բառերի ներթափանցումով[205]: Մշո բարբառը, ըստ Հ.Աճառյանի, ձայնավորների առումով հարուստ է և այդպիսով զանազանվում է Վանի բարբառից: Բարբառի հնչյունական համակարգի համար նա բնութագրական է համարում *ե,ո* երկբարբառայինների առկայությունը, որոնք ծագում են հայերենի շեշտյալ *ե,ո* հնչյուններից[206]: Բաղաձայնների առումով, ընդհակառակը, Մշո բարբառը հարուստ է՝ ունենալով քառաստիճան բաղաձայնական համակարգ: Ծնչեղ ձայնեղների և բառասկզբում ձայնեղ *հ*-ի առկայությամբ ևս Հ.Աճառյանը Մշո բարբառը տարբերակում է Վանից: Բարբառի մի հատվածում՝ Բաղեշում, Խլաթում, Արճեշում և Արծկեում, ինչպես Վանի բարբառում, *հ*-ի դիմաց հանդես է գալիս *խ*[207]: Քերականական իրողություններից հիշատակում է *զ, հ* նախդիրների առկայությունը, ստացական ածականներից հետո գոյականի՝ հոդ չստանալը, ստացական ածականների նաև հետադաս և նախադրությունների նախադաս գործածությունը, անկատարի եզակի 1-ին դեմքի փոխարեն հոգնակիի կիրառումը, *գալ, լալ, տալ* բայերի՝ *հ* նախաձայն ստանալը, հարակատարի *ուկ* վերջավորությունը և այլն[208]: Ընդ որում՝ նկատում է, որ ստացական ածականների հետադաս կիրառությունը հատուկ է միայն Մշո բարբառին[209]: Ա.Ղարիբյանը նշում է, որ Մշո բարբառը Կը ճյուղի ևս երկու՝ Կարնո և Ոզմիի բարբառների հետ ունի բաղաձայնական քառաստիճան համակարգ, և այս երեք բարբառները այդպիսով նմանվում են Ում ճյուղի երկու հիմնական՝ Արարատյան և Նոր Ջուղայի բարբառներին[210]: Բարբառի ընդհանուր բնութագիրը, հնչյունական ու քերականական յուրահատ-

---

[204] Տե՛ս Л.Мсериянц, նշվ. աշխ., էջ XII:
[205] Տե՛ս նշվ. աշխ., էջ XII-XIII:
[206] Տե՛ս ՀԲ, էջ 116:
[207] Նկատի ունենալով այս խմբի նաև որոշ այլ յուրահատկություններ՝ Աճառյանը կարծում է, որ Մշո բարբառի մեջ կարելի է առանձնացնել Բաղեշի ենթաբարբառ՝ դրանում ներառելով նաև Խլաթը, Արճեշը և Արծկեն (տե՛ս ՀԲ, էջ 117-118):
[208] Տե՛ս ՀԲ, էջ 118-119, ՀԼՊ, մաս 2, էջ 338-339:
[209] Տե՛ս ՀԲ, էջ 118:
[210] Ապա եզրակացնում է. «Այսպիսով, Կենտրոնական Հայաստանի հիմնական բարբառները պատկանում են բաղաձայնների քառաստիճան խմբին» (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 383):

կությունները ներկայացրել է Ա.Գրիգորյանը[211]: Բարբառիս համեմատաբար ամբողջական ուսումնասիրությունն է ներկայացնում Ս.Բաղդասարյան-Թափալցյանի «Մշո բարբառը» աշխատությունը[212]: Բարբառի առանձին խոսվածքների ուսումնասիրության են նվիրված Ռ.Բաղրամյանի և Ք.Մադաթյանի աշխատանքները[213]: Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Մշո բարբառը Տալվորիկ-Մոտկանի, բուն Սասունի և Տիգրանակերտի բարբառների հետ կազմում է արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախումբը[214]: Գ.Ջահուկյանը բարբառի առանձին միավորներ է համարում Բաղեշը, Խլաթը, Արծկեն, Արճեշը, Մանազկերտը, Մուշը, Բուլանըղը, Խնուսը և Ալաշկերտը[215]: Մշո բարբառով զգալի քանակության գրվածքներ են հրապարակվել [216]:

Հայ բարբառներ երրորդ ճյուղն է ներկայացնում Խոյ-Մարաղայի բարբառը: Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ այս բարբառը ներկայացնում է արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի կամ հարավարևելյան բարբառախումբը: Բարբառի կազմում Գ.Ջահուկյանն առանձնացնում է Մարաղա, Ուրմիա, Փայաջուկ, Խոյ միավորները[217]: Այս բարբառը ենթարկվել է տարատեսակ մեկնաբանությունների: Ք.Պատկանյանը նկատում է, որ Խոյի բարբառը շատ դեպքերում նման է Ղարաբաղի բարբառին, բայց ունի որոշ յուրահատկություններ. հակված է *հ*-ն դարձնելու *է*, ներկա ժամանակում արևելյան բարբառներին հատուկ *ում*-ի փոխարեն ունի *ս* (փխչես ըմ – փախչում եմ), որը լեզվաբանի համար մնում է անբացատրելի, ապառնին կազմում է *ական*-ով (թողլական չըմ – թողելու չեմ) ևն[218]: Հ.Աճառյանը «Հայ բարբառագիտություն» աշխատանքում ել ճյուղում ընդգրկում է երեք բարբառ, իսկ «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում՝ 5 բարբառ. երկու դեպքում էլ այս ճյուղում առանձին ընդգրկված են Խոյի և Մարաղայի

[211] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 363-388:
[212] Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958:
[213] Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 134-178, Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985:
[214] Տե՛ս ՀԲՆ, էջ 134:
[215] Նույն տեղում:
[216] Տե՛ս ՀԲ, էջ 120-121, ՄԲ, էջ 8:
[217] Տե՛ս ՀԲՆ, էջ 135:
[218] Տե՛ս К.Патканов, նշվ. աշխ., էջ 74-75:

բարբառները[219]: Լեզվաբանը նկատում է, որ Մարաղայի բարբառը շատ հարուստ է ձայնավորներով և երկբարբառներով, բավական հեռացած է հին հայերենի ձայնական օրենքներից, բարբառում մեծ տարածում ունի ձայնավորների ներդաշնակության օրենքը, շատ փոփոխված է բայի խոնարհումը, ներկայի բունը կազմվում է բայի անորոշից՝ նրան կցելով օժանդակ բայը (իւզէլ իմ), ևն[220]: Հ.Աճառյանի հավաստմամբ՝ Ուրմիայի ենթաբարբառը Մարաղայի հետնույնն է, բայց ունի ինչ-ինչ տարբերություններ[221]: Ըստ նրա՝ Խոյի բարբառը միջին դիրք է գրավում Վանի և Մարաղայի բարբառների միջև. «իր քերականական կազմութիւնը նոյն է Մարաղայի բարբառին հետ, բայց ձայնաբանական օրէնքները Վանայ բարբառին նման են. ուրիշ խօսքով Խոյի բարբառը աւելի մօտիկ է գրաբար հայերէնին քան Մարաղան»[222]: Լեզվաբանը Խոյի բարբառի ներկայի *ս*-ով ձևերի առաջացումը բացատրում է *ելիս* ձևից *լի* հատվածի մաշվելով և ընկնելով՝ *ասելիս եմ - ասելս եմ - ասէս եմ*[223]: Ա.Ղարիբյանը ճիշտ չի համարում արևելահայ բոլոր բարբառները Խոյի բարբառ անվանելը՝ նկատելով, որ դրանց մեջ «Ուրմիայի և Սալմաստի բարբառը պատկանում է ոչ թե «էլ» ճյուղին...., այլ «Ս» ճյուղին: Այդ բարբառով խոսողներն անգամ սխալմամբ իրենց Խոյեցիներ են կոչում: Ուրմիայի բարբառին պատկանում են Ուրմիայից, Սալմաստից, Բարանդուզից գաղթածների խոսվածքները»[224]: Ըստ լեզվաբանի՝ «Ընդհանուր առմամբ Ուրմիայի բարբառը, գտնվելով մի կողմից Խոյի բարբառի, մյուս կողմից Վանի բարբառի շրջապատում, իր լեզվական վիճակով ցուցահանում է իր կրած ազդեցությունները այդ երկու բարբառներից: Իր հնչյունական սիսիտեմով նա ավելի մոտ է Խոյի բարբառին. նրա բառապաշարն հիմնականում ամփոփում է իր մեջ և՛ Վանի, և՛ Խոյի բարբառների բառապաշարի հիմնական մասը»[225]: Այնուհետև նշվում է, որ Ուրմիայի բարբառն իր հնչյունական ընդհանուր վիճակով նման է արևելյան՝ Ղարաբաղի, Հադրութի, Խոյի, Վանի բարբառներին, սակայն հնչյունական համակարգի

[219] Տե՛ս ՀԲ, էջ 280-292, ՀԼՊ, մաս 2, էջ 356-361:
[220] Տե՛ս նշվ. աշխ., էջ 356-357:
[221] Տե՛ս ՀԲ, էջ 284:
[222] Նշվ. աշխ., էջ 288:
[223] Տե՛ս ՀԼՊ, մաս 2, էջ 259-260:
[224] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 342:
[225] Նշվ. աշխ., էջ 342-343:

մասնավոր գործածությամբ յուրահատուկ է: Բարբառն ունի երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ, *Ֆ*-ի փոխարեն գործածվում է *կ*: Բարբառում գերակշռում է Ի հոլովումը, բացակայում է ներգոյական հոլովը: Անցյալի գաղափարն արտահայտելու համար «Լ» ճյուղի բարբառների պես գործածվում է «էր» մասնիկ-բառը, ներկայի խոնարհումը կատարվում է *ս*-ով ավարտվող դերբայով, սակայն եզակի երրորդ դեմքում հանդես է գալիս *լ*-ով դերբայ (կ՝իրէլ), որը համարում է «Լ» ճյուղի բարբառներից առնված ձև: Ուրմիայի բարբառի հատկանշական գիծ է համարում բայերի հոդառությունը (կանչիմդ – ես քեզ կանչեցի)[226]: Ժամանակին Հ.Աճառյանը բայի հոդառություն արձանագրել է Մարաղայի բարբառում[227]: Ա.Ղարիբյանը գրում է, որ «Ս» ճյուղին պատկանող Ուրմիայի բարբառը միայն ներկայի կազմությամբ է նման այդ ճյուղի մյուս բարբառներին, իսկ մնացած հատկանիշներով նման է «Լ» ճյուղի բարբառներին և խստորեն տարբերվում է «Ս» ճյուղի բարբառներից[228]: «Լ» ճյուղում ընդգրկված Մարաղայի բարբառը, ըստ լեզվաբանի, իր լեզվական վիճակով գտնվում է Վանի, Ուրմիայի, Խոյի և Ղարաբաղի բարբառների միջև: Մարաղայի բարբառի հիմնական հատկանիշներից է համարում ձայնավորների ներդաշնակությունը: Այս բարբառի պայթականները ևս ենթարկվել են բաղաձայնների առաջին տեղաշարժին: Բացակայում է *Ֆ*-ն: Բարբառը սիրում է կրկնել բաղաձայն հնչյունները: Անվանական համակարգը, նաև դերանունների հոլովումը նման է Ուրմիայի բարբառին: Սահմանականի ներկան կազմում է անորոշ դերբայով, իսկ անցյալը կազմում է «էր» անփոփոխ մասնիկով, որն ընդհանուր է Ուրմիայի, Մարաղայի և Խոյի բարբառներում[229]: Ա.Գրիգորյանը, առաջարկելով Ել ճյուղը վերանվանել Լիս, մի քանի այլ բարբառների հետ այդ ճյուղում ընդգրկում է նաև Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառները և նշում, որ դրանցում տեղի է ունեցել անկատար դերբայի ամբողջական *լ/հս* ձևի սղում[230]: Անդրադառնալով Ուրմիայի և Խոյի փոխհարաբերություններին՝ Մ.Ասատրյանը նշում է, որ և՛ հնչյու-

[226] Տե՛ս նշվ. աշխ., էջ 342-356:
[227] Տե՛ս ՀԲ, էջ 284:
[228] Տե՛ս նշվ. աշխ., էջ 217:
[229] Տե՛ս նշվ. աշխ., էջ 360-368:
[230] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 70-74:

նական, և՛ ձևաբանական տեսակետից դրանք լրիվ նույնական են[231]: Ըստ լեզվաբանի՝ «Փաստերը ցույց են տալիս, որ մենք գործ ունենք ոչ թե երկու տարբեր բարբառների հետ, այլ մի միասնական բարբառի երկու տարբերակների, ենթաբարբառների հետ»[232]: Մ.Ասատրյանը պնդում է, որ այդ երկուսը չեն կարող տարբեր ճյուղերի պատկանել, որովհետև ուղղակի դրանցից մեկը ներկայի դրականում սղում է *լ/հա*-ով դերբայի *լ/հ* մասը (իւզէս էմ), իսկ մյուսը՝ *հա* մասը (իւզէլ էմ)[233]: Ի վերջո լեզվաբանը հանգում է այն եզրակացության, որ Խոյը և Ուրմիան «ունեն սոսկ հնչյունական առանձին տարբերություններ: Իսկ սոսկ հնչյունական տարբերություն-ներով խոսվածքները առանձին բարբառներ համարվել չեն կարող»[234]: Սակայն նույն մոտեցումը Մ.Ասատրյանը հանդես չի բերում Մարաղայի նկատմամբ՝ այն համարելով առանձին բարբառ: Իր կողմից Ուրմիայի (Խոյի) բարբառ անվանված միավորի և շրջակաբարբառների փոխհարաբերության մասին լեզվաբանը գրում է. «Պատմականորեն սահմանակից լինելով Վանի և Մարաղայի բարբառներին՝ Ուրմիայի (Խոյի) բարբառը շատ կետերում շփման մեջ է մտնում դրանց հետ: Իր հնչյունական սիստեմով նա նման է Վանի բարբառին, իսկ քերականությամբ մոտ է Մարաղայի բարբառին»[235]: Ինչպես ներկայացված դիտարկումները, այնպես էլ բազմահատկանիշ դասակարգման վիճակագրական տվյալները (Խոյի և Մարաղայի տարբերությունների ցուցիչը կազմում է 15 միավոր, Խոյի և Ուրմիայի տարբերություններինը՝ 7 միավոր, Ուրմիայի և Մարա-ղայի տարբերություններինը՝ 11[236]) թույլ են տալիս ճիշտ համարել Գ.Ջահուկյանի մոտեցումը, համաձայն որի՝ Խոյը, Մարաղան և Ուրմիան մեկ բարբառի տարատեսակներ են: Խոյ-Մարաղայի բարբառի մենագրական ուսումնասիրություններ են Հ.Աճառյանի «Քննություն Մարաղայի բարբառի»[237], Մ.Ասատրյանի «Ուրմիայի (Խոյի) բարբառը»[238] աշխատությունները, ինչպես այլ, այնպես էլ այս

[231] Տե՛ս ԽԲ, էջ 11:
[232] Նշվ. աշխ., էջ 12:
[233] Տե՛ս նշվ. աշխ., էջ 14:
[234] Նշվ. աշխ., էջ 16:
[235] Նշվ. աշխ., էջ 17:
[236] Տե՛ս ՀԲՆ, 62, 81, 99, 119, 135:
[237] Հ.Աճառյան, «Քննություն Մարաղայի բարբառի», Ե., 1926:
[238] Մ.Ասատրյան, «Ուրմիայի (Խոյի) բարբառը», Ե., 1962:

բարբառի (ավելի ճիշտ՝ նրա խոսվածքների) մասին հանգամանալից տեղեկություններ է պարունակում Հ.Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի»[239] աշխատությունը: Հ.Աճառյանը հիշատակում է Խոյի բարբառով մի քանի գրվածքներ[240], մինչդեռ Մարաղայի բարբառով որևէ բնագիր նրան հայտնի չէ[241]:

ԳԼՈՒԽ II

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՇՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

1. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ձայնավոր հնչյուններ

Բայազետի բարբառն ունի ձայնավոր 9 հնչյուններ. *ա, ◦, ◦/ո, է, ե, ի, ու, օ, ը* : Գրական հայերենի ձայնավորներից արտասանությամբ *ա, է, ի, ու, օ, ը* հնչյունները հիմնականում չեն տարբերվում[242]: Թերևս միայն *ա* ձայնավորը բարբառումս ունի որոշ չափով ավելի հետին և ստորին դիրք[243]: *Ա* ձայնավորի՝ նման կամ դրան մոտ արտասանություն[244] նկատվել է հայերենի մի շարք այլ բարբառներում: Այսպես, Ա.Հանեյանը նկատում է, որ Տիգրանակերտի բարբառում «Ա-ն ժամանակակից հայերենի ա ձայնավորի համեմատությամբ ունի

[239] Հ.Աճառյան, «Լիակատար քերականություն հայոց լեզվի», Ե., 1-5, 1952-1965:
[240] Տե՛ս ՀԼՊ, մաս 2, էջ 359:
[241] Տե՛ս ՀԲ, էջ 281:
[242] Սրանք առկա են հայերենի բոլոր դրսևորումներում (տե՛ս Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 54, ՀԼՊՔ, էջ 32-33):
[243] Գ.Ղափանցյանը համարում է, որ «Հայոց <ա>-ն յետնալեզվային միջին բարձրությամբ է» (Գր.Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 53), Ա.Ղարիբյանը գտնում է, որ «<Ա> ձայնավորը գրաբարի մեջ, ինչպես և աշխարհաբար գրական լեզվի մեջ, պատկանում է ետին շարքի միջին բարձրության» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 107), իսկ Է.Աղայանը հայերենի *ա*-ն բնութագրում է իբրև միջին բարձրացման բաց ձայնավոր (Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 209): Ըստ Ա.Խաչատրյանի՝ հայերենի *ա*-ն ստորին բարձրության ձայնավոր է և ամենաբացն է ձայնավորական համակարգում: Այն արտաբերվում է ոչ այնքան հետին շարքում, որքան քիչ ավելի առաջ տարածվող մասում (տե՛ս Ա.Հ.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյուն թաբանություն, Ե., 1988, էջ 55):

առավել ստորին դիրք՝ անշան շրթնայնացմամբ»[245]: Հ.Աճառյանը Վանի բարբառի ա-ի մասին գրում է. «*Ա*-ն արտասանվում է (հատկապես շեշտի տակ) փակ ձևով, անգլիական å ձայնի նման, բայց նրանից մի քիչ բաց.- հյ. *ա* և *օ* ձայնավորների միջին աստիճանն է»[246], իսկ Մ.Մուրադյանը իր «Ծատախի բարբառը» աշխատության մեջ բարբառային այդ միավորում հանդես եկող *ա* ձայնավորի մասին գրում է, որ այն «ունի կոշտ, որոշ չափով շրթնայնացված արտասանություն՝ լեզվի ստորին բարձրացմամբ: Կատկային ձայնավոր է»[247]: Ժ.Միքայելյանի կարծիքով՝ Վանի, Ծատախի, Մոկսի[248] խոսվածքներում գործառող խնդրո առարկա ձայնավորը «հետին շարքի ստորին բարձրացման հնչյուն է, որի արտասանությանը շրթունքները գրեթե չեն մասնակցում: Նրա արտաբերման տեղը, գրական հայերենի ա-ի համեմատությամբ, ավելի հետնալեզվային և ստորին բարձրացման է.... Այն, իհարկե, տարբերվում է Բայազետի բարբառում գործառող շրթնայնացած °-ից, որի արտասանությանը շրթունքները, իրոք, մասնակցում են»[249]: Գ.Ջահուկյանը նույնպես Վանի բարբառի խոսվածքներում շրթնայնացած *ա*չի արձանագրում[250]: Փաստորեն, *ա* հնչյունի արտաբերական յուրահատկություններով Բայազետի բարբառը դիտարկվող խմբում ընդհանրություն ունի Վանի բարբառի հետ[251]:

Բայազետի բարբառում ևս ° հնչյունը ներկայացնում է *ա* ձայնավորի քմային արտասանությունը և առաջնային շարքի ստորին բարձրացման ձայնավոր է: Նկատվել է, որ ինչպես այս, այնպես էլ քմային մյուս ձայնավորները ամենատարածվածներն են հայերենի բարբառներում՝ հատկապես հատուկ լինելով Վասպուրականի, Սյու-

---

[244] Իրողությունը Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման մեջ արտացոլված չէ:
[245] Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Ե. 1978, էջ 11:
[246] ՔՎԲ, էջ 14:
[247] Մ.Մուրադյան, Ծատախի բարբառը, Ե., 1962, էջ 28:
[248] Մոկսի բարբառում, ըստ որոշ ուսումնասիրողների, գործառում են *ա* ձայնավորի միայն շրթնայնացած և քմային տարբերակներ (տե՛ս ՀԼՊՔ, էջ 41, Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 114):
[249] Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 16 – 17:
[250] ՀԲՆ, էջ 76-77:
[251] Ռ.Բաղրամյանը նկատում է, որ Բայազետի և Վանի բարբառների պես՝ կոկորդային *ա*ունի նաև Մակվի ենթաբարբառը (Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 93):

նիքի և Արցախի տարածքի բարբառներին[252]: Հ.Աճառյանը նշում է, որ ° հնչյուն «գտնում ենք նաև Ղարաբաղի, Ագուլիսի, Մեղրիի, Մարաղայի և այլ բարբառներում: Չկա Երևանի, Թբիլիսիի և Պոլսի բարբառներում: Առատորեն գտնվում է Վանի (ինչպես նաև Մոկաց և Ոզմիի) բարբառում»[253]: Խոյ-Մարաղայի բարբառում °-ի օրինաչափ գործառություն արձանագրել է Մ.Ասատրյանը[254]: Ըստ Ա.Ղարիբյանի՝ այսպիսի հնչյուն «ունեն հիմնականում մեր արևելյան բարբառները, համարյա բոլոր այն բարբառները, որոնք ունեն ձայնեղների խլացում»[255], այլ կերպ ասած՝ այն բարբառները, որոնցում գործում է «Աճառյանի օրենքը»: Սակայն պետք է նկատել, որ ° կարող է օրինաչափորեն դրսևորվել նաև առանց ձայնեղների խլացման (օրինակ, Դիադինի բարբառում բառասկզբի հինհայերենյան ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ ձայնեղներ, որոնցից հետո միշտ գործառում է *ա*-ի քմային տարբերակը[256]): Նշվել է նաև, որ կենտրոնական և հարակից բարբառները հիմնականում կամ քմային ձայնավորներ չունեն, կամ էլ ունեն միայն փոխառյալ բառերում և այն էլ, որպես կանոն, դրանցից միայն մեկը[257]: Ըստ Ս.Բաղդասարյանի՝ «Մշո բարբառում, թեև ոչ ուժեղ, բայց և այնպես նկատվում է ա ձայնավորի քմայնացում՝ հիմնականում փոխառյալ բառերում»[258], իսկ Գ.Ջահուկյանը այդ հնչյունի առկայություն արձանագրում է Մշո բարբառի որոշ խոսվածքներում (Խլաթ, Արճեշ, Արծկե)[259]: Բայազետի բարբառը ° հնչյունի դրսևորման առումով հարում է կենտրոնական բարբառներին, ընդ որում՝ բարբառիս Նորատուսի, Ծաղկաշենի և հատկապես Գանձակի խոսվածքներում °-ն ավելի լայն տարածում ունի, քան մյուս խոսվածքներում: Այսպիսով, Բայազետի բարբառին մերձավոր բարբառային միավորներում °-ն օրինաչափորեն դրսևորվում է Վանի, Խոյ-Մարաղայի,

[252] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 33: Քմայնացած ձայնավորների տարածվածության ընդհանուր պատկերը տե՛ս ՀԲՆ, էջ 70-81:
[253] ՔՎԲ, էջ 14-15:
[254] ԽԲ, էջ 19-24:
[255] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ, էջ 107:
[256] ԴԲ, էջ 21-22, ՀԲԱնյութեր, տետր թիվ 8:
[257] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 44:
[258] ՄԲ, էջ 17:
[259] Տե՛ս ՀԲՆ, էջ 73:

Դիադինի բարբառներում՝ ըստ «Աճառյանի օրենքի»[260], բնորոշ չէ Արարատյան բարբառին[261], մասնակի դրսևորումունի Մշո բարբառում:

Բայազետի բարբառում *ա* ձայնավորին զուգահեռ գործառում է շրթնայնացած ա(°/n) հնչյուն, որը ներկայանում է ոչ միայն իբրև *ա*-ի, այլ նաև իբրև *օ*-ի տարբերակ: Այս ձայնավորի արտասանությունն սկսվում է շրթնային հնչարանով և ավարտվում առանց դրա, և ստացվում է օ-ին հատուկ շրթնային սկիզբ ունեցող ա(շրթնայնացած *ա̀* °) կամ, որ նույնն է, բացվող և *ա*-ով ավարտվող *օ* (երկբարբառային n): Լեզվաբանական գրականության մեջ այս հնչյունը դիտարկվել է միայն իբրև *ա*-ի տարբերակ և բնութագրվել է իբրև հետին շարքի ստորին բարձրացման շրթնայնացած հնչյուն[262]: Նշվել է, թե այս հնչյունը ստորին բարձրացման կամ կոշտ *ա*է, որը որոշակիորեն ունի շրթնայնացման երանգ[263]: Ըստ Ա.Ղարիբյանի՝ այս հնչյունն «ունեն Երևանի ենթաբարբառին պատկանող Բայազեդի, ինչպես և Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքները»[264]: Ռ.Բաղրամյանը այս հնչյունը որակում է իբրև Բայազետի բարբառում «շատսովորական գործածության կոկորդային *ա*»[265]: Եթե հիմք ընդունենք Ժ.Միքայելյանի՝ վերևում բերված պնդումը Վանի, Ծատախի և Մոկսի խոսվածքների *ա* ձայնավորի մասին, ապա պետք է համարենք, որ համեմատվող բարբառները չունեն *ա*-ի տարբերակ այս հնչյունը[266]: Բայազետի բարբառում *ա*-ի շրթնայնացումը բոլոր խոսվածքներում նույն կերպչի դրսևորվում. այն ավելի թույլ է արտահայտվում Գավառի խոսվածքում[267] և ավելի ցայտուն է Սարուխանի խոսվածքում: Նշենք նաև, որ 5-րդ դարի բարբառային հիմնական զուգաբանություններից մեկն էլ, ըստ Գ.Ջահուկյանի, *ա*-ի շրթնայնացման

[260] Տե՛ս ՔՎԲ, էջ 16-26. ԽԲ, էջ 21-24. ԴԲ, էջ 18-25. Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 15. ՀԲԱ նյութեր, տետր թիվ 58, 196:
[261] Տե՛ս ՀԲ, էջ 38. Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 108. ՀԲՆ, էջ 77-78. ՀԼՊՔ, էջ 44:
[262] Տե՛ս Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 209:
[263] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 45, Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 34:
[264] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 108:
[265] Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 14:
[266] Գ.Ջահուկյանը ևս համեմատվող բարբառներում շրթնայնացած *ա* չի արձանագրում: Ցավոք, Գ.Ջահուկյանի աղյուսակներում չեն զանազանվում շրթնայնացած *ա*և *ա*-ի դիմաց *օ* կամ *ու* ունեցող բարբառախոս վայրերը (տե՛ս ՀԲՆ, էջ 70-81):
[267] Հակված ենք կարծելու, որ թերևս դեր է խաղացել այս բնակավայրի՝ շրջկենտրոն, ապա նաև մարզկենտրոն լինելու հանգամանքը, մանավանդ որ գավառցիների պես Բայազետ քաղաքից գաղթած Կարմիրգյուղ համայնքի բնակիչների խոսվածքում շրթնայնացման թուլացումչի նկատվում:

դրսևորումն էր[268], որը լեզվաբանը դիտարկվող տարածքի բարբառային միավորներից վերագրել է միայն Կոգովիտի ենթաբարբառին[269]:

Իբրև օ ձայնավորի տարբերակ՝ °/n հնչյունն առանձնանում է այլ բարբառների երկբարբառային ո-ից, որը, ըստ հեղինակների, ունի *ուօ* արտասանություն[270] և «պարզապես հանդես է գալիս իբրև ու և օ ձայնավորների սերտմիացություն՝ որպես երկբարբառ (բարդ ձայնավոր)»[271]: Հնարավոր է, որ Բայազետի բարբառի երկբարբառային *ո*-ն իր վերոհիշյալ արտասանությունը ձեռք է բերել շրթնայնացած *ա*-ի համաբանությամբ, և երկու դեպքում էլ (° և ո) ունենք ոչ թե *ուօ*, այլ *օա* սերտարտասանություն: Բայազետի բարբառի *ո*-ին սխալմամբ *ուէ* արտասանություն է վերագրում Ա.Ղարիբյանը[272], այդպես է վարվում և Ռ.Բաղրամյանը՝ գրելով. «*ո*-ն *ուէ*, երբեմն նաև *ուº* հնչումն ունի»[273]: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ շեշտակիր վանկում երկբարբառային *ո* ունեն բարբառախոս 29 վայրեր[274]: Դիտարկվող բարբառային տարածքում հատկանիշի դրսևորումը նույն կերպ է արտահայտված նաև 5-րդ դարի բարբառային զուգաբանությունները ներկայացնող աղյուսակում[275]:

է հնչյունը Բայազետի բարբառում արտասանության սկզբում ավելի փակ է, քան *է*-ն, իսկ վերջում *է*-ից ավելի բաց է[276]: Հայերենի

---

[268] Տե՛ս ՀԲՆ, էջ 165: Ի դեպ, Է.Աղայանի կարծիքով՝ հնարավոր է ենթադրել, որ դասական գրաբարի *ա*-ն «որոշ դեպքերում արտասանվել է որոշ շրթնայնացումով, որ հանգեցրել է նրա փոխանցմանը օ-ի՝ մի շարք բարբառներում: Այդ շրթնայնացումն ավելի զգալի է եղել *աւ* երկբարբառի մեջ, որ և պատճառ է դարձել աւ > օ փոփոխության՝ բաղաձայնից առաջ: Այսպիսով, կարող ենք ընդունել *ա*-ի թույլ շրթնայնացած տարատեսակը (°) գրաբարում, որ, սակայն, հնչյթային արժեք չի ունեցել» (տե՛ս Է.Աղայան, *Գրաբարի քերականություն*, Ե., 1964, էջ 221):

[269] Տե՛ս ՀԲՆ, Աղյուսակ 10 /միջադիր/, էջ 166-ից հետո:

[270] Տե՛ս ՔՎԲ, էջ 38, ԽԲ, էջ 28, ՀԼՊՔ. էջ 94:

[271] Նշվ. աշխ., էջ 95: Հ.Աճառյանը Բայազետի բարբառի *ո*-ին ևս այդպիսի արտասանություն է վերագրում (տե՛ս ՀԲ, էջ 44):

[272] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., 116:

[273] Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 14:

[274] Դրանք ամբողջովին կամ մասամբ ներկայացնում են Եվդոկիայի, Սեբաստիայի, Կեսարիայի, Հաջընի, Մարաշ-Զեյթունի, Կարնո, Մշո (Մուշ, Բուլանըղ, Մանազկերտ, Արճեշ և Արծկե), Տալվորիկ-Մոտկանի, Վանի, Դիադինի, Արարատյան, Ջուղայի, Խոյ-Մարաղայի բարբառները (տե՛ս ՀԲՆ, էջ 70-81, 132-136):

[275] Տե՛ս ՀԲՆ, Աղյուսակ 10 /միջադիր/, էջ 166-ից հետո:

[276] Տե՛ս նաև Վ.Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 164-165: Համամիտչենք Ռ.Բաղրամյանի հետ, համաձայն որի՝ Բայազետի բարբառի «*է*-ն Վանի բարբառին էլ հատուկ *իէ* միահնչումն է» (տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 14): Հ.Աճառյանը նույնպես Բայազետի բարբառի *է*-ին վերագրում է *իէ* արտասանություն (տե՛ս ՀԲ, էջ 44)

այլ բարբառներում այս հնչյունին համապատասխանում է երկբարբառային *ե*-ն, որը, ըստ ուսումնասիրողների, ունի *իէ* արտասանություն[277]: Ա. Ղարիբյանը առանձնացնում է բարբառների մի խումբ, որոնք *է* պարզ ձայնավորից բացի ունեն երկբարբառային *ե*. «Այդպիսի «ե» ունեն մեր բարբառներից մի քանիսը միայն, հատկապես Հաճընի, Զեյթունի, Վանի, Ուրմիայի, Խոյի բարբառները, Մշո բարբառի արեվելյան հատվածը, Արարատյան բարբառի Նոր Բայազեդի ենթաբարբառը»[278]: Գ.Ջահուկյանի տվյալներով[279]՝ շեշտակիր վանկում երկբարբառային *ե* ունեն բարբառախոս 28 վայրեր, որոնք ամբողջովին կամ մասամբ ներկայացնում են *ո* ունեցող վերոհիշյալ բարբառները[280] (բացառությամբ Եվդոկիայի բարբառի), ինչպես նաև Առդեալի բարբառը: Հատկանիշը նույն տարածքներին վերագրված է նաև 5-րդ դարի զուգաբանությունների աղյուսակում[281]:

Այսպիսով, բարբառների համեմատվող խմբում *ե,ո* հնչյուններ (համապատասխանաբար՝ *իէ* և *ուօ* արտասանությամբ) ունեն Վանի[282], Դիադինի բարբառները, դրանք մասամբ են բնորոշ Մշո[283] և ավելի քիչ՝ Արարատյան[284] բարբառներին: Խոյ-Մարաղայի բարբառում *ե* հնչյուն հանդիպում է ոչ բոլոր խոսվածքներում, իսկ *ո*-ն առանձին դեպքերում ունի *էօ* արտասանությունը[285]:

---

[277] ՀԼՊՔ, էջ 103-104, ՀԲՆ, էջ 63:
[278] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 110:
[279] Տե՛ս ՀԲՆ, էջ 63:
[280] Մշո բարբառում *ե* ունեն Մուշը, Մանազկերտը, Արճեշը, Արծկեն (տե՛ս ՀԲՆ, էջ 75-76):
[281] Տե՛ս ՀԲՆ, Աղյուսակ 10 /միջադիր/, էջ 166-ից հետո:
[282] Հ.Աճառյանը նկատել է, որ Վանի բարբառի «*ե* և *ո* երկբարբառները համապատասխանում են մշեցիների և Կարնո գյուղացիների *ե, ո* հնչումներին, բայց սրանց չափծանր ու դանդաղ չեն, և արտասանվում են շատ ավելի արագ, հատկապես Վն. *ե*-ն ավելի արագ է Մշ. *ե*-ից, քան թե Վն. *ո*-ն՝ Մշ. *ո*-ից» (ՔՎԲ, էջ 15):
[283] Մշո բարբառում երկբարբառային *ե,ո* չունեն Խնուսը, Բաղեշը և Խլաթը, *ե* չունի Բուլանըղը (տե՛ս ՀԲՆ, էջ 75-76): Նույն տեղում Գ.Ջահուկյանը այդ հնչյունները բացառում է Ալաշկերտի խոսվածքում ևս, սակայն խոսվածքն ուսումնասիրող Ք.Մադաթյանը վկայում է դրանց առկայությունը (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 8):
[284] Նման հնչյուններ ունեն Ղալաչան և Գյառգյառը, իսկ Աշտարակն ունի միայն *ո* (տե՛ս ՀԲՆ, էջ 77-78): Մ.Ասատրյանը այս հնչյունների առկայությունը արձանագրում է Լոռու խոսվածքում (տե՛ս Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, Ե., 1968, էջ 12-13, 42): Ըստ Ա.Գրիգորյանի՝ «Արարատյան բարբառում ընդհանրապես երկբարբառներ չկան....: Միայն Աշտարակի խոսվածքում, ինչպես նաև Լոռիի շրջանի որոշ գյուղերում արտասանվում է նաև *ուէ*, որ մոտ է երկբարբառային արտասանությանը» (Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 206): Իսկ Ռ.Մարկոսյանը վկայում է, որ Արարատյան բարբառում «Բառամիջի շեշտակիր ո-ն խոսվածքների մեծ մասում ունի երկբարբառային օէ հնչում» (ԱԲ, էջ 61):
[285] ԽԲ, 28-29:

Բաղաձայնհնչյուններ

Բայազետի բարբառի բոլոր խոսվածքներում գործառող բաղաձայնները 36-ն են. *բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ, ձ, ծ, ց, ջ, ճ, չ, բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛, վ, ֆ, զ, ս, ժ, շ, ղ, խ, հ՛, մ, ն, լ, ր, ռ, յ, կ՛*: Տարածական սահմանափակ կիրառություն ունեն *գ՚, կ՚, ք՚* քմայնացած պայթականները: Բարբառի բաղաձայնական համակարգի էական առանձնահատկություններից է *բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛* շնչեղ ձայնեղների առկայությունը: Ուսումնասիրողները ավելի հակված են կարծելու, որ գրաբարյան բառասկիզբն ուներ շնչեղ ձայնեղ բաղաձայններ[286], իսկ Գ.Ջահուկյանն էլ համարում է, որ 5-րդ դարի հայ բարբառներին հատուկ հատկանիշներից է «Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղությունը»[287], ուստի կարող ենք ենթադրել, որ Բայազետի բարբառի այս հատկանիշը գալիս է հնագույն ժամանակներից: Բարբառագետները այդպիսի հնչյուններ դիտարկել են տարբեր ընդգրկում ունեցող տարածքներում: Որպես կանոն, նման հնչյուններ արձանագրվել են Արարատյան, Կարնո, Մշո, Ջուղայի, Ակնի, Համշենի, Արաբկիրի և այլ բարբառներում[288]: Ըստ Հ.Մուրադյանի՝ շնչեղ ձայնեղ բաղաձայնները հատուկ են հիմնականում Հայաստանի կենտրոնական գավառների բարբառներին (Արարատյան, Բայազետի, Մուշի, Կարնո)[289]: Շնչեղ ձայնեղներ դիտարկվել են նաև Դիադինի բարբառում[290], սակայն Հ.Մուրադյանը, վկայելով Ռ.Բաղրամյանի տեսակետը[291], կարծում է, որ «այստեղ ձայնեղները ունեն

[286] ԼՔՀԼ, հ. 6, էջ 554-555, Հ.Պեդերսըն, Հայերենը և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 7-8, Э.Бенвенист, Проблемы армянского консонантизма, Вопросы языкознания, М., 1961, 3, էջ 37-39, Г.Фогт, Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, 3, էջ 40-43, Ա.Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 60, ՀԲՆ, էջ 263:

[287] ՀԲՆ, էջ 163-165:

[288] Տե՛ս ՀԲ, Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 125, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 95, ԱԲ, էջ 54, ՄԲ, էջ 13: Հ.Աճառյանը բուն Արարատյան բարբառում նախապես շնչեղ ձայնեղներ չի արձանագրել, այդպիսիք նա տեսել է միայն «Պայազիտի ենթաբարբառում» (տե՛ս ՀԲ, էջ 38-39, 44), սակայն «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ (մաս 2) շնչեղ ձայնեղների առկայությունը ընդունել է Արարատյան բարբառում ընդհանրապես (տե՛ս ՀԼՊ, էջ 330):

[289] ՀԼՊՔ, էջ 284: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ շնչեղ ձայնեղներ ամբողջովին կամ մասամբ ունեն 13 բարբառներ (Համշենի, Սեբաստիայի, Ծապին-Կարահիսարի, Արաբկիրի, Ակնի, Հաջընի, Զեյթունի, Կարնո, Խարբերդ-Երզնկայի, Մշո /Մուշի, Բուլանըղի, Խնուսի և Ալաշկերտի խոսվածքները/, Արարատյան /Երևանի, Աշտարակի, Կողբի խոսվածքները/, Բայազետի, Ջուղայի) (տե՛ս ՀԲՆ, էջ 51-62): Նույն այդ տարածքներին շնչեղ ձայնեղներ վերագրվել են նաև 5-րդ դարի բարբառային զուգաբանությունների աղյուսակում (տե՛ս ՀԲՆ, Աղյուսակ 10 /միջադիր/, էջ 166-ից հետո):

[290] А,Гарибян, Об армянском консонантизме, ВЯ, 1959, 5, էջ 83-84:

[291] Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 121-122:

ձայնեղի և խուլի միջին արտասանություն և փաստորեն ներկայանում են որպես միջին օղակ՝ դեպի Վասպուրականի ձայնեղազուրկ բարբառների բաղաձայնական համակարգը»[292]: Դիադինի բարբառային խոսքի մեր դիտարկումներից ելնելով՝ նշենք, որ այդ բարբառի բառասկզբի ձայնեղները մյուս վայրերի շնչեղ ձայնեղներից առանձնանում են շնչեղության ավելի թույլ աստիճանով:

Հայերենի մի շարք բարբառներին հատուկ այս կարգի բաղաձայն հնչյունների արտաբերական-ձայնաբանական բնույթը փորձել են պարզել թե՛ հայ, թե՛ օտար հետազոտողներ[293]: Դեռևս Հ.Աճառյանն է կատարել այդ հնչյունների փորձառական ուսումնասիրություն[294]: Լսողական, ինչպես նաև փորձառական դիտարկումներ կատարելով՝ ուսումնասիրողները մատնանշել են շնչեղ ձայնեղների արտաբերական-ձայնաբանական հետևյալ հատկանիշները. ա) շնչեղ ձայնեղների արտաբերության ժամանակ ձայնալարերի տատանումները ուշ են սկսվում, ուստի ձայնեղությունը հաջորդում կամ էլ համընկնում է պայթյունի պահին[295], բ) շնչեղ ձայնեղ պայթականները արտաբերվում են ուժեղ պայթյունով, որի և հաջորդող ձայնավորի միջև ընկած է թույլ հնչողություն, բայց ուժեղ շնչեղություն ունեցող միջակա հատված կամ կոկորդային անորոշ աղմուկ[296], գ) շնչեղ ձայնեղները սովորական ձայնեղներից տարբերվում են իրենց կազմում ունեցած ձայնեղ հագագով[297] կամ կոկորդային արտաբերությամբ[298], դ) այս կարգի հնչյուններին բնորոշ է արտաբերության ինտենսիվությունը[299]: Հայերենի տարբեր բարբառների շնչեղ ձայնեղ բաղաձայնների փորձառական

---

[292] ՀԼՊՔ, էջ 283:

[293] Տե՛ս Г.А.Капанцян, Аштаракский говор, Историко-лингвистические работы, т. 2, Ер., 1975. ԼՔՀԼ, հ.6., Ա.Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 60. Ж.Фурке, Генезис системы согласных в армянском языке, ВЯ, 1959, 6. A.Pisowicz, Le developpement du consonantisme armenien, Krakow, 1976 և ն:

[294] ԼՔՀԼ, հ.6, էջ 248-250:

[295] ԼՔՀԼ, հ.6, էջ 249-250, Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ 144, Ա.Խաչատրյան, Հ.Աճառյանը հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիր, Լեզվի և ոճի հարցեր, 5, Ե., 1978, էջ 63. A.Pisowicz, նշվ. աշխ., էջ 17.

[296] Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., 2010, էջ 167:

[297] Г.А.Капанцян, նշվ. աշխ., էջ 441

[298] Ж.Фурке, նշվ. աշխ., էջ 72 - 73:

[299] Т.Гамкрелидзе, Вяч.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984. էջ 27. A.Pisowicz, նշվ. աշխ., էջ 17:

ընդգրկուն հետազոտություններ է կատարել Ա.Հ.Խաչատրյանը[300], ընդ որում՝ ուսումնասիրության ոլորտում այլ բարբառային միավորների հետ եղել են նաև Բայազետի բարբառը, Աշտարակի և Ալաշկերտի խոսվածքները: Դիտարկելով Աշտարակի և Նորատուսի խոսվածքների շնչեղ ձայնեղները[301]՝ Ա. Խաչատրյանը իրավացիորեն նկատել է, որ միայն բառասկզբի դիրքում դրանց գործառումը պայմանավորված է բառասկզբի ուժեղ, գրոհային արտաբերության միտումով, որը ձայնաբանորեն արտահայտվում է հնչյունի պայթյունի պահի երկար տևողությամբ և կոկորդային ձայնեղ շփականի հայտնությամբ[302]: Բայազետի բարբառի շնչեղ ձայնեղները «....ի տարբերություն Ալաշկերտի՝ ավելի ուժեղ են (հաճախ դրանցում երևում է կոկորդային հպում), քիչ շնչեղացված և ձայնավորի ավելի ուժեղ աղմկային երանգով: Շնչեղացումը, երբ այն ունի ինքնուրույն արտահայտում, միշտ ձայնեղ է, այսինքն՝ նման է կոկորդային ձայնեղ հ-ին»[303]: Ի վերջո հնչյունաբանը եզրակացնում է, որ «այն, ինչ լսողությամբ ընկալվում է որպես ձայնեղ շնչեղացում, իրականում կիսաձայնեղ *բ,գ,դ* հնչյուններն են, որոնց հետևում են աղմկային երանգով արտասանված ձայնավորներ»[304]: Ա.Խաչատրյանը կարևորում է նաև շնչեղ ձայնեղ բաղաձայնների ելքի համեմատաբար մեծ տևողությունը, որը և, ըստ երևույթին, ընկալվում է որպես շնչեղություն[305]: Հայերենի բարբառներում (նաև՝ Բայազետի բարբառում) շնչեղ ձայնեղների արտաբերական տարատեսակ դրսևորումներին անդրադառնալով՝ Ա.Հանեյանը նշում է, որ հայերենի բարբառների հիմնականում

---

[300] Ա.Ա.Хачатрян, Природа звонких придыхательных в некоторых армянских диалектах, Лингвистическая география, диалектология и история языка, Ер., 1976, էջ 432-440. Ա.Ա.Хачатрян, Природа звонких придыхательных в армянских диалектах, Միջազգային հայերենագիտական գիտաժողով - 1982, Ե., 1984, էջ 327-336. Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Ե., 1988, էջ 139-148:

[301] Ա.Ա.Хачатрян, Природа звонких придыхательных в некоторых армянских диалектах, Лингвистическая география, диалектология и история языка, Ер., 1976, էջ 432-440:

[302] Ա.Ա.Хачатрян, նշվ. աշխ., էջ 439-440: Փորձառական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձայնեղների շնչեղացածությունը կարող է տարբեր վայրերում ունենալ տարբեր դրսևորումներ: Այսպես, Ա.Խաչատրյանը պարզել է, որ «Ամենացայտուն տարբերությունը գրական լեզվի ձայնեղների և այն ձայնեղների, որոնց մենք կարող ենք համարել շնչեղ, ի հայտ է գալիս Մշո բարբառում, մասնավորապես, Ալաշկերտի խոսվածքում» (Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ 143):

[303] Ա.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 146:

[304] Նշվ. աշխ., էջ 144,146:

[305] Նշվ. աշխ., էջ 144:

կենտրոնական, հարակից արևմտյան և մասամբ հարավարևելյան տարածքին (Մուշ, Կարին, Արարատյան դաշտ, Նոր Ջուղա, Բայազետ, Արաբկիր, Ծապին-Կարահիսար, Սեբաստիա) բնորոշ է ուժգնային կոկորդային տարբերակը[306]: Այս կարգի շնչեղ ձայնեղները բնութագրվում են թոքերից արտաշնչվող ուժգնային-ձայնային մաքուր արտաբերությամբ, որն ուղեկցվում է կոկորդի, բերանի խոռոչի մկանային խիստ որոշակի լարվածությամբ[307]: Ըստ Ա.Հանեյանի՝ հարավկենտրոնական ենթատարածքում (Արծկե, Բաղեշ, Դիադին ևն) դրսևորվում է շնչեղ ձայնեղների քմակոկորդային տարբերակը[308]: Իր կատարած քննությունից Ա.Հանեյանը եզրակացնում է. «Գրեթե բոլոր խոսվածքներում ձայնեղ շնչեղների պայթական ու հպաշփական բաղադրիչը ձայնային բնույթով առավելապես խուլ է»[309]: Շնչեղ ձայնեղների վերաբերյալ հետաքրքրական եզրակացության է հանգում նաև Մ.Աղաբեկյանը. «Ըստ փորձառական հետազոտության տվյալների՝ հայերեն բարբառների շնչեղ ձայնեղ բաղաձայնները արտասանությամբ մոտենում են խուլերին: Դրանք բնույթով կիսաձայնեղ-կիսախուլ հնչյուններ են»[310]: Մյուս կողմից՝ դեռևս Գ.Ղափանցյանն է նկատել, որ ձայնեղ հագագը շնչեղ ձայնեղների անբաժանելի մասն է[311]: Հետևում է, որ շնչեղ ձայնեղները արտասանությամբ մոտենում են խուլերին և իրենց կազմում ունեն ձայնեղ հագագ: Ողջ ասվածից թերևս կարելի է եզրակացնել, որ հայերենի շնչեղ ձայնեղների համար ընդհանուր

---

[306] Ա.Հանեյան, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, էջ 166-231:

[307] Նշվ. աշխ., էջ 182: Հասկանալի է, որ բոլոր այս դեպքերում խոսքը հիմնականում վերաբերում է շնչեղության ձևավորմանը (կամ բաղաձայնի բաղադրիչ հագագին):

[308] Նշվ. աշխ., էջ 184: Դիադինի բարբառի շնչեղ ձայնեղների էությունը ճիշտ հասկանալու համար հատկապես կարևոր են Ա.Հանեյանի հետևյալ դիտարկումները. այս ենթատարածքում «ա. ձայնեղ շնչեղների ուժգնային տարբերակը առաջնալեզվային ° ձայնավորին և *ե, ո* երկբարբառներին նախորդող դիրքում ունի քմային երանգ՝ քմակոկորդային բնույթ...., այսինքն՝ քմայնության հատկանիշը խորթ չէ տարածքին....: բ. Դրանով պայմանավորված՝ նշված վայրերի խոսվածքներում երբեմն նկատվում է շնչեղության թուլություն. ձայնեղ շնչեղները հերթագայվում են խուլ, ձայնեղ կամ կիսաձայնեղ հնչյուններով, որպիսիք առաջանում են դրանց ապաշնչեղացումից. օր.՝ Դիադինում և Մակուի խոսվածքներում շնչեղությունը համեմատաբար թույլ է, ոչ հետևողական գործառությամբ, սակայն ձայնեղ շնչեղության առկայությունը, այնուամենայնիվ, անժխտելի է, մանավանդ որ տարածքում ձայնորդային հագագը լիարժեք գործառություն ունի» (նշվ. աշխ., էջ 216-217):

[309] Նշվ. աշխ., էջ 187:

[310] Մ.Աղաբեկյան, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., 2010, էջ 151:

առմամբ առավել բնութագրական են երկու հատկանիշներ. ա) խուլ սկիզբ՝ երբեմն ձայնալարերի ուշացած թրթռումով, բ) ձայնեղ շնչով կամ հագագով ելք: Այն, որ խուլ հպումով մուտքը և ձայնեղ հագագով ելքը առաջ են բերում շնչեղ ձայնեղ հնչյուններ, թույլ է տալիս պնդել նաև Բայազետի բարբառի հնչաշղթայի դիտարկումը: Այստեղ ձայնեղ հագագով սկսվող բառերի և *կը* եղանակիչի սերտ արտասանությունը հանգեցնում է բառասկզբում շնչեղ ձայնեղ *գ՛*-ի դրսևորման, ինչպես՝ *կը հ՛ըլնես*, բայց՝ *գ՛ըլնես, կը հավըլնա*, բայց՝ *գ՛ավըլնա*: Ավելին, երբ հնչաշղթայում խուլ պայթականով կամ հպաշփականով ավարտվող և ձայնեղ հագագով սկսվող բառերը ունենում են սերտարտասանություն, նրանց կցությունում նույնպես ձևավորվում է շնչեղ ձայնեղ բաղաձայն, ինչպես՝ պ°ռա*պ հ՛*ըլնել - պ°ռա*բ՛*ըլնել. կ°ռճ հ՛ամար - կ°ռ*ջ՛*ամար. բ՛ար*կ հ՛*առու - բ՛ար*գ՛*առու ևն[312]:

Շնչեղ ձայնեղ բաղաձայնների առկայությամբ Բայազետի բարբառը ընդհանրություն ունի Արարատյան[313], Մշո և Դիադինի բարբառների հետ: Միաժամանակ, եթե Բայազետի, Արարատյան և Մշո բարբառների շնչեղ ձայնեղները ունեն ուժգնային կոկորդային, ապա Դիադինի բարբառի շնչեղ ձայնեղներն ունեն քմակոկորդային բնույթ: Նկատենք նաև, որ Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները նշյալ բարբառների շնչեղ ձայնեղների դիմաց ունեն խուլ պայթականներ և հպաշփականներ:

Գ.Ջահուկյանը Բայազետի բարբառին վերագրում է քմայնացած հետնալեզվայիններ[314], սակայն այդպիսիք դրսևորվում են միայն Գանձակի, Նորատուսի և Արծվաքարի խոսվածքներում, որը թերևս գալիս է բարբառակիրների նախնիների խոսվածքային կամ բարբառային յուրահատկություններից[315]:

---

[311] Г.А.Капанцян, Аштаракский говор. Историко-лингвистические работы, том 2, էջ 441, Գ.Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ.1, էջ 119-120:

[312] Համանման երևույթներ Մշո բարբառում նկատել է Ա.Հանեյանը (նշվ. աշխ., էջ 183), Աշտարակի խոսվածքում՝ Գ. Ղափանցյանը (Аштаракский говор. Историко-лингвистические работы, том 2, էջ 449):

[313] Ռ.Մարկոսյանը հավաստում է, որ Արարատյան բարբառի խոսվածքների ճնշող մեծամասնությունն ունի *բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛* շնչեղ ձայնեղներ (տե՛ս ԱԲ, էջ 82):

[314] Տե՛ս ՀԲՆ, էջ 59:

[315] Նորատուսցիների նախնիները եկել են Արծափի մոտերքում գտնվող Մոսուն, Քորուն գյուղերից, նաև Սասունի կողմերից, իսկ գանձակցիների նախնիները՝ Խոյի, Սալմաստի, նաև Բայազետի գավառներից: Հ.Մուրադյանը նշում է, որ քմային *գ,կ,ք* պայթականները «առավել ապես հատուկ են եզրային բարբառներին և խիստ

Նորատուսի խոսվածքում առաջնալեզվային ձայնավորներից առաջ հետնալեզվայինների դիմաց ունենք *ջ, ճ, չ*: Ըստ Գ.Ջահուկյանի տվյալների՝ այս հատկանիշն ունեն միայն Աշտարակը[316] և Մարաղան[317], սակայն հատկանիշը դիտարկվել է նաև այլ խոսվածքներում: Ռ.Բաղրամյանի տվյալներով՝ այս հատկանիշը Նորատուսից բացի բնորոշ է նաև Սևանի տարածաշրջանի Գեղամավանի, Ծաղկունքի, Դդմաշենի խոսվածքներին (որոնց բնակիչների նախնիները հիմնականում գաղթել են Մակուից[318]), ինչպես նաև՝ Սևանի տարածաշրջանի Ծովագյուղի, Հրազդանի տարածաշրջանի Մեղրաձորի, Մաքրավանի, Աշտարակի շրջանի Արագյուղի խոսվածքներին, որոնց բնակիչների նախնիները եկել են Արծափից[319]: Պետք է կարծել, որ ներկայիս նորատուսցիների նախնիների՝ Արծափի հարևանությամբ ապրելու հանգամանքով էլ պայմանավորված է նրանց խոսվածքում դիտարկվող հատկանիշի առկայությունը:

Գրական հայերենի շփական հնչյուններից զատ՝ Բայազետի բարբառն ունի ձայնեղ *հ* (հ՛)[320], տարեցների խոսքում՝ նաև *կ՛* հնչյուններ: Նշվել է, որ շնչեղ ձայնեղ բաղաձայններ ունեցող բարբառները, որպես կանոն, զուգահեռաբար ունեն նաև ձայնեղ

տարածված են Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի և հարակից բարբառներում» (ՀԼՊՔ, էջ 310): Ըստ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակների՝ հատկանիշը գրեթե համատարած է բարբառների արևելյան խմբակցությունում, նաև՝ Արարատյան բարբառում (տե՛ս ՀԲՆ, էջ 58-59). այստեղ 48 վայրերից միայն հինգին հատուկ չէ քմայնացումը (տե՛ս ՀԲՆ, էջ 51-62), մինչդեռ արևմտյան տարածքի 72 վայրերից հատկանիշը բնորոշ է 26-ին, որոնք ներկայացնում են 12 բարբառներ՝ Սյոլյոզի, Համշենի, Զեյթունի, Բեյլանի, Քեսաբ-Սվեդիայի, Խարբերդ-Երզնկայի, Եդեսիայի, Տիգրանակերտի, Տալվորիկ-Մոտկանի, Վանի, Դիադինի և Մշո (նշվ. աշխ., էջ 51-58): Ընդ որում՝ Մշո բարբառում այս հատկանիշը դրսևորվում է միայն Բաղեշում, Խլաթում, Արծկեում և Արճեշում (տե՛ս նշվ. աշխ., էջ 56-57): Փաստորեն, քմային հետնալեզվայիններ դրսևորվում են համեմատվող բոլոր բարբառներում էլ, սակայն Բայազետի և Մշո բարբառների խոսվածքների մեծ մասին այս հնչյունները բնորոշ չեն:

[316] Նշվ. աշխ., էջ 58: Տե՛ս նաև ՀԼՊՔ, էջ 312:

[317] ՀԲՆ, էջ 62:

[318] Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 10-11:

[319] Տե՛ս նշվ. աշխ., էջ 69-70, :

[320] Հայերեն բարբառային խոսքում ձայնեղ *հ* հնչյուն, ըստ Գ.Ջահուկյանի, գործառում է նաև Ծապին-Կարահիսարի, Սեբաստիայի, Արաբկիրի, Կարնո, Մշո, Դիադինի, Ջուղայի բարբառներում, Արարատյան բարբառն ընդգրկող վայրերից՝ Աշտարակում, Կողբում, Ղալաչայում (տե՛ս ՀԲՆ, էջ 51-62: Տե՛ս նաև՝ Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, էջ 16): Նկատվել է, որ ձայնեղ *հ* գոյություն ունի նաև գրական հայերենում՝ իբրև հնչույթի դիրքային տարբերակ (տե՛ս Ա.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 183:)

հագագ[321]: Համեմատվող բարբառներից ձայնեղ *հ* չունեն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները[322], ինչը և սպասելի էր այդ բարբառներում շնչեղ ձայնեղների բացակայության պարագայում: Հ.Մուրադյանը ձայնեղ *հ*-ն համարում է ձայնեղ շունչ՝ կոկորդային արտասանությամբ, որի արտասանության ժամանակ ձայնալարերը թրթռում են[323]: Ա.Հանեյանը վկայում է, որ Բայազետի բարբառի կոկորդային ձայնորդ հագագը թերևս սկսվում է հագագի խուլ հատվածով, որին հաջորդում է ձայնորդային հատվածը[324]:

Հայերենի համար անսովոր կոկորդային *կ՛* կամ *ղ՛* բաղաձայն բարբառագետները դիտարկել են Ուրմիայի, Թբիլիսիի, ինչպես նաև Լճյուղի բարբառներում[325]: Կոկորդային այս բաղաձայնի արտաբերական յուրահատկությունների վերաբերյալ արվել են մի շարք դիտարկումներ: Ա.Հանեյանը նշում է, որ Տիգրանակերտի բարբառի *ղ՛*-ն հետնալեզվային կիսաշփական է, արտաբերվում է *կ*-ի և *ղ*-ի միացումով և համապատասխանում է արաբերենի *կղաֆ* բաղաձայնին[326]: Ռ.Բաղրամյանը Բայազետի բարբառի *կ՛*-ն բնութագրում է իբրև «կոկորդային հնչման *ղ*»[327]: Խոյ-Մարաղայի համանման հնչյունը, ըստ Մ.Ասատրյանի, «*ղ*-ի մի տարբերակն է. արտասանվում է լեզվի ետին մասի և քիմքի ետին մասի փակվածքից առաջացած պայթյունով»[328], սակայն ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերը վկայում են, որ Խոյ-Մա-

---

[321] Տե՛ս Р.Якобсон, Типологические исследожания и их вклад в сравнительно-историческое языкознание, Новое в лингвистике, вып. 3, Москва, 1963, с. 102, Գ.Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, էջ 119-120, Ա.Հանեյան, նշվ. աշխ., էջ 182-183, ՀԼՊՔ, էջ 278:

[322] ՀԲՆ, էջ 57, 62, ԽԲ, էջ 19-20:

[323] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 314-315: Այս հնչյունը վայրից վայր ունի արտասանական տարբերություններ. որոշ վայրերում այն արտասանվում և ընկալվում է որպես ձայնորդ *յ*-ին մոտ հնչյուն, որն իր մեջ ունի նաև ձայնեղ շնչի զգալի երանգ, այլ վայրերում այն ընկալվում է որպես ուժեղ ու կոպիտ ձայնեղ շունչ (օրինակ՝ Կարնո բարբառի որոշ խոսվածքներում), որոշ վայրերում էլ այդ հնչյունի ձայնեղ շնչի արտաբերությունը թուլանում է, և հնչյունը համարյա նույնանում է գրական հայերենի *հ*-ի հետ (տե՛ս ՀԼՊՔ, էջ 276):

[324] Ա.Հանեյան, նշվ. աշխ., էջ 190:

[325] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 133, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 88: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ Բայազետի բարբառից բացի՝ այս կարգի բաղաձայն հանդիպում է Համշենի, Բեյլանի, Քեսաբ-Սվեդիայի, Տիգրանակերտի, Եդեսիայի, Դիադինի, Աստրախանի, Թբիլիսիի, Խոյ-Մարաղայի, Շամախիի բարբառներում, Վանի բարբառի Ոզմի խոսվածքում (տե՛ս ՀԲՆ, էջ 51-62): Սակայն բարբառագետները *կ՛* դիտարկել են նաև Շատախի և Մոկսի խոսվածքներում (Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 46, Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, էջ 131): Մ.Մուրադյանը Շատախում փոխառյալ բառերի ու հատուկ անունների սկզբում *ղ*-ի դիմաց արձանագրում է *կ* (տե՛ս Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, Ե., 1962, էջ 51):

[326] Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978, էջ 17:

[327] Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 14:

[328] ԽԲ, էջ 20:

ղաղայի բարբառի որոշ միավորներում (որոնք ներկայացնում են և՛ Խոյը, և՛ Ուրմիան ու Մարաղան) առկա է *կ՛* (կամ դրադիմաց՝ *կ*)[329]: Ըստ Մ.Մուրադյանի՝ Մոկսի բարբառի *կ՛*-ն հետևալ եզվային պայթական է՝ *ղ* ձայնեղի թույլ երանգով[330]: Արտասանական նման բնութագիր ունի նաև Բայազետի բարբառի *կ՛*-ն, որն իր արտասանության եղանակով փաստորեն նմանվում է հպաշփականներին: Այդպես է և Դիադինի բարբառում[331]: Նկատենք, որ ներկա սերնդի խոսքում և՛ Բայազետի, և՛ Դիադինի բարբառներում այս հնչյունը հիմնականում փոխարինվել է *կ* պայթականով: Ըստ ամենայնի՝ Մշո բարբառի Արծկեի[332] և Արճեշի[333] խոսվածքներում ևս ունենք *կ՛* (կամ դրադիմաց՝ *կ*): Օտար այդ հնչյունի (ինչպես նաև բառասկզբի *ղ*-ի) դիմաց *կ* ունի նաև Վանի բարբառը[334], Արարատյան բարբառն ունի *ղ*[335], իսկ Մշո բարբառի մյուս խոսվածքները՝ *խ*[336]: Այսպիսով, համեմատվող բարբառներում *կ՛* հնչյուն դիտարկվում է Վանի բարբառի Ոզմի, Ծատախի և Մոկսի խոսվածքներում, Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներում, Մշո բարբառի մեկ-երկու խոսվածքներում:

Բայազետի բարբառի մնացած բաղաձայնները իրենց արտասանական բնութագրերով որևէ կերպչեն տարբերվում գրական հայերենի համապատասխան հնչյուններից[337]:

2. ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

---

[329] ՀԲԱ նյութեր, տետր թիվ 302, 210, 358:

[330] Մ.Մուրադյան, Որվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1, էջ 115:

[331] Վ.Խաչատրյանը իր «Վարդենիսի բարբառը» աշխատանքում (էջ 48) Դիադինի համար արձանագրում է *ղ՛*, սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ այստեղ առկա է *կ՛* հնչյուն:

[332] Տե՛ս ՀԲԱ նյութեր, տետր թիվ 56:

[333] Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1901, էջ 428-432: Այստեղ Արճեշի խոսվածքով գրառված «Կնիկը ջորիի փոխարկուած» հեքիաթում հանդիպում են *կաթչի* (ջորեպան), *չէին կլաանայ* (չէին գիրանա), *կոնախներ* (հյուրեր), *կսապ* (մսագործ) ձևերը:

[334] Տե՛ս ՔՎԲ, էջ 70:

[335] Տե՛ս Ս.Հ.Բաղդասարյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 194, 200:

[336] Տե՛ս ՀԲՆ, էջ 56-57:

[337] Լեզվի հնչյուններից զատ, Բայազետի բարբառում կան արտասանական այլ իրողություններ, որոնք նույնպես մասնակցում են հաղորդակցման իրականացմանը: Ս.Բաղդասարյան-Թափալցյանը գրում է. «Մշո բարբառում առկա է և *խ* ներառական բառ հնչյունը, որը փոխարինում է «այո» բառին և միայն այդ դեպքում է գործածվում: Այն հիշեցնում է խռռոց և զգալի իրեն ավելի շփական է, քան ընդհանուր հայկական *խ*-ն» (ՄԲ, էջ 13): Այս իրողությունը շատբնորոշ է նաև Բայազետի բարբառին:

Ձայնավոր հնչյուններ

Հնչյունաբանական առումով նախև առաջ հետաքրքրական է *ա*, °և ° միավորների փոխհարաբերությունների հարցը: Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի առավել ցայտուն յուրահատկությունը շրթնայնացած °ձայնավորի առկայությունն է: Թե՛ այս հնչյունի գոյությունը Բայազետի բարբառում առաջինը նկատած Ա.Ղարիբյանը[338], թե՛ հետագա ուսումնասիրողները բարբառային խոսքում այս հնչյունի բաշխման որևէ օրինաչափություն չեն արձանագրել, իսկ բերված օրինակներից տպավորություն է ստացվում, թե բարբառումս °-ն հանդես է գալիս ցանկացած դիրքում, կամ էլ թե՝ Բայազետի բարբառում *ա* ձայնավորը գրեթե միշտ շրթնայնացած է (ինչպես՝ °*ր°մ* /Արամ/, խպ°ոտցեր /հպարտացել/, բ°ռեվ /բարև/, *խիվ°նդ* /հիվանդ/, չեմ կ°*ն°* /չեմ կարող/, *խ°ս°*ն /հասան/)[339]: Հ.Մուրադյանը գրում է. «Նոր Բայազետի (Կամոյի) ու Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքներին հատուկ °ձայնավորը *ա*-ի արտասանական ազատ տարբերակն է, որ կարող է հանդես գալ համարյա բոլոր դիրքերում, որպես այդ խոսվածքների արտասանական բազային հատուկ ձայնավոր»[340]: Մեր դիտարկումները, սակայն, ցույց են տալիս, որ իրականում °ձայնավորը Մարտունու տարածաշրջանի գյուղերի խոսվածքներին հատուկ չէ[341], իսկ Բայազետի բարբառում *ա* և ° հնչյունները գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ[342], որը դրսևորվում է հետևյալ կերպ[343].

1.° հնչյունը հանդես է գալիս՝

ա) բացարձակ բառասկզբում, օրինակ՝ °*բրանք, °տամ, °խճիկ* ևն (բացառություն են կազմում *ա* ձայնավորով սկսվող սակավաթիվ բառեր, ինչպես՝ *այ, ահա, այսի, այտի, այնի, այտենց, այսենց, առռա, ախար, ահահա*).

---

[338] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 227: Հ.Աճառյանը Բայազետի բարբառում այս հնչյունը չի նկատել (տե՛ս ՀԲ, էջ 44-45,48):

[339] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 108, 229. Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 82:

[340] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 41:

[341] 2014 թվին եղել ենք այդ տարածաշրջանի բոլոր գյուղերում, կատարել խոսվածքների հետազոտություն, բարբառախոսների տեսաձայնագրում:

[342] Տե՛ս նաև Վ.Կատվալյան, *Ք°վ°ռա խն°ք-չ°ն°ք*, Ե., 2009, էջ 13, Վ.Կատվալյան, «Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Ե., 2012, 2, էջ 48 – 63:

[343] Այս պարագայում նկատի չենք ունենում նոր և նորագույն այն փոխառությունները և հարևան բարբառների ազդեցություն ներկայացնող այն դեպքերը, որոնցում հանդես է գալիս °հնչյունը:

բ) բառասկզբի խուլ բաղաձայններից (բացառությամբ *խ* շփականը) և *մ, ն* հպական ձայնորդներից հետո. օրինակ՝ *պ°տ, տ°վար, կ°տու, ծ°փ, ճ°գար, ֆ°յտն, ս°ր, շ°տ, մ°քուր, ն°վ, կ°* ևն (բացառություն են մի քանի ձայնարկություններ՝ *պա պա պա, պահ°, պահ, տաշ, այմառթ*, ինչպես նաև *տալ* բայի միավանկ զուգահեռ ձևերը՝ տ°լ - *տալ*, տ°մ - *տամ*, տ°ս - *տաս*, տ° - *տա*, տ°նք – *տանք* ևն[344]).

2. *ա* հնչյունը հանդես է գալիս՝

ա) բառասկզբի ձայնեղ, շնչեղ ձայնեղ և շնչեղ խուլ բաղաձայններից, *հ՛* հագագից և *խ*խուլից, ձայնորդներից (բացի *մ* և *ն* հպականները) հետո, օրինակ՝ *բալա, բ՛անցը, գայկա, գ՛առ, դադ, դ՛ար, ձ՛ավար, ջան, ջ՛առթել, փագ, քար, թան, ցավ, չար, հ՛ավէս, հ՛առէչ, խաց, լակոտ, ռաստ, յարա, խա, քա* ևն. այս դիրքում ° հնչյունը բացառված է.

բ) բառերի ոչ առաջին վանկերում. *գ՛էրան, բաստան, շինական, ջ՛օչընալ, տղա* ևն (բացառություն են այն բաղադրությունները, որոնցում ° հնչյուն ունեցող արմատը սկզբից ստանում է որևէ ձևույթ, ինչպես՝ *լեղապտառ, ջրձ°ղիկ, °նտ°շ* ևն[345]):

Այսպիսով, Բայազետի բարբառում *ա* և ° հնչյունները ունեն իրենց գործառական հստակ ոլորտները և որևէ դիրքում հակադրական զույգ չեն կազմում ու իմաստատարբերակիչ դեր չունեն. դրանք *ա* հնչյուի դիրքային տարբերակներ են, ընդ որում՝ °-ն դիրքային պարտադիր տարբերակ է բացարձակ բառասկզբում և բառասկզբի որոշակի բաղաձայններից հետո, իսկ բառասկզբում այլ բաղաձայններից հետո և բառի մյուս դիրքերում հանդես է գալիս ոչ շրթնային *ա*-ն: Միայն *կ°, տ°* ձևերում °–ն հայտնվում է բացարձակ բառավերջում, այս դիրքում հին շերտի բառերում սակավ է հանդիպում նաև *ա*-ն (ինչպես՝ հ՛ափեղա, °րընլ ը վա, մեղա, վըկա, տղա ևն): Նոր բառաշերտում (հատկապես փոխառյալ բառերում) բառավերջում *ա*-ի գործածությունը դառնում է սովորական (°կուշկա, բախճա, բուղա, բօշա, խուռդա ևն): Այս դիրքում *ա*-ի հաճախականությունը

---

[344] *Տալ* հիմքով երկվանկ ձևերն ունեն ° հնչյուն՝ *տ°լում, տ°լուց*, իսկ այդ բայի ենթադրական ապառնու ձևերը *ա* հնչյուն ունեն՝ *կըտամ, կըտաս, կըտա* ևն: Հավանաբար *տալ* բայի տարբերակային ձևերի գործառության հարցում դեր է խաղում *տ°լ* (ամուսնու քույր), նաև *տ°ս* (տասը), *տ°ն* (*տուն* բառի սեռ. հոլով) բառերից տարբերակվելու մղումը:

[345] Եթե նման կազմությունների բաղադրիչները առանձին հստակ չեն գիտակցվում, ապադրսևորվում է *ա*ձայնավորը. *բ՛ացակա, ջ՛ըրտար, վըսկապ* ևն:

մեծանում է նաև իբրև քերականական մասնիկ հանդես գալով, ինչպես՝ *տէս, փագա՛, Սէվանա*[346]:

*Ա*ձայնավորի մյուս՝ քմային տարատեսակը՝ °-ն, Բայազետի բարբառում դիրքային սահմանափակում չունի. հանդիպում է բառի բոլոր դիրքերում, ընդ որում՝ հիմնականում նոր փոխառյալ բառերում[347] (խոսքը ոչ միայն այլ լեզուներից, այլ նաև արտասանական բազայում ° հնչյուն ունեցող հարևան բարբառներից կատարված փոխառությունների մասին է), որը նշանակում է, որ այդ հնչյունը պայմանավորված չէ բարբառիս արտաբերական առանձնահատկությամբ, և դրա դրսևորումը բարբառիս հնչյունական օրինաչափություններից չի բխում: Որոշ դեպքերում, թերևս հարևան բարբառների ազդեցությամբ, ° հնչյուն է ի հայտ եկել նաև հին բառաշերտի բնիկ և փոխառյալ բառերում (ինչպես՝ զ°տիկ, լ°ց, խ°յլի, կիր°կի, հ՛°շկ, միյն°կ, շիտ°կ, փէս° ևն): Եթե *ա* և ° հնչյունները հիմնականում համապատասխանում են հինհայերենյան *ա*-ին, ապա °-ն միայն սակավ դեպքերում ունի նման համապատասխանություն: Փաստորեն, բարբառային խոսքում ի հայտ եկել նոր հնչյուն, որը *ա* հնչույթի՝ բարբառի արտասանական բազայի որևէ առանձնահատկությամբ պայմանավորված տարբերակ չէ: Թերևս այդ է պատճառը, որ °-*ն* խոսվածքից խոսվածք հանդես է բերում գործառական տարբերություններ. այսպես, խոսվածքների մեծ մասի *իմալ* ձևի դիմաց Գանձակն ունի *իմ°լ*, Գավառի, Հացառատի *դ՛անակ, թութակ սըբա* (սպի) ձևերի դիմաց Սարուխանը, Գանձակը և Լանջաղբյուրն ունեն *դ°ն°կ, թութ°կ, սըբ°*, Սարուխանի Զանգիզոր թաղամասի *հ՛առու, հ՛առէչ, գ՛ընա* ձևերի դիմաց նույն գյուղի Սրբահան թաղամասն ունի *հ՛°ռու, հ°ռէչ, գ՛ըն°* ձևերը ևն: Իհարկե, Բայազետի բարբառում °-ի բաշխումը հիմնականում պայմանավորված է փոխառյալ բառերի հնչյունական կազմությամբ, բայց այդ հնչյունի դրսևորումները հետաքրքրություն են ներկայացնում նաև ըստ բառապաշարի պատմական շերտերի և հնչյունական համակարգի զարգացման, ինչպես նաև առանձին դեպքերում արտասանական բազայի հնարավոր դիմադրության առումով: Ըստ այդմ՝ բացարձակ բառասգբում ° հանդի-

[346] Տե՛ս նաև Վ.Կատվալյան, Բայազետի բարբառի ձայնավորների ընդհանուր բնութագիրը, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2013, էջ 179-189:

պում է մի շարք բառերում՝ ձայնեղ և ձայնորդ բաղաձայններից առաջ, օրինակ՝ *°դ°թ, °զիզ, °ժբ°տես, °ջ°լ, °լք, °ր°բի, °մ°կ, °յիբ, °նգ°լ, °վ°լ* ևն: Այս դիրքում, ըստ մեր ունեցած տվյալների, ° ձայնավորը խուլ հնչյունի նախորդում է միայն *°խկ, °փ°շկ°ր°, °սը°լ* բառերում: Բառասկզբի բաղաձայնահաջորդ դիրքի ° - ին ավելի հաճախ նախորդում են ձայնեղներ և ձայնորդներ (գ°դ°, դ°ր°կ, ձ°ձ°, վ°խկ, ժ°նգ, լ°ց, հ՛°շկ, ն°զ°ր, յ°ք°), նաև շնչեղ խուլեր (թ°ռս, փ°ռ, ք°ր), խուլ շփականներ (շ°վ°, ս°բ°բ, խ°ն°ք, ֆ°նդ): Բառասկզբի շնչեղ ձայնեղներից հետո ° ձայնավոր հանդիպում է միայն *դ՛°ն°կ, դ՛°ռը, դ՛°ր°մ°ն, ձ՛°ք* բառերում[348], քիչ է հանդիպում այդ դիրքի խուլ հպականներից, հպաշփականներից հետո՝ *ճ°պ, ճ°ճ°ս, կ°ժ, կ°ռ* ևն[349]: Հաճախ *կ*–ին ° հաջորդում է փոխառյալ այն բառերում, որոնցում այդ *կ*-ն ծագում է օտար *կ՛*-ից, օրինակ՝ *կ°ստու, կ°ր°ի բ, կ°լ ի բ, կ°մ ի շ, կ°լ բ* ևն: Այլ դեպքերում այդ դիրքում առկա է °, ինչպես՝ *կ°զան, կ°զ, կ°մազ, կ°չաղ* ևն[350]: Բավականին հաճախ է ° հնչյուն հանդես գալիս բառի մյուս վանկերում, օրինակ՝ *°գռ°ժ°ժ°, սիֆտ°կ, օրին°կ, հ՛°փս°թ°թիկ, հ՛ուն°ր, մը°խտ°ռ, տէք°ր°կը°նիկ, փին°չի, թուլ°, կը°ս°* ևն: Նկատելի է, որ բառավերջի *կ*-ին հաճախ է ° նախորդում, մեկից ավելի *ա* ունեցող բազմավանկ բառի առաջին ° - ին սովորաբար հաջորդում են նույնպես քմային *ա*-եր[351]: Բայց բառի աճման դեպքում այս կանոնը կարող է և չգործել, օրինակ՝ *կ°ր°ի բական, °զը°զամեռ, դ°նական, զ°յլ°տ°ր°ի կ, հ՛°շկացավ* ևն: Բարբառումս լինելով ազդեցությունների արդյունք՝ ° ձայնավորը ունի հնչության

---

[347] Այս հատկանիշով Բայազետի բարբառը հարում է հայերենի կենտրոնական բարբառներին:

[348] Բայազետի բարբառում շնչեղ ձայնեղներ դրսևորվում են միայն հինհայերենյան բառաշերտում, մինչդեռ ° հնչյունը բարբառ է թափանցել հիմնականում նոր փոխառություններում, ուստի այս ձևերը ակնհայտորեն արդյունք են իրենց արտասանական բազայում այդ հնչյունն ունեցող հարևան բարբառների, հատկապես՝ Դիադինի բարբառի ազդեցության, որտեղ ° ձայնավորին բառասկզբում շնչեղ ձայնեղ հպականներ ու հպաշփականներ նախորդում են:

[349] Դիադինի բարբառում ևս, որտեղ բառասկզբի խուլ հպականներից ու հպաշփականներից հետո հանդես է գալիս *ա* ձայնավորը, այս բառերն իրենց կազմում ունեն քմային °, և քանի որ քմային արտասանությունը հատուկ է Դիադինի բարբառին, ուրեմն Բայազետի բարբառը այս դեպքում ևս պետք է կրած լինի Դիադինի կամ հարևան մեկ այլ բարբառի ազդեցությունը:

[350] Նման մի շարք դեպքերում ° չի դրսևորվում նաև Խոյի և Դիադինի բարբառներում (ղ՛ավուրմա, ղ՛աչաղ, ղ՛ամմազ, ղ՛ալին, ղ՛ազ), ինչը կարող է նշանակել նաև փոխատու լեզվում կամ բարբառում այդ բառերում °-ի բացակայություն:

[351] Ձայնավորների ներդաշնակության օրենքի նման գործառության հետևանքով առաջանում են երկրորդական ձևույթների հնչյունական զուգաձևություններ,

արժեք[352], քանի որ *ա*-ի հետ կարող է կազմել հակադրական զույգեր և ունենալ իմաստատարբերակիչ դեր (*թ°թ* /ձեռքի թաթ/ – *թաթ* /անհասկացող/, *լ°ռել* /հետապնդել/ - *լարել* /գործի դնել/ ևն)[353]: Այսպիսով, *ա*ձայնավորի բարբառային երեք տարատեսակները՝ *ա*, °և °, Բայազետի բարբառում ներկայացնում են երկու հնչույթ՝ *ա*և °:

Ինչպես փաստում են ուսումնասիրողները, °-ն իբրև հնչույթ դրսևորվում է Խոյ-Մարաղայի և Վանի բարբառներում[354]: Հնչույթի արժեք °-ն ունի նաև Դիադինի բարբառում (օր.՝ թաթ /գուլպա/ – թ°թ /ձեռքի կամ ոտքի թաթ/, թալ /կակուղ միս/ - թ°լ /գցիր/, թառ /հավի թառ/ - թ°ռ /մաքուր, սպիտակ/, լալ /համր/ - լ°լ /լաց լինել/)[355] ևն: Մշո բարբառի Արծկեի և Արճեշի խոսվածքներում, ինչպես ընդհանրապես ողջ բարբառում, °-ն *ա*-ի դիրքային տարբերակ է և հնչույթային արժեք չունի[356]:

Բայազետի բարբառի երկբարբառային *ո* հնչյունը արտասանությամբ նույնանում է °-ի հետ: Փաստորեն, առկա է գերհնչույթ, որը մի դեպքում *ա*-ի տարբերակն է, մեկ այլ դեպքում ներկայացնում է երկբարբառային *ո*: Նշանակում է՝ *ո*-ի գործառական և իմաստատարբերակիչ հատկանիշները պետք է դիտարկել ինչպես *օ*-ի, այնպես էլ °-ի հետ փոխհարաբերության մեջ: Գործառական առումով այս երեք միավորները (°, ո, օ) տարբերություններ են հանդես բերում՝ ա) ըստ բառասաստի պատմական շերտերի, բ) ըստ դիրքերի: Եթե °-ն և *օ*-ն հավասարապես դրսևորվում են և՛ հին[357], և՛ նոր շերտերում (°տամ, կ°ռտալ, ծ°նօթ, թօփալ), ապա ո-ն որպես կանոն հանդիպում է հին բառաշերտում (խընձոր, բ՛օլոր, գ՛ոդ): Դիրքային առումով երեք

ինչպես՝ *ամ/որ* - °*վոր* (մրռմրռավոր - բ°խտ°վոր), *նակ* - *ն°կ* (կըզկընակ - ջ°յէլն°կ), *ա*հոդակապ - ° (գ՛ըլխակեր - հ°փս°թ°թիկ) ևն:

[352] Ռ.Բաղրամյանը կարծում է, թե Բայազետի բարբառում ° հնչյունը զուրկ է հնչույթային արժեքից (տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 14):

[353] Այլ դեպքերում, երբ ուղղակի հնարավոր չէ կազմել հակադրական զույգեր՝ համապատասխան բառեր չունենալու պատճառով, °-ի փոխարինումը *ա*-ով առաջացնում է ոչ թե իմաստի փոփոխություն կամ շփոթ, այլ բարբառի արտասանական նորմայից շեղում և գրական արտասանության տպավորություն (օր. դ՛°ռը - դ՛առը, թ°ն°ք – թանաք, ժ°նգ – ժանգ), մինչդեռ հակառակ գործողությունը՝ *ա*-ի փոխարինումը °-ով, բառը վերածում է անիմաստ հնչյունախմբի:

[354] ՀԼՊՔ, էջ 47-49, Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 27:

[355] Օրինակները քաղել ենք Վ.Խաչատրյանի «Վարդենիսի բարբառը» աշխատության «Դիադինի (Վարդենիսի) բարբառի բառարան» հատվածից (էջ 154-231): Ի դեպ, այս նույն հակադրական զույգերը կան նաև Բայազետի բարբառում:

[356] Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 29:

միավորներն էլ ունեն յուրահատկություններ: Ինչպես տեսանք, °-ն հանդիպում է միայն բացարձակ բառասկզբում և բառասկզբի որոշակի հնչյուններից հետո: *Օ* ձայնավորը հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում՝ *օր, օղղել, ցորեն, կոլ օտ, քо* ևն: Մինչդեռ *ո*-ն հանդես է գալիս շեշտակիր վանկում (բայց ոչ բացարձակ բառավերջում)՝ *խընձոր, բ՛ոլոր, բ՛ոց, գ՛ող* ևն[358]: Թե՛ հին և թե՛ նոր բառաշերտերում °-ն և *օ*-ն կազմում են հակադրական զույգեր °-ի գործառության դիրքերում (°ղ – օղ, ա°լ /ժայռ/ - աօլ /հատակ/, տ°ղ – տօղ, տ°տիկ – տօտիկ, կ°վ – կօվ ևն) և ներկայացնում են տարբեր հնչույթներ:

Ո-ն և °-ն, լինելով նույնահունչ միավորներ, հին բառաշերտի բազմավանկ բառերում գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, այն է՝ *ո*-ն գործառում է միայն բառի վերջին՝ շեշտակիր վանկում, °-ն՝ միայն առաջին վանկում, իսկ մնացած վանկերում գերհնչույթը բացառվում է (նկատի չունենք բաղադրմամբ ու թեքմամբ առաջացած ձևերը, ինչպես՝ °նպ°տիվ, խընձորների, լավամ°ռթ, փորացավ ևն): Նման բաշխումը ապահովում է իմաստային տարբերակումը, և վերջնավանկում արտասանվող գերհնչույթը բնականաբար ընկալվում է իբրև *ո* (խընձոր), իսկ սկզբնավանկում արտասանվողը՝ ° (կ°տու): Միավանկ բառերի սկզբում գերհնչույթը միշտ ներկայացնում է ° (°սկ /ազգ/, °չ /աջ/, °ռ), որովհետև *ո*-ի դիմաց այստեղ, ինչպես և *վոսկի, վոռթի* բառերում, ունենք *վո* (վոռթ /որդ/, վոխ /ոխ/, վոռց /որձ/, վոտ /ոտ/, վոնչ /ոչ/, վոր /որ/, վոռփ /որբ/)[359]: Հնչյունական այս իրողությունը պահպանվում է նաև բաղադրություններում (վոռթընուկ, էքուվոռց, վոռցակ, վոտբ՛օպիկ, իշավոդնուկ, դորվորայա /ուր որ է/, վոռփէվէրի, վոսկէջ՛ըրուկ)[360]: Բաղաձայնով սկսվող միավանկ բառերում °, ինչպես վերևում տեսանք, կարող է հաջորդել միայն խուլերին (բացի խ-ն) և *մ,ն* ձայնորդներին, մինչդեռ *ո* կարող է հաջորդել

---

[357] Այստեղ նկատի ունենք նաև գավառական բառերը, որոնք հնչյունական կազմությամբ ենթակա են նույն օրինաչափություններին, ինչ որ հինհայերենյան բառաշերտի բառերը:

[358] Բառափոխության կամ բառաբարդման ժամանակ այդ *ո*-ն հաճախ պահպանվում է՝ այդկերպհայտնվելով անշեշտդիրքում, ինչպես՝ գ՛ոռտ – գ՛ոռտալող, խընձոր – խընձորներ:

[359] Նկատենք, որ *վ*-ից հետո *ա*-ի °տարբերակը բացառված է:

[360] Բացառություն է *ինչ օր* (ինչ որ) բառը (բարբառում ունի «կարծես» իմաստը):

բոլոր կարգի բաղաձայնների (բ՛ոխկ, գ՛ող, դ՛ող, ձ՛որ, ջ՛ոչ, պոռտ, կոթ, ճոթ, փոս, քոս, թոռ, չոր, մոմ, նոր, խոր /հոր/, լոր, շոք, սոխևն): Այսպիսով, եթե միավանկ բառերի՝ շնչեղ ձայնեղներին և շնչեղ խուլերին հաջորդող դիրքերում °/n-ն միշտներկայացնում է *n*, ապա խուլերին և *մ,ն* ձայնորդներին հաջորդող դիրքում չի գործում լրացուցիչ բաշխման հարաբերությունը, և ստեղծվում է համանունության հնարավորություն, երբ հնչյունական միևնույն շրջապատում հանդես եկող գերհնչությը կարող է ընկալվել և՛ իբրև °, և՛ իբրև *n*: Այդ հնարավորությունը բարբառումս իրականանում է սակավ դեպքերում, ինչպես՝ *շ°ր* (շարելը՝ շ°ր °նել) - *շոր* (հագուստ՝ շոր խաքնել), *կ°թ* (կօվի կ°թ) – *կոթ* (բ՛ախի կոթ), *մ°մ* (մայրիկ) - *մոմ*: Ընդ որում՝ *շոր, կոթ, մամ* բառերը վկայված են միջինհայերենյան շրջանից[361], այսինքն՝ տվյալ դեպքերում համանունությունը ոչ թե նախնական, այլ ժամանակի ընթացքում առաջացած իրողություն է[362]: Նոր բառաշերտի միավանկ բառերում (որոնք փոխառություններ են կա՛մ այլ լեզուներից ու բարբառներից, կա՛մ գրական հայերենից) *օ-ո* զույգից հանդես է գալիս միայն *օ*-ն (պօլ /հատակ/, կօչ /արու ոչխար/, տօռթ, ճօխ, ծօռ, սօկ /հյութ/, շօշ /ճանապարհ/, քօք /արմատ/, բօգ /կոկորդ/, փօշտ /փոստատուն/, թօզ /փոշի/ ևն), ուստի միավանկ բառերում °/*n* գերհնչության գործառությամբ պայմանավորված համանուն նոր զույգերի ի հայտ գալը բացառվում է: Ինչ վերաբերում է նոր բառաշերտի բազմավանկ բառերին, ապա դրանցում °-*n* հարաբերությունը չի խախտվել, որովհետև այդ միավորների գործառության ոլորտների ընդլայնում տեղի չի ունեցել; Ընդհակառակը՝ եթե ° - ն շարունակում է իր դիրքերում կանոնավորապես հանդես գալ (°թվյօռկա, տ°նգէս, պ°ռաշուտ), ապա *n*-ի դիրքում շատ դեպքերում հանդես է գալիս *օ*, ինչպես՝ *ֆուդբոլ, կ°ռտոլ, զաբօռ, տ°պօռ, °գրանիսմ, բ°ռոժ, բոբոլոգ, խորոտ, մրռթոշ, ճըլոթ, ճեռոք, պ°մաղոր, ք°ֆտոռ* ևն:

Ո-օ զույգը Բայազետի բարբառում դրսևորվում է համաձայն հետևյալ ընդհանուր օրինաչափությունների.

[361] Տե՛ս Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009:
[362] Նման բառազույգերը ենթատեքստում իմաստաբանորեն հեշտությամբ տարբերակվում են:

ա) Հին բառաշերտում շեշտակիր վանկում որպես կանոն ունենք *ո* (բ՛ոց, գ՛ոռտ, դ՛ող, ձ՛որ, ծոց, թոռ, սոխ, խոտ, խըմոր, շընոխկ, խընձոր), իսկ անշեշտ դիրքում որպես կանոն ունենք *օ* (գ՛օմէշ, զօնքաճ, ցօրեն, կօռծել, հօռընալ, մօլըրել, փօխինդ). այդպես է նաև բազմավանկ բառերի սկզբում, ինչպես՝ *օղօրմի, օլըրել, օրօտում, օռնալ, օռծըկըտալ, օղըղել, օխճար, օչիլ* ևն: Շեշտի տեղափոխությունը երբեմն առաջ է բերում *ո* > *օ* հնչյունափոխություն (դ՛ող – դ՛օղալ, բ՛ոզ – բ՛օզութուն, ջ՛ոչ – ջ՛օչըցուկ, քոր – քօրել, °լըրոտ - °լըրօտուկ, կըլոր - կըլօրել) Այսպիսով, *ո*-ն և *օ*-ն գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ՝ իբրև նույն հնչույթի տարբերակներ:

գ) Միավանկ բառերի սկզբում *ո*-ն բացառվում է, որովհետև այդ դիրքում պատմականորեն տեղի է ունեցել *ո* > *վո* անցում (վոռթ, վոռց, վոխ, վոտ ևն). այդ նույն իրողությունը տեղի է ունեցել երկվանկ *վոսկի, վոռթի* բառերում:

դ) Որպես կանոն՝ *օ* է դրսևորվում հինհայերենյան *աւ* երկբարբառի դիմաց, ինչպես՝ *օր, օց, օքուդ, օքնել, օժիտ, °մօթ, °նօթի, °րօտ, կ°րօտ, ծ°նօթ, °ղօտկ, գ՛օտիկ, խօսկ, մօտիկ, հօժար* ևն (բացառություն են *հ՛առավոտ, աշ՛շտոն* բառերը, որոնցում նախնական *աւ*-ի դիմաց առկա է *ո*[363]), որը մի շարք դեպքերում (°րօտ, կ°րօտ, ծ°նօթ ևն) խախտում է *ո*-ի և *օ*-ի՝ վերը ներկայացված լրացուցիչ բաշխման հարաբերությունը:

ե) Հին բառաշերտում բացարձակ բառավերջում բացառված են և՛ *օ*-ն, և՛ *ո*-ն:

Նոր բառաշերտում *ո*-ի գործառույթը ավելի սահմանափակ է. այն նոր միավանկ բառերում չի հանդիպում, բացառված է բացարձակ բառավերջում: Թե՛ հին, թե՛ նոր բառաշերտերում *վ*-ից առաջ և ենթակայական դերբայի վերջավորության մեջ միշտ ունենք *օ*, ինչպես՝ *ծօվ, ժօղօվ, տընօվ, գ՛ացօղ* ևն: Վերջածանցներում, սակայն, երկու շերտերում էլ հանդես է գալիս *ո*-ն (°լըրոտ, տըլոխ, Չիչոնք, կըվանոց, °ռեվմըտոց, հ՛ընգնավոր, դ՛առցըվոր, բօռոց, շընռճոնք, օղոռթ, ծ°մոն, կըցոն, ծէփոն, ճըղոն): Նոր բառաշերտում *ո*-ն կանոնավորապես գործառում է ոչ միավանկ բառերի վերջի *ն*-ից

[363] Գուցե այդ բառերում *ոտ, ոն* խմբերը ընկալվում են իբրև ածանց:

առաջ. *բալ ոն, բալ կոն, բօքոն, լիմոն, կօլ ոն, զակոն, ֆ°յտոն, վագոն* ևն: Նոր փոխառություններում հնարավոր է դարձել բառավերջում *օ*-ի արտահայտությունը, ինչպես՝ *կինօ, մէտրօ, ա°ռտնօ, կ°լ ինգօ* ևն: Եթե հին բառաշերտում *օ* և *ո* հնչյունները որոշակիորեն գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ և դրսևորվում իբրև նույն հնչույթի տարբերակներ, ապա նոր բառաշերտում շեշտակիր վանկում *օ*-ի գործառության ընդլայնման հետևանքով այդ բաշխումը այլ կերպ է արտահայտվում, և այդպիսով ընդհանուր բառապաշարում ձևավորվում է նոր բաշխում. *ո*-ն դրսևորվում է միայն շեշտակիր վանկում, *օ*-ն՝ առավելաբար անշեշտ վանկում, բայց նաև՝ շեշտակիր վանկում: Եվ քանի որ շեշտակիր վանկում կարող են հանդիպել երկու հնչյուններն էլ, *օ-ո* հակադրությունը առանձին դեպքերում ձեռք է բերում իմաստատարբերակիչ դեր (դօր /հերթ/ - դոր /ուր/, թօռ /ցանց/ - թոռ /թոռ/, խօր /հայր բառի սեռականը/- խոր /հոր/), ուստի *օ* և *ո* հնչյունները բարբառումս ներկայանում են նաև իբրև առանձին հնչույթներ: Ի դեպ, մի շարք դեպքերում էլ *օ-ո* հակադրությունն ուղեկցվում է նախորդող բաղաձայնների ձայնեղություն - շնչեղ ձայնեղություն հակադրությամբ. *դ՛ող* (դողալը) - *դօղ* (անվադող), *բ՛ոգ* (անբարոյական) - *բօգ* (գույնէ), *գ՛ոլ* (ոչ շատտաք) - *գօլ* (լիճ): Նկատելի է նաև, որ *ո* հնչյունի փոխարեն *օ* արտասանությունը իմաստային շփոթ չի առաջացնում, այլ թողնում է գրական արտասանության տպավորություն, մինչդեռ *օ*-ի փոխարեն *ո* արտասանությունը աղճատում է իմաստը:

Այսպիսով, °, *ո* և *օ* հնչյունները Բայազետի բարբառում գտնվում են հետևյալ փոխհարաբերությունների մեջ՝ ա) °-ն և *օ*-ն ներկայացնում են տարբեր հնչույթներ. դրանց հակադրական հարաբերությունը սահմանափակ է °-ի դիրքային սահմանափակ գործածության պատճառով, բ) °-ն և *ո*-ն, ներկայացնելով տարբեր հնչույթներ, արտասանությամբ նույնական են, բայց իմաստային շփոթ չեն առաջացնում՝ փաստորեն գտնվելով լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, գ) *ո*-ն և *օ*-ն, ըստ բառաշերտերի, տարբեր հարաբերությունների մեջ են. հին բառաշերտում գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ և հնչույթի տարբերակներ են, նոր բառաշերտում դրսևորվում են իբրև տարբեր

հնչույթներ շեշտակիր վանկում, սակայն ընդհանուր առմամբ լրացուցիչ բաշխման հարաբերությունը պահպանվում է՝ պայմանավորված *ո*-ի՝ միայն շեշտակիր վանկում դրսևորվելու հանգամանքով:

Օ և *ո* հնչյունների գործառության ու բաշխման առումով գրեթե նույն օրինաչափություններն է հանդես բերում Դիադինի բարբառը[364]: Այստեղ ևս գործառում են *խոր – խօր, թոռ – թօռ* հակադրական զույգեր: Համեմատվող մյուս բարբառներից Բայազետի բարբառին մերձակցություն հանդես բերում է Մշո բարբառը[365]: Սակայն այս բարբառը, ի տարբերություն Բայազետի բարբառի, բառասկզբում ավելի հաճախ *ո*-ի դիմաց ունի *օ*, ինչպես՝ *օսկի* (ոսկի), *օրթի* (որդի), նույնիսկ որոշ միավանկ բառերում՝ *օխպ* (ողբ), *օր* (որ), *օրթ* (որդն)[366]: Ըստ Ք.Մադաթյանի՝ Ալաշկերտի խոսվածքում *օ*-ն և *ո*-ն դրսևորվում են նաև իբրև առանձին հնչույթներ, ինչպես՝ *հոր – հօր* (*հայր* բառի սեռականը), *խոռ* (պակաս) – *խօռ* (գաճաճ կենդանի)[367]: Արարատյան բարբառի՝ *օ-ո* զույգն ունեցող խոսվածքներում, ըստ ուսումնասիրողների, առկա են հնչյունների գործառական մոտավորապես նույն կարգի հարաբերություններ[368]: Որոշ չափով առանձնանում են Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները, որոնցում դեպքերի մի մասում բառամիջի անշեշտդիրքում հանդես է գալիս *ո*, այլ դեպքերում՝ *օ*, երկվանկ բառերի սկզբում՝ *վո*, եռավանկ բառերի սկզբում՝ *օ* ևն[369]: Երկու բարբառում էլ առկա *խոր – խօր* հակադրական զույգը վկայում է *ո*-ի և *օ*-ի՝ նաև հնչույթային կիրառության մասին:

Ե և *է* հնչյունները Բայազետի բարբառի հին և նոր բառաշերտերում դրսևորման տարբերություններ չունեն և ընդհանուր բառապաշարում հանդես են բերում բաշխման հետևյալ օրինաչափությունները. բառասկզբում միշտ և բառավերջում որպես կանոն ունենք *է* (էք, էթալ, էրնէկ, էշ, էրազ, էփել, թէ, գ'օնէ, փէդէ, հիրկըվորէ). բառասկզբում *ե*-ն բացառվում է *ե > յե* պատմական

[364] Տե՛ս ԴԲ, էջ 29-30, 32:
[365] Տե՛ս ՄԲ, էջ 30-33, Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 12:
[366] Տե՛ս ՄԲ, էջ 267:
[367] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 8:
[368] Տե՛ս ԱԲ, էջ 61-62, Ս.Բաղդասարյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 31-32:
[369] Տե՛ս ՔՎԲ, էջ 38-41, ԽԲ, էջ 28-29:

հնչյունափոխության հետևանքով[370], իսկ բառավերջում հանդես է գալիս միայն կրճատ ձևերում, ինչպես՝ եզակի հրամայականում (կե /կեր/, տե /տես/, բ՛ե /բ՛եր/), օժանդակ բային հաջորդող վաղակատարում (յես եմ գ՛ըրե, չեմ գ՛ըրե, չի գ՛ըրե), որոշ դերանուններում (ըստե, ըտե, ընդե, քե, մե, ձ՛ե /քեզի, մեզի, ձ՛եզի/): Երկու հնչյուններն էլ հանդիպում են և՛ անշեշտ, և՛ շեշտակիր վանկերում: Անշեշտ դիրքում առավելաբար հանդես է գալիս *է*-ն, ինչպես՝ *բ՛էրան, գ՛էրէման, կէնթանի, ծէփոն, ճէվալ, տէքըր* ևն: Այս դիրքում *ղ, խ, ռ* բաղաձայններից առաջ և բառասկզբի *յ*-ից հետո հանդես է գալիս *ե*-ն, ինչպես՝ *սեղան, Բ՛արեղամյան, հ՛ափեղա, տեխնիկա, նեխել, լեռթըռել, ճեռօք, յեղըռճիկ, յեթում* ևն: Անշեշտ վանկում *ե* ունենք նաև *քեզի, մեզի, ձ՛եզի* դերանուններում[371]: Այսպիսով, *ե*-ն և *է*-ն անշեշտ վանկում գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ՝ *է*-ի գերակայությամբ և որոշակի դեպքերում *ե*-ի պարտադիր դրսևորումներով[372]: Շեշտակիր վանկում (բայց ոչ միավանկ բառերի սկզբում) ևս *ե*-ն և *է*-ն որպես կանոն ունեն լրացուցիչ բաշխման հարաբերություն, որն արտահայտվում է հետևյալ կերպ. ա) բառավերջի *ղ,խ,ռ,վ,փ,ծ,գ* բաղաձայններից առաջ միշտ ունենք *ե. բեղ, գ՛եղ, լայեղ, ժեխ, ճըլ ճեխ, դեխ, բեռ, նեռս, թեվ, ձ՛եվ, սեվ, կըլ եփ, ցեփ, պեծ, ծեծ, վեց, հ՛իրկընեց* ևն, բ) բառավերջի *շ, ժ, ջ, ճ, չ, յ, զ* բաղաձայններից առաջ միշտ ունենք *է. գ՛էշ, փէշ, գ՛օմէշ, գէժ, վըրէժ, քէջ, փէջ, բ՛ըփռէճ, պըլ էճ, մէչ, հ՛առէչ, բէյ, զէյ, ջըրէզ, °ղվէզ, դ՛էզ* ևն, գ) բառավերջի այլ բաղաձայններից առաջ կարող են դրսևորվել և՛ *է*-ն, և՛ *ե*-ն, ինչպես՝ *գ՛իշեր, խէր, նըվէր, շեմ, դ՛էմ, մըթէլ, թել, °ռթէն, ցօրեն, տըրէթ, ցեթ, իրեք, բ՛առցէք, հ՛էրէկ, վառեկ, բ՛էտ, խէտ/խետ, կետ, վարպետ, բու ֆէտ, կէս, հ՛ավէս, հ՛իրես, տես* ևն, դ) բառավերջի բաղաձայնական խմբից առաջ արմատական բառերում որպես կանոն հանդես է գալիս *ե*-ն, ինչպես՝

---

[370] Հաշվի չենք առնում օժանդակ բայի *եմ, ես, ենք, են* ձևերը, որոնք միշտ նախորդ բառի հետ սերտ արտասանություն ունեն (էթում եմ, հընչես էթում):

[371] Գուցե սրանցում պահպանվել է *քե, մե, ձ՛ե* արմատական ձևերի նախնական արտասանությունը, մանավանդ որ դրանցով բոլոր ձևերում ունենք *ե*, ինչպես՝ *քեզնից, մեր, մենք, մեզնից, ձ՛եր, ձ՛եզնօվ* ևն:

[372] Նկատենք, որ շեշտակիր վանկի ե-ն բառի աճման դեպքում կարող է դառնալ *է*, ինչպես՝ *ծեփ-ծէփոն, պետ-պէտական, ծեծ – ծէծել, բ՛եր – բ՛էրել, գ՛ըրեց – գ՛ըրէցի*, սակայն ավելի հաճախ պահպանվում է, ինչպես՝ *ցեփ – ցեփավոր, թեվ – թեվաթափ, գ՛ըշեր – գ՛ըշերախառը, բ՛արեվ – բ՛արեվմընա*, և այդ դեպքերում ե-ն հայտնվում է անշեշտ վանկում:

գ՛եստ, ըստեռճ, սերմ, ներկ, հ՛ամերգ, ծեռտ, խեխճ, կեխտ, պ°դեզդ, խենթ, խերկ, ճենջ, գ՛օվեստ ևն. բացառություն են այն բառերը, որոնցում նախավերջին բաղաձայնը *շ* կամ *յ* է, ինչպես՝ *թէշտ, ժէշտ, հ՛էշտ, ք°ռէշտ, բէյթ, բէյն, զէյն* ևն[373], ե) բառավերջի ոչ արմատական բաղաձայնական խմբից առաջ գործառում է *ե*, եթե այդ բառի արմատը առանձին գործածական չէ և չի գիտակցվում (օրինակ՝ °նեսկ, բ՛երք, շենք, օրենք, խելք, քելք), և գործառում է *է*, եթե արմատը գիտակցվում կամ առանձին գործածվում է (օրինակ՝ լենք /լեն/, հ՛երկենք /հ՛երկեն/, պետկ /պիտանի/), զ) բառավերջի գաղտնավանկին նախորդող վանկում հանդիպում է և՛ *ե* (թեթըվ, մետըր, ցենտըր), և՛ *է* (տեքըր, ջեմբըռ), է) շեշտակիր վանկում *յ*-ից հետո հանդես է գալիս *ե*, ինչպես՝ *յեզ, յել, յես, յետ, պոյեզ, կ°յեն, Նոյեմ*: Հետաքրքրական է, որ *ե* չի հանդիպում բառասկզբի *հ՛*-ից հետո: Հայերենի այլ տարբերակների բառասկզբի *հե* կապակցության դիմաց, երբ սպասելի է *ե* հնչյունը, Բայազետի բարբառում ունենք *յե*, ինչպես՝ *հեռու – յեռու, հերթ – յերթ, հետ*/ետ/ *– յետ, հերս – յերս*: Նկատենք, որ Բայազետի բարբառում *է* և *ե* միավորների գործառական բաշխումը զգալի ընդհանրություններ է հանդես բերում գրաբարում դրանց դրսևորումների յուրահատկությունների հետ[374]: *Ե* և *է* հնչյունները շեշտակիր վանկում լրացուցիչ բաշխման որոշակի հարաբերության մեջ են երկրորդական ձևույթներում: Այսպես, *ե*-ն գործառում է *եղեն* (խըրեղեն, վոսկեղեն), *եղ* (ուժեղ), *եստ* (պ°յեստ, գօվեստ), *նեց* (հ՛իրկընեց, ցերէգնեց), *ենց* (էսենց, էնենց), *ենք* (Վառթանենք, Թաթարենք), *նեկ* (թիթըռնեկ, խէրվընեկ) վերջածանցներում, *ել* (թըռնել, վազնել), *եմ, ես, ենք, են* (գ՛ըրեմ, գ՛ըրես, գ՛ըրենք, գ՛ըրեն), *եց* (բ՛երեց), *եր, ներ* (տըներ, բօստըններ) վերջավորություններում, իսկ *է*-ն գործառում է *էրէն* (հայերէն), *էք* (նըշանդ՛ըրէք, օխտէք), *էն* (լենքէն, հ՛երկընքէն), *պէս* (վեռչապէս) վերջածանցներում, *էն* (տընէն), *էք* (բ՛երէք, ըսկըսէք) վերջավորություններում: Վաղակատար դերբայը իր *եր* վերջավորությունը (եթե նկատի ունենանք, որ այն ծագել է *եալ*-ից

[373] Սրանց նման նաև *շէյխ, ռէյս* նախնական ձևերից առաջացած *շէխ, ռէս* բառերը, նաև՝ *լենթ, լեստ* բառերը, որոնցում թերևս պահպանվել է փոխատու լեզվի արտասանությունը:

[374] Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Վ.Կատվալյան, Մեսրոպյան Է,Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը, Ե., 2006:

ել >եր անցումով) պահպանում է միայն վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքում (գ՛ըրեր ա), իսկ այդ դերբայով այլ կազմություն-ներում ունենք *էր* (գ՛ըրէր եմ, ես ևն)[375]: Այսպիսով, դիտարկվող հնչյունները շեշտակիր վանկում առավելաբար գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, սակայն մի շարք դեպքերում նույն դիրքում գործառելու հնարավորությունը երկու հնչյունների միջև ստեղծում է հնչույթային հակադրություն՝ *մեր – մէր* (մայր), °*ներ* - °*նէր* (անել բայից), *կիսել – կիսէլ* (ըմպելիք) ևն:

Համեմատվող բարբառներից այս կարգի իրողություններ դրսևորվում են Վանի, Դիադինի, Մշո բարբառներում: Վանի բար-բառում *է-ե* հարաբերության մասին Հ.Աճառյանը գրում է. «Մեր բարբառներում ընդհանրապես *ե*-ն և *է*-ն իրար են խառնված, երկուսն էլ դարձել են *է*. գեղեցիկ բացառություն է կազմում Վանի բարբառը, որ զանազանում է այդ երկուսը իրարից: Վերջավանկում այդ զանազանությունը լավ է պահված, ... իսկ բառամիջում բացարձակ չէ, ... և տատանվում է երկուսի միջև: Այստեղ էլ սակայն կարելի է նկատել, որ *ղ* բաղաձայնից առաջ ընդհանրապես *ե*-ն մնում է *ե*, իսկ *ր*-ից առաջ՝ դառնում է *է*: Այս երևույթը զարմանալի կերպով նույնանում է բառասկզբի *ե>ե* կամ *է* ձայնափոխության պայմանների հետ»[376]: Վանի բարբառում *է* և *ե* հնչյունների գործառության վերաբերյալ Հ.Աճառյանի բերած օրինաչափությունները և օրինակները հիմնականում երևան են բերում Բայազետի բարբառի նույն իրողությունների հետ ընդհանրություններ[377]: Վանի բարբառում նույնպես այս միավորները կազմում են հակադրական զույգեր (մեր – մէր, սեր – սէր, կեր - կէր[378]) և առանձին հնչույթներ են: Բայազետի և Վանի բարբառների հետ ընդհանրություններ է հանդես բերում նաև Դիադինի բարբառը, ինչպես՝ *բ՛եռ, բ՛եռթ, գ՛եղ,*

---

[375] Հնարավոր է, որ *եր>էր* անցումը հետևանք է այն բանի, որ դերբայի և օժանդակ բայի սերտ արտասանությամբ դերբայական վերջավորությունը չի ընկալվում իբրև բառավերջ, մինչդեռ վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքում *եր*-ի պահպանումը թերևս հետևանք է այն բանի, որ այդ ձևում օժանդակ բայը սովորաբար բացակայում է (էնի գ՛ըրե), և շեշտակիր վանկի նախնական *ե*-ն պահպանում է իր արտասանությունը, թեկուզ և *ր*-ն ընկնում է: Ի դեպ, այդպես է բոլոր այն դեպքերում, երբ վաղակատար դերբային օժանդակ բայ չի հաջորդում, ինչպես՝ *յես եմ գ՛ըրե, դ՛ու չես գ՛ըրե, էնի էր գ՛ըրե* ևն:

[376] ՔՎԲ, էջ 33:

[377] Տե՛ս նշվ. աշխ., էջ 30-35:

յեղընճիկ, հէրես, իրեք, թել, թեփ, լեղի, խել ք, ծեռտ, յեռանալ, դ՛էգ, կէս, պէտկ, գ՛օմէշ են[379]: Այստեղ ևս *է*-ն և *ե*-ն հանդես են գալիս հնչույթային հակադրության մեջ, ինչպես՝ *ծեր – ծէր, մեր – մէր* են: Մշո բարբառում անշեշտվանկում հանդես է գալիս *է*, իսկ շեշտակիր վանկում՝ և՛ *է*, և՛ *ե*՝ ըստ գրաբարյան համապատասխան ձևերի[380]: Այստեղ ևս այդ երկուսը հանդես են գալիս իբրև տարբեր հնչույթներ՝ *մեր – մէր, կեր – կէր* (ուտել բայի հրամայականը):

Ի և *ու* ձայնավորները Բայազետի բարբառում ևս չունեն դիրքային որևէ սահմանափակում. *ինը, իմալ, գ՛իշեր, տ°րի, ութ, ուտել, դ՛ուռ, բուսում, հ՛առու, լիզու* են: Բարբառումս այս հնչույթները չունեն դիրքային կամ այլ տարբերակներ: Բայազետի բարբառում *ը* հնչյուն առավել հաճախ հանդիպում է բառամիջում, երբ բաղաձայնական կուտակումները չեն կարող արտասանվել առանց ձայնավորական հենարանի (կըրունգ, գըղգըղալ, ծ°նդըր, ծըմըրկըտալ, քըլուփըստ, սըթից): Այլ դեպքերում *ը*-ի առկայությունը պայմանավորված է ոչ թե արտաբերական, այլ բառի ձևավորման և իմաստարտահայտման պահանջով (բալ ըշ, չըփըցընել, ճըլըթալ, զաբընել, մըթըվեր, չարընալ, տ°խտըկել, տըրըփալ, երկուտըկել): Կան դեպքեր էլ, երբ բարբառային խոսքում բառամիջյան *ը*-ն կարող է և չարտասանվել, բայց նման արտասանությունը կունենա գրական երանգ (գ՛ըռտընակ– գ՛ըռտնակ, պ°ռզըկա–պ°ռզկա, կօպըտել– կօպտել, կըտըցել –կըտցել): Բառասկզբում *ը*-ն բաղաձայնական խմբից առաջ է հանդես գալիս (ըխտիբար, ընձի, ըստե, ըսկի, ըսկըբօ, ըշպիյօն)[381], բառավերջում իբրև բառամաս քիչ է հանդիպում (խառը, դուզը, լիքը, լը, հըլը, հինքը, բը, դը, դ՛°ռը), կարող է արտասանվել թվականների վերջում, ինչպես՝ *խինգը, վեցը, օխտը, ութը* են: Սակայն բառավերջում *ը*-ի գործառույթը ընդլայնվում է իբրև հոդ (նաև իբրև կրկնակի հոդ՝ Կ°ռօնը, Ս°քօնը) հանդես գալու շնորհիվ: *Ը*-ն կարող է լինել մի շարք միավանկ ու բազմավանկ բառերի միակ ձայնավորը (բըռ, դընգ, դըրբ, ծըպկ, մըզմըզ, մըդրըբ, նըֆս, շըխկ, շըրըխկ, ռըթըբ, տընգըվըզ, փըռչ, քըլք,

---

[378] Օրինակները քաղել ենք Հ.Աճառյանի նշված աշխատության տարբեր բաժիններից:
[379] Տե՛ս նաև ԴԲ, էջ 123-146:
[380] Տե՛ս ՄԲ, էջ 21-23:
[381] Բացառություն են *էտի* դերանվան թեք ձևերը, որոնցում *ը*-ն բառասկզբում հանդես է գալիս մեկ բաղաձայնից առաջ, ինչպես՝ *ըտու, ըտուց, ըտով, ըտունք* են:

քըռթ): Այսպիսով, եթե դեպքերի մի մասում ը-ն հանդես է գալիս արտաբերական պահանջով, ապա կան դեպքեր էլ, երբ այն բառիմաստի կամ քերականական իմաստի ձևավորման կամ արտահայտման գործառույթ ունի և լիարժեք հնչույթ է:

Ծրջակա բարբառներում *ը*-ն ունի գործառական որոշ յուրահատկություններ: Վանի բարբառի բառասկզբում *ը*-ն սակավ է դրսևորվում (ընցնել, ըդի /հդի/, ընքՀվեր /ունք/, ըխթավոր /ուխտավոր/, ըռհան /ռեհան/, ըսպանդ /սպանդ բույսը/[382]): Բառամիջի բաղաձայնական խմբերում *ը*-ն հանդես է գալիս ըստ անհրաժեշտության, սակայն Վանի բարբառը հաճախայս դիրքում ևս խուսափում է *ը*-ից, ինչպես՝ անձ-ռեվ, ամչ-նալ[383], նույնիսկ բառավերջի բաղաձայնական խմբում *ը*-ն կարող է չլինել, ինչպես՝ *միսս, երեսս*[384]: Իսկ ընդհանրապես Վանի բարբառը բառավերջում երբեք *ը* չի ունենում և *ը* հոդ չունի[385]: *Ը*-ն գործառական նույն յուրահատկություններն ունի Դիադինի բարբառում[386]: Մշո բարբառում *ը*-ի գործառույթը բառավերջում ընդլայնվում է *ը* հոդի՝ նաև ձայնավորով սկսվող բառերից առաջ հանդես գալու շնորհիվ[387], Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում՝ սեռականից բացի՝ բոլոր հոլովների՝ որոշիչ հոդ ստանալու շնորհիվ[388]:

Այսպիսով, Բայազետի բարբառի ձայնավոր ինը հնչյունները՝ *ա, °/ո, °, է, ե, օ, ի, ու, ը,* ներկայացնում են նույնքան հնչույթներ՝ *ա, °, է, ե, օ, ո, ի, ու, ը,* առկա է նաև գերհնչույթ (°/ո):

Բաղաձայն հնչույթներ

Բայազետի բարբառում պայթական ու հպաշփական բաղաձայնները հնչյունական մակարդակում ներկայացնում են քառանդամ հակադրություն. *բ՛-բ-պ-փ, գ՛-գ-կ-ք, դ՛-դ-տ-թ, ձ՛-ձ-ծ-ց, ջ՛-ջ-ճ-չ*: Գործառական հստակ սահմանափակում ունեն շնչեղ ձայնեղները, որոնք հանդես են գալիս միայն բառասկզբում[389], այն էլ՝ հին բառաշերտի բառերում. *բ՛ալնիս, գ՛արի, դ՛ընել, ձ՛որ, ջ՛ուր* ևն: Այս բառաշեր-

[382] Տե՛ս ՔՎԲ, էջ 242-299:
[383] Տե՛ս նշվ. աշխ., էջ 36:
[384] Տե՛ս նշվ. աշխ., էջ 37:
[385] Տե՛ս նշվ. աշխ., էջ 37, 142-144:
[386] Տե՛ս նաև ԴԲ., էջ 69:
[387] Տե՛ս ՄԲ, էջ 102:
[388] Տե՛ս ԱԲ, էջ 106, ԽԲ, էջ 84:

տում բառասկզբում ձայնեղ բաղաձայններ հանդես չեն գալիս, դրանք գործառում են բառամիջում և բառավերջում ձայնորդներից հետո (°ղանձ, °մբար, գ՛անգատ, գ՛երընդի, յեղունգ, խառդախ, խընձոր, կ°ումունջ, խինգ, խիվանդ, ջ՛ընջել ևն), ինչպես նաև այլ շրջապատում՝ հնչյունափոխության հետևանքով (°նարադ, °բարանք, °բրուստ, °վէդրան, խախուդ, հաստադ, ճըբըղվել, մ°դնոց, մըգրադ, պ°դըռել, պ°դարաք ևն): Այսպիսով, հին բառաշերտում ձայնեղ և շնչեղ ձայնեղ հպականներն ու հպաշփականները գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Այդ նույն հարաբերությունը առկա է նաև Մշո[390], Դիադինի[391], Արարատյան[392] բարբառներում:

Նոր բառաշերտում, որն ընդգրկում է այլ լեզուներից և գրական հայերենից միջինհայերենյան շրջանից ի վեր վկայված փոխառություններ, գավառական բառեր, բառասկզբում ունենք միայն ձայնեղներ. *բաջանադ, գուռ, դաբադ, ջան, ջէմ, ձ°ձ°, բըմբուլ, գըլուլ, բադ, բօքոն, գըմփըռ* ևն: Այդպես է նաև բնաձայնական բառերում՝ *բըխկալ, բըռռալ, գըխտալ, գըմփալ, դըռդըռալ, դըխկալ* ևն: Այդ կերպ բարբառի ընդհանուր բառապաշարում բառասկզբում հնարավոր է դառնում շնչեղ ձայնեղ – ձայնեղ հակադրության՝ իմաստատարբերակիչ դերով հանդես գալը, սակայն ունենք սակավ օրինակներ, այն էլ բառասկզբում միայն բ-բ՛, գ-գ՛ հակադրությունների դեպքում. *բըռթել* (հրել) - *բ՛ըռթել* (բրդել), *Բախ* - *բ՛ախ* (բահ), *գիր* (ծանրաքար) - *գ՛իր* (տառ), *գէլ* (օճառանյու) - *գ՛էլ* (գայլ): Հնչյութային հակադրություն կարող է առաջանալ այլ դիրքերում ևս, ինչպես՝ °նձի (*անձ* բառի սեռական) - °նձ՛ի (առանց ձի): Եվ քանի որ բառամիջում ցանկացած շնչեղ ձայնեղի արտասանությունը բառը դարձնում է անհասկանալի, ուրեմն բոլոր շնչեղ ձայնեղները պետք է համարել առանձին հնչյութներ: Նոր բառաշերտի բառամիջում և բառավերջում ևս ձայնեղ պայթականներն ու հպաշփականները լայն

[389] Շնչեղ ձայնեղները բառամիջում կարող են հայտնվել ածանցման կամ բառաբարդման հետևանքով, ինչպես՝ *°նբ՛ան, բ՛ացբ՛էրան, գ՛եղէսգ՛եղ*:
[390] Տե՛ս ՄԲ, էջ 45-52:
[391] Ելնում ենք Դիադինի բարբառի՝ մեր դիտարկումներից: Տե՛ս նաև ԴԲ, էջ 35-37, 43-44:
[392] Տե՛ս ԱԲ, էջ 55, 65-67:

տարածում ունեն (ս°բ°բ, °դ°թ, բ°բ°, դաբաղ, բուդ, ձ°ձ°, բօջակ, փուջ, փէդ, փիդել, խըռջել, գօջի ևն)[393]:

Այսպիսով, եթե հին բառաշերտում ձայնեղ ու շնչեղ ձայնեղ բաղաձայնները գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ հնչույթների տարբերակներ են, ապա ընդհանուր բառաշերտում ձայնեղները գործառում են նաև շնչեղ ձայնեղների դիրքում, և առկա է բաղաձայնների այդ երկու տեսակների միջև հնչույթային հակադրության հնարավորություն: Խուլ (պ,տ,կ,ծ,ճ) և շնչեղ խուլ (փ,ք,թ,ց,չ) պայթականներն ու հպաշփականները Բայազետի բարբառում կիրառական որևէ սահմանափակում չունեն (պ°տ, կ°տու, կ°պ, էծ, ճ°կաթ, կ°րիճ, ճիճու, կըծել, կօծօծ, փիփեռթ, թեփ, թուք, քօք, թօփ, ցօնցել, խաց, խաչ, թ°փչ°կ) և ինքնուրույն հնչույթներ են (պօլ – բօլ, կէր /կար/ - գ՛էր /գար/, տու - դ՛ու, ծին - ձ՛ին, ճըվալ – ջըվալ, տըպել – տըփել, պուշ – փուշ, քէրե /քերել է/ - կէրե /կերել է/, բըտել – բըթել, լըծել – լըցել, ճըռալ – չըռալ ևն): Այդպես է նաև համեմատվող բոլոր բարբառներում[394]:

Բայազետի բարբառի առանձին խոսվածքներում հանդիպող քմայնացած *գ՝, կ՝, ք՝* հետնալեզվային պայթականները *գ,կ,ք* բաղաձայնների դիրքային տարբերակներ են (դրսևորվում են առաջին շարքի *է, ե, ի,* ° ձայնավորներից առաջ /գ՝էտին, գ՝եղ, գ՝ինի, գ՝°դ°, կ՝էծակ, կ՝եր, կ՝իստուկ, ք՝էփըռտալ, ք՝եզի, ք՝իք՝իր, ք՝°ռի/, ք՝ - ն՝ նաև բառավերջում /իրեք՝, բիրիք՝/): Հիշյալ ձայնավորներից առաջ Նորատուսի խոսվածքում *գ,կ,ք*-ի քմայնացման հետևանքով հանդես եկող *ջ,ճ,չ* տարբերակները (ջ°դ°, ճիր°ճի /կիրակի/, չ°ռի)[395] նախնական *ջ,ճ,չ*-ից արտասանությամբ չեն տարբերվում և դրանց հետ հակադրական զույգեր չեն կազմում:

Վ-Ֆ շփականների հակադրությունը շատ դեպքերում հնարավոր չէ բառազույգերում դիտարկել, որովհետև Բայազետի բարբառում *Ֆ*-ն գործառում է հիմնականում փոխառյալ բառերում (°ֆերիստ, ն°ֆ°ս, ֆըլան-ֆըստան, հ°րիֆ), բնաձայնական բառերում (ֆըսֆըսալ, ֆըշշալ,

[393] Խոյ-Մարաղայի և Վանի բարբառներում բառասկզբում ձայնեղ պայթականներ և հպաշփականներ հանդիպում են գավառաբառերում և նոր փոխառություններում, բառամիջում այդպիսիք հանդիպում են հին շերտի բառերի որոշակի դիրքերում (տե՛ս ԽԲ, էջ 35-40. ՔՎԲ, էջ 53-58, 68-70, 81-83):

[394] Տե՛ս ԽԲ, ՔՎԲ, ՄԲ, ԱԲ, ԴԲ համապատասխան բաժինները:

[395] Հետնալեզվային պայթականների քմայնացման և դրա հետևանքով նաև գ,կ,ք > ջ,ճ,չ անցման մասին տե՛ս նաև ՀԼՊՔ, էջ 310-313:

ֆըշտըկալ) կամ էլ *վ*-ի խլացման արդյունք է (ն°ֆտ, °ֆտo, ծէփֆել, կ°ֆճoտել): *Ֆ*-ն կարող է հանդես գալ բառի բոլոր դիրքերում: Հաշվի չառնելով հնչյունափոխության ենթակա դիրքերը՝ կարելի է ասել, որ դիրքային սահմանափակումներ չունի նաև *վ*-ն (վազնել, °վազ, տէրեվ, սեվ): Ճիշտ է, *վ-ֆ* հակադրության իմաստատարբերակիչ դերը ներկայացնող ընդամենը մի երկու օրինակ կարող ենք բերել (ֆինդ-վինդ, սoվ-Սoֆ, վէլo – ֆէլo, վըռիկ - ֆըռիկ), բայց էականն այն է, որ մեկի փոխարեն մյուսի գործածությունը առաջ է բերում իմաստի կորուստ[396]: *ժ-շ, զ-ս* հակադրությունները դրսևորվում են բոլոր դիրքերում. *ժէշտ-շէշտ, մ°ժել-մ°շել, կուժ-կուշ, զուր-սուր, զoլ-սoլ, թ°զ°-թ°ս°, մ°զ-մ°ս, խազ-խաս* ևն[397]: Բառասկզբում *ղ-խ* հակադրություն ունենք միայն մեկ բառազույգում. *ղըրկել* (ուղարկել) - *խըրկել* (վռնդել): Բարբառս *ղ*-ով սկսվող այլ բառեր չունի[398], մինչդեռ բառասկզբի (նաև բառամիջի և բառավերջի) *խ*-ն համապատասխանում է ոչ միայն հայերենի այլ դրսևորումների *խ*-ին (խաղ, փախնել, ձ՛ախ), այլ նաև հինհայերենյան *հ*-ին (խաց-հաց, պ°խել – պահել, բ՛ախ-բահ): Թե՛ Բայազետի բարբառի, թե՛ բարբառային մյուս միավորների՝ փոխառյալ բառերի սկզբում *ղ*-ի դիմաց դրսևորվող *կ՛*-ն հնչույթային հակադրություն *կ*-ի հետ չի կազմում, այն *կ* հնչույթի տարբերակ է և հաճախ փոխարինվում է *կ* պայթականով: Խոյ-Մարաղայի բարբառի բառասկզբի *ղ՛*-ն *ղ* հնչույթի դիրքային տարբերակ է: Բայազետի բարբառի բառամիջում *ղ-խ* հակադրությունը դրսևորվում է հատկապես միջձայնավորական դիրքում, նաև ձայնավորից հետո բառավերջում. *նեղել – նեխել, աղել – ախել, մ°ղ – մ°խ, փող - փոխ* ևն[399]: Խուլերից առաջ *ղ-խ* (ինչպես նաև՝ *վ-ֆ, զ-ս, ժ-շ*) հակադրությունը չեզոքանում է՝ *ծ°ղիկ>ծ°խկել, հ՛ավաք>հ՛աֆքել*:

---

[396] Այսպես է իրավիճակը նաև համեմատվող բոլոր բարբառներում: Որոշ առումով բացառություն է Արարատյան բարբառը, որտեղ *Ֆ* հանդիպում է նաև բառասկզբի *ո*-ից առաջ *հ>Ֆ* հնչյունափոխության հետևանքով (տե՛ս ԱԲ, էջ 74):

[397] Այսպես նաև համեմատվող բոլոր բարբառներում:

[398] Վերևում արդեն նշել ենք, որ դիտարկվող բարբառախմբում բառասկզբում *ղ* ունի միայն Արարատյան բարբառը, և *ղ՛* ունեն Խոյ-Մարաղայի բարբառի որոշ խոսվածքներ, ուստի այս դեպքերում բառասկզբում ևս հնարավոր է *ղ/ղ՛- խ* հնչույթային հակադրություն: Բարբառային մյուս միավորների բառասկզբում այդ հակադրությունը բացառվում է *ղ*-ի դիմաց *խ* (Մուշ), *կ՛* (Դիադին, Խոյ-Մարաղայի, Վանի և Մշո բարբառների որոշ խոսվածքներ) կամ *կ* (Վան) ունենալու պատճառով:

[399] Այսպես նաև համեմատվող բոլոր բարբառներում:

Բայազետի բարբառում *հ՛* շփական հանդես է գալիս միայն բառասկզբում, ընդ որում՝ այն ծագումնաբանորեն ներկայացնում է կամ գրաբարյան բառասկզբի *յ* –ն (հ՛իցուն, հ՛իշատակ, հ՛ույս, հ՛օժար), կամ էլ մուտք է գործել ուշ շրջանի փոխառություններում (հ՛°րիֆ, հ՛°յ°թ, հ՛°յվ°ն): Այս *հ՛* – ից բոլորովին չի տարբերվում ձայնավորից առաջ բառի սկզբում ավելացած *հ՛*-ն (հ՛անգաճ, հ՛ըմէն, հ՛իշկալ, հ՛°շկ, հ՛էրէկ, հ՛օռթում, հ՛ուսում): Բառասկզբում *հ՛*-ն բացառված է *ե* երկբարբառից առաջ. երբ *ե*-ի դրսևորումը պարտադիր է (օրինակ՝ *ռ*-ին նախորդող դիրքում), բարբառումս ունենք դրան նախորդող դիրքի *հ*-ի անկում, ինչպես՝ *հեռու* > *յեռու*, *հերթ* > *յեռթ*, *հերս* > *յեռս*: Բայազետի բարբառում թե՛ արտասանությամբ, թե՛ հնչույթաբանորեն *հ*-ի խուլ և ձայնեղ տեսակներ չեն զանազանվում: Չնայած հինհայերենյան *հ*-ի դիմաց բառասկզբում առկա է *խ*, սակայն *հ* – *խ* իմաստատարբերակիչ հակադրություն դրսևորվում է՝ ի հաշիվ վերոհիշյալ եղանակներով բարբառիս բառասկզբում *հ*-ի առաջացման, ինչպես՝ *հ՛ա* (շարունակ) - *խա* (այո), *հ՛ատուկ* – *խատուկ* (սատկած), *հ՛ալ* (վիճակ) - *խալ*, *հ՛արել* (ուշքի գալ) - *խարել* (այրվել) ևն: Հ-ի դիմաց *խ*ունեցող շրջակա բարբառներում (Վան, Խոյ-Մարաղա, Դիադին) առկա է գրեթե նույն իրավիճակը, մինչդեռ Արարատյան և Մշո բարբառներում *հ* հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում[400]:

Մ,ն,լ ձայնորդները դիտարկվող բոլոր բարբառներում էլ դիրքային որևէ սահմանափակում չունեն: Բայազետի բարբառում բառի սկզբում *յ*-ն *յ*ե երկհնչյունով սկսվող բառերից (յես, յեղ, յեռ, յեռու, յեռթ, յեզ) և *յօթ* բառից բացի հանդես է գալիս ուշ շրջանի փոխառություններում (յախա, յարա, յօրղան, յառլիկ, յափընջի, յօլլա, յուպկա, յեթում, յան, յօրղան ևն), բառավերջում հանդիպում է հիմնականում միավանկ (վայ, չայ, խայ, թայ, բօյ, զէյ, փայ ևն), ռուսերեն փոխառություններում՝ նաև բազմավանկ (°դբօյ, դավայ, դէլավօյ, տըրուբնօյ, չուժօյ, պուստօյ) բառերում, խոսվածքների մեծ մասում՝ ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովում (Սէնօյ, Վահէյ, սինիյ, կիլօյ, կըլէյ ևն): Բառամիջում *յ* հանդիպում է փոխառյալ բառերում (բէյն, հ°յ°թ, գ°գ°-յիչ, ջ°յէլ, զ°յլ°, լայեղ, կէյր°թ, բուլյօն), հնչյունափոխված

[400] Տե՛ս ԱԲ, էջ 74, ՄԲ, էջ 66:

ձևերում (միյն°կ, բ՛այլուս, կըյրել /կտրել/, խ°յլի), գրական փոխառություններում (°յլանդակ, հույս, գ՛ույնավոր, թույն, լույս, նույն): Գրեթե նույն պատկերն են ներկայացնում շրջակա բոլոր բարբառները[401]:

Բայազետի բարբառը հստակորեն տարբերակում է *ր, ռ* հնչյուններ բառամիջում և բառավերջում (բեռ - բեր, դ՛ուռ - դ՛ուր, °ռա - °ռա, հ՛առիք – հ՛արիք), բացառություն է առաջնալեզվային բաղաձայններից առաջ եղած դիրքը, որտեղ միշտ հնչում է *ռ*, այսինքն՝ հակադրությունը չեզոքանում է (հ՛առտ, °ռչ, հ՛առծակ, խառս): Բառասկզբում *ռ – ր* հակադրություն չկա, որովհետև բարբառումս *ր* ձայնորդով սկսվող միակ բառն է *ռոպե*, որ հաճախ հնչում է *հ՛ըռոպե*. Սակավադեպեն նաև *ռ* ձայնորդով սկսվողները. *ռաստ, ռադ, ռ°նգ, ռէզել, ռիսկ* են: Բառասկզբի *ռ*-ից առաջ ևս հաճախ ունենք հավելական *հ՛ը*. *հ՛ըռուս, Հ՛ըռուբ, Հ՛ըռոզ, հ՛ըռիսկ* են: Շրջակաբարբառներում *ր,ռ* ձայնորդներն ունեն գործառական գրեթե նույն բնութագիրը:

Այսպիսով, Բայազետի բարբառի բոլոր խոսվածքների համար ընդհանուր 36 բաղաձայն հնչյունները ներկայացնում են 35 հնչյուններ:

3. Շ Ե Շ Տ

Բայազետի բարբառն ունի վերջնավանկային շեշտ[402]: Այդպիսի շեշտ ունեն նաև Խոյ-Մարաղայի[403], Վանի[404], Մշո[405], Դիադինի[406] բարբառները: Առանձնանում է Արարատյանը, որը, իբրև արևելյան խմբակցության բարբառ, ունի վերջընթեր շեշտ[407]:

Դիտարկելով բարբառներում ձայնավորների՝ նախաշեշտդիրքերում կատարված պատմական փոփոխությունները՝ Հ.Մուրադյանը եզրակացնում է, որ «արևմտյան բարբառների համար իրավացի կլիներ

[401] Տե՛ս ԽԲ, էջ 54, 248-249, ՔՎԲ, էջ 76, 257, ՄԲ, էջ 36-38, 67, ԱԲ, էջ 347, ԴԲ, էջ 54:
[402] Հայերենի շեշտը դիրքային տարբերություններ է հանդես բերում ըստ բարբառների արևելյան և արևմտյան խմբակցությունների: Եթե բարբառների արևելյան խմբակցությունում շեշտը հիմնականում վերջընթեր է, ապա արևմտյան խմբակցությունում այն հիմնականում վերջնավանկային է (տե՛ս ՀԼՊՔ, էջ 68):
[403] Մ.Ասատրյանը շեշտի մասին չի խոսում, սակայն հնչյունափոխությունների նկարագրություններից պարզ է դառնում շեշտի դիրքը այս բարբառում (տե՛ս ԽԲ, էջ 70-71):
[404] Տե՛ս նաև Վանի բարբառի հնչյունափոխությունների նկարագրությունները (ՔՎԲ, էջ 133-139):
[405] Տե՛ս ՄԲ, նշվ. աշխ., էջ 16:
[406] Տե՛ս ԴԲ, էջ 62:

կարծել, թե բազմավանկ բառերում հիմնական շեշտից բացի կար նաև մի երկրորդական շեշտ, որը լինելով առաջին վանկում, թույլ չէր տալիս այդ վանկի ձայնավորի փոփոխություն»[408]: Բայազետի բարբառում, որը շեշտադրությամբ հարում է արևմտյան բարբառներին, երկվանկ և բազմավանկ բառերում իսկապես նկատելի է առաջին վանկի ուժգին արտասանություն, և այդ ավելի ակնհայտ է հատկապես հարցին տրվող պատասխաններում, պնդումներում և տրամաբանական շեշտի դեպքում, երբ հարկ է լինում ընդգծել որևէ իրողություն, օրինակ՝ «-Յե՞փ ես էթում:-Հ՛է՛սօր», «-Գ՛ացե՞թէ մ°ցե:-Գ՛ա՛ցե», «Էնի քա՛ղաք ա գ՛ացե: Հ՛ա՛ռավոտ ա գ՛ալում, հիրկուն չէ»: Բացի այդ, եթե հրամայական եղանակի բայաձևի սովորական կիրառության դեպքում շեշտակիր է վերջին վանկը (Էս գ՛իրքը պ°խա՛ կուշտը), ապակտրուկ հրամանի դեպքում առաջին վանկի շեշտն ավելի ուժգին է արտահայտվում, ինչպես՝ *Պ°՛խա, վոնչ էլ էրէվցըրա*: Նման դեպքերում շեշտակիր է դառնում նաև *ը*-ն, ինչպես՝ *Կը՛դրա, մի՛ կ°յնի*: Հետաքրքրական է, որ Հ.Մուրադյանի ենթադրությամբ՝ բազմավանկ բառերի առաջին վանկում մի թույլ շեշտկարող է ունեցած լինել նաև հին հայերենը[409]: Լեզվաբանը վկայում է, որ ժամանակակից արևելյան և արևմտյան բարբառներում շեշտի դրսևորման յուրահատկությունները առաջացել են պատմական շրջանում և իրենց որոշակի արտահայտությունն են ստացել վաղ միջինհայերենյան սկզբնագիր աղբյուրներում[410]: Ընդ որում՝ արևմտյան շեշտադրության գոյությունը հաստատող փաստերն ավելի շատ են և վկայվում են ամենատարբեր սկզբնաղբյուրներում[411]: Հ.Մուրադյանը կարծում է, որ արդի գրական հայերենի բազմավանկ բառերի առաջին վանկում ևս ենթադրելի է մի երկրորդական շեշտի գոյությունը[412]: Ընդհանուր հայերենին բնորոշ իր գործառույթների հետ միասին՝ Բայազետի բարբառում

---

[407] Տե՛ս ԱԲ, էջ 56, ՀԲՆ, էջ 77-78, Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, էջ 13:

[408] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 69: Պետք է նկատի ունենալ նաև, որ ըստ փորձառական հետազոտությունների՝ «....հայերենում բառասկիզբը ուժեղ դիրք է և այդ դիրքում գտնվող վանկերը բառամիջի և բառավերջի վանկերի համեմատությամբ ունեն ուժգնության ավելի բարձր արժեքներ» (Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, էջ 122):

[409] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 71:

[410] Նույն տեղում:

[411] Նույն տեղում:

[412] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 72:

շեշտը առանձին դեպքերում հանդես է գալիս նաև իբրև բայական իմաստների տարբերակման միակ միջոց: Այսպես՝ ժխտական խոնարհման ըղձական և ենթադրական ապառնիների եզակի երրորդ դեմքի ձևերը այստեղ նույնական են (օրինակ՝ *չուտա*/չուտի և չի ուտի/) և տարբերվում են միայն շեշտի դիրքով. եթե ըղձականի դեպքում շեշտը վերջին վանկի վրա է (չուտա՛, չըվազնի՛, չըմոտկընա՛), ապա ենթադրականի դեպքում շեշտն ընկնում է *չ(չը)* մասնիկին հաջորդող վանկի վրա. *չո՛ւտա* (չի ուտի), *չըվա՛զնի* (չի վազի), *չըմո՛տկընա* (չի մոտենա): Իրողությունը նույն կերպ է դրսևորվում նաև հարցական հնչերանգի դեպքում՝ *չուտա՞* (չուտի՞) և *չո՞ւտա* (չի՞ ուտի): Ի դեպ, բարբառումս *քանի* և *իմալ* բառերում հարցական շեշտը կրում է առաջին վանկը՝ *ի՞մալ, քա՞նի*: Վանի բարբառի Ծատախի խոսվածքում բայի համակարգում նույնպես նկատվել է շեշտի դրսևորման դիրքային յուրահատկություն: Ըստ Մ.Մուրադյանի՝ այստեղ որոշ եղանակային ձևերի «ժխտական խոնարհման ժամանակ, ինչպես և արգելական հրամայականում, շեշտն ընկնում է ոչ թե ժխտական մասնիկի, այլ բայի առաջին վանկի վրա: Օրինակ՝ չըմո՛ւտի, չըսո՛ւտի....»[413]:

Բայազետի բարբառում իմաստի ընդգծման, ասվածը հաստատելու գործառույթ ունի նաև ձայնավորի տևական արտասանությունը[414], ինչպես՝ -*Էսի վ՞իր գ՛իրքն ա։* -*Իի՛մն ա։* Ածականների դեպքում ձայնավորի տևողության մեծացումը ձեռք է բերում ձևաբանական գործառույթ՝ արտահայտելով հատկանիշի դրսևորման ավելի բարձր աստիճան, ընդ որում՝ որքան ձայնավորը ավելի տևական է, այնքան հատկանիշի դրսևորման ավելի բարձր աստիճան է ներկայացնում, օրինակ՝ *ջ՛ոչ քար – ջ՛ոո՛չ քար* (բավականին մեծ քար) – *ջ՛ոոո՛չ քար* (շատ մեծ քար): Բազմավանկ բառերի դեպքում իմաստի սաստկացման նպատակով ձայնավորի տևողության մեծացումը տեղի է ունենում դարձյալ առաջին վանկում, ինչպես՝ *հ՛էէ՛րկէն* (շատ

[413] Մ.Մուրադյան, Ծատախի բարբառը, էջ 64:

[414] Շեշտի փորձառական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «հայերենի շեշտակիր վանկի տևողությունը ամենամեծն է բառի մնացած վանկերի համեմատությամբ: Այսպիսով՝ հայերենի շեշտը թեև ուժային բնույթի է, սակայն նրադրսևորման համար մեծ նշանակություն ունի նաև տևողության գործոնը» (Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, նշվ. աշխ., էջ 122):

երկար), *գիի՛դում եմ* (շատ լավ գիտեմ), *թաա՛փե* (ամբողջովին թափել է) ևն:

4. ԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու ունի ոչ միայն իրեն հատուկ հնչյունական կազմ, այլ նաև հնչյունների կազմավորման, խոսքում դրանց իրացման, կապակցման և հնչյունական շղթայի ձևավորման առանձնահատկություններ[415]: Ըստ Է.Աղայանի՝ տարբեր լեզուների միևնույն հնչյունները «թեև ունեն արտասանական ընդհանուր հատկանիշներ, բայց ունեն նաև առանձնահատկություններ, որոնք արդյունք են արտասանական օրգանների յուրահատուկ դիրքի, մկանների առավել կամ նվազ լարվածության և այլն»[416]: Թե՛ առանձին հնչյունների կազմավորման և թե՛ հնչաշղթայում դրանց դրսևորման, կապակցման յուրահատկությունները պայմանավորված են արտաբերական և հնչույթաբանական գործոններով[417]: Բնականաբար, ասվածը վերաբերում է ինչպես ընդհանրապես լեզվին, այնպես էլ նրա բոլոր գոյաձևերին, մասնավորապես՝ նաև բարբառներին: Այսպիսով, յուրաքանչյուր բարբառ բնորոշվում է և՛ հնչյունների արտաբերման, և՛ դրանց գործառության ու կապակցման յուրահատկություններով, օրինաչափություններով, ինչպես նաև դրանցում կատարված պատմական տեղաշարժերով, որոնք էլ հանդես են գալիս իբրև հնչյունական օրենքներ[418]:

4.1 °և° *հնչյունները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը»*

Ա ձայնավորի շրթնայնացած և քմայնացած տարատեսակները Բայազետի բարբառում հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն հնչույթաբանորեն, այլ նաև գործառության հիմքերի առումով: Շրթնայնացած °-ի դիրքային հստակ բաշխվածությունը և գործառական սահմանափակվածությունը թույլ են տալիս ենթադրել, որ դրա հանդես գալը կարող է պատճառաբանված լինել որևէ

[415] Տե՛ս Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 233, Л.Зиндер, Общая фонетика, М., 1979, էջ 222:
[416] Տե՛ս Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 233:
[417] Տե՛ս նաև Л.Зиндер, նշվ. աշխ., էջ 223:

գործոնով: Այդ առումով դիտարկելի են երկու իրողություններ՝ ա) ° հնչյունը հաջորդում է որոշակի բաղաձայնների և չի կարող հաջորդել մնացած բաղաձայններին, բ) ° հնչյունը հանդես է գալիս միայն բառասկզբում (բացարձակ և բաղաձայնահաջորդ): Առաջին իրողությունը ենթադրում է, որ °-ի գործառությունը դեպքերի մի մասում պայմանավորված է նախորդող բաղաձայնի որակով, այսինքն՝ °-ին նախորդող բաղաձայնները, ի տարբերություն իրենցից հետո ° չունեցողների, թերևս ունեն ընդհանուր հատկանիշ, որն էլ այդ դիրքում *ա* հնչույթի շրթնային տարբերակի դրսևորման պայման է: Այդպիսով, իրար են հակադրվում՝ ա) խուլ բաղաձայնները (բացի *խ*-ն), *մ, ն* ձայնորդները և բ) ձայնեղները, շնչեղ ձայնեղները, շնչեղ խուլերը, *լ, ր, ռ, յ* ձայնորդները, *խ* խուլը և *հ՛*-ն: Այս երկու խմբերը միմյանցից զատող հատկանիշով էլ հենց կարող է պայմանավորված լինել °-ի դրսևորումը: Բաղաձայնական այդ հատկանիշը չի կարող վերաբերել արտաբերության եղանակին կամ տեղին, որովհետև երկու խմբերում ընդգրկված հնչյունները արտաբերական այդ յուրահատկություններով միմյանց չեն հակադրվում: Այդ հատկանիշը կարելի էր բխեցնել բաղաձայնների մեջ ձայնի, աղմուկի և շնչի դրսևորումների տարբերություններից, եթե առաջին խմբում լինեին միայն խուլ բաղաձայնները, իսկ երկրորդ խմբում՝ մնացած բաղաձայնները, սակայն նման մոտեցմանը հակասում են *մ, ն* ձայնորդների առկայությունը առաջին խմբում և *խ* խուլի առկայությունը երկրորդ խմբում: Ուրեմն, հիշյալ երկու խմբերը իրարից կարող է սահմանազատել այնպիսի մի հատկանիշ, որով խուլերը տարբերվում են մնացած բաղաձայններից, *մ* և *ն* ձայ-նորդները՝ մնացած ձայնորդներից, իսկ *խ* խուլը՝ մնացած խուլերից: Թերևս այս դեպքում էական դեր կարող է խաղալ բաղաձայնների որակը ըստ լարվածության հատկանիշի, եթե նկատի ունենանք, որ խուլ բաղաձայնները, ինչպես հայտնի է[419], հայերենի առավել լարված հնչյուններն են, իսկ ձայնորդները, ձայնեղները և շնչեղ խուլերը լարվածության առումով թույլ բաղաձայններ են[420]: Բացի այդ, ձայնորդների մեջ *մ* և *ն* հնչյունները հպականներ են, ինչը են-

[418] Այս մասին տե՛ս նաև Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 277-288:
[419] Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 203. Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, էջ 91:

թադրում է ավելի մեծ լարվածություն, քան ունեն մյուս ձայնորդները, որոնք արտաբերության եղանակով շփական են: Մինչդեռ *խ*-շփականը մնացած խուլերից առանձնանում է պակաս լարվածությամբ[421]՝ այդպիսով հարելով բաղաձայնների՝ ոչ լարված արտասանություն ունեցող խմբին: Հետևում է, որ բերված բաղաձայնական երկու խմբերի համար իրոք տարբերակիչ է լարվածության հատկանիշը, և քանի որ այդ հատկանիշով բնութագրվում են առաջին խմբի, այսինքն՝ շրթնայնացած °-ին նախորդող բաղաձայնները, ուրեմն տվյալ դիրքում *ա*-ի շրթնայնացած տարբերակի հանդես գալու պայման է նախորդ բաղաձայնի արտասանական լարվածությունը: Շրթնայնացած °-ի հնչյունի դրսևորման հետ կապված երկրորդ իրողությունը՝ միայն բառասկզբում (բացարձակ կամ բաղաձայնահաջորդ) նրա հանդես գալը, վկայում է, որ այդ հնչյունի գործառությունը ընդհանրապես պայմանավորված է Բայազետի բարբառի բառասկզբի արտասանական յուրահատկությամբ: Այդ յուրահատկությունը հասկանալուն կարող է նպաստել վերն ասվածից բխող հետևյալ պնդումը. Բայազետի բարբառում բառասկզբում (բացարձակ կամ բաղաձայնահաջորդ) որպես կանոն հանդես է գալիս *ա* հնչյուրի շրթնայնացած տարբերակը, բացառությամբ այն դեպքերի, երբ բառն սկսվում է թույլ լարվածություն ունեցող բաղաձայնով: Այսինքն՝ *ա*-ի շրթնայնացած արտասանությանը խոչընդոտում է բառասկզբում արտասանական անհրաժեշտ լարվածության բացակայությունը, ուրեմն՝ նպաստում է դրա առկայությունը: Հետևում է, որ Բայազետի բարբառում բառասկիզբը ընդհանրապես բնորոշվում է արտասանական որոշակի լարվածությամբ, որը, սակայն, որոշակիորեն թուլանում է, երբ բառն սկսվում է լարվածության առումով համեմատաբար թույլ հնչյունով, և °-ի դրսևորման համար անհրաժեշտ լարվածության բացակայությունը բացառում է այդ դիրքում նրա հանդես գալը: Այդ

[420] Նույն տեղերում:

[421] *խ*-ի թույլ լարվածության մասին են վկայում հետևյալ դիտարկումները. *խ*-ի «ինտենսիվությունը ավելի թույլ է մյուս շփականների համեմատությամբ», «*խ*-ն ու *ղ*-ն ավելի շատ իրենք են ազդվում հարևան ձայնավորներից՝ իրենց սպեկտրային էներգիայի կազմավորմամբ նմանվելով նրանց», «*խ*-ն և *ղ*-ն ավելի հետնալեզվային կազմություն ունեն, քան *կ, գ, ք*-ն», և, վերջապես, շրթունքները *խ*-ի և *ղ*-ի արտասանության ժամանակ «չեզոք ձևով բացված են և այդ

է վկայում նաև հետևյալ հանգամանքը. բառասկզբում բացառության կարգով սովորական *ա* ունեցող բառերը (այ, ահա, այսի, այտենց, առռա, ախար, ահահա, պապապա, պահօ, տաշ, այմառթ) ունեն մեկ ընդհանուր հատկանիշ. բոլորն էլ անբռնազբոս, ակամա արտասանվող բառեր՝ ձայնարկություններ, ձայնարկության արժեք ստացած բառեր կամ *այ* ձայնարկությամբ բաղադրված ցուցականներ են: Բնականաբար, ակամա արտասանությունը ենթադրում է արտասանական լարվածության թուլացում կամ բացակայություն, ինչն էլ պայման է դառնում *ա* հնչույթի ոչ շրթնայնացած տարբերակի արտասանության համար[422]: Կարող է հարց առաջանալ, թե ինչու արտասանության ուժգնությամբ կամ լարվածությամբ պայմանավորված՝ *ա*-ի շրթնային արտասանություն չի դրսևորվում բազմավանկ բառերի շեշտակիր, այսինքն՝ արտասանության ուժգնությամբ առանձնացող վանկում: Հարցի պատասխանը գտնելուն օգնում են հայերենի շեշտի վերաբերյալ կատարված փորձառական ուսումնասիրությունները[423]: Պարզվել է, որ հայերենում շեշտակիր վանկը, ունենալով ուժային բնույթ, իր ուժգնությամբ ամենաուժեղը չէ, սակայն իրեն նախորդող վանկի համեմատությամբ այն գրեթե միշտ ունի ավելի մեծ ուժգնություն: Մյուս կողմից՝ հայերենում բառասկիզբը ուժեղ դիրք է, և այդ դիրքի վանկը բառամիջի ու բառավերջի վանկերի համեմատությամբ ունի ուժգնության ավելի բարձր արժեքներ[424]: Ահա հայերենի բառասկզբի այս հատկության յուրօրինակ մի դրսևորումն է այն, որ Բայազետի բարբառում

հնչյուններին լրացուցիչ երանգավորում չեն տալիս» (Ա.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 181-182):

[422] Հետաքրքրական է նաև Ռ.Բաղրամյանի մի դիտողությունը: Համարելով, որ Բայազետի բարբառում ° և ° հնչյունները *ա* ձայնավորի փոփոխություններն են ներկայացնում՝ ուսումնասիրողը նկատում է. «Ա > ° փոփոխության համար նկատեցինք միայն մեկ պայման, այն է՝ երբ տրամաբանական շեշտը դրվում է *ա*-ով սկսվող կամ նախավանկում *ա* ունեցող բառի վրա, ապա այդ *ա*-ն դառնում է °, որով այս փոփոխությունը տարածվում է ավելի շատ բառակազմի առաջին, քան երկրորդ կամ հաջորդ վանկերում գտնված *ա*-ի վրա» (Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 15): Փաստորեն, ուսումնասիրողը ° հնչյուն նկատել է տրամաբանական շեշտով ընդգծված, այսինքն՝ առավել լարված դիրքում (Բայազետի բարբառում տրամաբանական շեշտն ընկնում է բառի առաջին վանկի վրա: Ի դեպ, այստեղ տեղին է նաև հիշել Վանի բարբառի *ա*-ի շրթնային արտասանության մասին Հ.Աճառյանի՝ վերը բերված այն դիտողությունը, թե հատկապես շեշտի տակ է այդ արտահայտվում), որն իր հերթին գալիս է հավաստելու Բայազետի բարբառի բառասկզբի լարված արտաբերության (և դրա հետևանքով *ա* ձայնավորի շրթնայնացման) վերաբերյալ մեր դիտարկման ճշմարտացիությունը:

[423] Տե՛ս Ռ.Թոխմախյան, Ժամանակակից հայերենի շեշտի բնույթը, Լեզվի և ոճի հարցեր, պր. 3, Ե., 1975, 123-207 էջ:

բառասկիզբն ավելի լարված արտասանություն ունի, քան նույնիսկ շեշտված վանկը: Իհարկե, արտասանական լարվածությունն ինքնին չի ենթադրում հնչյունի շրթնայնացած արտասանություն, սակայն այն կարող է ընդգծել այդ հնչյունի՝ խոսվածքին հատուկ արտաբերական յուրահատկությունը՝տվյալ դիրքում առաջ բերելով հնչյութի շրթնայնացած տարբերակ: Վերևում արդեն հիշատակել ենք, որ Բայազետի բարբառում և Վասպուրականի խոսվածքներում դրսևորվում է *ա* հնչյունի մի տարբերակ, որի արտաբերական յուրահատկությունը ուսումնասիրողներին թույլ է տալիս այն համարել որոշ չափով շրթնայնացած ձայնավոր: Կարծում ենք՝ Բայազետի բարբառում *ա*-ի արտասանական հենց այդ յուրահատկությունը, զուգորդվելով բարբառի արտասանական մեկ այլ առանձնահատկության՝ բառասկզբի արտաբերական զգալի լարվածության հետ, առաջ է բերում այդ դիրքում *ա*-ի շրթնայնացած արտասանություն՝ համաձայն վերը բերված օրինաչափությունների[425]:

Նկատի ունենալով դեռևս 5-րդ դարում *ա*-ի շրթնայնացման երևույթի հնարավորությունը[426]՝ կարող ենք ենթադրել, որ Բայազետի բարբառի բառասկզբի լարվածության և *ա*-ի շրթնային արտասանության հատկանիշները գալիս են հնագույն ժամանակներից: Այն հանգամանքը, որ համապատասխան դիրքերում ° հնչյունը կայուն դրսևորվում է նաև նոր և նորագույն փոխառություններում (°դաշ, °ղզուն, մ°րալ, շ°պկա /թրք./, °կուշկա, մ°լերօվնի, կ°մպուտը, պ°գրիշկա /ռուս./), վկայում է, որ Բայազետի բարբառում այսօր ևս բառասկիզբը բավականին լարված է, շարունակում է այդ դիրքում դրսևորվել *ա*-ի շրթնային արտասանության արտաբերական սովորույթը, և բարբառիս արտասանական բազան իրեն է հարմարեցնում փոխառյալ բառերի

---

[424] Տե՛ս Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, նշվ. աշխ., էջ 122:

[425] Պետք է կարծել նաև, որ Վասպուրականի խոսվածքներում դիտարկված որոշ չափով շրթնայնացած *ա*-ն Բայազետի բարբառի °-ի պես հստակ շրթնայնացած արտասանություն չունի հենց այն պատճառով, որ այդ խոսվածքների բառասկզբին հատուկ չէ Բայազետի բարբառին բնորոշ արտասանական լարվածությունը: Մյուս կողմից՝ Բայազետի բարբառին պատմաշխարհագրորեն մերձավոր Դիադինի բարբառը, ի տարբերություն Վասպուրականի խոսվածքների և Բայազետի բարբառի, իր արտասանական բազայում չունի *ա*-ձայնավորի այն որակը, որը, զուգորդվելով արտասանության որոշակի լարվածության (կամ ուժգնության) հետ, պետք է առաջ բերեր շրթնայնացած °-ձայնավոր:

արտասանությունը: Հայերենի որևէ այլ բարբառում °հնչյունի գործառական նման բաշխում չի նկատվել:

Բայազետի բարբառում °հնչյուն հանդիպում է հիմնականում *ա*-ի դիրքերում (բառասկզբում ձայնեղ բաղաձայնների հարևանություն, բառի ոչ բառասկզբի վանկեր), մինչդեռ °հնչյունի դիրքերում, հատկապես՝ բառասկզբի խուլ հպականներից ու հպաշփականներից հետո, արտասանական բազան դիմադրում է, այսինքն՝ այդ դիրքի արտասանական լարվածությունը որոշակիորեն խոչընդոտում է ոչ շրթնային, տվյալ դեպքում՝ քմայնացած °-ի արտասանությանը: Նկատելի է, որ եթե բարբառիս հինհայերենյան բառաշերտում թերևս հարևան բարբառների ազդեցությամբ °դրսևորվում է հիմնականում բառի ոչ առաջին վանկերում և որպես կանոն չի հանդիպում բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ և շնչեղ ձայնեղ հպական ու հպաշփական բաղաձայններից հետո, ապա նոր բառապաշարի փոխառյալ բառերում այդ հնչյունը հանդիպում է նաև բացարձակ բառասկզբում, բառասկզբի ձայնեղ հպականներից ու հպաշփականներից հետո, և միայն բառասկզբի խուլ հպականներին ու հպաշփականներին հաջորդող դիրքն է °-ի դրսևորման համար հիմնականում մնում բացառված: Այսպիսով, եթե շնչեղ ձայնեղներին հաջորդող դիրքում °-ի բացակայությունը (բացառությամբ մի երկու դեպքերի) կարելի է բացատրել պատմական գործոններով (երբ Բայազետի բարբառի բառասկզբում բոլոր ձայնեղ հպականներն ու հպաշփականները նաև շնչեղ էին, դեռևս °-ի ներթափանցումը զանգվածային բնույթ չէր կրում և պայմանավորված կարող էր լինել հարևան բարբառների որոշ ազդեցությամբ), ապա բառասկզբի խուլ հպականներին ու հպաշփականներին հաջորդող դիրքում թե՛ հինհայերենյան և թե՛ նոր բառապաշարում °-ի բացակայությունը բացատրելի է բարբառիս արտասանական բազայի յուրահատկությամբ, համաձայն որի՝ այդ դիրքի արտասանական լարվածությունը թե՛ հնում և թե՛ այժմ առաջ է բերում *ա*ձայնավորի շրթնային արտասանություն և բարենպաստ չէ քմային արտասանության համար: Բայազետի բարբառում °ձայնավորի գործառությունը նախնական շրջանում պայմանավորելով արտա-

[426] Տե՛ս ՀԲՆ, էջ 163 - 165:

սանական բազայում այդ հնչյունն ունեցող հարևան բարբառների ազդեցությամբ՝ պետք է արձանագրենք, որ °-ն զանգվածաբար բարբառ է ներթափանցել նոր՝ արաբաթուրքապարսկական փոխառություններում, այսինքն՝ 11-րդ դարից սկսած[427]:

Բարբառումս թե՛ ° և թե՛ ° հնչյունների գործառության վերաբերյալ արված դիտարկումները հնարավորություն են տալիս անդրադառնալու հայերենի մի շարք բարբառների արտասանական բազայում ° հնչյունի դրսևորումներին և «Աճառյանի օրենքին» ու փորձելու նորովի մեկնաբանել իրողությունը: Ինչպես հայտնի է, հայերեն որոշ բարբառների հնչյունական համակարգերին հատուկ ° հնչյունի գործառության վերաբերյալ առաջին անգամ օրինաչափություն է դիտարկել և օրենք սահմանել Հ.Աճառյանը՝ Վանի բարբառի հնչյունական համակարգը քննելիս: Ըստ Աճառյանի օրենքի՝ «Վանի բարբառում *ա* ձայնավորը, գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է °, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է *ա*»[428]: Հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ Աճառյանի կարծիքով՝ *ա* ձայնավորը °-ի է վերածվել նախորդ բաղաձայնի ձայնեղ լինելու պատճառով և նախքան դրա խլանալը[429]: Օրենքի գործողություն Աճառյանը տեսնում է նաև Մարաղայի, Խոյի, Սալմաստի, Ղարաբաղի, Ծամախիի բարբառային միավորներում[430]: Նանկատում է, որ իր հայտնաբերած օրենքին Վանի բարբառում ենթարկվում է նաև *օ*-ն[431], Ղարաբաղի բարբառում՝ *ու*-ն[432]: Հետագայում Հ.Մուրադյանը արձանագրում է, որ «Աճառյանի օրենքը» գործում է բավականին մեծ տարածքի վրա՝ Վասպուրականից դեպի Սյունիք՝ մինչև Արցախ և վերաբերում է ոչ թե միայն *ա* ձայնավորին, այլ առհասարակ հետին շարքի բոլոր ձայնավորներին, որոնք ձայնեղ պայթականներից հետո դառնում են առաջնային շարքի ձայնավորներ[433]: Լեզվաբանը «Աճառյանի օրենքը» վերաձևակերպում է այսպես. Վասպուրական - Սյունիք - Արցախ տարածքի բարբառներում

[427] Մերձավոր բարբառներում °-ի առաջացման և հնչույթի արժեք ձեռք բերելու հանգամանքների վերաբերյալ տե՛ս ՀԼՊՔ, էջ 47-51:
[428] ՔՎԲ, էջ 20:
[429] Նույն տեղում:
[430] Նշվ. աշխ., էջ 21:
[431] Նշվ. աշխ., էջ 40:
[432] Նշվ. աշխ., էջ 21:
[433] ՀԼՊՔ, էջ 92-93:

հին հայերենի բառասկզբի ձայնեղ պայթականներից հետո գտնվող հետին շարքի ձայնավորները (*ա, օ, ու*) փոխարկվում են առաջնային շարքի համապատասխան ձայնավորների[434]: Ըստ Հ.Մուրադյանի՝ ա>ո փոփոխության դրդապատճառները միշտ չէ, որ հայտնի են, սակայն Վասպուրական – Սյունիք – Արցախ տարածքի բարբառներում այդ փոփոխությունը պատճառաբանվում է այսպես. «Այստեղ այն կատարվել է հին ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքում և պայմանավորված է այդ բաղաձայնների երբեմնի ունեցած հնչարտասանական մի ինչ-որ առանձնահատկությամբ, որը մեզ անհայտ է»[435]: Այնուհետև ուսումնասիրողները նկատում են, որ «օրինակ, Ղարաբաղի բարբառի խոսվածքներում, որտեղ օրենքը շատ հետևողականորեն է գործել, խնդրո առարկա դիրքում բոլոր ձայնավորներն են ստացել առաջնալեզվային կամ փակ արտասանություն»[436]: Կատարելով Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորների համաժամանակյա և տարաժամանակյա հանգամանալից քննություն՝ Ժ Միքայելյանը եզրակացնում է, որ հայերեն բարբառների մի որոշակի խմբի պատմականորեն հատուկ է եղել ձայնեղ բաղաձայնի և նրան հաջորդող ձայնավորի փոխազդեցական կապ, որի հետևանքով ոչ առաջնային շարքի ձայնավորը քմայնացել է: Նա առաջարկում է «Աճառյանի օրենքը» սահմանել այս կերպ. «Հայերեն որոշ բարբառներում գրաբարյան ձայնեղ (հպական, կիսաշփական, շփական) բաղաձայններին համապատասխանող հնչյուններից հետո ձայնավորները ձեռք են բերել առաջնալեզվային արտասանություն»[437]: Ժ.Միքայելյանը նկատում է, որ Վանի բարբառում հինհայերենյան ձայնեղ բաղաձայններից հետո առաջընթաց արտասանություն ստանում են ոչ միայն հետին շարքի ձայնավորները, այլ նաև միջին շարքի *ը*-ն[438]: Նա նշում է նաև, որ Վասպուրականի տարածքի բոլոր խոսվածքներում ձայնավորների քմայնացում դիտվում է և այլ դեպքերում, ինչպես՝ բառասկզբի ձայնեղ *հ՛* հագագից հետո, բառի տարբեր դիրքերում նաև ձայ-

[434] Նշվ. աշխ., էջ 93:
[435] Նշվ. աշխ., էջ 106-107:
[436] Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 62-63, Ա.Ե.Խաչատրյան, Բարբառների քննության Աճառյանի սկզբունքները, ՊԲՀ, Ե., 1976, 1, էջ 153, Մ.Աղաբեկյան, նշվ. աշխ., էջ 72:
[437] Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 69:
[438] Նշվ. աշխ., էջ 86-87:

նորդներից հետո[439]: Ըստ Ժ.Միքայելյանի՝ ձայնավորների քմայնացման առումով ռնգայինները տարբերվում են մյուս ձայնորդներից, և «Վասպուրականի բարբառային քիչ միավորներում է դիտվում այդ հնչյունների ազդեցությամբ ձայնավորների քմայնացում, այն էլ հաճախ՝ ոչ կանոնական ձևով: Խնդրո առարկադիրքում ձայնավորները առաջնալեզվայնություն են ստանում մեծամասամբ ներդաշնակության օրենքի գործառության հետևանքով»[440]:

Այն, որ քմային ° հնչյուն Վանի բարբառում հանդիպում է նաև իր սահմանած օրենքից դուրս գտնվող դիրքերում, նկատել է և Աճառյանը՝ բերելով բառերի օրինակներ, որոնցում քմայնացած այդ հնչյունը դրսևորվում է բացարձակ բառասկզբում, բառասկզբի ձայնեղ և խուլ շփական, շնչեղ խուլ, ձայնորդ բաղաձայններից հետո, բառի ոչ առաջին վանկերում[441]: Համանման օրինակներ Ուրմիայի (Խոյի) բարբառում դիտարկել է Մ.Ասատրյանը[442]: Միաժամանակ, նկատվել է, որ Վասպուրական-Սյունիք-Արցախտարածքի և հարակից բարբառներին հատուկ են քմայնացած *գ,կ,ք* պայթականներ, որոնց դրսևորումը հաճախ պայմանավորված չէ հաջորդող ձայնավորի բնույթով: Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում հիշյալ քմայինները հանդես են գալիս նաև բառավերջի դիրքում, երբ այլևս բաղաձայնին հաջորդող ձայնավոր չկա»[443], իսկ Վանի, Դիադինի բարբառներում, Մոկսի խոսվածքում և հարակից այլ բարբառներում առկա է բառասկզբի *ք*-ի ուժեղ ու արտահայտված քմայնացում, որը նույնպես պայմանավորված չէ հաջորդող ձայնավորի բնույթով[444]: Ի վերջո Հ.Մուրադյանը եզրակացնում է. «Նման բաղաձայնի արտասանությունը, որը պայմանավորված չէ հնչյունական դիրքով ու պայմաններով, կարող է բացատրվել ենթաշերտային կամ այլ կարգի, մեզ անհայտ, պատճառներով»[445]: Այսպիսով, հայերենի մի շարք բարբառներում ձայնավոր հնչյունների քմային արտասանության վերաբերյալ մի կողմից ունենք «Աճառյանի օրենքը», որը ներ-

[439] Նշվ. աշխ., էջ 91-106:
[440] Նշվ. աշխ., էջ 107:
[441] ՔՎԲ, էջ 24-26:
[442] ԽԲ, էջ 24:
[443] ՀԼՊՔ, էջ 311:
[444] Նշվ. աշխ., էջ 311-312:
[445] Նշվ. աշխ., էջ 312:

կայացնում է երևույթի արտահայտությունը մասնավոր (թեկուզ և առավել ցայտուն) դիրքում և ինչպես Աճառյանի, այնպես էլ հետագա ուսումնասիրողների կողմից պայմանավորվում է ձայնեղ բաղաձայնների ազդեցությամբ, իսկ մյուս կողմից՝ ունենք քմայնացման ավելի լայն ընդգրկում, երբ հետին (նաև՝ միջին) շարքի ձայնավորների, նաև հետնալեզվային *գ,կ,ք* պայթականների քմայնացում դիտվում է ամենատարբեր դիրքերում, հնչյունական տարբեր միջավայրերում: Լեզվաբանները ձայնեղների՝ քմայնացում առաջացնող հատկության հետ միասին փորձում են երևույթը բացատրել նաև առանձին հնչյունների (*հ՛,լ,ր*) արտաբերական յուրահատկություններով, ձայնավորների ներդաշնակության օրենքով և համաբանությամբ[446], իսկ *գ,կ,ք*-ի քմայնացման դեպքում, ինչպես վերևում տեսանք, երևույթի պատճառը համարվում է անհայտ: Փաստորեն, քմայնացման երևույթը, մասնավոր դեպքում պայմանավորվելով նախորդող բաղաձայնի ձայնեղությամբ, ընդհանրության մեջ ամբողջական ու համոզիչ բացատրություն չի ստանում, մանավանդ որ ունենք, օրինակ, Տիգրանակերտի բարբառին բնորոշ այնպիսի իրավիճակ, երբ բարբառում ձայնավորի քմայնացում առկա է գրաբարյան թե՛ ձայնեղ և թե՛ խուլ ու շնչեղ խուլ հպականներին ու հպաշփականներին համապատասխանող բաղաձայններից հետո, որի արդյունքում «*ա*-ի քմայնացումը բարբառում գրեթե չի ճանաչում սահմաններ և չի ենթարկվում որևէ կայուն օրինաչափության»[447]: Այնպես որ, հայերենի բարբառներում քմայնացման դրսևորումները շատ ավելի ընդգրկուն իրողության արտահայտություն են, քան ներկայացվում է «Աճառյանի օրենքի» տարբեր սահմանումներով, և դրանք, մեր համոզմամբ, չեն կարող մեկնաբանվել այդ օրենքից բխող՝ ձայնավորների վրա նախորդող բաղաձայնների ազդեցության վերաբերյալ դրույթով ու կարիք ունեն ընդհանուր, բոլոր դեպքերին վերաբերող բացատրության: Կարծում ենք՝ հայ բարբառային խոսքում, մասնավորապես՝ Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում, ձայնավորների քմայնացման իրողությունը կարող է բացատրվել,

[446] Տե՛ս Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 91-116, Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, էջ 33:
[447] Ա.Հանեյան, նշվ. աշխ., էջ 32:

եթե հանդես բերենք հարցի քննության՝ Բայազետի բարբառի ձայնավորների առնչությամբ վերը կիրառված մոտեցումը: Այսինքն՝ հարկավոր է նախ և առաջ դիտարկել այն հարցը, թե որ դիրքերն են հստակ սահմանազատվում քմայնացման դրսևորման և բացակայության իմաստով[448]: Վերն ասվածից կարող ենք բխեցնել նշված բարբառներում քմային և ոչ քմային ձայնավորների բաշխման ընդհանրական պատկերը՝ մանրամասն չանդրադառնալով բոլոր դիրքերին և խոսվածքներում երևան եկող առանձնահատկություններին[449]: Իհարկե, նախ և առաջ նկատելի է դեռևս Աճառյանի դիտարկած այն իրողությունը, որ քմային ձայնավորներ օրինաչափորեն հանդես են գալիս նախկին ձայնեղ պայթականներից ու հպաշփականներից առաջացած խուլերին հաջորդող դիրքերում, ընդ որում՝ ապացուցված պետք է համարել, որ քմայնացումը տեղի է ունեցել նախքան ձայնեղների խլացումը, այսինքն՝ քմայնացում տեղի է ունեցել ոչ թե խուլերից, այլ ձայնեղներից հետո[450]: Մինչդեռ բուն խուլերից հետո ձայնավորները քմայնացումից ազատ են: Եթե երևույթը սահմանափակվեր միայն այս հակադրությամբ, և քմայնացումը ընդգրկեր միայն հիշյալ մասնավոր դիրքը, ապա գուցե և .կարելի կլիներ հնչյունական այդ իրողությունը պայմանավորել նախորդ պայթական կամ հպակաշփական բաղաձայնի ձայնեղությամբ: Սակայն ձայնավորների քմայնացում, ինչպես վերևում տեսանք, կանոնավորապես առկա է նաև այլ դիրքերում: Եթե հավելենք նաև, որ քմային ձայնավորներ հանդիպում են բառամիջի ու բառավերջի զանազան բաղաձայնական շրջապատներում, ապա պետք է արձանագրենք, որ դեպքերի գոնե մի մասում քմայնացումը նախորդ բաղաձայնի ձայնեղությամբ բացատրվել չի կարող: Իրականում ուրվագծվում է առաջընթաց արտասանության կամ քմայնացման ընդհանուր միտում (հիշենք նաև *գ,կ,ք*-ի քմային արտասանությունը), որը կարող է բացատրվել ոչ թե այս կամ այն դիրքով, այլ արտա-

[448] Օրենքի աճառյանական սահմանումը մատնանշում է այդ սահմանազատումը (ձայնեղից առաջացած խուլի մոտ քմայնացում կա, իսկ խուլից առաջացած խուլի մոտ չկա), սակայն հետագա սահմանումներում այդ իրողությունը անտեսվում է:

[449] Վասպուրականի խոսվածքներում քմային ձայնավորների դրսևորման առանձնահատկությունները հանգամանորեն ներկայացրել է Ժ.Միքայելյանը իր «Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները» աշխատության մեջ (Ե., 2009, 144 էջ):

[450] Տե՛ս ՔՎԲ, էջ 20:

բերական համակարգում, ապա և արտասանական բազայում տեղի ունեցած տեղաշարժով: Ավելի հստակ առանձնանում է այն դիրքը, որտեղ ձայնավորները քմայնացման չեն ենթարկվում, այսինքն՝ խուլ պայթականներին ու հպաշփականներին, ինչպես տեսանք՝ նաև *մ,ն* ձայնորդներին հաջորդող դիրքը: Այլ կերպ ասած՝ նկատվում է իրողության ընդհանուր դրսևորում (տվյալ դեպքում՝ քմայնացման, այսինքն՝ բերանի հետին մասից առաջին մասը ձայնավորների տեղաշարժի միտում) և առանձնանում է այդ իրողությանը խոչընդոտող մասնավոր դիրք: Վերևում տեսանք, որ ընդհանուրի և մասնավորի նման զուգորդում առկա է Բայազետի բարբառում, որտեղ *ա* ձայնավորի ոչ շրթնային տարբերակը ունի ընդհանուր գործառություն՝ բացառությամբ մասնավոր բնույթ ունեցող այն դիրքերի, որոնցում *ա*-ն ունի շրթնային արտասանություն: Եվ եթե Բայազետի բարբառի դեպքում մասնավոր դիրքի դիտարկումը թույլ է տալիս բացահայտել շրթնայնացման դրսևորման պատճառը, ապա Վասպուրական – Սյունիք - Արցախ տարածքի խոսվածքներում մասնավոր դիրքի դիտարկումը թույլ կտա բացահայտել քմայնացման տարածմանը առավել խոչընդոտող իրողությունը: Ու քանի որ շրթնայնացմանը նպաստող և քմայնացմանը խոչընդոտող իրողությունները ունեն ընդհանրություն (խուլ պայթականներին, հպաշփականներին, *մ* և *ն* ձայնորդներին հաջորդող դիրք), ուրեմն կարող ենք փաստել, որ եթե Բայազետի բարբառում առավել լարված հնչյունները բառասկզբում իրենցից հետո պայմանավորում էին *ա*-ի շրթնայնացում, ապա դիտարկվող տարածքի խոսվածքներում նույն այդ լարված հնչյունները խոչընդոտում են ձայնավորների քմայնացմանը: Ուրեմն, քմայնացման դիտարկման մեկնակետը փոխելով, նախև առաջ անհրաժեշտ է սահմանել, որ դիտարկվող խոսվածքներում ձայնավորների քմայնացում տեղի չի ունեցել առավել լարված բաղաձայններից հետո: Հետևում է, որ լարվածությունը տվյալ դեպքում խոչընդոտում է քմայնացմանը[451]: Նշանակում է՝ բնական է,

[451] Ի դեպ, այն, որ արտասանության լարվածությունը կամ ուժը կարող է հակադարձ հարաբերության մեջ լինել քմայնացման հետ, երևում է նաև Ծատախի խոսվածքի օրինակով, որտեղ շեշտակիր վանկի *ա*-ն, շեշտից զրկվելով ու թուլանալով, կարող է վերածվել °-ի, ինչպես՝ *տուն - տան - տ°նդ°կին*, և ընդհակառակը՝ երկվանկ կամ բազմավանկ բառի շեշտակիր վանկում ձայնեղ շփականից հետո ենթադրվող °-ի դիմաց առկա է *ա*, ինչպես՝ *զ°վակ, շիվար, ծ°վար, °վ°զակ, խր°զան* ևն (տե՛ս

որ ձայնավորների քմայնացումը ավելի տարածված է պակաս լարված բաղաձայններից՝ ձայնորդներից (բացի *մ*-ն և *ն*-ն) ու ձայնեղներից, նաև ձայնեղ *հ՛* հագագից հետո: Բայց պետք է նկատի ունենալ մեկ այլ հանգամանք ևս. հնչյունաբանները գտնում են, որ ձայնեղ բաղաձայնների արտասանության ժամանակ լեզվի արմատը ինչ-որ չափով առաջընթաց դիրք է գրավում[452], մանավանդ «ձայնեղ հպականների արտաբերման համար լեզվի արմատի առաջ շարժվելը անխուսափելի է»[453], ինչը և ձայնեղներին հաջորդող դիրքը առավել նպաստավոր է դարձնում ձայնավորների քմայնացման միտումի դրսևորման համար:

Այսպիսով, մեր կարծիքով, Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի բարբառների արտասանական բազայում ինչ-որ ժամանակ սկսվել է առաջընթաց արտասանության արտաբերական միտում, որի արդյունքում քմայնացման են ենթարկվել ինչպես ձայնավորները, այնպես էլ *գ,կ,ք* բաղաձայնները: Ձայնավորների քմայնացման միտումը այս կամ այն չափով ընդգրկել է տարբեր դիրքեր, բայց հատկապես՝ ձայնեղ բաղաձայններից հետո դիրքը, որի համար պայման է եղել այդ բաղաձայնների թուլությունը (ի դեպ, առաջին շարքի ձայնավորները ևս իրենց արտասանությամբ պակաս ինտենսիվ են, քան հետին շարքի ձայնավորները), այլև՝ թերևս դրանց արտաբերական մեկ այլ յուրահատկությունը՝ արտասանության ժամանակ լեզվի արմատի առաջընթաց դիրքը: Մյուս կողմից՝ քմայնացման միտումին խոչընդոտում է խուլ հնչյունների, նաև՝ *մ,ն* ձայնորդների արտասանական լարվածությունը: Ուրեմն՝ ձայնեղները (նաև ոչ հպական ձայնորդները, *հ՛* շփականը) ոչ թե պատճառ են դառնում քմայնացման կամ ինքնին քմայնացնող հատկանիշ ունեն, այլ նպաստավոր պայման են հաջորդող ձայնավորի քմայնացման համար, իսկ խուլերը իրենց լարված արտասանությամբ խանգարում են արտասանական բազայում գործող քմայնացման միտումին: Մնացած դիրքերը թերևս

Մ.Մուրադյան, նշվ.աշխ, էջ 32-33: Այս երևույթը Ժ.Միքայելյանը բացատրում է նշութավորման կանոնով: Տե՛ս Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 123):

[452] Տե՛ս Ժ.Միքայելյան, նշվ. աշխ, էջ 68:

[453] B. Vaux, The Phonology of Armenian, Clarendon press, Oxford, 1998, p. 178:

քմայնացման համար ոչ այնքան նպաստավոր են, բայց և այդ իրողությունը չեն բացառում[454]:

Ինչ վերաբերում է «Աճառյանի օրենքին», ապա այն թերևս ավելի ճիշտ կլինի կարևորել ոչ միայն քմայնացման առավել բնորոշ դիրքը նշելու, այլ նաև (և գուցե ավելի շատ) քմայնացումից ազատ մնացած դիրքը մատնանշելու առումով: Կարելի էր սպասել, որ հաջորդող ձայնավորի քմայնացումից հետո խլացած ձայնեղները, արդեն խուլ լինելով, պետք է խոչընդոտեին այդ ձայնավորի քմային արտասանությանը: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ խլացումը, այնուամենայնիվ, չի նշանակում խլացած ձայնեղների և բուն խուլերի լիակատար նույնացում: Օրինակ, Շատախի խոսվածքի վերաբերյալ Մ.Մուրադյանը նկատում է, որ ձայնեղ պայթականներից ու հպաշփականներից առաջացած խուլերը ունեն ձայնեղության որոշ երանգ, իսկ գրաբարյան խուլերին համապատասխանող խուլերը նման երանգ չունեն[455]: Մյուս կողմից՝ հայտնի է, որ ձայնեղներից առաջացած խուլերը բուն խուլերից տարբերվում են՝ դրանց համեմատելով ավելի թույլ, այսինքն՝ ունենալով պակաս լարվածություն[456], ինչն էլ չի խոչընդոտում հաջորդ ձայնավորի արդեն սովորական դարձած քմային արտասանությանը, ինչպես որ չեն խոչընդոտում մյուս դիրքերը (խուլ պայթականներին ու հպաշփականներին հաջորդող դիրքից բացի):

Ամփոփելով հայերեն բարբառներում *ա* ձայնավորի շրթնայնացման ու քմայնացման (այս դեպքում՝ նաև մյուս ձայնավորների քմայնացման) մասին վերն ասվածը, կարող ենք արձանագրել, որ երկու

---

[454] Առաջընթաց կամ քմային արտաբերության միտումը բարբառից բարբառ կարող է տարբեր ընդգրկում ու ուժ ունենալ, դրսևորվել տարբեր իրողությունների հետ պայմանավորված, բայց որքան էլ ուսումնասիրողները փորձեն քմայնացման՝ «Աճառյանի օրենքից» դուրս մնացող դեպքերը մեկնաբանել համաբանության, ներդաշնակության կամ նշույթավորման կանոններով, շեշտափոխական իրողություններով, միևնույն է, քմայնացման բոլոր այդ երևույթները (նաև «Աճառյանի օրենքով» բացատրվողները) կարող են դրսևորվել, եթե տվյալ խոսվածքում առկա է առաջընթաց արտաբերության կամ քմայնացման միտում, ինչը կարող է առաջանալ տվյալ խոսվածքի կրողների արտաբերական համակարգում ու արտաբերական սովորություններում տեղի ունեցած ինչ-ինչ տեղաշարժերով: Հասկանալի է՝ արտաբերական միտումի առկայությամբ հնչյունական փոփոխությունների վրա կարող են իրենց ազդեցությունը թողնել նաև հնչույթաբանական գործոնները:

[455] Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 29:

[456] ՀԲՆ, էջ 49:

դեպքում էլ հնչյունական յուրահատուկ իրողության դրսևորումը պայմանավորված է տվյալ դիրքերում լարվածություն / թուլություն հատկանիշի գործողությամբ: Եթե շրթնայնացման դեպքում բառասկզբի, ինչպես նաև այդ դիրքում նախորդ բաղաձայնի լարվածությունը պայման է դառնում ձայնավորի արտաբերական յուրահատկության ընդգծման ու շրթնային տարբերակի դրսևորման, ապաքմայնացման դեպքում արտասանական միտումի գործողությանը նպաստում է նախորդ բաղաձայնի թուլությունը և խոչընդոտում՝ լարվածությունը: Այլ կերպ ասած՝ դիտարկված նյութի շրջանակներում ի հայտ է գալիս հնչյունական օրինաչափության ձևավորման երկու ուղի. ա) հնչյունի արտաբերական որևէ հատկանիշ կարող է նախադրյալ դառնալ, որ որոշակի դիրքի ընդհանուր հատկանիշի ազդեցությամբ դրսևորվի նույն հնչույթի դիրքային մեկ այլ տարբերակ. բ) սկիզբ առած արտասանական միտումի ծավալմանը հնչաշղթայում առկա նպաստող և խոչընդոտող պայմանները կարող են ձևավորել միմյանց հակադիր իրավիճակներ:

4.2. *Հ-խ համապատասխանությունը*

Բայազետի բարբառի կարևորագույն առանձնահատկություններից է հին հայերենից ավանդված բառերում բոլոր դիրքերում *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը, օրինակ՝ *հայր – խէր, հինգ - խինգ, շնորհաւոր – շընախաւոր, պահել – պ՚խել, զարհուրել – զախախօրել, սահման – ս՚խմընել* /սահմանել/, *բահ - բ՚ախ, սրահ – սըրախ* ևն: Բարբառային այս հատկանիշը ընդգրկում է խիստ որոշակի տարածք: Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «Նրա սահմանները անցնում են Ոզմ, Մոկս, Ծատախ, Վան, Ուրմիա, Մարաղա, Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Մակու, Բայազետ, Դիադին, Մանազկերտ բնակավայրերով և այնուհետև Վանա լճի հյուսիս - արևմտյան ծովեզրով ձգվում դեպի հարավ՝ ներառնելով Արճեշ, Արծկե, Խլաթ, Բաղեշ բնակավայրերը»[457], իսկ Գ.Ջահուկյանը գրում է, որ «երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում»[458]: Թե՛ Բայազետի բարբառում և

[457] ՀԼՊՔ, էջ 264:

[458] Տե՛ս ՀԲՆ, էջ 267: Ըստ դասակարգման աղյուսակների՝ այս հատկանիշն ունեն Վանի, Դիադինի, Բայազետի, Խոյ-Մարաղայի բարբառները ներկայացնող 11 տարածքներ, նաև Մշո բարբառի 4 տարածքներ, Ջուղայի բարբառի երկու տարածք,

թե՛ համեմատվող խ-ախոս բարբառներում *հ-խ* համապատասխանությունը բացարձակ է և բարբառային փոխազդեցությունների հետևանք լինել չի կարող: *Հ-խ* համապատասխանությունը, այսպիսով, միավորում է Վանի, Խոյ-Մարաղայի, Բայազետի, Դիադինի բարբառները, նաև Մշո բարբառի Արճեշի, Արծկեի, Խլաթի և Բաղեշի խոսվածքները և դառնում բարբառախոս այդ տարածքի համար տարբերակիչ հատկանիշ:

Ուսումնասիրողները որպես կանոն *հ-խ* համապատասխանությունը դիտարկել են իբրև հնչյունափոխության արդյունք և այն մեկնաբանել այդ տեսանկյունով: Հարցին անդրադարձող հեղինակները համոզված են, որ հայերենի նախնական *հ* բաղաձայնը պատմական որոշակի ժամանակահատվածում վերոհիշյալ տարածքի խոսվածքներում վերածվել է *խ*-ի: Հ.Աճառյանը գրում է.«Վանի բարբառի *հ-խ* ձայնափոխությունը իրոք հին է և տեղի է ունեցած արաբների արշավանքից հետո և թուրքերի տիրապետությունից (ԺԱ դար) ավելի առաջ: Այս շրջանին են պատկանում այն փոխառությունները, որոնք ցույց են տալիս *հ-խ* ձայնափոխությունը»[459]: Երևույթն իբրև հնչյունափոխություն են մեկնաբանում նաև Մ.Ասատրյանը[460], Վ.Խաչատրյանը[461], Ռ.Մարկոսյանը[462]: Հարցին ավելի հանգամանորեն անդրադառնում է Հ.Մուրադյանը[463], որը փորձում է պարզել, թե «*հ-խ* փոփոխությունը որ ժամանակի ծնունդ է և ծագումնաբանական ինչ ակունքներ

Թավրիզը, մասամբ նաև՝ Ցզնան և Մարզվանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 51-62): Այս հատկանիշը Արարատյան բարբառի Գառնո, Գեղաշենի, Ակունքի, Կոտայքի, Կաթնաղբյուրի, Բալահովտի խոսվածքներում արձանագրել է Ռ.Մարկոսյանը (տե՛ս ԱԲ, էջ 74-75), սակայն ուսումնասիրողը հաշվի չի առել այն հանգամանքը, որ նշված գյուղերի բնակիչների նախնիները ամբողջովին կամ մասամբ գաղթել են Խոյից, Բայազետից կամ դրանց հարակից շրջաններից (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարանի համապատասխան բաժինները), հետևաբար այդ բնակավայրերի խ-ախոսությունը գալիս է կա՛մ Խոյի, կա՛մ Բայազետի բարբառից, և ուրեմն այդ հատկանիշը Արարատյան բարբառին բացարձակապես հատուկ չէ:

[459] ՔՎԲ, էջ 67: Հ.Աճառյանի այս տեսակետին անդրադառնալով՝ Ա.Ե.Խաչատրյանը իրավացիորեն նկատում է, որ *հ>խ* հնչյունափոխության սկսվելու ժամանակի վերաբերյալ հնարավոր չէ արաբական փոխառությունների վրա հիմնվելով որևէ հաստատ բան ասել, որովհետև հնչյունական օրենքները ժամանակային խիստ սահմանափակվածություն չունեն (տե՛ս Ա.Ե.Խաչատրյան, Հնչյունաբանության ուսումնասիրության սկզբունքները հայ բարբառագիտական աշխատություններում, Հայերենի բարբառագիտական ատլաս, հ. 2, Ե., 1985, էջ 91-135):

[460] Տե՛ս ԽԲ, էջ 52:

[461] Տե՛ս ԴԲ, էջ 51:

[462] Տե՛ս ԱԲ, էջ 75:

[463] Տե՛ս նշվ. աշխ., էջ 262-267:

ունի»[464]: Մատնանշելով միջնադարյան գրավոր աղբյուրներում հանդիպող *հ-խ* փոփոխության օրինակները՝ Հ.Մուրադյանը եզրակացնում է. «Գրավոր առաջին նման տեղեկությունը կա Մագիստրոսի «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ, որտեղ հայերենի բարբառներում առկա հնչյունական շեղումների շարքում նշվում է նաև *հ*-ի փոխարեն *խ*-ի գործածությունը: Մագիստրոսը 11-րդ դարի հեղինակ է, ուստի պետք է ընդունել, որ *հ-խ* անցումը 11-րդ դարից առաջ կատարված երևույթ է»[465]: Մյուս կողմից՝ Հ.Մուրադյանը դեմ է այն ենթադրությանը, թե *հ-խ* փոփոխությունը կյանքի է կոչվել դեռևս հայերենի նախագրային շրջանում: Նա համամիտ չէ Ա.Ղարիբյանի և ապանաև Գ.Ջահուկյանի այն կարծիքին, թե *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը ենթաշերտային երևույթ է, ուրարտերեն լեզվի ազդեցություն[466]: Իրավացիորեն անհամոզիչ համարելով Հ.Աճառյանի տեսակետը հնչյունափոխության կատարման ժամանակի վերաբերյալ՝ Մուրադյանը հավանական է համարում, որ «*հ-խ* հնչյունափոխությունը գործել է այնպիսի ժամանակահատվածում, որի ավարտի ժամանակ դեռևս շատ քիչ արաբական բառեր կային հայերենում և դրանք են, որ ընկել են *հ-խ* հնչյունական օրենքի տակ: Հ-ով արաբապարսկական ծագման մյուս բառերը այս տարածքի բարբառներում մուտք են գործել այդ հնչյունական օրենքի գործառության դադարից հետո և, բնականաբար, *հ*-ն չեն փոխել *խ*-ի»[467]: Ընդհանուր առմամբ ճիշտ այս դիտողությունից հետո Հ.Մուրադյանը հանգում է անհամոզիչ եզրակացության. «Անկախ այս բոլորից, քանի որ *հ-խ* հնչյունափոխությանը ենթարկվում են հին հայերենից *հ*-ով ավանդված բոլոր բառերը, այդ թվում նաև հին փոխառությունները, ինչպես նաև արաբական փոխառությունների մի մասը, հիշյալ հնչյունական օրենքը ժամանակագրորեն ավելի հին լինել չի կարող, քան արաբական տիրապետության սկիզբն է»[468]: Եվ

[464] Նշվ. աշխ., էջ 264:
[465] Նույն տեղում:
[466] Այդ մասին Հ.Մուրադյանը գրում է. «Այս վարկածը, ինչպես տեսնում ենք, խարսխված է սոսկ այն դիտողության վրա, որ նշված երևույթը հատուկ է ուրարտերեն լեզվին և որ նույն օրինաչափությունն ունեցող հայ բարբառների զբաղեցրած տարածքը հիմնականում համընկնում է Ուրարտական պետության և նրան հարակից շրջանների հետ: Կարծում ենք, որ այդքանը բավարար հիմք չի կարող ծառայել նման մի ծանրակշիռ եզրակացության համար» (ՀԼՊՔ, էջ 264-265):
[467] Նշվ. աշխ., էջ 266:
[468] Նույն տեղում:

ապա շարունակում է. «*Հ-խ* հնչյունափոխության գործառության մոտավոր ժամանակը կարելի է դնել 6-8-րդ դարերի սահմանագծում»[469]: Անհասկանալի է մնում, թե ինչու հնչյունական օրենքը չէր կարող իր գործառությունը սկսել ավելի վաղ և դադարել արաբական տիրապետության շրջանում: Բավականին ուշագրավ է, որ Ա.Ղարիբյանը և Գ.Ջահուկյանը *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը համարել են ենթաշերտային ազդեցության հետևանք[470]: Այս տեսակետը կարող է հիմք դառնալ երևույթը նորովի մեկնաբանելու համար: Հակված ենք ընդունելու, որ բարբառներում *հ-խ* համապատասխանությունը իրոք գալիս է նախագրային հայերենի շրջանից: Հնդեվրոպական նախալեզվից տրոհվելու շրջանում հայերենը չէր կարող ներկայանալ իբրև միասնական հնչյունական և քերականական համակարգ ունեցող լեզու, այն պետք է որոշակի ընդհանրություններ ունեցող խոսվածքների խումբ լիներ, որոնք պիտի ունենային իրենց յուրահատկությունները: Դրանցից մեկն էլ, կարծում ենք, որոշ խոսվածքներում (որոնց հիմքի վրա հետագայում ձևավորվել են Վասպուրականի և Պարսկահայքի բարբառները) *հ*-ի բացակայությունը և դրա դիմաց *խ*-ի գործածությունն է եղել: Այս տեսակետը պնդելու համար թերևս կարող է փաստարկ լինել այն, որ հնդեվրոպական լեզուներում գոյություն չունի կայուն և պարտադիր *հ-խ*հակադրություն՝ ռուսերենը չունի *հ*, իսկ ֆրանսերենը՝ *խ*ևն: Կարծում ենք՝ դիտարկվող բարբառները հայերենի այլ բարբառների *հ*-ի դիմաց *խ*ունեցել են թերևս իրենց

[469] Նշվ. աշխ., էջ 267:

[470] Ա.Ղարիբյանը այդ մասին գրում է.«Վանի, Ուրմիայի, Խոյի, Մարաղայի, Դիադինի բարբառներում, Մշո բարբառի հյուսիս-արևելյան հատվածում, Բայազեդի ենթաբարբառում և Նոր Ջուղայի բարբառի քաղաքի խոսվածքում «հ» բաղաձայնի դիմաց արտասանվում է ետնալեզվային շփական «խ» բաղաձայնը: ....«Հ» բաղաձայնը խ-ի վերածելու մեջ հետևողական է միայն Վանի բարբառը: Մյուս բարբառները որոշ դեպքերում շեղումներ են կատարում: .... հնչյունական այդ երևույթը Վանի բարբառը ժառանգություն է ստացել խալդական լեզվից, որն ըստերևույթին չի ունեցել «հ» բաղաձայնը, ինչպես այժմ Վանի բարբառը: Պատահական չէ, որ հնչյունական այդ երևույթը գոյություն ունի բոլոր այն բարբառներում, որոնք շրջապատում են Վանի բարբառը, այսինքն՝ այդ հատկությունը ունեցել են բոլոր այն տոհմական լեզուները, որոնք շրջապատած են եղել Բիայնայի լեզուն և գտնվել են նրա խիստ ազդեցության տակ: Մենակ այդ հատկությամբ չէ, որ այդ բարբառները նման են Վանի բարբառին և նրա միջոցով նաև Բիայնայի լեզվին» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 131): Այս տեսակետին համահունչ է Գ.Ջահուկյանի կարծիքը. «Բառասկզբի *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը, անշուշտ, ենթաշերտային, թերևս, ինչպես կարծում են, ուրարտական ազդեցության արդյունք է, մանավանդ որ այդ երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում» (ՀԲՆ, էջ 267):

ձևավորման ժամանակներից, և ուրեմն դրանցում *հ* > *խ* հնչյունափոխության մասին խոսք լինել չի կարող: Հնչյունական այս համապատասխանությունը վկայում է Վանի, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառների՝ հնից եկող մերձավորության մասին: Մշո բարբառի առանձին բառերում *հ*-ի դիմաց *խ*-ի հանդես գալը[471], ինչպես նաև այդ բարբառի որոշ խոսվածքների խ-ախոսությունը թույլ են տալիս ենթադրել, որ Մշո բարբառում *հ* ~ *խ* համապատասխանությունը արդյունք է ազդեցության:

Պետք է կարծել, որ Բայազետի, Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում *հ* բաղաձայն առաջացել է հետագայում՝ իբրև արդյունք ընդհանուր հայերենում կատարված հնչյունափոխական գործընթացների: Ընդ որում՝ այդ գործընթացները կատարվել են ինչպես լեզվի ներքին զարգացման արդյունքում, այնպես էլ արտաքին ազդեցությամբ: Հայտնի է, որ հինհայերենյան բառասկզբի *յ*-ն միջին հայերենի շրջանում արդեն վերածվել էր *հ*-ի: Հենվելով Ս.Ավագյանի տվյալների վրա[472]՝ Հ.Մուրադյանը եզրակացնում է, որ «Թերևս ամենահնագույն վկայությունը կարելի է համարել Երերույքի 1028թ. մի արձանագրության մեջ ի(յ) նախդիրի փոխարեն, ըստ արտասանության, *հ* գրությունը»[473]: Հայերենի բոլոր բարբառներն ընդգրկած բառասկզբի *յ*>*հ* անցումը կրել է համընդհանուր բնույթ և որևէ բացառություն չի ճանաչում: Ի դեպ, չունենք որևէ օրինակ, որտեղ *յ*-ից առաջանար *խ*-կամ առաջացած *հ*-ն դառնար *խ*: Մեզ հավանական է թվում Գ.Ջահուկյանի այն ենթադրությունը, թե հնարավոր է, որ բառասկզբում հայոց լեզվի զարգացման հին շրջանի վերջերից առաջացել է հավելական շունչ[474], ինչի հետևանքով էլ տեղի է ունեցել *յ*>*հ* անցում: Հավելական շնչի առաջացումը արտահայտվել է նաև ձայնավորով սկսվող բառերում *հ*-ի ավելացմամբ[475]. օրինակ՝ Բ. *հ՛առու, հ՛իրկուն, հ՛էրկէն, հ՛ուս*, Վ. *հիւնթ, հըմէն, հէր, հէ՞ր*, Դ. *հ°նգ°ճ, հ°խպուր, հըմէն, հ°շկ*, Մ.

[471] Տե՛ս ՄԲ, էջ 66:
[472] Տե՛ս Ս.Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Ե., 1973, էջ 325:
[473] ՀԼՊՔ, էջ 229:
[474] Տե՛ս ՀԲՆ, էջ 266:
[475] Հայերեն բարբառներում այս երևույթին հանգամանորեն անդրադարձել է նաև Ն.Սիմոնյանը (տե՛ս Ն.Սիմոնյան, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբա-

հ՛ըմմէն, հ՛ընգնել, հ՛առչի: Հ.Մուրադյանը նշում է, որ տարբեր տարածքների հայերեն բարբառներում բառասկզբում ավելացել են երկու տարբեր հագագներ. մեկը՝ խուլ, իսկ մյուսը՝ ձայնեղ: Խուլ *հ*-ի հավելումը տիպական է արևելյան բարբառներին, իսկ ձայնեղ *հ՛*-ի հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և հարակից այլ շրջանների բարբառներին[476]: Ընդհանրապես այս առումով դրսևորվում է հետաքրքիր մի օրինաչափություն, որը նկատել է Գ.Ջահուկյանը. «....կարևոր է նշել, որ մի շարք խոսվածքներում մենք ունենք ձայնեղ *հ* (յ), որ հանդիպում է հատկապես շնչեղ ձայնեղ բաղաձայններ ունեցող խոսվածքներում. սաենթադրել է տալիս դրանցում շնչեղ սկիզբ՝ և՛ ձայնավորով, և՛ ձայնեղներով սկսվող դեպքերի համար»[477]: Լեզվաբանի կարևորած այս իրողությանը կարող ենք զուգադրել մեկ այլ իրողություն. բառասկզբում խուլ *հ*-ի հավելում նկատում ենք հատկապես այն խոսվածքներում, որոնք բառասկզբում *բ,գ,դ,ձ,ջ* ձայնեղների դիմաց ունեն խուլ *պ,տ,կ,ծ,ճ,* որը դրանցում ենթադրել է տալիս խուլ սկիզբ: Պարզ է դառնում, որ բարբառների բառասկզբում խուլ կամ ձայնեղ *հ*-ի հավելումը պայմանավորված է բարբառում բառասկզբի արտասանական յուրահատկությամբ. եթե բարբառի բառասկզբում ձայնեղ հպականներն ու հպաշփականները շնչեղ են, ապա հավելական *հ*-ն ձայնեղ է (ձայնեղ *հ*-ն ոչ այլ ինչ է, եթե ոչ շունչ և ձայն), իսկ եթե վերոհիշյալ բաղաձայնները խլացել են, ապա խուլ է և հավելական *հ*-ն: Եթե հավելական ձայնեղ *հ*-ն բավականին կայուն հանդես է գալիս Մշո և Բայազետի բարբառներում, ապա հավելական խուլ *հ*-ն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում ավելի քիչ բառերում է հանդես գալիս, իսկ առանձին դեպքերում էլ նկատվում է բառասկզբի արմատական *հ*-ի անկում. օրինակ՝ *հաւ ատալ - աւ ատալ* (Վ., Խ), *հիւ ս - ու սի* (Վ.), *հայվան - °յվան* (Վ.), *հավար - ավար* (Վ.), *հունձ – ունձ* (Խ.): Խ-ախոս բարբառներում *հ*-ի առաջացման գործընթացին նպաստել են նաև արաբական, թուրքական և պարսկական ազդեցությունները: Հետաքրքրական է, որ արաբական սակավաթիվ փոխառություններում *հ*-ի դիմաց ունենք *խ*. օրինակ՝ *հալալ – խալալ*

նությունները, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Ե., 1979, էջ 188-248):

[476] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 315:

(Բ., Վ.), *հարամ – խարամ* (Բ., Վ.), *հեքիմ – խէքʲիմ* (Վ.), *հինա- խին°* (Բ.,Վ.) ևն: Արաբական փոխառությունների բացարձակ մեծամասնության մեջ *հ*-ի դիմաց ունենք *հ* դիտարկվող բոլոր բարբառներում. օրինակ՝ *հ°զըր, հ°յվ°ն, հ°րիֆ, հալ* ևն[478]: Կարծում ենք՝ սկզբնական շրջանում, երբ խ-ախոս բարբառները չեն ունեցել *հ*, արտասանական բազայի ազդեցությամբ սակավաթիվ բառերում *հ>խ* անցում կատարվել է, բայց աստիճանաբար բարբառներում սովորական է դարձել *հ*-ի արտասանությունը, որի հետևանքով էլ *հ>խ* անցումը դադարել է: Արաբական փոխառություններին զուգընթաց կատարվող կամ հաջորդող պարսկական նոր և թուրքական կամ միջնորդավորված փոխառություններում *հ>խ* փոփոխություն տեղի չի ունեցել, որովհետև խ-ախոս բարբառներում արդեն սովորական էր նաև *հ*-ի արտասանությունը, օրինակ՝ *հ°լ բ°թ* (արաբ., թրք.), *հախ* (արաբ., պրսկ.), *համ* (պրսկ.), *հ°յ °թ* (պրսկ., թրք.), *հավէս* (արաբ., պրսկ., թրք.), *հէչ* (պրսկ.), *հուն°ր* (պհլ., պրսկ.) ևն: Այնուամենայնիվ, պետք է կարծել, որ խ-ախոս բարբառներում *հ*-ի գոյացման հարցում հիմնական դերը խաղացել է բառասկզբում շնչի հավելումը, որի վկայություն կարող է լինել այն հանգամանքը, որ, օրինակ, Բայազետի բարբառում բառամիջի և բառավերջի դիրքերում հետգրաբարյան գրական և օտար փոխառություններում *հ* հնչյուն այդպես էլ չի գործառել: Նշված դիրքերում նախնական *հ*-ի դիմաց ունենք ոչ *խ* և ոչ էլ *հ*, այլ *յ* կամ ոչինչ. օրինակ՝ *ագահ - °քայ, գոհ - գ՛օյ, դահլիճ - դ՛այլիճ, զահլա- զ°յլ°, զահրումար - զ°յրում°ր, թագուհի – թաքույի, նախագահ – ն°խակա, շահ – շ°յ, պահեստ– պ°յեստ, ջահել – ջ°յէլ, սահման – ս°յման* ևն: Այսպես է վիճակը նաև Դիադինի բարբառում[479]: Բայազետի բարբառում բառամիջում կամ բառավերջում *հ* հնչյունի դրսևորումը մասնակիորեն հնարավոր է դարձել նոր գրական և օտար փոխառություններում. օրինակ՝ *°հակին, մըհանա, դըհա, պ°հակ, զէհ, նըհախ* ևն[480]: Ասվածից կարելի է եզրակացնել, որ Վանի, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում հինհայերենյան *հ*-ի դիմաց

---

[477] ՀԲՆ, էջ 266:

[478] Վանի բարբառում փոխառյալ բառերի սկզբում *հ*-ի և *խ*-ի դրսևորումների նույն կարգի իրողություն արձանագրել է Հ.Աճառյանը (տե՛ս ՔՎԲ, էջ 66-67):

[479] Տե՛ս ԴԲ, էջ 147-150: Հատկանիշը բնորոշ է արևմտյան մի շարք վայրերի (տե՛ս ՀԲՆ, էջ 51-62):

[480] Այս *հ*-ն խուլ հնչյուն է և բառասկզբի *հ*-ի դիրքային տարբերակ:

խ-ի առկայությունը հնչյունափոխության հետևանք չէ. այս բարբառները հ-ի դիմաց *խ* ունենալու իրենց հատկանիշը ժառանգել են թերևս հայերենի հնագույն շրջանից գործառող բարբառային վիճակից, որը *հ* բաղաձայն չի ունեցել, այդ բաղաձայնը այս բարբառներում առաջացել է աստիճանաբար՝ ընդհանուր հայերենի բառասկզբում կատարված արտաբերական փոփոխությամբ և փոխառյալ բառերի ազդեցությամբ: Պետք է ենթադրել, որ հայերենում, հետևաբար և խ-ախոս բարբառներում, *յ* > *հ* անցումը սկսվել է 11-րդ դարից առաջ, ընդ որում՝ բառասկզբում ձայնավորից առաջ *հ*-ի հավելումը և *յ*>*հ* անցումը նույն գործընթացի՝ բառասկզբում շնչի հավելման դրսևորումներ են: Հավելական *հ*-ի խուլ կամ ձայնեղ լինելը պայմանավորված է տվյալ բարբառի բառասկզբի արտասանական յուրահատկությամբ:

4.3. *Հպական ու հպաշփական բաղաձայնների զուգորդելիությունը բառասկզբում՝ ըստ ձայնի և աղմուկի հարաբերության*

Հպականներն ու հպաշփականները Բայազետի բարբառի բառասկզբում հանդես են բերում զուգորդելիության որոշակի յուրահատկություններ. հպական կամ հպաշփական որևէ բաղաձայնի միշտ չէ, որ կարող է հաջորդել նույն կարգի ցանկացած այլ բաղաձայն[481]: Այդ օրինաչափությունները տարբեր են հինհայերենյան և նոր բառաշերտերում: Բայազետի բարբառի հինհայերենյան բառաշերտում գործառում են բառասկզբում հիշյալ բաղաձայնների զուգորդման հետևյալ օրինաչափությունները.

ա) Բառասկզբի շնչեղ ձայնեղ բաղաձայններին որպես կանոն հաջորդում են շնչեղ խուլ հպականներ ու հպաշփականներ (բ՛աց, բ՛ոց, բ՛ութ, բ՛ուք, գ՛աթա, գ՛ացի, ձ՛ութ, գ՛ութան, ձ՛էթ): Ձայնեղներն այս դիրքում բացառված են: Այստեղ նախնական ձայնեղներն էլ են շնչեղ խլացել, ինչպես՝ *բ՛ախէլական* < *բաբելական, գ՛աքաթ* < *գագաթն, գ՛ոք* < *գոգ, դ՛աթար* < *դադար, ջ՛ոչ* < *ջոջ* ևն: Այն, որ բար-

[481] Բառասկզբի հպական կամ հպաշփական երկու բաղաձայնների միջև հանդես եկող ձայնավորը որևէ դեր չունի զուգորդելիության օրինաչափությունների ձևավորման գործում:

բառումս բառասկզբի շնչեղ ձայնեղին չի կարող հաջորդել ձայնեղ հպական կամ հպաշփական, հավաստվում է ոչ միայն օրինակների բացակայությամբ, այլ նաև հնչյունափոխական հակադարձ իրողության առկայությամբ: Այսպես, *գիտենալ* բայը բարբառումս պետք է դրսևորվեր շնչեղ ձայնեղ *գ՛* հնչյունով, մանավանդ որ նույն արմատով ունենք *գ՛իտունիկ* բառը: Սակայն բառամիջի *ե* ձայնավորի անկումով *տ*-ն հայտնվել է *ն*-ի հարևանությամբ ու ձայնեղացել, և որպեսզի չձևավորվի անհամատեղելի հաջորդականություն (շնչեղ ձայնեղ հպական – ձայնեղ հպական), նախորդ բաղաձայնը վերածվել է պարզ ձայնեղի (գ՛իտենալ > գ՛իտնալ > գիդնալ), ու չնայած այնուհետև տեղի է ունեցել նաև *ն*-ի անկում, բաղաձայնական հաջորդականությունը պահպանել է իր ձեռքբերած որակը՝ *գիդալ*:

Շնչեղ ձայնեղներին սակավ դեպքերում հաջորդում են պարզ խուլեր (բ՛օպիկ, գ՛աճ, գ՛ետ, գ՛էտին, դ՛ատել /վատություն անել/, ձ՛ուկ, ջ՛օկ, գ՛իտունիկ):

բ) Բառասկզբի շնչեղ խուլերին նույնպես որպես կանոն հաջորդում են շնչեղ խուլեր (թափ, թեք, թըթու, չափ, ցեց, փափուկ, փէթ°կ, փըչել, քիթ): Այս դիրքում պարզ խուլեր շատքիչ են հանդիպում (փաստըտել, թիկունք, քաճ, քըծիբ), մանավանդ որ նախնական խուլերը հիմնականում ձայնեղացել են (ցաճըր, փագ, փէդ, փիդել, փըդել):

գ) Բառասկզբի պարզ խուլերին առավել հաճախ հաջորդում են նույն կարգի բաղաձայններ (ծ°կ, ծէծել, ճիճըռնեկ, ծըպկ, կ°կուդ, կէծակ, կ°տու, կըճեփ, ճ°կաթ, ճուտ, պ°կաս, պ°պընձվել, պ°ճառ, պըտի, տ°կ, տ°պկել): Ավելի քիչ են այն դեպքերը, երբ հաջորդող բաղաձայնի դերում շնչեղ խուլեր են (ծ°փ, ծեփ, ծոց, կ°թ, կըթան, կոթ, ճըչալ, ճութ, տ°փակ, տըքալ, կութ): Սակավ բառերի այս դիրքի նախնական ձայնեղները վերածվել են շնչեղ խուլերի (պ°քել, տէքըր, ծեք, ճըքնավոր), սակայն ձայնեղացման հետագա գործընթացը ընդգրկել է նաև այս դիրքի խուլերը որոշ բառերում (ծըձաղ, կ°դղել, ճըբըղվել, ճըբուռ, պ°դըռել, պ°դասխան, պ°դարաք):

Այսպիսով, հինհայերենյան բառաշերտի բառասկզբում օրինաչափեն հետևյալ հաջորդականությունները՝ շնչեղ ձայնեղ+շնչեղ խուլ (բ՛աց), շնչեղ խուլ+շնչեղ խուլ (թափ), պարզ խուլ+պարզ խուլ (տիկ), պարզ խուլ+շնչեղ խուլ (կութ), հնչյունափոխությունների

հետևանքով ձևավորված հաջորդականություններ են՝ շնչեղ խուլ+ձայնեղ (փագ), պարզ խուլ+ձայնեղ (ծըձաղ): Սակավ դեպքերում իրացվող հաջորդականություններ են՝ շնչեղ ձայնեղ+պարզ խուլ (ձ՛ուկ), շնչեղ խուլ+պարզ խուլ (քըծիբ), իսկ շնչեղ ձայնեղ+ձայնեղ հաջորդականությունը (*բ՛աբ) բացառված է:

Ընդհանուր առմամբ երևան է գալիս բառասկզբի դիտարկվող բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման մի օրինաչափություն, ըստորի՝ որպես կանոն զուգորդելի են լարվածությամբ նույնական կամ մոտ հնչյուններ[482], կամ ավելի լարված հնչյուններին հաջորդում են պակաս լարված հնչյուններ, այլ կերպ ասած՝ ավելի սովորական է բառասկզբի բաղաձայնական հաջորդականություններում արտասանական լարվածության պահպանումը կամ նվազումը, մինչդեռ լարվածության աճը անսովոր է կամ հազվադեպ: Ընդ որում՝ այդ օրինաչափությամբ կարող են բացատրվել ինչպես շնչեղ ձայնեղներից հետո ձայնեղների շնչեղ խլացման, այնպես էլ խուլերից ու շնչեղ խուլերից հետո խուլերի ձայնեղացման գործընթացները (երկու դեպքում էլ տեղի է ունեցել բաղաձայնի անցում ավելի պակաս լարվածության հնչյունի՝ բ>փ, պ>բ), մանավանդ որ հակառակ գործընթացներ (շնչեղ խուլերի ձայնեղացում, ձայնեղների խլացում) տեղի չեն ունեցել:

Շրջակա բարբառներից որևէ մեկում բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման կամ հնչյունափոխական իրողությունների դրսևորման՝ արտասանության լարվածությամբ այսպիսի պայմանավորվածություն չենք նկատում: Սակայն Բայազետի բարբառում վերհանված իրողությունները թույլ են տալիս ավելի ընդհանրական բնույթի որոշ եզրահանգումներ կատարել:

1. Գրաբարի բառապաշարի՝ ձայնեղ հպականներով ու հպաշփականներով սկսվող բառերի դիտարկումը[483] ցույց է տալիս, որ ընդամենը բնիկ սակավաթիվ բառերում (գոգ /ասա՛/, ձագ, գէջ, դադար, դեղևել) է

[482] Ա.Հ.Խաչատրյանը ըստ լարվածության հատկանիշի կատարում է բաղաձայնների այսպիսի խմբավորում. «1. Ուժեղ (լարված) խուլեր՝ պ, տ, կ, ծ, ճ, 2. թույլ ձայնեղներ՝ բ, գ, դ, ձ, ջ, 3. թույլ շնչեղներ՝ փ, թ, ք. ց, չ, 4. լարված խուլ շփականներ՝ ֆ, ս, շ, խ, հ, 5. թույլ ձայնեղ շփականներ՝ վ, զ, ժ, ղ» (Ա.Հ.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, էջ 91): Ըստ Գ.Ղափանցյանի՝ շնչեղ ձայնեղները ավելի թույլ, այսինքն՝ պակաս լարված են, քան ձայնեղները (տե՛ս Գ.Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ.1, էջ 58):

[483] Ըստ ՀԱԲ-ի ընձեռած նյութի:

երկրորդ բաղաձայնը ձայնեղ հպական կամ հպաշփական: Ընդ որում՝ *դադար* և *դեղևել* բառերը կրկնավորներ են՝ *դար-դար*[484], *դև-դև*[485]: Նման հաջորդականություններ կան բնաձայնական մի քանի բառում (բաբէ, բաջաղ, բբել, բբչալ, բջել, դդիւն)[486], գործածական մի շարք փոխառյալ (բագին, բադ, բդեշխ, գագաթն, գուբ) ու չստուգաբանված բառերում (բիբ, բջիջ, գաբ, գգուել, գոգ, դագաղ, դդում, դեգերել, ձագար, ձիգ, ջոջ), սակայն ավելի հաճախ հանդիպում են միանգամյա կամ հազվադեպ վկայություն ունեցող փոխառյալ, անհայտ նշանակությամբ ու ծագումով, միայն մեկ երկում հանդիպող և նման այլ բառերում (բաբ, բաբայ, բադիան, բբղօշ, բդեդ, բդուզ, բեդեկ, բիբկան, բոբողոն, բոբ, գադիշ, գբայաթ, գեդդուր, գիգ, գոբաղին, գուբբայ, գուգ, դաբրան, դագինիճ, դգուռն, դեգան, դոդան, դուդան, ձագի, ջաբոցել ևն): Հասկանալի է, որ բառերի վերջին խումբը որևէ կերպ չի կարող դեր խաղալ գրաբարի բառասկզբի հնչյունական հաջորդականությունների ձևավորման առանձնահատկությունները մեկնաբանելիս, սակայն բնիկ, նաև փոխառյալ ու չստուգաբանված բառերում հաջորդող ձայնեղ բաղաձայնների խիստ սակավությունը մեզ թույլ է տալիս ընդհանրություն տեսնել Բայազետի բարբառի և գրաբարի բառասկզբի հնչյունական հաջորդականությունների ձևավորման օրինաչափություններում և ընդունելի համարել այն տեսակետը[487], համաձայն որի՝ գրաբարի բառասկզբում գործածվել են շնչեղ ձայնեղ հպականներ ու հպաշփականներ[488], որոնցից հետո, ինչպես Բայազետի բարբառում, ձայնեղ հպականների ու հպաշփականների գործառությունը արտաբերականորեն խոչընդոտվել է:

2. Հ.Մուրադյանը բառամիջում ու բառավերջում հայերենի ձայնեղների շնչեղ խլացումը համարում է թերևս այլ հնչյունափոխական երևույթների մեջ ամենահինը, «որ տեղի է

---

[484] Տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 610-611:

[485] Տե՛ս նշվ. աշխ., էջ 645:

[486] Բայազետի բարբառում բնաձայնական բառերի սկզբում հանդես են գալիս պարզ ձայնեղներ, ինչպես՝ *բօռալ, գըռգըռալ, դընդընալ, բըռալ, բըռբըռալ, բըլբըլալ* և այլն:

[487] Ըստ Գ.Ջահուկյանի՝ «Քանի որ ամենից ավելի հավանական է ենթադրել, որ գրաբարի հիմքում ընկած են եղել Տարոնի և Այրարատի արտասանական նորմաները, ուստի և պետք է կարծել, որ գրաբարի հիմքում ընկած էր շնչեղ-ձայնեղ արտասանությունը» (ՀԲՆ, էջ 263):

[488] Կարծում ենք՝ ինչպես Բայազետի բարբառում, գրաբարում ևս այս օրինաչափությունից բացառություն են կազմել ձայնարկություններն ու բնաձայնական բառերը՝ իրենց սկզբում ունենալով ձայնեղներ:

ունեցել դեռևս այն ժամանակներում, երբ ձայնեղները շնչեղ արտասանություն ունեին նաև բառամիջի և բառավերջի դիրքերում»[489], և այդպիսով փորձ է արվում հիմնավորելու ձայնեղների շնչեղ խլացումը՝ ենթադրվող խլացման փոխարեն: Մինչդեռ Բայազետի բարբառում մեր դիտարկած՝ բառի արտասանության ընթացքում արտաբերական լարվածության աստիճանական նվազման օրինաչափությունը[490] թույլ է տալիս ենթադրել, որ հայերենի բառամիջում և բառավերջում ձայնեղների պատմականորեն շնչեղ խլացումը նույնպես կարելի է բացատրել լարվածության թուլացմամբ, եթե նկատի ունենանք, որ շնչեղ խուլերը ձայնեղների համեմատ պակաս լարված հնչյուններ են: Ուստի տվյալ դիրքերում շնչեղ խլացումը ամենևին էլ չի ենթադրում նախնական շնչեղ ձայնեղների առկայություն: Մյուս կողմից, հիշյալ օրինաչափության գործողության պայմաններում ձայնեղները չէին կարող վերածվել ավելի լարված խուլ բաղաձայնների: Այսպիսով, հայերենի բառամիջում և բառավերջում նախնական ձայնեղների պատմական փոփոխությունը և շնչեղ խուլերի վերածումը հետևանք է բառի արտասանության ընթացքում արտաբերական լարվածության աստիճանական թուլացման:

Ինչ վերաբերում է Բայազետի բարբառի նոր բառաշերտին, ապա այստեղ գործում են այլ օրինաչափություններ.

ա) Բառասկզբի ձայնեղներին հաճախհաջորդում են նույն որակի բաղաձայններ (բ°բ°, բաջանաղ, բէգրել, բիձ°, գ°դ°, գօջի, ձ°ձ°, ջ°գ, ջ°ջի, ջէբ, ջիգ°ր), բայց այդ դիրքում սակավ չեն նաև շնչեղ խուլերը

[489] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 299:

[490] Ի դեպ, արտասանության թուլացման վերաբերյալ խոսել է նաև Է.Աղայանը, սակայն նա այդ երևույթը դիտարկում է միայն բառավերջում՝ պայմանավորված բառերի միջև դադարին արտասանական ապարատի նախապատրաստումով: «Այդ նախապատրաստման հետևանքով էլ, ահա,- գրում է Է.Աղայանը,- վերջին հնչյունի արտասանության մեջ առաջանում է որոշ թուլացում, կամ ուղղակի բառի արտասանությունը դադարում է նախքան վերջին հնչյունն արտաբերելը: Եթե թուլացումն արտահայտվում է միայն միայն օդի հոսանքի ուժի թուլացմամբ, ապա դա կարող է առաջ բերել ոչ թե հնչյունի փոփոխություն, այլ միայն հնչյունի ուժգնության փոփոխություն, բայց եթե բառավերջի հնչյունը ձայնեղ է, այդ թուլացմանը հաճախ կարող է միանալ նաև ձայնալարերի տատանումների դադարումը ավելի շուտ, քան հարկավոր է, որ պայմանավորված է դարձյալ բառավերջի դադարին նախապատրաստվելով: Այս դեպքում, բնականաբար, բառավերջի ձայնեղ բաղաձայնը զրկվում է ձայնից, որի շնորհիվ էլ վերածվում է խուլի: Այդ երևույթը հիանալի կերպով կարելի է ցուցադրել ռուսերենում, ուր բառավերջի ձայնեղներն արտասանվում են իբրև խուլեր» (Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 266):

(բաթմիշ, բէչ°, դաչա, դուք°ն, դիք, դօփիկ) և պարզ խուլերը (բակ, բատարէ, բըկըռտալ, բիկ, դակուռկա, գուտաբ):

բ) Շնչեղ ձայնեղներին նույնպես ավելի հաճախ հաջորդում են նույն որակի բաղաձայններ (թաթ, թ°փուկ, թ°ք, չափալաղ, չ°ք, չըքել, չօփ, ցեփ, ցըփնել, փաթուսխա, փաչա, ք°փ°ն°կ, ք°քուլ, քէչ°, քօք): Այս դիրքում հազվադեպ չեն ձայնեղները (թ°դ°, չաբալամիշ, չ°գուչ, չ°դըր, ցիգան, փէջ, փիձել, փուդ, քըջուջ), բայց սակավ են հանդիպում պարզ խուլերը (թէտկել, չէտվեր, չօտկ, փէճատ, քօծ):

գ) Թեև պարզ խուլերից հետո նույնպես առավել հաճախադեպ են նույն որակի բաղաձայնները (ծըպտուն, կ°կավորել, կուճուռել, ճըտել, ճիկ, ճիճըռնեկ, պեծ, պըտուկ, պուճաղ, պուպուլ, տըկըռ, տուճ), բայց սովորական են նաև շնչեղ խուլերը (ծըփել, կ°չաղ, կ°փաղ, կըփչոն, ճըփճըփալ, ճոթ, պ°չել, պէչէնի, պօթ, տըփել) և ձայնեղները (ծըգլըվըզել, կըդի, ճըբռուկ, ճըգըռել, պ°դայական, պուդրի, տըգլոզ):

Փաստորեն, նոր բառաշերտում թեև ավելի զուգորդելի են ըստ ձայնի և աղմուկի նույնական հպականներն ու հպաշփականները, սակայն ըստ այդ հատկանիշի զուգորդելիության սահմանափակումներ հիմնականում չկան: Միայն շնչեղ խուլերից հետո դիրքը սակավ գործածական է մնացել պարզ խուլերի համար:

Բայազետի բարբառի հինհայերենյան և նոր բառաշերտերում բառասկզբի դիտարկվող բաղաձայնական հաջորդականությունների դրսևորումների զուգադրումը, այսպիսով, երևան է հանում առավել ընդհանուր հետևյալ իրողությունները.

ա) երկու դեպքում էլ ավելի զուգորդելի են ըստ ձայնի և աղմուկի հարաբերության նույնական հպականներն ու հպաշփականները, բացառություն են կազմում շնչեղ ձայնեղները, որոնք հանդես են գալիս միայն բառասկզբում.

բ) եթե հինհայերենյան բառաշերտում պարզ խուլեր սակավ էին հանդիպում շնչեղ ձայնեղ և շնչեղ խուլ հպականներից ու հպաշփականներից հետո, ապա նոր բառապաշարում ձայնեղներից հետո խուլերը սովորական են, սակայն սակավ են հանդես գալիս շնչեղ խուլերից հետո.

գ) եթե հինհայերենյան բառաշերտում դիրքի կամ բաղաձայնների արտաբերական լարվածությունը էական նշանակություն ունի բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման, նաև հնչյունափոխական երևույթների համար, ապա նոր բառաշերտում սահմանափակումներ հիմնականում չեն գործում:

5. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր բարբառ շարունակ փոփոխվում և զարգանում է, և համապատասխան գործընթացներն ընդգրկում են բարբառային խոսքի բոլոր, այդ թվում և՝ հնչյունական մակարդակները: Միաժամանակ, իր գործառության յուրաքանչյուր պահի ամեն մի բարբառ ունի խոսքի կառուցման պատմականորեն ձևավորված իր օրինաչափությունները, հնչյունաբանական առումով՝ արտասանական բազայի յուրահատկությունները, կայուն հնչյունական օրենքներն ու հնչյունական շղթայի ձևավորման օրինաչափությունները: Հնչյունական մակարդակում դրսևորվող փոփոխությունները կարող են պայմանավորված լինել արտասանական բազայում ի հայտ եկող նոր իրողություններով, արտասանությունը հեշտացնելու մղումներով, արտաբերական այլ հանգամանքներով, այլ լեզուների և բարբառների ազդեցություններով: Մյուս կողմից՝ բարբառում ձևավորված և կայուն գործառող հնչյունական օրենքներն ու օրինաչափությունները, նաև արտասանական բազան ներկայացնում են բարբառային հնչաշղթայի կառուցման յուրահատկություններ, որոնք հիմք են դառնում բառաթեքման ու բառաբարդման արդյունքում տեղի ունեցող հնչյունական փոփոխությունների: Այսպիսով, բարբառային հնչյունափոխական երևույթները դիտարկելիս անհրաժեշտ է առանձնացնել երկու կարգի իրողություններ՝ ա) պատմական (կամ կատարված) փոփոխություն, բ) գործող օրինաչափություն, որ կարող է պայման դառնալ հնչյունափոխությունների՝ բառաթեքման, ածանցման ու բառաբարդման, հնչաշղթայի հարևան միավորների սերտարտասանության ժամանակ:

5.1. *Պատմական հնչյունափոխություն*

Այսպիսի փոփոխությունները կարող են ունենալ և՛ համակարգային, և՛ մասնավոր բնույթ: Համակարգային բնույթ ունեն հետևյալները:

Հնչյունական նոր միավորների առաջացում

Ժամանակի ընթացքում Բայազետի բարբառի հնչյունական համակարգում հայտնված նոր իրողություններ են °ձայնավորը, *հ՛*, *ֆ* և *կ՛* բաղաձայնները: Սրանցից °-ն և *ֆ*-ն ձևավորում են հնչյունային նոր հակադրություններ՝ °-*ա*, *ֆ*-*վ*, *կ՛*-ն դրսևորվում է իբրև *կ*-ի՝ սահմանափակ թվով բառերում գործառող դիրքային տարբերակ, իսկ *հ՛*-ի միջոցով իրացվում է համակարգում առկա հնարավորությունը:

Երկբարբառների պարզեցում[491]

Բայազետի բարբառում երկբարբառների փոփոխություններն ընթացել են նույն կերպ, ինչ մյուս բարբառներում: Դրանց հետ կապված՝ ուշագրավ են մի շարք իրողություններ: Այսպես, *այ*>*է* հնչյունափոխության[492] (էծ, կէծակ, քէլալ, փէլփլալ) ավարտից հետո բարբառ մուտք գործած բառերում բաղաձայնից առաջ հանդես եկող *այ* / °*յ* / °*յ* կապակցությունը գործառում է իբրև երկհնչյուն (խայտառակ, բայղուշ, °յլանդակ, մ°յկա, զ°յլ°, հ°յվ°ն)[493]: *Այ* > *է* հնչյունափոխության արձագանքը վերջնամասնիկ ստանալիս պահպանել են հնում *այ* կապակցությամբ ավարտվող բառերը[494] (տղատղէս, տղէն)[495], ինչպես նաև *ա* / °-ով վերջացող նոր բառերը՝ առաջինների օրինակով (կըս°-կըսէն, կըսէք, բալա-բալէս, բալէքը, բուտկա – բուտկէն, բուտկէք): *Այ* երկբարբառը *ե*-ի է վերածվել *ժեռ*

[491] Երկբարբառների՝ պարզ ձայնավորի վերածվելու միտումը սկիզբ էր առել գրաբարի ետդասական շրջանում և, ինչպես նշվում է, «հետագա դարերում սկսում է ավելի ծավալվել և ընդհանրանալ՝ հայերենի բանավոր խոսակցական լեզվի առանձին տարբերակներում: Միջին հայերենի ժամանակաշրջանում այդ փոփոխությունները, որոշակի օրինաչափություններով, արդեն ավարտված իրողություններ են» (Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության /այսուհետ՝ ԱՄԳՀՊ/, հ.Ա, էջ 90):

[492] *Այ* երկբարբառի պարզեցումը սկսվել էր միջին հայերենի նախորդ շրջանում, ընդ որում՝ արևմտյան բարբառներում առավելաբար տեղի է ունեցել *այ*>*ա* անցում, իսկ արևելյաններում՝ *այ*>*է* (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 91): Բայազետի բարբառին մերձավոր բոլոր բարբառներում տեղի է ունեցել *այ*>*է* անցում:

[493] Համանման իրողություն առկա է դիտարկվող մյուս բարբառներում ևս (տե՛ս ԱԲ, էջ 64, ՄԲ,, էջ 38, ԽԲ, էջ 31, ՔՎԲ, էջ 47, ԴԲ, էջ 32:)

[494] Այս իրողությունը Վանի և Արարատյան բարբառներում արձանագրել է Հ.Աճառյանը (տե՛ս ՔՎԲ, էջ 47):

[495] Իրողությունը նկատվել է նաև միջին հայերենում, որից եզրակացվել է, որ *այ*>*է* անցումը ավելի հին երևույթ է, քան բառավերջի բաց վանկում *յ*-ի անկումը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 93):

(ժայռ), *քելք* (քայլք), *գ՛ըլխվեր*[496] (գլխիվայր) բառերում, *ա* է դարձել *փայցեղ* (փայծաղն), *կէսրար*[497] (սկեսրայր) բառերում: *Աւ>օ* օրինաչափ փոփոխությունից[498] (օg, օքուդ, °նօթի, խօսալ, կ°ոօտ, ծ°նօթ, մօտիկ, °ղօթկ) բացառություն են կազմում *հ՛առավոտ* և *աշ°շտոն* բառերը՝ իրենց *ո* հնչյունով: *Նաւթ* ձևի դիմաց ունենք *ն°ֆտ*[499], իսկ *աղաւնի* բառի դիմաց՝ *յեղվընեկ*[500]: Բացի այդ, *աւ*-ի դիմաց *ախ* է հանդես գալիս *թախտըփել* (Վ. թախթփել, Ա. թախտըփէլ, Ալ. թախտըբել, Դ. թախտըպել) ձևում: Ըստ Հ.Աճառյանի՝ այս դեպքում տեղի է ունեցել փ>ւ >խ անցում՝ թափթափել >թաւ թափել >թախթփել[501]: *Եա>ե* փոփոխությունից[502] (կօրեկ, վառեկ, gօրեն, լեռթ, մեռել) շեղումները երկու կարգի են. ա) *եա>է*՝ անցյալ դերբայից առաջացած վաղակատարի ձևերում (գրէր եմ, ես, ենք, էք, են, ի, իր, էր, ինք, իք, ին)՝ բացառությամբ վաղակատար ներկայի եզակի թվի երրորդ դեմքի (գ՛ըրեր ա), բ) *եա>ա՝* հրամայականի եզակի թվում (գրեա՛ - գ՛ըրա, պահեա՛ - պ°խա՛)[503], *իրեար – հ՛իրար*[504], *լուսնեակ – լուսնակ* ձևերում: Գրական լեզվից, այլ լեզուներից կատարված նոր փոխառություններում *յա* ունենք բառասկզբում և բառամիջում (յավաշ, յաշիկ, կյ°նք, մ°դյան, °դյալ, կօնյակ): Համեմատվող բոլոր բարբառներում *եա*-ի դիմաց ունենք *է*, բացի Դիադինի բարբառը, որը Բայազետի բարբառի պես ունի *ե* (լեռթ, կորեկ, gօրեն): Վաղակատարում Վանը և Դիադինը ունեն *եր* (Վ. կիրեր, պիրեր, Դ. գ՛ըրեր, մեռեր), Մուշը՝ *էր* (գ՛ըրէր, կէրէր), իսկ Արարատյանը՝ *էլ* (գ՛ըրէլ): Եզակի հրամայականում որոշ բայերի դեպքում Մուշը ևս *եա*-ի դիմաց ունի *ա* (դ՛իզա՛), Արարատյանը՝ ի կամ ա (գ՛ըրի՛/գ՛ըրա՛): *Եւ, իւ* երկբարբառների դիմաց բարբառումս որպես կանոն ունենք *ու*,

---

[496] Մյուս բարբառներում այս բառերը ևս ունեն *է*:

[497] Այս ձևի դիմաց Վանը, Դիադինը, Մուշը ունեն *կէսրէր*, Խոյ-Մարաղան՝ *կ՚էսրար*, Արարատյանը՝ *կեսառ*:

[498] Միջին հայերենում այս անցումը համատարած բնույթ էր կրում (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 94):

[499] Մշո բարբառում՝ *նավթ* կամ *նըվթ*, Խոյ-Մարաղայի բարբառում՝ *ն°ֆտ*.

[500] Վանի բարբառում՝ *յէղունիկ*, որի նախաձևը, ըստ Աճառյանի, գուցե **եղօնիկ* ձևն է (տե՛ս ՔՎԲ, էջ 49), Խոյ-Մարաղայի բարբառում՝ *յէղունիկ՚*, Դիադինի բարբառում՝ *յեղունեկ*:

[501] Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 164-165, ինչպես նաև՝ ՔՎԲ, էջ 94:

[502] Միջին հայերենի խոսակցական տարբերակների համար ընդհանուր՝ *եա*-ի պարզեցումը արձանագրվել է դեռևս 10-11-րդ դարերի սկզբնագիր աղբյուրներում (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 98):

[503] Այսպես է նաև Դիադինի բարբառում:

ինչպես՝ °*լ ուր, հ՛ արուր* (նաև՝ հարիր, խարիր), *հ՛ ախարուր, խուս, սուն, ձ՛ ուն, ճուղ*: Այդպես նաև՝ *ութիւն* ածանցում. *հ՛ ընգերութուն, բ՛ արէգմութուն*: Երկբարբառի դիմաց *ե* ունենք *գ՛ եղ, մեռոն* բառերում, իսկ *յ եղ* բառում՝ *յ ե*[505]: Երկբարբառի դիմաց *ի* ձայնավոր ունենք *հ՛ իր* (իւր), *կիր°կի* (կիւրակէ), *հարիր/խարիր* ձևերում: Ծրջակա բարբառներում, բացի Արարատյանը, *իւ*-ի դիմաց ավելի հաճախ առկա է *ու* կամ դրան մոտ հնչյունական կազմություն[506]: *Ու* ունենք նաև *ոյ* երկբարբառի դիմաց[507] (բ՛ ուն, լուս, քուր, պ°դրուք, կ°պուտ, ճըկութ, բ՛ ուս, ըզգուշ)[508]: Դերանվան սեռական հոլովի *ո՞յր* ձևի դիմաց ունենք *վի՞ր* [509]: Վանի բարբառում *ոյ*-ի դիմաց միավանկ բառերում առկա է Þ[510] (բոյն > պÞն) կամ *ո* (կոյր > կոր), իսկ բազմավանկ բառերում՝ *ու* (պատրոյգ > պատրուքʲ): Խոյ-Մարաղայի բարբառում նույնպես միավանկ բառերում կա *ո* (լոս, կոր), իսկ բազմավանկներում՝ *ու* (կապուտ, պատրոյգ>պառուք): Արարատյան բարբառը որպես կանոն *ոյ*-ի դիմաց ունի *ի* (լիս, քիր)[511]:

Ձայնավորների անկում բազմավանկ բառերի

---

[504] Այսպիսի փոփոխություն արձանագրվել է միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 101):

[505] Խոյ-Մարաղայում՝ *յ էղ*, Մուշում և Դիադինում՝ *յ եղ*: *Գեղ, եղ* ձևերը տարածված էին միջին հայերենում (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 106-107):

[506] Միջին հայերենի տարբերակների մեծ մասի համար բնորոշ է *իւ>ու* անցումը, ընդ որում՝ ենթադրվում է, որ այդ ու-ն որոշ վայրերում ունեցել է քմայնացման երանգ (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 105): Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում *իւ*-ի դիմաց դրսևորվում է *իւ* /ò/ (°լիւր, ծիւն) կամ *ու* (արուն, սուն), երբեմն՝ *ի* (աղիւս>օղիս, խարիր): Հ.Աճառյանը *իւղ* բառում նախատեսնում է *իւ>ե* անցում, ապա բառասկզբում *յ*-ի հավելում (տե՛ս ՔՎԲ, էջ 51): Խոյ-Մարաղայի բարբառում *ութիւն*-ի դիմաց ունենք *թոն* (պարէկամթոն): Մշո բարբառում իւ-ի դիմաց *ու* կառչ միայն բառամիջում (ձ՛ ուն, արուն), այլ նաև բառասկզբում (իւրեան > ուրին, իւրեանք > ուրանք, իւր > ուր), իսկ *ութիւն* ածանցը ունի *ութեն* ձևը (մէնձութեն): Դիադինի բարբառում ևս բառասկզբում ունենք *իւ>ու* անցման դեպքեր (իւր>հուր, իւրեանց>հուրանց), սակայն ութիւն-ի դիմաց հանդես է գալիս *ութուն* ձևը (ախպըրութուն): Արարատյան բարբառում *իւ*-ի դիմաց որպես կանոն կա *ի* (ձ՛ ին, ալիր, արին): Միջին հայերենում *իւ>ի* անցում արձանագրվում է հիմնականում դերանվանական ձևերում, հատուկենտայլ բառերում (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 106):

[507] Միջին հայերենի շրջանում *ոյ>ու* անցումը արդեն ավարտված իրողություն է (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 102):

[508] Այդպես է նաև Մշո և Դիադինի բարբառներում:

[509] Այդպես նաև Խոյ-Մարաղայի բարբառում:

[510] Ըստ Հ.Աճառյանի՝ այս հնչյունն ունի մոտավորապես իւէo (òú) արագ և ձայնավոր հնչման մոտարտասանություն (տե՛ս ՔՎԲ, էջ 15):

[511] *Քոյր* բառի դիմաց *քիր* ձևի առաջին վկայությունը վերաբերում է 13-րդ դարին (ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 103):

նախաշեշտվանկերում[512]

Բայազետի բարբառում երեք և ավելի վանկ ունեցող բառերում նախաշեշտ վանկի *ա* ձայնավորը սղվել է (երբ բաղաձայնական կուտակումը հնարավոր չէ արտասանել առանց ձայնավորի, հանդես է գալիս *ը* ձայնավորը[513]). օր. *անագան > հ՛անքան, անալի > °լնի, գերանդի > գ՛էրընդի, խարազան > խառզան, կատաղել > կ°դղել, հաւասար > խավսար, մատանի > մ°դնիք, քառասուն > քառսուն* ևն[514]: *Ա*-ի սղում գրական լեզվից կատարված փոխառություններում տեղի չի ունենում, օր. *բ՛ամփասանք, գ՛օվասանք, չարչարանք, դարդան, հ՛իշատակ, սերմացու* ևն: Բայական *ան* ածանցի *ա* բաղադրիչը որպես կանոն սղվել է՝ *բ՛աժնել, թուլնալ* ևն: Ածանցի սկզբի *ա*-ն կարող է պահպանվել կամ ընկնել, օր. *°մըկան, °վէդրան, դ՛առցըվոր*, բայց՝ *գ՛օվական, բ°խարվոր*: Որոշ բառերում էլ ունենք այլ ձայնավորների սղում, ինչպես՝ *ածելի > °ռծըլի, երեսուն > յեռսուն, թիթեռնիկ > թիթըռնեկ, աղեղնակ > °նըղնակ*[515], *հայելի > խ°յլի, ողողել > օղըղել, հոտոտել >խոնթխընթալ* ևն: Բազմավանկ բառերում նախաշեշտ վանկի ձայնավորի հնչյունափոխական այս հատկությամբ (ըստ Հ.Մուրադյանի[516]՝ սահատուկ է արևմտյան բարբառներին և բացատրվում է այդ բարբառների վերջնավանկային շեշտադրությամբ) Բայազետի բարբառը ընդհանրություններ է հանդես բերում Վանի, Մշո, Դիադինի, Խոյ-Մարաղայի բարբառների հետ: Արարատյան բարբառի խոսվածքների գերակշիռ մասում շեշտակիր է վերջընթեր վանկը[517],

---

[512] Ըստ Հ.Մուրադյանի՝ «ժամանակակից մեր բարբառների նախաշեշտ ձայնավորների անկման կամ ը-ի փոխվելու օրինաչափությունը ժամանակագրորեն հասնում է մինչև 11-րդ դարը» (ՀԼՊՔ, էջ 89-90):

[513] Վանի բարբառում այս իրողության մասին Հ.Աճառյանը գրում է. «Երեք և ավելի վանկով բառերի մեջ, միջին վանկերի *ա* ձայնավորը, ընդհանրապես, ընկնում է և եթե դրանից առաջանում է բաղաձայնների խճողում, նրա փոխարեն ներմուծվում է *ը*» (տե՛ս ՔՎԲ, էջ 27): Հ.Աճառյանը նկատել է նաև, որ բաղաձայնական կուտակումներում *ը*-ի ներմուծումը բարբառներում տարբերակային դրսևորումներ ունի. «Վանեցիները շատսիրահար չլինելով *ը* ձայնավորին, տեղ-տեղ չեն դնում *ը*, մինչդեռ ուրիշ բարբառներ ունեն» (նշվ.աշխ., էջ 28): Նույն տեղում Աճառյանը բերում է Վանի բարբառին հատուկ *ամչնալ, առցկել, վաստկել* ձևերը, որոնց դիմաց Բայազետի բարբառն ունի *°մչընալ, հ՛առծըկել, վաստըկել* ձևեր:

[514] Վերևում արդեն ցույց ենք տվել, որ այս կարգի փոփոխությունները պատճառաբանվել են արևմտյան բարբառների շեշտի բնույթով:

[515] Ի դեպ, *ե*-ն *ռ* և *ղ* բաղաձայններից առաջ եղած դիրքում շեշտազրկվելիս հնչյունափոխվում էր գրաբարում, ինչպես՝ թիթեռն – թիթռան, ծիծեռն – ծիծռան, ասեղն - ասղան (տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 11):

[516] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 86:

[517] Տե՛ս ԱԲ, էջ 56:

ուստի և միջնավանկում ձայնավորների կորուստը այդ բարբառին բնորոշ չէ[518]:

Ինչպես համեմատվող բոլոր բարբառներում, այնպես էլ Բայազետի բարբառում երկվանկ և բազմավանկ բառերի առաջին վանկի ձայնավորը որպես կանոն պահպանվում է: Սակայն բարբառումս մի քանի բառերում ձայնավորն ընկել է նաև այդ դիրքում. *անցանել > հ՛ընցնել, շալակ > շըլ°կ, սեղմել > սըխմել, ինչու > հ՛ընչի, ծիծաղ > ծըծաղ, պիտի > պըտի, շիճուկ > շըտուկ, ուղեղ > հըղեղ, դէպի > դըբա*[519]:

Բառասկզբի երկբարբառային ձայնավորից առաջ բաղաձայնական տարրի հավելում

Հ.Մուրադյանը կարծում է, որ հայերենի բարբառներում *ե,ո* երկբարբառներն առաջացել են մոտավորապես 8-10-րդ դարերում շեշտյալ վանկում (ինչպես բառասկզբի, այնպես էլ բառամիջի դիրքերում) համապատասխան ձայնավորների՝ ավելի սուղ արտասանության միտումով պատճառաբանվող երկբարբառացման հետևանքով[520]: Երկբարբառացմանն էլ հաջորդել է բառասկզբում *ու*-ից (ո=ուo) առաջ *վ*-ի և *ե*-ից (ե=իէ) առաջ *յ*-ի առաջացումը[521]: Սակայն Գ.Ջահուկյանը *ե*-ի և *ո*-ի երկբարբառային արտասանություն վերագրում է նաև 5-րդ դարի բարբառային հայերենին[522]: Բայազետի բարբառում միավանկ բառերի սկզբում *ե,ո* երկբարբառների սկզբի

---

[518] Վերջընթեր շեշտունեցող բարբառներում նույնպես տեղի է ունենում նախաշեշտվանկի ձայնավորի անկում, սակայն Արարատյան բարբառի՝ վերջընթեր շեշտունեցող մի շարք խոսվածքներում (Երևան, Աշտարակ, Փարպի, Էջմիածին), ինչպես նշում է Հ.Մուրադյանը, այդ փոփոխությունը համատարած չէ (տե՛ս ՀԼՊՔ, էջ 90):

[519] Այս երևույթը ուսումնասիրողները դիտարկել են նաև Վանի (տե՛ս ՔՎԲ, էջ 29), Մշո (տե՛ս ՄԲ, էջ 18), Արարատյան (տե՛ս ԱԲ, էջ 57), Դիադինի (տե՛ս ԴԲ, էջ 24-25) բարբառներում:

[520] Տե՛ս ՀԼՊՔ, էջ 99-100, 105:

[521] Տե՛ս նշվ. աշխ., էջ 94-95, 103:

[522] Տե՛ս ՀԲՆ, էջ 163, 170: «Մեսրոպյան Է,Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը» ուսումնասիրության մեջ, դիտարկելով *ե,է* միավորների դրսևորումների համապատասխանությունները Բայազետի և այլ բարբառներում ու գրաբարում, մենք հանգել ենք այն եզրակացության, որ դեռևս գրաբարյան շրջանում Ե գիրը շեշտակիր վանկում ներկայացնում էր երկբարբառակերպ, իսկ անշեշտվանկում՝ պարզ ձայնավոր (տե՛ս Վ.Կատվալյան, նշվ. աշխ., էջ 85, ինչպես նաև՝ Վ.Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 212), և կարծիք ենք հայտնել, որ մոտավորապես 11-րդ դարում սկզբնավորվել է միավանկ ու որոշ երկվանկ բառերի սկզբում *ե* երկբարբառակերպի վերածումը երկհնչյունի (նույն տեղերում, համապատասխանաբար էջ 86 և 213): Կարծում ենք՝ շեշտակիր վանկում *ո*-ին ևս պետք է վերագրել նախնական երկբարբառային արտասանություն (համապատասխանաբար՝ անշեշտվանկում ո-ն եղել է պարզ *օ* ձայնավոր) և իբրև հնչյունափոխություն դիտարկել հետագա *ո>վո* անցումը բառասկզբում:

ավելի սուղ արտասանվելու հետևանքով[523] բաղաձայնական տարրի հավելումից հետո պահպանվել է դրանց երկբարբառային արտասանությունը. միավանկ բառերի սկզբում նախնական *ե*–ի դիմաց ունենք *յե* (եզն > յեզ, երբ > յեփ, երգ > յերք)[524], իսկ նախնական *ո*–ի դիմաց՝ *վո* (որդ > վոռթ, որ > վոր, ոխ > վոխ): Երկվանկ բառերի սկզբում *ե*-ի դիմաց *յե* ունենք *ղ, ռ* բաղաձայններից առաջ[525]՝ *եղունգն – յեղունգ, եղի – յեղա, երեսուն – յեռսուն, եռալ – յեռալ, եղիճ - յեղըռճիկ*: Երկվանկ բառերի սկզբում այլ դեպքերում (հիմնականում՝ ր-ից առաջ) *ե* պարզ ձայնավորը մնում է նույնը՝ *երազ - էրազ, երակ - էրակ, երկու - էրկու, երկանք - էրկանք, եփել - էփել* ևն: Իբրև բացառություն՝ բառասկզբում *ր*-ից առաջ *յե* ունենք *յերգինք, յերգիր, յերգուղ* գրական փոխառություններում:

Միավանկ ու երկվանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի՝ Վանի բարբառում կատարված համանման փոփոխություններին անդրադառնալով՝ Հ.Աճառյանը[526] գրել է. «Երկվանկ բառերի սկզբում *ե*-ն ունի երկու դիրք՝ գտնվում է կամ *ղ,ռ* բաղաձայններից առաջ և կամ *ր* բաղաձայնից առաջ: Առաջին դիրքի մեջ դառնում է նույնպես *յե*, իսկ երկրորդի մեջ՝ *է*»[527]: Բառասկզբի այս օրինաչափությունը ուսումնասիրողները դիտարկել են նաև Արարատյան[528], Խոյ-Մարաղայի[529], Դիադինի[530] բարբառներում: Մշո բարբառում մեկից ավելի վանկ ունեցող բառերում բառասկզբում *ե*-ին միշտ համապատասխանում է *է*[531]: Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում, որոնց երկբարբառային *ե*-ն ընդհանուր առմամբ յուրահատուկ չէ, բառասկզբի

---

[523] Հայերենում գրեթե ընդհանուր բնույթ ունեցող այս փոփոխության մասին Գ.Ջահուկյանը գրում է. «Ավելորդ չենք համարում նշել, որ ե-ի և ո-ի երկբարբառային արտասանության հետ է կապված դրանց բառասկզբի *յէ* և *վօ* արտասանությունը, թեև, իհարկե, *յ*-ն և *վ*-ն կարող էին առաջանալ այդ դիրքում նաև անկախ դրանց նախնական երկբարբառային արտասանությունից» (ՀԲՆ, էջ 269):

[524] Օժանդակ բայի *եմ, ես, ենք, են* ձևերում երկբարբառային արտասանության պահպանումը (առանց յ-ի հավելման) պետք է պայմանավորել դրանց գործառական յուրահատկությամբ, այն է՝ նախորդ բառի հետ միշտ կազմում են մեկ հնչաբառ:

[525] Բայազետի բարբառում ոչ միայն շեշտակիր, այլ նաև անշեշտ վանկերում *ղ,խ,ռ* հնչյուններից առաջ *ե*-ի դիմաց միշտ գործառում է երկբարբառային *ե*, ինչպես՝ *դեղին, սեղան, լեղի, խըրեղեն, խեխտել, նեխել, մեռոն, դ՛եռասան*: Իսկ *ղ, ռ* բաղաձայններից առաջ անկախ դիրքից երկբարբառային *ե* ունեն նաև Վանի, Դիադինի բարբառները, Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքը (տե՛ս համապատասխան ուսումնասիրությունների գրաբար - բարբառ բառացանկերը):

[526] Տես՛ ՔՎԲ, էջ 30-31:

[527] Նշվ. աշխ., էջ 30:

[528] Տե՛ս ԱԲ, էջ 58-59:

[529] Տե՛ս ԽԲ, էջ 25:

[530] Տե՛ս ԴԲ, էջ 25:

համապատասխան դիրքերում (միավանկ բառեր, երկվանկ բառերում *ղ, ռ*-ից առաջ) *յ*-ի հավելումով ստացվել է ոչ թե *յե*, այլ *յէ*:

Բազմավանկ բառերի սկզբում *ո>վո* անցում Բայազետի բարբառում տեղի չի ունեցել, որովհետև բարբառը անշեշտ վանկում երկբարբառային *ո* չուներ, ուստի բառասկզբում պահպանվել է նախնական *օ* հնչումը, ինչպես՝ *օլոր* (ոլոր), *օղըղել* (ողողել), *օխճար* (ոչխար), *օռնալ* (ոռնալ), *օսկոռ* (ոսկոր), *օռծըկըտալ* (ործկալ), *օրոտում* (որոտում) ևն: Բացառություն են *ոսկի, որդի* բառերը, որոնցում գուցե *ո*-ն նախապես ունեցել է երկբարբառային արտասանություն, ուստի և տեղի է ունեցել *ո > վո* հնչյունափոխություն (վոսկի, վոռթի): Արարատյան, Մշո և Դիադինի բարբառներում *ո>վո* անցում դիտարկվում է միայն միավանկ բառերում (Ա. ոխ > վոխ, որդն > վոռթ, որս > վորս / վօռս Մ. ողջ > վոխջ, ոսպն > վոսպ, ոտն > վոդ, Դ. ոչ > վոչ, որ > վոր, որթ > վոռթ): Մշո բարբառում, ի տարբերություն Բայազետի բարբառի, բարդություն կազմելիս այդ *վո*-ն դառնում է *օ* (օդնաման, օրփանոց, օրթնել), և բացի այդ՝ *որ* բառի դիմաց առկա է *օր*: Արարատյան բարբառում բառասկզբում *վ*-ի հավելում առկա է նաև երկվանկ *որդի, ոսկի, ոզնի* (վօէռթի, վօէսկի, վօէզնիկ[532]) բառերում: Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում *ո*-ն *վո* է դարձել միավանկ և երկվանկ բառերում (Վ. վոխ, վոտ, վոչխար, վոսկի, վորտի, վոռծկալ, Խ. վոսպ, վոտ, վորթ, վոսկ՝ի, վոսկոռ, վորթի), իսկ բազմավանկ բառերում *ո*-ի դիմաց առկա է *օ* (Վ. օղօղել, օրօճալ, Խ. էօլըրէլ, օղօղէլ, օրօճալ):

Բառասկզբում հավելական շնչի առաջացում

Բայազետի բարբառում բառասկզբում *հ՛* հնչյունի առաջ գալը բացատրվում է հավելական շնչի առաջացմամբ[533], որի շնորհիվ ոչ

---

[531] Տե՛ս ՄԲ, էջ 21:

[532] Այս և մյուս դեպքերում օրինակները այլ ուսումնասիրողներից բերելիս պահպանում ենք հեղինակային տառադարձումը (տե՛ս ԱԲ, էջ 61):

[533] Գ.Ջահուկյանի կարծիքով՝ «....հնարավոր է, որ շունչը առաջացած լինի հայոց լեզվի զարգացման հին շրջանի վերջերից» (ՀԲՆ, էջ 266): Հ.Մուրադյանը նկատում է, որ «....բարբառային ձևերում հավելական h-ի գոյությունը հնդեվրոպական p-ով և s-ով բացատրելը մի վարկած է, որը, թեև հիմնված է հնչյունական որոշակի համապատասխանության վրա, բայց կարող է նաև պատահական զուգադիպության հետևանք լինել: Չէ որ հավելական նույն հնչյունը ունեն նաև փոխառյալ բառերը, ինչպես նաև հնդեվրոպական ծագման այն բառերը, որոնք ձայնավորական սկիզբ ունեն» (ՀԼՊՔ, էջ 319): Ն.Սիմոնյանը ևս բարբառներում բառասկզբի h-ի հավելումը շատ դեպքերում (օր.՝ ուր, ափ, ագանել, ամէն, անկանիմ, առու, աչք և այլ բառերում) պայմանավորում է հնչյունափոխությամբ, մինչդեռ, օրինակ, *ալևոր* և *արբենալ* բառերի բարբառային *հալիվոր* (խալվոր) և *հարփել* (խարփել)

միայն բառասկզբում *յ* < *հ* անցում է տեղի ունեցել (յիսուն > հիցուն, յարմար > հարմար, յիշել > հիշել), այլ նաև ձայնավորով սկսվող շատ բառերի սկզբում տեղի է ունեցել *հ՛* – ի հավելում (ամէն > հ՛ըմէն, երես > հ՛իրես, ընկեր > հ՛ընգեր, իջանել > հ՛իշնել, ուղեղ > հ՛ըղեղ)[534]: Բայազետի բարբառի տարբեր խոսվածքներում բառասկզբում *հ՛*-ի հավելումը հանդես է բերում դրսևորման յուրահատկություններ՝ այդպիսով դառնալով նաև խոսվածքները միմյանցից տարբերակող հատկանիշ: Նկատենք նաև, որ բառասկզբի *ր,ռ*-ից առաջ ևս նկատվում է *հ՛*-ի հավելում, ինչպես՝ *հ՛ըռուս, Հ՛ըրօգ*:

Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների և հպաշփականների

շնչեղ խլացում

Բայազետի բարբառում այսպիսի փոփոխություն կատարվել է հինհայերենյան բառաշերտի բառերում՝ ձայնավորից կամ *ր /ռ/* – ից հետո (հ՛ափեղա, բ՛օրփոս, ձ՛°ք, դ՛աթար, կ°ռթալ, հ՛առէչ, °ռչ, օչիլ, մէչ, օg, Գ՛ափրէլ, Տիքրան ևն)[535]: Այս փոփոխությունից հետո բառամիջում ու բառավերջում հինհայերենյան ձայնեղ հպականներ ու հպաշփականներ որպես կանոն պահպանվել են միայն *մ, ն* ձայնորդներից հետո (թումբ, խանգարել, թունդ, գ՛երընդի, °ղանձ, խընձըրել, երինջ, բ՛անջար): Կան բացառություններ՝ *հ՛անքան, °նթամ, բ՛ամփասանք, խընթըրել, հ՛ամփէրել, կէնթանի, °նքամ, խաչխամփուր, հ՛անթըռտել*: Գրեթե նույն իրավիճակն է Դիադինի, Արարատյան և Մշո բարբառներում[536]: Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում բառամիջում տեղի է ունեցել ձայնեղների խլացում (Վ. խապել, սրպել, խոկ՝ի, տ°տրել, կ°ռտ°լ, փործել, վոճիլ, Խ. շ°պ°թ, ակահ,

---

ձևերը համարում է հնդեվրոպական հնաբանություն (տե՛ս Ն.Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 216-223):

[534] Տե՛ս նաև Վ.Կատվալյան, Հ – Խ համապատասխանությունը հայերենի բարբառներում, ՊԲՀ, 2007, 3, էջ 163-172:

[535] Ի դեպ, բառամիջում և բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների շնչեղ խլացումը միջինհայերենյան շրջանում չափազանց տարածված երևույթ էր (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 117):

[536] Տե՛ս ԴԲ, էջ 36-37, 43-45, ԱԲ, էջ 66-67, ՄԲ, էջ 44-52: Դիադինի բարբառում բառամիջում երբեմն ձայնեղները վերածվել են խուլերի (բ՛ոռպընել, հարկանք՝, հ՛իճնել, մընռճեմ), իսկ Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքում բառամիջում և բառավերջում ձայնեղները խլացել են՝ *խապել, ուրակ, առճ* ևն:

տ°տ°ր, տերծիկʲ, վոճիլ)[537], իսկ բառավերջում՝ շնչեղ խլացում (Վ. յեփ, կարաքʲ, պ°ռթ, օg, մէչ, առչ, Խ. յէփ, լիռփ, էքʲ, սուք, պէռթ, օg, աչ), Խոյ-Մարաղայի բարբառում բառամիջում ձայնեղները հաճախ շնչեղ խլացել են (սըրփէլ, խօքալ, սաթայէլ, փորցէլ, խ°չէլ): Այս բարբառներում ևս *մ,ն* ձայնորդներից հետո ձայնեղները չեն հնչյունափոխվել: Բայազետի բարբառում բառասկզբի ձայնեղ պայթականի դիմաց շնչեղ խուլի առկայությամբ մասնավոր դեպք են ներկայացնում *Քեղառթ*[538] (>Գեղարդ) և *Քº վ°ռ*[539] (>Գավառ) ձևերը:

Խուլ բաղաձայնների ձայնեղացումը բառամիջումն ու բառավերջում

Բայազետի բարբառում խուլ հպականների ու հպաշփականների ձայնեղացման դեպքեր բառամիջում արձանագրվում են *մ,ն,ր,ռ* ձայնորդների հարևանությամբ (կօդմուկ, հ՛ընգընել, ճ°մբախ, մ°դնիք, տընդընղել, °բրել, պ°դրաստ, պ°դրուք, մընգրադ, կօդրել, °վառդել, փընրգել, կօնձել, ճընջուխ), միջձայնավորական դիրքում (պ°դընռել, պ°դասխան, ճընբընվել, փընդել, հ՛իդեվ, ըստիբել, ծընձաղ, գօջի, ցաձընր): Բառավերջում ձայնեղացում տեղի է ունեցել ձայնորդներին և ձայնավորներին հաջորդող դիրքում (°մբ, թանգ, ճ°նջ, բանդ, հարգ, մ°ռդ, °նարադ, փագ, փէդ, օքուդ, հաստադ): Այլ դեպքերում ձայնավորների միջև, ր,ռ-ից հետո և բառավերջում խուլերի ձայնեղացում տեղի չի ունեցել (°պակընել, կ°պ, բ՛արկ, էրկու, կ°կուդ, գ՛օտիկ, հ՛իրկուն, խոտ, խընրատ, գ՛էտին, °ռճիճ, կընճուճ, կէծակ, °ռծաթ, մօծակ, կ°ռճ ևն): Նման փոփոխություն ձայնորդներից հետո տեղի չի ունենում նաև ձևույթների կցույթում (°մպէտկ, °նտէր, բ՛ընկալ, մընրկ°թ, կերկոխևն): Ձայնեղացում տեղի չի ունեցել նաև խուլ շփականներից հետո (°ստընդ, խաստ, տ°խտ, կուշտ, խասկընալ, խօստանալ ևն)[540]: Թվում է՝ ձայնեղացման դեպքերի մի մասը կարող էր բացատրվել փոխազդեցական (ձայնորդների հարևանություն, տարնմանություն), դիրքային (միջձայնավորական դիրք) գործոններով, սակայն նույն կարգի այլ դեպքերում խուլերի պահպանումը,

[537] Հ.Մուրադյանը կարծիք է հայտնել, որ բարբառների ձայնեղ պայթականների բառասկզբի փոփոխության օրինաչափությունները հիմնականում տարածվում են նաև բառամիջի և բառավերջի դիրքերի վրա (տե՛ս ՀԼՊՔ, էջ 299):

[538] Հավանաբար գալիս է միջինհայերենյան շրջանից:

[539] Հնարավոր է թվում պարսկերեն kavār (պրաս) բառի ազդեցությունը, մանավանդ որ տարածքում այդ բույսը տարածված է և անվանվում է հենց *Քº վ°ռ:*

[540] Ինչպես նշվում է, խուլերի բառամիջյան ձայնեղացումը կանխվում է խուլ շփականներից հետո ընկած դիրքում (տե՛ս ՀԼՊՔ, էջ 302):

ինչպես նաև խուլերի ձայնեղացման դեպքերը՝ նաև հիշյալ գործոնների բացակայությամբ, թույլ են տալիս ենթադրել, որ գործ ունենք բառամիջում և բառավերջում սկիզբ առած՝ խուլերի ձայնեղացման միտումի հետ (թերևս պայմանավորված արտաբերական լարվածության աստիճանական թուլացմամբ)[541], որը ձայնեղացմանը առավել նպաստող գործոնների առկայությամբ ընդգրկել է գրեթե բոլոր դեպքերը (օրինակ՝ մ,ն-ին հաջորդող, ր,ռ-ին նախորդող դիրքեր), իսկ այլ դեպքերում (օրինակ՝ միջձայնավորական դիրք, ր,ռ-ին հաջորդող դիրքեր, բառավերջ) ունեցել է սահմանափակ տարածում[542]: Վանի, Դիադինի, Խոյ-Մարաղայի բարբառներում խուլ հպականներն ու հպաշփականները բառամիջում ու բառավերջում պահպանվել են նույնությամբ՝ ձայնեղանալով միայն ռնգային ձայնորդներից հետո: Վանի և Դիադինի բարբառներում ձայնեղացում նկատվում է մեկ-երկու այլ դեպքերում (Վ. ապուղայ >աբուղա, կուպր > կուբր, ավէդրան, լիտր > կիդր, Դ. °զ°բ, փէ-դուռ), իսկ Խոյ-Մարաղայի բարբառում նման դեպքերն ավելի շատեն (խիպար > խիբար, շիպ > շիբ, վիշաբ, ճախարակ > ճ°րխ°գ$^{ յ}$, փէթ°գ$^{ յ}$, ազա-դէլ, ավէդըրան, լորտու >լօռդի, ազադ, մ°ռդ, անարադ): Արարատյան և Մշո բարբառներում խուլերի ձայնեղացումն ընդգրկել է բառամիջի

[541] Այս երևույթի հետ կապված հետաքրքրական դիտարկում ունի Գ.Ջահուկյանը. «Միջձայնավորային խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղությունը (թույլ արտասանությունը) ակնհայտորեն կապված է հայոց լեզվի զարգացման ներքին միտումների հետ: Հայտնի է, որ միջձայնավորային խուլերի ձայնեղացումը հանդես է գալիս որպես յուրահատուկ տարաժամանակյա հանրույթ (ունիվերսալիա) և հատուկ է եթե ոչ բոլոր լեզուներին, ապագոնե շատ լեզուների: ....Հայերենում միջձայնավորային դիրքին համարժեք են նաև բառավերջի ձայնավորային և ր-ին հաջորդող դիրքերը, որոնք նույնպես առաջ են բերում խուլերի թույլ և, սրա հետ կապված, ձայնեղ արտասանություն: Պետք է նշել, որ ձայնորդներին հաջորդող խուլերի ձայնեղացումը հին երևույթ է և բնորոշում է հայոց լեզվի զարգացումը հենց ամենավաղ շրջանից: Ավելի ուշ է հանդես գալիս հետագա ձայնեղացումը նշված դիրքերում, որով իսկ ր-ին հաջորդող դիրքը առաջ է բերում ձայնեղացման երկու տարբեր պրոցես՝ ընդհանուր հայկական, որ հատուկ է եղել թերևս նախահայերենի շրջանին, և բարբառային, որ սկսվելով համեմատաբար վաղ՝ տարածվել է ուշ ժամանակներում՝ հավանաբար հայոց լեզվի զարգացման հին շրջանի վերջերին: Ավելորդ չենք համարում նշել, որ ն ձայնորդից հետո գտնված դիրքը առաջ է բերում ձայնեղների և խուլերի խառնում դեռևս հին շրջանում. հմմտ. *թանկ / թանգ. բանտ/բանդ* և այլն» (ՀԲՆ, էջ 264):

[542] Հ.Մուրադյանը կարծում է, որ բարբառներում խուլերի ձայնեղացումը հետևանք է ձայնեղների խլացման, որպես վերջինիս հակազդող մի երևույթ, և այն սկսվել է բառամիջի և բառավերջի դիրքերում (տե՛ս ՀԼՊՔ, էջ 302-303), ընդ որում հավանական է՝ հին գրական հայերենի հետդասական շրջանում (նույն տեղում, էջ 307):

և բառավերջի բոլոր դիրքերը՝ բացառությամբ խուլ շփականներին հաջորդող դիրքը:

Այսպիսով, դիտարկվող բարբառներում բառամիջում և բառավերջում նկատելի է ձայնեղացման տարածման որոշակի աստիճանակարգություն. եթե խուլ հպականներն ու հպաշփականները Վանի և Դիադինի բարբառներում ձայնեղացել են միայն ռնգայիններին հաջորդող դիրքում (մի բան, որ ընդհանուր է դիտարկվող բոլոր բարբառներում), Խոյ-Մարաղայի բարբառում ձայնեղացում դիտարկվում է որոշ այլ դեպքերում, իսկ Բայազետի բարբառում՝ նաև *ր,ռ* ձայնորդների հարևանությամբ (ընդ որում՝ *ր*-ին նախորդող դիրքում օրինաչափորեն), *ն,մ*-ին նախորդող դիրքում, նաև այլ դիրքերում, ապա Արարատյան և Մշո բարբառներում բառամիջում ու բառավերջում ձայնեղացման գործընթացն իր ավարտին է հասել[543]: Բոլոր բարբառներում ձայնեղացմանը խոչընդոտել է նախորդ խուլ շփականի առկայությունը[544]:

Թերևս բառավերջում արտասանական լարվածության նվազումով պետք է բացատրել այդ դիրքում որոշ դեպքերում նաև խուլ շփականների վերածումը լարվածությամբ ավելի թույլ ձայնեղների, ինչպես՝ *աղուէս* > *°ղվէզ, խորիսխ* > *խօրիզ, նարգէս* > *ն°րգիզ, փոցխ* > *փոցը՛ղ, քացախ* > *քացաղ*, նաև նոր փոխառություններում՝ *հիպնոս* > *հիպնօզ, իշխան* > *իշյազ, Վարդգես* > *Վառթկէզ*: Այս կարգի փոփոխություն կատարվել է նաև Խոյ-Մարաղայի (խորիզ, աղվէզ, ն°րգյիզ), Արարատյան (աղվէզ, խօրիզ, նարգիզ), Մշո (նարգիզ) բարբառներում[545]: Հակառակ գործընթացն են ներկայացնում *ճընջուխ* (>ճնճուղ), *ցընձուխ* (>ցնցուղ), *կունգուխ* (> կնգուղ) բառերը, որոնցում թերևս տարնմանությամբ կատարված փոփոխությունից հետո էլ, միևնույն է, բառավերջում արտաբերական լարվածության

[543] Ըստ Հ.Մուրադյանի՝ արդի հայերենի բարբառներում կարելի է տեսնել խուլերի ձայնեղացման գործընթացի համարյա բոլոր փուլերը՝ սկզբնական վիճակից (որ ընդգրկում է միայն բառամիջի դիրքը) մինչև կատարյալ վիճակը (որ ընդգրկում է բոլոր դիրքերը) (տե՛ս ՀԼՊՔ, էջ 303):

[544] Այս իրողությունը նկատվել է նաև միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 115):

[545] *խորիսխ* բառի դիմաց Հ.Աճառյանի բերած բոլոր բարբառային ձևերում (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 408) առկա է բառավերջի խ-ի անկում, ինչը կարելի է բացատրել բառավերջում *սխ* խմբի արտասանության որոշակի դժվարությամբ և արտասանությաունը հեշտացնելու մղումով: *Նարգէս* ձևը գրական հայերենում, ինչպես և թուրքերենում իրանական փոխառություն է: Քանի որ թուրքերենում

նվազումը պահպանվում է, որովհետև հպաշփականներն ավելի լարված են, քան շփականները:

Բառավերջում բաղաձայնի անկում

Ե՛վ Բայազետի բարբառում, և՛ շրջակա բոլոր բարբառներում ամբողջական արտահայտություն ունի ընդհանուր հայերենն ընդգրկած՝ բառավերջի *յ* և *ն* ձայնորդների անկումը. *ծմեռն* > *ծ՛ըմեռ, տղայ* > *տըղա*: Բայազետի բարբառը այսօր էլ բազմավանկ փոխառությունների բառավերջի *յ*-ն սովորաբար չի պահպանում՝ *Սերգէ, բատարէ, տըրամվա, բայէվօ, պՈռտնօ* ևն: Առանձին դեպքերում ընկած *ն*-ի փոխարեն արտասանվում է *ը*. *դ՛°ռը, խառը, տՊսը, հ՛ինքը*: *Ը*–ի այս դրսևորումը խորթ է Վանի բարբառին[546], Ալաշկերտի խոսվածքին[547]:

Բաղաձայնների գործառական ոլորտի ընդլայնում

Ի տարբերություն Բայազետի բարբառի հինհայերենյան բառաշերտի բառերի՝ պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, ռուսերեն և այլ լեզուներից, երբեմն նաև՝ գրական հայերենից կատարված նոր փոխառությունների բառասկզբում հանդես են գալիս պարզ ձայնեղ հպականներ ու հպաշփականներ (բաղ, բաշարել, բըլիթ, բըտել, գարաժ, գօլ, գըրադարան, դ°ստ°, դօշ°կ, դամաշնիկ, ձ°ձ°, ջաֆա, ջըվալ, ջէմ): Նույն կերպ բառասկզբում ձայնեղ հպականներ ու հպաշփականներ սկսել են գործառել նաև համեմատվող բոլոր բարբառներում: Բայազետի բարբառում նոր փոխառյալ բառերում ձայնեղ հպականներ ու հպաշփականներ դրսևորվում են բառամիջի և բառավերջի բոլոր այն դիրքերում, որոնցում հին բառաշերտի բառերում այդպիսիք շնչեղ խլացել են (դըրբ, °բուռ, °դաշ, °ջ°լ, թըրբել, բիձ°, ինադու, ջուղաբ, խօդ, կըռաջ, կըռուգ, ձ°ձ°, մ°ռջ, մուխտէջ, շըրիդ, ջիգ°ր, ս°բ°բ): Այդպիսով, ինչպես նաև նախնական խուլերի ձայնեղացման որոշ միտումի առկայությամբ, վերանում է ձայնեղների գործառական սահմանափակվածությունը նաև բառամիջում ու բառավերջում[548]:

այդ բառն ունի nergiz ձևը (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 430), կարելի է նաև ենթադրել, որ բարբառներում գործառում է թուրքական փոխառությունը:

[546] Տե՛ս ՔՎԲ, էջ 77:

[547] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 42:

[548] Այդպես և համեմատվող բոլոր բարբառներում:

Մասնավոր բնույթ ունեցող պատմական փոփոխություններից են հետևյալները:

Ձայնավորական փոփոխություններ

Բայազետի բարբառում արձանագրվում են ձայնավորների՝ մասնավոր բնույթ կրող հետևյալ փոփոխությունները.

ա) *Անկում*, որը կարող է ուղեկցվել սղված ձայնավորի փոխարեն *ը*-ի ներմուծումով: Օր.՝ *նախք* > *նըխք* (Մ. նըշխ), *քուրջ* > *քըռչ* (Մ. քըրչ, Դ. քʲըռչ), *սուրբ* > *սըփ*[549] (Դ. սըփ), *թեթև* > *թեթըվ*[550] (Դ. թէթըվ):

բ) Տեղաշարժ ըստ արտաբերության բացվածքի. 1) *նեղացում* [551] (ինչպես՝ *ա>է/ե*՝ արժան > հ՛էժան[552], առաջ > հ՛առէջ, գդալ > գ՛ըթէլ, փայծաղ > փացեղ, *ը>ի*՝ քսակ > քիսիկ[553], շվար > շիվար, յստակել > հ՛իստըկել [554], *ը>ու*՝ պտուկ>պուտուկ[555], *ա>ի*՝ վարդավառ > վառթիվոր, *ե/է >ի*՝ երեկոյ > հ՛իրկուն[556], երեք > իրեք[557], երես > հ՛իրես, աւելուկ > °վիլուկ, աւերել > °վիրել, հրեշտակ > խըրիշտակ, խէժ > խիժ, *ո>ու*՝ խոնջան > խունջան, թոնիր > թունդիր, կորնչել > կուրել, Գոհար > Գուվար[558]), 2) *լայնացում* (ինչպես՝ *ե >ա/°*՝ քեռի > ք°ռի, *ի>ե/է*՝ ջիղ > ճեղ, դրակից > դ՛ըրկեց, թիթեռնիկ > թիթըռնեկ, մի > մէ, գիժ > գէժ, անդրանիկ > °նդրանեկ, *ի>ա/°*՝ եղի > յեղա, սպի > սըբ°, *ու>օ*՝ ուղղորդ > օղոռթ, գլուխ > գ՛ըլօխ, ուղարկել > հ՛օղըրկել [559])[560]:

---

[549] Վանի բարբառում այս ձևի առաջացումը Հ.Աճառյանը պատճառաբանում է *սուրբ* բառի չափազանց շատ գործածվելով (տե՛ս ՔՎԲ, էջ 45):

[550] Վանի բարբառում *թեթև* բառի դիմաց արձանագրելով *թևթր*՝ Հ.Աճառյանը կարծում է, որ այն ազդվել է իր հականիշ *ծանդըր* բառից (տե՛ս ՔՎԲ, էջ 34): Թվում է՝ այդ կերպարարող է մեկնաբանվել նաև Բայազետի բարբառի *թեթըվ* ձևը:

[551] Գ.Ջահուկյանը կարծում է, որ «Ձայնավորների ավելի փակ կամ ավելի նեղ արտասանությունը շատ դեպքերում պետք է կապել ենթաշերտային ազդեցությունների հետ» (ՀԲՆ, էջ 269):

[552] Միջին հայերենում վկայված է *էժան* ձևը (տե՛ս ՄՀԲ, էջ 213):

[553] Թերևս առաջացել է քրդերենի ազդեցությամբ, որտեղ ունի kisik ձևը (տե՛ս ՀԱԲ, հ.4, էջ 598):

[554] Այս ձևը վկայված է միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 88):

[555] Այս ձևը վկայված է միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 87):

[556] Միջին հայերենում վկայված է *իրիկուն* ձևը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 82):

[557] Ր-ից առաջ մի շարք բառերում տեղի ունեցած *ե>ի* անցումը, որ դիտարկվում է արդի մի շարք բարբառներում, ըստ Հ.Մուրադյանի, եղել է հնչյունափոխական միասնական գործընթաց, որի գրավոր առաջին վկայությունները հասնում են մինչև 10-րդ դարը (տե՛ս ՀԼՊՔ, էջ 117):

[558] Միջին հայերենում վկայված է *Գուհար* ձևը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 85): Բայազետի բարբառի բառամիջում *հ* չի գործառում, ուստի այդ ձևը այստեղ հնչում է Գուար կամ Գուվար:

[559] Միջինհայերենյան շրջանում վկայված է *ուղարկել* բառի *յօղարկէ* ձևը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 80):

գ) Ոչ շրթնային ձայնավորի դիմաց o/ո-ի դրսևորում՝ *յօրանջել* > *օրօշկըտալ*, *կաշկառ* > *կօշկոռ*, *Պայծառ* > *Պօյծառ*, *լեղակ* > *լօղակ*, *երդումն* > *հ՛օռթում*, *մողէգ* > *օգմօղօգիկ*, *կոծիծ* > *կօծօծ*, կամ շրթնային հնչյունի ապաշրթնայնացում՝ *շնորհավոր* > *շընախավոր*[561]: Այդպես նաև շրջակա բարբառներում՝ *Պայծառ* > Վ. *Պոծառ*[562], Մ. *պօծառ*, *մողէգ* > Վ.Ա.Դ. *մօղօգիկ*, Դ. *մօղօգըրիկ*, *շնորհավոր* > Վ.Դ. *շընախավոր*, *ուղղորդ* > Վ. *աղորթ*[563], Խ. *աղվորթ*, Մ. *օղորթ*, *յօրանջել* > Մ. *օրօջգըդալ*, Ա. *օրօժկըտալ*, *երդումն* > Խ. *էօրթիւմ*, Ա. *հօռթում*, *լեղակ* > Մ. *լօղագ*, Ա. *լօղակ*, *հօրեղբայր* > Ա. *հըրօխպէր*:

Ձայնավորների մասնավոր փոփոխությունները բարբառներում ունեն բազում ընդհանրություններ, և պետք է կարծել, որ այդպիսիք լեզվի զարգացման նախորդ փուլերում տեղի ունեցած ընդհանուր գործընթացների (ձայնավորների համակարգային փոփոխություններ[564], առնմանություն, տարնմանություն, համաբանություն) արտահայտություններ են, ինչը վկայում են նաև միջինհայերենյան մի շարք ձևեր:

Բաղաձայնական փոփոխություններ

---

[560] Շրջակա բարբառներում այս իրողությունների զուգահեռներից են՝ ա) նեղացում՝ *գդալ* > Վ. կըտէլ, Դ. գ՝ըտէլ, *վարդավառ* > Վ. վ°ըտէվ°ր (գուցե այս ձևը վկայում է Բայազետի բարբառում տվյալ բառի փոփոխություններում *ա*>*է*>*ի* հաջորդական անցումների մասին), Դ. վ°ռթէվ°ր, *արմուկն* > Վ.Դ. էրմունգ՝, Խ. Էրմիւնգ՝, *արժան* > Վ. էժ°ն, Խ. Էժան, Դ. հէժ°ն, *քսակ* > Վ. Դ. ք՝իսիկ, *շվար* > Ա.Վ.Մ. շի-վար, *յստակել* > Խ. իստըկէլ, Մ. հ՛իստագ, Ա.Վ. իստակ, *ծիծեռնակ* > Վ. ճճըռնէկ, Մ. ծիձըռնեգ, *աղաւնի* > Վ. յէղունիկ, Խ. յէղունիկ՝, Մ. Էղվընեգ, *երեք* > Վ.Ա. իրեք՝, Խ. իրէք՝, Մ. իրեք, *երես* > Վ. իրես (վերջին երկուսի և համանման այլ դեպքերի համար Հ.Աճառյանը իրավացիորեն նշել է, որ ե>ի անցումը տեղի է ունեցել տարնմանությամբ), Խ. իրէս, *աւերել* > Վ. Մ. ավիրել, Ա. ավիրէլ, *երեկոյ* > Վ. իրիկուն, Մ. հ՛իրգուն, Դ. հիրիկուն, *փետել* > Խ. փիտէլ, Ա. փիդէլ, *սկեսուր* > Վ.Ա.Դ. կիսուր, լեզու > Ա. լիզու, *խէժ* > Վ.Ա. խիժ, *կորուսել* > Վ. կուրիս (Բայազետի բարբառն ունի *կուրուս* ձևը *իզկուրուս անել* /հետքը կորցնել/ հարադրության մեջ), *թոնիր* > Մ.Ա. թունդիր, բ) լայնացում՝ *կանեփ* > Վ. կանափ (Հ.Աճառյանը փաստում է, որ հինն է *կանեփ*, իսկ *կանափ* ձևը վկայված է 11-րդ դարից /տե՛ս ՔՎԲ, էջ 32/), Ա. կանանփ, *թիթեռնիկ* > Վ. թըռթըռնէկ, *անդրանիկ* > Վ. °նդր°նէկ, *դրակից* > Վ. տըրկէց, Դ. դ՛ըրկեց, *ջիղ* > Վ. Դ. ճեղ, Ա. ճէղ, *մի* > Ա.Դ. մէ, *գիժ* > Ա. գէժ, Դ. գ՝էժ, *գլուխ* > Վ. կ՝ըլէօխ, Խ. կըլօխ, Մ. գ՛ըլօխ, Դ. գ՝ըլօխ, *ուղարկել* > Խ. օրօխկէլ, Դ. օղօրկել, *դէպի* > Մ. դ՛ըբա, Ա. դըբա, *սպի* > Մ. սըբա, եղի > Խ. յէղա:

[561] Հիշատակարաններում և վիմական արձանագրություններում բազմիցս հան-դիպում է *Շնորհաւոր* անձնանվան *Շնահաւոր* տարբերակը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 87):

[562] Այս ձևը վկայված է միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 94):

[563] Աճառյանը կարծում է, թե այս դեպքում Վանի բարբառում նախաձայն *ու*-ն ընկել է, հետո ավելացել է *ա* (տե՛ս ՔՎԲ, էջ 43), սակայն Բայազետի բարբառի *օղորթ* ձևը թերևս վկայում է ու>օ>ա հաջորդական անցումների մասին:

[564] Այս մասին տե՛ս նաև ՀԼՊՔ, էջ 106-129:

Բայազետի բարբառում արձանագրվում են բաղաձայնների՝ մասնավոր բնույթ կրող հետևյալ փոփոխությունները.

ա) *Խուլ հպականների ու հպաշփականների շնչեղացում*

Երևույթը դրսևորվում է սակավ դեպքերում. *գ՛ըթել, կըճեփ// կըռճեփ* (խեճեպ), *կ°ոկութ, քիփ* (կիպ), *ճ°կաթ, սութ, փացեղ, խօնթ-խընթալ, լուսամութ, պապաք, ճիպոթ, վարաք*: *Գ՛ըթել* ձևը թերևս առաջացել է բարբառիս բառասկզբի արտաբերական յուրահատկության հետևանքով. *գտանել* նախաձևի *ա*-ի անկումից հետո *ն*-ի կողքին հայտնված *տ*-ն պետք է դառնար *դ*՝ *գ՛ըդնել* (ինչպես՝ մըտամըդնել, ս°պոն - ս°բնել), բայց Բայազետի բարբառը, ինչպես նշել ենք, բառասկզբի շնչեղ ձայնեղից հետո չի հանդուրժում ձայնեղ պայթական, ուստի սպասվող *դ*-ի դիմաց գործառում է այդ դիրքում սովորական շնչեղ խուլ՝ *թ*: Վանի բարբառում *սութ* ձևի առաջացումը Հ.Աճառյանը պայմանավորում է *աղորթ* բառի հետ հաճախակի գործածությամբ, ինչպես՝ «....սո՞ւտ է թե աղորթ.- սո՞ւտ է, ղորթ է չգիտեմ»[565]: Այդպես է նաև Բայազետի բարբառում՝ *սութ - օղոռթ* («հայտնի չէ՝ սուտ է, թե ճիշտ»): Մյուս որոշ դեպքերում գուցե դեր են խաղացել փոխազդեցական գործոններ, բայց, թվում է, կարող է էական լինել նաև բառավերջում արտասանական լարվածության նվազման միտումը: Ի դեպ, առանձին բառերում խուլի դիմաց շնչեղ խուլ ունեն համեմատվող բոլոր բարբառները, ինչպես՝ Վ. *կծիք*ʲ (կծիկ), *շապիք*ʲ (շապիկ), *վոսփ* (ոսպն), Ա. *քըթնէլ, սութ, օքութ, փացէխ*, Մ. *հօնթիընթել, փըրցընալ* (պրծանել), Խ. *տապիկէլ* (տապակել), *պապաք* (պոպոկ), *օքութ, սութ*, Դ. *կըռճեփ, փըթել* (փտել), *սութ*:

բ) *Ձայնեղների և շնչեղ խուլերի դիմաց պարզ խուլերի դրսևորում*

Ինչպես շրջակա բոլոր բարբառներում, Բայազետի բարբառում ևս *դ* հոդը միշտ *տ* է հնչում. *գ՛իրքըտ, գ՛ըլօխըտ, հ՛առէչըտ, ձ՛էնըտ*: Թերևս այս իրողության հետ կապված է *դ*-ի դիմաց *տ*-ի հանդես գալը *էտ*(<այդ) ցուցական դերանվան մեջ և դրանից կազմված ձևերում (ըտե, էտքան, էտենց ևն)[566]: *Թ*-ի դիմաց *տ*-ն հանդես գալ իս *փա-*

[565] ՔՎԲ, էջ 87:

[566] *Այդ* դերանվան դիմաց *էտ*-կամ դրանով կազմված ձևեր ունեն նաև շրջակա բոլոր բարբառները:

տը՞տել (>փաթաթել), *մ°խատ*[567] բառերում: Գ-ի դիմաց պարզ խուլ ունենք *°հակին*[568], *թանգակին, գ՛ըրակետ* բառերում, իսկ ք-ի դիմաց *կ* ունենք *°ղիկ* բառում: Մի քանի բառում *ջ*-ի և *չ*-ի դիմաց ունենք *ճ*, ինչպես՝ *բ՛ըխպուճ* (< պղաջակ), *հ՛անգաճ* (<ականջ), *գիճել* (<զիջել), *զօնքաճ* (<զոքանչ): Շրջակա բարբառային միավորներում բառամիջի և բառավերջի դիրքերում ձայնեղների խլացումը բնորոշ է Վանի բարբառին, ավելի թույլ դրսևորվում է Խոյ-Մարաղայի բարբառում, իսկ Մշո բարբառի խոսվածքների մեծ մասում, Դիադինի և Արարատյան բարբառներում երևույթը արտահայտվում է հատուկենտ օրինակներով[569]: Սակայն Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքում բառամիջում և բառավերջում ձայնեղների և շնչեղ խուլերի դիմաց խուլերի դրսևորումն ունի համակարգային բնույթ[570]: Իհարկե, Բայազետի բարբառում խլացման և ապաշնչեղացման բերված դրսևորումները առանձին դեպքերում կարող են բացատրվել առնմանական կամ տարնմանական փոխազդեցություններով (փատը՞տել, թանգակին, գ՛ըրակետ, բ՛ըխպուճ), այլ դեպքերում՝ Ալաշկերտի խոսվածքի կամ Վանի բարբառի ազդեցություններով: Սակայն, օրինակ, *ականջ* և *զոքանչ* բառերի դիմաց շրջակա բարբառային միավորները, իբրև կանոն, չունեն Բայազետի բարբառի *հ՛անգաճ* և *զօնքաճ* ձևերի զուգահեռներ[571]: Ընդհանուր առմամբ, պետք է փաստել, որ դիտարկվող բարբառներում ձայնեղների խլացման և շնչեղների ապաշնչեղացման միտումները ունեցել են դրսևորման տարբեր աստիճաններ, և ի տարբերություն հարևան Ալաշկերտի խոսվածքի՝ Բայազետի բարբառում այդ միտումները թույլ են արտահայտվում:

գ) *Անկում*

Բայազետի և շրջակա բարբառներում դիտարկվում են բառերում մի շարք բաղաձայնների ոչ օրինաչափ անկման դեպքեր, ընդ որում՝ անկում տեղի է ունեցել հիմնականում այլ բաղաձայնների հարևանությամբ դիրքերում: Ընդհանուր առմամբ բաղաձայնի անկում

---

[567] Դիադինի բարբառում՝ *փ°թը՞տել*, *մ°խատ*, Արարատյանում՝ *փաթատէլ*, *մ°խատ*:
[568] Խոյ-Մարաղայի բարբառում՝ *ահակ՚ին*:
[569] Տե՛ս այդ բարբառների քննությանը նվիրված մենագրությունների համապատասխան բաժինները:
[570] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 29-30, 32-34:
[571] Դիտարկվող բարբառներում այդ բառերն ունեն հետևյալ արտահայտությունները. *ականջ, գէօք՚անչ* (Վ.), *°նջիկ՚, զօնքանչ* (Խ.), *անգաջ, զօնկաջ* (Ալ.), *ականջ/անգաջ, զօնքաջ* (Ա.), *զօնքաչ* (Մ.), *հ°նգ՚°ճ, զօնք՚°չ* (Դ):

ավելի շատ նկատվում է բառամիջում, սակայն կան նաև բառասկզբի և բառավերջի բաղաձայնական անկման դեպքեր ևս: Ավելի շատ են *ր* և *տ* բաղաձայնների անկման օրինակները:

Ր - *արժել* > °*ժել* (Վ. աժել, Ալ. ըժել), *արջառ* > °*ջառ* (Վ. °ճ°ռ, Մ. Ա. աջառ), *դուրս* > *դ՛ուս* (Ա. Դ. Ալ., Վ. Խ. տիս), *երբ* > *յեփ* (Ա. Մ. Վ. Դ., Խ. յէփ), *զարկանել* > *զ°նել* (Վ.), *կարենամ* > *կ°նամ* (Վ. կանամ), *շարժել* > *ժ°ժել* (Վ., Խ. ժ°շկ՝, Ա. Ալ. ժաշկ), *շնորհավոր* > *շընախավոր* (Վ. Դ. Խ., Ալ. շընահավոր), *շնորհք* > *շընոխկ* (Վ. Դ. շնոխք՝), *ջրաղաց* > *ջ՛աղաջ*[572] (Մ., Վ. ճաղաց, Խ. ճ°ղ°ջ, Դ. ջ՛ °ղ°g, Ա. ջ՛ աղաց), *սուրբ* > *սըփ* (Վ. Խ. Դ., Ա. սուփ), *կե՛ր* > *կե* (Վ. Ա., Խ. կ՝է, Մ. կի), *բեր* > *բ՛ե* (Վ. պե, Խ. պէ, Մ. բ՛ ի, Ա. բե//բ՛ ի), *տուր* > *տու* (Խ. Ա.), *դիր* > *դ՛ի* (Մ.)[573].

Տ - *աստված* > °*սված* (Վ. ասպած, Խ. Ասված, Մ. ասված), *գաղտնի* > *գ՛աղնի* // *գ՛ախնի*, *շուտ-շուտ* > *շուշուտ* (Ա.), *գիտացի* > *գիցա* (Վ. կիցա), *առաւօտուն* > *հ՛առավտուն* > *հ՛առավնեց*, *հ՛առավնէ*, *հ՛առավնախառ*, *արտասուք* > °*ռսունք* (Մրղ. առսունք), *Ստեփան* > *Սէփան*:

Այլ բաղաձայնների անկման օրինակներ. *ս* - *սկեսուր* > *կիսուր* (Վ. Ա. Դ. Մ., Խ. կ՝ըսիւր), *սկեսրայր* > *կէսրար* (Վ. Դ. Մ. կէսրէր, Խ. կ՝էս-րար). *ն* – *մնալ* > կտր. *մ°gի* (Վ. Մ. մացի), *գնալ* > կտր. *գ՛ացի* (Մ.), *ամէնք* > °*մէք*. *խ* – *խորիսխ* > *խորիզ* (Վ. խորիս, Խ. խորիզ). *ղ* – *թող* > *թո* (Ա.), *այստեղ* > *ըստե*, *ուղղորդ* > *օղոռթ* (Ա. օղոռթ, ղոռթ, ըղոռթ). *դ* – *հիւանդանալ* > *խիվընալ*, *խիվընցա* (Վ. Խիվընցա), *Արտավազդ* > °*ռտա-վազ*[574]. *հ* – *հավատալ* > °*վատա* (Խ. Դ. Ավատալ)[575], *հերթ* > *յեռթ*, *հեռի* > *յեռու*. *յ* – *յաղթել* > °*խտել* (Խ. Ախտէլ), *յաջողել* > °*ջողել* (Խ. °ճողէլ), *յօրանջել* > *օրոշկըտալ* (Ա. Դ. օրոժկըտալ):

դ) *Հավելում*

Հատկապես շատ են *ն* - ի հավելում ունեցող բառերը, ինչպես՝ *կամուրջ* > *կ°ռմունջ* (Վ.Ալ.Խ.Ա.Դ. կարմունջ), *մաճ* > *մ°նջ* (Վ. Ալ. Ա. մանջ, Դ. Մանչ), *բորբոքել* > *բ՛օրպընքել* (Ալ. բ՛օռպընգել, Վ. պէօրպընք՝ել), *կանաչ* > *կ°նանչ* (Խ. Ա. Դ. կանանչ, Ալ. Կանանճ), *փոթ* >

[572] Արդեն 10-րդ դարի վիմական արձանագրություններում վկայություններ կան *ջաղաց* ձևի վերաբերյալ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 144):
[573] *Ր*-ի անկման այս դեպքերից շատերը վկայված են միջինհայերենյան սկզբնաղ-բյուրներում, ինչպես՝ *աժան*, *աժել*, *եփ*, *դուս*, *ժաժել*, *շնահաւոր*, *ջաղաց*, *քաշել*, *ճամփա* (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 144 - 146):
[574] *Արտաւազ* ձև վկայված է միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 150):

փոնթ (Ա. Խ. Վ. Դ., Ալ. փոնտ), *բորբոսել* > *բ՛օրփըսնել* (Ալ. Դ. բ՛օռ-պըսնել, Ա. բ՛օրբօսնէլ), *աղիճ* > °*ղինջ* (Ա. աղինջ, Ա.Վ. յեղինջ), *լի* > *լիքը* > *լինքը* (Ա.), *շեքել* > *շենքել* (Մ., Վ.):

Այլ բաղաձայնների հավելման օրինակներ. *ռ – ածել ի* > °*ռծըլի* (Ա. արծըլի, առծըլի, Դ. առծըլի, Ալ. առձըլի, Խ. առծէլիւ, Վ. արծըլի), *հանգոյց* > *խանգուռց* (Վ. խանգ՚ոռց, Դ. խ՚ոնգ՚ոռց, Ալ. հանգուռծ), *եղիճ* > *յեղըռճիկ, ր – ցաճ* > *ցաճըր* (Ա. Վ. ցաճր, Խ. ցանճըր), *նապաստակ* > *լապըստըրակ* (Դ., Վ. լապըստրակ, Ա. լապաստըրակ). *դ – մանր* > *մ°նդըր* (Ա. Մ. Ալ. Խ. Դ. մանդըր), *ծանր* > *ծ°նդըր* (Ա. Մ. Ալ. Վ. Դ. ծանդըր, Խ. ծանդըռ), *թոնիր* > *թունդիր* (Ա. Ալ. Դ., Խ. թոնդիր). *բ - համարել* > *խամբըրել* (Դ. Խ., Վ. խամբրել, Մ. Ալ. համբըրել), *թմրել* > *թըմբըրել* (Դ. Ալ. Մ., Ա. թըմբըրէլ), *ում* > *ումբըր* (Ալ.), *ամէն* > *հըմբէն. մ – կանեփ*> *կ°նամփ*[576] (Ա. Ալ. կանամփ, Մ. կանանպ). *տ- հիւսակ* > *հ՛ուստակ* (Ալ. հ՛ուստագ)[577]:

գ) *Բաղաձայնական այլ փոփոխություններ*

Քննարկվող բոլոր բարբառներում *պատիժ* բառի *ժ* շփականը վերածվել է հպաշփականի, ինչպես՝ Բ. *պ՚տիչ*, Դ. *պատիչ*, Վ.Խ.Մ.Ա. *պատիճ*: Թերևս այս փոփոխությունը արդյունք է ապաստուգաբանության, երբ բառի վերջում ընկալվել է *իչ* վերջածանց[578]: Բայազետի և շրջակա բարբառներում *ռ*-ի դիմաց բառամիջում երբեմն հանդես է գալիս *ր*. *պառակել* > Բ. *պ՚ոկել*, Ալ. *պարգել*, *վարդավառ* > Բ. *վառթիվոր*, Ալ. *վառտէվար*, Խ. *վ°րթըվոր*, Վ. *վ°րտէվ°ր*, *կուռք* > Բ. *կուրք, փառք* > Բ. *փարք*, Ալ. *փարկ*: Առանձին դեպքերում բառավերջում տեղի է ունեցել *ր* > *ռ* անցում. *ոսկր* > Բ.Ալ. *օսկոռ*, Խ. *վոսկոռ*, Վ. *ուսկոռ*, *թրթուր* >

---

[575] Միջին հայերենում *աւատպ* ձևը տարածված է եղել և, ինչպես նշվում է, հատուկ էր հատկապես արևմտյան բարբառներին (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 148. տե՛ս նաև ՀԱԲ, հ. 3, էջ 70):

[576] Թերևս պրսկ. kanab ձևից (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 513):

[577] Հնչյունի հավելման մի շարք դեպքեր արձանագրվել են դեռևս միջին հայերենում, ինչպես՝ *արտասունք, արցունք, կանանչ, կարմունջ, մանտր, ծանդր, թոնտրէն* (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 154-155):

[578] Այդ են վկայում հետևյալ իրողությունները. Բայազետի բարբառում «պատիժ» իմաստն արտահայտվում է *պ՚տիժ* բառով, իսկ *պ՚տիչ* բառը նշանակում է «հոգս պատճառող երևույթ կամ անձ»: Խոյի բարբառում զուգահեռ գործառում են *պատիճ* (*պատիճ* ձևը վկայված է միջին հայերենում, 15-րդ դարի հիշատակարաններում /տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 160, ՀԼՊՔ, էջ 244/) և *պատիշկյ* ձևերը, ընդորում՝ *իչ* ածանցը այս բարբառում դառնում է *իճ* (տե՛ս ԽԲ, էջ 48) : Վանի բարբառի *պատիճ* ձևում ևս կարող է գիտակցված լինել *իչ* վերջածանց, քանի որ, օրինակ, *ոսկերիչ* բառը այստեղ գործածվում է *վոսկրիչ* և *վոսկրիճ* ձևերով (տե՛ս ՔՎԲ, էջ 78):

Բ.Վ.Խ. *թըռթուռ*[579], Ալ. *թըռտուռ*, փրփուր > Բ.Վ. *փըռփուռ*[580], Մ.Ալ. *փըռպուռ* ևն: Բառամիջում *ր* > *ռ* անցում ունենք *հ՛օռընալ* (< յօրանալ. Վ. հէօռան°լ, Խ. հօռանալ) բառում: Հազվադեպ *ռ* – ի կամ ր-ի դիմաց ունենք *լ*. *շուրջառ* > Բ. *շուռչալ*, Մ. *սուռճալ*, Ալ. *շուռճալ*, *խաիր* > Բ.Ալ. *խըսիլ*, *մոծիր* > Բ. Ա. *մօծիլ*, Մ. *մօձիլ*: Ր-ի դիմաց *յ* ունենք *բ՛այլուս* (< բարլուս < բարի լույս) և *վիյավոր* (< վիրավոր) ձևերում: *Ր*-ի դիմաց *ն* է դրսևորվում *բարձր* բառի բարբառային տարբերակներում՝ Բ.Դ.Մ. *բ՛անցըր*, Ալ. *բ՛անծըր*, Վ.Խ. *աՊնցըր*[581]: Ն-ի դիմաց *լ* հանդիպում է բառասկզբում՝ *նապաստակ* > Բ.Վ. *լապըստըրակ*, Խ. *լափըստըրակ*, նաև՝ *նման* > Խ. *լըմ°ն*: Թերևս *նման* բառի վերջում *ն*>*լ* անցման հետևանքով են առաջացել *էսմալ* (< էս նման), *էդմալ* (< էդ նման), *էմմալ* (< էն նման) ձևերը, ապա սրանց նմանողությամբ՝ *իմալ* (ինչի նման)[582] ձևը, որ գործառում է նաև Մշո, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի և Մոկսի խոսվածքներում: *Լ*-ի դիմաց *ն* է հանդես գալիս *մեռել* բառի սեռականի ձևում՝ *մեռնի* (մեռլի) *տուն*: Երբեմն *կըդրել*, *կօդրել*, *աՊդրաստ* ձևերին զուգահեռ հանդիպում են *կըյրել*, *կօյրել*, *աՊյրաստ* ձևեր: Դրափոխությամբ տ-ից առաջ հայտնված *ա*-ն *ֆ* է դարձել *սափտակ* բառում՝ *սիֆտՊկ* (Վ. սիվտակ):

Բայազետի բարբառում (նաև շրջակա բոլոր բարբառային միավորներում) կան դեպքեր էլ, երբ բառի հնչյունական կազմը ժամանակի ընթացքում զգալի փոփոխությունների է ենթարկվել՝ հաճախ համատեղելով տարատեսակ հնչյունափոխական իրողություններ և մթագնելով բառի ներքին ձևը: Հ.Աճառյանը հնչյունական արտահայտության առումով «բոլորովին այլափոխված բառերը» կոչում է այլափոխություններ[583]: Ներկայացնելով *սարդոստայն* բառի դիմաց Վանի բարբառում առկա *սարանդէոստիկ*

---

[579] Հ.Աճառյանը նկատում է, որ այս բառը *ռ* վերջաձայնով է արտասանվում շատ տեղերում՝ Երևանում, Ալաշկերտում, Սալմաստում, Ոզմիում, Ագուլիսում, Մակուում (տե՛ս ՔՎԲ, էջ 88):

[580] Այս բառի՝ ռ-ով արտասանությունն Հ.Աճառյանը արձանագրում է շատ վայրերում՝ Երևան, Ալաշկերտ, Մակու, Ագուլիս, Շամախի, Սալմաստ, Մուշ (տե՛ս ՔՎԲ, էջ 89):

[581] Հ. Աճառյանը այս փոփոխությունը համարում է տարնմանության հետևանք (տե՛ս ՔՎԲ, էջ 92):

[582] Հ.Աճառյանը նշում է, որ *ցեղ* բառը բարբառներում ստացել է «պէս, կերպ» նշանակությունը, որից և առաջացել է *ի՞նչըղ* «ինչպես» ձևը /< ի՞նչ ցեղ/ (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 453): Կարծում ենք՝ այդ կերպ *նման* բառը ևս դիտարկվող բարբառային միավորներում ստացել է «պես, կերպ» իմաստը, որից և առաջացել են *էսմալ* «այսպես» (< էս նման), *իմալ* «ինչպես» (< ինչի նման) ձևերը:

[583] ՔՎԲ, էջ 103:

ձևը՝ Հ.Աճառյանը նկատում է, որ այդ ձևում «ո՛չ միայն ունենք –իկ մասնիկի հավելումը, այլև բոլոր ձայնավորների և ն/տ բաղաձայնների տեղափոխությունը»[584]: Բայազետի բարբառում այդ բառի դիմաց ունենք գրեթե նույն կարգի ձև՝ *ս°ռանդստիկ*: Այդպես է և Խոյ-Մարաղայի (սալանդստիկ$^{ յ}$), Դիադինի (սարանդստիկ), Մշո (սալանդստիգ) բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում (սարանդոստիգ): *Զրոյորդան* բառի դիմաց Բայազետի բարբառում գործառում են *չընակութ, չընկութան* ձևեր: Վանի բարբառն այդ բառի դիմաց ունի *ճռռութան, ճոլոտրան* ձևերը, Մշո բարբառը՝ *ճոլորտան*, Դիադինի բարբառը՝ *չռութան*, Արարատյան բարբառը՝ *ճռռութան*, Խոյ-Մարաղայի բարբառը՝ *ճռնընկութ*: Այս փոփոխությունների դեպքում Հ.Աճառյանը իրավացիորեն կարևորում է ժողովրդական ստուգաբանության դերը՝ գրելով. «....այսպէս Վն. անշուշտ կապված է *ճռռ* «խողովակ» բառի հետ, այլուր *շռռալ* և *կութ, կութիլ* բառերի հետ»[585]: Կարծում ենք՝ այդկերպ են բացատրվում նաև Բայազետի բարբառի հիշյալ ձևերը՝ կապվելով *չընռալ* (ջրի կամ հեղուկի առատթափվելը) և *կութ, կութիլ* բառերի հետ: *Զրաղացպան* նախնական ձևի դիմաց Բայազետի բարբառն ունի *ջ՛ախճըփան*, որն առաջացել է հնչյունական մի շարք փոփոխություններով՝ *ր*-ի անկում (ջ՛րաղաց > ջ՛աղաց), *ջ*-ի առնմանական ազդեցությամբ *ց* > *չ* անցում (ջ՛աղաց > ջ՛աղաչ), այնուհետև շեշտազրկման հետևանքով *ա*-ի անկում և *ղչ* խմբի ձևավորում, *չ*-ի առնմանական ազդեցությամբ *ղ*-ի խլացում (ղ > խ), *խ*-ի ազդեցությամբ *չ*-ի ապաշնչեղացում (չ > ճ) և ի վերջո՝ *ապ* > *փ* անցում: Նույն կարգի փոփոխություններ կան նաև շրջակա բարբառների ձևերում՝ *ջ՛°խճըպան* (Դ.), *ջ՛ախչըբան* (Մ.), *ջ՛ախճըբան* (Ալ.), *ջ՛աղչըբան* (Ա.), *ճ°ղչըպան* (Խ.): *Խաչերկաթ* բառի դիմաց Բայազետի բարբառն ունի *խառճըկաթ* ձևը, որն առաջացել է *ե*-ի անկումով, *չր* > *րչ* դրափոխությամբ, *ր* > *ռ* և *չ* > *ճ* անցումներով: Շրջակա բարբառներն ունեն՝ *խ°ռճըկաթ* (Խ.), *խառջըգատ* (Ալ.), *խառճըկաթ* (Ա. Դ.), *խառջեկաթ* (Վ.): *Մինչև* բառի դիմաց Բայազետի և Վանի բարբառներն ունեն *չում*, *չուր* ձևերը, որոնք, ըստ Հ.Աճառյանի, առաջացել են նախավանկի անկումով, ընդ որում՝ *չուր* ձևը բխեցվում է *մինչև որ*

[584] Տե՛ս նույն տեղում:
[585] ՀԱԲ, հ. 4, էջ 156:

կապակցությունից[586], որի դիմաց միջին հայերենում վկայված է *մինչուր* ձևը[587]: *Չուր* ձևն ունեն նաև Արարատյան, Մշո, Դիադինի բարբառները: Բայազետի, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառներն ունեն *մկա*, Մշո բարբառը՝ *մգա*, իսկ Դիադինի բարբառը՝ *մ̣կ*° ձևերը, որոնք, ինչպես նկատում է Հ.Աճառյանը, առաջացել են *հեմ // հիմ* արմատի վրա *ակ // իկ* նվազականի հավելումով, ապա կրճատումով՝ *հեմ // հիմ* > *հիմակ // հիմիկ* > հմկա, հմգա > մկա, մգա[588]: Ի դեպ, *մկա*, *մգա* ավելի սովորական ձևերին զուգահեռ դեռևս հանդիպում են նաև *հ̣մկա* (Բ.), *հմգա* (Մ.) տարբերակները: Թերևս *ջրձգել*[589] (ջուր սրսկել, ցանել) բառից է առաջացել Բայազետի բարբառի *ջ՛ը̣ռճ̣ընքել* (Խ. ճ̣ըռճ̣ընէլ, Վ. ճրճ̣ընել[590], Ա. ջ՛ըրջ՛ընքէլ, Մ. ջ՛ըրջ՛ընքել, Դ. ջ՛ըռճ̣ընքʲել) ձևը՝ բառասկզբի *ջ*-ի առնմանական ազդեցությամբ, բաղաձայնական խմբի խլացմամբ, *ն*-ի հավելումով. *ջրձգել* >* *ջ՛ըրջգել*[591] > **ջ՛ըրճ̣ըքել* > *ջ՛ըրճ̣ընքել*[592]: *Խոռոչակ*[593] (փոքր խոռոչ) բառի դիմաց Բայազետի բարբառն ունի *խոռճակ* ձևը՝ ձայնավորի անկմամբ և *ռ*-ի ազդեցությամբ *չ* > *ճ* անցմամբ: Այստեղից էլ ձայնավորի անկմամբ ձևավորվել են *խոռճ̣ըկել*, ապա՝ *խը̣ռճ̣ըկել* (մի կերպ խցկելով թաքցնել) ձևերը[594] (Վ. Ալ. խոռճկել՝ թաղել, Խ. խոռճ̣ըկէլ՝ թաքցնել, Ա. խորճ̣ըկէլ՝ թաղել, թաքցնել)[595]: Բայազետի բարբառն ունի *զախախորել* (սարսափից քար կտրել) ձև, որի դիմաց Դիադինի բարբառն ունի *զ*°*խ՛խորել*, Խոյ-Մարաղայի բարբառը՝ *զախախորէլ // զամխորէլ*, Արարատյան բարբառը՝ *զահահորէլ*: Վանի բարբառի *զախախորել* ձևը Հ.Աճառյանը համարում է հնության մի գեղեցիկ մնացորդ, «որ գրաբարի *զարհուրիլ* բայն է, բայց կազմված պարզ *ահ* (առանց *ր*-ի)

---

[586] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 323:
[587] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 85:
[588] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 78-79:
[589] Այս ձևի մասին տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 134:
[590] Հ.Աճառյանը նշում է, որ *ճրճ̣ընել* ձևն առաջացել է *ջրցանել* բառից (տե՛ս ՔՎԲ, էջ 94):
[591] Միջին հայերենում վկայված է *ջրջկել* (թրջել, թաց անել) ձևը (տե՛ս ՄՀԲ, Ե., 2009, էջ 674), Պոլսի բարբառն ունի *ջրցքնել* ձևը (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան /այսուհետ՝ ՀԼԲԲ/, 5, էջ 203):
[592] Հ.Աճառյանը *ձիգ* արմատի գավառական տարբերակները թվարկելիս իբրև նոր բառ բերում է նաև *ջրջնքել* ձևը (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 153):
[593] Տե՛ս Ս.Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944, (այսուհետ՝ ՀԲԲ), հ. 2, էջ 285:
[594] Դ.Կոստանդյանը, իբրև գրաբարից տարբեր աճական կամ հին ածանց ունեցող միավոր, *խոռել* բառի դիմաց բերում է Երզնկայի բարբառի *խոռճ̣ել* ձևը՝ հավանական համարելով դրա՝ *խոռոչ* ձևից առաջացած լինելը (տե՛ս Դ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Ե., 1979, էջ 58):

արմատից», բացի այդ՝ Վանի բարբառը պահել է «բայի նախավոր ձևը՝ առանց *զ* սաստկականի՝ *ախախտրել* ...., մինչդեռ գրաբարը կորցրել է նախավոր *արհուրիլ* ձևը և գիտե միայն նրա գոյականը՝ *արհաւիրք*»[596]: Թվում է՝ *զախախտրել* բառը կարող է հետագա ձևափոխությունը լինել *զահի հարկանել* (անց. կատ.՝ *զահի հարայ*) կառույցի՝ գուցե ազդված *զարհուրիլ* բառից, մանավանդ որ բարբառներում հանդիպում են նաև *ահահար, ախախար, ահահորիլ, ախախտրիլ, զահահար, զահահարել, զախախտր, զահահորիլ*[597] ձևեր: Թերևս Ալաշկերտի խոսվածքի *զարահուրել* ձևը կարող է *զարհուրիլ* բայի հետագազարգացումը լինել:

դ) *Այլ բարբառների ազդեցության դրսևորումներ*

Բայազետի բարբառում որոշ դեպքերում բառի ձևավորումը ամենայն հավանականությամբ հետևանք է հարևան բարբառների ազդեցության: Այսպես, հինհայերենյան *ձգռտալ* (զկռտալ, որձկալ) բառի դիմաց ունենք *սընքըռտալ*, ընդ որում՝ բարբառումս բառը նշանակում է ոչ թե *որձկալ*, այլ *հեծկլտալ*: *Ձ* > *ս* փոփոխությամբ այս բառն ունեն նաև Վանի (սկըռտալ), Դիադինի (սըկըռտալ), Խոյ – Մարաղայի (սըկըռտալ) բարբառները, Ալաշկերտի խոսվածքը (սընկըռ-դալ): Արարատյան բարբառն ունի *զըկըռտալ* ձևը: Փաստորեն, այս օրինակում հպաշփականից անցումը շփականի ընդհանուր է համեմատվող բոլոր բարբառների համար, բայց եթե Արարատյան բարբառում անցումը չի ուղեկցվում խլացմամբ, ապա այլ դեպքերում թերևս նախ տեղի է ունեցել խլացում, ապա՝ շփականացում: Այդ է վկայում միջինհայերենյան *ծռկտել* ձևը[598]: Հավանաբար Բայազետի բարբառ *սընքըռտալ* ձևը պետք է մուտք գործած լինի բառասկզբում ձայնեղների խլացում ունեցող բարբառից: Թերևս մյուս բարբառների համար աղբյուրը Վանի բարբառն է, որտեղ Աճառյանը տեսնում է երկու բառ, «որոնց մեջ բառասկզբի *ձ*-ն գտնվում է *գ* բաղաձայնից առաջ. երկուսի մեջ էլ *ձ*-ն դառնում է *ս* և հաջորդ *գ* ձայնն էլ վերածվում է *կ*-ի. ըստ այսմ՝ ձգել – իսկել, ձգռտալ – սկըռտալ»[599]: Ուշագրավ է, որ Աճառյանի բերած *սկըռտալ* ձևում *կ*-ից

[595] Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 2, էջ 399:
[596] ՔՎԲ, էջ 164:
[597] Տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 112, ՀԲԲ, հ. 2, էջ 6, ՀԼԲԲ, հ. 1, էջ 33, 395:
[598] Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 148:
[599] Տե՛ս ՔՎԲ, էջ 68-69:

առաջ *ը* չի արտահայտված, այսինքն՝ *ը*-ի բացակայությամբ *ծ*-ն հայտնվել է բաղաձայնից առաջ և հնչյունափոխվել։ *գռուզ* բառի դիմաց միայն Մշո բարբառն ունի *գ՛ըռուզ* ձև։ Ըստ Հ.Աճառյանի՝ «Հայ բառի հնագույն ձևև են ներկայացնում Նբ. Սլմ. Վն. *կռունձ* «գանգուր, գռուզ (մազեր)»»՝ հին նձ>զ ձայնափոխությամբ[600]։ Գ.Ջահուկյանը ենթադրում է, որ բառը թերևս բնիկ հնդեվրոպական է՝ առաջացած *u(ē)rong՛h արմատից՝ > *գռունձ* > *գռուզ*՝ *r > *ռ* սաստկական անցմամբ [601]։ Եթե այդպես է, ապա մյուս բարբառների *կռուզ, կռունձ* (Վ.), *կըռինձ* (Խ., Ա.), *կըռունձ* (Բ.Ալ.Դ.Բ.) ձևերում ունենք գ > կ անցում։ Քանի որ խմբում բառասկզբի ձայնեղի խլացում հատուկ է միայն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներին, պետք է ենթադրել, որ մյուս բարբառները իրենց ձևերը ստացել են այդ բարբառներից։ Բառի ձայնավորական կազմը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ Բայազետի, Դիադինի բարբառների և Ալաշկերտի խոսվածքի *կըռունձ* ձևը գալիս է Վանի բարբառից, իսկ Արարատյան բարբառի *կըռինձ* ձևը՝ Խոյ-Մարաղայի բարբառից։ Թերևս *տըխպել* [602] (<դեղբ), *տըժգо* (<դժգոհ) ձևերում բառասկզբի ձայնեղի դիմաց խուլի արտահայտությունը ևս Բայազետի բարբառում հետևանք է Վանի կամ Խոյ-Մարաղայի բարբառի ազդեցության։ *Ջիլ/ջիղ* բառի դիմաց Բայազետի բարբառն ունի *ճիլ* (հատկապես՝ պարանոցի ջիլ) և *ճեղ* (մսի մեջ եղած ջիլ, նաև՝ ձիգ, մկանուտ)։ Խոյ-Մարաղայի բարբառն ունի *ճիլ* ձև, իսկ Վանի բարբառը՝ *ճեղ* ձև, ուստի պետք է ենթադրել, որ Բայազետի բարբառը այդ բարբառներից վերցրել է երկու ձևն էլ՝ իմաստային որոշ տարբերությամբ։ *կ°յնել* (< կանգնել) ձևում *նգ* հնչյունախմբի դիմաց ունենք *յ*։ Այդ կարգի հնչյունափոխություն միայն *կանգնել* բառի դեպքում ունեն Խոյ-Մարաղայի, Դիադինի, Մշո, նաև Արարատյան[603] բարբառները։ Թվում է՝ թե՛ Բայազետի և թե՛ մյուս բարբառներին հնչյունական այդ փոփոխությամբ ձև կարող է անցած լինել Վանի բարբառից, որտեղ գործում է այսպիսի մի օրենք. «Երբ անկախ կամ ռնգականին հաջորդող *գ* ձայնը դեպքերի բերմամբ ընկնի բաղաձայնից առաջ,

[600] ՀԱԲ, հ. 1, էջ 601։
[601] Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 175։
[602] Այս բառի՝ խուլով սկսվող ձևեր ունեն նաև Վանի, Խոյ-Մարաղայի, Մշո, Արարատյան բարբառները (տե՛ս ՀԼԲԲ, հ. 6, էջ 189)։
[603] Տե՛ս ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 9 տետր (Փարպի), 753-րդ զուգաբանություն։

դառնում է *յ*. և նախորդ ռնգականն էլ կորչում է. այսպես են՝ *ագանիլ > խայնել* (անցնելով *հագնիլ* ձևից), *կանգնիլ > կայնել*, *գանգատիլ > կյ°յտել* (անցնելով *գանգտիլ* ձևից), *զնգզնգալ > զըյզընգյ°լ*»[604]: Բայազետի բարբառի որոշ խոսվածքներում (Սարուխանի, Լանջաղբյուրի) սակավաթիվ բառերում *ր>ռ*-ից հետո նախնական ձայնեղ հպաշփականի դիմաց ունենք ոչ թե շնչեղ, այլ պարզ խուլ, ինչպես՝ *արձակ > հ՛առծակ, արձան > °ռծան, մրջիմն > մըռճեմ, շրջել > շըռճել, ստերջ > ըստեռճ*: Այլ դեպքերում հանդես է գալիս շնչեղ խուլ, ինչպես՝ *խուռց, բ՛առցել, դ՛առց, °ռչ, հ՛առչի, վեռչ, քըռչ, թըռչուկ* ևն, ուստի թվում է՝ ապաշնչեղացման բերված դեպքերը կարող են արդյունք լինել Ալաշկերտի խոսվածքի ազդեցության, որտեղ օրինաչափ է բառամիջում ու բառավերջում թե՛ ձայնեղ, թե՛ շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների դիմաց պարզ խուլերի գործառությունը[605]: Մյուս կողմից՝ Վանի բարբառում ևս *ր,ռ*-ին հաջորդելիս ձայնեղ հպաշփականները հանդես են բերում պատմական զարգացման որոշ յուրահատկություններ: Այսպես, ըստ Հ.Աճառյանի՝ բառամիջում *ր*-ից հետո *ձ*-ն դառնում է *ծ*, իսկ *ր>ռ* անցման դեպքում *ձ*-ն դառնում է *ց*՝ *փորձել > փործել, վարձել > վ°ռծել*, բայց՝ *արձակել > առցկել, վարձք > վ°ռցք*[606]: Բացի այդ՝ բառավերջում *ր,ռ*-ից հետո *ջ*-ն դառնում է *ճ* կամ *չ*, ինչպես՝ *բաղարջ> աբղ°ռճ, ստերջ > ստեռճ, արջ > առչ, վերջ > վերչ*[607]: Որոշ դեպքերում *ր,ռ* - ից հետո ձայնեղ հպաշփականի դիմաց խուլ բաղաձայն է դրսևորվում նաև Խոյ-Մարաղայի բարբառում, ինչպես՝ *դերձակ > տէրծիկ՝, թրջել > տըռճէլ, մրջիւն > մըռճէմ, շրջել > շըռճէլ*[608]:

5.2. *Փոխազդեցական հնչյունափոխություն*

Յուրաքանչյուր լեզու, նաև յուրաքանչյուր բարբառ ունի հնչաշղթայի կազմության, հնչյունների հարմարեցման իր օրինաչափությունները, որոնք դրսևորվում են ինչպես արդեն

[604] ՔՎԲ, էջ 55-56: Հետաքրքրական է, որ Վանի բարբառում մեկ այլ բաղաձայնի նախորդող *կ*-ն ևս սովորաբար դառնում է *յ* (բակլայ - բ°յլ°, ճակտի - ճայտի) ևն (տե՛ս նշվ., աշխ., էջ 64):
[605] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 28-34:
[606] Տե՛ս ՔՎԲ, էջ 69:
[607] Տե՛ս նշվ. աշխ., էջ 83:

ձևավորված, այնպես էլ ձևավորվող հնչյունակապակցություններում: Ըստ այդմ՝ Բայազետի բարբառում նկատելի են օրինաչափ բնույթ կրող փոխազդեցական հետևյալ իրողությունները.

Ձայնեղացում (խուլ հպականների և հպաշփականների)

ա) Նախորդող կամ հաջորդող ձայնորդի ազդեցությամբ, ինչպես՝ *տ°տ > տ°դմէր, բ´արէկամ > բ´արէգմի, °տամ > °դմացամ, ծիծ > ծը ձմէր, կը նիկ > կը նգա, կիր°կի > կիր°գմուտ, ս°պոն > ս°բնել, մուկ > մը գնանոց*: Ձայնորդից հետո խուլի ձայնեղացում տեղի է ունենում շրջակաբոլոր բարբառներում:

բ) Հաջորդող ձայնեղի ազդեցությամբ[609], ինչպես՝ *պ°տիվ > պ°դվավոր, ջօկել > ջ´օգ´ջ´ըկել, պ°ղուկ > պ°ղուգ´բ´էրան*[610], *կ°կուղ > կ°գղել, պ°տիժ > պ°դժել, մ°տաղ > մ°դղել*: Երբ *կը* եղանակիչի *ը* բաղադրիչը գրեթե սղվում է, շնչեղ ձայնեղ բաղաձայնով սկսվող բայերից առաջ *կ*-ն վերածվում է շնչեղ ձայնեղի, ինչպես՝ *կը բէրեմ // գ´բ´էրեմ, կը ջ´առթեմ // գ´ջ´առթեմ*[611]: Այլ կարգի ձայնեղ բաղաձայններից առաջ *կը*-ն չի հնչյունափոխվում (կը զանգեմ, կը ժողեմ, կը բռնամ)[612]:

2) *Խլացում*

ա) Հաջորդող խուլից առաջ, ինչպես՝ *°խկատ, խեխճ, ն°ֆտ, կեխծ, կեխտ*[613], նաև՝ *ծ°ղիկ > ծ°խկել, պը զուկ > պը սկոտ, գ´օվալ > գ´օֆք, վիզ > վը սկաս, խաղալ > խախծը նել, հ´ավասար > խաֆսար, մը զալ > մը զմը ստալ, ջէբ > ջէպկիր*: Այսպես նաև այն դեպքերում, երբ *զ*, *ղ* շփականներով սկսվող ձայնեղ բաղաձայնական խմբում նախ տեղի է

---

[608] Տե՛ս ԽԲ, էջ 39-40:

[609] Նկատվել է, որ «....հայերենի բաղաձայնների դիրքային կիրառության առանձնահատկություններից մեկն այն էր, որ խուլ բաղաձայնի մոտ սովորաբար հանդես էր գալիս խուլ, ձայնեղի մոտ՝ ձայնեղ բաղաձայն» (ՀԼՊՔ, էջ 254):

[610] Ինչպես երևում է օրինակներից, հաջորդող շնչեղ ձայնեղների ազդեցությամբ նախորդող խուլերը շնչեղ ձայնեղանում են:

[611] Այդպես նաև՝ *գ´ըքաս*, որն առաջացել է արմատի *գ´*-ի խլացմամբ. կը գ´աս > գ´գ´աս > գ´ըքաս:

[612] Թերևս չպետք է կարծել, որ *կողպէք* բառի դիմաց Բայազետի բարբառում առկա *կօղբէս* ձևում նախորդող ձայնեղի ազդեցությամբ տեղի է ունեցել հաջորդող խուլի ձայնեղացում, եթե նկատի ունենանք, որ Հ.Աճառյանը, *կողպէք* բառի հետ բերելով նաև *կոպղէք* ձևը, վկայում է, որ ավելի հնից ունենք *կոպղեալ*, *կոպղայ* ձևերը՝ իբրև արաբերեն qufl բառի հայերեն փոխառյալ տարբերակներ (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 624), ուստի հնարավոր է, որ նախ *կոպղէք* ձևում ըստ գործող օրինաչափության տեղի է ունեցել նախորդող խուլի ձայնեղացում՝ *կոբղէք*, ապա դրափոխությամբ՝ *կողբէք > կօղբէս*:

ունեցել հաջորդող բաղաձայնի խլացում, ապա դրա ազդեցությամբ՝ նաև ձայնեղ շփականի խլացում, ինչպես՝ *ազգ > °սկ, անզգամ > °նըսկամ*[614], *աղբյուր > հ՛ախպուր, առողջ > °ռոխճ, աղջիկ > °խճիկ, դաղձ > դ՛ախծ, խեղդել > խեխտել, շաղգամ > շ°խկ°մ, շեղբ > շըխպիկ*[615]: Վանի, Մշո, Խոյ-Մարաղայի, Արարատյան և Դիադինի բարբառներում խուլից առաջ այս կարգի փոփոխության ենթարկվում են *զ, ղ*-ն (Վ. ասա//ասփ /ազբն/, ասք /ազգ/, ախփ /աղբ/, °խպիւր, ախչիկ, ախքʲատ, տ°խց, թուխթ, խեխտել, մեխքʲ, Մ. ասք, անընսքամ /անզգամ/, ախպ, հ՛ախպուր, ախչիգ, վօխչութեն, ախքադ, խէխտել, բոխկ, թուխթ, դ՛ընժոխք, խիխճ, դ՛ախց, Խ. ասկ, ասկական, °նընսկʲ°մ, °խպիւր, ախկատ, թուխտ, ծախկէլ, ընտէխծէլ, պընխտոր, Ա. ասկ, անընսկամ, ախպուր//հախպուր, ախկատ, հախտէլ, կէխծ, թուխտ, ախչիկ, դ՛ախց, Դ. ասկ, ախպ, հ՛°խպուր, ախճիկ, ախկատ, բ՛ոխկ, դ՛°խծ, թուխտ, խեխտել, հախտել, քʲ°խծընր), սակայն, ինչպես վկայում է Հ.Աճառյանը, Վանի բարբառում կան մի տասնյակ բառեր, որոնցում այդ փոփոխությունը տեղի չի ունենում (զընղճալ, խիղճ, կեղծավոր, ուղտ, ճընջընղկան /ճնճղուկի/ ևն)[616]: Նման բացառություն նշվել է նաև Դիադինի բարբառի համար (ծաղկել <ծագել /արևի/, խիղճ, կաղճին /կավահող/, աղղպատ)[617]:

բ) Նախորդող խուլ շփականից հետո, ինչպես՝ *քՈսիբ > քՈսպի, կՈսաբ>կՈսպի, կՈռաֆաղ > կՈռաֆտի, Ոսեղ > Ոսխաման, խախուդ > խախտել* [618]:

գ) Նախորդող շնչեղ խուլից հետո (միայն վ-ն), ինչպես՝ *ծէփել > ծէփֆել, խընթել > խընթֆել, կընթել > կընթֆել, թեքել > թեքֆել, ծ՛ընքել > ծ՛ընքֆել*:

3) *Ապաշնչեղացում*

---

[613] Խուլ բաղաձայնից առաջ *ղ>խ* հնչյունափոխությունը արտահայտված է դեռևս 1292 թ. Վայոց Ձորի արձանագրություններից մեկում (տե՛ս ՀԼՊՔ, էջ 256):

[614] Հ.Մուրադյանը նկատում է, որ նման դեպքերում նախ տեղի է ունեցել ձայնեղ պայթականների խլացում, ապա դրանցից առաջ գտնվող *զ*-ն նույնպես խլացել է. ընդ որում՝ երևույթը դրսևորվում է Անտիոքի, Վասպուրականի ու Արցախի մի շարք խոսվածքներում (տե՛ս ՀԼՊՔ, էջ 247-248):

[615] Ըստ Վ.Առաքելյանի՝ հայերենում *ղ*-ից հետո ձայնեղների խլացումը պետք է բացատրել մասամբ *ղ*-ի խլացման ազդեցությամբ (տե՛ս Գ.Ջահուկյան և ուրիշներ, Հայոց լեզու, Ուսա, Ապակ, Ե., 1980, էջ 151):

[616] Տե՛ս ՔՎԲ, էջ 71:

[617] Տե՛ս ԴԲ, էջ 49:

[618] Վերջին երկու դեպքերը դիտվել են նաև Ալաշկերտի խոսվածքում (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ.աշխ., էջ 44), նաև Դիադինի բարբառում (տե՛ս ԴԲ բառացանկերը):

ա) Պայթական+պայթական խմբում, ինչպես՝ *պէտկ, ծ՛ըկտել, °ղօտկ, միտկ, վոտկ, ծըպկ*, նաև՝ *ճ°կաթ – ճ°կտի, գ՛աքաթ – գակտի, շ°փաթ - էրկուշ°պտի*[619]:

բ) Շփական+հպական կամ հպաշփական խմբում, ինչպես՝ *°խճիկ, °խծել, °խտել* (յաղթել), *դ՛ելխծ*[620], *ն°ֆտ, °նեսկ, շընոխկ, թուխտ*[621], *խախկ, հ°շկ, ծուսկ, նեղվասկ, փախծընել, մէշկ, շօխկ, շուշա°*, նաև՝ *ջաղաջ > ջախճի, քաղաք > քախկի*:

Ապաշնչեղացման նույն կարգի իրողություններ առկա են Խոյ-Մարաղայի (ա. աղօտկ, միտկ՝, պէտկ՝, բ. թուխտ, ախտէլ, թընխտընմոր, կընմախկ, մէխկ՝, աշկ, խօսկ, մէշկ՝, վ°ռսկ՝, ժ°շկ՝, ն°ֆտ, տ°խծ), Արարատյան (ա. միտկ, պառտկ, պէտկ, տապկընօցի, բ. անէսկ, աշկ, ախկատ, ճօշկ, մէշկ, վարսկ, հրաշկ, խօսկ), Դիադինի (ա. միտկ, պէտկ, բ. գախտական, թուխտ, հ՛ախտել, խօսկ, հընրաշկ, ժ°շկ, շուշա°, անէծկ, հ°շկ, մեխկ, ք՝°խծընր) բարբառներում: Սակայն, թվում է, Դիադինի բարբառում ապաշնչեղացումը նույնքան հետևողականորեն տեղի չի ունենում, այլ դեպքերում շնչեղությունը պահպանվում է (աղօթք, պառտք, էրկուշ°փթի), նշվում են նաև շնչեղացման դեպքեր (միթք, պառթք, պէթկ)[622]: Այս դիրքերում ապաշնչեղացումը Վանի բարբառին բնորոշ չէ. Հ.Աճառյանը բերում է այդ կարգի (այն էլ՝ միայն *ք>կ* անցման) մեկ-երկու օրինակ՝ *աղօթկ, խրաշկ, միթկ, ժ°ժք // ժ°ժկ*[623]: Ընդհակառակը, երբեմն շփականից հետո նկատվում է շնչեղացում, ինչպես՝ *ասք* (ազգ)[624], *ասպ* (ազբն), *ախպ* (աղբ): Ապաշնչեղացման դեպքեր չեն դիտարկվել Մշո բարբառում[625]:

4) *Շնչեղացում* (շփականներից և հպաշփականներից առաջ)

Օր., կընփչոն (<կաչան), պ°կաս > պ°քսել, գիփս (գիպս), լէփչիկ (ռուս. лепчик):

---

[619] Բաղադրություններում, երբ շնչեղ խուլով սկսվում է արմատ, օրինաչափությունը չի գործում՝ *խոտքաղ*:

[620] *Դաղծ* և *դեղծ* բառերում խլացման հետևանքով ոչ թե *ղ*, այլ *ծ* է դրսևորվում *խ*-ի ազդեցությամբ:

[621] Ինչպես վկայում է Հ.Մուրադյանը, *թուխտ*ձևը հանդիպում է դեռևս 1170 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում (տե՛ս ՀԼՊՔ, էջ 212):

[622] Տե՛ս ԴԲ, էջ 40, նաև՝ բառացանկերը:

[623] Տե՛ս ՔՎԲ, էջ 97:

[624] Ինչպես նկատում է Հ.Աճառյանը, «....ունենք գ>ք (ս-ից հետո)» (տե՛ս ՔՎԲ, էջ 57):

[625] Այս բարբառի Ալաշկերտի խոսվածքում բառամիջում և բառավերջում շնչեղ խուլերի դիմաց միշտ առկա են պարզ խուլեր՝ անկախ փոխազդեցական իրողություններից (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 32-34):

Վանի բարբառում դիտարկվել է հակառակ իրողությունը, երբ շնչեղ բաղաձայնը շփականից առաջ ապաշնչեղանում է, ինչպես՝ կսան (քսան), կսել (քսել), կշել (քշել)[626]:

5) *Քմայնացում*

Բայազետի բարբառին ընդհանուր առմամբ քմայնացումը հատուկ չէ, միայն Գանձակի, Նորատուսի, Արծվաքարի խոսվածքներում առաջին շարքի ձայնավորներից առաջ հանդես են գալիս *գ,կ,ք* բաղաձայնների քմայնացած *գ՝, կ՝, ք՝* տարբերակները: Նորատուսի և Հայրավանքի խոսվածքներում առաջին շարքի ձայնավորներից առաջ *գ,կ,ք* հնչյունների դիմաց գործառում են *ջ,ճ,չ* (ջ°դ°, ճիր°ճի /կիրակի/, չ°ռի)[627]:

Արարատյան բարբառում ևս քմայնացումը հաջորդող հնչյունների՝ *է, ե, ի* առաջնային ձայնավորների ազդեցությամբ է տեղի ունենում՝ *գ՝էղ, գ՝ինի, կ՝ենթանի, ցամք՝ել*: Աշտարակի և Օշականի խոսվածքներում նշված դիրքում տեղի է ունեցել հպականների վերածում հպաշփականների, ինչպես՝ *ջ՝էլ<գայլ, չիր<քոյր, ջ՝ինի <գինի, ճէր<կեր, չիչ<քիչ*[628]: Վանի, Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներում քմայնացումը հիմնականում պայմանավորված չէ փոխազդեցական գործոններով: Վանի բարբառում գրեթե բոլոր դիրքերում[629] գործառում են *գ,ք*-ի քմայնացած տարբերակները[630], ինչպես՝ *կ՝°կ՝°թ* (գագաթն), *կ՝ըզել* (գզել), *վ°ր°կ՝ուռ* (վարագույր), *տէկ՝երկին* (տագերակին), *մ°նգ՝°ղ* (մանգաղ), *պաք՝ել* (պագել), *էք՝, խինգ՝* (հինգ), *ք՝ենի, ախք՝ատ, շ°ք՝°ր, աղիք՝* ևն: Որպես կանոն, այս բարբառում նախնական *կ*-ն քմայնացած չէ (կաթ, էրկէն, կակուղ, ծաղիկ), բայց երբ ձայնեղանում կամ շնչեղանում է, նաև քմայնանում է, ինչպես՝ *խունգ՝* (խունկ), *թանգ՝* (թանկ), *յեխք՝* (եղկ), *կծիք՝* (կծիկ) ևն: Դիադինի բարբառում քմայնացման իրողությունները համընկնում են Վանի բարբառի իրողությունների հետ: Խոյ-Մարաղայի բարբառում բոլոր դիրքերում՝

---

[626] Տե՛ս ՔՎԲ, էջ 95:
[627] Քմայնացման և *գ,կ,ք>ջ,ճ,չ* անցման մասին տե՛ս նաև ՀԼՊՔ, էջ 310-313:
[628] Տե՛ս ԱԲ, էջ 67-68:
[629] Բացառություն են կազմում այն դիրքերը, որոնցում փոխազդեցական հնչյունափոխությամբ պայմանավորված՝ հանդես են գալիս հնչյունական այլ տարբերակներ, ինչպես՝ *խայնել < ագանիլ, կայնել < կանգնիլ, կ՝°յտել < գանգտիլ < գանգատիլ, ճըհյնավոր < ճգնաւոր, ահյլէօր < աքլոր, °ռիհյներ < °ռիք՝* ևն:
[630] Տե՛ս նաև ՔՎԲ, էջ 107:

առանձին բացառություններով[631], դրսևորվում է *գ*-ի քմայնացած տարբերակ (կʲ°կʲ°թ, կʲէտին, գʲ°գ°ր, առքʲէլէլ, ն°ոգʲիզ, էքʲ, ծ°քʲ, շոքʲ): Բառասկզբի *կ*-ն չի քմայնանում, բառամիջի *կ*-ն միշտ չէ, որ քմայնացած է (էրկʲէն, զըրկʲէլ, վոսկʲի, բայց և՝ ակընատ, առցըկէլ, կարկուտ), բառավերջի *կ*-ն սովորաբար քմայնացած է (պ°ր°կʲ, պօխկʲ, վ°ռէկʲ, զ°վ°գʲ, էրմիւնգʲ, բայց նաև՝ տախտայ կա, ախչիյնէր): Բոլոր դիրքերում *ք*-ն քմայնացած է կամ ոչ (քʲ°շէլ, քʲորէլ, քʲէռի, քʲընէլ, շ°քʲ°ր, իրէքʲ, բայց և՝ քաղաք, քախցըր, մաքի, տաք, նաև՝ °հյլէօր < աքլոր, ահյսօր < աքսոր): Մշո բարբառին *գ,կ,ք* հետնալեզվայինների քմայնացումը խորթ է:

6) *Հպաշփականի շփականացում*

Այս հնչյունափոխությունը Բայազետի բարբառում կատարվում է բաղաձայնից առաջ հպաշփականի հման պահի կորուստով, ինչպես՝ *°ժբ°տես* (<°ջէբ), *բ՛ասբէրան, ծըսկեր, հ՛°շկ, կուժղէգ* (<կոճղէգ), *հ՛անգըժմըտուկ* (<հ՛անգաճ), *ձ՛ըսմի* (<ձ՛ըցում), *մ°զնաթան, միժնեկ, օշլոտ* (<օչիլ), *պընշներ, ռըժբ°ր* /ռանչպար/, *բօշկա, խէզնել, էրէս-ցընել, կըսկըվել, լըվասկ*: Բաղաձայններից առաջ հպաշփականների շփականացումը օրինաչափորեն դրսևորվում է նաև Խոյ-Մարաղայի բարբառում (աշկ, էշնէլ /իջանել/, խէզնէլ, ծասկէլ, ճաշնալ, խըմիշկ, լ°սկան, կըսկըվէլ): Այստեղ երևույթը բավականին տարածված է նաև բառերի միջև, ինչպես՝ *իշ կա*(< *ինչ կա*), *մէ քիշ չ°միշ տու* (< մի քիչ չամիչ տուր*), մէ էրիժ ծախիմ* (< մի երինջ ծախեցի)[632]: Երևույթը զգալի տարածում ունի Արարատյան (էրիժնակ, անէսկ, աշկ, զարմասկ), Դիադինի (օշլոտ, օրօժկըտալ, ճաշնալ, մէշկ) բարբառներում: Իրողությունը օրինաչափորեն չի գործառում Վանի բարբառում[633], չնայած դիտարկվել են մի քանի օրինակներ, ինչպես՝ *խէզնել, իսկել* (< ձգել), *սկըռտալ* (< ձգռտալ), *լ°սվել, քʲընոս կʲ°խ*(< քʲընոց կʲ°խ), *փռըշտալ* (փռնչտալ), *միժնէկ* (միջնակ)[634] ևն: Հպաշփականի շփականացումը հատուկ չէ Մշո բարբառին:

7) *Շփականի հպաշփականացում*

---

[631] *Գ*-ն *ն*-ից առաջ դառնում է *հʲ*. *խահʲնէլ, ճըհʲնաւոր, օհʲնէլ* ևն:
[632] Տե՛ս ԽԲ, էջ 56-57:
[633] Տե՛ս ՔՎԲ, էջ 61-62, 78, 93:
[634] Տե՛ս ՔՎԲ, համապատասխան բաղաձայններին նվիրված բաժինները:

Օր., *Ֆըռունձ* (Ֆրունզե), *Հէնձէլ*, *կըռունձ*, *ջըղինձ*, *թ°նձիֆ*, *քանց*[635] (քան զ):

Դիտարկումները ցույց են տվել, որ հայերեն արմատական բառերում բացակայում են վանկավերջի բաղաձայնական այնպիսի խմբերը, որոնցում *ն*-ին հաջորդում են առաջնալեզվային շփականներ, մինչդեռ *ն + հպաշփական* խմբերը սովորական են[636]: Բերված օրինակները վկայում են, որ Բայազետի բարբառում, այդ օրինաչափության առկայությամբ, գործառում է մեկ այլ օրինաչափություն, համաձայն որի՝ *ն*-ից հետո առաջնալեզվային շփականը վերածվում է հպաշփականի՝ *ն+զ* > *նձ*, ինչը կարելի է բացատրել *ն*-ի հպման և շփականի նեղվածքի զուգորդմամբ: Վանի բարբառում համանման օրինակներ (քան զ > չ°նձ, կորիզ > կողինձ, գռուզ > կռունձ) բերելով՝ Հ.Աճառյանը չի նկատում *ն*-ի հնարավոր դերը *զ>ձ* անցման հարցում՝ գրելով, որ *քան զ* կառույցը «...հայտնի չէ ինչ ճանապարհով անցնելով՝ դարձել է չ°նձ»[637] (այստեղ խոսքը չի կարող վերաբերել *ք>չ* անցմանը, որը Հ.Աճառյանը բացատրում է հաջորդ °-ի առկայությամբ[638]): Հետաքրքրական է, որ ավելի վաղ լեզվաբանը սահմանել է ձայնական օրենք, համաձայն որի՝ ոչ միայն նոր գավառականներում, այլև հին հայերենում բառամիջում ու բառավերջում *նձ* խմբից կարող է առաջ գալ *զ*[639]: Իրականում թե՛ Բայազետի, թե՛ Վանի բարբառներում ուրվագծվում է հնչյունափոխական մի օրինաչափություն, ըստ որի՝ բառամիջում (արմատական բառերի) և բառավերջում *ն*-ի ազդեցությամբ տեղի է ունենում *զ>ձ* անցում: Նման փոփոխության սակավ օրինակներ ունեն Արարատյան (քանց, կըռինձ), Խոյ-Մարաղայի (քʲ°նց, կըռինձ) և Դիադինի (քʲ°նց, կըռունձ) բարբառները: Մշո բարբառում ևս *զ*-ի դիմաց հպաշփական է առկա քընց //քանց ձևում, սա-

---

[635] Շրջակա բարբառներն ունեն այս ձևի հետևյալ համապատասխանությունները՝ Վան՝ *չ°նձ*, *քընց*, Խոյ-Մարաղա՝ *քյ°նց*, Մուշ՝ *քընց*, *քանց*, Դիադին՝ *ք°նց*: *Ն*-ին հաջորդող դիրքում ոչ օրինաչափ *ձ>ց* անցումը թերևս կարելի է բացատրել նրանով, որ, օրինակ, Բայազետի բարբառում *քանց* ձևը հիմնականում հանդիպում է *քանց թե* կառույցում, որտեղ էլ հաջորդող *թ* շնչեղ խուլի ազդեցությամբ կարող էր տեղի ունենալ *ձ*-ի խլացում:

[636] Տե՛ս Վ.Կատվալյան, Հնչյունների համակցական փոփոխությունները ժամանակակից հայերենում (թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր), Ե., 1991, էջ 27, 40:

[637] ՔՎԲ, էջ 59:

[638] Նույն տեղում, էջ 95:

[639] Տե՛ս Հ.Աճառյան, Նոր ձայնական օրենք մը. ՆՁ = Ձ, Հանդէս ամսօրեայ, 1905, էջ 346, նաև՝ ՔՎԲ, էջ 92:

կայ այստեղ նման անցում դիտարկվում է նաև առանց նախորդող *ն*-ի, ինչպես՝ *երազ > էրաձ, երազահան > էրաձահան*[640]:

8) *Բաղաձայնների ձուլում*

Օր., *գ՛ըլնեմ, գ՛իշկամ, գ՛ընգես, ծ°գ՛°շկ, պ°դ՛առիք, վացուն*:

Հարևան բաղաձայնների սերտարտասանության դեպքում երբեմն տեղի է ունենում արտաբերական փուլերի սղում կամ ձուլում, և բաղաձայնական խմբի փոխարեն դրսևորվում է մեկ բաղաձայն: Օրինակ, երբ *կը* եղանակիչը ներկայացնող *կ* պայթականի և բառասկզբի *հ՛*-ի կացքի և ելքի պահերը համընկնում են, խուլ կացքին հետևում է ձայնեղ հագագ, և հնչում է շնչեղ ձայնեղ *գ՛* (կը հ՛ըլնեմ > կհ՛ըլնեմ> գ՛ըլնեմ, կը հ՛իշես > կհ՛իշես > գ՛իշես): Այդ իրողությունը դիտարկվում է նաև բառամիջում, երբ ձևավորվում է *խուլ պայթական+հ՛* կապակցությունը. *ծ°կհ՛°շկ > ծ°գ՛°շկ, պ°տհ՛առիք > պ°դ՛առիք*[641]: *Ձայնեղ պայթական+հ՛* կապակցությունը շնչեղ ձայնեղի չի վերածվում, իսկ *հ՛*-ն պահպանվում է կամ ընկնում. *փագ հ՛°շկ, խինգարգանի < խինգհ՛արգանի*: Բաղաձայնների ձուլման համանման իրողություն առկա է նաև Մշո բարբառում, որի մասին վկայում է Ս.Բաղդասարյան-Թափալցյանի հետևյալ դիտարկումը. «Կը եղանակիչի կ-ն բարբառում ձայնավորներից առաջ ձայնեղանում է՝ *գիքամ-կգամ, գընգնամ-կնկնեմ, գիլամ-լաց կլինեմ, գուզիմ-կուզեմ*: Սակայն այս օրենքը բարբառում բացարձակ չէ: Ձայնավորով սկսվող այլ, բազմաթիվ բառերից առաջ *կը* եղանակիչի *կ*-ն չի ձայնեղանում. *կուդիմ-կուտեմ, կիդամ-կտամ, կըսիմ-կասեմ, կառնիմ-կառնեմ, կադիմ-կատեմ, կազադիմ-կազատվեմ*»[642]: Հեղինակը հաշվի չի առել, որ առաջին խմբի բայերը, ի տարբերություն երկրորդ խմբի բայերի, սկսվում են ոչ թե ձայնավորով, այլ *հ՛* հագագով (գալ>հ՛իքալ, անկանել>հ՛ընգնել, լալ>հ՛իլալ, ուզել>հ՛ուզել, բայց՝ ուտել>ուդել, տալ>իդալ, ասել>ըսել, առնուլ>առնել, ատել>ադել,

[640] Տե՛ս ՄԲ, էջ 63:

[641] Ինչպես արդեն նշել ենք, համանման երևույթներ Մշո բարբառում նկատել է Ա.Հանեյանը (Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, էջ 183), Աշտարակի խոսվածքում՝ Գ.Ղափանցյանը (Аштаракский говор. Историко-лингвистические работы, том 2, с. 449):

[642] ՄԲ, էջ 110:

ազատել >ազադել)[643]: Իրողության օրինաչափ դրսևորում դիտարկել ենք Դիադինի բարբառում (գ՛ըլնի, գ՛ընգընի):

9) *Ր > ռ անցում*

Բայազետի բարբառում *ր>ռ* անցումն օրինաչափ է առաջնալեզվային բաղաձայններից առաջ, երբեմն տեղի է ունենում նաև այլ բաղաձայններից առաջ՝ *°ռթար, °վառդել, գ՛ոռծ, նեռս, դ՛առցընել, թըռչել, կ°ռճ, լուռջ, մըռփել, ա°ռզ, °ռժ°նք*: Հ.Աճառյանը փաստում է, որ Վանի բարբառում *ր>ռ* անցում տեղի է ունենում *ծ, ճ, շ, չ, վ, ց, փ* բաղաձայններից առաջ[644]: Ըստ Մ.Ասատրյանի՝ Խոյ-Մարաղայի բարբառում *ր*-ն *ռ* է դառնում *տ, ծ, ճ, ց, ջ, թ, փ* բաղաձայններից առաջ[645]: Մշո բարբառում *ր>ռ* անցում չի դիտարկվել, մինչդեռ Ալաշկերտի խոսվածքում առաջնալեզվային բաղաձայններից առաջ այդ անցումն օրինաչափ է[646]: Տարածված է նաև Արարատյան (առծաթ, բ՛եռթ, կառթալ, մառթ, ցուռդ, կըռճատէլ, խառտոց, դ՛առցընէլ, բ՛առց) և Դիադինի (առծաթ, հ՛°ռցընկել, բ՛ուռթ, կառճ, շըռչել) բարբառներում:

10) *Արտաբերության տեղի փոփոխություն*

Օր., *°մբախտ, °մբան, ճ°մփա, °մպէտկ, °մպ՚յման*:

Նման փոփոխություններ դիտարկվել են նաև Վանի և Դիադինի (ճ°մբ°խ), Խոյ-Մարաղայի (ամբ°խտ, ճամբախ), Արարատյան (ամպէտկ, ճամփա) բարբառներում[647]:

Տարածում ունեն նաև փոխազդեցական հնչյունափոխության այլ, համակարգային բնույթ չունեցող դրսևորումներ, ինչպիսիք են՝ ա) դրափոխությունը (°խշար, վըլասկ, հ՛անգաճ, զօնքաճ, ծըղզալ, կօյրուն, բ՛ալնիս, դ՛առտակ, Գ՛իրքոր), բ) բաղաձայնների լիակատար առնմանումը (վոններ /ոտներ/, մ°ններ /մատներ/[648]), գ) ոչ հարևան հնչյունների առնմանումը (ժ°ժել, ուշուչիչ, օցմօղօզիկ, շընախավոր, ջ՛աղաչ, թաթման, դ՛ալալ), գ) տարնմանումը (շընուկ

[643] Տե՛ս նշված աշխատության՝ բայի նվիրված բաժինը և վերջում ներկայացված բառացանկը:

[644] Տե՛ս ՔՎԲ, էջ 91: Հետաքրքրական է նաև, որ «Այն օրինակները, որոնց մեջ *տ* բաղաձայնը առաջանում է գրաբարի *տռ*-ից, պահանջում են *ռ* (գորտ > կ՚ոռտ), իսկ այն օրինակները, որոնց մեջ *տռ*-ն առաջանում է գրաբարի *դ*-ից, պահանջում են *ր* (երդիք > էրտիս)» (նշվ. աշխ., էջ 92):

[645] Տե՛ս ԽԲ, էջ 55:

[646] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ.աշխ., էջ 40:

[647] Կարծում ենք՝ *բ,պ,փ*-ից առաջ *ն>մ* անցումը, հատկապես սերտ արտասանության դեպքում, հատուկ է բոլոր բարբառներին, ուղղակի ուսումնասիրողները այս երևույթին ուշադրություն չեն դարձրել:

/<շիճուկ/, թըռփոշ /<թորթոշ/, բ՛առեղ /<բաղեղ/, °նըղնակ /աղեղնակ/), դ) համաբանությունը (հ՛ունըրվար /փետրվար/, սէկտեմբեր /հոկտեմբեր/, հ՛իցուն /վացուն/, Հ՛իսոս /Քրիստոս/, շիքել /ս°րքել/[649]), ե) արտակարգ հնչյունափոխությունը (չըմդէ /չեմ գիտէր/, դոր /ընդ ուր/, դէս /ընդ այս/, մէշօլ /< մէշու էլ < մէ փըշուր էլ/, Կըռպէ > Կարապետ, Թաթօ > Թաթոս > Թադևոս, Թ°քու > Թագուհի, Տիրու > Տիրուհի, Խամբօ > Համբարձում, Խէրօ > Հերիքնազ, Կ°զօ > Ղազար), զ) բաղարկությունը (լօխկընալ[650] /<լողանալ և լոգանալ/), է) ժողովրդական ստուգաբանությունը (տ°րէկետում, հ՛աշվանթամ, վոտընկայծ, կէնաձ, թարախօրօվ):

5.3. *Շեշտափոխական հնչյունափոխություն*

Շեշտի տեղափոխությամբ պայմանավորված հնչյունափոխական իրողությունները բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ բազմազան դրսևորումներ ունեն: Այս դեպքում էական նշանակություն ունի բառերի միավանկ կամ բազմավանկ լինելու հանգամանքը: Միավանկ հիմքերում շեշտազրկման հետևանքով կանոնավորապես հնչյունափոխվում են *հ* և *ու* ձայնավորները (բացառություն են կազմում բառասկզբի *ու*-ն /ուժ>ուժօվնալ, ութ>ութի, ութանասուն/ և բառավերջի *հ*-ն /ձ՛հ>ձ՛հյավոր, ձ՛հյան, լի > լհյութուն, լհյանալ/), ինչպես՝ *հզ - ըզհ, ըզօվ, հն - ընհց, ծհծ – ծըծեր, ծըծի, ծըձմէր, բ՛ուռթ – բ՛ըռթեր, բ՛ըռթի, բ՛ըռթոտ, կու – կըվեր, կըվի, կըվանոց, կըվախոտ, ջ՛ուր – ջ՛ըրեր, ջ՛ըրի, ջ՛ըրխամ* ևն: Մի շարք դեպքերում *ոյ* երկբարբառից առաջացած ու-ն չի հնչյունափոխվում (լոյս > լուս - լուսօվ, լուսընալ, լուսամութ, յոյս - հ՛ուսօվնալ, թոյլ > թուլ - թուլնալ, բայց՝ բոյն > բ՛ուն - բ՛ըներ, բ՛ընի, բ՛ընկալ, բոյթ > բ՛ութ - բ՛ըթի, բ՛ըթներ, բ՛ըթխեխտ, բոյս - քօքուբ՛ուս > քօքուբ՛ըսի), մինչդեռ *հւ* երկբարբառից առաջացածը հնչյունափոխվում է (ձիւն > ձ՛ուն - ձ՛ըներ, ձ՛ընոտ, ձ՛ընախառը, սիւն > սուն - սըներ, ճիւղ > ճուղ -

---

[648] Այս իրողությունը հատուկ է հատկապես Բայազետի բարբառի Հացառատի խոսվածքին: Նման երևույթ դիտվել է նաև Արարատյան բարբառում (տե՛ս ԱԲ, էջ 69):

[649] Բայազետի բարբառում գործառում է *ս°րքել-շիքել* հարադրությունը:

[650] Մշ. *լօղգընալ*, Վ. *լօխկնալ* (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 291): Վանի բարբառի ձևի մասին Հ.Աճառյանը գրում է. «....առաջացել է *լողալ* և *լոգանալ* մերձանիշ բառերի խաչաձևմամբ, որով և ստացվել է պատահաբար *ղ>խկ*» (տե՛ս ՔՎԲ, էջ 56):

ճըղեր, ճըղի): *Ո,ե* ձայնավորները բաղադրություններում շեշտազրկվելիս հաճախ դառնում են *օ,է*, ինչպես՝ *գ՛ող - գ՛օղնալ, գ՛օղություն, դ՛ող - դ՛օղալ, դ՛օխծըվոր, չոր - չօրնալ, չօրություն, ծեփ - ծէփել, ծէփոն, կեր - կէրուկ, բ՛եր - բ՛էրել* ևն, իսկ բառերի թեքման ժամանակ պահպանվում են՝ *գ՛ողի, գ՛ողեր, ջ՛ոչի, ջ՛ոչեր, ծեփի, ծեփեր* ևն: Այլ դեպքերում ընդհանրապես նման փոփոխություն տեղի չի ունենում (գ՛ոռտ > գ՛ոռտի, գ՛ոռտեր, գ՛ոռտընուկ, գ՛ոռտալ ող, խող > խողի, խողեր, խողոտ, խողգ՛ըլ օխ, բեղ > բեղի, բեղեր, բեղավոր, թեփ > թեփի, թեփեր, թեփոտել, թեք > թեքել ևն): *Ե* երկբարբառային ձայնավորը մի շարք դեպքերում սղվում է, երբ գտնվում է *ռ*-ից կամ *ղ*-ից առաջ[651], ինչպես՝ *ծեռտ - ծըռտել, ծըռտի, ծըռտոտ, շեռ - շըռել, շըռի, շըռան, ցեռ - ցըռել, ցըռան, կեխտ - կըխտի, կըխտոտ*: Հնչյունափոխական զանազանություններ է դրսևորում նաև *է* ձայնավորը՝ կախված այն բանից, թե ինչ ծագում ունի: Հինհայերենյան ծագման *է*-ն շեշտազրկվելով սովորաբար դառնում է *ի*՝ *էշ - իշի, իշվանք, իշավոդնուկ, էծ - իծի, իծվանք, կէս - կիսի, կիսել, դ՛էզ - դ՛իզի, դ՛իզրանք, դ՛իզել, տէր - տիրոչ, տիրվանք, տիրել, քէն - քինոտ, ձ՛էթ - ձ՛իթի, ձ՛իթխաց, սէր - սիրել, սիրակըստըգվորել*, այդպես նաև՝ *դ՛էվ - դ՛իվի, դ՛իվադ՛ատար*, բայց՝ *էշեր, էծեր, դ՛էզեր, տէրեր, ձ՛էթեր, դ՛էվեր*: *Մէջ* /<մէջ/ և դրանից ձևավորված *մէշկ* հիմքերի շեշտազրկման դեպքում *է*-ն սղվում է՝ փոխարինվելով *ը*-ով, ինչպես՝ *մէջ - մըջի, մըջու, մըջըները, մըջէմէջ, մէշկ - մըշկի, մըշկըները, մըշկախառը*: Պատմական *այ>է* հնչյունափոխություն ունեցող *գ՛էլ, ծէր* բառերի դեպքում ևս տեղի է ունենում *է>ի* հնչյունափոխություն (գ՛էլ > գ՛իլի, գ՛իլվանք, Գ՛իլակեր /հանդամասի անվանում է/, ծէր > ծիրի, ծիրվանք, բայց՝ գէլեր, գ՛էլխեխտ, ծէրեր): Այլ դեպքերում *է*-ն, անկախ ծագումից, չի հնչյունափոխվում (գ՛էշ > գ՛էշի, գ՛էշեր, գ՛էշանոց, դ՛էմ > դ՛էմի, դ՛էմըները, դ՛էմէսդ՛էմ, էք > էքի, էքեր, պէտկ > պէտկական, պէտկըները, բ՛էտ > բ՛էտի, բ՛էտեր, բ՛էտընալ, խէր /հայր/ > խէրեր, խէրանք, խէրախօրուկ, ջէբ > ջէբեր, ջէպկիր, ջէբօվ, բայց՝ ջիբի, ջիբից): Միավանկ բառերի մյուս ձայնավորները

[651] Գուցե այս երևույթն առնչվում է գրաբարում դիտված հնչյունափոխական այն իրողությանը, համաձայն որի՝ *ե* ձայնավորը շեշտից զրկվելով «սղվում է ղ և ռ

շեշտազրկվելիս սովորաբար չեն հնչյունափոխվում (բ՛ան - բ՛աներ, բ՛անի, բ՛անթոխս, դ°ռդ - դ°ռդեր, դ°ռդի, դ°ռդախտցիկ, թօզ - թօզեր, թօզի, թօզոտ, մըխ /մեխ/ - մըխեր, մըխի)[652]: *Տ°կ, տ°ս* բառերում հնչյունափոխվում է ° ձայնավորը՝ *տ°կ - տըկի, տըկանց, տըգները, տ°ս - տըսնէրկու*: Միավանկ բառերին վերաբերող հնչյունափոխական այս երևույթները տարածված են նաև դիտարկվող մյուս բարբառներում: Վանի, Դիադինի, Արարատյան[653], Խոյ-Մարաղայի[654] և Մշո բարբառներում ևս շեշտազրկման հետևանքով կանոնավորապես հնչյունափոխվում են *ի* և *ու* ձայնավորները: Վանի բարբառում *ա* ձայնավորը հնչյունափոխվում է միայն *տակ* բառում (տկի), *այ>է* անցմամբ առաջացած *է*-ն չի հնչյունափոխվում[655], իսկ գրաբարյան *է*-ն հնչյունափոխվում է ոչ բոլոր դեպքերում[656]: Մշո բարբառում դիտվել են բառասկզբի *ու*-ի հնչյունափոփոխման օրինակներ (ունք>ընքան, ուխտ>ըխտավոր, ունկ>ընկանի)[657], *է*-ն չի հնչյունափոխվում, եթե երկբարբառների պարզեցման արդյունք է (բացառություն են՝ գ՛էլ >գ՛իլվան, ձ՛էն >ձ՛ինից, փէդ >փիդնալ), *ե, ո* երկբարբառները շեշտազրկվելով օրինաչափորեն դառնում են *է,օ* պարզ ձայնավորներ (ցեց – ցէցեր, փող - փօղեր), և սակավ դեպքերում *ա*-ն սղվում է (տագ – տըգեր, ձ՛աք – ձ՛ըքեր)[658]:

Բազմավանկ բառերի դեպքում Բայազետի բարբառում շեշտազրկման հետևանքով կարող են հնչյունափոխվել բոլոր ձայնավորներն էլ, բացի *ը*-ն, որը նման բառերում շեշտ չի կրում: Առավել հաճախադեպ են *ու, ի, ա, ° * ձայնավորների փոփոխությունները, ինչպես՝ *ու >ը* կամ *ø. °նուն - °նըններ, °նընի, °նընավոր, մ°ծուն - մ°զնի, մ°զնաթան* (բայց նաև՝ խօրքուր – խօրքուրներ, խօրքուրի, խօրքուրօղլի, գ՛ալըստուկ – գ՛ալըստուգներ, գ՛ալըստուկի, գ՛ալըստուկավոր), *ու >վ/Ø. լ*ի*զու - լ*ի*զվի, լ*ի*զվըներ,*

բաղաձայններից առաջ որոշ բառերում՝ ասեղն – ասղան, թիթեղն – թիթղան, ... թիթեռն – թիթռան, լիսեռն – լիսռան....» (Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 11):

[652] Բայազետի բարբառում բացառություն է *դ՛ի*զրանք ձևը, որտեղ ունենք *է >ի* հնչյունափոխություն:

[653] Տե՛ս ԱԲ, էջ 110-111:

[654] Տե՛ս ԽԲ, էջ 69-70, 83-84:

[655] Այդպես է նաև Արարատյան բարբառում (տե՛ս ԱԲ, էջ 110):

[656] Տե՛ս ՔՎԲ, էջ 130-133:

[657] Տե՛ս ՄԲ, էջ 34:

[658] Տե՛ս ՄԲ, էջ 19, 23, 25, 31:

լիզվանի, թըթու - թըթֆի, թըթֆուկ (բայց՝ ճըրաքու - ճըրաքույ[659], դ՛ասատու - դ՛ասատույ, դ՛ասատուներ, ջ°դու – ջ°դույ, ջ°դուներ), *ի > ը* կամ ø. *խառնիս – խառնըսներ, խառնըսի, խառնըսվոր, խառնըստուն, կէսորին - կէսորնէ* (նաև՝ մ°դնիչ – մ°դնիչներ, բայց՝ մ°դնըչի, կըծիկ – կըծիկներ, կըծիկի, բայց՝ կըսկել, ն°խիր > ն°խիրներ, բայց՝ ն°խրի, ն°խըռչի), *ք°ռի - ք°ռոնք, խընամի - խընամոնք* (բայց՝ քամիներ, բ°ռ°դիներ, թալանչիներ), *ի+ա > է. խոքի - խոքէդ՛առց, գ՛արի - գ՛արէխաց*, *ա, ° > ը* կամ ø. *°տամ –°դմըներ, °դմի, °դմացավ, դ°րվ°զ - դ°րվըզներ, դ°րվըզի, էրակ – էրկըներ*, բայց՝ *էրակի*, *մըխոռ – մըխոռոներ, մըխոռոռի, մըխոռոռել* (բայց նաև՝ °ռծան - °ռծաններ, °ռծանի, բ՛արէկամ – բ՛արէկամներ, բայց՝ բ՛արէգմի, հ՛°յ°թ – հ՛°յ°թներ, հ°յ°թի), *ա//° > է. °գռա - °գռէք, °գռէն, փէս° - փէսէք, փէսէն, տըմբուշկա – տըմբուշկէք, տըմբուշկէս*[660]: Մյուս ձայնավորների հնչյունափոխության դեպքերը ավելի քիչ են, օրինակներ. *ե > ը* կամ ø. *հ՛իրես – հ՛իրսըներ, հ՛իրսի, հ՛իրսանց, ցորեն - ցորնի, ցորներ, ցորնագ՛ույն, ձ՛ըմեռ - ձ՛ըմըռվա, ձ՛ըմըռնեց. ե>է . գ՛ըրքեր - գ՛ըրքէրի, կեր - կէրուկ, բ՛եր - բ՛էրող, է >ը* կամ ø . *հ՛առէջ - հ՛առջի, հ՛առջըկըտուր, °խպէր - °խպըռտանք, °խպըրաբ՛ածին, ո > ը* կամ ø . *բոքոն – բոքներ, բոքնի, կոտոշ – կոտըշներ, կոտըշխըրել*, բայց՝ *կոտոշի, ոսկոռ – ոսկըռներ, ոսկըռի, ոսկըռխընել. օ > ø . գ՛ըլօխ – գ՛ըլխըներ, գ՛ըլխի, գ՛ըլխանց*[661]: Հետաքրքրական է, որ հոգնակի թվի կազմության ժամանակ սղվող ձայնավորի հետերբեմն ընկնում է նաև բառավերջի ձայնորդը, հատկապես՝ *ն*-ն, ինչպես՝ *°ման - °մներ, բ՛էրան – բ՛էրներ, գ՛էրէզման – գ՛էրէզմըներ, կէսրար – կէսրանք*: Համանման երևույթ Վանի բարբառում արձանագրել է Հ.Աճառյանը[662]: Ուսումնասիրողների բերած օրինակներից երևում է, որ իրողությունը որոշ դրսևորումունի նաև Մշո (շարան – շարներ,

---

[659] Մշո բարբառում արձանագրվել են *ճըրաքվըներ, ճըրաքվի* ձևերը (տե՛ս ՄԲ, էջ 35):

[660] Մ. Մուրադյանը, մատնանշելով *ա>է* հնչյունափոխության առկայությունը նաև ուշ շրջանի փոխառություններում կամ նորակազմություններում, իրավացիորեն արձանագրում է, որ «Այսպիսի բառերում *ա>է* հնչյունափոխության աղբյուրը ոչ թե գրաբարի *այ* երկբարբառի վերածումն է *է* պարզ ձայնավորի, այլ այդպիսի փոփոխության ենթարկված բառերի համաբանությունն է» (Մ.Հ.Մուրադյան, Շատախի բարբառը, էջ 87):

[661] Թերևս *գ՛ըլխըներ* ձևը բխում է նախնական *գ՛ըլուխ* եզակիից: Խոյ-Մարաղայի բարբառում *գլուխ> կըլօխ> կըլխըներ* անցման մասին Մ.Ասատրյանը գրում է, որ այդ բառի մեջ «հնչյունափոխությունը կարելի է համարել կանոնավոր, քանի որ *կըլօխ* բառի *օ*-ն ծագում է գրաբարի *ու*-ից» (ԽԲ, էջ 72):

[662] Տե՛ս ՔՎԲ, էջ 115:

gօրէն – gօրներ, գ՛էդին – գ՛էդըստան[663]), Խոյ-Մարաղայի (կյէրէզման - կյէրէզմընէր[664]), Դիադինի (ման-ամներ[665]) բարբառներում: Նկատենք նաև, որ բաղաձայնական կուտակումներից խուսափելու համար՝ սղված ձայնավորի փոխարեն սովորաբար հնչում է *ը*, երբեմն էլ այդ *ը*-ն հնչում է հիմքի և հոգնակերտ թեքույթի միջև[666]: Թե՛ բառաթեքման և թե՛ բառաբարդման ու ածանցման դեպքերում դրսևորվում են նաև բաղաձայնների փոխազդեցական հնչյունափոխական երևույթներ, որոնց անդրադարձել ենք համապատասխան տեղում:

Բայազետի բարբառում բազմավանկ բառերում դիտարկված շեշտափոխական հնչյունափոխությունները հիմնականում իրենց համապատասխանություններն ունեն շրջակա բարբառներում[667]: Մշո բարբառում բազմավանկ բառերի դեպքում ևս շեշտազրկված *ե*-ն և *ո*-ն դառնում են *է*,*օ* (հ՛ընգեր>հ՛ընգէրոչ, անգ՛որձ>անգ՛օրձներ): Խոյ-Մարաղայի բարբառում հնչյունափոխվող բազմավանկ բառերը ունենում են նաև անհնչյունափոխ ձևեր (ամըներ – ամաններ, ամընի – ամանի), սակայն ավելի գործածական են հնչյունափոխված ձևերը[668]: Ընդհանրապես նկատելի է, որ Վանի և Մշո բարբառներում շեշտազրկման հետևանքով ձայնավորների սղումը ավելի ընդգրկուն է[669], իսկ Արարատյան բարբառում հիմնականում վերաբերում է *ի, ու* ձայնավորներին[670]:

Այսպիսով, թե՛ Բայազետի և թե՛ շրջակա բարբառներում շեշտափոխական հնչյունափոխության դրսևորումները գրաբարի և արդի գրական հայերենի համեմատությամբ ավելի ընդգրկուն ու բազմազան են և ավելի մոտ են միջինհայերենյան վիճակին: Ընդ որում՝ գործառող հնչյունափոխական օրինաչափությունները որպես կանոն ուղեկցվում են բացառություններով, շեղումներով, որոնք բխում են լեզվի բարբառային վիճակի էությունից և ներկայացնում են

[663] Տե՛ս ՄԲ, էջ 19, 24, 76:
[664] Տե՛ս ԽԲ, էջ 70
[665] Տե՛ս ԴԲ, էջ 62:
[666] Տե՛ս նաև ՔՎԲ, էջ 114-115:
[667] Ընդհանրապես շեշտափոխական հնչյունափոխություններով բարբառները զգալի որեն մերձենում են միջին հայերենին (տե՛ս ԱՄԳՀՊ, հ, Բ, էջ 49-61):
[668] Տե՛ս ԽԲ, էջ 70-73, 83-84:
[669] Տե՛ս ՔՎԲ, էջ 113-115, ՄԲ, էջ 19-34:
[670] Տե՛ս ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 9 տետր (Փարպի):

հինհայերենյան, միջինհայերենյան, նաև աշխարհաբարյան շրջաններին վերաբերող իրողությունների համադրություն:

ԳԼՈՒԽ III

ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԵՐԸ

Աշխահաբարի բառապաշարը, իբրև համակարգ, պատմական զարգացման երկարատև գործընթացի արդյունք է[671]: Նույնը կարելի է ասել նաև որևէ բարբառի բառապաշարի վերաբերյալ: Բայազետի բարբառի բառապաշարը իր մեջ ներառում է հայոց լեզվի զարգացման տարբեր փուլեր ներկայացնող բառաշերտեր, տարբեր լեզուներից, գրական հայերենից ու այլ բարբառներից արված փոխառու-

[671] Տե՛ս Է.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 109:

թյուններ[672]: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր բարբառի բառապաշարում, անկախ լեզվի զարգացման այս կամ այն փուլի վերաբերության, առանձնանում են բարբառային բառերը, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել նաև բարբառային հայերենում տարածվածության յուրահատկություններով, բարբառների խմբի կամ որևէ բարբառի համար բնութագրական լինելով են[673]:

Հինհայերենյան բառաշերտ

Հայերենի բարբառների ուսումնասիրությանը նվիրված մենագրություններում հետազոտողները իբրև բարբառի բառապաշարի հիմք մի դեպքում առանձնացնում են ընդհանուրհայերենյան բառաշերտ[674], մեկ այլ դեպքում՝ գրաբարի հետ ընդհանուր բառաշերտ[675], երրորդ դեպքում՝ գրաբարից ավանդված[676] կամ գրաբարյան[677] բառեր՝ հիմնականում նկատի ունենալով նույն իրողությունները[678]: Մեր կարծիքով՝ նախ անհրաժեշտ է տարբերակել *գրաբարի հետ ընդհանուր բառաշերտ* և *ընդհանուրհայերենյան բառաշերտ* հասկացությունները: Առաջինը իր մեջ կարող է պարունակել ոչ միայն ընդհանուրհայերենյան բառեր, այլ նաև միավորներ, որոնք, վկայված լինելով գրաբարում, գործածական չեն արդի գրական հայերենում և շատ բարբառներում: Ուստի ընդհանուրհայերենյան

---

[672] Բայազետի բարբառի՝ մեր կազմած բառարանը (առանց գրաբարի հետ ընդհանուր բառաշերտի) պարունակում է շուրջ 6500 բառային միավոր (տե՛ս Հավելված 7)

[673] Հ.Աճառյանը նշել է, որ հայ բարբառները բառագիտական տեսակետից բաղկանում են երեք տարրերից՝ ա) բուն հայերեն բառեր, որոնք ներկայացնում են հին հայերենի ծանոթ ձևերը, այսինքն՝ հին հայերեն մատենագրությամբ մեզ ավանդված բառերը, բ) օտար բառեր, որոնք առաջին խմբից դուրս մնացող և օտար լեզուներից փոխառված միավորներն են, գ) գավառական բառեր, որոնք օտար լեզուներից փոխառված չեն, հայերեն են, բայց հայ մատենագրության մեջ ավանդված չեն (տե՛ս Հ.Աճառյան, Հայերէն գաւառական բառարան /այսուհետ՝ ՀԳԲ/, էջ 3-4):

[674] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 55, Բ.Մեժունց, Ծամշադին-Դիլիջանի խոսվածքը, Ե., 1989, էջ 40:

[675] Տե՛ս ՄԲ, Ե., էջ 143, Դ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Ե., 1979, էջ 49:

[676] Տե՛ս Մ.Մուրադյան, Ծատախի բարբառը, Ե., 1962, էջ 67, Թ.Դանիելյան, Մալաթիայի բարբառը, Ե., 1967, էջ 166 :

[677] Տե՛ս ԱԲ, էջ 84:

[678] Ըստ Մ.Ասատրյանի՝ «Ինչպես հայերենի ամեն մի բարբառ, այնպես էլ Լոռու բարբառն ունի գրաբարի հետ ընդհանուր բառերի մի զգալի քանակ: Դրանք ընդհանուր հայերեն բառերն են, որոնց մեծ մասը կա նաև հայերենի մյուս բարբառներում» (Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, էջ 150): Իսկ Ն.Մկրտչյանի ներկայացմամբ՝ նույնն են *գրաբարից ավանդված* և *գրաբարի հետ ընդհանուր* հասկացությունները, ինչպես՝ «....ամեն մի բարբառ ....հիմնականում պահպանում է գրաբարից ավանդված 1000-2000 բառ: ....Բուրդուրի բարբառում գրաբարի հետ ընդհանուր բառերի քանակը հասնում է 1600-ի, իսկ գրաբարից չավանդված կամ ինքնաստեղծ բառերի ու դարձվածքների թիվը կազմում է 200» (Ն.Մկրտչյան, Բուրդուրի բարբառը, Ե., 1971, էջ 166):

կամ համահայկական բառեր պետք է համարել այնպիսիք, որոնք դրսևորվում են հայերենի բոլոր տարբերակներում և, ինչպես նկատում է Է.Աղայանը, «եղել են հին հայերենում, գործածվել են գրաբարում, միջին հայերենում և պահպանվել են ոչ միայն մեր գրական լեզվում, այլև ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում (բոլորում կամ, գոնե, մեծագույն մասում)»[679]: Կարծում ենք՝ հին բառաշերտին տրվող *գրաբարից ավանդված* կամ *գրաբարյան բառեր* բնորոշումները ենթադրում են բարբառների ծագում գրաբարից, ուստի ընդունելի չեն[680]: Ասվածը նկատի ունենալով՝ հայ բարբառների բառապաշարային պատմական շերտերն առանձնացնելիս նպատակահարմար ենք համարում մինչև 12-րդ դարին վերաբերող կամ հինհայերենյան բառապաշարի[681] ներսում նախ տարբերակել՝ ա) գրաբարի հետ ընդհանուր և բ) գրաբարից տարբեր[682] բառաշերտեր: Գրաբարի հետ ընդհանուր բառաշերտն իր հերթին կպարունակի ընդհանուրհայերենյան և մասնավոր ընդհանուր բառաշերտեր, իսկ գրաբարից տարբեր բառաշերտը կընդգրկի՝ ա) գրաբարյան ձևերից արտահայտության[683], կազմության կամ իմաստային տարբերություններ ունեցող և բ) գրաբարում չվկայված բառերի շերտեր[684]:

Հինհայերենյան բառաշերտի հիմնական մասը կազմում են գրաբարի հետ ընդհանուր բառերը[685]: Ընդհանուր առմամբ, մեր կողմից

---

[679] Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 120:

[680] Թվում է՝ բարբառների՝ գրաբարի հետ ընդհանուր բառաշերտը կարելի է անվանել նաև *հին հայերենի բառեր*, ինչպես վարվել է Ռ.Բաղրամյանը (տե՛ս Ռ.Բաղրամյան, Ծամախիի բարբառը, Ե., 1964, էջ 184), սակայն այս դեպքում էլ հին հայերենի բառերի մեջ կարող են հասկացվել նաև բառային հնաբանությունները, որոնց մի մասը գրաբարյան զուգահեռներից տարբերվում է հնչյունական կերպարանքով, կազմությամբ կամ իմաստով, իսկ մյուս մասը գրաբարում վկայված չէ:

[681] Նկատի ունենք ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ բառերը: Հարկ չենք համարում առանձին անդրադառնալ ընդհանուր հայերենի կատարած հին փոխառություններին:

[682] Այս բառաշերտը՝ իբրև բարբառների՝ գրաբարից ունեցած բառային հին բնույթի տարբերությունների ամբողջություն, որ ստացել է *բարբառների բառային հնաբանություններ* անվանումը, հանգամանալից քննության է ենթարկվել Գ.Ջահուկյանի կողմից (տե՛ս ՀԲՆ, էջ 277-330):

[683] Նկատի ունենք բարբառային հնչյունափոխական օրինաչափություններով չբացատրվող տարբերությունները:

[684] Հինհայերենյան բառաշերտի՝ գրաբարից տարբերվող միավորները դիտարկելիս հիմք ենք ընդունում Գ.Ջահուկյանի մեկնաբանությունները (տե՛ս ՀԲՆ, էջ 277-330):

[685] Ինչպես վկայում է Հ.Աճառյանը՝ «Արմատական բառարանիս 11.000 բառերից միայն 2878 բառ ունին այսպիսի գավառական ձևեր՝ մեկից մինչև մի քանի տասնյակ: Ուրիշ խոսքով 11.000 արմատներից միայն 2878 կենդանի է մնացել արդի բարբառների մեջե (ՀԼՊ, մաս 2, էջ 388): Ուսումնասիրողների կողմից տարբեր

դիտարկվող բարբառներում այս բառաշերտը, ըստ ուսումնասիրողների բերած տվյալների, պարունակում է 1600-ից մինչև 2000 բառային միավորներ: Հ.Աճառյանը Վանի բարբառի քննությանը նվիրված աշխատության մեջ բերում է գրաբարի և Վանի բարբառի համար ընդհանուր մոտ 1600 բառ՝ հիմնականում հաշվի առնելով արմատական բառերը[686]: Գրաբարի հետ բառապաշարային մոտավորապես նույն քանակի ընդհանրություն Ուրմիայի (Խոյի) բարբառի համար արձանագրել է Մ.Ասատրյանը՝ բառացանկում ներառելով գլխավորապես պարզ բառեր[687]: Մշո բարբառին նվիրված մենագրության՝ «Գրաբարից – Մշո բարբառ» բառացանկում Ս.Բաղդասարյան-Թափալցյանը ընդգրկել է մոտ 1850 բառեր, որոնց մեջ քիչ չեն նաև բաղադրությունները[688]: Ըստ Ռ.Մարկոսյանի՝ Արարատյան բարբառի «բառապաշարի նշանակալի մասը կազմում են գրաբարյան բառերը, որոնց թիվը հասնում է մոտ 3000-ի: Այդ բառերը հիմնականում տրվել են բառացանկում»[689], սակայն «գրաբարից՝ Արարատյան բարբառ» բառացանկում նա ընդգրկել է մոտ 1440 բառ[690]: Դիադինի բարբառին նվիրված ուսումնասիրության «Գրաբար – Դիադինի բարբառ» բառացանկը պարունակում է մոտ 1700 բառային միավոր[691]: ՀԱԲ-ի և ՆՀԲ-ի տվյալների հաշվառումով՝ մենք Բայազետի բարբառում արձանագրել ենք գրաբարի հետ ընդհանուր 2000-ից ավելի բառեր՝ արմատական բառերից բացի ներառելով նաև բաղադրություններ[692]:

Բարբառների՝ գրաբարի հետ ընդհանուր բառաշերտի հիմնական մասը կազմում են ընդհանուրհայերենյան բառերը, որոնք որպես կանոն վերաբերում են հիմնական բառաֆոնդին և, լինելով բարբառային բառապաշարի առանցքը, բնականաբար հանդես են գալիս բարբառի հնչյունական օրենքներով պայմանավորված հնչատարբերակներով: Այդպիսով, յուրաքանչյուր բարբառում այդ բառերը

բարբառներում արձանագրվել են նման բառերի տարբեր քանակություններ, որը պայմանավորված է ոչ միայն բարբառային բառապաշարի յուրահատկություններով, այլ նաև բարբառային տվյալ միավորի ուսումնասիրվածության աստիճանով, հետազոտողների մոտեցումների տարբերություններով:

[686] Տե՛ս ՔՎԲ, էջ 242-299:
[687] Տե՛ս ԽԲ, էջ 143:
[688] Տե՛ս ՄԲ, էջ 244 – 274:
[689] Տե՛ս ԱԲ, էջ 84:
[690] Տե՛ս ԱԲ, էջ 296-318:
[691] Տե՛ս ԴԲ, էջ 123-146:
[692] Տե՛ս Հավելված 8:

սովորաբար ի հայտ են բերում հնչյունական արտահայտության յուրահատկություններ, սակայն ընդհանուր առմամբ դրանք ճանաչելի ու հասկանալի են նաև տարբեր բարբառներով հաղորդակցվելիս: Բերենք օրինակներ Բայազետի և մերձավոր բարբառների այդ բառաշերտից. *քուր* (Բ.Մ.) - *քիր* (Ա.) - *քʲուր* (Դ.) - *քʲոր* (Վ.) - *քʲիւր* (Խ.), *°խճիկ* (Բ.) - *ախչիկ* (Վ., Ա.) - *ախճիկ* (Դ.) - *ախչիգ* (Մ.) - *ախչիկʲ* (Խ.), *գ´ըլօխ* (Բ.,Մ.) - *գ´ըլուխ* (Ա.) - *գʲըլօխ* (Դ.) - *կʲըլէօխ* (Վ.) - *կըլօխ* (Խ.), *օսկոռ* (Բ.,Դ.) - *վոսկոռ* (Խ.) - *վօսկօռ* (Ա.) - *օսկոր* (Մ.) - *ուսկոռ* (Վ.), *ջ´ուր* (Բ.,Դ.,Մ.,Ա.) – *ճիւր* (Խ.,Վ.), *գ´առ* (Բ.,Մ.) - *կյ°ռ* (Խ.,Վ.) - *գ´առ* (Ա.) - *գյ°ռ* (Դ.), *գ´արի* (Բ.,Ա.,Մ.) - *կʲ°րի* (Խ.,Վ.) - *գʲ°րի* (Դ.), *դ´եղին* (Բ.,Ա.,Դ.) - *տէղին* (Խ.) - *տեղին* (Վ.) - *դ´էղին* (Մ.), *հ´էրկէն* (Բ.,Դ.) - *էրկʲէն* (Խ.,Վ.) - *հէրգէն* (Մ.) - *էրգէն* (Ա.), *ձ´ուկ* (Բ., Ա.,Դ.) - *ծիւկʲ* (Խ.) - *ծիւկ* (Վ.) - *ձ´ուգ* (Մ.), *բ´ախ*(Բ.) - *ա՞խ*(Խ.,Վ.) - *բ´ահ* (Մ.,Ա.) - *բ´°խ*(Դ.), *ա՞տ*(Բ.) - *ատդ* (Մ.) - *ատտ*(Դ.,Վ.,Ա.,Խ.), *գ´եղ* (Բ.) - *կյէղ* (Խ.) - *գ´էղ* (Մ.,Ա.) - *գʲեղ* (Դ.) - *կʲեղ* (Վ.), *կ°յնել* (Բ.) - *կայնել* (Դ.,Վ.) - *կանել* (Մ.) - *կայնէլ* (Խ.) - *կաղնէլ* (Ա.), *դ´ու* (Բ.,Դ.,Ա.) - *տիւ* (Խ.,Վ.), *էրկու* (Բ.,Խ.,Վ.,Դ.,Ա.) - *էրգու* (Մ.) ևն[693]: Այս շերտում քիչ չեն նաև բաղադրությունները: Բայազետի բարբառում գործառող նման բառերից են՝ *°քայութուն, °ղաչանք, °մչըկոտ, °մսըկան, °մօթանք, °լնի, °նամօթ, °նարադ, °նըսկամ, °նլըվա, °նխամ, լիգվանի, շընախավոր, օղօրմութուն, °ղաջուր // °ղջ´ուր, °ղուխաց, հ´էսօր, °սվածածին, °ընթըթաղ, բ´արէգմասէր, գ´ըշերախառ, գ´ըլօխբ´աց, յելումուտ, կիր°գմուտ, խօրքուր, ջ´ըրխեղեղ, ջ´ըրխոր* ևն:

Բարբառների հինհայերենյան բառաշերտում որոշակի քանակություն են կազմում նաև գրաբարյան մատենագրության մեջ իրենց զուգահեռներն ունեցող, սակայն արդի գրական հայերենում, նաև լեզվի այլ դրսևորումներում ոչ գործածական բառերն ու բառաձևերը: Այս դեպքում ընդհանրությունը դիտարկվում է միայն բարբառ – գրաբար փոխհարաբերության շրջանակում: Բայազետի բարբառում գործառող նման միավորներից են. *°նխեռ-°նխայհ՝* հանգիստ, հանդարտ – գրաբ. *անխեռ՝* անխռով, հանդարտ, *հ´անքան՝* ուշ (Վ., Մ., Դ.)[694], *հ´անքընալ՝* ուշանալ (Վ., Ալ.) - գրաբ. անագան, անագանել,

[693] Նկատենք, որ և՛ բարբառների հինհայերենյան բառաշերտը, և՛ ընդհանուրհայերենյան բառերի ամբողջությունը բաղկանում են բնիկ բառերից և հին փոխառություններից:

[694] Փակագծերում նշում ենք այն բարբառները, որոնցում ևս տվյալ բառն արձանագրված է:

հ՛ընթել՝ թևի տակն առնել (Վ.) – գրաբ. անթել, *հ՛առավտուն*՝ առավոտյան (Խ., Վ.) – գրաբ. առաւօտուն, *հ՛ատրկել*՝ գործերը վերջացնելով՝ ազատ ժամանակ ունենալ (Ա., Ալ., Վ.) – գրաբ. ատակել, *բ՛ուռ*՝ գործածվում է *բ՛ուռ սիֆտ°կ* կապակցության մեջ[695], որ նշանակում է *ամբողջովին սպիտակ* (Ալ.) – գրաբ. *բուռ*, *էրէվանը գ՛ալ*՝ մեկին տեսնելու գալ – գրաբ. *յերեւան գալ*՝ ի հայտ գալ, երևալ, *հ՛էրկէն* (Ա., Վ., Մ., Խ., Դ.) – գրաբ. *երկայն*, *խեռը*[696]՝ նախադաս կապէ, որ նշանակում է *չվերաբերող, կապչունեցող /խեռը քեզնից* – քեզ չի վերաբերում/ (Դ., Ալ.) – գրաբ. *հեռի* (իբրև մակբայ և նախադրություն՝ ունի *մեկուսի, օտար, անմասն, առանց* իմաստները[697]), *խոռթել*՝ ավելորդ հողը հանել, ուղի բանալ, °վել խոռթ °նել՝ տունը հիմնավորապես ավլել, մաքրել (Վ., Խ., Դ., Մ.) – գրաբ. *հորդ*՝ «կոխուած, շիտակ (ճամբայ)», *հորդել*՝ «ճամբան բանալ, մաքրել, պատրաստել»[698], *օղոռթ*՝ ճիշտ (Ա., Վ., Մ., Խ., Դ.) – գրաբ. ուղղորդ, *մեղ դ՛ընել*՝ մեղավոր համարել, մեղադրել – գրաբ. մեղ դնել, *կ°մ տէնալ*՝ կամեցողություն հանդես բերել (Ա. *կամ գալ*՝ համաձայնել) – գրաբ. *կամ* «ուզելը, յօժարութիւն, ցանկութիւն»[699]: Կան դեպքեր, երբ գրաբարում միայն բաղադրություններում հանդիպող արմատը բարբառում ունի ինքնուրույն գործածություն: Այսպես, գրաբարում առանձին անգործածական *հանգ* «դադար» արմատը հանդիպում էր *հանգչել, հանգիստ* և այլ բաղադրություններում, բայց ինքնուրույն գործածություն ունի Բայազետի (խանք), Արարատյան (հանք), Վանի (խանքʲ), Մշո (հանք, հանգ) բարբառներում[700]: Թերևս *ջեր* «տաքություն, տաք» արմատի՝ գրաբարում առանձին անգործածական *ջեռ* տարբերակի հետկարելի է կապել բարբառիս *ճըռ* բառը, որ գործառում է *ճըռ մութ* կապակցության մեջ և ունի մթության խտությունը ընդգծելու իմաստ: Այս ձևին առնչվում է

---

[695] Այս բառի մասին տե՛ս նաև ՀԼՊ, մաս 1, էջ 388:

[696] Հանդիպում է նաև *խեռ* ձևով՝ *խեռ լըսօղաց, խեռ տէսօղաց* (*լսողներն ու տեսնողները անմասն են, նրանց չի վերաբերում*) կապակցության մեջ, որը հնից եկող քարացած կառույց է: Հոգնակի հոլովաձևը կարող էր հուշել ազդեցություն Վանի բարբառից, սակայն այս բարբառում Հ.Աճառյանը *խեռ* ձև չի արձանագրել, իսկ *տեսանել* գրաբարյան ձևի դիմաց առկա *տիսնալ* բայի ենթակայական դերբայն ունի *տիսնօղ* ձևը (տե՛ս ՔՎԲ, էջ 171-172):

[697] Տե՛ս ՆՀԲ, հ.2, էջ 89:

[698] Տե՛ս ՀԱԲ, հ.3, էջ 120:

[699] ՀԱԲ, հ.2, էջ 497:

[700] Տե՛ս ՀԱԲ, հ.3, էջ 35-36:

Վանի բարբառի *ճեր* «ոչ պարզկա գիշեր» բառը[701]: Հետաքրքրական իրողություն է ներկայացնում °*կան հ՛ըղօղ*[702] (վերջին ունեցվածք) դարձվածքը: Քարացած այս կառույցում °*կան* ձևը բարբառումս չպահպանված *ակն* (տեսողության օրգան) բառի սեռականն է, իսկ *հ՛ըղօղ* ձևը պետք է համարել բնիկ հայերեն *ողող* համանուն երկու արմատներից (մեկը՝ *թափել ը, հեղեղ* իմաստներով, մյուսը՝ *ողբ, լաց, կոծ* իմաստներով) մեկի զուգահեռը[703]: Դարձվածքը Բայազետի բարբառում սովորաբար գործածվում է, երբ խոսք է գնում ագահության, ունեզրկելու մասին, ինչպես՝ *Չում բիլ° °կան հ՛ըղօղը սըրփեց տ°րավ* (Մինչև անգամ վերջին ունեցածը /հավանաբար՝ աչքի արցունքը կամ տամկությունը/ սրբեց տարավ): Հավելենք, որ հայերենի *ողող* (հեղեղ, թափել ը) արմատը Բայազետի բարբառում բայական երկու միավորներում է դրսևորվում՝ *հ՛ըղօղել* (հեղեղել, սրբել-տանել) և *օղըղել* (ամանը քիչ ջրով լվանալ): Ընդհանրապես, բարբառ - գրաբար բառապաշարային փոխհարաբերությունների մի ուրույն տեսակ են ներկայացնում բարբառում գործառող՝ գրաբարին բնորոշ քերականական ձև ներկայացնող քարացած միավորները կամ կառույցները, որոնք հանդես են գալիս ինքնուրույն, ինչպես նաև բաղադրության կամ արտահայտության կազմում: Այս կարգի որոշ բառեր հինհայերենյան հոլովական ձևեր են: Օր., գոյականի եզակի թվի ուղիղ ձևի արժեք են ձեռք բերել հինհայերենյան հոգնակի ուղղական, հայցական հոլովներ ներկայացնող °*շ խարք*[704], *գ՛օվք* «լացախառն գովասանք մեռելի վրա», *թ°մք* (թամբ/ք/)[705], *ծըպկ* (ծոպ/ք/, գուցե նաև՝ ծուպ/ք/[706]), *ծուսկ*

---

[701] Այս տարբերակների առնչությունների մասին տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 125-126:

[702] Դժվարանում ենք ասել՝ արդյո՞ք հնարավոր է ինչ-որ կապ տեսնել այս կառույցի և գրաբարյան *ականողիք* «Աչք՝ հայեցող և տեսօղ. ակն. տեսանելիք» (տե՛ս ՆԲՀ, հ. 1, էջ 22), Պոլսի բարբառի *օղիկ օղիկ գալ* «լալ, ողբալ» (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 555, ՀԳԲ, էջ 1134) ձևերի միջև, մանավանդ որ *ողող* (ողբ, լաց, կոծ) բառի առնչությամբ կասկած է հայտնել Հ.Աճառյանը. «Այստե՞ղ է պատկանում արդեօք նաև *օղիկ օղիկ գալ* «լալ, ողբալ» (թէ՞ *օղ* արմատից՝ իբր «գալարուիլ, մորմոքիլ»)» (ՀԱԲ, հ. 3, էջ 555):

[703] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 555:

[704] Այս բառի եզակի °*շ խարք* ձևը, իբրև գոյական, ունի *ողջ ժողովուրդը* իմաստը (*Ընդու վըրէն °շ խարք կ°յ նակ՝ չըկ°ռցակ* - Ողջ ժողովուրդը ոտքի կանգնեց, նրան հաղթել չկարողացավ), մէ °*շ խարք* կապակցությամբ գործածվում է իբրև ածական՝ *խիստ շատ* իմաստով (*Մէ °շ խարք սօկ էր բ՛էրե* – Մեծ քանակությամբ հյութեր էր բերել):

[705] Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 2, էջ 148:

[706] Հ.Աճառյանը վկայում է, որ *ծոպ*-ից բացի հանդիպում է նաև *ծուպ* ձև (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 467):

(ծուծ/ք/), *մ°դնիք* (մատանի/ք/), *բ´ալնիս*, *խառնիս*, *հ´էռթիս*, *մուրուս*, *տ°նիս*, *փախս*[707] միավորները, մակբայական արժեք ունի *ն°խնյաց* (ի սկզբանե) ձևը, որ բարբառային համարժեքն է գրաբարյան *ի նախնեաց* բացառականի: Հետաքրքրական է *չորէք կողմանց* (բոլոր կողմերից) մակբայական կառույցը, որի առաջին բաղադրիչին համապատասխանում է գրաբարյան *չորք* բառի՝ ինքնուրույն գործածություն չունեցող *չորեք* ձևը[708]: *Չորեք* ձևի առանձին կիրառություն արձանագրվել է նաև Արարատյան բարբառում՝ *չորեք շուրջ* (չորս կողմը) կապակցության մեջ[709], իսկ միջին հայերենում դիտարկվել է *չորեքկոյս* (չորս կողմից) ձևը[710]: Ինչ վերաբերում է բարբառի *կողմանց* ձևին, ապա այն համապատասխանում է գրաբարյան *ի կողմանց* բացառականին: Առանց *ի* նախդրի՝ հինհայերենյան բացառականի ձևեր[711] են պահպանվել նաև *խեռ լըսօղաց, խեռ տէսօղաց* (հեռու լսողներից և տեսնողներից. լսողներին և տեսնողներին չի վերաբերում) արտահայտության մեջ[712], նաև *օրէ բ´ընէ* (ի սկզբանե) կապակցության մեջ[713]: Կան նաև բայական քարացած ձևեր պարունակող կամ ներկայացնող կառույցներ: Այսպես, *°նգ°լ* «անաշխատունակ, ծույլ» (Խ., Ալ., իսկ Դիադինի բարբառում՝ *°նգ՝*, Շատախի խոսվածքում՝ անգ՝) – գրաբ. *անկեալ* (*անկանել* բայի անցյալ դերբայի ձև). *կըխառակուրուս* «իր վրա կեղտը կորցնող, ակնբախ չդարձնող գործվածք» (Ա., Խ., Ալ.), իզկուրուս «հետքը կորցրած» (Ա., Խ.) – գրաբ. *կորոյս* (*կորնչել* բայի պատճառական *կորուսանել* ձևի

---

[707] Բայազետի բարբառում հանդես է գալիս *փախս հ´ըլնել* (խուսափել) հարադրության կազմում: Հ.Աճառյանը *փախս* ձևի առկայությունն արձանագրել է Արարատյան, Վանի, Բայազետի և այլ բարբառներում, իսկ Վանի բարբառի համար բերված օրինակից («*Փա՞խս է* Վն. չո՞ւզեր, միթե կը հրաժարի՞. Կրեայն իւր կօտէն փա՞խս է») երևում է, որ այստեղ ևս դրսևորվում է *խուսափել* իմաստը (տե՛ս ՀԳԲ, էջ 1061): Ս.Մալխասյանցը գավառական *փախս* ձևը բխեցնում է գրաբարի *փախ* արմատի հոգնակի հայցականից՝ *փախուստ, փախչելը* և *խուսափելը, հրաժարվելը* իմաստներով, և բերում է Հ.Աճառյանի հիշյալ օրինակը (տե՛ս ՀԲԲ, հ. 4, էջ 479):

[708] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 631:

[709] Տե՛ս ՀԼԲԲ, հ. 4, էջ 430:

[710] Տե՛ս ՄՀԲ, էջ 630:

[711] Ա.Մեյեն, չհամաձայնելով Լ.Մսերյանցի տեսակետի հետ, նշում է, որ բացառականի՝ առանց նախդրի հանդես գալը հետևանք է նախդիրների ընդհանրապես չպահպանվելուն, «....և այդ կիրառության մեջ չպետք է տեսնել հնդեվրոպական անկախ բացառականի ինչ-որ մնացորդ» (Ա.Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 346-347):

[712] *խեռ* ձևը համապատասխանում է գրաբարյան *հեռի* նախադրությանը, որ պահանջում է բացառական հոլովով դրված խնդիր:

[713] Առաջին բաղադրիչը (յօրէ ~ օրէ) բարբառում *ի սկզբանե* նշանակությամբ նաև առանձին է գործածվում, երկրորդի զուգահեռ *ի բնէ* ձևը այդ իմաստով գործածվում էր դեռևս գրաբարում (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 483):

անցյալի հիմք): Հանդիպում են նաև նախդիր ունեցող քարացած ձևեր, օրինակ՝ *գ՛ըլխըվեր*[714] «վերևից դեպի ներքևե (Ա. *գ՛ըլխըվէր*՝ դեպի վեր, Խ. *կըլխըվէր*՝ գլխիվայր) – գրաբ. *գլխիվայր*: Նույն կարգի կառույց են ներկայացնում գրաբարում իրենց զուգահեռները չունեցող *յելըվեր*[715] «դեպի վեր», *մըթըվեր* «մութն ընկած, մութը գետնին» ձևերը: Հինհայերենյան *ընդ ո՞ր* կառույցից է առաջացել *դո՞ր* «ո՞ւր» (Վ., Մրդ., Դ.) ձևը, *ընդ այս, ընդ այդ, ընդ այն* կառույցներից՝ *դէս, դէտ, դէն* «այս կողմ, այդ կողմ, այն կողմ» (Ալ., Դ., Խ.) դերանվանական ձևերը[716]: Կան նաև դեպքեր, երբ գրաբարում ինքնուրույն գործառող արմատները բարբառումս հանդիպում են միայն բաղադրությունների կազմում, ինչպես՝ գրաբ. *այրի* – Բ. *վոռփէվէրի*, գրաբ. *որդի* – Բ. շ°*նվոռթի*, գրաբ. *մերկ* – Բ. *մօրէ մերկ*, գրաբ. *բնակ* – Բ. *բ՛ընակըռել*, գրաբ. *պտոյտ* – Բ. *պըտըտալ, ծըռպըտօտ*, գրաբ. *համբոյր* – Բ. *խաչ խամփուր* ևն:

Բարբառում որոշ բառեր, ի տարբերություն գրական հայերենի, երբեմն պահպանել են գրաբարին ևս բնորոշ կամ գրաբարյանին մոտ իմաստ, ինչպես՝ *տեղը*՝ փոխարեն – գրաբ. *ի տեղ*, *տիրապըտել*՝ խնամարկել, տիրություն անել, տեր կանգնել – գրաբ. *տիրապետել*[717]. *խընգըռել*՝ գործվածքի գույները իրար խառնվել (Մ.) – գրաբ. *խանգարել*՝ ապականել, ավերել, խեղաթյուրել, խառնակել, աղավաղել[718]. *խէտ*՝ անգամ (Քանի խէտ էկավ-գ՛ընաց – Մի քանի անգամ եկավ-գնաց) – գրաբ. *հետ*[719] ևն:

Բարբառների հինհայերենյան բառաշերտում գործառող՝ գրաբարից տարբերվող բառերի[720] մեջ Գ.Ջահուկյանը նախառանձնացնում է տվյալ բարբառի հնչյունափոխության սովորական օրենքներով չբացատրվող՝ գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք ունեցող բառերը՝ պայմանավորված տարբեր գործոններով (ձայնդարձ, բաղա-

---

[714] *Ի*-ն հնչյունափոխվել է:

[715] ՀԱԲ-ում իբրև բարբառային նոր բառեր արձանագրված են *ելվեր, ելիվեր* ձևերը (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 9): *Ելվեր* գավառական ձև ներկայացրել է Ստ.Մալխասյանցը (տե՛ս ՀԲԲ, հ.1, էջ 554):

[716] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 613:

[717] ՆՀԲ-ում այս բառի հիմնական *տիրել* իմաստից բացի նշվում է *խնամարկել, հովանի լինել* իմաստը (տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 877), որը ԱՀԲԲ-ում բառի 10-րդ իմաստն է՝ հնց.նշումով (տե՛ս ԱՀԲԲ, էջ 1444):

[718] Տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 919:

[719] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 83:

[720] Այս կարգի բառերին անդրադարձել է նաև Հ.Աճառյանը (տե՛ս ՀԼՊ, մաս 1, էջ 118-122, հ. 2, էջ 389-428):

ձայնական տարբերություններ)[721]: Լեզվաբանի բերած օրինակների մի մասը գործառում է նաև Բայազետի և նրան մերձավոր բարբառներում, ինչպես՝ *թառամ – թոռոմ* (Մ., Ա., Մրդ., Վ.)[722], Բ.՝ գործառում է բայական ձևով՝ *թոռոմել* կամ *թոռմել*. *կեռ – կոռ* (Ա., Մ., Վ.), Բ.՝ գործառում է *կոռ ու կոփ*[723] (ծուռումուռ) կապակցության մեջ և *կոռել* բայական ձևով. *տ/ռ/ռոփել – տրփալ* (Ա.), Բ. *տրրրփալ*. *փերթ – փուռթիկ* (Վ.), *փռթիկ* (Մ.), Բ.՝ գործառում են երկու ձևերն էլ՝ իմաստայինն նուրբ տարբերությամբ[724]. *թրիք – թիթրէն* (Մ.), *թիթէն* (Ա.), Բ. *թիթեն*. *կոկոն, կոկով, կոնգոմ – կոկո* (Խ), *կոկոլ*, Բ.՝ *գլուխ*իմաստն ունեցող *կօկօ* ձևը գործածվում է մանկական լեզվում կամ հեգնանքի դեպքում, իսկ *կօկօլ* բառը նշանակում է *անպոչ հավ*. *մողէգ – մողոգիկ* (Մրդ.). Բ. *մօղօգիկ*, *օգմօղօգիկ*. *ուտել – ատուտք* (Վ.), Բ. °*տուտկ* (ուտելու պաշար) ևն: Բայազետի բարբառում *խոշոր* բառի դիմաց գործառում է *խըշուր* ձևը, որ *խըշուր* °*ղ* կապակցության մեջ ունի *մեծ կտորի փշրված, բայց ոչ շատ մանր* (ինչպիսին սովորական կերակրի աղն է) *վիճակ* իմաստը: Այս արմատից ունենք *խըրշել* (< խըշրել)՝ փշրել բայը: Նման ձևեր հատուկ են նաև Արարատյան, Մշո, Խոյ-Մարաղայի բարբառներին: Գրաբարյան *գաղտուկ* ձևի դիմաց բարբառս ունի *գ՛օխտուկ* (նաև՝ Ա., Մ.)[725], *լեզու* ձևի դիմաց՝ *լիզու* (նաև՝ Ա., Ալ.)[726]:

Բարբառների բառային հնաբանությունների մեջ քիչ չեն գրաբարից տարբեր կազմություն ունեցող բառերը[727]: Օրինակներ՝ *ջնջել – ջնջխել* (Ա., Մ.), Բ. *ջ՛ընջըխել*. *բորբոս - բորբոսնել* (Մ.), Բ. *բ՛օրփըսնել*, *ծուռ – ծուռն, ծուռը* (Ա.), Բ. *ծըռնէծուռ* (անմիտ). *ատոք - ատն*՝ ատնով, յուղալի, պարարտ. Բ. °*դանօվ* (Ալ.՝ ադանով). *մէգ –*

---

[721] Տե՛ս ՀԲՆ, էջ 278-279:

[722] Գ.Ջահուկյանի բերած օրինակները հիշատակելիս նախ բերվում է գրաբարյան ձևը, ապա բարբառայինը՝ փակագծերում նշելով այդ ձևն ունեցող բարբառները: Այնուհետև Բ. նշումով ներկայացնում ենք Բայազետի բարբառին բնորոշ ձևը:

[723] Շատախի խոսվածքում գործառում է *կոպ* արմատը, որ նշանակում է «ձեռքը կամ ոտքը ծուռ»: Ըստ Մ.Մուրադյանի՝ այս բառը ընդհանուր է հայերենի *կոպիտ* բառի արմատի հետ (տե՛ս Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, էջ 72):

[724] *Փռթիկ* ձևը նշանակում է *փոքր մաս*, կազմում է նաև *մէ փըռթիկ* (շատ քիչ) հարադրությունը, իսկ *փուռթիկ* ձևը նշանակում է *գործվածքի շատ փոքր կտորներ*:

[725] Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 1, էջ 506-507, ՀԳԲ, էջ 216-217:

[726] Հ.Աճառյանը նշում է, որ Ա.Մեյեն *լիզու* ձևը հին է համարում *լեզու*-ից (տե՛ս ՀԼՊ, մաս 2, էջ 421), տե՛ս նաև Ա.Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 137:

[727] Սրանց տարատեսակների մասին տե՛ս ՀԲՆ, էջ 280-282:

մկլկել. Բ. *մրքրլկել*՝ ամպամածությունից մթնել. *մլուկ – մլակ*՝ մոծակի նման փոքր միջատ (Ա.), *մլիկ*՝ փայտոջիլ (Վ.), *մլիգ* (Մ.). Բ. *մրլիկ*՝ մրջյուն. զգեստ – *գ՛եստ* (Բ.), *ծմակ – ծմա* (Վ.), Բ. *ձ՛ըմա*, *հանգչել* – հանգ՝ շունչ, հանգստություն (Ա., Մ.), խանքʲ (Վ.), Բ. *խանք*. *սպարդել*՝ գունատվել – *սարել* (Ա., Վ.), Բ. *սրբրռել*՝ ցրտից գունատվել. *տիղմ – տիլ* (Ա., Մ., Վ., Բ.) ևն: Գրաբարյան *փռել* բառի դիմաց իբրև բառային հնաբանություն բերվում են *փեռկել*՝ ոտքերը լայն բանալ, *փեռկվել*՝ ոտքերը մեկնել, փռվել ձևերը[728]: Թերևս սրանց է առնչվում Բայազետի բարբառի *փ°ռիկ* ձևը[729] (նաև՝ Ա., Ալ.), որ նշանակում է *ոտնաթաթերի դեպի դուրս, ոչ ուղիղ դրվածք*: *Փեռկվել* ձևի դիմաց էլ բարբառս ունի *փրրքրվել* (սայթաքելով փռվել գետնին, անշնորհք ձևով պառկել) բառը: Գրաբարի *գազազել* (զայրանալ, սաստիկ բարկանալ) բառի դիմաց Բայազետի բարբառն ունի *գ՛ազրզնել* ձևը, *ծիծեռնակ* բառի դիմաց՝ *ճիճրռնեկ* (գործածվում է միայն *ճիճրռնեկ հ°շկեր* «նեղ աչքեր» կապակցության մեջ. Վանի բարբառն ունի *ճճրռնեկ* ձևը): *Հոտոտել* բառի դիմաց բարբառումս գործառում է *խոնթխրնթալ* ձևը, որն ունի խոսողի պատկերացմամբ անտեղի կամ ոչ բարի նպատակով *ինչ-որ բան որոնել* իմաստը: Ալաշկերտի խոսվածքն ունի *հոնտիրնտալ* ձևը՝ *հոտոտել* իմաստով: Գրաբարի *վառվառել*՝ «վառելով վառիլ ստէպ ստէպ և յորդալոյս փայլմամբ»[730] բառի դիմաց Բայազետի բարբառն ունի *վրռթվրռթալ* ձևը (նաև՝ Ա., Դ., Ալ.)՝ *բոցկլտալ, կրակի գույնով փայլփլել* իմաստներով: Թերևս սրա հետ են կապված նաև *վրռթալ*, *վրռթկալ* (նաև՝ Վ., Ա.)՝ «*միանգամից բռնկվել*», վրռտել՝ «այրել» (Դ., Ա., Ալ.) բառերը[731]: Գրաբարյան *ճնճղուկ* բառի դիմաց Բայազետի բարբառն ունի *ճրնջուխ* (նաև՝ Մ., Մրդ., Դ.) արմատական ձևը[732], *գալ ար* «ոլորք» ձևի դիմաց՝ *գ՛ալ* (նաև՝ Ա., Ալ.) պարզ արմատը[733] ևն:

---

[728] Տե՛ս ՀԲՆ, էջ 280:
[729] Գուցե սրահետկապված է Հաճընի բարբառի *փ°ռել* ձևը (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 531):
[730] ՆՀԲ, հ. 2, էջ 785:
[731] Հնարավոր է, որ *վառ* արմատն ունի նաև բարբառային *վրռրշնել*՝ «արևից կամ ներքին ջերմությունից դեմքի խիստ կարմրելը» բառը (այս բառի գործառությունն արձանագրվել է նաև Արարատում և Ծիրակում /տե՛ս Ս. վրդպ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վ., 1912, էջ 612/): Ի դեպ, *շիկնել* իմաստը բարբառումս արտահայտվում է *կ°ըմրրժրռել* բառով:
[732] Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 3, էջ 207-208:
[733] Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 1, էջ 501:

Որոշ դեպքերում հնարավոր է, որ բարբառային բառերը պահպանած լինեն գրաբարյան բառիմաստից որոշակիորեն տարբեր՝ նրան զուգահեռ կամ նրանից հին բառիմաստ[734], կամ ունեցած իմաստներից ավելի հինը: Բայազետի բարբառում մի շարք բառեր կարող են ներկայացնել նման իրողություն: Այսպես, բարբառային *շուռթ* բառն ունի *թոնրի եզերք* (նաև՝ Ա., Մ., Վ.) իմաստը, և քանի որ *շուռ* արմատից *թ* և *ջ* ածականներով ձևավորված գրաբարյան *շուրթն* (բերանի պռոշները, պռկունք, եզերք) և *շուրջ* (բոլորտիք)[735] բառերի համար ընդհանուր է *եզերք, բոլորտիք* իմաստը, ուստի պետք է որ այն նախնական լինի *շուրթն* (բարբառային՝ *շուռթ*) բառի համար: *Խարել* բառը բարբառում նշանակում է *մարմնի մասերի շփումից դաղվելը, այրվածք առաջանալը* (նաև՝ Մ., Դ.). գրաբարում *խարել* բայն ուներ «խորովել. կիզուլ շանթացեալ երկաթով. տոչորել»[736] իմաստները, որոնց զուգահեռ, մանավանդ բայը կրավորաձև գործածելիս, կարող էին հանդես գալ նաև *դաղվել, այրվել* իմաստները: *Ջ՛օկ* բարբառային ձևն ունի *առանձին, անջատ* (նաև՝ Մ., Ա., Վ., Մրդ., Դ.) իմաստները. գրաբարյան *ջոկ* արմատի համար վկայվում է *խումբ* իմաստը, իսկ *ջոկել* բայն ունի *բաժանել, անջատել* իմաստը[737], և պետք է ենթադրել, որ *ջոկ* բառը *առանձին, անջատ* իմաստունեցել է *խումբ* իմաստին զուգահեռ: *Խափանել բառի բարբառային իմաստն է՝* անհետանալ /չարը խափանավ/ (նաև՝ Ա., Մ.). գրաբարում *խափանել* բայը նշանակում է *արգելք լինել, դադարեցնել*, իսկ *խափան* ձևը՝ *արգելք, ընդհատում:* Բայազետի բարբառում *խափան հ՛ափարը* է անվանվում անհետացող և նորից բխող մի աղբյուր: Սա կարող է վկայել բարբառային *խափանել* չեզոք բայի մեջ *ընդհատվել* և *անհետանալ* իմաստների զուգորդում, որ գուցե հատուկ է եղել նաև գրաբարին:

Բարբառային հնաբանությունների մեջ առանձին խումբ են կազմում գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները[738]: Գ.Ջահուկյանի բերած օրինակների մեջ քիչ չեն նաև Բայազետի և շրջակա բարբառներում գործառող նման միավորները, ինչպես՝ *բբուկ*[739]՝ փե-

[734] Տե՛ս ՀԲՆ, էջ 282:
[735] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 538 – 539:
[736] ՆՀԲ, հ. 1, էջ 931:
[737] Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 130:
[738] Սրանց մասին տե՛ս ՀԲՆ, էջ 283-300:
[739] Օրինակները ներկայացնում ենք ըստ Գ.Ջահուկյանի, իսկ փակագծերում բառը բերում ենք բարբառային տառադարձությամբ:

տուր - Բ. *բ՛ըփուկ. բխբուճ՝* լավ եփվելուց ուռած-բարձրացած - Բ. *բ՛ըխպուճ*, այստեղից նաև՝ *բ՛ըխպըճել. գլփել՝* կորզել, շորթել - Բ. *գ՛ըլփել. պուպուլ* (Ղրբ.)՝ ամորձիք - Բ. *պուպուլ՝* տղաերեխայի անդամ. *տարթ՝* թրիքի տափակեցրած շերտ (Ա., Վ.) - Բ. *տ°ռթ. տրաքել՝* ճայթել, պայթել - Բ. *տըրաքել. կաւառ* (Ա.)՝ նեղ առու - Բ. *կ°վառ. կլմպոզտիկ՝* գլուխկոնծի - Բ. *կըլըմբոստիկ. կլոնձ* (Ղրբ.)՝ մեծ կտոր, գունդ - Բ. թերևս սրա հետ կապունի *տիգնակըլօնձ* «գարեկ» բառի բաղադրիչը. *կռկել՝* ցրտից կծկվել - Բ. *կըռկել, կըռկըվել. կռտել՝* կաշին տաքությունից կուչ գալ - Բ. *կըռտել. թնկթնկալ* (Վ.)՝ հեկեկալ - Բ. *թընգթընգալ. փմփուխ* (Վ.)՝ գողտրիկ - Բ. *փըմփուխ՝* գիրգ, փափուկ. *փմփռնել* (Ղրբ.)՝ գիրանալ - Բ. *փամփըռնուկ* (ասվում է աչքերի մասին, երբ կոպերը ուռած են). *սլուլ* (Ա., Վ.)՝ սառնամանիք - Բ. *սըլուլ. սղին՝* սառույցի բարակ շերտջրի վրա - Բ. *սըղին. շենք* (Վ.)՝ լայն քայլ - Բ. *շենքել՝* լայն քայլով մի բանի կամ մեկի վրայով անցնելը. *լակ՝* փչացած (ձու) - Բ. *լախ. լավոթել* (Վ.)՝ ապականել, լույծ կղկղել - Բ. *լավօթել՝* անպատիվ խոսքերով մեկին ծանր վիրավորել. *լիժ՝* ողորկ, հարթ - Բ. *լիժ, լըժիկ, լըժալ. լկել* (Վ.)՝ սկսել հալչել - Բ. *լըխկել. լոք* (Ա.)՝ մեծ քայլ - Բ. *լօնք. լըպ* (Մ., Վ.)՝ *բուռ* - Բ. *լըփ. մառ՝* փշի նման մատը մտնող բարակ շյուղ - Բ. *մ°ռ. մռու* (Մ.)՝ բարկ, կծու - Բ. *մըռու* ևն[740]: Նման բառերի շարքում հիշատակվում է նաև Բայազետի բարբառի *քըռփըշտուն*[741] (խորդուբորդ, անհարթ) ձևը, որի և Վանի բարբառի *քեռթափռթիկ* (խորդուբորդ) ձևի համար ենթադրվում է ker-th-? նախաձևը[742]: Հավանաբար *քըռփըշտուն* բառի առաջին բաղադրիչ *քըռ*[743] արմատով են ձևավորված Բայազետի բարբառում գործառող նաև հետևյալ կազմությունները՝ *քըռքաշ* (գետնի վրայով դժվարությամբ քարշ տալով), *քըռ տալ, քըռըցընել* (գետնի վրայով քաշել), *քըռնել* (անհարթ և անվարժ կարել), *քարուքըռ°, քըռ°*[744] (երկուսն էլ՝

[740] Տե՛ս ՀԲՆ, էջ 283-299:

[741] Այս բառը արձանագրվել է Ալաշկերտի խոսվածքում (*քըռպըշտուն*) (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 247) և Դիադինի բարբառում՝ *ք՚ըռփըշտուն* (տե՛ս ԴԲ, էջ 229):

[742] Տե՛ս նշվ. աշխ., էջ 290:

[743] Վանի բարբառն ունի *քռուկ* (քարքարոտ տեղ) բառը, որի կապը *քըռ* արմատի հետ Գ.Ջահուկյանը չի դիտարկել (տե՛ս, ՀԲՆ էջ 311):

[744] Այս բառերի *քըռ* արմատը չի կարող նույնացվել հայ բարբառների՝ թուրքերենից անցած *ղըռ* (անջրդի քարքարոտ հող) բառի հետ. Բայազետի բարբառում այդ փոխառությունն ունի *կըռ* (նաև՝ *կըռաջ*) ձևը: Այդ տարբերությունն առկա է նաև Ալաշկերտի խոսվածքում (քըռա /քարքարոտ վայր/ և խըռաջ /ավազահող/), խոյ-

քարքարոտ ու անհարթ տարածք)[745]: Կան բարբառային բառեր, որոնց հնդեվրոպական ծագումը կասկածելի է, ինչպես՝ *բ՛ալ ան-բ՛ալ ան*[746]՝ քուլա-քուլա, *պուլիկ*՝ հողե աման, *պուտ*՝ կաթիլ, *կօռօփ*՝ գունդ, *կօտ*՝ գլուխ, *թէտկել*[747]՝ աքաղաղի զուգավորվելը հավի հետ, *քէն*՝ վերքի թարախ, *շըլօփա*՝ մեծ փաթիլներով ձյուն, *բոռալ*[748]՝ գոռալ, *քօնձախ*՝ խղճուկ խրճիթ, *ծըպտուն*՝ թույլ ձայն, *մընձըրել*՝ այրվել, *յեռթ*՝ հերթևն:

Այլ դեպքերում էլ բարբառային բառերը իրենց հնչյունական կազմությամբ «....շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ»[749]: Բայազետի բարբառում գործառող՝ Գ.Ջահուկյանի բերած օրինակներին[750] են առնչվում հետևյալները. *ալ ալ ալ* (Ա.)՝ փայլել – Բ. *ալ ալ ալ. պսալ* (Վ.)՝ ակնապիշ նայել – Բ. *ալ սալ. տզկել* (Մ., Վ.)՝ թրջել – Բ. *տըսկել. կմունք* (Վ.)՝ քիմք - Բ. *կըմուկ. կնդել* (Մ., Վ..)՝ մազերը խուզել – Բ. *կընդել*՝ բուրդը խուզել. *սկել* (Մ., Վ.)՝ ընկղմվել – Բ. *սըկել. սխկել* (Ա., Վ.)՝ մանրացնել, փշրել – Բ. *սըխկել. լեմ* (Ղրբ.)՝ ատամ – Բ. *լ°մ*, թերևս այստեղից՝ *լըմլըմցընել* ՝ ծամծմել. *լըպկել* (Բ.)՝ պլոկել. *մոզ* (Վ.)՝ ձիաճանճ – Բ. *մօզ. մուռ* (Ա.)՝ ոխ, վրեժ – Բ. *մուռ* ևն: Այս կարգի բառերի մեջ Գ.Ջահուկյանը ներառել է նաև *տլտլա* (Ն.-Բզ.) «ցեխոտ, ճահճոտ տեղ», ինչպես նաև *տղպել* (Վ., Մրդ.) «մգլել, բորբոսնել» բառերը[751]: Դիտարկումները ցույց են տալիս, որ երկու բառերն էլ

Մարաղայի (քըռքʲ°շ /քաշքշելով/ և ղ՛ըռ) և Դիադինի (քʲըռքյ°շ և ղ՛ըռ) բարբառներում:

[745] Ինչ վերաբերում է *քըռփըշտուն* բառի մնացած հատվածին, ապա այստեղ ակնհայտորեն առանձնանում է *ուն* ածանցը, իսկ *փըշտ* ձևը հավանաբար առաջացել է *փուշտ*-ից՝ հնչյունափոխությամբ: Ըստ Հ.Աճառյանի՝ վերջինս բարբառներում հանդիպում է *բշտիկ, ուռեցք* նշանակությամբ, *բուշտ* (պալար, ուռուցք) բառի հնչատարբերական է, որով վկայված են *փամփուշտ, փաղափուշտ*, նաև Մշո բարբառի *փալամփուշտ* և այլ բառեր (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 485):

[746] Բերվում են Գ.Ջահուկյանի նշած բառերից (տե՛ս ՀԲՆ, էջ 301-316)՝ Բայազետին հարազատ ձևերով:

[747] Գ.Ջահուկյանը Բայազետի բարբառի համար նշում է *թեթրել, թեթրիկ* ձևերը:

[748] Չնայած ձայնեղ բաղաձայնով սկսվելուն՝ այս բառը, թերևս իբրև բնաձայնական միավոր, կարող է համարվել հնաբանություն, որովհետև Բայազետի բարբառում նման միավորների սկզբում գործառում են ձայնեղներ, ինչպես՝ *գըռգըռալ, դըմփոց, դըդդըխկալ, բըռալ, դըզալ, բըլբըլալ, բըռբըռթալ* ևն: Սրա մասին տե՛ս նաև ՀԼՊ, մաս 1, էջ 119:

[749] ՀԲՆ, էջ 317:

[750] Տե՛ս ՀԲՆ, էջ 317-330:

[751] Տե՛ս ՀԲՆ, էջ 322:

հավանաբար բնիկ հայերեն կազմություններ են: Այսպես, Բայազետի բարբառի *տըլ տըլ ա* բառը ակնհայտորեն ձևավորվել է բարբառում գործառող բնիկ հայերեն *տիլ*[752] «ցեխ» արմատի կրկնությամբ, մանավանդ որ *ճիմ* (ճահիճ) բառի կրկնությամբ էլ ունենք *ճըմճըմա*[753] (ճահճոտ վայր) ձևը: Ինչ վերաբերում է *տըխպել* բառին, ապա Բայազետի բարբառում այն ունի ոչ միայն «մգլել, բորբոսնել» իմաստը (ունենք նաև *տըխպախամ* «բորբոսահամ» բառ), այլ նաև նշանակում է *կեղտից գույնը խամրել* (գործվածքի մասին): Հ.Աճառյանը բնիկ հայերեն *դեղբ* (դեղին) արմատի ստուգաբանությունից հետո բերում է բարբառային միայն մեկ օրինակ. «Մշ. դ՛էխբ՛ել «շորի դեղնիլը կեղտից»»[754]: Կարծում ենք՝ Վանի և Մարաղայի բարբառներում Գ.Ջահուկյանի դիտարկած *տղպել* ձևը ոչ այլ ինչ է, եթե ոչ Մշո բարբառի *դ՛էխբ՛ել*-ի զուգահեռը՝ այդ բարբառների բառասկզբին հատուկ հնչյունական օրինաչափությամբ (դ>տ): Երկու ձևերի միջև առկա է նաև իմաստային կապ. բորբոսնելը կամ մգլելը ենթադրում է նաև գույնի խամրում: Այդ կապը արձանագրել է դեռևս Ս.Ամատունին[755], ապա նաև՝ Ռ.Մարկոսյանը[756]: Բայազետի բարբառի *տըխպել* ձևը պետք է լինի Վանի կամ Խոյ-Մարաղայի[757] բարբառի ազդեցության արդյունք, քանի որ բարբառիս բառասկզբում *դ>տ* անցումը օրինաչափչ է[758]:

Գ.Ջահուկյանի կողմից իբրև բարբառների բառային հնաբանություն ներկայացված մի շարք միավորներ, մեր կարծիքով, չեն կարող այդպիսին համարվել Բայազետի բարբառի համար: Նկատի ունենք ձայնեղ հպականներով կամ հպաշփականներով սկսվող բառերը, որոնք հնաբանություն լինելու դեպքում, ըստ Բայազետի բարբառի հինհայերենյան բառաշերտում գործող օրինաչափության, պետք է սկսվեին շնչեղ ձայնեղներով: Այդպիսի բառերից են՝ *գամփռ*

---

[752] ՀԱԲ-ում *տիղմ*-ի մասին ասվում է. «=Բնիկ հայ բառ. կազմուած է –մ մասնիկով (հմմտ. *կոդ-կոդմն*) *տիլ* «ցեխ» արմատից, որ թէև հնից չէ աւանդուած, բայց պահուած է գաւառականներում» (ՀԱԲ, հ. 4, էջ 406):

[753] *ճըմճըմա* և *տըլ տըլ ա* ձևեր կան նաև Ալ. խոսվածքում (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 229, 242):

[754] ՀԱԲ, հ. 1, էջ 650:

[755] «ՏԽՊԵԼ Ար. ԴԵՂՊԵԼ Վան. խոնաւութիւնից պտուղների ընդեղէնների ալն, մոխրի գոյն ստանալը և համը փոխելը, ոչնչանալը» (Ս. վրդպ. Ամատունի, նշվ. աշխ., էջ 627):

[756] «տըխպէլ -դեղբել՝ խոնավությունից դեղնել, տհաճ հոտարձակել» (ԱԲ, էջ 359):

[757] Տե՛ս ԽԲ, էջ 235:

[758] Ազդեցության արդյունք է նաև Դիադինի *տըղպուկ* ձևը, որ ունի *կեղտոտված* իմաստը (տե՛ս ԴԲ, էջ 221):

- *գոմփոռ* (Ա.), Բ.՝ հանդիպում է *գըմփըռ* ձևը՝ թմբլիկ իմաստով. *գռշտել* (Մ.)՝ հրել - Բ. *գըռըշտել*. *գորսել* (Ա.)՝ սաստիկ ծեծել – Բ. *գըռսել*. *գըռռոտ* (Բ.)՝ քոսոտ. *դլել* (Ա.)՝ խաբել – Բ.՝ թերևս այս բառի հետ կապունի *դըլըլվորել* (տկար ձևանալ) կազմությունը. *գնջիկ*, նաև՝ *գընջի* (Բ.)՝ ոչխարի դմակից կախված կտտոր. *գոմբ* (Ալ., Վ.)՝ կռուփ – Բ. *գոմփ*: Ի տարբերություն սրանց՝ թերևս հինհայերենյան բառաշերտին են հարում բարբառային այն բառերը, նաև արաբապարսկաթուրքական փոխառությունները[759], որոնք ունեն այդ շերտին հատուկ հնչյունական կազմություն, ինչպես՝ *բ՛էտ* (նաև՝ Ա., Մ., իսկ Խ., Վ.՝ պէտ), *բ՛ըշտել* (նաև՝ Ա., Դ., Մ., Խ.), *բ՛ըփռէճ* (գիսախռիվ, նաև՝ Ա., Մ.)[760], *բ՛իճ* (նաև՝ Ա., իսկ Խ.՝ պիճ), *բ՛օխի* (դաշտային բանջար, նաև՝ Ա., Մ., Վ.), *գ՛աթա*, *գ՛ափառ* (վիզ, հատկապես՝ շան), *գ՛ըխալ* (չարակամել, նաև՝ Մ.), *գ՛ըխկըմել* (խոնավությունից փափկել), *գ՛ընձակ* // *գ՛ընձիկ* (ավելի պոչի հանգույցը, նաև՝ Ալ.)[761], *գ՛ըփել* (կռանալ մի բանի վրա և մարմնով ծածկել), *գ՛ըռթան* (թուխս, նաև՝ Մ., Խ., Ա.), *դ՛ախ* (Ա., Մ., իսկ Վ., Խ.՝ տախ)[762], *դ՛արք* (փորձանք, նաև՝ Ալ.)[763], *դ՛առս*, *ձ՛ըցում* (նաև՝ Ալ., Խ., Դ.), *ջ՛ալել* (անփույթ ծալծլել, ճմռթել), *ջ՛ախ* (ծուռ, հատկապես՝ բերանը, նաև՝ Ալ.), *խալալ* (հալալ), *խախանդ* (հահանդ՝ հանդարտ)[764], *խոտաղ* (տավարած, հոտաղ, նաև՝ Ա., Մ., Վ., Խ., Դ.), *խարամ* (հարամ, նաև՝ Ա., Խ., Վ.) են: Սրանց մի մասը (*բ՛ըփռէճ*, *բ՛իճ*, *բ՛օխի*, *գ՛աթա*, *դ՛ախ*, *խալալ*, *խախանդ*, *խարամ*) իրենց գրավոր արտահայտությունն են ունեցել միջինհայերենյան մատենագրության մեջ[765], բայց, հասկանալի է, բանավոր խոսքում դրանք գործառել են ավելի վաղ:

Միջինհայերենյան բառաշերտ

Միջինհայերենյան բառաշերտի բառերը Բայազետի բարբառի բառապաշարում ևս էական դեր ունեն և զգալի քանակություն են

---

[759] Բառասկզբում շնչեղ ձայնեղ, ինչպես նաև *հ*-ի դիմաց *խ* ունեցող արաբապարսկաթուրքական փոխառյալ բառերը թերևս այդ լեզուներից կատարված ամենավաղ փոխառություններից են, երբ դեռ բարբառիս բառասկզբում չէին կարող գործառել ձայնեղ հպականներ ու հպաշփականներ և շփական *հ*:

[760] Տե՛ս նաև Ս.Ամատունի, նշվ. աշխ., էջ 94:

[761] *Գունդ* բառի բարբառային ձևերը ներկայացնելով՝ Հ.Աճառյանը գրում է, որ *ստ>ծ* ձայնափոխությամբ առաջացել է *գնծիկ* ձևը (ՀԱԲ, հ. 1, էջ 594):

[762] Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 1, էջ 614:

[763] Տե՛ս նաև ՀԲԳ, էջ 270:

[764] Տե՛ս նաև ՄՀԲ, էջ 397:

[765] Տե՛ս ՄՀԲ:

կազմում[766]: Այդ բառաշերտի մասին պատկերացում կազմելու համար դիտարկում ենք բառային այն միավորները, որոնք, արձանագրված չլինելով հինհայերենյան մատենագրության մեջ և մեր կողմից ընդգրկված չլինելով բարբառների հինհայերենյան բառաշերտում, իրենց զուգահեռներն ունեն միջինհայերենյան գրավոր աղբյուրներում: Մեր հաշվումներով՝ Բայազետի բարբառում գործառում են 1000-ից ավելի այդ կարգի բառեր[767]: Այդ բառերի մի մասը թերևս գալիս է հինհայերենյան բանավոր խոսքից, բայց պետք է նաև նկատի ունենալ, որ բարբառային հայերենի՝ միջինհայերենյան շրջանին վերաբերող շատ բառեր էլ գրավոր խոսքում իրենց արտահայտությունը չեն ստացել: Այնուամենայնիվ, գրավոր աղբյուրներում արձանագրված և բարբառում գործառող հիշյալ բառամթերքը հնարավորություն տալիս է գաղափար կազմելու բարբառի միջինհայերենյան բառաշերտի վերաբերյալ: Ուսումնասիրողները միջին հայերենով ավանդված բառապաշարում առանձնացնում են բնիկ բառեր, փոխառություններ և նորակազմություններ[768]: Նշելով, որ միջինհայերենյան բնիկ բառերի մի մասն ունի հնդեվրոպական ծագում, իսկ ճնշող մեծամասնության ծագումն անորոշ է՝ Ռ.Ղազարյանն իրավացիորեն գրում է, որ բնիկ բառերից շատերը գոյություն են ունեցել դեռևս վաղնջական ժամանակներում, գործածվել են գրաբարի խոսակցական տարբերակում, սակայն մեզ են ավանդվել միջին հայերենի գրական հուշարձանների շնորհիվ[769]: Մ.Մուրադյանը, միջին հայերենով ավանդված բառերի մեջ զանազանելով բնիկ բառերը ենթաշերտային բառերից[770], գրում է. «Միջին գրական լեզուն խոսակցական հայերենից ընդունել է մի շարք հնդեվրոպական բառեր, որոնք, նայելով նրանց ծագմանը, հայերենի մեջ գոյություն են ունեցել նրա ծննդյան իսկ օրից: Այս բառերը հին գրականությամբ չեն ավանդվել, երբեմն համապատասխան մատենագրության

[766] Ցավոք, բարբառային բառապաշարի այս բառաշերտը բարբառագետների ուշադրությանը չի արժանացել:
[767] Միջին հայերենի բառապաշարը դիտարկել ենք Ռ.Ղազարյանի և Հ.Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (Ե., 2009) աշխատության ընձեռած նյութի շրջանակում: Տե՛ս Հավելված 9:
[768] Տե՛ս Ռ.Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, էջ 63-64:
[769] Տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 64:
[770] Տե՛ս ԱՄԳՀՊ, էջ 187-197:

բացակայության, երբեմն ոչ ընտիր դիտվելու պատճառով: Հնագույն ծագումով այս բառերը միջին հայերենյան կոչելու առիթը տվյալ գրական լեզվի միջոցով նրանց հայտնի լինելն է»[771]: Այնպես որ, բարբառային շատ բառեր միջինհայերենյան բառաշերտում ընդգրկվում են պայմանականորեն՝ իրականում ներկայացնելով լեզվի զարգացման նախորդ փուլերը, սակայն բարբառային խոսքում դրանց դիտարկումը կարևորվում է նաև իբրև միջին հայերենի հետ ունեցած ընդհանրությունների դրսևորում: Միջին հայերենով ավանդված և Բայազետի բարբառում իրենց զուգահեռներն ունեցող բնիկ հայերեն բառերից են. *°վիլ ուկ, տիզ, վէսկի, կօծօծ, °գռա, գ՛ոզ, թուշ, խիժ, ճիվ* «սրունք», *ճուճ* «առնանդամ», *ճուռ* «ազդր», *շեռ, պինչ, պըլոր, պըռունգ* (բայց՝ պըռկըներ), *ցէթել, թացան, թառ* «թռչունների թառելու ձող», *տ°լ* «կնոջ ամուսնու քույրը», *հ՛առիք, շէրեփ, շոր, կօշկոռ* «կոշտ», *ճըղել, թըռփօշ, մըռափ, շիվար, ջ՛ոչ, տըգլոզ, շիտ°կ* (գործածվում է միայն հագուստի դրսի կողմը նշելու համար, իբրև հակադրություն *թ°ռս* բառի. ունենք նաև՝ *շըռճել - շիտկել* «հագուստը զնել ներսի և դրսի կողմերից», *շըռճոնք - շիտ°կ* «երկերեսանի»), *պըդդունց* (մատների ծայրերի մեջ տեղավորվող չնչին քանակություն, օր.՝ մէ պըդդունց °ղ), *ժուկ, պըտի, վայ թէ* «գուցե, չլինի թե» ևն: Անշուշտ, միջին հայերենի բառապաշարի հիմքում ընկած են ընդհանուրհայերենյան, ուրեմն և՝ գրաբարի հետ ընդհանուր բառեր, և այդ առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև այն դեպքերը, երբ միջինհայերենյան և բարբառային միավորները գրաբարյան համարժեք ձևերի համեմատությամբ են բերում կառուցվածքային և իմաստային զանազանություններ: Այսպես, գրաբարյան *աղ եւ հաց* ձևի դիմաց ունենք միայ. *աղ ու հաց*, Բ. *°ղ ու խաց*, գրաբ. *զգետնել* - միայ. *գետնել*, Բ. *գէդնել*, գրաբ. *սպանանել* – միայ. *սպանել*, Բ. *ըսպանել*, գրաբ. *կալ ուլ* – միայ. *կալ նել*, Բ. *կ°լ նել*, գրաբ. *կարել* – միայ. *կարենալ, կարնալ*, Բ. *կ°նալ*, գրաբ. *երդ* – միայ. *երդիկ, երդիք*, Բ. *հ՛էռթիս*, գրաբ. *ի տեղ* – միայ. *տեղ*, Բ. *տեղը* ևն: Բերենք նաև իմաստային զանազանությունների օրինակներ. գրաբարյան *արիւնել* բայն ուներ *արյամբ շաղախել, ներկել* իմաստը, միջին

[771] ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 187:

հայերենի *արոյնիլ* կամ *արունիլ*[772] և Բայազետի բարբառի °*ընել* ձևերն ունեն *արյուն հոսել* իմաստը, այդպես նաև՝ գրաբ. *կարգել* «շարել, դասավորել, սահմանել որոշել» - միայ. *կարգել* և Բ. *կ°ոքել* «ամուսնացնել», գրաբ. *լաւանալ* «լավ լինել, զորանալ, տիրել» - միայ. *լաւնալ* և Բ. *լավընալ* «լավանալ, առողջանալ», գրաբ. *հատանիմ* «կտրվել» - միայ. հ*ատնիլ*՝ նաև՝ «վերջանալ», Բ. *խատել* «սատկել», գրաբ. *դատել* «դատապարտել, վիճել» - միայ. *դատել* և Բ. *դ՛ատել* «չարաչար աշխատել, չարչարվել»[773], գրաբ. *ծեծել* «ծեծ տալ» - միայ. *ծեծել* և Բ. *ծէծել* «մանրել, փշրել», գրաբ. *բերան* – միայ. *բերան* և Բ. *բ՛էրան*՝ նաև «անգամ» ևն:

Բայազետի բարբառում զգալի քանակություն են կազմում նաև միջնադարյան մատենագրության մեջ արձանագրված և նորակազմություններ համարվող բառաձևերի զուգահեռները: Դրանք և՛ նոր բայեր են, և՛ ածանցավոր բառեր, և՛ բարդություններ: Օրինակներ. °*ընխրոնել* (Դ.,Վ.), *բ՛ըլցընել*, *գ՛անգատ °նել*, *բ՛անել* (Մ., Դ., Վ.), *բ՛արկընալ* (Ալ., Դ.), *էրկուտրկել* (Ալշ., Դ.), *խախընդել* (Խ., Ալ.), *խրստել* (Ալ.), *խրրկել* (Ա.), *կըռընձել* (Ա., Ալ., Դ.), *խոքէսխընել* (միայ. հոգոց հանել), *մըգրըդել* (Ալ.), *պ°տրոտել* (Խ., Վ.), *ջ՛ըրխընել* (Ալ., Դ.), *քըշկընալ* (Ա., Դ., Ալ.), °*մչըկոտ* (Ա., Ալ., Դ., Վ.), *բէխէր* (Խ.), *կ°ոկըտան* (Ա., Վ.), *տըղասկան* (Դ., Մ.), *օշլոտ* (Դ.), *հ՛էրկընավըզիկ* (Մ., Վ.), °*ներձ՛°ք* (Ա., Մ., Դ.), *դ՛արուփոս* (Ա., Վ.), *դ՛ըռնէդ՛ուռ* (Ա.), *դոր վոր, թըխտըմոր* (Խ., Դ.), °*խու դ՛ող* (Ա., Մ., Խ.), *խաչխամփուր* (Դ., Խ.), *կերուխում* (Ալ., Խ.), *կընիկ°ոմատ* (Ալ.), *հ՛ուշիկ - հ՛ուշիկ* (Դ.), *մըխախոտ* (Մ.), *նեխսիռոտ* (Ա.), *շ°նվոռթի* (Դ., Մ., Ա.), *վոդնակոտոր* (Վ.), *քանի էթա* ևն:

Փոխառյալ բառեր

Միջինհայերենյան շրջանում լեզվի բոլոր դրսևորումները շարունակել են փոխառություններ կատարել տարածաշրջանում գործառող այլ լեզուներից, հատկապես՝ արաբերենից, պարսկերենից, թուրքերենից[774]: Ընդ որում՝ միջին հայերենում

[772] Միջին հայերենն ուներ նաև *արունել* բայ, որն ուներ *արյունոտել* իմաստը (տե՛ս ՄՀԲ, էջ 93):

[773] Բայազետի բարբառում գործառում է նաև *դադել* բայը՝ *դատապարտել* իմաստով:

[774] Մեր կողմից դիտարկվող բոլոր բարբառների ուսումնասիրողներն էլ վկայում են այս լեզուներից կատարված փոխառությունների նշանակալի առկայությունը բարբառային բառապաշարում (տե՛ս մեր կողմից հիշատակված աշխատությունների համապատասխան բաժինները):

օտարամուտ բառերի քանակը հասնում է «պատկառելի չափերի»[775]: Օտար բառերի այդ առատ ներհոսքը պայմանավորված էր պատմական իրողություններով, բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների հետհարևանությամբ ու շփումներով[776]: Նկատվել է, որ միջինհայերենյան շրջանում կատարված փոխառությունների մեծ մասը, հատկապես՝ արաբերենից, պարսկերենից ու թուրքերենից փոխառյալ բազմաթիվ բառեր պահպանվել են ժամանակակից բարբառներում[777]: Հայտնի է, որ միջին հայերենի փոխառությունների մեծագույն մասը կազմում են արաբերեն բառերը[778]: Ըստ Ռ.Ղազարյանի՝ հայ-արաբական հարաբերությունների (և՛ բուն Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս) առաջին շրջանում (7-9-րդ դարեր[779]) արաբերենի ազդեցությունը հայերենի վրա խիստ աննշան է եղել, մինչդեռ երկրորդ շրջանում (12-17-րդ դարեր), չնայած Հայաստանում վաղուց վերացել էր արաբական տիրապետությունը, հայերեն են մուտք գործում չափազանց մեծ թվով արաբերեն փոխառյալ բառեր[780]:

---

[775] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 197:

[776] Հայաստանը մշտական շփման մեջ էր տարբեր ժողովուրդների հետ. «Արևելքից՝ պարսիկների, արաբների, սելջուկների, հյուսիսից՝ վրացիների, հարավից՝ արաբների, ասորիների, քրդերի: Բուն հայկական հողերում էլ տարբեր ժամանակներում ....հաստատվել էին օտար ժողովուրդներ ու ցեղեր. հույն, ասորի, հրեա, պարսիկ, արաբ, սելջուկ, քուրդ, մոնղոլ, թուրք: ....Լեզուների մերձեցմանը խթանում էր բարձր վերելք ապրող առևտուրը: ....Ինչպես հայերենը, այնպես էլ պարսկերենը, հունարենը, իտալերենը, իսպաներենը, ասորերենը, արաբերենը այս շրջանում ենթարկվել են իրենց շփվող լեզուների անդիմադրելի ազդեցության» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 197-198): Ընդհանրապես, տարբեր ժողովուրդների և մշակույթների հետ շփումները դիտարկվող բարբառներում արտահայտվում են փոխառությունների զանազանություններով. այսպես, Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառներում զգալի քանակություն են կազմում անմիջական փոխառությունները պարսկերենից (Խոյ-Մարաղայի բարբառի վերաբերյալ տե՛ս ԽԲ, էջ 147), պարսկերենից փոխառությունները բավական շատ են Ալաշկերտի խոսվածքում (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 60), Արարատյան բարբառի «...որոշ ենթաբարբառներում ավելի շատ թուրքերեն բառեր են փոխառնվել, մյուսներում՝ պարսկերեն» (Ս.Բաղդասարյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 183), Ծատախի խոսվածքում բավականին շատ են քրդերենից և թուրքերենից կատարված փոխառությունները (տե՛ս Մ.Մուրադյան, Ծատախի բարբառը, էջ 81) ևն:

[777] Տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 90-91:

[778] ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 199:

[779] Այս շրջանի հայ-արաբական փոխհարաբերությունների մասին տե՛ս նաև ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 207-208:

[780] Տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 91: Առաջին հայացքից հակասական այս իրավիճակը լեզվաբանները բացատրում են նրանով, որ արաբերենից փոխառված բառերի մեծագույն մասը արաբների հետ մշտական շփման արդյունք և ժողովրդական բնույթի փոխառություններ են, որոնք, լայն գործառություն ունենալով ժողովրդախոսակցական լեզվում, սկզբնական շրջանում՝ գրաբարի շարունակվող տիրապետության պայմաններում, հայ մատենագրության մեջ չէին արտահայտվում, սակայն միջին գրական հայերենի ձևավորմամբ՝ միջին հայերենի խոսակցական տարբերակներում կենսունակությունը պահպանած արաբերեն փոխառությունները իրենց արտահայտությունն են գտնում նաև

Բայազետի և մերձավոր բարբառներում գործածվող միջինհայերենյան արաբական փոխառություններից են[781]՝ °լ °մ (Ա., Խ., Մ., Վ.), °ջէբ (Վ., Խ., Մ.), °մանաթ (Բ.), °յիբ (Ա., Խ., Վ., Մ.), դ°ֆտ°ր (Ա., Խ.), դ°վի (Բ.[782]), յեսիր (Ա., Վ., Խ.), թամամ (Ա., Վ., Մ., Խ.), լ °զ°թ (Բ.), խըլ ղ(Բ.), խաբար(Բ.), խ°յ ս°թ (Ա., Խ.), խարաբ (Բ.), խէր (Բ.), հ՛ալ (Բ.), խալ ալ (Բ.), հ՛°լ բ°թ (Ա., Վ., Դ., Խ.), հ՛ախ (Ա., Դ., Վ.), հ՛°յ վ°ն (Բ.), հ՛°ր°ք°թ (Ա., Խ., Դ.), հ՛°ր հֆ (Բ.), հ՛°ր հս° (Ա., Մ., Վ.), հ՛ուքմ (Դ., Վ.), կ°լ բ (Բ.), կ°ր հբ (Բ.), կ°յ հլ (Վ., Դ.), կ°յ հմ (Մ., Խ.), կ°ստու (Խ., Դ.), կուվաթ (Բ.), ջուղաբ (Բ.), մ°լ (Բ.), մ°յ լ ° (Ա., Դ., Խ., Վ.), միլ °թ (Ա., Խ., Դ., Վ.), մուլք (Ա., Վ., Մ., Խ.), ն°ղդ (Ա., Խ., Վ.), ն°ֆ°ս (Բ.), շ °ռ (Բ.), շ °ր բ°թ (Ա., Խ., Վ., Դ.), ջուլ (Բ.), սըլ ° (Բ.), տընազ (Բ.), ում բըր (Բ.), ֆըլ ան (Ա., Դ., Խ., Վ.), ֆէլ (Ա., Խ., Վ.) ևն: Մի շարք դեպքերում արաբական փոխառությունները կարող են լինել նաև միջնորդավորված, հատկապես երբ հնչյունաբանորեն բառն ավելի նման է մեկ այլ լեզվի համապատասխան միավորի[783]: Օրինակ, Բայազետի բարբառի հավէս ձևը ավելի մոտ է թուրքերենի (haves), քան արաբերենի (havas) ձևին, կ°ստու (դիտավորյալ) ձևին ավելի մոտ է թուրքերենի (kast), քան արաբերենի (qasd) ձևը, ջ°յէլ ձևը ավելի մոտ է պարսկերենի (jahel) ձևին, քան արաբերենի (jahil) ձևին, Բայազետի մէյդան ձևը ավելի մոտ է պարսկերենի և թուրքերենի (meydan) ձևին, քան արաբերենի (maydan) ձևին ևն: Մինչդեռ այլ դեպքերում, երբ արաբերենի ձևը ավելի մոտ է բարբառայինին, քան պարսկերենինը կամ թուրքերենինը (օր.՝ Բ. հուքմ – արաբ. hukm, պրսկ. hokm, թրք. hükm կամ hüküm. Բ. կ°յիլ – արաբ. gail, պրսկ. gael, Բ. ջուլ – արաբ. jul, թրք. čul, Բ. սըլ ° - արաբ. sala, թրք. sele, Բ. զիբիլ – արաբ. zibl, պրսկ. zebale, Բ. մ°նզիլ – արաբ. manzil, պրսկ. mānzel, թրք. menzil), վստահաբար կարելի է պնդել, որ գործ ունենք անմիջական փոխառությունների հետ: Կան դեպքեր էլ, երբ արաբերեն և պարսկերեն կամ թուրքերեն ձևերը նույնական են (ինչպես՝ °դ°թ,

---

գրավոր խոսքում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 208-215, Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 92): Այսպիսի մեկնաբանության իրավացիությունն են հավաստում «....այն բազմաթիվ արաբերեն ժողովրդական փոխառությունները, որոնք շարունակում են պահպանվել ժամանակակից տարբեր բարբառներում» (Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 92):

[781] Օրինակները բերում ենք Բայազետի բարբառով, իսկ փակագծերում նշում ենք մերձավոր այն բարբառները, որոնցում ևս արձանագրվել են այդ բառերի համապատասխան ձևերը:

[782] Այսինքն՝ առկա է բոլոր բարբառներում:

[783] Այս հատվածում դիտարկումներ կատարում և այլագիր օրինակներ բերում ենք ըստ ՄՀԲ-ի:

դ°ֆտ°ր, կ°լ°թ, կ°լբ, մ°լ, շ°ոբ°թ ևն)[784], ուստի դժվար է պնդել՝ փոխառությունը անմիջակա՞ն է, թե միջնորդավորված:

Բայազետի բարբառի արաբական փոխառություններում նկատելի են հնչյունական մի շարք իրողություններ, որոնցից էական են և բարբառի հնչյունական համակարգում տեղաշարժեր են առաջ բերել հետևյալները՝ ա) մեծ տարածում ունի °ձայնավորը, բ) արաբերենի ձայնեղներին բոլոր դիրքերում համապատասխանում են ձայնեղ հպականներ և հպաշփականներ (դ°վի, խաբար, խարաբ, շ°ոբ°թ)[785], գ) արաբերենի *կղաֆ* բաղաձայնի դիմաց բարբառիս բառասկզբում հանդես է գալիս *կ՛* կամ *կ* (կ՛/կ°ոիբ, կ՛/կուրբան), դ) *ֆ* հնչյունը կարող է դրսևորվել բառի բոլոր դիրքերում (ֆըլան, դ°ֆտ°ր, հ°ոիֆ)[786], ե) արաբերենի բառասկզբի *հ*-ի դիմաց որպես կանոն բարբառս ունի *հ՛* (հ՛ուքմ, հ՛ախ, հ՛ավէս), իսկ բառամիջի *հ*-ի դիմաց՝ *յ* (ջ°յէլ, մ°յլ°)[787]:

Արաբերեն որոշ փոխառյալ բառեր իրենց հայերեն[788] համանիշների հետկազմում են հարադրական բարդություններ, օրինակ՝ *°լ°մ - °շխար, կըռիվ - դ°վի, հ°յվ°ն - °նասուն, բ°լ°ատիչ, ուժ ու կուվաթ*[789], անգամ արաբերեն երկու հոմանիշներով կարող է նման հարադրություն կազմվել՝ *խաբար - ջուղաբ,* նաև արաբերեն և թուրքերեն բաղադրիչներով՝ *տ°վար - մ°լ*: Շատ արաբերեն բառեր կազմել են բայեր ու բաղադրություններ, ինչպես՝ *°ժբ°տես* (°ջէբ), *ժըղլ ել* (ժուղլ), *խաբարբըգիկ, խաբըրբ՛եր, խէրագ՛ըլ օխ* (խէր), *խարամութուն* (խարամ), *հ°ոիֆցընել* (հ°ոիֆ), *կ°լբութուն* (կ°լբ), *մ°յլ° - մ°յլ°, մույն°թ գ՛ալ, յեսիր գ՛ըրվել, ն°ֆ°սը կըդրել, գ՛օխտուկ - °լէնի* ևն:

---

[784] Այլ լեզուներով օրինակները չենք բերում՝ նույնական լինելու պատճառով:
[785] Հիմնականում այդպես է և համեմատվող բոլոր բարբառներում:
[786] Այդպես է և մերձավոր բոլոր բարբառներում:
[787] Դիտարկելով *հ*-ով սկսվող արաբերեն փոխառությունները Վանի բարբառում՝ Հ.Աճառյանը փաստում է, որ այդպիսի 32 բառերից վեցում *հ*-ի դիմաց առկա է *խ* (*խ°ր°մ*, խասրաթ, խալալ, խէք՝իմ, խինա, խէսաբ), և եզրակացնում, որ Վանի բարբառի *հ>խ* ձայնափոխությունը իրոք հին է և տեղի է ունեցել արաբների արշավանքից հետո. այդ շրջանին են վերաբերում *հ>խ* անցում ունեցող բառերը, մինչդեռ դրանից հետո՝ թուրքերի տիրապետության շրջանում են կատարվել այն բոլոր փոխառությունները, որոնք պահում են նախաձայն *հ*-ն (տե՛ս ՔՎԲ, էջ 66-67): Հ ~ խ փոխհարաբերության մասին ունենալով այլ տեսակետ՝ մենք էլ համարում ենք, որ Բայազետի բարբառում *հ*-ի դիմաց *խ*ունեցող արաբերեն բառերը (խալալ, խարամ, խին°) ներկայացնում են վաղ շրջանի փոխառություններ, երբ բարբառում դեռևս *հ*-ն անսովոր էր, իսկ մյուս փոխառությունները, որոնք ունեն *հ*, վերաբերում են հետագա շրջանին, երբ *հ*-ի գործածությունը տարածքում արդեն իրողություն էր:
[788] Նկատի ունենք ոչ միայն բնիկ բառերը:
[789] Հետաքրքրական է, որ համանման երևույթ նկատվել է միջինհայերենյան գեղարվեստական գրականության մեջ. «Օտար բառերը բանաստեղծական խոսքի մեջ

Արաբերեն որոշ փոխառություններ բարբառում ենթարկվել են իմաստափոխության: Այսպես, միջին հայերենում *աճայիպ* բառի համար վկայված են «զարմանալի, ապշեցուցիչ» իմաստները[790], իսկ բարբառում °*ջէբ* բառն ունի բացասական առումով «տարօրինակ» իմաստը: Այդտեղից էլ °*ժբ°տես* բառն ունի «խիստ տգեղ» իմաստը: Միջին հայերենում, ապա նաև հայերեն այլ բարբառներում *խալխ* բառն ունի «կողմնակի մարդիկ, ամբոխ, ժողովուրդ» իմաստները, Բայազետի բարբառի *խալ ղ* համապատասխան ձևը՝ «օտար» իմաստը: Հետաքրքիր իմաստափոխության է ենթարկվել *միրաթ* «ժառանգություն» բառը: Այս բառի մեջ բարբառումս զարգացել է «տիրոջից զրկված, անտեր մնացած» իմաստը՝դժգոհության, ինքնաճաղկման երանգով: Այդ հիմքի վրա ձևավորվել է *միրաթ °նտէր*՝ համանիշ բաղադրիչներով հարադրությունը, ինչպես՝ *Միրաթ °նտէրն էս հ՞մալ ա ճըմըռտե*: *Միրաթ* բառը «անտեր» իմաստով գործածվում է նաև առանձին, ինչպես՝ *Էս միրաթը դ՛ի կըրաղ*: Արաբների հետվաղեմի շփումները իրենց արտահայտությունն են ստացել °*ր°բի* «անպետք, անիմաստ» և *հ՛արափացի* «վնասատու, անփույթ» բառերում, որոնցում, ի դեպ, «արաբ» բնիմաստը այժմ բացարձակապես չի գիտակցվում:

Ի տարբերություն արաբերենի՝ հայերենը պարսկերենի հետ մշտական շփումներ ունեցել է հնագույն ժամանակներից ի վեր, և այդ շփումը միշտ ուղեկցվել է բազմաթիվ նոր փոխառություններով[791]: Ուսումնասիրողները նշում են, որ միջինհայերենյան շրջանում պարսկերենից փոխառված բառերը ևս մեծ մասամբ հայոց լեզվին անցել են բանավոր կերպով, մանավանդ որ երկու ժողովուրդները գտնվել են մշտական շփման մեջ[792]: Բայազետի բարբառում նոր պարսկերենից փոխառյալ բառերը ևս զգալի քանակություն են կազմում, մի բան, որ ըստ երևույթին պայմանավորված է Պարսկաստանի հետ Բայազետի

հաճախ հանդես են գալիս հայերեն ավանդական բառերի կողքին որպես նրանց հոմանիշներ կամ նույնանիշներ» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 223):

[790] Տե՛ս ՄՀԲ, էջ 35:

[791] Տե՛ս նաև Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 114:

[792] Տե՛ս նշվ. աշխ., էջ 116, ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 225: Հ.Աճառյանը նշել է, որ ԺԱ-ԺԲ դարերից հետո պարսկերեն բառերը չեն կարող ուղղակի փոխառված լինել պարսկերենից, «....որովհետև այդ ժամանակից արդեն պարսկերենը լռել էր Հայաստանի և Ատրպատականի սահմաններում» (ՀԼՊ, մաս 1, Ե., 2013, էջ 332):

սահմանակցությամբ[793]: Այս փոխառությունները վերաբերում են կյանքի ամենատարբեր ոլորտների և ներկայացնում են իմաստային բազում խմբեր՝ բուսանուններ, կենդանիների, սննդի անուններ, մարմնին, տանը, զբաղմունքին ու գործիքներին, հագուստին, հարաբերություններին վերաբերող բառեր ևն: Օր., *ք°ր°վուզ, քիշմիշ, բ՛ուվ, շիշ°կ, մ°յա, ք°ֆկ, թուռշի, շիր°, շոռվա, քուֆտ°, շոռ, զըլֆ, գ°ռդ°ն, փաչա, լուլ°, քոս°, կութի, մ°շալ, ջըվալ, ս°ռայ, քիս°, փ°ռդ°, քունջ, ք°թ°ն, թ°մուզ, ռըժբ°ր, լըկամ, ժընջիլ, շ°յի, ապեճ, փեշ, լ°լ°-կան*[794]*- ծ°ռական, փեղամ, յար, մըհանա, յադ, գում°ն, շ°բաշ, զիյան, մ°ս°-լ°, նիգ°ր, մըխտ°ռ, զ°յլ°, գ°զ, դ°նգ, թիք°, ճ°նգ, չ°ռեք, °ռան, քոչ, թ°զ°, յա, ջան, չ°շկ°, լախ, հեչ* ևն: Այս բառերից շատերը լայնորեն տարածված են նաև շրջակաբարբառներում[795]:

Անդրադառնալով հայերենի բարբառներում և, մասնավորապես, Ուրմիայի (Խոյի) բարբառում պարսկերեն փոխառությունների խնդրին՝ Մ.Ասատրյանը գրում է.որ գրեթե անհնար է պարզել, թե բարբառում եղած պարսկերեն բառերից որոնք են անմիջական, իսկ որոնք՝ միջնորդական փոխառություններ, որովհետև դրանց մեծ մասը նույն հնչյունական կազմով գոյություն ունի թուրքերենում[796]: Նույն բանը կարելի է ասել նաև Բայազետի բարբառի պարսկերեն շատ փոխառությունների վերաբերյալ (օր.՝ *մըհանա* - պրսկ. և թրք. behane, *յադ* - պրսկ. և թրք. yad, *սինի* - պրսկ. և թրք. sini, *բախճա*- պրսկ. և թրք. bağče ևն), սակայն այլ դեպքերում բառի հնչյունական կազմը վկայում է նրա՝ պարսկերենից անմիջական փոխառություն լինելը, ինչպես՝ *ջիգ°ր* (պրսկ. jegār, թրք. ciger), *մէյմուն* (պրսկ. meymūn, թրք. maymun), *շիշ°կ* (պրսկ. šišāk, թրք. šišek), *չ°նգ°լ* (պրսկ. čāngal, թրք. čengel), *թ°ր°զու* (պրսկ. tārazu, թրք. terazi), *չ°ռչի* (պրսկ. čarči, թրք. čerči), *յախնի* (պրսկ. yāxni, թրք. yahni) ևն: Քիչ չեն նաև հակառակ դեպքերը, երբ պարսկերեն բառի հնչյունական կազմությունը հուշում է միջնորդավորված փոխառության մասին,

[793] Այս առնչությամբ հետաքրքրական է Հ.Աճառյանի մի դիտարկումը: Նա նշում է, որ արդի բարբառներից Վանը և Նոր-Բայազետը գիտեն իրանյանից փոխառված *ջամուկ* բառը, «Բայց այժմ պարսկերենում չկա *ջամուկ* բառի ժառանգը, ուստի նա գտնվել է ԺԱ դարից ավելի առաջ և պարսկերենից անցել է հայոց արևելյան բարբառին, մինչ մյուսները գործ էին ածում երկուորի» (ՀԼՊ, մաս 2, Ե., 2013, էջ 137):

[794] Այս բառի արմատն է՝ *լ°լ°*, որ նշանակում է *դայակ*:

[795] Տե՛ս Արարատյան, Վանի, Մշո, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներին և դրանց առանձին խոսվածքներին նվիրված աշխատություններում բերված բառացանկերը, ինչպես նաև՝ ՀԼԲԲ-ն:

ինչպես՝ *յօնջա* (պրսկ. yunje, թրք. yonca), *դօստ* (պրսկ. dust, թրք. dost), *դուշմ°ն* (պրսկ. došmān, թրք. dūšman), *փաչա* (պրսկ. pače, թրք. pača), ժընջիլ (պրսկ. zānjir, թրք. zenjil) ևն[797]:

Պարսկերեն փոխառություններում նկատվում են հնչյունական նույն իրողությունները, ինչ արաբականներում. °ձայնավորի տարածվածություն, բոլոր դիրքերում ձայնեղ հպականների ու հպաշփականների համապատասխանություն, *h*-ի դիմաց բառասկզբում *հ՛*, իսկ բառամիջում՝ *յ*-ի *և ֆ*-ի գործածականություն ևն:

Պարսկերեն փոխառություններով բարբառումս ձևավորվել են բազմաթիվ բաղադրություններ և՛ ածանցմամբ, և՛ բայակազմությամբ, և՛ բառաբարդմամբ: Օր., *դուշմընն°կ, մէյմունութուն, °նջիգ°ր, ջիգրավորել, յադընալ, °զըզվորել, դ°ռդօտել, գ°ռդ°նը խրխմել, քիսից էթալ, խրշտել-բ՛ըշտել, ջիգրէծուռ, զ°յլ °տ°րիկ, գէժ-գէժ, յա...յա, յաթէ չէ, համ...համ, համ էլ*, նաև՝ *կ°պիկ - մէյմուն, ջան ու ջիգ°ր, խալի - խալիչա, շօռ - բ՛օրակ, կօպէկ - շ°յի, նըխջուն - նիգ°ր, կըխտոտ - մըխտ°ռ, թուր ու թըվանք* ևն:

Պարսկերեն փոխառյալ որոշ բառեր նույնպես ենթարկվել են իմաստափոխության: Օրինակ՝ *լուլ°* «խողովակ» բառը բարբառումս ձեռք է բերել *ոլոք* իմաստը, *թ°ր°զու* «կշեռք» բառը՝ *հավասարակշիռ* իմաստը, *թիք°* «մաս, կտոր, պատառ» բառը՝ *ուտելիքի պատառ* իմաստը, *կութի* (ğuti) «տուփ, փոքրիկ արկղ» բառը՝ *սնդուկ* իմաստը, *ս°րայ* «տուն, շինություն» բառը՝ *խրճիթ, մարագ* իմաստը, շ°բաշ «կեցցե՛, հիանալի՛» բառը՝ *պարողի ձեռքի մեջ դրվող թղթադրամ* իմաստը ևն: Թերևս Պարսկաստանի հյուսիսում բնակվող ցեղերի հետ հաղորդակցման դժվարությունները Բայազետի բարբառում իրենց հետքը թողել են այդ ցեղերի անուններից առաջացած *թաթ*[798], *թաթ ու գօրան, գօրանի*[799] ածականներով (երեքն էլ նշանակում են *անհասկացող*):

---

[796] Տե՛ս ԽԲ, էջ 147:

[797] Դիադինի բարբառին նվիրված աշխատության մեջ միտք է հայտնվել, որ պարսկերենից փոխառյալ մի շարք բառեր «....գրական հայերենում և մյուս բարբառներում հանդես են գալիս հնչյունափոխված, իսկ Դիադինի բարբառում այնպես, ինչպես փոխառու պարսկերեն լեզվում» (ԴԲ, էջ 115):

[798] Տե՛ս նաև ՀԳԲ, էջ 341:

[799] Այս ցեղի մասին տե՛ս Վ.Ոսկանյան, Գորան ցեղամիավորումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVI, Ե., 1996, էջ 186-192:

Զգալի քանակությամբ փոխառություններ են կատարվել նաև թուրքական լեզուներից: Ինչպես հայտնի է, հայության շփումները թուրքական ցեղերի հետ սկսվում են 11-րդ դարից: Նկատվել է, որ թուրքական լեզուների «բառերն ամբողջությամբ ժողովրդական փոխառություններ են և գործածական են եղել խոսակցական լեզվում, որտեղից ուղղակիորեն ներթափանցել են միջին գրական հայերենի տարբերակների մեջ»[800]: Հասկանալի է, որ միջինհայերենյան աղբյուրներում գրառված և բարբառային խոսքում գործառող թուրքերեն փոխառությունները հայոց լեզու են ներթափանցել 11-16-րդ դարերում: Բայազետի բարբառի՝ այդ ժամանակներին վերաբերող փոխառություններից են՝ *յուրդ, գօլ, չօլ, ֆըռթօնա, բիբար, չամ, չօփ, քօք, յախտ, յարա, մ°յասուլ, յօրղան, թավա, կ°փաղ, չ°դըր, օթաղ, կ°լիբ, հ՛ուստա, չ°գուչ, բիզ, յախա, գօզլըկ, փէշտըմալ, բօրանի, փախլ ավա, փարա, °մ°կ, բ°րիշ, զուլում, գօզ°լ, մուշտուլուղ, բէյ, կ°ր°, մօռ* (մանուշակագույն), *տ°ղլի, տ°յաղ, փ°սա, բեղ, բօղազ, դօշ, բօյ, յան, իզ, պուճաղ, բօլ, ս°ղ, չըփլ աղ, սուս, գօր°, կըդ°, ճիմ, ճոթ, վայվադա* ևն: Որպես կանոն, այս փոխառությունները գործառում են նաև շրջակաբարբառներում[801]:

Թուրքերեն փոխառություններում ևս գործածական է °ձայնավորը, առկաէ հպականների ու հպաշփականների՝ ըստձայնի և աղմուկի համապատասխանություն (բէգ – beg, բիզ – biz, չ°դըր – čadir, °մ°կ – emek, դօշ - döš), սակայն հաճախել՝ անհամապատասխանություն (յուռդ – yurt, կ°լիբ – kalip, չ°գուչ – čekič, փախլ ավա – baklava, բէյ – pey, տ°ղլի – dalga, ճիմ - čim): Թուրքերենի *ğ* հնչյունի դիմաց բառասկզբում ունենք *կ*, բառամիջում ու բառավերջում՝ *ղ* (ğapağ - կ°փաղ, boğa – բուղա, բօղազ - boğaz), g-ի և k-ի դիմաց բառասկզբում համապատասխանաբար առկաեն *գ* (göl – գօլ, güzel - գօզ°լ) և *կ* (karavaš - կ°ր°վաշ, kazan - կ°զան), իսկ մյուս դիրքերում՝ *ղ* կամ *խ*(kulluk - կուլուղ, yorgan - յօրղան, otak - օթաղ, yaka - յախա, dalga - տ°ղլի, baklava - փախլ ավա): Թուրքերենի ö, ü քմայնացած հնչյունների դիմաց Բայազետի բարբառում գործառում են պարզ ձայնավորներ (göl - գօլ, döš - դօշ, güzel - գօզ°լ, gözlük - գօզլըկ), բառասկզբում *ա, օ, ու* ձայնավորներից առաջ տարածված է *յ*-ի գոր-

[800] Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 131: Տե՛ս նաև՝ Հ.Աճառյան, Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ, Մ.-Վ., 1902, էջ 4:

ծածությունը (յախտ, յան, յարա, յօրղան, յուրդ): Որոշ դեպքերում բառի հնչյունական կազմությունը վկայում է փոխառության համեմատաբար վաղ կատարված լինելու մասին: Օրինակ, քանի որ թուրքերեն փոխառությունների բառասկզբում ձայնեղները շնչեղ չեն, ապա *բ՛ իճ* բառում շնչեղ ձայնեղի դրսևորումը անշուշտ փոխառության հնության մասին է հուշում: Այդպես նաև թուրքերեն փոխառություններում (նաև՝ արաբերեն և պարսկերեն) որպես կանոն երկբարբառային *ո* կամ *ե* չի դրսևորվում, մինչդեռ *ճոթ* (ծայր, եզր) բառնունի *ո*:

Թուրքերեն փոխառություններով ևս Բայազետի բարբառում ձևավորվել են շատնոր բառեր, ինչպես՝ *յուռդաբ՛ըլուկ, քօքխան, ջանս°ղութուն, բօյէբօյ, բիզ - բիզ, փ°սոտ, յանակի, փող ու փարա, քօք ու բ՛ուս, յօրղան-դօշ°կ, քունջ ու պուճաղ, բ°րիշել, բեղ ու մուրուս, իզ ու թօզ, գօլել, ս°ղնալ, յախաթախտըփել, մուշտուլ ուղտալ* ևն[802]:

Թուրքերեն մի շարք փոխառություններ բարբառումս ենթարկվել են իմաստափոխության: Այսպես, *չավուշ* «ժանդարմ, ոստիկան» բառը բարբառումս ձեռք է բերել *չար, կատաղի* իմաստները, *փ°ս* «ժանգ» բառը՝ *շուրթերին նստած փառ* իմաստը, *գօր°* «համաձայն, համեմատ» բառը՝ *չափ* իմաստը ևն: Այլ դեպքերում տեղի է ունեցել իմաստի ընդլայնում: Այսպես, *զուլում* «մեծ աղետ» բառը ձեռք է բերել նաև *շատ, խիստ* իմաստները, *գօգ°լ* բառը՝ նաև *հիանալի* իմաստը, *բօլ* «լի, առատ» բառը՝ նաև *բավական* իմաստը ևն: Բայազետի բարբառում *դինջ էրմ°նի* «հանգիստ հայ» փոխառությունը իբրև նախատական արտահայտություն գործածվում է ավելորդ հանգստություն ցուցաբերողի նկատմամբ, և դրա մեջ «հայ» հասկացությունը բացարձակապես չի գիտակցվում:

Բարբառներում արաբապարսկաթուրքական փոխառությունները չեն սահմանափակվում միջինհայերենյան շրջանի գրավոր աղբյուրներում եղածների զուգահեռներով: Անշուշտ, բանավոր խոսքում նման փոխառությունների քանակն ավելի մեծ պիտի լինի, բացի այդ՝ այն համալրվել է նաև աշխարհաբարյան շրջանում: Սրանցից բացի՝ միջինհայերենյան շրջանում փոխառություններ են կատարվել նաև

[801] Տե՛ս համապատասխան աշխատությունները:

հունարենից, լատիներենից, ֆրանսերենից, վրացերենից ու ասորերենից, այլ լեզուներից: Բայազետի բարբառում գործառում են այդ լեզուներից ներթափանցած (հնարավոր է՝ մեկ այլ լեզվի միջոցով) հատուկենտ բառեր: Այսպես, հունարենից են փոխառնված *սինօռ, ֆ°ն°ր* բառերը, ֆրանսերենից՝ *գալ օփ* բառը, վրացերենից՝ *ճ°ղ* բառը, ասորերենից՝ *գուռ, խավիծ, մ°խատ, շուշաֆ* բառերը: Լեհերենից թուրքերենի միջոցով փոխառված *վայվադա* (լեհ. wojewoda, թրք. voyvoda) «պաշտոնյա, իշխան, հարկահավաք» բառը նաև իմաստափոխվել է՝ ձեռք բերելով *չարակամ, վնասատու* իմաստները: Պետք է կարծել, որ միջինհայերենյան շրջանին են վերաբերում նաև քրդերենից կատարված փոխառությունները, ինչպես *բ°լ°ք* (խաստուտիկ), *բըռ* (ոչխարի խումբ), *դըվաժո* (կամակատար. Ալաշկերտի խոսվածքում՝ հովվի օգնական), *խոզի/խոզնի* (երանի), *ճեռոք* (դժվարահաճություն. Մշո բարբառը պահպանել է այս բառի քրդերեն իմաստը՝ *հեքիաթ*), *լ°մուկ* (տղա. գործառում է *քըռդի լ°մուկ* «թուխ, սարեցու կերպարանքով տղա երեխա» բնութագրող կապակցության մեջ), *ճ°վիկ* (բանջար, որի զոխերով թթու են դնում), *չոռ* (բույսերի հիվանդություն), *հ՛ավար* (օգնության կանչ) ևն:

Աշխարհաբարյան բառաշերտ

Բարբառային բառապաշարում էական կշիռ ունի նաև աշխարհաբարյան շերտը: Շատ դեպքերում դժվար է որոշել միջինհայերենյան և աշխարհաբարյան շերտերի սահմանը, և հաճախ աշխարհաբարյան համարված ձևերը բարբառում իրենց գործառությունը կարող են սկսած լինել նախորդ փուլերում: Այնպես որ, բարբառային շատ բառերի՝ գրաբարյան կամ միջինհայերենյան բնագրերում վկայված չլինելը ամենևին էլ չի նշանակում դրանց պարտադիր աշխարհաբարյան ծագում: Նման բառերը բարբառի բառապաշարի աշխարհաբարյան շերտին վերագրելը, այսպիսով, շատ դեպքերում պայմանական բնույթ ունի և պայմանավորված է դրանց՝ ներկափուլում ակտիվ գործածականությամբ և նախորդ շերտերին վերաբերությունը ցույց տալու հիմքերի բացակայությամբ: Այլ դեպքերում բառային միավորների՝ աշխարհաբարյան շերտին պատ-

[802] Նշենք, որ ըստ Վ.Խաչատրյանի՝ թուրքերենից, արաբերենից և պարսկերենից փոխառյալ բառերը Դիադինի բարբառում հարմարվել են հայերենի բառակազմության ներքին օրենքներին (տե՛ս ԴԲ, էջ 114):

կանելությունն ակնհայտ է, երբ նկատի ենք ունենում նրանց վերաբերությունը լեզվական ու արտալեզվական նոր իրողություններին և երբ գործ ունենք գրական հայերենից ու այլ լեզուներից կատարված փոխառությունների հետ:

Այսպիսով, Բայազետի բարբառի աշխարհաբարյան բառաշերտի մի մասը կկազմեն բառային այն միավորները, որոնք ներկայացնում են նախորդ փուլերին բնորոշ ձևերի զուգահեռ կամ համապատասխան այլ ձևեր: Զուգահեռ ձևեր համարում ենք այնպիսիք, որոնք ունեն բաղադրիչների, նաև լեզվամտածողության ընդհանրություններ: Օր., գրաբ. *յակն գալ* «աչքին դուր գալ» - Բ. *հ°շկին գ՛ալ*, գրաբ. *ակն դնել*, միջ. *ածել զաչք* «ձգտել տիրանալ» - Բ. *հ°շկ դ՛ընել*, գրաբ. *յաչաց ելանել*, միջ. *աչաց ելնել* «աչքից ընկնել» - Բ. *հ՛°շկէ հ՛ելնել*, գրաբ. *ամենայն ոք*, միջ. *ամէն մէկ* «ամեն մեկը» - Բ. *°մէք մ°ռթ*, գրաբ. *առն տալ*, միջ. *ամուսնոյ տալ* «աղջկան ամուսնացնել» - Բ. *մ°ռթի տալ*, գրաբ. *անայր* «ամուսին չունեցող կամ ամուսնուց բաժանված» - Բ. *°նմ°ռթ*, գրաբ. *արամբի* «ամուսին ունեցող կին» - Բ. *մ°ռթով կընիկ*, գրաբ. կալ աչաց «կուրանալ» - Բ. *հ°շկերը բ՛ընվել*, գրաբ. *գալ ի կարծիս* «համաձայնել» - Բ. *գ՛ալ խօսկին*, գրաբ. *գետնաքարշ* «գետնի վրա քարշ եկող» - Բ. *քընռքաշ*, գրաբ. *ընդդիմանալ*, միջ. *դէմ կենալ* «հակառակվել» - Բ. *դ՛էմ կ°յնել*, գրաբ. *ինքնագլուխ* «որևէ մեկին չենթարկվելով» - Բ. *հ՛իր գ՛ըլխու*, գրաբ. *լինել ընդ ումեք* «մեկի հետ կենակցել» - Բ. *խէտը հ՛ելնել*, գրաբ. *ուշադրաւոր լինել* «ուշակորույս լինել» - Բ. *ուշկը էթալ*[803], գրաբ. *տանտիկին* «տանտիրոջ կին» - Բ. *տ°ն կընիկ*, գրաբ. *եղբօրորդի*, միջ. *աղբօրորդի* «եղբոր որդի» - Բ. *°խպօր տղղա*, միջ. *աչաց լուս* «շատսիրելի» - Բ. *հ՛°շկիլուս*[804], միջ. *աչօք անել* «աչքով անել» - Բ. *հ՛°շկով°նել*, միջ. *ատամնաթափ* «ատամները թափված» - Բ. *°տամ թափուկ*, գրաբ. *կօշկակար*, միջ. *կօշկար* «կոշիկ կարող արհեստավոր» - Բ. *սօլ կ°ր* ևն: Այլ դեպքերում՝ լեզվի զարգացման նախորդ փուլերի ձևերին բարբառում համապատասխանում են բառային տարբեր միավորներ, ինչպես՝ գրաբ. *աղքատութիւն* «աղքատվիճակ» - Բ. *չընկալութուն*, գրաբ. *շտապ* «ճեպով» - Բ. *շուշուտ*, գրաբ. *արագ* «շուտափույթ» - Բ. *թափ-թափ*, *վընռազ*, գրաբ. *ընդարձակ* «լայն, մեծատարած» - Բ. *լէն ու բօլ*, գրաբ. *խոստովանել*

[803] Այս հարադրությունը նշանակում է նաև՝ *շատսիրել*, *բուռն ծիծաղել*:

«մեղքն ընդունել» - Բ. *մուղուր գալ*, գրաբ. *խրել* «մտցնել, խոթել» - Բ. *ճըխտել, կօխել*, գրաբ. *մեծաբանել* «պոռոտախոսել» - *ջ՛ոչ-ջ՛ոչ խոսալ*, գրաբ. *սատարել* «օգնական լինել» - Բ. *կուղ տալ*, գրաբ. *այսուհետեւ* «սրանից հետո» – Բ. *ըստօվդէն*, գրաբ. *հոգ առնել* «խնամել, հոգ տանել» - Բ. *տէր կ°յնել, տիրել*, գրաբ. *նկրտել* «ջանալ, ձգտել» - Բ. *տըլ ըբալ*, գրաբ. *նայել* «մտիկ անել» - Բ. *հ՛իշկալ*, գրաբ. *շեղ* «խոտոր» - Բ. *ծուռ*, գրաբ. *վաղուց*, միյ. *վաղեց* «վաղ ժամանակներից» - Բ. *շուտուց*, գրաբ. *բուժել* «ապաքինել» - Բ. *դ՛եղուդ՛ուր °նել*, գրաբ. *կարօտանալ*, միյ. *կարօտնալ* «որևէ բանի կարիք զգալ» - Բ. *դ՛էմուդ՛առց հ՛ընգնել*, միյ. *հոգս* «մտահոգություն, մտատանջություն» - Բ. *գ՛ըլ խացավանք* ևն:

Լեզվական նոր, աշխարհաբարյան իրողություններ պարունակող բառաձևերից են հետևյալները՝ *դ՛էմը բէրել, դ՛ուռը տըփել, խել քը կըդրել, խօսկը կըդրել, հ՛անգաճը կըդրել, հ՛աշկը դ՛ուս, ձ՛եռը պինդ*[805], *գ՛ըլ խի գ՛ալուկ, գ՛ըլ խին ձուն գալ, գ՛ըլ խից դ՛ուս, իշի քուռակ, բ՛էրնի գ՛ոլը գիդալ*[806], *հ՛իդվից խօսալ, խել քից մըտկից դ՛ուս*[807] ևն: Նոր ժամանակներին վերաբերող իրողություններ են ներկայացնում և հետևաբար աշխարհաբարյան կազմություններ են հետևյալ բառաձևերը. *գ՛ալ բ՛արի, էթալ բ՛արի, գ՛եղավարի, քախկըվորի, գ՛էրի գ՛ըրվել, հ՛ակա խանել, ջ՛ոչավոր, բ՛անցըրամըռութ, գըժանոց, բ՛ացիկ, ջ՛առթիկ. խօռթիկ, ժեխթափիկ, ճ°նջխատոցըրիկ, °մանլըվիկ, բ՛ախքէրիկ, գուռբ՛ախ, ջ՛ըրտըրել, ծըլ ախան °նել, բ՛ացօվի, փագօվի, ծ°լօվի, բ՛էրնի ծ°մոն դ՛առնալ, թըխտըբ՛աց, իրեքնոց, ծ°խգալ, գ՛ըլ խել* (գլխով հարվածել գնդակին), *կըրընգել* (կրունկով հարվածել գնդակին), *կըռնել* (ոտքով ուժեղ հարվածել գնդակին), *հ՛ունքերը քաշել, քըսվել, հ՛°շկերը քըսել, պըռտըվել, էրկու հ՛արգանէ, տընակոլ* ևն:

Ռուսերեն փոխառություններ

---

[804] Ունի նաև *տեսողություն* իմաստը:

[805] Ինչպես նկատվել է, «Միջին հայերենում *ն* որոշիչ հոդը չունի իր դիրքային տարբերակը՝ *ը*, որ ավելի նոր ժամանակների ծնունդ է և զարգացել է միայն աշխարհաբարում՝ հնչյունական որոշ օրենքների գործողության հետևանքով» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 79):

[806] Միջին հայերենում *գլուխ* և *էշ* բառերը ենթարկվում էին Ո կամ Ու հոլովման (Բայազետի բարբառում պահպանվել է *գ՛ըլ խու* ձևը, նաև *իշվանք* հոգնակին, որ ձևավորվել է չպահպանված *իշու* սեռականից՝ իշուանք > իշվանք), *բ՛երան* բառը՝ Ո հոլովման (տե՛ս նաև ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 18-23):

[807] Սրանք պարունակում են բացառական հոլովի աշխարհաբարյան ձևեր:

Աշխարհաբարյան շրջանում, ճիշտ է, Բայազետի բարբառը շարունակել է արևելյան լեզուներից բառեր վերցնել, սակայն մեծ քանակի փոխառություններ են կատարվել հատկապես ռուսերենից[808] և սրա միջոցով՝ եվրոպական լեզուներից: Բայազետի բարբառում ռուսերենից կատարված փոխառությունների քանակը, ըստ մեր հաշվումների, կազմում է մոտ 1300 բառային միավոր[809]: Բարբառով գրի առնված ամենավաղ նյութերում, որոնք վերաբերում են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին[810], ռուսերեն փոխառյալ բառեր չեն հանդիպում: Կարելի է ենթադրել, որ այդպիսիք Բայազետի բարբառում մեծ քանակով հայտնի եկել նոր հայրենիքում (Սևանալճի ափին) և առավելաբար խորհրդային շրջանում[811]: Ռուսերենից կատարված փոխառությունները վերաբերում են բազմազան ոլորտների[812], ինչպես՝ *բնակարան, տուն և կահույք* (պ°տալօք, կըրիշ°, կ°ռաֆադ), *ուտելիք և խմելիք, խոհարարություն և ամանեղեն* (պիսօք, կ°մպօտ, տ°լերկա, կ°ստուրկա), *գործիքներ և նյութեր* (°թֆյօռկա, ն°սիլկա, կըլե, զամասկա), *հագուստև զարդեր, հարդարանք* (յուպկա, ս°ռուշկա, բասանօշկա, կ°լիցօ, մ°նիկուռ), *տեխնիկա, սարքեր, ավտոմատներ* (տելեվիզըր, գըռուզավիկ, ըսկօռօստ), *ռազմական գործ* (ս°լդաթ,

[808] Տե՛ս նաև Վ.Կատվալյան, Ռուսերեն փոխառություններ Բայազետի բարբառում, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2015, էջ 81-88:

[809] Կարծում ենք՝ այդպիսիք շատ ավելի մեծ քանակություն են կազմում, որովհետև մեր ուսումնասիրությունը չի ընդգրկում և չէր էլ կարող ընդգրկել բարբառային ողջ խոսքը իր բոլոր դրսևորումներով: Ի դեպ, 20-րդ դարի սկզբներին Հ.Աճառյանը հայերեն բարբառներում ռուսերենից փոխառյալ բառերի քանակը համարում է 600 (ՀԳԲ, էջ 3): Ռ.Մարկոսյանը «Արարատյան բարբառ» աշխատանքում բերում է ռուսերենից այդ բարբառ անցած մոտ 300 բառերի ցանկ (տե՛ս ԱԲ, էջ 380-384): Ս.Բաղդասարյան-Թափալցյանը նշել է, որ Արարատյան բարբառի ճյուղավորումներում կան արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, նաև ռուսերեն բառեր, և վերջիններս փոքր թիվ են կազմում (տե՛ս Ս.Բաղդասարյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 183):

[810] Տե՛ս Տ.Նավասարդեանց, Հայ ժողովրդական հէքիաթներ, 5-րդ գիրք, Տփխիս, 1889, էջ 79-80. «Ազգագրական հանդես», XIII գիրք, 1906, թիվ 1, էջ 37-82. «Ազգագրական հանդես», XIV գիրք, 1906, թիվ 2, էջ 69-85. «Ազգագրական հանդես», XIX գիրք, 1910, թիվ 1, էջ 115-150:

[811] Խոսելով Ուրմիայի (Խոյի) բարբառում ռուսերենից կատարված փոխառությունների մասին՝ Մ.Ասատրյանը նշում է, որ նախքան խորհրդային կարգերի հաստատումը բարբառը մեկ դարից էլ քիչ ժամանակահատվածում ռուսերենից կատարել է որոշ փոխառություններ բանավոր ճանապարհով (ինչպես՝ ակուշկա, ըշկափ, ըստօլ, կանփէտ, պալտոն ևն), իսկ խորհրդային տարիներին բարբառին ռուսերեն բառեր են անցել գրական հայերենի միջնորդությամբ (տե՛ս ԽԲ, էջ 147-148):

[812] Պետք է նշել, որ այդ փոխառությունները գրեթե ընդհանուր են արևելյան բարբառների և խոսակցական հայերենի համար: Բայազետի բարբառը կրող հանրությունը երբեք ռուս ժողովրդի հետ անմիջական լեզվական շփումներ չի ունեցել, եթե նկատի չունենանք 19-րդ դարում ռուսական զորքի առկայությունը Բայազետում և Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնողներին:

պիստալէթ, չասավօ, պուլիմյօտ), *արհեստներ* (պ°ռտնօ, պըլօդնիկ, մ°լյար), *օրենք* (զակոն, միլիցա, սուդ °նել, ն°րուշէնի), *աշխատանքային գործունեություն* (ն°չ°լնիկ, °ստավկա, դալաժիտ °նել, ըսմէնչիկ), *մարդկային հատկանիշներ* (ըսկըբօ, դուռակ, մէլըշնիկ, բօսակ), *գույներ* (բէժըվի, ռօզըվի, կըրեմըվի, սեռի), *կենդանիների որոշ անուններ,* որոնք գործածվում են մարդկանց բացասաբար բնութագրելու համար (բիկ, կըռիս, կ°զյօլ, կ°բան, պիտուխ) ևն: Առանձին խումբ են կազմում փոխառյալ հատուկ անունները, որոնք հաճախ ռուսերեն անունների կրճատ ձևեր են՝ սովորաբար համապատասխան հնչյունափոխություններով՝ Ծ°շա, Վալօդ, Վըլադ, Ծէրօժ, Իլիչ, Մ°ռուս, Նօլվէտ ևն: Ռուսերենից փոխառված բառեր գրեթե չեն հանդիպում մարմնի մասերի, ընտանեկան հարաբերությունների անվանումներում, ժամանակին ու տարածությանը, թիվ ու քանակին վերաբերող հասկացությունների անվանումներում[813]: Այս լեզվից փոխառյալ շատ բառեր էլ դուրս են մղվել կամ դուրս են մղվում բարբառային խոսքից՝ աստիճանաբար փոխարինվելով հայերեն համարժեքներով (ըշկօլ – դըբռօց, ըշկաբ - պ°հարան, ըստօլ – սեղան, ս°քան – բ՛աժակ, բիլէտ – տոմս, սուդյա - դադավոր), կամ էլ լինելով այլևս գործառույթ չունեցող իրողությունների անվանումներ (կ°լօշ, կ°մօդ, կըրասինգա, կօմսօմօլ, պ°ռտյա, կօլխօզ, բըրիգադիր, ռայկօմ) ևն:

Ռուսերենից կատարված փոխառությունները ևս ենթարկվում են բարբառի հնչյունական օրինաչափություններին, բայց և բերում են որոշ նոր իրողություններ[814]: Բայազետի բարբառի՝ ռուսերենից կատարված փոխառությունները թույլ են տալիս դիտարկել բարբառային խոսքի հնչյունական կազմությանը ներկայում բնորոշ մի շարք օրինաչափություններ, ինչպես նաև դրանցում կատարված տեղաշարժերը՝ նախորդ փուլերի բառաշերտերի

---

[813] Ինչպես նկատել է Ա.Սուքիասյանը, «Որպես կանոն, խիստ հազվադեպ են փոխառվում հիմնական ֆոնդի բառերը, օրինակ՝ ազգակցական-արյունակցական կապեր ցույց տվող .... բառեր, ... մարմնի մասերի անվանումներ...., անձնական դերանունները, քանակական թվականների մեծ մասը, կարևորագույն բայերը, հիմնական որակական ածականները և այլն» (Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 188):

[814] Ինչպես նկատել է Հ.Աճառյանը, «մայր ձևին և անկէ փոխառեալ հայացած ձևին համեմատութիւնը նոյնպէս երևան պիտի հանէ խումբ մը ձայնական օրէնքներ, որոնց ուսումնասիրութիւնը դարձեալ մաս պիտի կազմէ հայ Ձայնաբանութեան գիտութեան» (ՀԳԲ, էջ 5):

իրողությունների համեմատ: Այսպես, ռուսերենից փոխառյալ բառերում նույնպես համապատասխան դիրքերում կայուն կերպով գործառում է շրթնայնացած ° ձայնավորը (°դրէս, պ°լտոն): Փոխառություններում իրենց բաշխման օրինաչափությունները հիմնականում պահպանում են *է,ե* հնչյունները[815]՝ °*գրէգատ*, °*գենտ*, *բատարէ*, *բէսէտկա*, *զատէդանի*, *ժէշտ*, *ժեռտրվա*, *ինժիներ*, *յեխիդնի* ևն: Դրանցում բացակայում է *ո*-ն, և ունենք միայն *օ*[816], ինչպես՝ *կոմսոմոլ*, *պոլ*, *ըստոլ*, *զամոկ*, *զոնթիկ*, *չասավո*, *չուժոյ* ևն[817]: Ռուսերենից փոխառյալ շատ բառեր, իրենց վերջում ունենալով *ա* կամ *օ*, էականորեն ընդլայնել են Բայազետի բարբառի բառավերջում այդ ձայնավորների գործառությունը: Քմայնացած ° ձայնավորը սակավ գործածություն ունի դրանցում (° ունեցող բառերից են՝ *բըռ°կ*, *լ°ք*, *խ°զեն*, *կըրիշ°*, *կուգլ°*, *ձ°ձ°*, *ն°սիլկա*, *ն°չ°լնիկ*, *նիչ°*, *ռէզբ°*): Այս լեզվից փոխառությունների բառասկզբում ևս հանդես են գալիս ձայնեղ հպականներ և հպաշփականներ[818]՝ *բատարէ*, *բօսակ*, *գըռուզավիկ*, *գայկա*, *դաժէ*, *դօպուսկ*, *ձ°ձ°* ևն: Շատ դեպքերում ռուսերենի երկհնչյունների դիմաց ունենք պարզ ձայնավորներ (բօսակ, դույմ, ժիրիբօվկա, լուկ), խուլի դիմաց՝ շնչեղ (գալօփ, գառշօք, զանիթ, ժարիթ), խուլի դիմաց՝ ձայնեղ (°տկօզ, խամուդ, ըսկըբօ), *օ*-ի դիմաց՝ *ու* (°կուշկա, բուլդուզեր, գարուխ, լամփուշկա), երկշրթնային պայթականի դիմաց՝ շրթնատամնային շփական (°վգօն, գառդիրօվկա), շրթնատամնային շփականի դիմաց՝ պայթական (ըշկաբ), պ–ի դիմաց՝ *շ* կամ *չ* (շիթ, շիտօկ, չօտկ, բօռշ) ևն: Բայազետի բարբառում շատ տարածված է ռուսերեն փոխառությունների վերջին ձայնավորի անկումը (°ժիդանի, գօդնի, ըշկօլ): Երբեմն փոխառյալ բառերը Բայազետի բարբառում հանդես են գալիս հնչյունական զուգաձևություններով՝ °*պէրացյա* -

[815] Այդ օրինաչափությունների մասին տե՛ս Վ.Կատվալյան, նշվ. աշխ, էջ 153-170:

[816] Իրողությունը դրսևորվում է նաև միջինհայերենյան շրջանին վերաբերող պարսկաթուրքական և այլ կարգի փոխառություններում (օր.՝ դօշ, դօստ, թօփ, կօչ, սինօռ, քօք և այլն), այսինքն՝ սկզբնավորվել է ավելի վաղ շրջանում:

[817] Բացառություն է կազմում *ն*-ից առաջ շեշտակիր դիրքը, որտեղ հաճախ հանդես է գալիս *ո*. *բալկոն*, *բիթոն*, *բալոն*, *զակոն* ևն:

[818] Տեղաշարժը վերաբերում է ավելի վաղ շրջանի, որովհետև արաբապարսկաթուրքական փոխառություններում ևս բառասկզբում ունենք ձայնեղ պայթականներ ու հպաշփականներ, ինչպես՝ *բոյ*, *բէխէր*, *բօղազ*, *դուզ*, *ջանավար*, *բ°ր°ք°թ*, *ջէբ*, *ջուղաբ* ևն:

*°բէլանցի, կ°ստուրկա - կ°ստրրուտկա, դիրէկտոր - դէրէկտոր, զարյատկա- զայրատկա, ըսպիշկա– ըշպիշկա– իպիշկա*ևն:

Իրենց առատությամբ ու գործածականությամբ հանդերձ՝ ռուսերեն փոխառությունները խիստ սակավ են բարդություն կազմում հայերեն որևէ բաղադրիչի հետ (օր., կըրեմախառը, մ°րգարինախամ): Ածանցական կազմություններում սովորաբար գործածվում են ռուսերենի ածանցները՝ *բագաժնիկ, բալկոնչիկ, զակոննի, զավադսկо, կ°մանդիր, կըրեմըվի, մոմենտալնի, նիգոդնի, պըլէնավիկ* ևն: Հայերեն սակավաթիվ ածանցներ են ռուսերեն փոխառություններով բաղադրություններ կազմում. *բըկություն, դէֆէկտավոր, ռիսկով, վիդով*[819], *ռէգնէ, նէրվային, շուստրրություն*:

Կան ռուսերեն փոխառությունների իմաստափոխության որոշ օրինակներ՝ бык (ցուլ) – *բիկ* (անհասկացող), кабан (վարազ) – *կ°բան* (անճոռնի մարմնեղ), лак (լաք) - *լ°ք* (կպչուն անձնավորություն), холодный (սառը) – *խալոդնի* (շաքարաջուր), капля (կաթիլ) – *կ°բլի* (սրտի դեղի կաթիլներ), шоссе (խճուղի) - *շոշ* (գյուղի հիմնական փողոցը) ևն: Կան այս լեզվի փոխառություններով դարձվածքներ. *°բառոտը ֆըռալ* – պատասխանը տալ, *°նկէտա լըռացընել* – շատ հարցեր տալ, *բալթա բեղեր* – երկար և կեռ բեղեր ունեցող, *կ°մանդ քաշել* – հրամայել, *յառլիկ կըպցընել* – անվանարկել, *չըները հընգնել* – հեգն. աստիճանազրկվել ևն: Ռուսերենից փոխառյալ գոյականները բարբառում յուրացվել են ըստթվի և հոլովի կարգերի: Անեզական գոյականները վերածվել են սովորականների՝ եզակիի համապատասխան ձևով, ինչպես՝ обои (պաստառ) - *°բոյ*, отходы (մնացորդներ) - *°տխոդ* (մնացորդ), консервы (պահածոներ) - *կ°նսեռվա* (պահածո), носилки (պատգարակ) - *ն°սիլկա* ևն: Բայազետի բարբառում հանդիպում են ռուսերեն փոխառյալ հիմքերով համադրական բայեր, ինչպես՝ *°սֆըլտել, լ°քել, խոդել, նէրվայնանալ, շուստրիյանալ, չոտկել, պոլել, սըվարկել, տ°վութել, տոշկել, տոռմուզել*: Մեծ քանակություն են կազմում հարադրական կազմությունները՝ ռուսերեն հարադրով և վերացական նշանակությամբ բայական բաղադրիչով, ինչպես՝ *°բէլանցի °նել/հ´ըլնել, °խոտ ունէնալ, °վարյա տալ, °տկազ °նել, °տվէտ տալ, բալէտ °նել, դավէրյա °նել,*

[819] Գործիականի վերջավորությունը սրանցումունի ածանցի արժեք:

զանիթ °նել/՛հ՛ըլնել, խալտուրա °նել, յազվա հ՛ըլնել, կըրիշ° °նել, պոլ զ°նել, պ°պիլոզ քաշել, պէրէբոյ հ՛ըլնել, պըրիստուպ բ՛ըռնել ևն: Որոշ ձևեր թերևս կիսապատճենումներ են, ինչպես՝ *վերխ վէրցել* (взять верх), *չեստ տալ* (отдать честь), *կ°մանդ տալ* (подать команду), *պըլէն հ՛ընգընել* (попасть в плен), *կոպյա խանել* (снять копию) ևն: Տարածված են բայական այնպիսի հարադրություններ, որոնցում ռուսերեն բաղադրիչը ներկայանում է անորոշ դերբայի՝ բարբառում իբրև այդպիսին չընկալվող ձևով, ինչպես՝ *գուլյատ հ՛ըլնել, դաբիցա հ՛ըլնել, ժարիթ °նել, դալաժիտ °նել, զաստավիտ °նել, յավիցա հ՛ըլնել, զուբռիտ°նել, դակազատ°նել* ևն: Բայաձևերը կարող են վերածվել անունների, օրինակ, жарить (տապակել) բայը բարբառում վերածվել է *ժարիթ* (տապակած կարտոֆիլ) գոյականի, իսկ занят (զբաղված է) բայաձևը՝ *զանիթ* (զբաղված) ածականի: Խոնարհման մեջ ռուսերեն փոխառությունները որևէ յուրահատկություն հանդես չեն բերում:

Կարելի է արձանագրել, որ ռուսերենից Բայազետի բարբառում կատարված փոխառությունները, լինելով զգալի քանակության և ունենալով մեծ գործածականություն, առավելապես հետաքրքրություն են ներկայացնում հնչյունաբանական առումով: Բառակազմական առումով մեծ արտադրողականություն չունենալով՝ դրանք յուրահատկություններ են հանդես բերում բայակազմության մեջ, իսկ քերականական առումով լիովին հարմարվել են բարբառի օրինաչափություններին:

Փոխառություններ այլ լեզվատարբերակներից

Բայազետի բարբառի բառապաշարը ևս շարունակ համալրվում է գրական լեզվից ներթափանցող բառերով: Մի շարք դեպքերում այդ համալրումը տեղի է ունենում աստիճանաբար դուրս մղվող օտար համարժեքների դիմաց՝ *թվանք – հըրացան, օթաղ – սէնյակ, թօփ – գ՛ընդակ, հ՛ութ° - հ՛առթուկ, քօք - °րմատ, իշտ°յ - °խոռժակ, կ°յիլ – հ՛ամաձայն, հ՛ախ՝ քըրէ – վառձ, յեսիր – գ՛էրի, °կուշկա – լուսամութ, °ստանօվկա- կ°նգառ, բիլէտ– տոմս, զավոդ – գ՛օռծարան, ինվալիդ – հ՛աշվանթամ, կ°լէնդար – օրացույց, օտպուսկ – հ՛առցակուռթ* ևն: Այլ դեպքերում բարբառ են մուտք գործում գրական լեզվի՝ նոր իրողություն արտահայտող բառեր, ինչպես՝ *°զատամ°ռ-*

տիկ, °ղուսակ, ուշուչիչ, դ՛ասարան, գ՛ընատական, մ°դյան, մ°նկասՊռ-տէգ, յեռախօս, հ՛ամերգ, °կումբ, թադրոն, բ՛ուժարան, գ՛ըրասէնյակ, հ՛իվանդանոց, տընգարան, աՊյեստապետ, տօնածառ, բ՛անցըրա-կըրունգ, գ՛անձաՊ, գ՛իշերային, գ՛իդնական ևն:

Հայերենի բարբառները միավորվում են ընդհանուր բառապաշա-րով, բայց և ունեն զգալի տարբերություններ՝ պայմանավորված որոշակիորեն տեղային գործառության հետ կապված լեզվական ու արտալեզվական հանգամանքներով: Այդ առումով՝ յուրաքանչյուր բարբառ բնութագրվում է բառապաշարի իր առանձնահատկություններ-րով, նաև իրեն բնորոշ բառաշերտով: Մյուս կողմից՝ գործածվելով կողք կողքի՝ բարբառները կրում են փոխադարձ ազդեցություններ, ինչը արտահայտվում է նաև բառային փոխառությունների ձևով: Միշտ չէ, որ հնարավոր է ճշգրիտ որոշել ընդհանուր բառապաշարով չպայմանավորված ընդհանրությունների աղբյուրը, սակայն շատ դեպքերում լեզվական իրողությունների հաշվառումը թույլ է տալիս որոշել բառային առանձին ձևերի ու միավորների ծագումը: Օրինակ, Բայազետի բարբառին բնորոշ չէ *վըր°* (վրա), *մէջ* (մեջ) կապերի նախադաս գործածությունը, սակայն ունենք նման կիրառությամբ կապակցություններից առաջացած բառաձևեր, ինչպես՝ *վըր°գ՛ըլխու* (առանց հապաղելու), *վըրվըգի գ՛ալ* (գլխի՝ վզի վրա ընկնել), *վըր ճըխնի* (կիսաբաց), *դ՛ուռ վըր դ՛ըռան* (բակերով կից), *վոռմըշքաքի* (մանկահասակ), և պետք է ենթադրել, որ այս ձևերը փոխառություն են հարևան բարբառներից: Ծրջակա բարբառներից միայն Վանն ու Մուշն ունեն այդ կապերի նախադաս կիրառություն, և քանի որ *վըր, մըջ* ձևերը հարազատ են Մշո բարբառին[820], ուրեմն վերը բերված բառերի աղբյուրը վերջինս է: Մշո բարբառից են փոխառվել նաև *հանդա*(ահա), *մըջու* (խաղի ժամանակ երկու կողմերից ոչ մեկին չհարող), *ծըռաՊտոտ* (ծղր. շորորալով պար) բառերը, որոնցից առաջինը Մշո բարբառում լայն կիրառություն ունի, բայց Բայազետի բարբառում հանդիպում է սակավ գործածական *հանդա կըդ°* (ահա այսքան) կապակցության մեջ, երկրորդը Մշո բարբառում *մէջ* բառի սեռականի ձևն է[821], որին

[820] Վանի բարբառն ունի *վէր, մէջ/մըջ* նախադրություններ (տե՛ս ՔՎԲ, էջ 198), իսկ Մշո բարբառը՝ *վըր, մըջ* նախադաս կապերը (տե՛ս ՄԲ, էջ 174):
[821] Տե՛ս ՄԲ, էջ 82:

Բայազետի բարբառում համապատասխանում է *մըչի* ձևը, իսկ երրորդը ներկայացնում է Ալաշկերտի խոսվածքում գործառող *ծըռպըդօդ* «պտույտ դեպի հակառակ կողմը» ձևը, որի *պըդօդ* բաղադրիչը ևս խոսվածքում առանձին գործառում է, մինչդեռ Բայազետի բարբառին այդ ձևն անծանոթ է: Բառասկզբի ձայնեղների դիմաց խուլերի առկայությունը ևս վկայում է բառային միավորների՝ Բայազետի բարբառում փոխառություն լինելու մասին, և նման փոխառությունների աղբյուր կարող են լինել Վանի ու Խոյ-Մարաղայի բարբառները: Այդպիսի բառերից են՝ *կըռունձ* (գռուզ), *տըխպել* (*դեղբ* բառից՝ բորբոսնել), *ճիլ* (ջիլ), *ճեղ* (ջիղ), *պըլուլել* (*բոլոր* բառից՝ ոլորել), *ճըռ* (*ջեր* արմատից, Վանի բարբառում՝ *ճեր*): Բառի ծագումը որոշելուն կարող է օգնել նաև նրա նախնական իմաստի առկայությունը այլ բարբառում: Այսպես, Բայազետի բարբառի *կօտկօտ* «փնթփնթացող» և *կօտկըտալ* «փնթփնթալ» բառերը ակնհայտորեն փոխառություն են Վանի բարբառից, որտեղ *կոտկոտ* բառը արագիլին բնութագրող ածական է, իսկ *կոտկոտալ* բայը ունի «արագիլի հանած ձայնը» իմաստը: Բառակազմական իրողությունները ևս կարող են հուշել բառի ծագման մասին: Օրինակ, Բայազետի բարբառում բայական *չ* ածանցը չի գործառում (թռչել ~ թըռնել, կպչել ~ կըբնել, փախչել ~ փախնել, դիպչել ~ դիբել), շրջակա բարբառներից այդ ածանցն ունի Արարատյանը, ուստի Բայազետի բարբառում գործառող *դիփչօղական, կըփչոն, կըփչիկ, փախճան* ձևերը պետք է համարել փոխառություններ Արարատյան բարբառից: Բայազետի բարբառի *խիզար* «մանր քար», *տընգտընգալ* «տատանվել, շարժվել» բառերի դիմաց Վանի բարբառի Մոկսի խոսվածքն ունի *խիզ* և *տընգ°լ* պարզ ձևեր, ուստի կարելի է ենթադրել, որ այդ բառերի աղբյուրը Վանի բարբառն է:

Լեզվի պատմական զարգացման առումով պետք է նկատել նաև, որ ժամանակի ընթացքում բառապաշարում տեղաշարժերը երկակի բնույթ ունեն. բառապաշարի շարունակական համալրմանը զուգընթաց տեղի է ունենում լեզվից բառային որոշ միավորների դուրսմղում: Այսպես, ներկայիս ավագ սերունդն է միայն անցյալի մասին խոսելիս օգտագործում գործածությունից վաղուց դուրս եկած իրերի, իրողությունների, պատկերացումների

անվանումները, ինչպես՝ *ջ՛ախճըփան* (ջրաղացպան), *ս°նդերք* (բուրդ գզելու գործիք), *էրկանք, ս°նդուքար* (մեջը փոս քար՝ ձավար ծեծելու համար), *°ռաբա* (սայլ), *բ°դգ°* (պղնձե աման), *բ°ռ* (կարպետ), *կուբա* (գմբեթանման տանիք), *հոդա* (գոմին կից սենյակ), *ձ՛իթխաց* (ձիթհանք). *շ°ոբիկ* (ջրաման), *ա°շեղ* (հնձած արտում մնացած ցորեն, որ հավաքում էին աղքատները), *ա°տըրխան* (պատի մեջ բացված խորշ), *սիք°* (ոսկե դրամ՝ կանացի ճակատի զարդում), *տուճ* (փոքրիկ կճուճ), *կոլ խոզ, ա°ռտկոմ, կոմսոմոլ, ն°ոկոմ, ա°ռտյական* են:

Բարբառային բառեր

Բարբառային բառապաշարում մեծ հետաքրքրություն են ներկայացնում բարբառային բառերը՝ անկախ լեզվի զարգացման տարբեր փուլերին նրանց վերաբերությունից[822]: Բարբառային հայերենի բառապաշարի առավել բնութագրական շերտը կազմող այս բառերը հանդես են բերում տարածվածության տարբերություններ, և ըստ այդմ՝ Բայազետի բարբառի բառապաշարի այդ բառաշերտում տարբերակում ենք բառերի երեք խմբեր. ա) բառեր, որոնք հայերենի բարբառներում լայն տարածում ունեն, բ) Բայազետի և այլ, հատկապես մերձավոր բարբառներում գործածական բառեր, գ) միայն Բայազետի բարբառում հանդիպող բառեր[823]: Բայազետի բարբառում գործածվող և բարբառային հայերենում լայն տարածում ունեցող բառերից են՝ *°լնի, °լըրմ°ղ, °լք, °ծան, °գռա, °ղոթրան, °խճի, °մոթու, °նժուռ, °ման-չաման, °նգ°լ, °նոթնալ, °փալ-թափալ, բ°, բ՛անցընել, բ՛ընկալ, բ՛ըշտել, գ՛ըզել, գ՛ընդել, գ՛ունդուկըծիկ, դ՛ախ, դ՛ուրան, թացան, թուշ, ժուկ, լանք, հոժար, ճըխտել, ճըղել, ճըմուռ, շեռ, շըշկըռել, շընթըռել, պըդդունց, ս°բնըվել* են:

[822] Սրանց մասին Մ.Ասատրյանը գրում է. «Առանձին արժեք և հետաքրքրություն են ներկայացնում այն բառերը, որոնք չեն ավանդված հին մատենագրության մեջ, չկան արդի հայերենում և ոչ էլ նոր փոխառություններ են պարսկերենից, թուրքերենից, արաբերենից, ռուսերենից և այլն» (ԽԲ, էջ 145): Անդրադառնալով դրանց ծագմանը՝ լեզվաբանը հավելում է. «Հասկանալի է, որ գավառական բառերը մեծագույն մասով հնագույն փոխառություններ են կամ գուցե բնիկ հայերեն (հնդևրոպական) բառեր, որոնք չեն պահպանվել գրաբարում: Երկու դեպքում էլ դրանք ունեն մեծ արժեք....» (նշվ. աշխ, էջ 146):

[823] Ընդհանրապես, բարբառային այս կամ այն բառերի հատկացումը միայն որևէ բարբառի, որպես կանոն, ունի պայմանական բնույթ և պայմանավորված է թե՛ բարբառների ուսումնասիրվածության աստիճանով, թե՛ հետազոտողի տեղեկացվածությամբ:

Բարբառիս հատուկ բարբառային շատ բառեր իրենց զուգահեռներն ունեն մերձավոր բարբառներում: Այսպես՝ *°զատում, °սկաթքանք, °ոնակօլօլ, թըլթըլալ, խելքակըտուր, պէլ* (Ա.), *գ՛անգըտբ՛էրան, խօնթխընթալ, ծէսկել, ճիրել, լըփօփել, պստոռոց* (Մ.), *գ՛ըշերանց, թողգի, խընամակ°նչ, յեղըռճիկ, կըդրակըցոն, հ՛առավնախառ* (Վ.), *°խաչոր °նել, բօռբըռոց, զօմփել, թ°փուկ, թէտկել* (Խ.), *°մեղ տեղ, այսմալ, °ստըղօվ, °ոնէ °ռսունք, բօռոց* (Դ.), *°նկըշտում, բ՛ըվալ, գ՛ըթաձուրիկ, խրփել* (Ա., Մ.), *բ՛էտընալ, թալցընել, կըթուն, կըմուկ, չորփորել* (Մ., Վ.), *բ՛ըփուկ, զուքս, խէլըրթըփել, ճէվալ, պրզալ* (Մ., Դ.), *°նձեռտալ, թուլբ՛էրան, լըժալ, կըլցընել* (Դ., Ալ.), *կօշկոռ, մէկէսմէկ, մըխել* (Ալ., Վ.), *խրրխիր* (Ալ., Ա.), *խօռթել* (Վ., Խ.), *կօտկըտալ, ճեղ* (Դ., Վ.), *ծ°կօսկըռել, մ°ռթաթող* (Ա., Ալ., Դ.), *°նիծուկ, °տուտկ* (Ալ., Խ., Դ.), *բ՛ըփռէճ, բ՛ոցել, բ՛ընբ՛ընալ* (Ա., Մ., Դ.), *լիլ, ճըլճեխ* (Ա., Մ., Վ.), *թախտրփել* (Մ., Վ., Դ.), *կ°ռթըսվոր* (Մ., Վ., Խ.), *զախախօրել, ծըմբրկըտալ* (Վ., Խ., Մ., Դ.), *խէրվընեկ* (Ալ., Ա., Խ., Վ.), *ճըտել* (Ա., Վ., Դ., Խ.), *°ռեվմըտոց, խրրուսկ* (Ա., Ալ., Վ., Խ., Դ.) ևն: Ի դեպ, ուսումնասիրողների կողմից միայն շրջակա այս կամ այն բարբառում արձանագրված որոշ բառեր գործառում են նաև Բայազետի բարբառում: Այսպես, Մշո բարբառում դիտված նման բառերից են՝ *առնըվել, ափզել, բ՛աբա, բ՛աս էնել, բ՛ըռ, գ՛ափել, գ՛ըխալ, գ՛ըրմըխել, դ՛արցըվոր, դ՛ըրունգա, դ՛օփել*[824]: Միայն Դիադինի բարբառին հարազատ համարված, բայց նաև Բայազետի բարբառում գործառող բառերից են՝ *դ՛որ, կօլոն, գ՛ըռըշտել, դ՛ուրան, թալ, թ°լել, թախտիկ, հըռըկել, կըռութ, հեդըռել* ևն[825]:

Բայազետի բարբառում զգալի քանակություն են կազմում առավելապես արևմտյան բարբառներում հանդիպող բառերը, ինչպես՝ *°յլէվ°յլէ, °սըռել, °տատօրել, °ընխրռնել, բ՛արեվմընա, բ՛էտ, գ՛եղախրռիկ, գըռըշտել, դ՛ըրկեց, դ՛ուրնել, էսմալ, էլման, ժ°ժիկ, ժօղվել, իմալ, ծըռել (գժվել, սիրահարվել), հ՛իշկալ, լուսուն, լօխկել, խելքել, խէլըրել, խընգըռել, ծէսկել, կ°ռքըվել, կըշտում,*

[824] Տե՛ս ՄԲ, էջ 184-185: Այս բառերի դիմաց Բայազետի բարբառն ունի՝ *°ժբ°տես, °ռվել, հ՛°փսել, բ°բ°, բ°ս °նել, բըռ, գ՛ըփել, գ՛ըխալ, գըրմըխել, դ՛առցըվոր, դըրունգա, դօփել*:

[825] Տե՛ս ԴԲ, էջ 111-113: Բայազետի բարբառի ձևերը հիմնականում նույնական են սրանց հետ:

կօշկոռ, հ՛ընթել, հ՛ուշիկ, հ՛ուստ, ճ°նգընթել, ճիժ, ճուռ, մըկա, մըտկել, պ°ղ, ջ՛օչընալ, տըսկել, տըփել ևն:

Գործառում են նաև բառեր, որոնք առավելապես հանդիպում են արևելյան բարբառներում, ինչպես՝ *°խկատ-ուխկուտ, °նեսկաչոր °-նել, °նկըդրել, հ՛°շկաթող, °ռնօվի, բ՛անարատ, բացօվի, իշարած, խոսկի, կօլօլել, խաստավիզ, հ՛ուշտ* ևն:

Բարբառների բառապաշարային առնչությունների տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Բայազետի և Արարատյան բարբառների փոխհարաբերությունները, հատկապես՝ երբ նկատի ենք ունենում, որ նախկինում այս երկու միավորները դիտարկվում էին նույն բարբառի շրջանակներում: Բառապաշարային շատ ընդհանրությունների առկայությամբ՝ Բայազետի և Արարատյան բարբառները հանդես են բերում նաև զգալի տարբերություններ[826]: Զգալի քանակություն են կազմում հիմնական բառաֆոնդին վերաբերող հասկացությունների բառանվանումների տարբերությունները, որոնք պայմանավորված չեն կենցաղով, բնական պայմաններով կամ զբաղվածության տեսակով: Օր.[827], *վիզ – շըլինք՝ ճիտ, հ՛էսա – հըրես, տիլ – ցեխ, լըցել – ածել, խավ – շըվաք, խորոտ – սիրուն, հ՛ուշիկ-հ՛ուշիկ - կամաց-կամաց, իմալ – ինչպես, յան – կողմ, պ°ղել – սառել, ջ՛ոչ – մեծ, տըփել – ծեծել, մէշու – մի քիչ, գ՛ըրկել – խըտտել, ճիժ – էրէխա, ձ՛եռից °ռնել – խըլել, հ՛ընչի – խի, °նօթի – սօված, խաստել – սատկել, լը – դեռ, գ° - արա, մէկ – մին, հ՛իրար գ՛ալ – ժաժ գալ* ևն: Կան նաև բառիմաստի տարբերություններ: Օրինակ, ի տարբերություն Բայազետի բարբառի՝ Արարատյան բարբառում *ճաշ* բառն ունի նաև *կեսօր* իմաստ, կամ՝ Արարատյան բարբառում *խալխ* բառն ունի *ժողովուրդ, ամբոխ* իմաստները, մինչդեռ Բայազետի բարբառում համապատասխան *խըլղ* ձևն ունի *օտար, ուրիշ մարդ* իմաստը: Բարբառային բառապաշարի յուրահատկությունները հաճախ պայմանավորված են արտալեզվական այնպիսի գործոններով, ինչպիսիք են բարբառախոսների կենցաղը, զբաղմունքը, բնակության վայրի բնա-

[826] Տե՛ս նաև Վ.Կատվալյան, Արարատյան և Բայազետի բարբառների փոխհարաբերությունները, ՊԲՀ, 2009, 2-3, էջ 145-157:

[827] Բերվում է Բայազետի բարբառի բառը, ապա Արարատյանին հատուկ ձևը: Էական ենք համարում այն, որ Արարատյան բարբառի ձևերը Բայազետի բարբառին հիմնականում անծանոթ են:

կան պայմանները ևն: Օրինակ, նկատվել է, որ Խոյ-Մարաղայի բարբառում հատկապես շատ են այգեգործությանը վերաբերող բառերը[828], Մշո բարբառում շատ են երկրագործական գործիքների, կավե ամանների անվանումները, անասնապահության հետ կապվող բառերը[829], Դիադինի բարբառը հարուստ է երկրագործությանը, արհեստին, անասնապահությանն ու ձկնորսությանը վերաբերող բառերով[830] ևն: Բայազետի բարբառում ևս բարբառային բառերը արտահայտում են տարբեր ոլորտների (կենցաղ, հարաբերություններ, վիճակ, հասկացություններ, երկրագործություն, մարմին, հատկանիշներ, շրջակա միջավայր ևն) վերաբերող իրողություններ: Նախբերենք մեր կողմից միայն Բայազետի բարբառում արձանագրված բառերի օրինակներ. *°ղժունք* (աճուկ), *բ՛ըթնօլոր* (կմճտոց), *գ՛ալբ՛արի* (խնջույք՝ վերադարձի առթիվ), *գըլորգընդի* (գլորվելով), *գ՛ըխկըմել* (խոնավությունից փափկել), *դ՛ասէթափուկ* (գոռոզ), *թախտափ* (թափտալը), *իրավատեղ* (վստահելի անձ), *լուսումըթախառը*, *խըրվոր* (փեսայի կողմից հարսի տուն գնացող), *խուսել-լիզել* (հյուրասեր չլինել), *ծ°մասթիկ °նել* (մազերը գլխից պոկել), *ծէրխընել* (սկսել), *ծըգլըվըզել* (վիզը երկարացնել՝ տեսնելու համար), *ծըրիկ-ծըրիկ* (քիչ-քիչ, հատվածաբար), *կըլջել* (նետվածը բռնել), *կըղզընել* (կենտրոնանալ մի բանի վրա), *կըտոր խանել* (ատել), *կօտըշխըրել* (պոզահարել), *ձ՛ըքս* (մարդու մարմնի ուղղահայաց չափը), *ճըմք* (մարմին, մարմնական ուժ), *ճօղէճօղ* (ոտքերը իրարից հեռու գցելով), *մ°նդըրաբ՛անիկ* (մանրակրկիտ աշխատանք), *մեղդ՛ըրում* (մեղադրելը), *մէգնըվել* (միավորվել, հաշտվել), *մէշօլ* (մի քիչ էլ), *մէտեղվել* (միանալ, իրար հետ ապրել), *մըխկուտ* (մղկտոց), *մուճուճուրիկ* (փոքր աչքեր ունեցող), *պեղել* (տեղավորել, կարգավորել), *ջ՛ոչաշէն* (ավելի տարիքավոր երևացող), *ցըսկել* (տեղումմնալ) ևն:

ՀԳԲ-ում ընդգրկված են նաև Բայազետի բարբառի շատ գավառաբառեր, որոնք էական պատկերացում են տալիս բարբառիս՝ 20-րդ դարի սկզբի բառապաշարի վերաբերյալ: Զգալի քանակություն են

[828] Տե՛ս ԽԲ, էջ 146:
[829] Տե՛ս ՄԲ, էջ 179-180:
[830] Տե՛ս ԴԲ, էջ 111:

կազմում միայն Բայազետի բարբառով ներկայացված միավորները[831]: Սրանց մեջ շատ են երկրագործության ու անասնապահության առնչվող բառերը, որոնցից են՝ *°մոլքի (մեկ լուծով արոր)[832], *թէրաւռեկ (սայլի մաս), *թէրացից (սայլի մաս), լ°մփռ (վեցմատնյա եղան), զամփ (մեծ մուրճ[833]), խոռթել (հողը հանելով՝ ջրի ճանապարհ բացել), կոռի լըծել (լծել կամնելու համար), *կ°ապար (խուրձ կապող), *գ՛ըլխանք (ցորենը մաղելիս երեսին եղած լավագույն մասը), սըռսըռցընել (թեփից զատել), ալլեճ °նել (բերքահավաքից հետո հողը քրքրել՝ մնացած կարտոֆիլը հանելու համար[834]), ալճըցընել (փոս գցել), ջ՛օվ (խուրձ կապելու խոտե կապ), *մ°ռէմընա (արտը չորրորդ տարին հանգստի համար անմշակ թողնելը), փիդոն °նել (ցորենի հասկերը ձեռքով քաղել), *ձ՛եռնըցքաղ (ձեռքով քաղելը), քաղոն (խոտատեղ), քամ °նել (քամել), *քառակ (ավազան ձիթհանքում), գ՛ըռթալ (թխսկանի հանած ձայնը), *մ°ղախան (քառակուսի կաղապարված աթար), մ°նդըրացան (աթարի մանրուք), *մ°զմազ (չորս տարեկան արու ոչխար), ալռզոն (պանիր քամելու տոպրակ) ևն: Բույսերին ու կենդանական աշխարհին վերաբերող բառերից են՝ *°վշան °վել, գ՛իլիփըստուկ, *թռռթռռիկ, *թուփխոտ, խաց ու պանիր, *մեղրափուշ, *նուկ, *պէժ°նգ, պոչուկ, *ջագան, *սըղոցիկ, *սուտնամեմ, *տէրողորմիկ, *ցընգան ծ°ղիկ, *ցորնուկխոտ (բոլորը բույսերի անուններ են), կըռթել (հասկի ուռչելը, հատիկ բռնելը), վոռցըլել, *քամի քաշել (ցորենի հիվանդություն է), *հշի ձ՛ուկ (գորտի շերեփուկ), կօնգըստալ (շան ոռնալը), կօրեկ (ձկնկիթ), մ°նդըրաձուկ (մանր ձուկ), մօզըռել (մոզ ճանճի խայթոցից անասունի խրտնելը), ջ՛ըրմուկ, դըզեզ (մեղու) ևն: Հարաբերություններ, վիճակ ներկայացնող բառերից են՝ *°զաբաալչ *խընամաալչ (նույնը նախորդի հետ)[835], °գռ°ժ°ժ° (հարսի տանից փեսային ուղարկվող թխվածք), ջըհէզբ՛ացէք, °ռունք °նել, չափըռնել (շրջապատել), տըբղըվել (հարվածից տափակելով մի բանի կպչել), քարօվ քարալեղ °նել,

[831] Այս բառերի մի մասը հետագայում դիտարկվել է նաև այլ բարբառներում: Ներկայում բարբառում չգործառող բառերը ներկայացնում ենք * նշումով:
[832] Օրինակները ներկայացնում ենք ոչ թե ըստ Հ.Աճառյանի գրության, այլ բարբառային տառադարձությամբ՝ բառերի հնչակազմը ավելի հարազատորեն ներկայացնելու նպատակով:
[833] Հ.Աճառյանը այս բառի համար նշում է *լոմ* իմաստը (տե՛ս ՀԳԲ, էջ 324):
[834] Հ.Աճառյանը այս բառի համար նշում է *հողը քանդելով՝ գազար, բողկ, ճակնդեղ և այլն հանել* իմաստը (տե՛ս ՀԳԲ, էջ 911):

լ°լ°կըթել (լացակումել), *ծ°կօոսկըռել* (առողջանալուց հետո շատակեր դառնալ), *հ՛օնքըռտալ* (հեկեկալ), *մ°լ°մշել* (տխրած նստել), *ջ՛ըփոխվել, սէրօվնալ* (միմյանց նկատմամբ ջերմանալ), *տըժկընալ* (ջրիկանալ[836]), *փըխփըխկոց* (խեղդված ձայնով ծիծաղելը), **քամի դիբել* (մի փոքր խենթանալ) ևն: Այսպես նաև՝ ուտելիքին առնչվող բառեր՝ *ճեղ-աՙնիր, ժըռտուկ* (չքամած մածուն), *ձ՛ըցմախան* (մեկ ձձումից հանված կարագի քանակությունը), հատկանիշների անվանումներ՝ *°ռզականօվ* (պահուստ ունեցող), *դ՛իվոտ* (խենթ), **լըպուկ* (անմազ), *խըռտընկոտ* (խրտնող), **ջ՛ըրբուկ* (փորձված), *սըլվըլիկ* (ճարպիկ), **սօթօղ-կօկօղ* (աճնասեր), *քըռփըշտուն* (անհարթ), *°ռնակավոր* (կատաղի), **գ՛իդնակ* (տեղյակ, հմուտ), մարմնին ու կենցաղին վերաբերող բառեր՝ *հանգաճխօռթիկ*, *գըռօտել* (քոսոտել), *լըղլըղալ*, *կըռկուկ* (ցրտից կուչ եկած), *կըռտել* (այրվելուց կաշին կուչ գալ), *մըսամօլ* (աչքի վրայի փառ), *շիթ* (փոքր պալարաձև վերք), *բ՛ըլկօրել* (վերքը փորփրել), *ճըղ°նգ* (ըստ Աճառյանի՝ ջղանք՝ նիհար), *բ՛առթակօլոն* (խառը կուտակված), *գ՛ալել* (ավելուկ կամ այլ բույս հյուսել), *մըշալ* (շորի խանձվելը), **վոտատեղ* (արտաքնոց), *վառք* (վառվելը), *տընաՙխ* բնության երևույթների անվանումներ՝ *°ռնել*, *թօռթըռալ* (թեթև ձյուն տեղալ), *ճըլըրեկ* (մանր կարկուտ), *մըքըլկել* (ամպել, օրը մռայլվել), *սըղին բ՛ըռնել* (բարակ սառույցով պատվել), *ցըռբեխ*(ջրալի, ցեռի նման) ևն:

Բայազետի բարբառը, ինչպես բարբառային հայերենի յուրաքանչյուր դրսևորում, ներկայանում է հարուստ ու բազմաշերտ բառապաշարով, որի դիտարկումը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ արդարացի չէ այն պնդումը, թե իբր բարբառային հայերենի կամ առանձին որևէ բարբառի բառապաշարը աղքատիկ է ու պարզունակ[837]: Ակնհայտ է, որ ներկայում հայ լեզվաբանության արդիական խնդիրներից է բարբառային հայերենի բառապաշարի ամբողջական և համակողմանի ուսումնասիրությունը:

2. ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

[835] Հ.Աճառյանը նշում է, որ այս սովորությունը հին է և արդեն վերացել է:

[836] Հ.Աճառյանը այս բառի համար բերում է *վայրենանալ, կատաղել* իմաստները (տե՛ս ՀԳԲ, էջ 1028):

[837] Տե՛ս ՄԲ, էջ 179-183, Ս.Բաղդասարյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 208-210:

Բարբառային բառապաշարը աչքի է ընկնում իմաստաբանական հետաքրքիր շատ իրողություններով: Ինչպես նկատվել է, իրենց կենսագործունեության ընթացքում «....մարդիկ ճանաչում են առարկաները, երևույթները, գործընթացները, զանազան որակներն ու հատկանիշները, և օբյեկտիվ իրականության այդ առարկաների, երևույթների, գործընթացների կամ որակների որոշակի տարբերակված հատկանիշներն էլ հիմք են ծառայում բառերի այս կամ այն իմաստների համար»[838]: Իրականության ճանաչման ու ընկալման յուրահատկությունները հեշտ է դիտարկել հատկապես բաղադրություններում, որոնց ներքին ձևը հաճախ վեր է հանում ոչ միայն երևույթների էությունը, այլ նաև դրանց վերաբերյալ պատկերացումները: Դիտարկենք Բայազետի բարբառում գործառող նման մի քանի բաղադրություններ: Այսպես, սովորաբար երեխաների վերաբերյալ գործածվող *հ՛անգըճօվ* ձևն ունի *մեծի խոսքը հարգող* իմաստը, իսկ հակառակ իմաստն արտահայտվում է *°նհ՛անգաճ* բառով: Այս բառազույգը փաստում է և՛ այն, որ խոսքի ընկալումը տեղի է ունենում ականջով, և՛ այն, որ մեծի խոսքի չկատարումը հետևանք է ընկալման բացակայության: Գրական լեզվի *գաղտնապահ* բառի դիմաց գործառում են *խուփբ՛էրան*, *փագբ՛էրան* ձևերը, որոնք, ի տարբերություն առաջինի, նկարագրում են ոչ թե գաղտնիք պահելու ունակությունը, այլ դրա համար անհրաժեշտ պայմանը: Նախանձի նկատմամբ բացասական վերաբերմունքն արտահայտվում է *քօռնալ-սիֆտըկել* «նախանձել» հարադրությամբ, որի առաջին բաղադրիչը՝ *քօռնալ* (կուրանալ), բերում է *ուրիշի հաջողությունը չնկատել* իմաստը, իսկ երկրորդը՝ *սիֆտըկել* (սպիտակել), ավելի է ընդգծում իմաստը՝ ներկայացնելով կուրանալու բնորոշ մի հատկանիշ՝ աչքի բիբի սպիտակելը: Հարազատության զգացումի կարևորությունն արտահայտվում է *ջիգրէծուռ* «հարազատության ընդգծված զգացում ունեցող» բառով, որի առաջին բաղադրիչը *ջիգ°ր* «հարազատության զգացում» (թուրքերենում՝ «թոք») բառի բացառականի ձևն է, իսկ *ծուռ* «խենթ» բաղադրիչը բերում է *ողջ էությամբ նվիրվող* իմաստը: Ծանրագույն աշխատանքի իրողությունն է ներկայացնում *քար*

[838] Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 103-104:

քաշել «խիստ չարչարվել» հարադրությունը, ինչից պետք է ենթադրել, որ բարբառախոսների նախնիների համար առավել ծանր աշխատանքներից է եղել քարերի՝ քաշելով տեղափոխելը: Բարբառի բառապաշարի համար բնութագրական դեր ունեն նաև բառերի իմաստային խմբերը: Որպես կանոն, բարբառագետները բերում են տվյալ բարբառում գործառող՝ հին կենցաղին ու գործունեությանը, երկրագործությանն ու անասնապահությանը վերաբերող բառերի խմբեր՝ առավելաբար նպատակ ունենալով կորստից փրկել այդ բառերը: Միայն Բայազետի բարբառում արձանագրված բարբառային նման բառերի անդրադարձանք վերևում (իմաստային տարբեր խմբեր ներկայացնող որոշ բառախմբեր տե՛ս Հավելված 6): Բարբառի բառապաշարը, սակայն, միայն հին իրողություններին վերաբերող իմաստային խմբերով չէ, որ հետաքրքրություն է ներկայացնում: Կենցաղով ու գործունեությամբ չպայմանավորված տարբեր թեմատիկ խմբեր իրենց իմաստային ու բառակազմական յուրահատկություններով նույնպես բնութագրական են բարբառների համար: Օրինակ, Բայազետի բարբառի՝ *ժամանակին* առնչվող բառերի քանակը անցնում է հարյուրից[839]. *տ°ոին կից* (ողջ տարին), *տ°ոբէստ°ոի* (տարեցտարի), *քանի տ°ովա գ՛ըլ օխ* (երկար տարիներ անց), *տ°ոի օր* (երկար օր), *խէրու, գ՛արնան գ՛ըլ օխ* (գարնան սկզբին), *գ՛արուն գ՛արնանոցով, օրէ, օրէ բ՛ընէ* (ի սկզբանե), *հ՛ըմընօր, ս°ղօր, օրը բիթուն, հ՛առավտուն, կէսօրնէ յետ, ցէրէգնեց* (ցերեկները), *հ՛առավնախառ, լուսումըթախառը, լուսը չըբ՛ասվուկ, ս°բախտան լուսուն* (վաղ առավոտյան), *հ՛առավտընէ չուր հ՛իրկուն, հ՛իրկըվանը, հ՛իրկըվա յանը, հ՛իրկըվորէ, հ՛իրկընեց, հ՛իրկըվա խօվին, ցէրէգվա շոքին, մութը գ՛էտին, մըթըվեր, մըթօվ, °ռեվմըտոց, լուսուդ՛եմ, բ՛արլուսախառ, գ՛ըշերվորէ, հէքուց չէ մէկէլ օր, հ՛էսօր-հ՛էքուց, հ՛էսօրնէ յետ, մըկա, հ՛առէչ, յետո, հ՛առէչ ժամանակ,*

[839] Ի դեպ, Հ.Աճառյանը նկատել է, որ ժամանակի վերաբերյալ հայերեն բառերը բավական առատեն (տե՛ս ՀԼՊ, մաս 1, Ե., 2013, էջ 315): Հայերենի բարբառներում գործառող ժամանականիշ բառերի հանգամանալից քննությանն է նվիրված Ջ.Բառնասյանի «Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում» (Ե., 2009, 124 էջ), աշխատությունը, որտեղ հեղինակը նշում է, որ «Ժամանականիշ բառերն իրենց խորքում պարունակում են բառագիտական, ծագումնաբանական, իմաստաբանական, հնչյունաբանական տեղեկություններ, որոնցով բարբառագիտական փաստերից

յետ, շուդվընէ, շուտուց, հ՛անքան, գ՛ախին, գ՛ախ-գ՛ախ, գ՛ախի բէգ՛ախի, գ՛ախուց, գ՛ախէն, շ°տգ՛ախ, էն գ՛ախ, հ՛ըմէն գ՛ախ, մօրէ, հ՛էսօր էրկօր, ռօպէն մէկ, ռօպէյին (անմիջապես), *ցըռտին, °նձըրեվին, °ռեվին* ևն:

Բազմիմաստություն, իմաստափոխություն

Բարբառների բառապաշարում ևս էական դեր ու նշանակություն ունի բազմիմաստության երևույթը[840]: Իրողության ընդհանուր-հայերենյան արտահայտություններից բացի[841]՝ բարբառներում լայնորեն դրսևորվում են նաև բազմիմաստության այլ երևույթներ: Բայազետի բարբառի բազմիմաստ բառերից են. *հ՛ընգնավորել* – 1. սաստիկ վախենալ, 2. կատաղել. *խըրկել* – 1. վռնդել, 2. կնոջից բաժանվել. *ծըռել* – 1. ծուռ դարձնել, 2. շեղել, թեքել, 3. խենթանալ, 4. սիրահարվել. *ճ°ր* – 1. միջոց, հնարք, 2. ելք բակից դեպի փողոց. *դ՛ուռ* – 1. դուռ, 2. դռան շրջակայքը դրսից, 3. բակ, տնամերձ հողամաս. *բ՛ըռթել* – 1. կտոր-կտոր անել, 2. հացը կերակրի մեջ կտոր-կտոր լցնել, 3. կտրվել ևն: Բազմիմաստությունն ավելի հաճախ ձևավորվում է բառերի փոխաբերական կիրառության արդյունքում: Հաճախման կիրառությունները հանգեցնում են բառի իմաստի ամբողջական փոփոխության, երբ նախնական իմաստը մոռացվում է: Օրինակ, Բայազետի բարբառում ներկայում էլ գործառող *լ°մփ°ռ* (վեցմատնյա եղան), *կօռի լըծել* (լծել կամելու համար) բառերը իրենց նախնական իմաստներով այլևս չեն գործածվում, այդ իմաստները բարբառակիրներին հիմնականում անծանոթ են: Այժմ *լ°մփ°ռ* բառը գործածվում է իբրև ածական *լ°մփ°ռ վոդներ* կապակցության մեջ և ունի *լայն ու փռված* իմաստը, իսկ *կօռի լըծել* հարադիր բայը գործածվում է *ստիպողաբար և առանց հանգստի աշխատեցնել* իմաստով: ՀԳԲ-ում նշվածների համեմատ տարբեր իմաստներ ունեն

կարող են վերածել ազգագրության, հոգեբանության և այլ գիտակարգերի համար էական փաստերի» (տե՛ս Ջ.Բառնասյան, նշվ. աշխ., էջ 6):

[840] Ինչպես նկատել է Է.Աղայանը՝ «...մեր լեզվի բառերի բազմիմաստությունը նաև երկար դարերի ընթացքում կենդանի խոսքի մեջ գործածվելու, ժողովրդական բառ ու բանին հատուկ պատկերավորությամբ, ժողովրդական մտածողությամբ իմաստների զարգացման, ժողովրդական բանահյուսության մեջ մշակվելու և յուրահատուկ զարգացում ապրելու հետևանք է» (Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 336):

[841] Կան բառեր, որոնք բազմիմաստ են թերևս հայերենի արդի բոլոր վիճակներում, ինչպես՝ *աչք, գլուխ, կռիվ, հաց, փոր, ոտք, թև, մեջք, խոսք, առաջ, ազատել, ազդել, առնել, բռնել, գալ, գնալ, ընկնել, մնալ, նստել, ուտել* ևն:

նաև մի շարք այլ բառեր, ինչպես՝ *°լք՝* աներևույթ և չար էգ ոգի, շատակեր – այժմ՝ խիստ տգեղ (իգական սեռի ներկայացուցչի մասին). *բըստրել՝* ցնդաբանել, դատարկաբանել – այժմ՝ հորինել. *լ°մբ°կ՝* կոճակը անցկացելու անցք – այժմ՝ կոշիկի քուղ. խէլրել (ՀԳԲ-ում՝ խելռիլ)՝ խենթանալ, ուշագնաց լինել – այժմ՝ խելքը մաղել, ձանձրանալ, նեղվել. *հ՛օրուկ՝* թաղված – այժմ՝ հողի մեջ խրված փայտե կամ մետաղյա ցից, որից կապում են անասունին, այդտեղից ձևացել է *հօրուկել* բայը. *կըլորեկ* (ՀԳԲ-ում նաև *ղլրեկ*)՝ քարը կամ գնդակը խիստ բարձր նետելը – այժմ՝ դեպի վեր ցցված. *տրշել՝* երկար փայտով կարճ ու հաստ փայտին հարվածելով՝ այն օդ թռցնել (դիտարկված է Բաղեշում) – այժմ՝ ոտքով հարվածել գնդակին նաև:

Բառերը իմաստային հետաքրքիր զանազանություններ են հանդես բերում բարբառից բարբառ: Օրինակներ. *զատ՝* Բ. ճաշ, ինչ-որ բան - Մ. դաշտում աշխատողներին տնից ուղարկված կերակուր (արաբերենից փոխառություն է՝ *ճամփի պաշար* իմաստով[842]). *ճընդըրիկ՝* Բ. *բոլորովին* (գործածվում է *ճընդըրիկ սեվ* «ամբողջովին սև» կապակցության մեջ) – Մ. սև. *ժըժնել՝* Բ. և Վ. խառնել, խճճել - Մ. շարժել. *իրավօվ՝* Բ. իրեն իրավունք վերապահելով – Մ. ճիշտ, իրավացի. *կօլ՝* Բ. անթև կամ կիսաթև վերնազգեստ, այստեղից նաև՝ կօլթև - Մ. անպոչ հավ (Բայազետի բարբառում այս իմաստով գործառում է *կօկօլ խավ* կապակցությունը). *խէլրթըփել՝* Բ. խելքը մաղել, հոգնել, նվաղել – Մ. հիմարանալ, խենթանալ. *դ՛առցըվոր՝* Բ. խիստ տգեղ – Ալ. վերքերով պատված. *թառթառանալ՝* Բ. ինքն իրենով հիանալ, փքվել – Վ. գուրգուրանքով պահել. *լավօթել՝* Բ. գռեհիկ խոսքերով անպատվել – Վ. ցռել, ապականել. *ճէրէրալ՝* Բ. անընդհատ դժգոհել, նվնվալ – Վ. հավի կտկտալով պտտելը. *գըլթիկ՝* Բ. կրկնակզակ – Վ. *կլաթան՝* կոկորդ (Ղարաբաղի բարբառն ունի *կուլտան* ձևը՝ *ծնոտի տակ գիրությունից գոյացած միս, կրկնակզակ* իմաստով). *մըղղել՝* Բ. հանդարտ նիրհել – Վ. (Մոկսի խոսվածք) մարմրել. *դ՛էմ հ՛ընգնել՝* Բ. շատցանկանալ, կարոտել – Ա. աղաչել, պնդել. *ն°խրատահ՝* Բ. արոտ գնալուց առաջ գյուղի ծայրին նախրի հավաքվելու վայրը – Ա. նախիրը արածեցնելու տեղը. *թ°փչ°կ՝* Բ. բահը հողի մեջ խրելու համար ոտքով արված յուրաքանչյուր հրումը,

[842] Տե՛ս ՀԳԲ, էջ 316:

այդտեղից էլ՝ *թ°փչ ը կել* – Ա. բահի կոթին ամրացված փոքրիկ թև, որի վրա ոտքով ազդելով՝ բահը խրում են հողի մեջ. թել կը տալ՝ Բ. նազել, կոտրատվել – Ա. նվաղել, փափագել. *զը ռ*՝ Բ. անճաշակությամբ աչքի ընկնող – Ա. բոլորովին ևն: Օրինակները վկայում են, որ բարբառային լեզվում բառերի իմաստային զանազանությունները հաճախ առաջ են գալիս բարբառից բարբառ նույն բառանվանումը փոխկապակցված իրողությունների վրա տարածելու ճանապարհով: Առանձին դեպքերում իմաստային յուրահատկությունները կարող են հիմք դառնալ՝ բարբառային փոխառության մասին խոսելու համար: Ըստ այդմ՝ պետք է կարծել, օրինակ, որ *լ ավ օթել* բառը Բայազետի բարբառին անցել է Վանի բարբառից, *թ°փչ °կ* բառը՝ Արարատյան բարբառից, *զատ* բառը՝ Մշո բարբառից ևն:

Բարբառներում իմաստափոխական էական գործոններ են նաև քերականական, բառակազմական, հնչյունական և այլ իրողություններ: Քերականական ձևերի՝ հարացույցներից անկախ գործածությունների հետևանքով առաջ եկած իմաստափոխությունները վերաբերում են և՛ հոլովական համակարգին, և՛ բայաձևերին: Հոլովական ձևերի անկախացմամբ առաջ եկած իմաստափոխություն են ներկայացնում հետևյալ միավորները. սեռական հոլովի ձևեր՝ *մ°ռթամ ը չ ի, դ՛ ը սի* (երկուսն էլ՝ ներկայանալի), *ք ը նչ ի* (ոչ ներկայանալի), *փոր ի* (միայն ուտելու մասին մտածող), *քիթ ու բ՛ էր ն ի* (բերանքսիվայր), տրական հոլովի ձևեր՝ *մ ը թ ին* (մութ ժամանակ), *ց ը ռտ ին, շ ոք ին, գ՛ ախ ին, հ՛ իր °ր եվ ին* (իր կարծիքով), *սեվ ին, գ՛ ը ր օղ ին, ջ°յ ն ը մ ին, գ օռ ին* (չորսն էլ՝ *պետք չ է*), *օր ին* (նման՝ նկատի ունենալով վատվիճակը), *օր ին°կ ին* (նման՝ նկատի ունենալով վարքը) ևն. բացառական հոլովի ձևեր՝ *գ՛ ախ է, օր է* (երկուսն էլ՝ ի սկզբանե), *տ ը ն է* (տանու մարդ), *մ օր է* (ծննդյան օրվանից), *հ՛ առ չ ուց* (նախ և առաջ) ևն, գործիական հոլովի ձևեր՝ *°ն ը ն օվ* (1. իբր թե, 2. նշանավոր), *գ՛ ը լ խ օվ, ժամ է ր օվ, լ ուս օվ, հ՛ անգ ը ճ օվ, մ ը թ օվ, հ՛ իր սօվ* (պնդերես), *ձ՛ է ն օվ, °ռ զակ ան օվ* (խնայողաբար), *ձ՛ եռ նամ է ղ օվ* (ակամայից) ևն: Բայական իմաստի՝ հետին պլան մղվելու ճանապարհով բայաձևերի իմաստափոխություն են ներկայացնում հետևյալները. ենթակայական դերբայի ձևեր՝ *հ՛ իմացող* (երախտագետ), *գ՛ ը ր օ՛ ղ, բ՛ ը ռ նող* (չվատնող), *հ՛ իշ կող* (գուշակ),

սիրող (սիրեկան), *տուն դ՛ընող* (տնարար) ևն, հարակատար դերբայի ձևեր՝ *°նիծուկ* (չար, նենգ), *խախտվուկ* (խելապակաս), *թըռուկ* (անհավասարակշիռ), *ծըռուկ* (սիրահարված), *մ°ցուկ* (տանը մնացած), *մըդմըտուկ* (ճարպիկ), *քընուկ* (դանդաղամիտ), *քըսմուկ* (դանդաղաշարժ, անկարող) ևն: Բարբառում տարածված են հարակատար դերբայով ձևավորված անեծքներ՝ *խորուկ, թաղուկ, խէրախորուկ, հդարախորուկ, սեվգ՛ալուկ, դ՛ըռները մ°ցուկ, բ՛ըռթըվուկ, բ՛ըռթըվուկ-կըտրռտըվուկ, մ°ռթամեռուկ, էրէրմանքի մ°ցուկ* ևն: Բառակազմական իրողությունները իմաստափոխության հիմք են դառնում, երբ ածանցմամբ կամ բառաբարդմամբ դրսևորվում է ածանցական իմաստով կամ բաղադրության բաղադրիչներով չպայմանավորված նոր իմաստ: Օրինակ, բարբառումս *°շխար* բառն ունի *շատ մարդիկ, բոլորը* իմաստները, իսկ *°շխարք* բառը՝ *աշխարհ* իմաստը: *Թրիք* բառից *ան* ածանցով ձևավորված *թըրքան* բառը պետք է որ նշանակեր *թրիքող*, սակայն ունի *փնթի* իմաստը: Երբեմն բայական ածանցը փոխում է նաև բառի բառային իմաստը, ինչպես՝ *թախտըփել* «թափտալ» - *թախտըփվել* «նիհարել», *ըսպանել* «սպանել» – *ըսպանվել* «չարչարվել», *ծընել* «անասունների մասին՝ ձագ բերել» - *ծընվել* «մարդկանց մասին՝ աշխարհ գալ», *լըսալ* «լսել» - *լըսըցընել* «ակնարկներով բան հասկացնել», *ծ°խկել* «ծաղկել» - *ծ°խկըցընել* «չափազանցնել, ճոխացնել» ևն: Որոշիչ – որոշյալ հարաբերությամբ *փակ բ՛երան* բառակապակցությունից առաջացած *փագբ՛էրան* բաղադրությունը ունի *գաղտնապահ* իմաստը, *ս°ղ օրը* կապակցությունն ունի *ամբողջ օրը* իմաստը, իսկ *ս°ղօր* բաղադրությունը՝ *ամեն օր* իմաստը ևն: Նույն բառի՝ հնչյունական տարբեր ձևերը կարող են զուգահեռ գործածվել՝ ունենալով տարբեր իմաստներ: Օրինակ, հինհայերենյան *նեղանալ* «անձկանալ» բայի դիմաց Բայազետի բարբառն ունի *նեղնալ* ձևը, բայց և գործառում է նաև *նեղանալ* ձևը՝ *վիրավորվել* և *հոգնել* իմաստներով: Հին բառաշերտի *խավսար* բառը գործածվում է բուսականության համար, ինչպես նաև տարողության մեջ լցված մթերքի մակերեսի վերաբերյալ, մյուս դեպքերում գործառում է գրականից փոխառյալ *հավասար* բառը ևն: Բառիմաստի փոփոխությունները ավելի նկատելի են, երբ համեմատության եզր են ընդունվում լեզվի զարգացման

նախորդ փուլերը ներկայացնող վիճակներ, նախ և առաջ՝ գրաբարը: Բազմաթիվ են այն բառերը, որոնք, պահպանած լինելով գրաբարի հետ ընդհանուր հիմնական իմաստները, ձեռք են բերել նոր իմաստ(ներ) արդի հայերենի տարբեր դրսևորումներում, նաև Բայազետի բարբառում: Օր., *հ՛առծակ* (արձակ) – չկոճկված. *գ՛ալ* – հասունանալ. *գ՛ըլխավոր* – ամուսին. *գ՛ընդել* – անդամալույծ դառնալ. *խօսալ* (խօսել) – 1. երիտասարդի և աղջկա ընկերություն անելը, 2. սազել, 3. հաշտ լինել. *խասնել* (հասանել) – բաժին հասնել. *մընալ* - 1. հղիանալ, 2. այնուհետև. °*խտել* (յաղթել) – ուժը պատել. *հ՛իստակել* (յստակել) – կլպել. *օլորել* (ոլորել) – շուռ տալ, շրջել. *կ°մէնալ* (կամենալ) – մեկի ամուսնության համար բարեխոս լինել, *տ°րի* (տարի) – մահվան տարելից ևն: Այս կարգի իմաստափոխությունները կարող են պատճառ դառնալ քերականական զուգահեռ ձևերի առաջացման: Օրինակ, *գ՛ընդել* (գնդաձև դարձնել) բայը խոնարհվում է ներգործաձև՝ *գ՛ընդի, գ՛ընդիր* ևն, իսկ *գնդի նմանվել, անդամալույծ դառնալ* իմաստով խոնարհվում է կրավորաձև՝ *գ՛ընդա, գ՛ընդար* ևն: *Տ°րի* բառը բարբառումս ենթարկվում է Վա հոլովման՝ *տ°րվա*, բայց *մահվան տարելից* իմաստով ենթարկվում է Ու հոլովման՝ *տ°րու* ևն: Այլ դեպքերում՝ բարբառում բառերը գրաբարյան իմաստների դիմաց հանդես են բերում նոր իմաստներ: Օրինակներ՝ գրաբ. *աբեղայ* «վանական, կուսակրոն կրոնավոր» - Բ. *հ՛ափեղա՝* գործածվում է *լուս ու հ՛ափեղա* «մաքուր, անարատ» կապակցության մեջ. գրաբ. *դարձ* «հետդառնալը, հին հավատից նորին անցնելը» - Բ. *դ՛առց* «հարսանիքից հետո հարսի՝ հոր տուն մի քանի օրով գնալը». գրաբ. *բերդ* «ամրոց» - Բ. *բ՛եռթ* «բանտ». գրաբ. *կատար* «ծայր, մի գործի վերջը, լեռան գլուխ» - Բ. *կ°տար* «հավի կատար». գրաբ. *ապրել* «փրկվել» - Բ. °*բրել* «1. կենդանի լինել, 2. կենակցել». գրաբ. *բոլոր* «ամբողջ, ամեն, բոլորակ» - Բ. *բ՛օլոր* «շուրջը». գրաբ. *բարկ* «կծու, թունդ, ցասկոտ, ուժգին» - Բ. *բ՛արկ* «թեժ», գրաբ. *հրեղէն* «հրից բաղկացած, հրե, հրի նման» - Բ. *խըրեղեն* «չնաշխարհիկ», գրաբ. *որոտում մն* «ամպերի գոռգոռոցը» - Բ. *օրոտում* «կռիվ, աղմուկ, աղաղակ». գրաբ. *վաստակ* «աշխատություն, հոգնություն, գործ» - Բ. *վաստակ* «զավակ». գրաբ. *պատառել* «պատռել, ճղել, պայթեցնել» - Բ. *պ°դըռել* «ատել». գրաբ. *պատարագ* «նվեր, ընծա,

զոհ» – Բ. *պ՞դարաք* «հոգեհաց» ևն: Երբեմն բառի՝ գրաբարյան մի շարք իմաստների դիմաց բարբառում դրսևորվում է դրանցից մեկը: Օր., գրաբ. *անարատ*[843] - Բ. °*նարատ* «արդար, մաքուր» (գործածվում է °*նարատ յեղ* կապակցության մեջ). գրաբ. *ազգ* – Բ. °*սկ* «ազգակից», գրաբ. *գագաթն* – Բ. *գ՛աքաթ* «մարդու գլխի վերևի մասը». գրաբ. *անդուն դք* – Բ. *հ՛անդուտկ* «դժոխք». գրաբ. *սրբել* – Բ. *սըրփել* «մաքրել». գրաբ. *անգիր* – Բ. °*նգիր* «բերանացի». գրաբ. *անզգամ* – Բ. °*նըսկամ* «անառակ». գրաբ. *անձն* – Բ. °*նձ* «մարմին». գրաբ. *ապականել* – Բ. °*պակընել* «պղծել, աղտեղել». գրաբ. *զատ* – Բ. *զատ* «հեռու». գրաբ. *ժողովել* – Բ. *ժօղվել* «հավաքել». գրաբ. *համարել* – Բ. *խամբըրել* «հաշվել». գրաբ. *ձիգ* – Բ. *ձ՛իք* «պինդ ձգված, պիրկ». գրաբ. յորդորել – Բ. *հ՛օռթօրել* «դրդել» ևն:

Առանձին դեպքերում բառը բարբառում ունի գրաբարյանին հակառակ իմաստ: Այսպես, գրաբարում *հրեշտակ* բառն ուներ *պատգամավոր, առաքյալ, երկնային հրեշտակ* իմաստները, իսկ Բայազետի բարբառում *խըրիշտակ* բառն ունի *նիհարությունից այլակերպված, սարսափազդու տեսք ստացած* իմաստը: Այս բառի բացասական իմաստը դրսևորվում է նաև *խըրիշտակակոխ հ՛ըլնել* «անհասկանալի հիվանդությամբ տառապել» հարադրության մեջ[844]: Գրաբարում *փառաբանել* բառի *գովաբանել, փառատրել* իմաստների դիմաց Բայազետի բարբառում *փառաբ՛ընել* բառն ունի *խիստանպատվել* իմաստը ևն:

Իմաստափոխական իրողություններ երևան են գալիս նաև այն դեպքում, երբ դիտարկում ենք միջին հայերենի և բարբառի բառապաշարների առնչությունները: Միջին հայերենում *առան / արան* բառն ուներ *հարթավայր, տաք տեղ* իմաստները, իսկ Բայազետի բարբառում °*ռան* բառը գործառում է *Արարատյան դաշտավայր* իմաստով, որի բնակիչներին տրվում է °*ռանցի* անվանումը, նաև ձևավորվել է °*ռանա դ՛օխծըվոր* «մրսկոտ» դարձվածքը: Այլ օրինակներ. միջ. *բբռէճ* «բվեճե - Բ. *բ՛ըփռէճ* «առատև գզգզված մազեր ունեցող». միջ. *կլորել* «բոլորել, փխբ. խոշորանալ» - Բ. *կըլօրել* «գիրանալ». միջ. *բաժինք* «բաժանված ամբողջի ամեն մի մասը» - Բ. *բ՛աժինք* «օժիտ». միջ. *ճղել* «բաժանել» - Բ. *ճըղել* «պատռել». միջ. *պատռիլ* «պատռվել,

[843] Գրաբարյան ձևերի իմաստները չենք բերում, տե՛ս Ռ.Ղազարյան, Գրաբարի բառարան, Ե., 2000թ.:

պայթել, ճեղքվել» - Բ. *պ°դ̣ը̣ռ̣ել* «սաստիկ ատել». միջ. արաբացի «արաբ» - Բ. հ՛արափացի «անփույթ, վնասատու». միջ. *կարմրժեռ* «կարմրին տվող, կարմրավուն» - Բ. *կ°ր̣մ̣ը̣ր̣ժ̣ը̣ռ̣ել* «շփոթմունքից դեմքի թունդ կարմրելը» ևն: Կան նաև գրաբարից միջին հայերեն, ապա միջին հայերենից բարբառ իմաստային զանազանություններ, տեղաշարժեր: Օրինակ, *կնդել* բառը գրաբարում ունի *փետել, ծառի տերևները պոկել, չարչարել* իմաստները[845], միջին հայերենում՝ *գլխի մազերը տակից խուզել* իմաստը, իսկ Բայազետի բարբառում ունի *ոչխարը խուզել* իմաստը: Գրաբարում *լաւութիւն* բառն ունի *բարություն, առաքինություն, լավ լինելը* իմաստները, միջին հայերենում՝ *առատություն* իմաստը, իսկ Բայազետի բարբառում՝ *մեկի հանդեպ բարի գործ* իմաստը: Այլ դեպքերում բարբառումս արտահայտվում են գրաբարից տարբեր միջինհայերենյան իմաստ(ներ), ինչպես՝ գրաբ. *բռնել* «բռի մեջ առնել» - միջ. և Բ. «փակել, ծածկել, պատրաստել». գրաբ. *լոյս* «լուսատուի արձակած էներգիա, ճրագ, աչք» - միջ. և Բ. *լուս* «լույս, առավոտ, տեսողություն, լուսավոր»[846], գրաբ. *խռովել* «վրդովել» - միջ. և Բ. «մեկից նեղանալով՝ հետը չխոսել» ևն: Կան նաև դեպքեր, երբ բառը Բայազետի բարբառում և գրաբարում ունի նույն իմաստը, իսկ միջին հայերենում՝ այլ իմաստ: Այսպես, գրաբ. *աւեր* և Բ. °*վեր* «ավերված» - միջ. *աւեր* «վնասակար, փչացած, անառակ». գրաբ. և Բ. *կոկ* «հարթ, ողորկ»[847] - միջ. կոկ «անխառն, մաքուր» ևն:

Այսպիսով, բարբառներում ևս դիտարկվում են իմաստափոխական գործընթացների տարատեսակ դրսևորումներ, ինչպիսիք են բառիմաստի ընդլայնումն ու նեղացումը, շրջումն ու բառի վերաիմաստավորումը: Ուսումնասիրողները իմաստափոխական տարբեր իրողություններ արձանագրել են նաև մերձավոր բարբառներում, որոնցից շատերը, ի դեպ, իրենց զուգահեռներն ունեն Բայազետի

---

[844] Հ.Աճառյանը *հրեշտակակոխ* բառը արձանագրել է Վանի բարբառում. բառացի նշանակում է *հրեշտակից հարված ստացած* (տե՛ս ՀԳԲ, էջ 676):

[845] Այս բառի *կունդ* արմատը գրաբարում ուներ *մազերը թափած, ճաղատ* իմաստները, որից կազմված *կնդանալ* բայն ուներ *ճաղատ դառնալ, մազերը թափվել* իմաստը (ՀԱԲ, 2, էջ 659):

[846] Էլեկտրական հոսանքի՝ կենցաղ մուտք գործելով՝ Բայազետի բարբառում ձևավորվել է *լուս – լույս* հոմանիշ զույգ: Գրականից փոխառյալ *լույս*-ը ներկայացնում է նոր իրողությունը:

[847] Բայազետի բարբառը *կոկ* արմատով ունի նաև *լիժ ու կոկ* «ողորկ», *կօկել* «հարթեցնել», *կօկել-սօքել* «հարդարել» ձևերը:

բարբառում[848]: Բարբառային խոսքում դրանց հանգամանալի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ինչպես բարբառային միավորների փոխհարաբերությունների, այնպես էլ լեզվի պատմական զարգացման հարցերի քննության առումներով:

Համանուններ, հոմանիշներ

Բարբառային բառապաշարը բնութագրվում է համանունների և հոմանիշների, դարձվածքների ու եղանակավորող արտահայտությունների առատությամբ: Հայ լեզվաբանության մեջ համանունները ըստ ձևական նույնության բաժանում են երկու խմբի՝ լիակատար և մասնակի, ընդ որում՝ նկատի են առնվում գրության ու արտասանության փոխհարաբերությունները[849]: Պարզ է՝ բարբառային լեզվում համանունների նման բաշխում լինել չի կարող՝ գրավոր տարբերակի բացակայության պատճառով[850]: Սակայն Բայազետի բարբառում, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել մասնակի համանունության արտահայտության յուրօրինակ մի դեպք: Ինչպես նշել ենք, Բայազետի բարբառի հնչյունական համակարգում գործառում է °/n գերհնչյութը, որը նույն արտասանությամբ, սակայն տարբեր դիրքերում համապատասխանաբար ներկայացնում է ° և *n* հնչյութները: Բարբառումս կան մի քանի բառազույգեր, որոնցում վերոհիշյալ հնչյութները հանդես են գալիս հնչյունական նույն շրջապատում ու նույն դիրքում, իսկ հնչյութային հակադրությունը, այդ բառերում կորցնելով հնչյունաբանական հիմքերը, այնուամենայնիվ պահպանվում է խոսողների գիտակցության մեջ, ինչպես որ նույնահունչ համանունների դեպքում խոսողների գիտակցության մեջ բառազույգերը տարբերվում են իրենց գրությամբ: Այդ եղանակով առաջացած մասնակի համանուններ են՝ շ°*n* (շարելը) – *շոn* (հագուստ), *մ°մ* (մայրիկ) – մոմ (մոմ), *կ°թ* (կաթ) – կոթ (կոթ), պոչել (որևէ գործիքի պոչ հարմարեցնել) - պ°չել (համբուրել): Համանունության մյուս դեպքերը որևէ նորություն չեն բերում, ուստի կսահմանափակվենք օրինակներ բերելով: Այսպես, տարարմատ համանուններ նույն

[848]Տե՛ս բարբառների ուսումնասիրությանը նվիրված աշխատությունների համապատասխան բաժինները:
[849]Տե՛ս Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 349:
[850] Գրի առնված բարբառային խոսքը ոչ թե այլ որակ է, այլ խոսքի՝ ըստ հնարավորին հարազատու ուղղակի արձանագրում գրային միջոցներով:

խոսքի մասի շրջանակում՝ *բ՛արկընալ* (բարակել) - *բ՛արկընալ* (թեժանալ), *գօլ* (լիճ) - *գօլ* (դարպասի գրավում), *խէր* (հայր) – *խէր* (բարիք), *կըթել* (կով կթել՝ կիթ) – *կըթել* (կարել՝կութ՝ կութ գ°նել), *մըխել* (ծուխ՝ մուխ բարձրանալ) – *մըխել* (մեխ խփել), տարարմատ համանուններ տարբեր խոսքի մասերի բառերով՝ *գ՛ալ* (ժամանել) – *գ՛ալ* (բույսերի հյուս), *գուռ* (վարար) - *գուռ* (քարե ավազան), *գատ* (հեռու)–*գատ* (ճաշ), *խամ* (համ) – *խամ* (անփորձ), *կ°նալ* (կարողանալ) – *կ°նալ* (ջրանցք), նույնարմատ համանուններ՝ *գ՛ըլխել* (լիքը լցնել) – *գ՛ըլխել* (գլխով հարվածել), *գատ* (ճաշ) – *գատ* (ինչ-որ բան), *կուշտ* (մոտ) – *կուշտ* (հագեցած), *ձ՛°ք* (կենդանու ձագ) – *ձ՛°ք* (վարտիքի փողքերի միացման հատվածը), բառաքերականական համանուններ՝ *խասա* (կտորի տեսակ) - *խասա* (*հասնել* բայի ձև՝ *հասա*), *կ°ր* (միացման տեղը) - *կ°ր* (*կամ* պակասավոր բայի ձև), *տէր* (մի բանի տեր) - *տէր* (*տ°լ* բայի ձև), *կեր* (ուտելիք) - *կե՛ր* (*ուտել* բայի ձև), քերականական համանուններ՝ *ջ՛ըրի* (*ջուր* գոյականի հոլովաձև) – *ջ՛ըրի* (*ջրել* բայի ձև), *քամին* (քամի գոյականի որոշյալ առում) - *քամին* (քամել բայի ձև), *տ°ն* (*տուն* գոյականի հոլովաձև) - *տ°ն* (*տ°լ* բայի ձև) ևն: Բարբառային խոսքում համանուններ առաջանում են հիմնականում նույն գործոնների ազդեցությամբ, ինչ գործոններով ձևավորվում են գրական լեզվում:

Բարբառային խոսքը հարուստ է և՛ նույնանիշներով, և՛ համանիշներով: Հայ լեզվաբանության մեջ նույնանիշներն ու համանիշները, ըստ լեզվում ունեցած իրենց դերի, տարբեր կերպեն արժևորվել: Մասնավորապես, նույնանիշները համարվել են լեզվի համար որևէ նշանակություն չունեցող իրողություններ[851]: Անկախ

[851] Այսպես, Մ.Աբեղյանի համոզմամբ՝ «ժողովրդական առօրյա խոսակցության համար նույնանիշ բառերն ավելորդ ծանրաբեռնություն են. որովհետև այդ ժամանակ լեզուն բանեցնում ենք մեր մտքերը պարզապես ուրիշներին հաղորդելու և ուրիշներինը հասկանալու համար, ուստի նույնանիշ բառերի կարիք չկա, քանի որ մեկ բառն էլ բավական է միտքն արտահայտելու համար: Այդ պատճառով, եթե մի կողմից նույնանիշ բառեր են առաջ գալիս, մյուս կողմից էլ բարբառները ձգտում են այդ անօգուտ առատությունը թոթափելու» (Մ.Աբեղյան, Երկեր, 2 հատոր, էջ 128): Մինչդեռ գրական լեզվում նույնանիշները պահվում են, որովհետև այստեղ կարևորվում է մտքերը գեղեցիկ ու ներդաշնակ արտահայտելը (տե՛ս նույն տեղում): Հետագայում նույնանիշները ավելորդ են համարվել ընդհանրապես լեզվի համար. «....լեզուն չի սիրում միևնույն առարկային, երևույթին և դրանց հատկանիշներին մի քանի անվանումներ տալ, գործածել մի քանի բառաձևեր, այլ հետևողականորեն ձգտում է ազատվել նույնանիշների բառերից, պահելով նրանք, որոնք, նույնանիշ լինելով հանդերձ, ոճական տարբերություն ունեն» (Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.1, էջ 202):

իրենց տրված գնահատականներից՝ սրանք, այնուամենայնիվ, կենդանի խոսքում լայն գործածականություն ունեն, բարբառային խոսքում դրանց առկայությունը խոսքի ազատ ու անկաշկանդ գործառության, նաև բարբառախոսների ստեղծագործական ունակություններ դրսևորման արդյունք են, հարստացնում են հայերենի բառապաշարը և որոշ դեպքերում հնարավորություն ստեղծում գրական լեզվի համար՝ իմաստային նրբերանգներ արտահայտելու նպատակով ընտրանք կատարելու: Բերենք նույնանիշների օրինակներ Բայազետի բարբառից. *Հ՛ուշիկ – յավաշ, խանքակըտուր – շընչակըտուր – խանքապ՞տառ, խանք - ն°$°ս, օլօք - լուլ°, ճ°նգ – լըփ, էնքան - էնդ°*[852], *շ°նվոռթի - շ°նտրդա, բ՛ատինք – օժիտ– ջըրէգ, գ՛ախ–վախտ, դ՛ըրկեց – հ՛արէվան, գըռըշտել – բըռթել, ժօղվել – հ՛ավքել, ճուռ – բուդ, բ՛էտ – ջ՛ոչ, գ՛անգըդվոր – բ՛օղօքավոր, °ն$°յմ - բէ$°յմ* ևն: Նույնանիշների ձևավորման աղբյուրներ են և՛ հայերեն բառերն ու փոխառությունները, և՛ բառակազմական իրողությունները, և՛ լեզվի տարբերակային տարբեր դրսևորումները: Հաճախ նույնանիշ բառերից ձևավորվում է բաղադրություն, որը համալրում է իր բաղադրիչներով ձևավորված նույնանիշների շարքը, ինչպես՝ *կըռիվ - դ°վի – կըռիվ-դ°վի, կ°պիկ – մէյմուն - կ°պիկ-մէյմուն, խաբար – ջուղաբ – խաբար-ջուղաբ, խել քել – խրատել – խել քել -խրատել, խօրել – թաղել – խօրել -թաղել* ևն: Նույնիսկ հակադիր կառուցվածք ունեցող բառերը կարող են նույնանիշներ լինել, ինչպես՝ *հ՛իրսօվ - °նհ՛իրես* (երկուսն էլ ունեն *պնդերես* իմաստը): Խոսքում նույնանիշներից որևէ մեկի ընտրությունը կարող է լինել պատահական, բայց և կարող է պայմանավորված լինել խոսքային իրադրությամբ, խոսողի բառապաշարի յուրահատկություններով ևն:

Բայազետի բարբառը շատ ավելի հարուստ է համանիշային շարքերով, որոնք ներկայացնում են երևույթների՝ տարբեր կողմերից ճանաչողությունն ու ընկալումը, խոսողների գնահատողական, հուզաարտահայտչական վերաբերմունքը ևն: Համանիշային շարքերը հաճախ բազմանդամ են, դրանցում շատ են հատկապես դարձվածքները: Օրինակներ՝

[852] Այս բառի բաղադրիչներն են *էն* և *կըդ°* (արաբ. *դ՛ըդար՝* չափ):

վախենալ - կ°ոկըմել, լալկել, հ՛ընգնավորել, զախախօրել, լիզուն կըպել, թուքը չօրնալ, գ՛ույնը թ°լել, գ՛ույնը քըցել՝ հ՛ըլնել պ°տի ծէփոն, °ոունը ջ՛ուր դ՛առնալ, ճըժէ կըդրել, լեղին կըդրել, լեղին ջ՛ուր դ՛առնալ, մ°զերը բիզ-բիզ կ°յնել, վոդները թուլնալ, թեվերը թուլնալ, տ°կը շըռել, քաքել տ°կը, սիռտը դ՛ող հ՛ընգընել, °խն °ռնել սիռտը, սըռսունքը դ՛օղալ, °խու դ՛ողի մէջ հ՛ըլնել.

խօրօտ - նըխշուն, խօրօտ-նըխշուն, չինաշխարիկ, կ°ռտիշկա, նըխշուն նիգ°ր, պ°տկերք, լուսաթըթաղ, նըխշաթըթաղ, լուսնըկի տըսնըխինգ, խուր ու խըրեղեն, խըրեղեն, °նթ°դ°.

շըշմուկ - °նջատվուկ, քընուկ, °ղօթուկ էշ, °նխելք կըկու, °շ-խըրքի մէ°միտ, բէրանը խոտ հ՛°յվ°ն, գէժըռուկ, դըմուկ, յանը տ°ոուկ, պ°ղուկբէրան, պէլ, քըսմուկ.

խըպառտնալ - գըլթիկ տալ, բաբըռլամիշ հըլնել, յերկընքի կըշէրի խէտ խօսալ, թառթառանալ, հ՛իրանը բ՛անցըր պախել, գ՛ըլօխն °ռնել հ՛առիքը, դ՛ասէթափել, շընէրի խէտ խաչալ, վեր-վեր թըռնել:

Բարբառի հոմանիշային շարքերում ևս առկա են մերձավոր իմաստների զանազան կարգի տարբերակումներ[853]: Այսպես, ծավալային տարբերություններ ունեն *շունչ* (ներշնչվող ու արտաշնչվող օդ, ընտանիքի անդամ) - *ն°ֆ°ր* (ընտանիքի անդամ), *դիբել* (հանդիպել, այցելել, դիպչել, վիրավորել) – *ռաստգ՛ալ* (հանդիպել) հոմանիշ զույգերը: Տեսակային տարբերություններ են արտահայտում *գ՛ավ* (փորը լայն, երկար պարանոցով աման ջրի կամ գինու համար) – *կուժ* (կավե երկարուկ ու նեղբերան անոթ՝ աղբյուրից ջուր բերելու համար), *կ°վըռ* (արու ոչխար) – *հոգըջ* (կրտած ոչխար) հոմանիշ զույգերը: Աստիճանական տարբերություններ են արտահայտում *մ°շվել – զաբընել – թախտըփվել - չօփ դ՛առնալ*, *հ՛°շկերը լըցել - լ°լ – հոնքուռ-հոնքուռ լ°լ - °ոնէ °ռսունք թափել*, *°նձըրև թ°լել* (թեթև անձրևել) - *°նձըրև բ՛ըռնել* (ուժեղ անձրևել) - *շըրըփալ էն գալ* (հորդառատ անձրևել) հոմանիշային շարքերը: Հասկացական տարբերություններ են ներկայացնում *օքնել – խասնել - °ղի °ղաման հ՛ըլնել - վըրէն*

[853] Սրանց մասին տե՛ս Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 350-354:

դ՛ուռ բ՛ացել - մըշկին կ°յնել, զ°վզըկել - °մբախ-զ°մբախ խօսալ - հ՛ավել-ափկաս խօսալ - գէժ-գէժ խօսալ - բ°ռ°դ°ռի-բ°ռ°դ°ռի խօսալ - բ՛էրանը ջ՛ախել հոմանիշային շարքերը: Արտահայտչական տարբերություններ են ներկայացնում *չար ու կըրակ - °նիծուկ - °ռնակավոր - °սսու ափտիչ, քընել – մըռդըխել, նըստել – թըխջել – ցըսկել* հոմանիշային շարքերը ևն:

Դարձվածքներ, եղանակավորող արտահայտություններ

Բարբառային խոսքը հագեցած է դարձվածքներով, եղանակավորող արտահայտություններով ու բանաձևային կառույցներով, առածներով ու ասացվածքներով: Բայազետի բարբառում գործառող դարձվածքներից են՝ *°նձուն ձ՛ըմեռ* (ժլատ), *°նգախ °քլօր* (ոչ տեղին ու ժամանակին մի բան անող), *°նշուն գ՛եղ* (պաշտպան չունեցող), *°ռանա դ՛օխծըվոր* (մրսկոտ), *տունը բ՛առցել °քլօրին* (տակնուվրա անել), *կուշտ °քլօր* (հպարտ կեցվածք ունեցող), *հ՛առծակ հ՛օռթիկ* (ինքնագլուխ), *մութ °շխարք* (հետամնաց վիճակ), *օցէրի կըծուկ* (նենգ, չար) ևն: Շատ են օրինակները, երբ գրական հայերենի բառային միավորի դիմաց բարբառն ունի դարձվածք կամ պատկերավոր կապակցություն. *ապշել - բ՛էրանը բ՛աց մընալ. ատել - խէտը հ՛°շկօվ հ՛°շկ չունէնալ. բավարարվել - սըռտին մէ թիզ յեղ բ՛ուսել. բարքերը վատանալ - մէրը մ°նուկն ուրանալ. գերազանցել - գ՛ըլօխը լըվալ. լեզվանի - լիզվից °ռատ լվացվել - հ՛իրսին ջ՛ուր զ°նել. կանխել - հ՛առջըկըտուր °նել. կատաղել - փունք տալ՝ փունք °ռնել. հակադրվել - խօսկին խօսկ բ՛էրել. շփոթել - փոխս քընցել. նշանել - հ՛անգաճը կընդրել. ողջագուրվել - աչ-աընռօշտի հ՛ըլնել. սատարել – կուղ տալ. սպասեցնել – կըմուկը քընցել. տունը մաքրել - °վել-խոռթ °նել. քծնել – վոդնէրի տ°կը °վալ-թավալ գ՛ալ* ևն:

Բարբառային խոսքում ակտիվ գործածականություն ունեն եղանակավորող արտահայտությունները[854], որոնք, լինելով պատրաստի վերաիմաստավորված կառույցներ, ոչ միայն արտահայտում են խոսողի վերաբերմունքը, այլ նաև ունեն խոսքը կապակցելու արժեք: Օրինակներ. *°բրի °ռեվըտ* (համաձայնություն), *°ղն ա կէրե մ°տաղը* (զիջողություն), *բ°խտի տէրը թաղեմ* (դժգոհություն), *գիդամ գիդաս* (սպառնալիք), *գ՛լխիս վայ տաս* (սպառնալիք), *խելքիտ ձ՛ուն գ՛ա*

[854] Տե՛ս Հավելված 10:

(հեգնանք), *էլ իմալ գ՛ըլնէ՞ր* (հեգնանք և դժգոհություն), *հ՛անգաճը կ՚նչա* (հղում), *հ՛՞շկըտլուս* (շնորհավորանք), *բ՞խտվոր քօ գ՛ըլօխը* (թերահավատություն), *խողերըս գ՛ըլխիտ* (սեփական գերազանցության ընդգծում), *գ՛ընա բ՛անիտ* (անհամաձայնություն), *լիզուս չըպըտրտվում՝ ՞սեմ* (խղճահարություն), *գիդա՞ս ինչ կ՞* (հակադրություն), *խ՞ն՞քը դէնը* (լրջմտություն), *յերկինք հըլնես՝ գէտինք հ՛իշնես* (վճռվածություն), *հ՛՞շկըն էլ չե՞մ խանի* (տրամադրվածություն), *ինչ դու՝ ինչ էնի* (հիասթափություն), *բ՛ան չըկա* (հանդարտեցում), *վո՞րն ա հընգե հիդեվըտ* (հանդարտեցում), *քօ ճ՞որը կըդրի* (դժգոհություն), *իշտ՞յըտ քացաղ* (հակադարձում), *խ՞նչըլիտ քարը չըհ՛ընգընի* (հորդոր), *հ՛իշկա ընձի՝ խրխճա քեզի* (հորդոր), *հ՞շկըներըս լուս* (հեգնանք), *քօ խէտ եմ* (ուշադրության հրավիրում), *խօքի ունես տ՞լու* (հորդոր), *խօսկը մեր մէջ* (զգուշացում), *՞սել ան՞սօղ* (հղում), *բ՛ան ու գ՛ոռծիդ՞նուն ի՞նչ ա* (դժգոհություն), *սեվ գ՛ա սըթէրիտ* (անհամաձայնություն) ևն: Խոսքային այս միավորները նախադասության հետքերականորեն կապակցված չեն, ուղղակի կատարում են յուրահատուկ նախաբանի դեր՝ հաջորդ միտքը արտահայտելու համար: Ընդ որում՝ երբեմն այս արտահայտությունները պայմանավորում են նախադասության որոշակի հատկանիշներ: Այսպես, *գիդամ գիդաս*-ը պայմանավորում է բայ-ստորոգյալի ապառնի ժամանակ (Գիդամ՝ գիդաս, կըզ՞նեմ քիթ ու մըռութըտ կըջ՛առթեմ), այդպես նաև՝ *հ՛՞շկըն էլ չե՞մ խանի* արտահայտությունը (Հ՛՞շկըն էլ չե՞մ խանի, կըտ՞նեմ կըբ՛աժնեմ ճըժէրիս), *բ՞խտի տէրը թաղեմ*-ը սովորաբար ենթադրում է իրողությունների հակադրում (Բ՞խտի տէրը թաղեմ, վորը գ՛իշեր չուր լուս բ՛անա, վիրը տ՞նեն նըստըցընեն վիրի գ՛ըլօխ), *վո՞րն ա հընգե հիդեվըտ*-ը ենթադրում է բայ-ստորոգյալի հրամայական եղանակ (Վո՞րն ա հընգե հիդեվըտ, դ՛ու քօ գ՛ոռծը հանգիստ՞րա) ևն: Սրանցից որոշ չափով տարբերվում են բանաձևային վերաիմաստավորված կառույցները, որոնք նախադասություններ են կամ շարահյուսորեն կապակցվում են նախադասության հետև յուրաքանչյուր կոնկրետդեպքում լրացվում են անհրաժեշտ միավորներով: Օրինակներ. *հ՛՞շկերըս չուռե* (ինչ-որ մեկի) *խրմար. ՞շխարն ՞շխրրքօվ, դ՛ու*

քo (ինչ-որ բանով). *մ°զ մընաց* (ինչ-որ բան տեղի ունենար). *հ՛անգընճիտհ՛իդեվը կընտենաս՝* (ինչ-որ բան) *չես տենա. հ՛ըմեն խաղ խախծեր ինք, մ°ցեր եր* (ինչ-որ բան). *էտ խել քին ես, վոր* (ինչ-որ բան չի կատարվում). *քա՞նի գ՛ըլխի տեր ա, վոր* (ինչ-որ բան է անում), (մեկի կամ մի բանի) *°նունը մի՛ տու* ևն:

Առածներն ու ասացվածքները, լինելով բարբառային խոսքի կարևորագույն տարրեր, իրենց մեջ պարունակում են լեզվական ու արտալեզվական հսկայական տեղեկություն և ունեն ճանաչողական մեծ արժեք: Օրինակներ՝ ըստիմաստային յուրահատկությունների. *իրավիճակը գնահատող միավորներ՝* °լնի յեր՝ խընձրախամն էլ վըր° տըվեց. °խճըկա տունը դըհօլ-զուռնա յա՝ տըդի տունը խաբար չեն. °մթն ամըտե կ°մոդը. դ°վեն խեձե, կուզեկուզ ամ°ն գ՛ալում. կոշտը նըստե՝ քարի դ°ռդըն ա լ°լում, *կարգավիճակը գնահատող միավորներ՝* °խճիկը խըլդի տ°ն ճըրաք ա. °խճիկը °նկըդրել ձ՛ըմերուկ ա. °խճիկը տ°ն դ՛ըսի պ°տ ա, *հատկանիշներ ներկայացնող միավորներ՝* °ծան խավը կըչկըչան գ՛ըլնի. բոյն իշխընի, խելքը՝ իշի. լիզուն չըլնի՝ կ°ռկըռները հ՛°շկերը կըխանեն. *համոզմունք ներկայացնող միավորներ՝* °մեք հ՛ավք հ՛իր երամի խետ կեթա. °նունը տու՝ փեդն °ռ ձ՛եռըտ. °սված մե դ՛ուռ փագում՝ մեկելը բ՛ացում. °ռունը ջ՛ուր չըդ՛առնա. բիզը սըրօղին ա ծ°կում. բոշեն փաշա չըդ՛առնա, *փոխհարաբերություններ ներկայացնող միավորներ՝* °սում՝ հ՛ընչես կ°յնե դուշմընիտ դ՛ուռը, °սում՝ ջիգրիս խաթեր. քուրն °սավ՝ °խպեր ունեմ, °խպերն °սավ՝ քուր չունեմ. շ°նը զ°նում են, տիրոջը խաթըր են °նում. շունը շ°ն թ°թ չըծ°մա, *խրատական միավորներ՝* բըզի գ՛ըլխին գօմփով չեն զ°նի. գ՛իտունին գ՛երի հ՛ելի, °նգ՛ետին սիրելի մի հ՛ելի. խեր °ռեր ես՝ խերկուրուս մի °ռա. մեգ մի տու՝ երկու չուզա. մօրը տե՝ °խճիկն ուզա, *կանխատեսում ներկայացնող միավորներ՝* էտդ°վեն քо դ՛ուռն էլ կըչօքի. էտխըմորը լը շ°տջ՛ուր կըվերցանև:

Դարձվածքները, առածներն ու ասացվածքները տարածքից տարածք հանդես են բերում ընդհանրություններ և տարբերություններ: Այս միավորների առումով Բայազետի և շրջակա բարբառները երևան են հանում հետևյալ կարգի հարաբերություններ.

ա) դիտարկվող միավորների նույնականություն, օր. Բ. *Հ՛առտը խախտուդ, մըհանէն՝ կ°ոկութ* – Խ. *Առտը խախտուդ, մահանան կարկուտ*[855]. Բ. *Էրկու շուն կըռվան, ճ°մփոռթի բ՛անն °չ օղավ* – Ար. *Էրկու շուն կռվէցին, ճանփորթի բանն հաչ օղվավ*[856]. Բ. *°խճիկը խըլ ղի տ°ն ճըրաք ա* – Մ. *Ախչիգ խըլ ղի տան ճըրաք է*[857]. Բ. *°լ նի յէր, խընձըրախամն էլ վըրէն տըվեց* – Ալ. *Ալ նի էր, խանձրահամն էլ վրէն տվեց*[858]. Բ. *Մէկ կ°՝ խազար °ժի, խազար կ°՝ մէկ չ°ժի* – Վ. *Մէյ կայ խազար կաժէ, խազար կայ մէյ չաժէ*. Բ. *Հ՛անգըճիտ հիդեվը կըտէնաս, էտի չես տէնա* – Դ. *Հ°նգ՝ըճիտհէտըվը ն տէնաս, էտի չես տէնա*.

բ) դիտարկվող միավորների մասնակի տարբերություն, օր. Բ. *Դ°վէն խէձե, կուզէկուզ ամ°ն գ՛ալում* – Խ. *Դ°վ°ն խէծիր ի, կուզէկուզ ի շուռ իկ՝°լ ի* – Մ. *Դէվէն հէձէր է, կուզէկուզ կըփախի*. Բ. *Ջ՛ոչին լըսօղի վոտը քարին չառնի* – Ա. *Մէծին լսօղի վոտը քարին չի առնի*. Բ. *Մըկան շեռն էլ ջ՛ախճին օքուդ ա* – Մ. *Մըգան շեռ լէ ջ՛ախչին ֆայդա է*. Բ. *Ուրխընան խառսն ու փէսէն, էրկու ծուռ մէ գ՛եղէն* – Ալ. *Խնդանան հարսն ու փեսէն, երկու ծուռն ի մէկ գեղէն*. Բ. *Թախտիցըս փախնեմ, բ°խտիցըս դոր ալտի փախնեմ* – Վ. *Տախտէս էրթամ, բախտէ՞ս դոր էրթամ*. Բ. *Ծ°ն °նուն տու, փէդն °ռ ձ՛եռըտ* – Դ. *Անուն տուր, փէտ բ՛ըռնաձ՛եռըտ*- Խ. *Ծան անունը տու, փէտը վէրց*.

գ) զգալիորեն տարբերվող, բայց նույնիմաստ կամ մոտիմաստներով միավորներ, օրինակներ. Բ. *Ծունը թօփլ ալ օվ չըխատի* – Խ. *Ծան կաղալուն մի ավատա* Բ. *Կ°ոկութը ծէծուկ տեղն ա ծէծում* – Ա. *Անձրեվի ծեծածը կարկուտն էլ կը ծեծի*. Բ. *Ծունը շ°ն թ°թ չը ծ°մա* – Մ. *Ծուն շան միս չուդէ*. Բ. *Մէ չէն հազար խատխա°ժի* – Վ. *Չէն կը փոկի չարէն:*

Դարձվածային միավորների նույնականությամբ կամ նմանությամբ Բայազետի բարբառին ավելի մոտեն Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառները: Բերենք Խոյ-Մարաղայի հետ ընդհանրությունների օրինակներ. Խ. *Ասօղին լսօղ ի ալէտկ՝* – Բ. *°սօղին լըսօղ ա ալէտկ.* Խ.

---

[855] Այս բարբառի վերաբերյալ օրինակները քաղել ենք ԽԲ աշխատությունից:
[856] Այս բարբառի վերաբերյալ օրինակները քաղել ենք Ա.Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց» աշխատությունից:
[857] Մշո բարբառի վերաբերյալ օրինակները քաղել ենք ՄԲ աշխատությունից:
[858] Ալաշկերտի խոսվածքի և Վանի բարբառի վերաբերյալ օրինակները քաղել ենք Տ.Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հէքիաթներ» աշխատության 7-րդ գրքից (տե՛ս Տ.Նավասարդյանց, «Հայ ժողովրդական հէքիաթներ», գիրք 7, Թիֆլիս, 1891, էջ 88-93 և 108-112):

°վել թիք՝ °ն փոր չի ծակի – Բ. *Հ՛ ավել թիքէն փոր չը ծ°կա* Խ. *էշն ինչ ի իմանալ ի, նիւշն ինչ ի* – Բ. *Էշն ինչ գիդա, նուշն ինչ ա* Խ. *Իրէս տվին, աստառ էլ իւզեց* – Բ. *Հ՛իրես տըվին, °ստառ ուզում.* Խ. *Խաստրա°կ՝ մէ կ՝ին ի* – Բ. *Խաստուբ՛ արակ մէ գ՛ին ա* Խ. *Ծանդըռ տէղըտ մի թէթէվցիւ* – Բ. *Ծ°նդըր տեղըտմի թեթըվցու.* Խ. *Հայ-հայը կ՝ըն°ցիր ի, վայ-վայն ի մնացի* – Բ. *Հայ-հայը գ՛ացե, վայ-վայն ամ°ցե.* Խ. *Յարան տիրոշն ի ցավ տալ ի* – Բ. *Յարէն տիրոշն ա ցավ տ°լում.* Խ. *Շիւնը շընէն, երկուսն էլ մէ տընէն* – Բ. *Շունը շընէն, երկուսն էլ մէ տընէն.* Խ. *Քօռն ի՞շ կիւզի՝ երկու աչկ* – Բ. *Քօռն ինչ կուզա՝ երկու հ՛°շկ* ան: Դիտարկվող բարբառներում շատեն նաև բավականին լայն տարածում ունեցող դարձվածային արտահայտությունները: Բերենք մեկ-երկու օրինակ. Բ. *Գ՛ողը վոր տընից հ՛ըլնի, յեզն հ՛էռթըսից գ՛ըլնի* – Խ. *Կ՝ողը վոր տընէն ըլի, յէզն էրթըսէն կըխանէն* – Մ. *Գող օր տընէն էղի, յեզ յէրթըգէն գէլնա* Բ. *Ձ՛ին կ°պես ձ՛իյան կուշտ, յակըծան գ՛ըլնի, յաթ°փկան* – Խ. *Ծին ծիյան մոտը կապէս, յակըծան կըլի, յաթ°ֆկան* - Մ. *Ձ՛ին ձ՛իու մոդ կաբին, յաաքցան կէղի յա՝ կըձան.* Բ. *Ձ՛ըրի բ՛էրուկը ջ՛ուրն էլ կըտ°նա* – Ա. *Քամու բերածը քամին կը տանի* – Մ. *Քամու բ՛էրուգ քամին լէ կըտանէ.* Բ. *Ձ՛ու °ծան խավը կըչկըչան գ՛ըլնի* – Ա. *Ձու ածող հավը կըչկըչան կըլնի* – Մ. *Աձան հավ կըչկըչան կէղի.* Բ. *Մ°ռթի հ°շկն հ՛ըլնի, °նունը չըլնի* – Վ. *Մարթու աչկն էլնի, անունն չէլնի* – Խ. *Մառթու աչկը ըլի, անունը չըլի* – Մ. *Մարթու հ՛աչք հ՛էլնա, անունն չէլնա* – Ա. *Մարթու աչքը դուս գալ ավ ա, քանց անունը*:

3. ԲԱՌԱԿԱՁՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառաբարդում

Բարբառներում դրսևորվում են բառաբարդման և ածանցման՝ հայերենին հատուկ բոլոր եղանակները, գործառում են բառաբարդման և՛ վերլուծական, և՛ համադրական տեսակները: Բայազետի բարբառում ևս լայնորեն տարածված են վերլուծական բարդությունների երեք տեսակներն էլ՝ հարադրական բարդություններ, բաղիյուսական և կրկնավոր հարադրություններ[859]: Անվանական

[859] Բարդության այս տեսակների մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 232-241:

հարադրական բարդությունների օրինակներ. *հ՛էսօր-հ՛էքուց, ձ՛ուն ձ՛ըմըռնոցով, հ՛ըմէն ինչ, հ՛էքուց - մէկէլօր, հ՛աշկը կուշտ էն հ՛անդէն, յաթէ չէ, հ՛°շկի լուս, °սսու հ՛իր օր, թիզ ու կէս, խելքը գ՛ըլխին, հ՛°շկից յեռու, խեռը քեզնից, հ՛իր °ռեվին, °ռանադ՛օխծըվոր, հ՛իրսի զօռով, գ՛իշեր չուրլուս, վոտի վըր°* ևն: Բայական հարադրական բարդությունների օրինակներ՝ *գ՛ըլխի հ՛ընգնել, դ°ռդ °նել, յօլաէթալ, մէշկ մըշկի տալ, փոռցանքի գ՛ալ, զ°յլէն փախնել, հ՛իրան-հ՛իրան հ՛ըլնել, էթալ-գ՛ալ, տալ - °ռնել, վարել – ցանել, թ°լել – բ՛ըռնել, հ՛ընգել – հ՛ըլնել, վառել - թօղել*[860]: Բաղհյուսական բարդությունների օրինակներ. *փոր ու փըսոր, մէր ու քուր, բ՛էտու պըստիկ, խավ ու ճիվ, լէն-լըփօշ, քըռչ ու քավալ, քունջ ու պուճաղ, հզ ու թօզ, թել ու դ՛եռծան, յօրղան-դօշակ, ձ՛ուն – ձ՛ըմեռ, գ՛ող ու գ՛անգատ* ևն: Գավառ քաղաքի խոսվածքում այս կարգի բարդությունների *ու* շաղկապի դիմաց ունենք *ը*, ինչպես՝ *դ՛ուռը դ՛ուս, °խը դ՛ող*[861]: Բարբառում գործածական են նաև օտար բաղադրիչ պարունակող բաղհյուսական հարադրություններ՝ *խօրօտ – նըխշուն, նըխշուն - նիգ°ր, լալ ու կ°ռ, գ՛էշ - °ժբ°տես, բ՛ոգ – պօռնիկ, մ°ռթ - մ°դ°* ևն:

Կրկնավոր վերլուծական բարդությունների օրինակներ. *էրկու-էրկու, քիթ քըթի, քօռ-քօռ, հ՛իրան – հ՛իրան, քեզի – քեզի, ճիժ ու պիժ, °ռք ու փառք, գ՛ախի – բէգ՛ախի* ևն:

Բայազետի բարբառում ևս կցական համադրական բարդություններ ձևավորվում են շարահյուսական տարբեր կապակցություններից, ինչպես՝ *էսքան, հ՛էսօր, մէշտեղ, գուռբ՛ախ, էրկուտ°կ (որոշիչ - որոշյալ), մօրքուր, խօրոխպէր, տէք°րկընիկ, քըվորմ°ռթ, ք°ռուտըղա, Գըռիձ՛որ, Վիրիվանք* (հատկացուցիչ - հատկացյալ), *էսխետ, մէխէտով, ըստովդէն, գ՛ըլխըվեր, վըրվըզի, ինչպես նաև՝ դ՛էմէսդ՛էմ, բ՛էրնէբ՛էրան, տըմբէտուն, մըչէմէչ, դ՛ըսէդ՛ուս, բ՛անուման* (շարահյուսական այլ կապակցություններ)[862]: Կցական բարդություններ ձևավորվել

[860] Սրանց ավելի հանգամանորեն անդրադարձել ենք բայի կազմության մասին խոսելիս:

[861] Ի դեպ, այդպես է և Խոյ-Մարաղայի բարբառում, որտեղ նման կազմությունները ներկայացվում են իբրև համադրական բարդություններ, ինչպես՝ թիւք՝ըմուր, սէվըսուք, ախըտող (տե՛ս ԽԲ, էջ 149):

[862] Այս կարգի կցական բարդությունների մասին տե՛ս նաև Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, նշվ. աշխ., էջ 301-302:

են նաև հարադրական բարդությունների բաղադրիչների միացումով: Առանձնանում են հարադրական բայերից կամ լրացում+բայ կառույցներից առաջացած կցականները, որոնցում բայարմատը ստանում է *իկ* կամ *ան* ածանց[863], ինչպես՝ *°մանլ ըվիկ, ժեխթափիկ, բ՛ախքէրիկ, գ°յլ °տ°րիկ, ճ°նջխատրցրիկ, գ՛ըլ օխգ՛օվան, ժողովկըրան*: Կան նաև հարակատար դերբայից առաջացած կառույցներ (°ղդըրուկ, դ՛ասէթափուկ, բօյխօրուկ, դ՛ուսի՛ընգուկ): Բաղհյուսական հարադրություններից ձևավորված կցականներից են՝ *°չուձ՛ախ, բ՛անուգ՛ոռծ, դ՛արուփոս, յետուի՛առէջ, էքուվոռց, թուլութոք, թ°քուբիր, լէնուբօլ, կ°մուկ°g*[864], *խայուչէ, ձ՛ունուբ՛ուք, մ°ռթուկընիկ, շունուգ՛էլ, վոռթուբըլօջ* ևն: Կրկնավորներից կազմված կցականներ են. *թախտափ* (<թաւ թափել <*թափթափել)[865], *թառթափ* (<*թափթափ)[866], *կօտկօտ, մըզմըզ, բօռբըռան, զըմփզըմփան, էրէրմանք, կըժկըժան, գըռգըռալ, լըղլըղալ, ճըլճըլալ, մ°ժմըժել, օղըղել, փէլփըլալ, փօխփըխել* ևն:

Բայազետի բարբառում լայն տարածում ունեն թե՛ հոդակապավոր, թե՛ անհոդակապիսկական բարդությունները[867], ինչպես՝ *°ռնակօլօլ, խրրիշտակակոխ, ծ°մապթիկ, գ՛եղախրռիկ, °լըրթրթաղ, բ՛ացսիռտ, խացխարամ, գ՛ըրբ՛աց, գ՛էլխեխտ* ևն: Երբեմն հանդիպում են զուգահեռ ձևեր, ինչպես՝ *°ղջ՛ուր* և *°ղաջ՛ուր*, *°տամխատիկ* և *°դմախատիկ*, *գ՛ըլօխկօնձի* և *գ՛ըլխակօնձի*, *խաբարբըզիկ* և *խաբրաբըզիկ*: Ինչպես շրջակա բարբառներում, այնպես էլ Բայազետի բարբառում *ա*հոդակապի դիմաց երբեմն կարող է դրսևորվել *ը* (Բ.բ՛էր-

[863] Այս կարգի բարդությունների մասին տե՛ս նաև Մ.Աբեղյան, Երկեր, 2 հատոր, էջ 141-142:

[864] Արարատյան բարբառում՝ *կացուկամ* (տե՛ս ՀԳԲ, էջ 560): Ալաշկերտի խոսվածքում՝ *կաճ ու կամ* (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 222), Խոյ-Մարաղայի բարբառում՝ *կացըկամ* (տե՛ս ԽԲ, էջ 222):

[865] Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 164-166: *Թախթփել* ձևը արձանագրվել է նաև Վանի բարբառում (տե՛ս նշվ. աշխ., էջ 166), գործառում է նաև Արարատյան և Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում (տե՛ս սրանց նվիրված աշխատությունների բառացանկերը):

[866] Տե՛ս ՀԱԲ, էջ 159-160: Այս ձևն արձանագրվել է նաև Արարատյան, Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներում (տե՛ս սրանց նվիրված աշխատությունների բառացանկերը):

[867] Ի դեպ, Մ.Աբեղյանը, խոսելով հոդակապով և առանց դրա հանդիպող զուգահեռ ձևերին, նկատել է, որ «....հոդակապով ձևերը հատուկ են արևելյան բարբառներին, իսկ առանց հոդակապի ձևերն ավելի արևմտյան բարբառներին, որոնց հատուկ է բառամիջի «ա» ձայնավորի սղումը» (Մ.Աբեղյան, Երկեր, 2 հատոր, էջ 158):

նըկալ, Ա. ձ՛եռնըբ՛աց), իսկ Խոյ-Մարաղայի բարբառում սովորաբար գործառում է *ը* (~ա) հոդակապը[868]:

Ինչպես նկատվել է, եթե գրական լեզվում (գրաբարում և համաբանությամբ՝ աշխարհաբարում) անեզական բառերը բաղադրության մեջ են մտնում առանց ք-ի, ապա «....ժողովրդական լեզվի մեջ կան արդեն շատ բաղադրություններ, որոնց մեջ պահվում է վերջի Ք-ն»[869]: Բայազետի բարբառում ևս ք-ն պահպանվում է, ինչպես՝ *խել քակըտուր, մըտկափոխ, հ°շկաբ՛աց, °նեսկաբ՛էրան, խոսկաշէն* ևն: Ժամանակի ընթացքում ընկած հինհայերենյան *ն* վերջնահնչյունը բարբառումս ևս իսկական բարդություններում առկա է, ինչպես՝ *վոդնաման, ձ՛եռնամեղօվ, խառնաքուր* ևն:

Բարբառում գործառող իսկական բարդությունների բաղադրիչների հարաբերությունը ստորադասական է, առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է, բաղադրությունները կազմված են հայերենի բարդության կանոնով[870]: Առավել գործուն են իսկական բարդությունների ձևավորման բառակազմական հետևյալ կաղապարները.

1) *գոյական + բայարմատ*[871]. հիմնականում ձևավորվում են ածականներ, նաև գոյականներ, մակբայներ, ինչպես՝ *°ընխում, °ընլըվա, °նեսկատու, բ՛արէգմասէր, խել քակըտուր, ձ՛ընակօլ, վոդնակօտոր, մ°ռթախավան, բ՛էրնըկալ, խոտքաղ, ջ՛ըրտար, տըլվար, պ°տշ°ր,* 2) *գոյական + գոյական*. բաղադրիչների մեջ հիմնականում առկա է հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական հարաբերություն, սրանք առավելապես գոյականներ են, նաև ածականներ, ինչպես՝ *°ղաման, °լըրմ°ղ, իրավատեղ, խաղատուն, ճ°շախոտ, ջ՛ըրխոր, շ°քրաջ՛ուր, վոդնաման, ճընջըխամշար, °ներձ°ք, °ռսընքախամ* ևն, 3) *ածական + գոյական*[872]. բաղադրիչների մեջ առկաէ որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն. սրանք ածականներ են՝ կազմված հատկապես մարմնի մասերի և նրանց հատկանիշների անուններով,

[868] Տե՛ս ԽԲ, էջ 149:
[869] Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 159:
[870] Այս մասին տե՛ս նշվ. աշխ., էջ 164:
[871] Այս կաղապարը ամենագործունն էր գրաբարում և միջին հայերենում (տե՛ս Ռ.Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, էջ 181) և խիստ կենսունակ է ժամանակակից հայերենում (տե՛ս Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, նշվ. աշխ., էջ 332):

ինչպես՝ *ջ՛ախբ՛էրան, ծուռբ՛էրան, բ՛անցըրամըռութ, թուլսիռտ, ջ՛ոչգ՛ըլօխ, դ՛°ռն°ռուն, հ՛էրկէնքիթ, ծուռքիթ, ծ°կհ՛°շկ, խաստավիզ, խաստաքամակ, կ°կուղհ՛իրես*, նաև այլ կարգի բաղադրիչներով՝ *բ՛անցըրակըրունգ, ջ՛ոչաշէն, °ժբ°տես, լավամ°ռթ, վատամ°ռթ*: Այլ դեպքերում ձևավորվում են գոյականներ, ինչպես՝ *սիֆտըկխող, չօռթան, թըխտըմոր* ևն: Այս կաղապարի բաղադրություններում կարող են գործառել նաև հոգնակիանիշ կազմիչներով գոյականներ՝ *լէնպընշներ, ջ՛ոչվոդներ, լէնփէշեր, լ°մփ°ռվոդներ, լօշտագհ՛անգըժներ, բ՛արակպըռկըներ* ևն[873]: Հաճախ այս կաղապարի՝ մարմնի մասերի անուններով բարդությունները բարբառումս ունեն իրենց հոմանիշ բառակապակցությունները, որոնցում ածականը հաջորդում է գոյականին, ինչպես՝ *հ՛°շկը ծ°կ, հ՛°շկերը ջ՛ոչ, վիզը ծուռ, քիթը սուր, հ՛իրեսը կ°կուղ* ևն: Նման տիպի կապակցություններից այլ բարբառներում ձևավորվել են գոյական+ածական կաղապարի բարդություններ՝ *աչքածակ, բերանբաց, ձեռնաբաց* (Ա.), *աճկածագ* (Ալ.), *°շկըծակ, սըռտըպ°ց, ծէռնըպ°ց* (Խ.), *սրտբաց* (Վ.), *սրտնեղ* (Պլ., Ղր.) ևն:

Բարբառում գործառում են նաև այլ կաղապարներով իսկական բարդություններ, ինչպես՝ գոյական + ածական (հ՛առավնախառ, վոտբ՛օպիկ, դ՛ըրկեց, վոռբ՛աց, խօսկաշէն, մ°ռթանըման), ածական կամ մակբայ + բայարմատ (հ՛առչըկըտուր, կիսախուզ, պօռօտախօս, քըչակեր, չարադ՛ատ), բայահիմք + գոյական (հ՛°փս°թ°թիկ, գ՛անգըտբ՛էրան, էրէցախամ, խնձըրախամ), դերանուն + գոյական (հ՛ըմընօր, ս°ղօր), թվական + գոյական (խինգ°ստըղ, էրկուփոր), դերբայ + գոյական կամ ածական (գ՛ալտ°րի, գ՛ալբ՛արի, էթալբ՛արի, պ°ղուկբ՛էրան, ճօռթուկհ՛°շկեր) ևն: Իսկական մի շարք բարդություններ հանդես են գալիս միայն ածանցմամբ կամ էլ հարադրավոր բայերի կազմում[874], ինչպես՝ *սըռտխօվանք, կօտըշխրել, չոռսհ՛°շկանի, մըսկէրանք, էրկումըսըրքանի, հ°շկալուսանք, ճօլտախան °նել, խըրիշտակակոխ հ՛ըլնել, ձ՛ըվխեխտ °նել, °խաչոր հ՛ըլնել* ևն:

---

[872] Սաբավականին գործունկառույց է միջին հայերենում (տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 184):
[873] Այս կարգի իրողությունշրջակաորևէ բարբառումչի արձանագրվել:
[874] Համանման երևույթնկատվել է նաև միջին հայերենում (տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 188-189):

Բարբառում հազվադեպ են երկուսից ավելի արմատներ պարունակող բարդությունները, օր., *լուսումբթախառը, բ՛այլուսախառ*:

Շատ են նաև բնիկ ու փոխառյալ բաղադրիչներով բարդությունները: Օր.՝ *յեզասուլ, լենուբոլ, ծըռաֆորմ, ն°մախտ, յօլատ°րիկ, բ՛ըճբ՛եր, բոյխորուկ, գ°յլ°կուշտ, խաթրաշ°խ, ծ°նդրրդամաղ, կ°ռհ՛անգաճ, շուշ°թըխտել, շոռհ՛°շկ, ս°ղսիռտ, սըվաղգ՛ըթէլ, փէս°փայ* են: Կան նաև միայն փոխառյալ բաղադրիչներով տարբեր կարգի բարդություններ, ինչպես՝ *շոռ-բ՛օրակ, գէժուսուլ, գժաթ°վուր, ռ°նգ ու ռուշկ, չօքէչօք, բալթաբեղեր, բոլտու գայկա, գ°դ° - գուդ°, գ՛ախի – բէգ՛ախի, թոգ ու դուման, լալուկ°ռ, խաբար-ջուղաբ, կըս°գ°լ°ջի, յուպկաբլուզկա, յորղան-դոշ°կ, ջանօվ-ջամդըկօվ, քոռակ°յդի* են: Բայազետի բարբառին մերձավոր բոլոր բարբառներում հիմնականում գործում են բառաբարդման նույն օրինաչափությունները:

Ածանցում

Բայազետի բարբառում ևս ածանցումը առավելաբար դրսևորվում է վերջածանցների միջոցով: Գործառում են միայն ժխտական երկու նախածանցներ՝ *°ն* և *չ*: Բարբառիս ամենաարտադրողական ածանցներից է *°ն* մասնիկը, որ գոյականներից, հազվադեպ նաև՝ բայահիմքերից ձևավորում է ածականներ, ինչպես՝ *°ն°ղիկ, °ն°ղուխաց, °նարադ, °ն°ռուն, °նխամ, °նհ՛իրես, °նըզգա, °նբ՛ան, °նլըվա* են: Բաղհյուսական բարդությունների դեպքում նախածանցն ավելանում է երկու բաղադրիչների վրա էլ՝ *°նտէր - °նտիրական, °նձ՛էն-°նձ՛ու, °նբ՛ան-°նգ՛ոռծ*, բայց կարող է ավելանալ նաև միայն սկզբից՝ հարադրությունը վերածելով կցական բարդության, ինչպես՝ *°նլը-վասկթաի, °նձ՛եռուվոտ*: Անորոշ դերբայի ցանկացած դրսևորում կարող է ստանալ *°ն* նախածանց[875] և վերածվել մակբայի, երբեմն նաև ածականի, ընդ որում՝ երբ ստացված միավորներն ունեն մակբայական արժեք, համարժեք են անորոշ դերբայի և *առանց* կապի կապակցությանը, ինչպես՝ *°ն°սել - °ռանց °սել, °նէփել - °ռանց էփել, °նուտել - °ռանց ուտել*, իսկ երբ ունեն ածականական իմաստ, հա-

[875] Այդպես է և Ալաշկերտի խոսվածքում (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 47):

մարժեք են հարակատար դերբայի ժխտական ձևերին. *°նէփել – չէփուկ, °նգ՛ըրել – չըգ՛ըրուկ, °նկըդրել - չըկըդրուկ* ևն: *Ան* նախածանց ստանալով՝ հարադիր բայերի անվանական բաղադրիչները, ինչպես նաև բայերին նախորդող լրացումները միանում են բայական բաղադրիչին, ինչպես՝ *°նձ՛եռտալ, °նխացուտել, °նգ՛իրքկ°ռթալ, °նջ՛ուրտէնալ*: Զուգադիր բայերի բաղադրիչները ևս միանում են, ինչպես՝ *°նէթալգ՛ալ, °նուտելխըմել*, բայց ածանցը կարող է ավելանալ նաև երկու բաղադրիչներին էլ, ինչպես՝ *°նուտել - °նխըմել*: Փոխառյալ բառերը նույնպես շատ հաճախ ստանում են *°ն* նախածանց. *°նյօլագ°լդի, °ն°բուռ, °նիդարա, °նիլլաջ, °նշ°ռ, °նպօլ, °նջիգ°ր, °նֆ°յմ, °նպ°լտոն* ևն: Չ նախածանցը ունի սահմանափակ կիրառություն. *չըկամ, չըտես, չըբ՛եր, չունօղ-չունէվոր, չուզօղ, չըխօսկան*: Բարբառում գործառում է նաև փոխառյալ *բէ* ժխտական ածանցը, որ սովորաբար բաղադրություն է կազմում փոխառյալ բառերի հետ, ինչպես՝ *բէն°մուս, բէֆ°յմ, բէմուրազ, բէխէր, բէհալ, բէխաբար, բէքէֆ*: Ժխտական այս երեք նախածանցները գործառում են նաև շրջակաբոլոր բարբառներում: *Ան* նախածանցը անորոշ դերբայի հետ բաղադրություն կազմում է նաև Մշո, Դիադինի բարբառներում[876]: Ըստ ամենայնի՝ իրողությունը հատուկ է նաև Արարատյան (անկտրել, անխօսել, անկլպել, անհարել, անմտածել, աննշանդնել, անուտել), Վանի (անխալել, անմաղել, անցավել, °նխացուտիլ, °նքյ°ղ°նիլ[877]) բարբառներին, օրինակ կա նաև Խոյ-Մարաղայի բարբառում (անկըռէլ՝ անկտրել)[878]: Արարատյան բարբառում *բէ* ածանցը բաղադրություն կազմում է նաև հայերեն բառերի հետ, ինչպես՝ *բէհուշ, բէուսում*[879]:

---

[876] Այս դեպքում հիմք ենք ընդունում մեր սեփական դիտարկումները, նաև եղած աշխատությունների ու բառարանների տվյալները: Հետաքրքրական է, որ այս կարգի կազմությունների առատություն է վեր հանում ՀԳԲ-ն Թիֆլիսի բարբառում (տե՛ս ՀԳԲ, էջ 94-113):

[877] Վերջին երկու օրինակները վերաբերում են Մոկսի խոսվածքին, որտեղ ևս *ան* նախածանցը «....կարող է դրվել անորոշ դերբայով բառակապակցության ու հարադրական բարդության վրա՝ դրանք դարձնելով կցական բարդություն» (Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, հ. 1, էջ 138):

[878] Օրինակները քաղել ենք ՀԳԲ-ից (տե՛ս նույն տեղում):

[879] Տե՛ս ԱԲ, էջ 99:

Բայազետի բարբառում գործառում են հետևյալ վերջածանցները. *ա*[880] – *տը՛լ տը՛լ ա, ճըմճըմա, վոռցա*, հավանաբար նաև՝ *քըռքըռա* (կանաև՝ քըռ տալ). *ածուրիկ*[881] – կազմում է սակավաթիվ ածականներ՝ *գ՛ողածուրիկ, գ՛ըթածուրիկ, տըվածուրիկ, ջ՛օկածուրիկ. ական*[882] – կազմում է ածականներ՝ *խօրական, տընական, °տական*, և գոյականներ՝ *շինական, գ՛ախտական, սիրէական. ան*[883] – ձևավորում է ածականներ՝ *°ծան, թ°փկան, բօռբըռան, գ՛ըլօխգ՛օվան*, և գոյականներ՝ *մէրան, կըթան, թացան, գ՛ըռթան. անակ*[884] – ձևավորում է մակբայներ՝ *°խճըգնակ, կըզկընակ, ջ՛ոչանակ. անի*[885] - կազմում է ածականներ՝ *լիզվանի, չոռսի՛°շկանի, էրկուի՛արգանի. անց, նց, ոց*[886] – կազմում են գոյականներ՝ *ճ°նջանց, գ՛իշերանց, խընգնց, °մբըրոց, խառտոց, թըխկոց, °ռեվմըտոց. անց*[887] – ձևավորում է մակբայներ՝ *դ՛ըսանց, մըչանց, հ՛իրսանց, գ՛ըլխանց. անք*[888] – ձևավորում է գոյականներ՝ *°սկաթըքանք, հ՛°շկալուսանք, սըռտխօվանք. աշ* – կազմում է ածականներ՝ *մ°դդաշ, թըթվաշ. (ա)վարի*[889] – կազմում է մակբայներ՝ *գ՛եղավարի, տընավարի, մ°ռթավարի. (ա)վոր*[890] – ձևավորում է ածականներ՝ *°ռնակավոր, մըռմըռավոր, դ՛առցըվոր, դ՛օխծըվոր, կ°ռթըսվոր*, և գոյականներ՝ *սէլվոր, ջ՛ըրվոր, խըրվոր, բ՛ըռնավոր, տընվոր. ացի, էցի, ցի*[891] – կազմում են ածականներ և գոյականներ՝ *գ՛եղացի, հ՛արափացի, հ՛էրէվընցի, ըստեղացի,*

---

[880] Այս ածանցը արձանագրվել է նաև Վանի բարբառի Մոկսի խոսվածքում, օրինակներ. *ճ°ա՞*՝ ձախլիկ, *թ°փթ°փ՞*՝ թոնրի կողքից սահած հաց, *մուլ°*՝ ծեփ, *չուրուտն°*՝ չորս ոտանի և այլն (տե՛ս Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 137), Արարատյան բարբառում, ինչպես՝ *բ՛ըլբ՛ըլա* «փլվելու ենթակա շինություն» (տե՛ս ԱԲ, էջ 97): Գործառել է նաև միջին հայերենում (տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 199):

[881] Արձանագրվել է նաև Արարատյան բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:

[882] Արձանագրվել է նաև Խոյ-Մարաղայի բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:

[883] Արձանագրվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:

[884] Արձանագրվել է նաև Ալաշկերտի խոսվածքում:

[885] Արձանագրվել է նաև Արարատյան, Դիադինի բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:

[886] *Նոց* ձևը արձանագրվել է նաև Վանի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում: *Անց, ոց* ձևերը արձանագրվել են նաև Խոյ-Մարաղայի բարբառում, *օց* ձևը՝ Արարատյան բարբառում:

[887] Արձանագրվել է նաև Արարատյան, Դիադինի բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:

[888] Արձանագրվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:

[889] Արձանագրվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:

[890] Վոր (ւոր) ձևը արձանագրվել է նաև Վանի բարբառում: Արձանագրվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:

[891] Արձանագրվել է նաև Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում:

ս°ոէցի. (ա)ցու[892] – կազմում է ածականներ և գոյականներ՝ *մ°ռթացու, պիտանացու, քուֆտըցու, յուպկըցու. եկ, էկ*[893] – հանդիպում է քիչ բառերում՝ *յեղվընեկ, էրնէկ, միժնեկ. եղեն*[894] – կազմում է ածականներ և գոյականներ՝ *խըրեղեն, վոսկեղեն, կըտորեղեն. է*[895] – կերտում է ածականներ՝ *էրկըթէ, փէդէ, թըխտէ. էք* – ձևավորում է գոյականներ՝ *բ՛առցէք, նըշանդ՛ըրէք, օխտէք. ի*[896] – կազմում է ածականներ՝ *°լնի, հ՛առչի, վեռչի, հ՛իդի*, և գոյականներ՝ *աֆկըվոցի, լ°ոցի – բ՛ըռնոցի, թըռնոցի. իկ*[897] – կազմում է նվաստական իմաստով գոյականներ՝ *խէրիկ, մ°միկ, թ°թիկ, հ՛օռթիկ*, ձևավորում է գործիքների անվանումներ՝ *ջ՛առթիկ, բ՛ացիկ, բ՛ախքէրիկ, ճ°նջխատըցըրիկ. իչ*[898] – կազմում է ածականներ և գոյականներ՝ *վարաքիչ, խառնակիչ, սըրփիչ. իք*[899] – ձևավորում է գոյականներ՝ *գ՛ալիք, °սէլիք, կըշտընալիք. կան*[900] – կերտում է ածականներ՝ *լ°լկան, մըռսըկան, ճուրընգան*, և գոյականներ՝ *ուզընգան, տըղասկան. կոտ*[901] – կազմում է ածականներ՝ *°մչըկոտ, քընկոտ. ման*[902] – կազմում է ածականներ՝ *յեռման, վառման, յելման. մունք* – ձևավորում է գոյականներ՝ *սըխալմունք, մըտածմունք. նեց*[903] – կերտում է մակբայներ՝ *հ՛իրկընեց, հ՛առավնեց, ցէրէգնեց. ոն, ոնք*[904] – ձևավորում են գոյականներ՝ *փիդոն, ա°ռզոն, ծէփոն, շըռճոնք. ոռթ, օռթ*[905] – կազմում է գոյականներ՝ *ա°քսոռթ, հ՛ավել-*

---

[892] Արձանագրվել է նաև Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[893] Սրա գործառությունը արձանագրվել է միջին հայերենում (տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 202):
[894] Դիտվել է նաև Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[895] Արձանագրվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[896] Արձանագրվել է նաև Ալաշկերտի խոսվածքում:
[897] Դիտվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[898] Արձանագրվել է նաև Խոյ-Մարաղայի բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:
[899] Արձանագրվել է նաև Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[900] Արձանագրվել է նաև Արարատյան բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:
[901] Արձանագրվել է նաև Արարատյան բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:
[902] Արձանագրվել է նաև Արարատյան, Վանի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[903] Գործառում է Արարատյան բարբառում (տե՛ս ՀԼԲԲ, հ. 2, էջ 189), նաև՝ Դիադինի բարբառում:
[904] Արձանագրվել է նաև Արարատյան բարբառում:
[905] Արձանագրվել է նաև Դիադինի բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:

նոռթ, միժնոռթ, ածականներ՝ *օղոռթ, ձ՛ախոռթ. ոտ*[906] – կերտում է ածականներ՝ *°ոկոտ, գըռխոտ, ձ՛ընոտ. վոր*[907] – հանդես է գալիս ժամանակի մի քանի անունների բացառականում՝ արտահայտելով տևականության գաղափար՝ *հ՛իրկըվորէ, գ՛իշերվորէ, խէրվորէ*[908], *ու*[909] – կազմում է ածականներ՝ *ծ°խու, կըթու, մըչու*, մակբայներ՝ *հ՛ախու, °մօթու, կըսկըծու. ութկ*[910] – *բ՛ընութկ, սօվօրութկ. ութուն*[911] – կազմում է գոյականներ՝ *°նտիրութուն, ջ՛օչութուն, լավութուն. ուկ*[912] – կազմում է ածականներ՝ *թըռուկ, տ°փուկ, կ°դղուկ*, նաև գոյականներ՝ *չօրուկ, աբչուկ, իշավոդնուկ. ում*[913] – ձևավորում է գոյականներ՝ *°զատում, աբռծում, կըշտում. ուն*[914] – կազմում է գոյականներ՝ *°ղուն, մ°ծուն, կ°ակըպուն*, ածականներ՝ *խաքուն-խըփուն, ճըլաբտուն. ուշկ*[915] – կազմում է գոյականներ՝ *դեղնուշկ, սիֆտըկուշկ. ուց - թ°զուց, մըկավնուց. ք /կ/*[916] – կազմում է գոյականներ՝ *լէնք, հ՛էրկէնք, լըվասկ. օ*[917] – անձնանուններից կազմում է կոչական ձևեր՝ *Ս°քօ, Հայկօ, Հասօ. օղ*[918] – կազմում է գոյականներ՝ *գ՛ըրօղ, սիրօղ, ուզօղ*, և ածականներ՝ *հ՛իմացօղ, սօրվօղ, խըմօղ. օվ* – ձևավորում է ածականներ՝ *գ՛ըլխօվ, հ՛իրսօվ*, մակբայներ՝ *զօռօվ, թափօվ*, գոյական՝ *կ°թնօվ. օվի*[919] – կազմում է ածականներ՝ *ծ°լօվի, քըցօվի, ջ՛ըրօվի*: Գործառում են նաև փոխառյալ վերջածանցներ, ինչպես՝ *չի* (ն°խըռչի, խ°ն°քչի, փըռնըչի), *լու* (նըշանլու, ս°վդ°լու, յարալու)[920]: Մի շարք ածանցներ էլ հանդիպում

---

[906] Դիտվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[907] *Վորէ* ձևը արձանագրվել է նաև Խոյ-Մարաղայի բարբառում:
[908] Խոյ-Մարաղայի բարբառում ևս գործառող համանման ձևերը Մ.Ասատրյանը համարում է մակբայներ (տե՛ս ԽԲ, էջ 139):
[909] Արձանագրվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[910] Ալաշկերտի խոսվածքում՝ *ուտկ*:
[911] Վանի բարբառում՝ *ութեն*, Խոյ-Մարաղայի բարբառում՝ *թոն*, Դիադինի բարբառում՝ *ութուն*, Ալաշկերտի խոսվածքում՝ *ուտեն*:
[912] Դիտվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:
[913] Արձանագրվել է նաև Խոյ-Մարաղայի բարբառում:
[914] Արձանագրվել է նաև Վանի բարբառում, Ալաշկերտի խոսվածքում:
[915] Արձանագրվել է նաև Արարատյան բարբառում: Ավելի շատ բառեր այս ածանցով կազմվում են Խոյ-Մարաղայի բարբառում, ինչպես՝ *կաթուշկ, տէղնուշկ, տ°ռնուշկ, պէտուշկ, ծէթուշկ* (տե՛ս ԽԲ, էջ 152):
[916] *Ք*-ն արձանագրվել է նաև Արարատյան բարբառում, *կ*-ն՝ Ալաշկերտի խոսվածքում:
[917] Գործառում է նաև Վանի բարբառում:
[918] Արձանագրվել է նաև Դիադինի բարբառում:
[919] Արձանագրվել է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում:
[920] Գործառում են նաև Ալաշկերտի խոսվածքում (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 47-49):

են միայն գրական հայերենից փոխառյալ բառերում (հայէրէն, Հայաստան, դադարան, պ°յեստ, մօտավօրապէս, ծ°ղրածու, կիսատ, հավաքարար, ուժեղ, վայրենի[921], յերգըռօռթ, ծընունդ, թիկունք ևն): Օտար լեզուներից փոխառյալ բառերում գործառում են դրանց բնորոշ ածանցներ (մ°տօռիստ, կ°մանդիր, բալէշչիկ, ն°սիլկա): Սակայն բարբառում ավելի շատ են բնիկ ածանցներով ու փոխառյալ բառերով կազմությունները, ինչպես՝ *մըխտըռութուն, թ°ռս°ն°կ, նըխշըռտուն, ջիգրօվ, գօռին, զօռօվ, ըզի, թ°սիբօվ, կ°լբութուն, գ°դ°վարի, գօզ°լական, գօզլըկավոր, դ°ռդոտ, դըրբօվ, թ°քնոց, թօզոտ* ևն:

Բառակազմական գործունդեր ունեն նաև *ել, ալ* բայածանցները, որոնցով կազմվում են բազում բայեր տարբեր խոսքի մասերի բառերից ու հիմքերից՝ *զատընալ, գ՛ալել, գ՛ըլխել, գ՛ըլխըվըրել, թափօվնալ, կ°նթել, կըշտըպընդել, խավսըրել, յետընալ, մօտկընալ, խօվնել, մըտկել*, նաև՝ փոխառյալ բառերից՝ *դ°ստել, թ°զընալ, թ°րգել, բազըռել, բաթմըշվել, բիծընալ, բօմբել, զաբընել, զօռել, թ°ռսըվել, թօփլալ, խէրե*

[921] Բայազետի բարբառում ծառերի անվանումները արտահայտվում են բառա-

ԳԼՈՒԽ IV

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՇՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Հայերենի բարբառները զգալի յուրահատկություններ ունեն ձևաբանական համակարգում[922]: Դրանք արտահայտվում են քերականական կարգերի դրսևորումներում, բայց շատ դեպքերում էլ ներկայանում են իբրև բառային միավորների քերականական գործածության առանձնահատկություններ: Քերականական յուրահատկություններ դրսևորվում են թեքվող խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, դերանվան, բայի ոլորտներում, իսկ բառային միավորների գործառական յուրահատկություններ երևան են գալիս չթեքվող խոսքի մասերի շրջանակներում:

1. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Բարբառներում գոյականի դրսևորումների յուրահատկություն-ները արտահայտվում են ըստ թվի, հոլովի և առկայացման կարգերի: Դիտարկվող բարբառներում ևս գոյականի թվի կարգը ունի հակադիր երկու եզր՝ եզակի և հոգնակի, հոլովի կարգը ունի առավելագույնը հարացուցային յոթ միավոր, իսկ առկայացման կարգը դրսևորվում է հոդերի միջոցով:

կապակցությամբ՝ *խընձորի ծ°ռ, տինձի ծ°ռ, թըթի ծ°ռ, պոպոքի ծ°ռ* և այլն:

[922] Այս մասին տե՛ս նաև Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 135:

1.1. *Թվի կարգը*

Բայազետի բարբառում հիմնական հոգնակերտներն են *եր* և *ներ* վերջավորությունները[923], որոնց գործառության ոլորտները առավելաբար որոշվում են բառերի վանկաքանակով (այդպես է և մյուս բարբառներում): Որպես կանոն՝ *եր* հոգնակերտ ստանում են միավանկ բառերը (ձ՛ու – ձ՛ըվեր, շուն – շըներ), իսկ *ներ* հոգնակերտ՝ բազմավանկ բառերը (°տամ - °դմըներ, ծ°ղիկ – ծ°խկըներ)[924]: Հինհայերենյան բառավերջի *ն* հնչյունը կորցրած միավանկ բառերի հոգնակիի կազմության ժամանակ այդ հնչյունը որպես կանոն վերականգնվում է[925]. °*կ* - °*գներ, խառս – խառսներ, մ°տ – մ°դներ*: Թերևս այս բառերի նմանությամբ հոգնակիում *ն* - ի հավելումեն ունենում միավանկ *ծ°ռ, բուդ, բ՛ութ* (բոյթ[926]) բառերը՝ *ծ°ռներ, բըդներ, բ՛ըթներ*[927]: *Ծառ* բառի հոգնակին *ներ* մասնիկով է կազմվում նաև Խոյ-Մարաղայի, Վանի, Դիադինի բարբառներում, Լոռու, Ալաշկերտի և Ծատախի խոսվածքներում[928]: *Ծառներ* հոգնակիի ձև արձանագրվել է միջին հայերենում[929], որը նշանակում է իրողության բավականին հնություն[930]: Բայազետի բարբառում գաղտնավանկով ավարտվող բառերի հոգնակին ձևավորվում է *ներ* հոգնակերտով. °*ստըղ* - °*ստըղներ, տէդըր* - *տէդըրներ*: Այդպես է նաև Դիադինի բարբառում[931]: Ըստ Ռ.Մարկոսյանի՝ նման մի շարք դեպքեր

---

[923] Հայտնի է, որ աշխարհաբարյան *եր* և *ներ* հոգնակերտները հինհայերենյան *եար* և *նեար* մասնիկների հետագա զարգացումն են ներկայացնում (տե՛ս նաև ԼՔՀԼ, հ. 3, էջ 710, 737): Ըստ Ա.Ղարիբյանի՝ բարբառների ընդհանուր հոգնակին է *եր* մասնիկը, և համարյա չկամի բարբառ, որ այդ հոգնակին չունենա: Համարյա բոլոր բարբառներում կարելի է գտնել *ներ* հոգնակին, որը կազմված է *ն* և *էր* հոգնակիացույց մասնիկներից (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 137):

[924] Այս հոգնակերտների գործառական նման տարբերակումը, ըստ Ս.Ղազարյանի, կատարվել է 15-16-րդ դարերից հետո (տե՛ս Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, էջ 234-235):

[925] Այդպես է նաև Վանի, Մշո, Դիադինի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում: Այդպես էր և միջին հայերենում (տե՛ս, ԼՔՀԼ, հ. 3, էջ 708):

[926] Հ.Աճառյանը վկայում է նաև *բոյթն* ձևը (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 466):

[927] Այս դեպքում թերևս առկա է նաև *մ°տներ* ձևի համաբանական ազդեցությունը:

[928] Միավանկ սակավաթիվ այլ բառեր *ներ* հոգնակերտ են ստանում Վանի (թմբներ), Արարատյան (ճըղնէր, վըզնէր), Խոյ-Մարաղայի (մառթ - մառնէր), Մշո (վիզ - վըզներ) բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում (գ՛ինդ – գ՛ընդըներ, գ՛ունդ – գ՛ընդըներ, լինդ – լընդըներ, թումբ – թըմբըներ, լուձ - լըձներ):

[929] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 57:

[930] *Ծառնէր* հոգնակի ունեն նաև Կարնո (տե՛ս Հ.Մկրտչյան, Կարնո բարբառը, էջ 44), Նոր Ջուղայի (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 734) բարբառները:

[931] Տե՛ս ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 8ա տետր (Դիադին):

կան նաև Արարատյան բարբառում (աստղներ, վագրներ, տեքրներ)[932], ըստ Ս.Բաղդասարյան-Թափալ ցյանի՝ նման բառերը իր դիտարկած խոսվածքներում ստանում են *էր* (սանդրռէր, աստղէր, մանդրռէր), բայց կարող են ստանալ նաև *նէր*[933]: Մեկուկես վանկանի բառերը, ըստ Ք.Մադաթյանի, *եր* հոգնակերտ են ստանում Ալաշկերտի խոսվածքում (վագրեր, աստխեր)[934], մինչդեռ Ս.Բաղդասարյանը Մշո բարբառում վկայում է *ներ* հոգնակերտով ձևեր (մանդրներ, ծանդրներ)[935]: ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 7 տետրում վկայված են Վանի բարբառի *աստղեր*[936], *սանդրներ, մանդրներ* ձևերը, իսկ թիվ 302 տետրում՝ Խոյ-Մարաղայի բարբառի *աստղքէր, սանդրքէր, մանդրքէր* ձևեր[937]: Նման բառերի հոգնակիի կազմության զուգաձևություններ գրական արևելահայերենում դիտարկել է Մ.Ասատրյանը[938]:

Բայազետի բարբառում միավանկ արմատով ավարտվող բաղադրյալ բառերի հոգնակին որպես կանոն ձևավորվում է *ներ* մասնիկով. *ջրրխորներ, մորքուրներ, յեռագրներ, օրագրներ*, նաև՝ *ճ°ռախոսներ, մրտկափոխներ, թրխտրբացներ*, բայց կան նաև *եր* վերջավորությամբ ձևեր՝ հավանաբար միավանկ գոյականի հստակ գիտակցման կամ գրական լեզվի ազդեցությամբ, ինչպես՝ *խաշքարեր, խացատներ, ս°բնաջ´ըրեր*: Գրեթե նման իրավիճակ է Ալաշկերտի խոսվածքում (խաճքարեր, կալատէղեր, շընմազեր, բայց՝ ջ´ըհորներ, չօռտընները)[939], Դիադինի[940] և Վանի[941] բարբառներում: Արարատյան բարբառում միավանկ գոյականով ավարտվող բառերը որպես կանոն ստանում են *եր*, ինչպես՝ *մորքուրէր, մառթակէլէր, ցորէնհացէր*, չնայած նաև՝ *հորքուրնէր, մորքուրնէր*[942]: Մշո բարբառում միավանկ

[932] Տե՛ս ԱԲ, էջ 104: Նույնը վկայվում է նաև ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 9 տետրում (Փարպի):
[933] Տե՛ս ՄԲ, էջ 82-83:
[934] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 70:
[935] Տե՛ս ՄԲ, էջ 19:
[936] Միջին հայերենում վկայված են *աստղ* բառի հոգնակիի երկու ձևերն էլ՝ աստղեր, աստղներ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 49, 57):
[937] Ըստ Մ.Ասատրյանի՝ այս բարբառում «բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը հոգնակի կազմելիս խոսվածքների մի մասում ստանում են *քյէր* մասնիկը (օր. Արտաշատի շրջ. Վերին Արտաշատ գյուղ), իսկ մի մասում՝ *նէր* մասնիկը (օր. Էջմիածնի շրջ. Արագած գյուղ)» (ԽԲ, էջ 67):
[938] Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983, էջ 55:
[939] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 71:
[940] Տե՛ս ՀԲԱ թիվ 8 տետր:
[941] Տե՛ս ՀԲԱ թիվ 7 տետր:
[942] Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալ ցյան, նշվ. աշխ., էջ 83, ՀԲԱ թիվ 9 տետր:

գոյականով ավարտվող բազմավանկ բառերը խառը կերպով կարող են ստանալ *եր* և *ներ*, ինչպես՝ *հօրքուրեր / հօրքուրներ, սանահէրեր / սանահէրներ, անէրձ՛ըքէր / անէրձ՛ըքներ* ևն[943]:

Ու, օ, է ձայնավորներով ավարտվող բազմավանկ բառերը Բայազետի բարբառում իրենց հոգնակին կազմում են *ներ* մասնիկով[944]. *հ՛առու – հ՛առվըներ, թըթու – թըթուներ, վէդրօ – վէդրօներ, °դէ - °դէներ, աՓպէ - աՓպէներ*: Որպես կանոն, այդպես է նաև Մշո, Արարատյան, Դիադինի բարբառներում: Խոյ-Մարաղայի բարբառում ընդհանրապես ձայնավորով ավարտվող բազմավանկ բոլոր բառերը ստանում են *նէր* մասնիկ[945], իսկ Վանի բարբառում՝ *ք՝* մասնիկ[946]: Ընդ որում՝ Վանի բարբառում գործառում են զուգահեռ ձևեր՝ *հ՝տեր*, երբեմն նաև՝ *ներ* մասնիկներով[947]: Բայազետի բարբառում *ա, °, ի* ձայնավորներով ավարտվող բազմավանկ բառերը իրենց հոգնակին կազմում են *ք* մասնիկով[948]. *°գռա - °գռէք, կըս° - կըսէք, քախկըցի – քախկըցիք*: *Ի* ձայնավորով ավարտվող բառերը իրենց հոգնակին կարող են կազմել նաև *ներ* մասնիկով՝ *գ՛ինիներ, հէրէվընցիներ* ևն: Արարատյան, Մշո, Դիադինի, Վանի բարբառներում ևս *ի, ա* ձայնավորներով ավարտվող բառերը հոգնակին կազմում են *ք* մասնիկով (որից առաջ թե՛ հին, թե՛ նոր բառաշերտերի բառավերջի *ա*-ն, ինչպես Բայազետի բարբառում, դառնում է *է*): Հինհայերենյան ընդհանուր հոգնակերտ *ք*-ի առանձին գործածությունը թեև բարբառներում ավելի սահմանափակ բնույթ է կրում[949], բայց այն հանդես է գալիս բոլոր բաղադրյալ հոգնակերտների կազմերում:

Բայազետի բարբառում գործառում են նաև հոգնակերտայլ մասնիկներ, որոնք, սակայն, ունեն շատ ավելի սահմանափակ տարածում: Դրանք են՝ *անք, վանք, ռանք, տանք / տիք, ստանք, երք: Անք* հոգնակերտ Բայազետի բարբառում ստանում է *ձ՛ի* բառը՝*ձ՛իյանք*: Այդպես է և

---

[943] Տե՛ս ՄԲ, էջ 77-78:
[944] Գավառ քաղաքի խոսվածքում հանդիպում են նաև *ք* հոգնակերտով ձևեր, ինչպես՝ *°ֆտոք, վէդրոք*:
[945] ԽԲ, էջ 67-68:
[946] Տե՛ս ՔՎԲ, էջ 111-112:
[947] Նույն տեղում:
[948] Միջին հայերենում ևս *ա, ի* ձայնավորներով ավարտվող բառերի հոգնակին կազմվում էր *ք* հոգնակերտով (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. ածխ., էջ 236):
[949] Այդպես էր արդեն միջին հայերենում: Ինչպես նշում է Հ.Աճառյանը, «Հին հայերենի *ք* վերջավորությունը Կիլիկյան հայերենում թեև գոյություն ուներ, բայց սահմանափակված էր միայն ձայնավորով հանգող բառերի համար» (ԼՔՀԼ, հ. 3, էջ 706):

Դիադինի բարբառում՝ *ձ՛իյանքʲ*: Ծրջակամյուս բարբառներում այս հոգնակերտը ստանում են սակավաթիվ այլ բառեր ևս, ինչպես՝ Մ. *ձ՛իանք, գ՛իլանք, իշանք, իձանք*[950],Վ. *ծիանքʲ*, *ճոճ°նքʲ*, Խ. *ծիյանք, յէզնանք*, Ա. *յէզանք*: Արարատյան բարբառի որոշ և Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքներում *անք*-ի դիմաց արձանագրվել է *ան* հոգնակերտ՝ *ձիյան, գիլան, իշան* (Փ.)[951], *գ՛իլան, ձ՛իան* (Ալ.)[952]: *Իշան, ձիան* հոգնակիներ արձանագրվել են նաև միջին հայերենում[953]: Գրաբարում արձանագրվել են ինչպես *իշան*, այնպես էլ *իշանք* ձևերը[954]:

Վանք հոգնակերտ ստանում են մի շարք միավանկ բառեր, ընդ որում՝ բոլոր այդ բառերում տեղի է ունենում *է > ի* հնչյունափոխություն. *էծ – իծվանք, գ՛էլ – գ՛իլվանք, դէլ - դիլվանք, էշ – իշվանք, ծէր - ծիրվանք, տէր – տիրվանք*: Այս հոգնակերտը գործառում է նաև Մշո (իշվանք, իձվանք, ճիդվանք), Վանի (իշվանքʲ, տիրվանքʲ), Դիադինի (իշվանքʲ, գ՛իլվանքʲ) բարբառներում: Արարատյան բարբառում այն վկայված չէ, իսկ Խոյ-Մարաղայի բարբառի համար բերվում է *փըշըրվանք* (փըշիւր) օրինակը[955]: Ալաշկերտի խոսվածքում այս հոգնակերտի դիմաց գործառում է *վան* մասնիկը (իձվան, իշվան, գիժվան, ճիդվան)[956]: Միջին հայերենում այս մասնիկով վկայված է *իշվանք* ձևը[957]: *Վանք* հոգնակերտը ծագումնաբանական ընդհանրություն ունի *ան > անք* մասնիկների հետ: Այդ մասին նախև առաջ վկայում է այն, որ տարբեր բարբառներում այդ մասնիկներով ձևավորվում են նույն բառերի հոգնակիները՝ *գ՛իլվանք, իշվանք - գ՛իլանք, իշանք - գիլան, իշան*: Ըստ Հ.Աճառյանի՝ *վանք* հոգնակերտում *վ* տարրը ներկայացնում է *վի* հոգնակերտ նասնիկը[958]: Այդպես է կարծում նաև Գ.Ջահուկյանը[959]:

---

[950] Ինչպես վերևում տեսանք, Մշո բարբառում հանդիպում են նաև *իշվանք, իձվանք* ձևերը:
[951] Տե՛ս ՀԲԱ թիվ 9 տետր (Փարպի):
[952] Բայազետի բարբառին *ան* հոգնակերտ է վերագրել Ա.Ղարիբյանը՝ *իշան, ձիան* (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 137), նրա հետևողությամբ՝ նաև Ա.Գրիգորյանը (Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 100), սակայն մենք Բայազետի բարբառի որևէ խոսվածքում նման ձևեր չենք արձանագրել:
[953] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Բ, էջ 59:
[954] Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 20:
[955] Տե՛ս ԽԲ, էջ 74:
[956] Տե՛ս Ք.Մադաթյան, էջ 71:
[957] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ.Բ, էջ 60:
[958] ԼՔՀԼ, հ.3, էջ 778:
[959] ՀԲՆ, էջ 82:

Բայազետի բարբառի առումով նման մեկնաբանությունը մեզ անհամոզիչ է թվում: Հայտնի է, որ բարբառներում *վի* մասնիկը գործածվում է մարմնի զույգ անդամներ ցույց տալու համար, այսինքն՝ ունի երկակիության իմաստ[960]: Այդ իմաստը որևէ առնչություն չունի բերված հոգնակիների հետ: Բացի այդ, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Դիադինի և Արարատյան բարբառներում երկակիության իմաստի և *վի* մասնիկի որևէ հետք չկա[961]: Սակայն Բայազետի բարբառի *վանք* հոգնակերտում *վի* մասնիկի բացակայությունը պարզ է դառնում հատկապես հետևյալ դիտարկումներով: Նախ նշենք, որ ինչպես Բայազետի, այնպես էլ այլ բարբառներում հոգնակի ուղղականը առանձին դեպքերում կարող է կազմվել ոչ թե եզակի ուղղականից, այլ եզակի սեռականից: Օր., Բայազետի բարբառում *հ՛առու, լիզու, կ°տու* բառերի եզակի սեռականի ձևերն են *հ՛առվի, լիզվի, կ°դվի* (*ու* < *վ*), որոնցից էլ, կարծում ենք, կազմվում են հոգնակիի ձևերը՝ *հ՛առվներ, լիզվներ, կ°դվներ*[962]: Եզակի

[960] ԼՔՀԼ, հ. 3,, էջ 712, 805:

[961] Վանի բարբառում այդ հետքը կա *վեր* հոգնակերտում, որով իրենց հոգնակին կազմում են մարմնի մասերի մի շարք անուններ՝ ճեղվեր (ջղեր), ընքʲվեր (ունքեր), ճայվեր (ճանկեր), հընթվեր (անութներ) և այլն (տե՛ս ՔՎԲ, էջ 113): Մշո բարբառը թեև ունի երկակիության իմաստի դրսևորում *վի* մասնիկի միջոցով (տե՛ս ՄԲ, էջ 77), սակայն այս բարբառի Ալաշկերտի խոսվածքին, որը սահմանակից է Բայազետի բարբառին, երևույթը անծանոթ է:

[962] Հոգնակիի նման ձևեր արձանագրել են նաև շրջակա բոլոր բարբառներում՝ առանց կապտեսնելու եզակի սեռականի և հոգնակի ուղղականի միջև: Հ.Աճառյանը, երևույթը դիտարկելով Վանի բարբառում, գտնում է, որ *լէզվներ, կատվներ* և նման ձևերում *ներ* մասնիկը եզակիին կապվում է *վը*-ով (տե՛ս ՔՎԲ, էջ 112): Մեզ համար անընդունելի է նաև երևույթին Հ.Աճառյանի տված բացատրությունը Նոր Ջուղայի բարբառի առնչությամբ. «*Ու* վերջացող բազմավանկ բառերը բացի սովորական *ք* ձևով հոգնակիից՝ ունենում են նաև մի երկրորդ ձևի հոգնակի, որ կազմվում է *-ընէր* մասնիկով և որի առաջ եզակիի *ու* ձայնավորը դառնում է *վ*. օր. առու > առու, առուք, առվընէր....» (ԼՔՀԼ, հ. 3, էջ 735): Այս կարգի ձևերը Խոյ-Մարաղայի բարբառում դիտարկելով՝ Մ.Ասատրյանը գրում է, որ բառավերջի *ու* – ն փոխվում է «*վ* – ի, որ *նէր* մասնիկի հետ կապվում է *ը* – ով, ինչպես՝ *լէգիւ* – *լէգվընէր*» (ԽԲ, էջ 74): Իր «Շատախի բարբառը» աշխատությունում Մ.Հ.Մուրադյանը գրում է. «-*ու* ձայնավորով վերջացող գոյականները հոգնակին կազմում են -*ներ* մասնիկով, ըստ որում, բառավերջի *ու* – ն ընկնելով գաղտնավանկ *ը* – ից առաջ, ինչյունափոխվում է *վ* – ի. օրինակ՝ *լէգու* – *լէգվըներ*, *առու* - *առվըներ, կատու* – *կատվըներ*» (Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, Ե., 1962, էջ 87): Նման մեկնաբանությամբ անհասկանալի է մնում, թե *ու* ձայնավորով ավարտվող բառի և *ներ* հոգնակերտի միջև որտեղից և ինչու է հանդես գալիս «գաղտնավանկ *ը*»: Անորոշ ու անհամոզիչ այս բացատրությունների փոխարեն, կարծում ենք, ճիշտ կլինի պնդել, որ բարբառներում *ու* հնչյունով ավարտվող բառերի հոգնակի ուղղականը ձևավորվում է եզակի սեռականից, որտեղ էլ տեղի է ունենում *ու* > *վ* հնչյունափոխություն *ի* մասնիկից առաջ: Հոգնակի ուղղականի՝ եզակի սեռականից կազմությունը խորթ չէ գրաբարին, ինչպես՝ *դուստր* – *դստեր* – *դստերք, աղբիւր* – *աղբեր* – *աղբերք, բարձր* – *բարձու* – *բարձունք, աւր* – *աւուր* – *աւուրք* ևն: Հ.Աճառյանը նման օրինակներ դիտարկել է նաև միջին հայերենում՝ գրելով. «-Ութիւն վերջացող վերացական բառերը հոգնակին կազմում են ոչ թե ուղղական, այլ սեռական ձևի վրայից. օր. աչցվութեներ,

սեռականից է կազմվում *քըվորտանք* հոգնակին, որտեղ *տանք* հոգնակերտից առաջ ունենք եզակի սեռականի *քըվոր* (քուր – քըվոր) ձևը[963]: Ուրեմն, *իծվանք, գ՛իլվանք, դիլվանք, իշվանք, ծիրվանք, տիրվանք* հոգնակիները կարող են ձևավորված լինել ոչ թե եզակի ուղղականից, այլ եզակի սեռականից: Այս տեսակետը պնդելու համար հիմք կարող է ծառայել բերված հոգնակիներում առկա *է > ի* հերթագայությունը, որը հայերենում որպես կանոն դրսևորվում է հոլովման, բառաբարդման ու ածանցման, բայակազմության ժամանակ. օրինակ՝ գրաբ. *էշ > իշոյ, մէջ > միջոց, հանդէս > հանդիսի, սէր > սիրել*, աշխ. *տեր > տիրոջ, տիրել, տիրակալ, էշ > իշաբեռ, էջ > իջնել*, բրբռ. *էշ > իշու* կամ *իշի*, *կէս > կիսրար, էծ > իծարած, գ՛էլ > գիլակեր* ևն: Թե՛ արդի գրական հայերենում, թե՛ բարբառներում եզակի ուղղականից հոգնակի ուղղական ձևավորելու դեպքում *է > ի* հնչյունափոխություն տեղի չի ունենում (գրկ. վեճ > վեճեր, կես > կեսերին, տեր > տերեր, Բ., Ալ. դ՛էզ > դ՛էզեր, գ՛էլ > գ՛էլեր, ծէր > ծէրեր): Հետևում է, որ *իծվանք, գ՛իլվանք* տիպի հոգնակիները եզակի ուղղականից չէ, որ կազմվում են: Մնում է փաստել, որ *անք* հոգնակերտից առաջ *վ* մասնիկը եզակի սեռականի *ու* վերջավորությունից է առաջացել՝ հնչյունափոխական հայտնի օրինաչափությամբ: Եթե այդպես է, ուրեմն պիտի ունենանք եզակի սեռականի *իծու, գ՛իլու, դիլու, իշու, ծիրու, տիրու* բարբառային ձևեր: Բայազետի բարբառում նշված բառերից ոչ մեկը Ու հոլովման չի ենթարկվում, հանդիպում է միայն *տիրու* ձևը, այն էլ՝ նախատական արտահայտություններում ու հայհոյանքներում: Սակայն պետք է հիշել, որ գրաբարում *էշ, գայլ* բառերը ենթարկվում էին Ո վերջադրական հոլովման՝ *իշոյ, գայլոյ*, և, ինչպես նշում է Ս.Ղազարյանը, «Միջին հայերենում նկատվում է Ո հոլովման կրճատման կամ Ու-ի վերածվելու պրոցեսը, որը, պետք է ասել, սկսել էր շատվաղուց»[964]: Ի դեպ, միջին հայերենում վկայված ձևերից են՝ *այծու, գայլոյ / գայլու, իշոյ / իշու, տէրու / տիրու*[965]: Արդյունքում, գրաբարյան Ո հոլովման դիմաց արդի հայերենում հաճախ

գիճութեներ.... *Անուն* բառն էլ հոգնակին կազմում է սեռական ձևից (անվըներ)» (ԼՔՀԼ, հ. 3, էջ 708):

[963] Այս ձևը առնչվում է դեռևս հին հայերենում վկայված *քուեր* սեռականին:

[964] Ս.Ղազարյան, նշվ. աշխ., , էջ 232:

[965] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 18-25:

ունենք Ու հոլովում: Բացի այդ՝ գրաբարում թռչունև կենդանի անվանող բառերը հիմնականում ենթարկվում էին Ու հոլովման. արդի մի շարք բարբառներ, դրանց թվում՝ Բայազետի բարբառին մերձավոր Վանի, Խոյի, Դիադինի, Մշո բարբառները, Ալաշկերտի խոսվածքը, այս առումով նմանվում են գրաբարին: Դիտարկումները ցույց են տալիս, որ նշված բարբառներում հանդես են գալիս սեռականի հիշյալ գրեթե բոլոր ձևերն էլ. այսպես՝ Վ. *էծու, կ՚իլու, իշու, տիրու*, Խ. *էծիւ, կյէլիւ, էշիւ, տիրու*, Դ. *իծու, գ՚իլու*, Մ. *գ՛իլու, իձու, դ՛իլու*: Այս բարբառներում եզակի սեռականից ձևավորված պետք է համարել ուսումնասիրողների կողմից նշվող հետևյալ հոգնակիները. Վ. (էշ > իշու >) *իշվանք՚*, (տէր > տիրու >) *տիրվանք* , Դ. (էշ > իշու >) *իշվանք՚*, (էծ > իծու >) *իծվանք՚*, Ալ. (էձ > իձու >) *իձվան*, (էշ > իշու >) *իշվան*, (գէժ > գիժու >) *գիժվան*, (ճէդ > ճիդու >) *ճիդվան*, Մ. (էշ > իշու >) *իշվանք*, (էձ > իձու >) *իձվանք*: Ինչ վերաբերում է Բայազետի բարբառին, ապա ենթադրում ենք, որ այստեղ ևս հիշյալ բառերը նախապես ենթարկվել են Ու հոլովման և եզակի սեռականի վրա ստանալով *անք* հոգնակերտ՝ օրինաչափորեն հոգնակիում ունեցել են *վանք* խմբով ավարտվող ձևեր, բայց ժամանակի ընթացքում անցել են Ի հոլովման, մինչդեռ հոգնակիի նախնական ձևերը պահպանվել են: Ասվածից պետք է եզրակացնել, որ Բայազետի բարբառում ծագումնաբանորեն *ձի, էշ, էծ, գ՛էլ, դէլ, ծէր, տէր* բառերի հոգնակերտ մասնիկն է *անք* (ան-ք), սակայն այդ բառերի՝ այլևս Ու հոլովման չենթարկվելու պարագայում հոգնակերտ պետք է համարել *վանք* մասնիկը, որը բաղադրված է ոչ թե *վի*, այլ *վ* (<*ու* հոլովիչ) մասնիկով: Այդ կազմությունն ունի *վանք* թեքությունը նաև Մշո, Դիադինի, Վանի բարբառներում:

Ոանք հոգնակերտ մասնիկ Բայազետի բարբառում ստանում են տեղ ցույց տվող մի շարք բառեր. *գ՛եղ* (գյուղ) - *գ՛եղրանք*, *դ՛էգ* - *դ՛իգրանք, կող – կողրանք, տեղ – տեղրանք*[966], նաև սրանով բաղադրված դերանուններ՝ ղ-ի անկումով. *ըստե* (այստեղ) - *ըստերանք, ըտե* (այդտեղ) - *ըտերանք, ընդե* (այնտեղ) - *ընդերանք*: Այս հոգնակերտը գործառում է նաև Մշո (գ՛էղրանք, տէխրանք, դ՛իգրանք, դ՛էղրանք[967]), Վանի (տեղրանք՚, դեխրանք՚, տեղրանք՚ /դեղորայք/, կ՚եղրանք՚, կող-

[966] *Տեղ* բառի *տեղեր* հոգնակին բարբառումս ստացել է «անկողին» իմաստը:

ранքʲ), Դիադինի (տեղրանքʲ, դեխրանքʲ, գʲեղրանքʲ, կողրանքʲ), Խոյ-Մարաղայի (տէղրանք, կʲէղրանք, կողրանք), Արարատյան (գ՛եղրանք, ըստէղրանք, տեղրանք) բարբառներում[968]: Ալաշկերտի խոսվածքն ունի *ման* հոգնակերտ (դ՛իզրան, գ՛եղրան, կօղրան, ճըղրան /ճուղ/, տէրան /տեղ/): Միջին հայերենում այս մասնիկով վկայված է *դեղրանք* ձևը[969]: Ըստ Հ.Աճառյանի՝ *ռանք* հոգնակերտը կազմված է *եր* և *անք* (ան – ք) մասնիկներից[970], սակայն կարելի է տալ նաև այլ մեկնաբանություն: Թե՛ Բայազետի, թե՛ շրջակա բարբառներում *ռանք* հոգնակերտ ստանում են տեղ ցույց տվող բառեր, իսկ այդ կարգի մի շարք բառեր հայ մատենագրության մեջ վկայված են նաև *որայ* կամ *որայք* հոգնակերտով՝ *արտորայ, դաշտորայք, վանորայ* կամ *վանորայք*[971]: Կարելի է ենթադրել, որ բարբառային *ռանք* հոգնակերտը հինհայերենյան *որայ* (նաև՝ *որայք*) հոգնակերտի հնչյունափոխական զարգացման արդյունք է՝ *ռ*-ի սղմամբ և *անք* հոգնակերտի համաբանական ազդեցությամբ կատարված *յ* < *ն* հնչյունափոխությամբ: Այս ենթադրությունը պնդելու համար փաստարկ կարող է լինել բարբառներում նաև *օրանք* հոգնակերտի առկայությունը (օր. Լոռու խոսվածքում տեղ ցույց տվող դերանունների հոգնակին՝ այստեղ > *ըստէղ* || *ըստի* – *ըստէղօրանք* || *ըստիօրանք*, այդտեղ > *ըտեղ* || *ըտի* – *ըտէղօրանք* || *ըտիօրանք*)[972]: Այս մասնիկին առնչվող դիտարկում ունի նաև Յ.Կարստը: Ըստ նրա՝ միջինհայերենյան *դեղ-երայ-ք* և սրա տարբերակ *դեղ-ման-ք* ձևերի կողքին կարելի է դնել Փավստոսի մոտ վկայված *վան-երայ-ք* և սրահետ «հեռավոր ազգակցություն ունեցող *գեղ-օրէ-ք*» ձևը, որոնք բոլորն էլ ավելի հին *արտ-որայ-ք, վան-որայ-ք* տիպի ձևերի շարունակություններ են[973]:

Տանք / տիք հոգնակերտ մասնիկ ստանում են ազգակցություն, մերձակցություն ցույց տվող գոյականներ. *°խպէր - °խպրտանք, քուր - քրվորտանք, հ՛ընգեր – հ՛ընգերտանք, խորօխպէր – խորօխպրռ-*

---

[967] Այս բառը Մշո բարբառում ունի նաև *դ՛էղրունք* հոգնակին (տե՛ս ՄԲ, էջ 78):
[968] Ընդհանուր առմամբ՝ այս կարգի (ր, եր, ար, եր + ք, անք, այք) բաղադրյալ հոգնակերտները ավելի բնորոշ են արևելյան բարբառախոս վայրերին (տե՛ս ՀԲՆ, էջ 88-99):
[969] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 60:
[970] Տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 714:
[971] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 20, նաև ՆԲՀ՝ համապատասխան տեղերում:
[972] Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, Ե. 1968, էջ 92:
[973] Յ.Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 200-201:

տանք, տէքըր – տէքըրտանք: Այս բառերից բացի՝ *տանք* հոգնակերտ ստանում է նաև *կըտոր* բառը՝ *կըտորտանք:* Նորատուսի և Գեղարքունիք գյուղի խոսվածքներում ունենք *տիք* մասնիկ (°խպըրտիք, քըվորտիք): Նկատելի է, որ Բայազետի բարբառում *տանք* կամ *տիք* հոգնակերտունեցող բառերը ազգակցության հետմիասին արտահայտում են նաև հավաքականության իմաստ: *Տանք, տինք* հոգնակերտներ դրսևորվում են Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում (կտորտանք, գօմէշտանք[974], ախպէրտինք, քըվօրտինք, տէքըրտինք[975]), Դիադինի բարբառում գործառում է *տիք*ʲ մասնիկ (քʲուրվըտիքʲ, կընգըտիքʲ, տէքʲըրտիքʲ, խընամտիքʲ), Մշո բարբառում գործառում են *դիք, դանք* հոգնակերտներ (տէքըրդիք, կընգըդիք, տալվըդիք, հ՛ընգէրդանք, կըդօրդանք): Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում *տանք* հոգնակերտ ստանում են տարատեսակ բառեր, ինչպես՝ Վ. *գʲէօմըշտանքʲ, թօրվըյտանքʲ, քʲավորտանքʲ*, Խ. *գʲ°մըշտանք, կʲէտընտանք, ախպրտանք, կըտորտանք*: Միջին հայերենում հանդիպում է *տիք* հոգնակերտը (ծակտիք, կնկտիք, մանկտիք)[976]: Հայտնի է, որ *տանք* կամ *տիք* հոգնակերտները բաղադրված են հինհայերենյան *տի* մասնիկով[977], որի վրահիբրև կրկնակի հոգնակերտ ավելացել է *ք* կամ *անք*: Ի դեպ, գրաբարում ևս *տի* մասնիկով հոգնակիները ունեին հավաքական իմաստ, ինչպես՝ *մանկտի, ոսկրոտի, փորոտի, սնոտի, մեռելոտի*[978]:

Ստանք հոգնակերտ բարբառումս ստանում է *գ՛էտին* բառը՝ *գ՛էտընստանք*: Ալաշկերտի խոսվածքն ունի *գ՛էդընստան* ձևը: Ընդհանրապես, շրջակա բարբառներում այս հոգնակերտը սակավ է հանդիպում[979]՝ Վ. *չէօլընստանքʲ, քʲեռընստանքʲ*: Խոյ-Մարաղայի բարբառում արձանագրվել է *ստար* հոգնակերտ՝ *էքʲի – էքʲընստար*, իսկ Վանի բարբառում՝ *էստար* մասնիկ (էկʲէստար): Միայն Մշո բարբառում *ի* և *ա* ձայնավորներով ավարտվող բառերի հոգնակի թիվը, սովորաբար

[974] Տե՛ս ԱԲ, էջ 106:
[975] ՀԲԱ թիվ 9 տետր:
[976] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 60:
[977] Տե՛ս նաև Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, էջ 81:
[978] ԼՔՀԼ, հ. 3, Եր. 1957, էջ 712:
[979] Փաստվել է, որ *ստան* հոգնակերտը «լիառատկերպով գոյություն ունի Արդվինի բարբառում: Արդվինի բարբառում բոլոր այն բառերը, որոնք վերջավորվում են ձայնավորով, ստանում են ստան հոգնակի վերջավորությունը... Այդ հոգնակին կա նաև Ծապին-Գարահիսարի բարբառում (այգիներ > էքէսդան)» (Ա.Ղարիբյան, նշվ.

ձևավորվելով *ք* հոգնակերտով, կարող է արտահայտվել նաև *ստան* մասնիկով (գ՛ինի – գ՛ինէստան, տարի – տարէստան, քէռի – քէռէստան և այլն)[980]: Այս հոգնակերտը միջին հայերենում զգալի տարածում ուներ[981] և, ինչպես նկատում է Հ.Աճառյանը, հատուկ էր միայն անշունչներին[982]: Այս ածանցի ձևավորման վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ[983]:

Բայազետի բարբառում *էրք* մասնիկով ձևավորվում է *տղա*բառի հոգնակին՝ *տղէրք*: Այդպես է և Արարատյան բարբառում: Լոռու խոսվածքում Մ.Ասատրյանը արձանագրել է զուգահեռ ձևեր՝ *տղէք* // *տղէրք*[984]: Ծրջակա այլ բարբառներում *տղա* բառն ունի Վ. *տղէք*[ʲ] (կամ՝ *տղէյներ*՝ փաղաքշական *տղէկ* ձևից), Մ. *տղէք* (նաև՝ *տղէկներ*), Խ. *տղնէր* ձևերը: *Տղէք* ձևը արձանագրվել է և միջին հայերենում[985]: *Տղէրք* ձևի վերաբերյալ Հ.Աճառյանը գրել է.«*էր* և *ք* մասնիկների գումարն է *երք*, որ գտնում ենք Երևանի բարբառում. օր. տղերք, կողքերք, տակերք, աղջկերք, լնդերք»[986]: Եթե վերջին ձևերում իսկապես առկա է *էր* և *ք* մասնիկների գումար, ապա *տղէրք* ձևը կարող է առաջացած լինել *տղէք* (<տղայք) հոգնակիից՝ բերված բառերի ազդեցությամբ: Թերևս այստեղից էլ *տղէրք* ձևը անցել է Բայազետի բարբառին:

Մ°ռթ (մարդ) բառը Բայազետի բարբառում իր բուն իմաստով կիրառության դեպքում ստանում է *իք* հոգնակերտ՝ *մ°ռթիք* (Էդ մ°ռթիք քե ի՞նչ արած), իսկ երբ ունենում է «ամուսին» կամ «տղամարդ» իմաստները, ստանում է *էր* մասնիկ՝ *մ°ռթեր* (Գ՛եղի կընգըները հ՛իրանց մ°ռթերին լիզու չեն տ°լում)[987]: Այս բառի հոգնակին շրջակա բարբառներում ձևավորվում է տարբեր կերպ՝ Ա. մառթիք (նաև՝ մառ-

---

աշխ., էջ 138): Այս հոգնակերտը բավականին լայն գործառույթ ունի և Կարնո բարբառում (տե՛ս Հ.Մկրտչյան, Կարնո բարբառը, Ե., 1952, էջ 45):

[980] ՄԲ, էջ 76:

[981] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 59:

[982] Տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 715::

[983] Ըստ Ա.Ղարիբյանի՝ *ստան*-ը բաղադրված է *ս-տ-ան* հոգնակիներից (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 138), Ս.Ղազարյանը կարծում է, որ *ստանք*-ը բաղադրված է ս-տ-ան-ք կազմիչներից (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 236): Հ.Աճառյանը համարում է, որ *ստան*-ը «Հին հայերենի -աստան տեղական մասնիկն է, որ վերածվել է հոգնակերտի» (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 713):

[984] Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, Եր. 1968, էջ 91:

[985] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 48:

[986] ԼՔՀԼ, հ. 3, էջ 714:

[987] Գուցե սա արձագանքն է գրաբարյան *մարդք – մարդիկ* զուգաձևության, որտեղ երկրորդ ձևն ուներ հավաքականության իմաստ (տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 32):

թէր), Մ. մարթիք, Դ. մառթեր, Վ. մարթկըներ / մարթեր, Խ. մառներ: Միջին հայերենում արձանագրված է *մարդիք / մարդիկ* ձևը[988]:

Կին բառի դիմաց բարբառում ունենք *կընիկ* ձևը, որի հոգնակին է *կընգըներ*, գործածական է նաև *կընանիք* ձևը, որը, սակայն, չունի իր համապատասխան եզակին: *Կընանիք* հոգնակին *կընգըներ* ձևի համեմատությամբ ավելի շատ արտահայտում է հավաքականության իմաստ. հմմտ. *Կընանիք մըկա շըլվար են խաքնում* և *Ըտոնց կընգըները հ՛իրանցը յե՞փ են լըսում*: Բարբառային հայերենում *կին* հասկացությունը որպես կանոն արտահայտվում է *կնիկ* բառով[989], որի հոգնակին մերձավոր բարբառներում ձևավորվում է *տիք* (դիք) կամ *ներ* մասնիկով՝ Մ. կընգըդիք, Խ. *կընգընէր, կընիյնէր* կամ *կընթընէր*, Դ. կընգ՚ըտիք՚ / կընթեր / կընթըներ: Բայազետի բարբառին մոտեն Արարատյան բարբառի ձևերը՝ *կընիկնէր / կընանիք*: Վանի բարբառում, չնայած *կին* բառի դիմաց ունենք *կնիկ* ձևը[990], բայց հոգնակին կազմվում է *կին* հիմքով և *հ՚տեր* մասնիկով, որից առաջ արմատի *ն* հնչյունի անկում է տեղի ունենում՝ *կիհ՚տեր* կամ *կըհ՚տեր*: Միջին հայերենում վկայված են *կնանիք, կնկտիք* ձևերը[991]: *Կին / կան* (կընանիք, կընթեր, կընթըներ, կիհյտեր) և *կնիկ* (կընգըներ, կընգըդիք, կընիկնէր, կընիյք՚էր / կընիյնէր) հիմքերով ձևերից առավել հնություն պետք է ունենա *կընանիք*-ը, որն աղերսվում է հինհայերենյան *կանանի* (կան - անի)[992] հավաքական հոգնակիին[993]:

---

[988] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 59, 60:

[989] Ըստ Հ.Աճառյանի՝ արմատական ձևը պահում է միայն Սվեդիայի բարբառը՝ *գէն* (տե՛ս ՀԱԲ, հ.2, էջ 590):

[990] ՀԱԲ, հ. 2, էջ 590, ՔՎԲ, էջ 271:

[991] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 60:

[992] Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 589, ԼՔՀԼ, հ. 3, էջ 736::

[993] Ի դեպ, Բայազետի բարբառում կան այլ դեպքեր ևս, երբ հոգնակի կազմություններում պահպանվել են բառերի ավելի նախնական ձևեր: Այսպես, բարբառում *պըռունգ* բառի *պըռկըներ* հոգնակիում (որը վկայված է նաև միջին հայերենում / տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 57/) և հոլովաձևերում (պըռկի, պըռկից) դրսևորվում է նախնական *պռուկ* ձևը, որը կա նաև Վանի, Խոյ-Մարաղայի, Մշո (պռուգ) բարբառներում, մինչդեռ Արարատյան բարբառն ու Ալաշկերտի խոսվածքն ունեն *պռունգ* ձևը (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 108, ԽԲ, էջ 71): Այդպես նաև *կ՚ունչ* բառի *կ՚ունչներ* հոգնակիին (սա Բայազետի բարբառում կարող է նշանակել և՛ «կանաչ գույն ունեցողներ», և՛ «բուսականություն») զուգահեռ գործառող *կ՚ունչըներ* (ունի «բուսականություն» իմաստը) հոգնակին /միջին հայերենում վկայված է *կանչնի* ձևը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 55)/ (ինչպես նաև *կ՚ունչի, կ՚ունչից* հոլովաձևերը) հուշում է *կ՚ունաչ* նախաձևի մասին: Ընդ որում՝ Վանի բարբառն ունի *կանաչ* ձևը, Արարատյան, Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառները, Ալաշկերտի խոսվածքը՝ *կանանչ* ձև, իսկ Մշո բարբառը՝ և՛ *կանաչ*, և՛ *կանանչ* ձևերը (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 511, ԽԲ, էջ 199, ԴԲ, էջ 133):

Բայազետի բարբառում գործածական են նաև *անք, ենք, ոնք* հավաքական հոգնակերտ մասնիկները[994]: Այդպիսիք գործառում են նաև Արարատյան (անք, էնք, օնք), Մշո (անք, ենք), Դիադինի (անքʲ), Խոյ-Մարաղայի (էնքʲ, օնք, անք) բարբառներում: Բարբառումս *անք* հոգնակերտստանում են անձերի՝ ամուսնական կարգավիճակից բխող հարաբերություն արտահայտող բառերը. °*ներանք, կէսրանք, խէրանք*: Այս հոգնակերտով ունենք նաև ազգատոհմ ներկայացնող ձև՝ *Տէրդէրանք*[995]: *Ենք* հոգնակերտի հավելումով հատուկ անձնանունները, վերածվելով անեզական գոյականների, նշանակում են տվյալ անձը ներառող մարդկանց խումբ (Վառթանենք, Կ°ոյենք, Նունէյենք): Այս հոգնակերտով ունենք նաև ազգատոհմ անվանող անեզական հոգնակիներ (Նիկոխենք, Գ՛ափոյենք, Դ՛առփընենք, Դընոյենք)[996]: *Ոնք* հոգնակերտ ստանում են *խընամի, ք°ռի, ափիկ* բառերը՝*խընամոնք, ք°ռոնք, ափոնք*, նաև *իմը, քոնը, մերը, ձ՛երը* դերանունները՝*իմոնք, քոնոնք, մերոնք, ձ՛երոնք*[997]: *Խընամի, ք°ռի* բառերը ունեն նաև սովորական հոգնակիի ձևեր՝ *խընամիք, ք°ռիք*: *Ոնք* հոգնակերտով ձևավորվում են նաև ազգատոհմ անվանող անեզականներ՝ *Գ°ռգընոցոնք, Կ°դվալոնք, Չիչոնք, Մուխանք, Վանեցոնք:* Անեզական գոյականների մեջ ազգատոհմ ներկայացնողները առանձնանում են ինչպես իմաստով, այնպես էլ քերականական յուրահատկությամբ՝այդպիսով ձևավորելով գոյականների քերականական – իմաստային յուրահատուկ խումբ: Ազգատոհմի անունների քերականական յուրահատկությունը Բայազետի բարբառում այն է, որ նրանք սեռական հոլովում ունեն եզակի համարժեքներ՝դարձյալ հավաքական իմաստով և առանց իմաստային որևէ նրբերանգի՝ *Նիկոխենք - Նիկոխենց Յերո* կամ *Նիկոխի Յերո*, *Չիչոնք - Չիչոնց Սէրգօ* կամ *Չիչու Սէրգօ*: Եզակի և հոգնակի այս զուգահեռների փոխկապակցվածությունը ունի հետաքրքրական

---

[994] Լեզվաբանական գրականության մեջ իրավամբ նշվում է, որ այս ձևույթները հիմնականում ձևաբանական են (տե՛ս Ս.Աբրահամյան և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ.2, Ե., 1974. էջ 53-54):

[995] Խոյ-Մարաղայի բարբառում այս մասնիկով անեզականներ կազմվում են նաև այլ գոյականներից՝ *քʲէռանք, մօքʲիրանք, քավորանք, տէքրանք, խրոխպէրանք, սանըմէրանք, հարէվանանք* (տե՛ս ԽԲ, էջ 74):

[996] Սրանով նույն կարգի անեզականներ են կազմվում նաև Խոյ-Մարաղայի բարբառում (նույն տեղում):

[997] Խոյ-Մարաղայի բարբառում ևս դերանուններից անեզականներ են կազմվում *օնք* մասնիկով (տե՛ս նույն տեղում):

դրսևորում. եթե ազգատոհմի անվանումը ունի *ենք* հոգնակերտ, ապա սեռականում նրա եզակի զուգահեռը ունի *ի* վերջավորություն. Դ՛առփընենք – Դ՛առփընենց, Դ՛առփընի, իսկ եթե ազգատոհմի անվանումը ունի *ոնք* հոգնակերտ, ապա սեռականում նրա եզակի զուգահեռը ունի *ու* վերջավորություն. *Մուխանք – Մուխանց, Մուխու*[998]: Ազգատոհմի եզակի անվանումը դրսևորվում է միայն սեռական հոլովով և միշտ հատուկ անձնանվան հատկացուցիչ է (Հովանի Գըվո, Թորոյ Մէլքո, Չիչու Մըխո, Խըզմալու Գ՛էվո), մինչդեռ հոգնակի անվանումը դրսևորվում է բոլոր հոլովներով և նախադասության մեջ ունենում է տարբեր դերեր. *Դ՛եղոյենք յետ են գ՛ըլխի հ՛ընգընում. Դ՛եղոյենց տընները վիրեվն են. Հընչե՞ս կըպե Դ՛եղոյենցը, չես պրռգնում. Դ՛եղոյենցից վընաշ չըկա*: Հավաքական *անք, ենք, ոնք* թեքությունները նույնպես բաղադրված են *ք* հոգնակերտով: *Անք* կազմությունը, որ թերևս գործառել է դեռևս հինհայերենյան շրջանում (նուանք, երագազանք), չի աղերսվում *ան* (իշան, ձիան) հոգնակերտին[999]: *Ենք* մասնիկը, որ ազգատոհմ անվանող ամենագործուն հոգնակերտն է, առաջացել է հին *եանք* (եան-ք) ձևից (Վասակեանք, Մամիկոնեանք), որը նույնպես արտահայտել է ինչպես *տվյալ անձի կողմնակիցներ*, այնպես էլ *ազգատոհմ* իմաստները[1000]: Ինչ վերաբերում է *ոնք* հոգնակերտին, ապա Բայազետի բարբառի փաստերը ևս հավաստում են, որ այս մասնիկը ձևավորվել է հինհայերենյան Ո վերջադրական հոլովման հիմքի վրա:

Այսպիսով, Բայազետի բարբառում հոգնակերտ մասնիկները ունեն գործառական տարբեր բաշխում և միանում են տարբեր հիմքերի: Ընդհանրական բնույթ ունեցող *եր, ներ* հոգնակերտները, գտնվելով լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, որպես կանոն միմյանց փոխարինել չեն կարող, սակայն կարող են փոխարինել այլ հոգնակերտների: Նկատելի է նաև սրանց գործառական ոլորտների ընդլայնման միտում[1001], ինչպես՝ *գ՛ինիք – գ՛ինիներ, իշվանք* -

---

[998] Նման համապատասխանություն կա նաև *ոնք* մասնիկով ձևավորված հասարակ անունների դեպքում՝ *խընամոնք – խընամու, քՊռոնք – քՊռու, մերոնք – մերու* ևն:

[999] Տե՛ս Գ.Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 86:

[1000] Տե՛ս նույն տեղում, էջ 137:

[1001] Դիտվել է, որ «Որքան լայն է տվյալ ձևույթի գործածության սահմանը, այնքան ավելի մեծ թվով այլ հոգնակերտների հետ այն կարող է հանդես գալ որպես նրանց ազատ տարբերակ» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 61): Միջին հայերենում տարածման ամենալայն

էշեր, տիրվանք - տէրեր[1002], *գ՛եղրանք - գ՛եղեր, քըվորտանք - քուրեր, ձ՛իյանք - ձ՛իյեր, °ներանք - °ներներ, խընամոնք - խընամիք - խընամիներ, մ°ռթիք - մ°ռթեր, կընանիք - կընգըներ*: Սակայն միշտ չէ, որ *եր* կամ *ներ* հոգնակերտները կարող են մյուսներին համարժեք լինել իմաստի առումով (օր.՝ *դ՛իզրանք* հոգնակին նշանակում է դեզերի զբաղեցրած վայրը, մինչդեռ *դեզեր* ձևը սովորական հոգնակի է), այլ դեպքերում էլ հոգնակերտների փոխարինումը հնարավոր չէ (նկատի ունենք, օրինակ, *կէսրանք, գ՛էտըստանք, տըղէրք, ա°պոնք* ձևերը, *անք, ոնք, ենք* թեքություններով հավաքական հատուկ անունները ևն): Սահմանափակ տարածում ունեցող հոգնակերտների գործառությունը պայմանավորված է բառերի ձևային (ք), իմաստային (ռանք, տանք / տիք, անք, ոնք, ենք), նախնական ձևաբանական (վանք) հատկանիշներով, իսկ սակավ հանդիպող *անք* (ձ՛իյանք), *իք* (մ°ռթիք), *անիք* (կընանիք), *էրք* (տըղէրք), *ստանք* (գ՛էտըստանք) թեքություններից առաջին երեքը գործառում են ավանդությամբ, վերջին երկուսը՝ հարևան բարբառների ազդեցությամբ:

Բայազետի բարբառում հոգնակիի՝ կրկնակի մասնիկով կազմությունն չկա, մինչդեռ շրջակա բոլոր բարբառներում այդպիսիք հանդիպում են, ինչպես՝ Դ. *կողրանքյներ*, Խ. *ախչիյքյէր*, Մ. *Տիրվըդանքներ*, Ա. *ձ՛իաններ*, Վ. *վոսկիհյտեր*[1003]:

Եթե Բայազետի բարբառի բոլոր հոգնակերտներն ունեն իրենց զուգահեռները շրջակա բարբառներում, ապա վերջիններումս կան հոգնակերտներ, որոնք Բայազետի բարբառում չեն դրսևորվում[1004]: Գոյականի թվի առումով նկատենք նաև, որ բարբառային հայերենում նույնպես կան անեզական և անհոգնական գոյականներ: Բարբառներում ևս անեզականները բաժանվում են երկու խմբի՝ ա) հավաքական գոյականներ՝ *կէսրանք, °ներանք, Չիչոնք, Գ՛ափոյենք* ևն, բ)

ոլորտ ունեցող հոգնակերտները (ք, եր, նի, ներ) կարող էին զուգահեռաբար գործածվել մյուս հոգնակերտների դիրքում (տե՛ս նույն տեղում):

[1002] *էշ, տէր* բառերի պես նաև *ծէր, էծ, գ՛էլ, դ՛էզ* բառերը *եր* հոգնակի ստանալիս *է* ձայնավորը չեն հնչյունափոխում, մինչդեռ այլ հոգնակերտի դեպքում տեղի է ունենում *է<ի* հնչյունափոխություն: Նման իրողություն դիտարկվել է և Ա աշկերտի խոսվածքում (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 17):

[1003] Վանի, Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներում հոգնակիի կազմության ժամանակ բառավերջի հետնալեզվային պայթականները (ինչպես նաև կրկնակի հոգնակերտի *ք* բաղադրիչը) բաղաձայնով սկսվող հոգնակերտից առաջ դառնում են *յ* կամ *հ՛*:

[1004] Այդպիսիք են՝ Մ. *վըդիք, վըդանք, ունք, ռունք, վի*, Վ. *հ՛տեր, ք՛տեր, էհ՛տեր, երենք՛, էստաղ, տաղ, վեր*, Դ. *վեր*, Խ. *ք՛էր, ստաղ, վէրք*, Ա. *նի, ան, աղենք*:

եր, ներ մասնիկներով հատուկ տեղանուններ՝ *Գ՛իլ ակերներ, Հոխոյ դոշեր* ևն[1005]: Անհոգևական են *ություն* ածանցի հնչյունական տարբեր ձևավորումներով կազմություններ, հատուկ անուններ, նյութերի անուններ: Վերջիններս հոգևակի թիվ կարող են ունենալ իբրև նյութի մասնավոր դրսևորումների, դրանից պատրաստված առարկաների անվանում գործածվելիս, ինչպես՝ *վոսկիք* (ոսկուց պատրաստված զարդեր), *գ՛ինիք* (գինովլցված շշեր):

1.2. *Հոլովի կարգը*

Հոլովները և նրանց կազմությունը

Ինչպես նշել է Հ.Աճառյանը, հայ բարբառների երեք ճյուղերը ըստ հոլովների թվի միմյանցից զանազանվում են նրանով, որ «ներգոյականը հատուկ է *ում* ճյուղին, մասամբ նաև *ել* ճյուղին, իսկ կը ճյուղում գոյություն չունի: Ըստ այսմ, հոլովների թիվն է վեց կամ յոթ»[1006]: Բայազետի բարբառն ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական: Պատկանելով հայ բարբառների Ում ճյուղին՝ բարբառս չունի ներգոյական հոլով, թեև, ըստ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակների, հայերենի բարբառների արևելյան խմբակցությունում այդ հոլովը հատուկ չէ միայն Խոյ – Մարաղայի բարբառին[1007]: Այն, որ արևելյան խմբակցության Բայազետի բարբառը ևս չունի ներգոյական հոլով, չեն նկատել նաև նախորդ ուսումնասիրողները[1008]: Բայազետի բարբառի շրջակա Վանի, Մշո և Դիադինի բարբառները, պատկանելով հայերենի բարբառների Կը ճյուղին, օրինաչափորեն չունեն ներգոյական հոլով, և միայն Ում

[1005] Գրական հայերենում այս դեպքում ունենք միայն օտար լեզուների անեզական աշխարհագրական անունների համապատասխանություններ, ինչպես՝ *Ալպեր, Կարպատներ* և այլն (տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 59):

[1006] ԼՔՀԼ, հ. 3, էջ 542: Հայ քերականագիտության մեջ հոլովի քերականական կարգի ըմբռնման և ուսումնասիրության մասին տե՛ս Ա.Աբաջյան, Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Ե., 2006:

[1007] ՀԲՆ, էջ 95-99:

[1008] ՀԲ, էջ 44-45, Ար. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 227, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 224-225: Բայազետի բարբառի հոլովական համակարգին անդրադառնալով՝ Ռ. Բաղրամյանը թեև գրել է, որ այստեղ ներգոյականի իմաստը սովորաբար արտահայտվում է սեռականով և *մեջ* հետադրությամբ, սակայն ավելացրել է, որ «նոր սերնդի խոսվածքում սովորական է <u>ում</u> ձևը (պայէստում «պահեստում», քախքում

ճյուղի Արարատյան բարբառն է, որ այդ հոլովն ունի[1009]: Այսպիսով, արևելյան խմբակցության Խոյ – Մարաղայի և Բայազետի բարբառները առանձնանում են այդ խմբակցության մյուս բարբառներից և նմանվում արևմտյան խմբակցության բարբառներին, որոնցից ոչ մեկը ներգոյական հոլով չունի[1010]:

Հոլովական իմաստները Բայազետի և շրջակա բարբառներում գոյականի համակարգում առավել աբար դրսևորվում են հոլովակերտ մասնիկներով, սակավ դեպքերում՝ նաև հնչյունական հերթագայությամբ: Եզակի ուղղականը, լինելով գոյականի սկզբնաձև, որևէ վերջավորություն չունի: Հոգնակի ուղղականը որպես կանոն ձևավորվում է եզակի ուղղականից՝ հոգնակերտ վերջավորություններով: Առանձին դեպքերում, ինչպես վերևում տեսանք, հոգնակի ուղղականը ձևավորվում է եզակի սեռականից[1011]: Եզակի սեռականը կազմվում է եզակի ուղղականից, հոգնակի սեռականը՝ հոգնակի ուղղականից՝ համապատասխան վերջավորություններով, երբեմն՝ հնչյունական հերթագայությամբ, եզակի թվում՝ նաև ներքին թեքմամբ: Տրական հոլովը ձևով նույնանում է սեռականին: Բայազետի բարբառում տրականը, ի տարբերություն սեռականի, կարող է ստանալ որոշիչ հոդ: Սեռականը և տրականը որոշիչ հոդի գործածությամբ են տարբերվում նաև համեմատվող մյուս բարբառներում[1012]: Մշո բարբառից

«քաղաքում», ըշկօլում «դպրոցում», մըժում, գ՛եղում)» (Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 27):

[1009] Ա.Ղարիբյանը նկատում է, որ «Արարատյան բարբառը ներգոյական հոլով կազմում է և՛ անձ, և՛ առարկա ցույց տվող գոյականներից, մինչդեռ գրական լեզուն անձ ցույց տվող գոյականներից ներգոյական հոլով չի կազմում» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 223):

[1010] Տե՛ս ՀԲՆ, էջ 88-99, Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 139:

[1011] Մասնավորապես, դիտարկվող բոլոր բարբառներում երևույթը առկա է այն բառերի դեպքում, որոնք ավարտվում են *ու* ձայնավորով. օրինակ՝ Բ. *հ՛առու – հ՛առվի – հ՛առվըներ, լիզու – լիզվի – լիզվըներ*, Վ. *կատու – կատվի – կատվըներ, լէզիւ – լէզվի – լէզվըներ*, Մ. *թըթու – թըթվի – թըթվըներ, ճըրաքու - ճըրաքվի - ճըրաքվըներ*, Դ. *կատու – կատվու – կատվըներ* , Լ. *լիզու – լիզվի – լիզվընի, կատու – կատվի – կատվընի*: Խոյ – Մարաղայի բարբառում նման բառերի հոգնակի ուղղականը կարող է ձևավորվել ինչպես եզակի ուղղականից, այնպես էլ սեռականից. *առու - առու նէր կամ առվընէր, կատու – կատու նէր կամ կատվընէր*:

[1012] Միջին հայերենում սեռականը և տրականը չէին տարբերակվում նաև հոդառությամբ: Ինչպես նշվում է, «Որոշիչ հոդը միջին հայերենում միանգամայն զուրկ է հոլովատարբերակիչ ֆունկցիայից, ձևաբանական մակարդակում դիրքային ոչ մի պայմանավորվածություն չունի և կարող է կցվել ցանկացած հոլովաձևին՝ լինի այն եզակի, թե հոգնակի» (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 80): Ըստ Հ.Աճառյանի՝ «տրականը թե՛ որոշյալ և թե՛ անորոշ նույն է սեռականի հետ» Վանի բարբառում (ՔՎԲ, էջ 115), սակայն լեզվաբանի բերած նմուշների դիտարկումից երևում է, որ սեռականը երբեք որոշիչ հոդ չի ստանում, իսկ տրականը ստանում է, ինչպես՝ *ախքյըտի խալ ավ, խալ իվրու կօռ, խարսի անուն*, բայց՝ *կաի խարսին*, տղին պ°ն չէլնի (տե՛ս նշվ. աշխ., էջ 222-223): Այդ են վկայում

բացի՝ մյուս բարբառներում հայցական հոլովը իրի առման դեպքում նման է ուղղականին, իսկ անձի առման դեպքում՝ տրականին[1013]: Վերջին դեպքում անորոշ հայցականը կարող է լինել և ուղղականաձև (Ընդոնց դ՛ուռը °*խճիկ* տէսա): Մշո բարբառում հայցականը երկու դեպքում էլ նման է ուղղականին, իսկ որոշյալ հայցականը ունենում է *գ* նախդիր[1014]՝ *ըզտուն, զաստված*[1015]: Բարբառների միայն արևմտյան խմբակցությունում դրսևորվող այս հատկանիշը չունի Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածք[1016]: Բայազետի բարբառում բացառական հոլովը ձևավորվում է հիմնականում *ից*[1017], Ու հոլովման բառերի դեպքում՝ *ուց* վերջավորություններով՝ *սեղանից, գ՛արուց*: Սակայն հանդիպում են նաև *է* վերջավորությամբ բացառականի ձևեր: Նման ձևավորում ունեն հատկապես ժամանակի անունները՝ *հ՛առավտընէ, հ՛իրկըվորէ, էն օրվընէ, գ՛իշերվորէ* ևն: Համանման ձևեր հանդիպում են զանազան արտահայտություններում, ինչպես՝ *հ՛իրկընէ հ՛իրկուն, տընէ դ՛ուս, մօրէ մէկ, փորէն էթում, տընէն մէկը, դ՛ըսէ դ՛ուս, վոտէն գ՛ըլօխ, օրէ բ՛ընէ, քըթէն բ՛էրել* ևն: Բացառական հոլովի ձևավորման առումով այս նույն հատկանիշներն են հանդես բերում Վանի[1018], Դիադինի[1019], Մշո բարբառները: Մշո բարբառում, ինչպես երևում է Ս.Բաղդասարյան-Թափալցյանի նկարագրությունից[1020], սովորական են բացառականի ինչպես *ց*-ով, այնպես էլ *է*-ով ձևերը: Հատուկ տեղանունների բացառականը այս բարբառում կազմվում է *ու, ա* վերջավորություններով, Բայազետի, Վանի, Դիադինի և Խոյ – Մարաղայի բարբառներում ևս հատուկ տեղանունները ունենում են բացառականի *ա* վերջավորություն: Արարատյան բարբառում բացառականը ունի *ից, ուց* վերջավորություններ, Խոյ – Մարաղայի

նաև Ա.Ղարիբյանը (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 140), Ա.Գրիգորյանը (տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 102):

[1013] Անձի և իրի առումների տարբերակումը բնորոշ է արևելյան բարբառներին (տե՛ս ՀԲՆ, էջ 88-99):

[1014] Հիշենք, որ հայցականը *գ* նախդիր ունենում էր նաև միջին հայերենում (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 238), ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 65:

[1015] Տե՛ս ՄԲ, էջ 80:

[1016] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 73-74:

[1017] Հ.Աճառյանը այս մասնիկի ծագումը բխեցնում է Ի հոլովման բառերի հոգնակի բացառականից՝ անեզական բառերի՝ եզակիի նշանակություն ստանալու ճանապարհով (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 692):

[1018] Տե՛ս ՔՎԲ, էջ 116:

[1019] Տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 689. Ռ.Հ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 124.ԴԲ, էջ 62:

[1020] ՄԲ, էջ 80 - 90:

բարբառում՝ *է /ն/*, առանձին դեպքերում՝ նաև *մէ/ն/* վերջավորություններ[1021]: Փաստորեն, եթե Արարատյան բարբառը անխառն պահպանում է բացառական հոլովի՝ արևելյան բարբառներին բնորոշ կազմության եղանակը, իսկ Խոյ – Մարաղայի բարբառը, լինելով արևելյան բարբառ, հանդես է բերում բացառական հոլովի՝ արևմտյան բարբառներին հատուկ կազմության ձև, ապա Բայազետի, Վանի, Դիադինի, Մշո բարբառները զուգորդում են բացառականի կազմության երկու եղանակները՝ սովորաբար արևելյան բարբառներին հատուկ ձևի գերակայությամբ[1022]: Գործիական հոլովը դիտարկվող բարբառներում ձևավորվում է *օվ* վերջավորությամբ: Միայն Խոյ – Մարաղայի բարբառում *օվ* վերջավորությանը զուգահեռ գործածվում է և *մօվ* վերջավորությունը՝ *ծառօվ, ախպօրմօվ*[1023]: Արարատյան բարբառում ներգոյական հոլովն ունի *ում* > *ըմ* վերջավորություն: Մյուս բարբառներում ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է այլ ձևերով՝ ա) սեռական հոլովի և մեջ կապի կապակցությամբ՝ Բ. *գ՛ըրքի մէջ*, Դ., *օթխի մէջ*, Մ. *տան մէջ* ևն, բ) հայցական հոլովով՝ Բ. *Ընդու խէրն ու մէրը մըկագ՛եղն են*, Մ. *Քաղաք շատ մարթ կէր*, Վ. *Հըմէն օր տուն կմնաս*, Խ. *Էրեվան շատ տուն կա* ևն: Մշո բարբառում ներգոյականի իմաստն արտահայտվում է նաև *մըջ* նախադրությամբ ու տրական հոլովով՝ *մըջ քախքին*, իսկ Դիադինի բարբառում՝ նաև սեռական հոլովով և *նե* կապով՝ *տախտի նե, օթխի նե*:

Հ.Աճառյանը նկատել է, որ Վանի բարբառում ուղղականը գործածվում է նաև իբրև կոչական[1024], և հավելել, որ մի քանի բառերի համար «կոչական հոլովը» ունի առանձին ձևեր, ինչպես՝ *մարէ՛* (ո՛վ մայր), *խէրո՛* (ո՛վ հայր) ևն, ինչպես նաև՝ «Օ վերջավորությունն ունեն նաև մի խումբ հատուկ անուններ», ինչպես՝ *Անդրօ* (Անդրեաս), *Սարկօ*

[1021] ԽԲ, էջ 76:

[1022] Ի դեպ, միջին հայերենում բացառականը նախդրավոր էր: Ժամանակի ընթացքում տեղի է ունենում *գ* և *ի* նախդիրների գործածման աստիճանական սահմանափակում, և 15-16-րդ դարերից վկայված են առանց *ի* նախդրի բացառականի բազմաթիվ օրինակներ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 108): Եզակիում որպես կանոն ուներ *է* հոլովակերտ, որը Ո, Ու, Ա, մասամբ նաև Ի հոլովումների դեպքում բացակայում էր (օր.՝ ի վնասու, ի Մսրայ): Հոգնակի բացառականը մի շարք դեպքերում ուներ *ց* կազմիչ, այլ դեպքերում՝ ոչ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 71-74):

[1023] Տե՛ս ԽԲ, էջ 76:

[1024] Տե՛ս ՔՎԲ, էջ 115:

(Սարգիս) ևն[1025]: Աճառյանին հետևելով՝ ուղղական հոլովի՝ իբրև կոչական գործածվելու հանգամանքին անդրադառնում են նաև Մ.Ասատրյանը (Խոյ-Մարաղայի բարբառի առումով)[1026], Վ.Խաչատրյանը (Դիադինի բարբառի առումով)[1027]: Բայազետի բարբառում ևս մի քանի բառեր իբրև կոչական գործածվելիս ունեն առանձին ձևեր՝ *մէրէ, մէրօ, քուրօ, °խճի, խէրէ, ն°նէ*, սովորական են նաև *օ* կամ *է* ձայնավորներով ավարտվող կրճատ անձնանունները՝ *Բաբօ, Յեղօ* (Եղիազար), *Մընէ* (Մանուկ), *Վընէ* (Վանիկ), *Կըրէ* (Կարո), *Վըռթէ* (Վարդան) ևն: Այս կարգի բոլոր հատուկ անունները, ինչպես նաև հասարակ անունների մեծ մասը գործածվում են նաև իբրև սովորական ուղղական՝ դառնալով սկզբնաձև նաև այլ հոլովների համար: Սակայն հատուկ անունների կրճատ ձևերը առանց ձայնավորական հավելման գործառում են միայն իբրև կոչականներ, ինչպես՝ *Քը՛ն* (Քնա՛րիկ), Հա՛ս (Հասմի՛կ), *Գ՛ա՛ռ* (Գառնի՛կ) ևն:

Հ.Աճառյանը հոլովների կազմության յուրահատկությունները դիտարկել է ըստ հայերենի բարբառների՝ իր առանձնացրած ճյուղերի[1028]: Այսպես, 1) սեռականի և տրականի տարբերակումը որոշիչ հոդի գործառությամբ հատուկ է արևելյան՝ Ում և Ել ճյուղերի բարբառներին (մեր խմբում՝ բոլոր, նաև Կը ճյուղի բարբառներին), 2) տարբեր առումներում հայցական հոլովի ձևավորման տարբերությունը բնորոշ է Ում և Ել ճյուղերի բարբառներին (մեր խմբում՝ նաև Վանի և Դիադինի բարբառներին), 3) ներգոյական հոլովը հատուկ է Ում, մասամբ նաև Ել ճյուղերի բարբառներին (մեր խմբում՝ միայն Արարատյան բարբառին) և հատուկ չէ Կը ճյուղի բարբառներին, 4) բացառականի *է*-ով ձևերը բնորոշ են արևմտյան հայերենին, *ց*-ով ձևերը՝ արևելյան հայերենին (մեր խմբում *ց*-ով ձևերի գերակայությամբ *է*-ով ձևեր ունեն Վանի, Բայազետի, Դիադինի, Մշո բարբառները, միայն *ց*-ով ձևեր ունի Արարատյան բարբառը, միայն *է*-ով ձևեր՝ Խոյ-Մարաղայի բարբառը)[1029]: Փաստորեն, դիտարկվող բարբառախմբում նկատելի է արևելյան բարբառներին բնորոշ հատկանիշների

[1025] Տե՛ս նշվ. աշխ., էջ 116-117:
[1026] ԽԲ, էջ 76:
[1027] ԴԲ, էջ 63:
[1028] Տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 542-543:
[1029] Տե՛ս նաև թիվ 58, 59, 64, 70, 74 հատկանիշների արտահայտությունը Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման Աղյուսակ 4-ում (ՀԲՆ, էջ 88-99):

արտահայտություն նաև արևմտյան բարբառներում (1, 2, 4) և արևմտյան բարբառներին բնորոշ հատկանիշների արտահայտություն նաև արևելյաններում (3,4): Կարծում ենք՝ բարբառային հայերենի դրսևորման բնական իրավիճակ է մեզ պատկերանում, երբ տարբեր ճյուղերի հարևան բարբառներում ի հայտ են գալիս նաև ճյուղերի տարբերակման բնույթ ունեցող հատկանիշների փոխներթափանցումներ[1030]: Եվ որքան բարբառային միավորը տարածականորեն հեռու է տարբեր ճյուղերի շփման գոտուց, այնքան ներթափանցումներն ավելի քիչ են: Այսպես, Վանի և Դիադինի բարբառները տարածականորեն ավելի մոտ են արևելյան բարբառներին, քան Մշո բարբառը, որի հետևանքով Մշո բարբառում արևելյան հատկանիշների ներթափանցումը ավելի քիչ է: Իր հերթին՝ Արարատյան բարբառի խոսվածքների մեծ մասը արևմտյան բարբառներից ավելի հեռու են, քան Խոյ-Մարաղայի և Բայազետի բարբառները, ուստի և արևմտյան հատկանիշների ներթափանցումները այս բարբառում էականորեն քիչ են: Բայազետի բարբառը, լինելով արևելյան խմբակցության բարբառ[1031] և շփման մեջ լինելով նաև արևմտյան (Վանի, Դիադինի, Մշո) բարբառային միավորների հետ, արևմտյանների պես չունի ներգոյական հոլով և բացառականի *g*-ով ձևերի գերակայությամբ ունի նաև *է*-ով ձևեր: Սակայն Բայազետի բարբառի դեպքում, թվում է, այս հատկանիշները արևմտյան բարբառների ազդեցության հետևանք չպետք է համարել: Եթե բարբառս նախապես ունեցած լիներ ներգոյական հոլովի ձև և այն կորցրած լիներ արևմտյանների ազդեցությամբ, ապա այդ հոլովի հետքերը պետք է որ մնացած լինեին դարձվածքներում, տարբեր տեսակի արտահայտություններում (այդպիսիք չկան նաև 20-րդ դարի սկզբին գրառված նյութերում, նաև այդ դարի առաջին տասնամյակները ներկայացնող բարբառային խոսքի արտահայտություններում), մանավանդ որ հարևան Արարատյան բարբառը պետք է նպաստեր դրանց պահպանմանը: Մինչդեռ բաց-

[1030] Ըստ Ա.Ղարիբյանի՝ «առանց վերապահության կարելի է ասել, որ ճյուղերի բաժանումը վերջին հաշվով պայմանական է, ճյուղային հատկությունները երբեմն լինում են խիստ փոքրաթիվ, և միևնույն ճյուղի պատկանող բարբառները, բացի ճյուղի հիմնական գծերից, մնացած ամեն ինչով միմյանցից տարբերվում են.... Երբեմն մի ճյուղի բարբառը, բացի իր ճյուղային հատկություններից մնացած բառերով նմանվում է մի այլ ճյուղի» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 217):

[1031] Ըստ Գ.Ջահուկյանի դասակարգման (տե՛ս ՀԲՆ, էջ 132-136):

ռականի՝ *g*-ով ձևերի գերակայությամբ *է*-ով ձևերի առկայությունը ոչ միայն Բայազետի, այլ նաև Կը ճյուղի Վանի և Դիադինի բարբառներում հուշում է, որ այս երեք բարբառներում էլ բացառականի նախնական *է*-ով ձևերը աստիճանաբար տեղի են տվել *g*-ով ձևերի տարածման առաջ[1032] (հավանաբար ոչ առանց Արարատյան բարբառի ազդեցության): Ի տարբերություն Արարատյան բարբառի՝ Բայազետի և մյուս բարբառներում պահպանվել է հինհայերենյան համակարգին բնորոշ՝ տեղանունների *ա*-ով բացառականի ձևը: Նկատենք նաև, որ ըստ բացառականի ձևավորման՝ արևելյան և արևմտյան բարբառները խստորեն սահմանազատված չեն[1033]: Այսպիսով, եթե սեռական, տրական, հայցական և բացառական հոլովների ձևավորման հարցում դիտարկվող բարբառախմբում գերակայում են արևելյաններին բնորոշ հատկանիշները, ապա ներգոյական հոլովի դրսևորման առումով ավելի մեծ տարածում ունի արևմտյաններին բնորոշ հատկանիշը:

Հոլովումներ

Ինչպես հայտնի է, հոլովումը աշխարհաբարում էականորեն տարբերվում է և՛ գրաբարյանից, և՛ միջինհայերենյանից: Դիտարկվող բարբառախմբում իրենց զանազան դրսևորումներն ունեն աշխարհաբարի բոլոր ութ հոլովումներն էլ[1034]: Առանձին բարբառներում դրսևորվում է նաև Ա արտաքին հոլովում:

Ի հոլովում

Բայազետի և Արարատյան, Վանի, Խոյ – Մարաղայի բարբառներում գոյականների մեծ մասը ենթարկվում է Ի հոլովման[1035]: Ասվածը

[1032] Նկատվել է, որ միջին հայերենի զարգացման երկրորդ ենթաշրջանում տարածվելու և լիակատար տիրապետություն ձեռք բերելու ձգտում է ցուցաբերում եզակի բացառականի *է* վերջավորությունը: Արևելահայերենի *ից* վերջավորությամբ բացառականը միջին հայերենի շրջանում դեռևս ի հայտ չի գալիս, վկայված է միայն մի քանի մակբայական կազմություններում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 108):

[1033] Տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 543, նաև՝ ՀԲՆ, էջ 88-99: Մեկ այլ տեղում Հ.Աճառյանը գրում է «Պետք չէ կարծել, թե *-ից* մասնիկի գործածությունը ընդհանուր է բոլոր արևելահայ բարբառներին և գոյություն չունի ոչ մի արևմտահայ բարբառում: Վերջիններից *-ից* գիտե Վանի բարբառը, որտեղից Հին Բայազետի և Մակուի վրայով գալիս է Երևան և այստեղից տարածվում է Ագուլիս, Թավրիզ և Նոր Ջուղա: Մնացյալը ամբողջ ունի *է, էն* ձևը. այսպես՝ Թբիլիսի, Ղարաբաղ, Շամախի, Մեղրի, Մարաղա և այլն» (ԼՔՀԼ, հ. 3, էջ 692):

[1034] Շրջակաբարբառների հոլովական հարացույցները տե՛ս Հավելված 1-ում:

[1035] Ըստ Հ.Աճառյանի՝ «Բոլոր բարբառների մեջ էլ, ինչ ճյուղի էլ որ պատկանեն նրանք, բառերի մեծագույն մասը հետևում է այս առաջին հոլովման, իսկ օտար

Բայազետի, Արարատյան, Խոյ – Մարաղայի բարբառների դեպքում վերաբերում է և՛ եզակի, և՝ հոգնակի թվերին[1036], իսկ Վանի բարբառի դեպքում՝ միայն եզակի թվին[1037]: Հոլովման օրինակ[1038]. եզ.թիվ. *խաց/ը/, խացի, խացի/ն/, խաց, խացից, խացով, հոգն. թիվ. խացերը, խացէրի, խացէրի/ն/ խացերը, խացէրից, խացէրով*:

Բարբառներում ևս Ի հոլովումը, գործառական առումով գերիշխելով հոլովման տիպերի մեջ, շարունակ ձգտում է ընդլայնել իր ընդգրկման շրջանակները[1039]. որոշակի ձևավորում ունեցող բառախմբեր և առանձին բառեր այլ հոլովումներից անցում են կատարում Ի հոլովման, բացի այդ՝ սովորաբար այլ հոլովման պատկանող բառեր զուգահեռաբար հոլովվում են նաև *ի* հոլովիչով: Այսպես, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Մշո, Վանի բարբառներում, Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում *ություն* ածանց ունեցող բառերը ենթարկվում են ոչ թե Ա ներքին, այլ Ի արտաքին հոլովման[1040՝] Բ. *նեղություն – նեղության*, Վ. *խաստություն – խաստության*, Ալ. *մէծուտէն – մէծուտէնի*, Խ. *խուժանթոն* (խուժանություն) - *խուժանթոնի*, Լոռ. *բարութին - բարութինի* ևն[1041]: Դիտարկվող բոլոր բարբառներում էլ *ություն* ածանցը ենթարկվել է հնչյունափոխության, ինչը, հնարավոր է, դեր է խաղացել հոլովման փոփոխության հարցում: Բայազետի բարբառում հինհայերենյան Ո և Ա հոլովումների դիմաց Ի հոլովման են ենթարկվում նաև *մ°ռթ* (մ°ռթի), *°նուն* (°նընի), *°ռուն* (°ռընի) և այլ

բառերը՝ ամբողջությամբ» (ԼՔՀԼ, հ. 3, էջ 550): Ինչպես նկատում է Ա.Ղարիբյանը, «եզակի սեռական հոլովը սովորաբար բոլոր բարբառներում ստանում է մեծ մասամբ «ի» վերջավորություն» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 139):

[1036] Արևելահայ բարբառախոս վայրերին է հատուկ /ն/եր-ով հոգնակիի Ի հոլովումը (տե՛ս ՀԲՆ, էջ 88-99):

[1037] Տե՛ս նաև Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 143:

[1038] Շրջակաբարբառների հոլովական հարացույցները տե՛ս Հավելված 1-ում:

[1039] Արձանագրվել է, որ միջին հայերենում հոլովման բոլոր տիպերի մեջ «գործածման հաճախականության տեսակետից բացարձակ գերիշխանություն է նվաճել արտաքին թեքման Ի հոլովումը, որը, ի դեպ, գրաբարում էլ ամենալայն տարածումն ուներ» (ԱՄԳՀՊ, հ. 2, էջ 16): Այն ավելի էր ընդարձակում իր ընդգրկումը ի հաշիվ այլ հոլովումներից նրան անցած անունների (տե՛ս նույն աշխ., էջ 101): Ըստ Հ.Աճառյանի՝ միջինհայերենյան շրջանում Ի հոլովումը «էապես համապատասխանում է գրաբարի ի հոլովման, սակայն սրան են խառնված նաև ի-ա հոլովման և ընդհանրապես բոլոր հոլովմանց հետևող բառերը»(տե՛ս ԼՔՀԼ, հ.3, էջ 536):

[1040] Դեռևս միջին հայերենում «*Ություն* ածանցով բառերի մեջ երբեմն հանդիպում են *ի*-ով հոլովված ձևեր» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 104):

[1041] Ինչպես նշում է Ռ. Մարկոսյանը, Արարատյան բարբառում *ություն* (ություն) ածանց ունեցող բառերը ենթարկվում են Ա հոլովման, սակայն նման «որոշ բառեր

բառեր[1042]: Ի հոլովման անցման տարբեր օրինակներ կան նաև շրջակա բարբառներում: Դիտարկվող բոլոր բարբառներում էլ Ի հոլովման դեպքում սեռականը ձևավորվում է՝ ուղղականին ավելացնելով *ի* վերջավորություն: Բացառություն են Խոյ – Մարաղայի բարբառի մի շարք խոսվածքներ, որոնցում *ի* վերջավորության դիմաց գործառում է *ը*[1043]: Բարբառներում Ի հոլովումն ունի ընդհանրական բնույթ՝ պայմանավորված չլինելով հոլովվող բառերի ձևային կամ իմաստային հատկանիշներով և ունենալով լայն ընդգրկում[1044]: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Ի հոլովման այն բառերը, որոնք ավարտվում են ձայնավորով: Բայազետի բարբառում *ա/°* ձայնավորով ավարտվող հասարակ անունների սեռական հոլովը ձևավորվում է *ա/ի* հերթագայությամբ. *տըղա - տըղի, զուռնա - զուռնի, փէս° - փէսի, կըս° - կըսի* ևն: Այդպես է և Արարատյան, Վանի, Մշո, Դիադինի բարբառներում[1045], միջին հայերենում[1046]: Երբ հնարավոր է իմաստային շփոթ, այդ հերթագայությունը տեղի չի ունենում՝ *ծ°ռա - ծ°ռայ / ծ°ռայի* (և ոչ թե՝ *ծ°ռի*, ինչը կարող է ընկալվել իբրև *ծ°ռ* բառի սեռական): Համեմատվող բարբառներում *ու* ձայնավորով ավարտվող միավանկ և երկվանկ (հազվադեպ՝ նաև եռավանկ) բառերը[1047], ենթարկվելով Ի հոլովման, սեռականի վերջավորությունից առաջ ունենում են *ու* > *վ* անցում. Բ. *ձ՛ու – ձ՛ըվի, հ՛առու – հ՛առվի*, Մ. *ճըրաքու - ճըրաքվի*, Վ. *կատու – կատվի*, Ա. *լ՛էզու – լ՛էզվի*: Խոյ – Մարաղայի բարբառում նման հնչյունափոխություն կարող է նաև չկատարվել՝ *կատու – կատվի/ը/* կամ *կատույ ի/ը/*, իսկ շատ դեպքերում գործառում են միայն անհնչյունափոխ ձևեր՝

կարող են ենթարկվել նաև ի հոլովման՝ լավութուն – լավութունի» (տե՛ս ԱԲ, էջ 116):

[1042] Այլ դեպքեր կներկայացնենք մյուս հոլովումներին անդրադառնալիս:

[1043] ԽԲ, էջ 75: Ա.Ղարիբյանը այս մասին գրում է. «Որոշ բարբառներում «ի» ձայնավորը սղվելով վերածվում է «ը» ձայնավորի, ինչպես, օրինակ, Ուրմիայի և Խոյի բարբառներում. ուղղական՝ տախտակ, սեռական՝ *տախտըկը՛*» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 140):

[1044] Գրական արևելահայերենում այս հոլովման համանման բնույթի մասին տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 80-81:

[1045] Խոյ-Մարաղայի բարբառում ուսումնասիրողների բերած օրինակներում ահ անկում չի նկատվում, ինչպես՝ *տըղայի* (տե՛ս ԽԲ, էջ 155), *հ°պէղայը՛* /աբեղայի/, *մարքարայը՛* /մարգարեի/ (ԼՔՀԼ, հ. 3, էջ 591): Մարաղայի խոսվածքում նույնիսկ բառավերջի *ի* ձայնավորը հոլովանիշ թեքույթից առաջ չի հնչյունափոխվում, ինչպես՝ *կ՛ինիյի* /գինու/, *էք՛իյի* (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 590):

[1046] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 110 (ակռի > ակռայ), 112 (բաղչի > բաղչայ), 121 (ճամփի > ճամփայ), 126 (սատանի > սատանայ), 129 (փաշի > փաշայ, փեսի > փեսայ, քահանի > քահանայ) ևն:

ածէլի > *առծէլիւ* - *առծէլիւյի/ը*[1048]: Բայազետի բարբառի խոսվածքների մեծ մասում ձայնավորով ավարտվող հատուկ անունները, ինչպես նաև *է, օ* ձայնավորներով ավարտվող հասարակ անունները, *ու* ձայնավորով ավարտվող բազմավանկ (ինչպես նաև փոխառյալ երկվանկ) բառերը եզակի սեռականում անհնչյունափոխ հիմքի վրա ստանում են ոչ թե *ի*, այլ *յ* վերջավորություն՝ *Էմայ, Վարոյ, Նունէյ, Դէրսույ, կօֆէյ, մէտրոյ, սուրույ, դ՛ասատույ* ևն: Իրենց սեռականը այս կերպ են ձևավորում նաև *ա* ձայնավորով ավարտվող նորամուտ, բարբառում քիչ գործածական այն հասարակ անունները, որոնցում այդ ձայնավորի անկումը կամ հնչյունաբանորեն է աննպատակահարմար, կամ կարող է անհասկանալի դարձնել բառը՝ *բամյայ, մ°ֆյայ, վըկայ, կօմայ* ևն: Միայն Գավառ քաղաքի խոսվածքում ձայնավորահանգ բառերը սեռականում ունենում են *ի* վերջավորություն (Էմայի, Նունէյի, կըլէյի, մէտրոյի, մ°ֆյայի): Նկատելի է, որ Բայազետի բարբառը ընդհանուր առմամբ խուսափում է թեքման հետևանքով բառավերջում երկձայնավոր կամ *ձայնավոր+յ+ձայնավոր* տիպի հնչյունախմբերի ձևավորումից: Այդ են վկայում նաև բայական համակարգի այնպիսի կազմություններ, ինչպիսիք են՝ *էի* > *ի*, *էինք* > *ինք*, *մնայի* > *մընի*, *գրեի* (գրէյի) > *գ՛ըրի* ևն: Ի հոլովման՝ ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովում վերոհիշյալ տիպի հնչյունական խումբ չունենալու մղումով էլ բարբառը գտել է լուծումը՝ Ի հոլովիչը վերածելով *յ* ձայնորդի: Համանման երևույթ նկատվել է Ալաշկերտի խոսվածքում՝ *Գ՛էվոյ, Մարոյ*[1049], Դիադինի բարբառում՝ *Կարոյ, պառտընոյ*[1050]:

[1047] Խոսքը հին բառաշերտի բառերի մասին է:

[1048] Տե՛ս ԽԲ, էջ 78:

[1049] Ք.Մադաթյանի կարծիքով՝ «Անձնանունների ի հոլովիչը ձայնավորների մոտ դառնում է յ: Գ՛էվո – Գ՛էվոյ, Կարո – Կարոյ, Մարո – Մարոյ, Ավո - Ավոյ, Պողո – Պողոյ, Պէդէ - Պէդէյ և այլն: Պատճառը հավանաբար այն է, որ շեշտը մնում է արմատական ձայնավորի վրա, չի անցնում *ի* հոլովիչին և վերջինս թույլ է արտասանվում ու փոխարկվում է *յ*-ի» (Ք.Մ.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 75): Մեր կարծիքով՝ արմատական ձայնավորի վրա շեշտի մնալը ոչ թե պատճառ է, այլ՝ հետևանք: Դիտարկումները ցույց են տալիս, որ Ալաշկերտի խոսվածքը ևս բայի խոնարհման համակարգում խուսափում է երկձայնավոր ձևերից՝ *էինք* > *էնկ*, *կըքաղեիր* > *կըքաղէր*: Նշանակում է՝ երևույթի պատճառը Ալաշկերտի խոսվածքում նույնն է, ինչ Բայազետի բարբառում:

[1050] ԴԲ, էջ 68: Այս բարբառը ևս բայի խոնարհման համակարգում խուսափում է երկձայնավոր ձևերից՝ *էի* > *ի*, *էիր* > *իր*, *էինք* > *ինք*[յ], *էիք* > *իք*[յ], *էին* > *ին*, *գրեի* > *գ՛ըրի* ևն:

Փաստորեն, Բայազետի բարբառում ձայնավորահանգ բառերի սեռական հոլովում մի դեպքում վերջավորությունը փոխարինում է ձայնավորին (ա / ի), երկրորդ դեպքում ձայնավորը վերածվում է բաղաձայնի (ու > վ), իսկ երրորդ դեպքում *հ* վերջավորությունը ձայնավորից հետո դառնում է *յ*[1051]:

Հետաքրքրական է, թե ինչու թեքման ժամանակ *ա / հ* հերթագայություն (տղղ*ա* - տղղ*հ*) տեղի է ունենում միայն հասարակ անուններում, իսկ հատուկ անուններում *ա*-ն պահպանվում է (Սօնա - Սօնայ): Գուցե այս դեպքում գործ ունենք հինհայերենյան իրողությունների արձագանքի հետ, ուստի հարցի պարզաբանմանը կարող է նպաստել գրաբարյան երևույթների դիտարկումը: Ինչպես հայտնի է, գրաբարյան բառավերջում *ա* ձայնավորի դրսևորման փոքրաթիվ դեպքերից մեկը ներկայացնում էին օտար հատուկ անունները՝ *Աննա, Շաղիտա, Եղիա, Կեսարիա, Մակեդոնիա, Ասիա* ևն: Համարվում է, որ այս բառերը գրաբարում ենթարկվում են Ա վերջադրական հոլովման, բայց ոչ սովորական ձևով. «Սրանք եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում վերջից ունենում են *յ* (որը չի արտասանվում)»[1052]: Նշվում է նաև, որ «Այս կարգի հատուկ անունները կարող են հոլովվել նաև Ի հոլովիչով, օրինակ՝ Աննայի, Յուդայի, Շաղիտայի»[1053]: Հակված ենք կարծելու, որ այս կարգի հատուկ անունների հոլովումը գրաբարում երկու դեպքում էլ կատարվում էր Ի հոլովիչով, և ինչպես Բայազետի բարբառում է՝ *հ*-ն կարող էր վերածվել *յ* ձայնորդի կամ արտասանվել իբրև ձայնավոր՝ հաջորդելով *ա*-ից հետո ըստ արտասանական պահանջի ներմուծվող *յ*-ին: Հնարավոր է, այսպիսով, որ բարբառներում *ա* ձայնավորով ավարտվող հատուկ անուններում *հ* հոլովիչի՝ *յ* ձայնորդի վերածումը բավականին հին ծագում ունեցող երևույթ է: Թերևս հնչյունական անցումը համաբանությամբ տարածվել է նաև այլ ձայնավորներով ավարտվող հատուկ անունների վրա (Մընէյ, Գագօյ): Մյուս կողմից՝ *այ* խմբով ավարտվող հասարակ անունները (տղայ, երեխայ, սատանայ ևն), հին հայերենում ենթարկվելով Ի հոլովման, բնականաբար սեռական հոլովում ունեին բառի վերջում ավելացող

[1051] Միայն Գավառի խոսվածքում *հ>յ* անցում տեղի չի ունենում:
[1052] Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 27:
[1053] Նույն տեղում:

ի՝ այդպիսով ձևավորելով բառավերջյան *այի* հնչյունախումբ, որպիսին, ինչպես տեսանք, Բայազետի բարբառի համար անընդունելի է: Հավանաբար հինհայերենյան երկբարբառների մենաբարբառացման գործընթացին զուգահեռ բարբառային հայերենի որոշ հատվածներում պատմականորեն տեղի է ունեցել նաև *ձայնավոր+յ+ձայնավոր* տիպի խմբերի պարզեցում և՛ անվանական, և՛ բայական թեքման համակարգերում, ու քանի որ քերականության պահանջով ձևավորվող երկձայնավոր խմբերում իմաստակիրը *յ*-ին հաջորդող ձայնավորն էր, ապա պարզեցումը պետք է տեղի ունենար *յ*-ին նախորդող ձայնավորի, հետևաբար և *յ*-ի սղումով՝ *տղայի – տղղի, երեխայի - էրէխի, մնայի – մընի, գրեի - գ՛ըրի* ևն: Ինչ վերաբերում է *է, օ, ու* ձայնավորներով ավարտվող հասարակ անուններին, որոնք նոր կազմություններ են կամ փոխառություններ, ապա սրանցում չեն գործում *ի* հոլովիչից առաջ բառավերջի ձայնավորի սղման և *ու* > *վ* անցման օրենքները[1054]: Այսպիսով, Բայազետի բարբառում Ի հոլովման ենթարկվող բառերի սեռական հոլովում երկձայնավոր խմբերի բացառումը տեղի է ունեցել երկու եղանակով՝ ա) բառապատկերը և բառիմաստը չխաթարելու մղումով՝ բառավերջի ձայնավորի պահպանում և *ի* վերջավորության վերածում *յ* ձայնորդի, բ) բառապատկերի և բառիմաստի հստակ գիտակցման պայմաններում բառավերջի *ա*ձայնավորի անկում և *ի* հոլովիչի պահպանում:

Ի հոլովման բառերը Բայազետի բարբառում (հիմնականում նաև մերձավոր բարբառներում) մյուս թեք հոլովների կազմության զանազանություններ որպես կանոն հանդես չեն բերում: Առանձին դեպքերում յուրահատկություններ դրսևորվում են բացառական հոլովում: Բարբառումս եզակի թվում սեռական հոլովի *յ* ցուցիչ ունեցող բառերի բացառականը ձևավորվում է սեռականի վրա *ց* մասնիկի հավելումով՝ սեռ. *սուրուլ, Սօնայ*, բաց. *սուրուլց,*

[1054] Թերևս պատճառը նաև այն է, որ դրանցում հնչյունական հերթագայությունը կարող է խեղել բառի պատկերը կամ իմաստը: Օրինակ՝ *կըլէ, կօֆէ, մէտրօ, սուրու* բառերի *կըլէյ, կօֆէյ, մէտրօյ, սուրուլ* սեռականների դիմաց հնարավոր *կըլի, կօֆի, մէտրի, սուրի* (կամ՝ *սուրվի*) ձևերը անիմաստհնչյունախմբեր են դառնում: Մյուս կողմից՝ *ի* հոլովիչից առաջ սղված ձայնավորը կարող է ընկալվել իբրև *ա*, որովհետև այս ձայնավորի դեպքում սղման օրենքը կայուն գործում է նաև նոր փոխառություններում (տըրամվա – տըրամվի, լուստըրա - լուստըրի), այսինքն՝ երևույթը դառնում է *ա*-նայլ ձայնավորներից տարբերակող հատկանիշ:

Սօնայց[1055]: Դարձյալ բարբառը խուսափում է *ձայնավոր+յ+ձայնավոր* խմբից՝ սղելով *ից* վերջավորության ձայնավորը, մինչդեռ գործիականի *օվ* վերջավորության ձայնավորը պահպանվում է (մէտրօյօվ, կօֆէյօվ), որովհետև հայերենի հնչյունական կազմությանը խորթ է բառավերջի *յվ* խումբը

ՈՒ հոլովում

Այս հոլովումը իր ընդգրկմամբ երկրորդն է Բայազետի, Վանի, Արարատյան, Խոյ-Մարաղայի բարբառներում և ամենատարածվածն է Մշո, Դիադինի բարբառներում[1056]: Բոլոր բարբառներում եզակի թվում ՈՒ հոլովման ենթարկվում են առանձին բառեր ու բառախմբեր, բայց Մշո և Դիադինի բարբառներում այս հոլովման են ենթարկվում նաև գոյականների մեծ մասը հոգնակի թվում[1057]: Հոլովման օրինակ՝ եզ. թիվ. *գ՛էրընդի, գ՛էրընդու, գ՛էրընդու/ն/, գ՛էրընդի, գ՛էրընդուց, գ՛էրընդօվ*, հոգն. թիվ. *գ՛էրընդիք, գ՛էրընդիքի, գ՛էրընդիքի/ն/, գ՛էրընդիք, գ՛էրընդիքից, գ՛էրընդիքօվ*:

Եզակի թվում ՈՒ հոլովման ենթարկվում են *ի* ձայնավորով ավարտվող երկվանկ և բազմավանկ բառերը (*ի / ու* հերթագայությամբ), բայերի անորոշ դերբայը, Աստված բառը[1058]. սրանք բոլորն էլ հին հայերենում եզակի թվում ունենում էին *ո* հոլովիչ: Այսքանով

[1055] Սեռականի, տրականի և բացառականի այսպիսի ձևեր վկայված են նաև գրաբարում՝ ապագայ – ապագայց /փոխ. ապագայից/, պարագայ – պարագայց /փոխ. պարագայից/ ևն (տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 37):

[1056] Արձանագրվել է, որ «*ի* հոլովումից հետո միջին հայերենի ամենագործուն և կենսունակ հոլովումներն են *ո*-ն և *ու*-ն» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 17): Միջին հայերենի զարգացման երկրորդ ենթաշրջանում Ու և Ո հոլովումների գործածության սահմաններն ավելի մեծ չափով են սկսում համընկնել, և դատեղի է ունենում Ո-ի հաշվին Ու հոլովման սահմանների ընդլայնման հետևանքով (տե՛ս նշվ. աշխ., էջ 102, նաև՝ Է.Մկրտչյան, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980, էջ 81-88):

[1057] Միջին հայերենում *ք* մասնիկ չպարունակող հոգնակերտներով ձևավորված հոգնակիները սեռական-տրականում կարող էին ստանալ *ոյ, ու* կամ *ի* հոլովակերտներ, ընդ որում՝ վերջինը նախապես անհամեմատ սահմանափակ, իսկ առաջին երկուսը հավասարապես լայն կիրառությամբ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 68): Ինչպես նկատել է Ա.Ղարիբյանը, հայ բարբառներում գոյականների հոգնակին ենթարկվում է կամ Ի, կամ Ու հոլովման, ընդ որում՝ Կը ճյուղի բարբառներում (բացառությամբ Վանի բարբառի) գոյականների հոգնակին ենթարկվում է Ու հոլովման, իսկ մնացած բարբառներում՝ հիմնականում Ի հոլովման (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 143):

[1058] Ինչպես նկատում է Հ.Աճառյանը, անորոշ դերբայը քիչ բացառությամբ, գրեթե ամեն տեղ ենթարկվում է Ու հոլովման, Ում և Ել ճյուղերի բարբառներում -ի վերջացող բազմավանկ բառերը նույնպես ենթարկվում են այս հոլովման, մինչդեռ Կը ճյուղի բարբառներում դրանք ենթարկվում են Ի հոլովման, բարբառներում Ու հոլովման է անցել նաև *աստված* բառը (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 552-553):

ՈՒ հոլովման ընդգրկումը սահմանափակվում է Բայազետի բարբառում, որ նշանակում է՝ բարբառումս հինհայերենյան ՈՒ հոլովման հետքեր չկան: Այդպես է նաև Արարատյան բարբառում, որտեղ ՈՒ հոլովման բառերի նշված շրջանակը ընդլայնվում է միայն *տէր* և *մառթ* բառերով: Ի դեպ, Բայազետի և Արարատյան բարբառների այս հատկանիշը իր արմատներն ունի միջին հայերենում[1059]: Հետաքրքրական է, որ միջինհայերենյան Ու հոլովման որոշ բառաձևեր (*ահու, արևու, գլխու, պապու, լուսու, ծախու, ճամփու, տիրու*[1060]) Բայազետի բարբառում դրսևորվում են իբրև քարացած ձևեր և սովորաբար հանդիպում են որոշակի արտահայտություններում[1061] (*հ՛ախու* /վախենալով/, *հ՛իր °ռեվու* /իր կարծիքով/, *հ՛իրա գ՛ըլխու*, *պ՚պու տուն, լուսու դ՛էմ* , *ծ°խու* , *ճ°մփու դ՛ընել*, *տիրու*): Այլ է իրավիճակը մյուս բարբառներում: Վանի, Խոյ-Մարաղայի, Մշո և Դիադինի բարբառներում կենդանիների անունների մի մասը ենթարկվում է ՈՒ հոլովման (Վ. աղվսու, էծու, առծվու, Խ. առչու /արջի/, կ՚°ռու /գառան/, խավու /հավի/, Մ. խոզու, բ՛ադու, օցու, Դ. օցու, իծու, գ՚իլու), և դրանց մեծ մասը գրաբարում ևս ենթարկվում էր ՈՒ հոլովման: Այս բարբառներում շարունակում են ՈՒ հոլովիչով հոլովվել գրաբարյան ՈՒ հոլովման ենթարկվող այլ բառեր ևս, ինչպես նաև ՈՒ հոլովման են անցել գրաբարյան Ո հոլովման ենթարկվող մի շարք բառեր: Վանի, Խոյ – Մարաղայի, Դիադինի բարբառներում ՈՒ հոլովումը իր ոլորտն ընդլայնել է նոր բառերի ու բառախմբերի հաշվին: Մշո բարբառում այս հոլովման ենթարկվում են նաև ազգության անուններ (հայ, քուրթ, թուրք), կապեր (մէջ, ներս, կուշտ, քով, դ՛ուս), մարմնի մասերի անուններ (հ՛անգաջ, ճագադ, փոր, երես, սիրդ), արյունակցական կապի անվանումներ (զավագ, երէխա, ճիժ, պաբ, մամ), հատուկ անուններ (Մուշ, Մանազգերդ, Բ՛աղէշ, Բ՛իթլիս, Ալաշկերդ), բնության երևույթների անվանումներ (մութ, ցուրդ, շոք) ևն:

[1059] Նկատվել է, որ «ծագումնաբանորեն միջին հայերենի *ու* հոլովման ենթարկվող անունների մեծ մասը կապվում է գրաբարյան *ո* հոլովման հետ, մինչդեռ գրաբարի *ու* հոլովման ենթարկվող անուններից միայն մի քանիսն են պահպանել իրենց հոլովման տիպը, մյուսներն անցել են *ի* հոլովման» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 17):

[1060] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 22-25:

[1061] Նման երևույթ Հ.Աճառյանը արձանագրել է Պոլսի, սակավ դեպքերում՝ նաև Երևանի բարբառներում (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 552-553):

ՈՒ հոլովման ընդգրկման[1062] առումով՝ դիտարկվող բարբառները կարելի է բաժանել երեք խմբի. ա) Մշո և Դիադինի բարբառներ, որոնցում ՈՒ հոլովումն ամենատարածվածն է. այս հոլովման ենթարկվում են շատ գոյականներ եզակի թվում և գոյականների ճնշող մեծամասնությունը հոգնակի թվում, բ) Վանի և Խոյ - Մարաղայի բարբառներ, որոնցում ՈՒ հոլովումը դրսևորվում է միայն եզակի թվում, ընդ որում՝ այս հոլովման ենթարկվում են ինչպես հինհայերենյան ՈՒ և Ո հոլովումների, այնպես էլ այլ կարգի բառեր, գ) Արարատյան և Բայազետի բարբառներ, որոնցում հինհայերենյան ՈՒ հոլովման հետքեր չկան. ուղղակի հինհայերենյան Ո-Ա, մասամբ նաև Ո հոլովումների բառերն են այս բարբառներում ենթարկվում ՈՒ հոլովման:

Փաստորեն, եթե Բայազետի և Արարատյան բարբառներում Ու հոլովումն ունի ձևային (*ի* հնչյունով ավարտվող բառեր) և ձևաիմաստային (անորոշ դերբայ) հիմքեր, ապամյուս բարբառներում այս հոլովման ենթարկվում են նաև իմաստային խումբ կազմող (կենդանիների անուններ) և որևէ հատկանիշով չխմբավորվող բառեր, իսկ Մշո և Դիադինի բարբառներում հոգնակի թվում Ու հոլովումն ունի ընդհանրական բնույթ:

Այնուամենայնիվ, Արարատյան և Բայազետի բարբառներում ևս նկատելի է Ու հոլովման տարածման որոշ միտում: Ինչպես վկայում է Ռ.Մարկոսյանը, Արարատյան բարբառում երբեմն *ու* հոլովիչով են հանդես գալիս տեղանունները, այսպես՝ «Երևանու բ՛էռթը, Աշտարակու գ՛ինին, Բայազէդու փաշէն և այլն»[1063]: Ժողովրդախոսակցական լեզվում շատգործածական են *էրէխու, տղղու, պապու, տատու, փէսու, իշու* ձևերը: Վերը բերված օրինակներից բացի՝ Բայազետի բարբառում հանդես են գալիս *ու* հոլովիչով քարացած այլ ձևեր ևս,

[1062]Ընդհանուր առմամբ նկատելի է, որ բարբառներում եզակի թվում ՈՒ հոլովման ենթարկվում են բառերի հետևյալ խմբերը. ա) գրաբարյան Ու հոլովման բառեր, ինչպիսիք են կենդանիների անունները (ի դեպ՝ այս խումբը համալրվել է գրաբարյան Ու հոլովմանը չառնչվող կենդանիների նոր անվանումներով), մի շարք այլ բառեր (օր.՝ արև, ժամ, ծով, ճակատ, պառավ), բ) գրաբարյան Ո հոլովման բառեր, ինչպիսիք են բայերի անորոշ դերբայը, *գի* վերջածանց ունեցող բառերը, *ի* ձայնավորով ավարտվող միավանկ բառերը, այլ բառեր (բույն, ամիս, գոմ, փոր, ծուխ, ձոր, ջուր, ձեթ, գլուխ, փուշ և այլն), գ) գրաբարյան Ո-Ա խառը հոլովման բառեր, ինչպիսիք են *ի* ձայնավորով ավարտվող բազմավանկ բառերը, դ) գրաբարում այլ հոլովման ենթարկվող բառեր (օր.՝ տէր, սիրտ, դէվ, խառս և այլն), ե) բարբառային բառեր (օր.՝ ճիժ, կուշտ, քով ևն):

[1063] ԱԲ, էջ 112:

որոնց մի մասը թերևս պահպանվել է միջինհայերենյան շրջանից, իսկ առանձին դեպքերում էլ այդպիսիք հարևան բարբառների ազդեցության հետևանք պետք է համարել: Բարբառումս նման ձևեր գործածվում են ինչպես առանձին, այնպես էլ կապակցություններում՝ *°մօթու* (ամոթից), *ինադու* (ի հեճուկս), *մըչու* (չեզոք անձ), *կըսկըծու* (կսկիծից), *հ՛առչուց* (սկզբից)[1064], *գ՛ախուց* (ի սկզբանե), *պըստըկուց* (մանկուց), *վըր հ՛իր °ոևու* (իր կարծիքով), *վըր° գ՛ըլխու* (անմիջապես)[1065] ևն: Ու հոլովման բառերը դիտարկվող բարբառներում մյուս թեք հոլովների կազմության զանազանություններ որպես կանոն հանդես չեն բերում: Այն դեպքերում, երբ բարբառը գործածում է բացառական հոլովի՝ *ց* մասնիկով կազմիչ, հանդես է գալիս այդ հոլովի *ուց* վերջավորությունը (Ալաշկերտի խոսվածքում՝ *ուծ*):

Վա(վան) հոլովում

Դիտարկվող բոլոր բարբառներում էլ այս հոլովման ենթարկվում են ժամանակ ցույց տվող բառեր: Հոլովման օրինակ. եզ. թիվ. *գ՛իշեր, գ՛իշերվա, գ՛իշերվան, գ՛իշեր, գ՛իշերվանից / է, գ՛իշերով,* հոգն. թիվ. *գ՛իշերներ, գ՛իշերներէրի, գ՛իշերներէրին, գ՛իշերներ, գ՛իշերներէրից, գ՛իշերներէրով*:

Բայազետի բարբառում Վա հոլովման ենթարկվող բառերից են՝ *ոօպէ* (ոօպէյվա), *ժամ, օր, °միս, տ°րի, հ՛առավոտ, հ՛իրկուն, գ՛իշեր, շ°փաթ, խինգշ°փտի, գ՛ախ, խէրու, հ՛էրէկ, հ՛էսօր, հ՛առէջ* (առաջ՝ ժամանակի իմաստով), *մըկա, շուտուց, °մառ, ձ՛ըմեռ, սուտկա* ևն: *Ուրփաթ օր, շ°փաթ օր, կիր°կի օր, մէկէլ օր* և նման այլ կապակցություններում հոլովվում է միայն *օր* բառը: Բարբառումս *°վ°լ* (հնում, հին ժամանակ) բառի սեռականն է *°վ°լա* (°վ°լվա ձևից): *Ցէրէգվա, գ՛իշերվա, հ՛էրէգվա, հ՛էսօրվա, հ՛էքուցվա* սեռականներին զուգահեռ գործառում են *ցէրէկա, գ՛իշերա, հ՛էրէկա, հ՛էսօրա, հ՛էքուցա* ձևեր: Վա հոլովման են ենթարկվում նաև ժամանակ ցույց տվող այն բարդությունները, որոնք

[1064] Սրան զուգահեռ գործածական է *հ՛առչից* ձևը՝ «առջևից» իմաստով:
[1065] Դիտարկվող բարբառներից Մշո և Վանի բարբառներում են կապերը նախադաս գործածվում, ուստի նման քարացած կառույցները պետք է համարել այդ բարբառներից ներթափանցած ձևեր:

ավարտվում են *կես* բառով (այդպես է նաև Արարատյան և Մշո բարբառներում). *տ°ոիկիսվա, °միսկիսվա*[1066]:

Ծրջակաբարբառներում Վահոլովման առումով ուշագրավ են մի շարք իրողություններ: Վանի բարբառում այս հոլովման ենթարկվում է նաև *թունէր* (թոնիր) բառը՝ *թորվան*[1067]: Ալաշկերտի խոսվածքում այս հոլովման են ենթարկվում նաև Ի ձայնավորով ավարտվող հատուկ տեղանունները, ինչպես՝ *Կառպի – Կառպըվա, Ջանգի – Ջանգըվա, Լոռի – Լոռվա, Փառպի – Փառպըվա*ևն[1068], այսինքն՝ առկա է նաև Վահոլովման ձևայինհիմք: Այս խոսվածքում *օր* բառը ևս կարող է ենթարկվել Վահոլովման, բայց ավելի գործածական է սեռականի գրաբարակերպ *ավուր* ձևը[1069]:

Բայազետի, Արարատյան, Մշո, Դիադինի բարբառներում այս հոլովման բառերը սեռականում ունենում են *վա* վերջավորություն[1070], Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում՝ *վան* կամ *վա*[1071]: Բարբառներում սրանց բացառականն ու գործիականը կարող են կազմվել ինչպես տրականից, այնպես էլ ուղղականից: Արարատյան բարբառում այս հոլովման սակավաթիվ բառեր են

[1066] Հ.Աճառյանը նման ձևեր արձանագրել է նաև Պոլսո բարբառում (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 558-559):

[1067] ՔՎԲ., էջ 123:

[1068] Ք.Մադաթյան, Նշվ. աշխ., էջ 82:

[1069] Նշվ. աշխ., էջ 82, 84:

[1070] Ըստ Հ.Աճառյանի՝ Կը ճյուղի բարբառներում այս հոլովման վերջավորություններն են՝ սեռ., տր. *վան*, բց. *վանէ, վընէ*, գործ. *վանով, վընով*, Ում և Ել ճյուղերի բարբառներում՝ սեռ. *վա*, տր. *վան*, բց. *վանից*, գործ. *վանով*, ներգ. *վանում*: Ում ճյուղի բարբառներում սեռ. *վան* վերջավորության *ն* բաղաձայնը թյուրըմբռնմամբ համարվել է որոշիչ հոդ ու ընկել, և սեռականը դարձել է *վա* (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 557):

[1071] «Նոր հայերենի *վան* հոլովման միջին հայերեն ակունքները» դիտարկել է Յ.Կարստը (տե՛ս Յ.Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, էջ 163-165): Այս՝ «սեռ. –*վան*, բց. –*վանէ, վնէ* հոլովման» առաջացումը Յ.Կարստի հետևողությամբ մեկնաբանել է Հ.Աճառյանը (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 540 -541): Ըստ այդմ՝ հինհայերենյան *առաւօտուն, այգուն, վաղուն, երեկուն* կարգի ձևերը, միջին հայերենում մակբայական գործածությունից անցնելով գոյականականի և ըմբռնվելով իբրև գոյականներ, որոնք ավարտվում են *ուն* խմբով, հետևում են *անուն, անուան, յանուանէ* հոլովման, ապա և նման ձևերում սեռականի *վան*, բացառականի *վանէ, վընէ* հնչյունախմբերը ընկալվում են իբրև հոլովական վերջավորություններ (նկատվել է, որ միջին հայերենի սկզբնական շրջանում այս հոլովումը խիստ սահմանափակ կիրառություն է ունեցել /տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 28/), և այնուհետև ժամանակ ցույց տվող ամեն մի բառ կարող էր հետևել այս նոր հոլովման (տե՛ս ԼՔՀԼ, հ.3, նույն տեղում): Վահոլովման առաջացման այս հանգամանքներով է բացատրվում նաև այն, որ չնայած դիտարկվող բարբառների մեծ մասում տեղի է ունեցել *վան* > *վա* անցում, սակայն սեռականից կազմվող մյուս թեք հոլովներում նախնական ձևը պահպանվում է (օրվա, օրվընէ, օրվընից, օրվանով):

ունենում ներգոյական հոլովի ձևեր. դրանք կազմվում են ուղղականից՝ ամսըմ, օրըմ, շափաթըմ, տարըմ[1072]:

Բայազետի բարբառում, թվում է, ավելի սովորական ու հարազատ են Վահոլովման բառերի՝ բացառականի *է* վերջավորություն ունեցող ձևերը (ընդ որում՝ հաճախ կազմված ուղղականից), ինչպես՝ *հ՛առավնէ, հ՛առավտընէ, կէսօրնէ / կէսօրվընէ, հ՛իրկընէ / հ՛իրկըվնէ, օրվընէ, տ°րվընէ, գ՛ախվընէ / գ՛ախէն, խէրվընէ, հ՛էրէկվանէ, մըկավանէ, գ՛իշերվանէ* ևն: Այսպիսիք գործածական են նաև ոճերում կամ իբրև քարացած ձևեր, ինչպես՝ *օրէ* (ի սկզբանե), *օրէ օր* (օրեցօր), *հ՛իրկընէ հ՛իրկուն* (ամեն իրիկուն), *կիր°գնէ կիր°կի*, *կէսօրնէ յետ* (կեսօրից հետո), *գ՛ախէն* (սկզբից): Իհարկե, գործածական են նաև *ից* վերջավորությամբ ձևեր՝ *հ՛էսօրվընից, հ՛առէրվանից, գ՛իշերվանից, կէսօրից, հէրէգվընից, օրվընից* ևն: Երբ *րոպէ, ժամ, օր, շ°փաթ, °միս* բառերը գործածվում են ժամանակի չափ ցույց տվող կապակցություններում, նրանց բացառականը ունենում է *ից* վերջավորություն, որն ավելանում է ուղղականի վրա՝ *մէ րոպէյից, էրկու ժամից, իրեք օրից, մէ շ°փաթից, խինգը °միս*: Նման դեպքում *տ°ր* բառի բացառականը ունենում է *ուց* վերջավորություն՝ *մէ տ°րուց*[1073]: Արարատյան և Դիադինի բարբառներում այս հոլովման բառերն ունենում են բացառականի *ից* վերջավորություն, Խոյ-Մարաղայի բարբառում՝ *է*: Մշո բարբառում բացառականը ունենում է *է* կամ *ից*: Վանի բարբառում բացառականի կազմիչ դիտելով *ից* -ը՝ Հ.Աճառյանը նշում է, որ կա նաև *է,էն* ձևով բացառական՝ *մահվընէ, վ°ղվընէ* ևն[1074]: Մ.Ասատրյանը նկատել է, որ Խոյ-Մարաղայի բարբառում Վահոլովման «բառերի մեծ մասը բացառականում ունենում է նաև *վիկ՚է /ն/* ձևը, ինչպես, *յեռանդվիկ՚էն, յէրէյվիկ՚էն, ծըմըռվիկ՚էն, օրվիկ՚էն* և այլն: Սրանք կարող են համարվել մակբայներ»[1075]: Թերևս այս իրողությանը առնչվում է Բայազետի բարբառում բացառականի՝ իր կազմում

[1072] ԱԲ, էջ 114:
[1073] Բայազետի բարբառում *տ°ր* բառը գործածվում է նաև «մահվան տարեդարձ» իմաստով: Այս դեպքում բառը ենթարկվում է Ու հոլովման և ունենում է հետևյալ թեք ձևերը՝ *տ°ր՝ տ°ր՝ ն, տ°ր՝ ուց*:
[1074] Նշվ. աշխ., էջ 116:
[1075] ԽԲ, էջ 81:

վոր է կազմիչ ունեցող ձևը[1076], ինչպես՝ *հիրկըվոր է* (իրիկվանից), *գ՛հշերվոր է, խէրվոր է, °մըռվոր է, ձ՛ըմըռվոր է*: սրանք արտահայտում են գործողության սկսման ժամանակը հեռավոր լինելու կամ իբրև այդպիսին ընկալվելու, նաև անցանկալի տևականության իմաստ, ինչպես՝ *էտա°մները խէրվոր է ըտե դ՛առսուկ են*: Ընդ որում՝ այս կազմությունը պետք է բավականին հին լինի՝ ունենալով բացառականի ավելի նախնական *է* կազմիչ[1077]: Խոյ-Մարաղայի բարբառում *վոր է* կազմիչով ձևեր Մ.Ասատրյանը բերում է մակբայների շարքում՝ *վիկ՚է*-ով ձևերին զուգահեռ, ինչպես՝ *առատվոր է, օսօրվոր է, հրկըվոր է, խէրվոր է, յէռանդվոր է, յէրէյվոր է* ևն[1078]: Թվում է՝ *վոր է* -ով ձևերը Խոյ-Մարաղայի բարբառում նույնքան տարածված են, որքան Բայազետի բարբառում:

Այսպիսով, Բայազետի բարբառը, պահպանելով Վա հոլովման բառերի բացառականի՝ միջինհայերենյան ակունքներ ունեցող *է*-ով ձևերը, մերձենում է արևմտյան և Խոյ-Մարաղայի բարբառներին ու տարբերվում Արարատյան բարբառից:

Ան հոլովում

Այս հոլովումը իր ակունքներն ունի գրաբարում, ապա և միջին հայերենում՝ Ա ներքին հոլովման ձևով[1079]: Այս հոլովման ձևեր Բայազետի բարբառում ունենում են սակավաթիվ բառեր. *°մառ, ձ՛ըմեռ, ձ՛ի, գ՛արուն, °շուն, °կ, բ՛եռ, գ՛առ, դ՛ուռ, յեզ, թոռ,*

[1076] Նաև նման ձևեր Մ.Ասատրյանը բերում է «Ուրմիայի /Խոյի/ բարբառը» աշխատության՝ գավառական բառերի բռացանկում (տե՛ս ԽԲ, էջ 211-239):

[1077] Պետք է կարծել, որ *վոր է* ձևի *վոր* բաղադրիչը առնչվում է բայերի կազմության մեջ դրսևորվող *վոր* ածանցին, որը բայերին հաղորդում է բազմապատկականության և սաստկականության իմաստ, ինչպես՝ *խընթըրել – խընթըրվորել* (շատ, երկար խնդրել):

[1078] Տե՛ս ԽԲ, էջ 137-138:

[1079] Ա ներքին հոլովումը միջին հայերենի զարգացման առաջին ենթաշրջանում (12-14-րդ դարեր) դեռևս բավականին կենսունակ էր (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 29): Երկրորդ ենթաշրջանում (15-16-րդ դարեր) հոլովման տիպերի բաշխման մեջ որպես զգալի տեղաշարժ նշվում է ներքին թեքման Ա հոլովումից անունների որոշ խմբի անցումը արտաքին թեքման Ան հոլովման, որ պայմանավորված է դրանց ուղղականում *ն* հանգի անկումով, սակայն թեք հոլովներում դրա պահպանումով, որի հետևանքով նախկին հիմքակազմ տարրի և հոլովիչի կապակցությունը ընկալվում է իբրև *ան* վերջավորություն (տե՛ս նշվ. աշխ., էջ 102): Հետագայում, ինչպես նշում է Հ.Աճառյանը, գրաբարյան Ի-Ա ներքին հոլովման (ըստ Հ.Աճառյանի՝ *ն* հոլովման երկու տիպարներից առաջինը /տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 554/) բառեր ևս, «որոնք սեռականում ստանում էին *–ին*, դարձան *–ան*, ինչ. եզն, եզին-եզան, գառն, գառին – գառան, լեառն, լերին – լեռան և այլն, ուրիշ խոսքով քանակը հաղթեց որակին» (տե՛ս նույն տեղում, էջ 554-555): Հոլովման այս անցումը

ձ՛ուկ, մուկ, նուռ, մութ, շեմ, թումբ: Սրանցից °*մառ* և *ձ՛ըմեռ* բառերը ենթարկվում են նաև Վա հոլովման, իսկ °*կ, բ՛եռ, գ՛առ, յեզ, թոռ, շեմ, թումբ, մութ* բառերը ենթարկվում են նաև Ի հոլովման: Փաստորեն, բարբառումս միայն Ան հոլովման ենթարկվող բառերն են՝ °*շուն, գ՛արուն, դ՛ուռ, ձ՛ուկ, ձ՛ի, մուկ, նուռ*: Հոլովման օրինակ՝ եզ. թիվ. *դ՛ուռ, դ՛ըռան, դ՛ըռանը, դ՛ուռ, դ՛ըռնից/էն, դ՛ըռնով*, հոգն. թիվ. *դ՛ըռներ, դ՛ըռնէրի, դ՛ըռնէրին, դ՛ըռներ, դ՛ըռնէրից/էն, դ՛ըռնէրով*: *Ան* հոլովումը բավականին լայն ընդգրկում ունի Վանի, Մշո, ավելի քիչ՝ Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներում: «Ուրիշ բարբառներում,- գրում է Հ.Աճառյանը,- այս հոլովման հետևող բառերի թիվը մեծ չէ, բայց Վանի բարբառը ժառանգելով գրաբարի *ն* հոլովման հետևող բազմաթիվ բառեր, հարստացրել է նրանցով իր այս հոլովումը»[1080]: Դիադինի[1081] և Խոյ-Մարաղայի[1082] բարբառներում ևս զգալի քանակության բառեր են ենթարկվում այս հոլովման: Մշո բարբառում այս հոլովման ենթարկվում են *ում*-ով վերջացող բոլոր բառերը, տարվա եղանակների անունները, հինհայերենյան *ն* վերջնահնչյունը կորցրած բառեր[1083]: Ան հոլովման ենթարկվող բառերի թիվը խիստ սահմանափակ է Արարատյան բարբառում. այստեղ այդ հոլովման բառերն են՝ *աշուն, գարուն, դ՛ուռ, մանուկ, մուկ, յեզ, ձ՛ի, ձ՛ուկ*: Ակնհայտ է Արարատյան և Բայազետի բարբառների մերձակցությունը այս հարցում, ինչը թերևս պայմանավորված է նաև այս երկու բարբառներում Ի հոլովման առավել տարածվածությամբ:

նկատելի է արդեն միջին հայերենում, որտեղ արձանագրվել են գառին – գառան, եզին – եզան, լերին – լեռան զուգահեռներ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 29-30):

[1080] ՔՎԲ, էջ 124: Վանի բարբառում, ըստ Հ.Աճառյանի բերած բառացանկի (տե՛ս նշվ. աշխ., էջ 124-126), Ան հոլովման ենթարկվում են մոտութ տասնյակ բառեր, որոնց մեջ են հինհայերենյան Ա ներդրական, Ի - Ա խառը ներդրական հոլովման, ինչպես նաև նախնական ձևայինկամ իմաստային որևէ ընդհանրություն չունեցող բառեր: Նկատելի է, որ այս բառախմբում գերակշռում են այն բառերը, որոնք ավարտվում են *ակ, եկ (էկ), իկ* կամ *ուկ* հնչյունախմբերով: Ուսումնասիրողները նկատել են, որ միջին հայերենում «*ան* հոլովման պատկանող անունների մեծ մասը ունի ձևական ընդհանուր հատկանիշ՝ հիմքի *իկ, ակ, ուկ* հանգը» (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 26): Թերևս սա արձագանքն է հինհայերենյան այն իրողության, որ *իկ* և *ուկ* հնչյունախմբերով ավարտվող մի շարք բառեր ենթարկվում էին Ա ներդրական հոլովման՝ աղջիկ - աղջկան, անդրանիկ - անդրանկան, խցիկ – խցկան, ծաղիկ – ծաղկան, մանուկ – մանկան, մասնիկ – մասնկան, փոքրիկ - փոքրկան ևն (տե՛ս նաև ԼՔՀԼ, հ. 3, էջ 555):

[1081] ԴԲ, էջ 65-66:

[1082] ԽԲ, էջ 81-82:

[1083] ՄԲ, էջ 86-87:

Այսպիսով, Ան հոլովման ընդգրկման առումով դիտարկվող բարբառները կարելի է բաժանել երկու խմբի. ա) բարբառներ, որոնցում այս հոլովման ենթարկվում են ինչպես նախնական *ն* վերջնահնչյունը կորցրած, այնպես էլ այդպիսին ի սկզբանե չունեցած բազմաթիվ բառեր. այս խումբը կազմում են Վանի, Մշո, Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառները, բ) Արարատյան և Բայազետի բարբառներ, որոնցում Ան հոլովման ենթարկվում են սակավաթիվ բառեր:

Վանի բարբառում Ան հոլովման դեպքում մյուս թեք հոլովները ձևավորվում են սեռական-տրականից: Այլ բարբառներում որպես կանոն մյուս թեք հոլովները ձևավորվում են ուղղականից: Այս հոլովներում վերականգնվում է *դուռ* բառի *ն* վերջնահնչյունը:

Ոչ (Ոջ) հոլովում[1084]

Բայազետի և Արարատյան բարբառներում այս հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը[1085]: Մյուս բարբառներում այս հոլովման ենթարկվում են սակավաթիվ բառեր, որոնք հիմնականում ազգակ-

[1084] Այս հոլովումը միջին հայերենում գրաբարի համեմատ նորակազմություն է համարվում այն հիմնավորմամբ, որ «ջ հոլովակազմիչով ձևերը գրաբարում չէին միավորվում հոլովման առանձին տիպի մեջ, քանի որ չունեին հարացուցային ամբողջականություն» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 27): Միջին հայերենում հոլովման այս նոր տիպը առաջանում է *ջ* հոլովակազմիչի և նախկին հոլովիչ *ո* ձայնավորի միացումով և իր ոլորտի մեջ է առնում մի շարք այլ անուններ (տե՛ս նույն տեղում): Հ. Աճառյանը գտնում է, որ այս հոլովումը նախապես դրսևորվել է *կին* բառի հոլովական հարացույցում, ապա դրա ազդեցությամբ ձևավորվել է մի խումբ իգական բառերի համար Ոջ հոլովումը, որն այնուհետև ընդարձակել է իր շրջանակը նորանոր հավելումներով (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 541-542): Եթե հիմք ընդունենք Աճառյանի այս մեկնաբանությունը, ապա, օրինակ, Բայազետի բարբառում Ոջ հոլովման բացակայությունը (*տէր* բառի՝ *ոջ* հոլովմամբ ձևերը թերևս ազդեցության արդյունք են) կարելի է բացատրել *կին* բառի դիմաց *կընիկ* ձևի և դրա *կընգամ/, կընգընից* թեքված ձևերի առկայությամբ: Մինչդեռ Վանի բարբառում *կին* բառի *կիհ՝տեր, կըհ՝տեր* հոգնակիները, *տանդըկին, տէկյէրկին, քեռկին* բաղադրությունները (տե՛ս ՔՎԲ, էջ 110), *տանդըկնոչ* հոլովաձևը (տե՛ս նշվ., աշխ., էջ 127) կարող են վկայել այդ բարբառում *կնիկ* ձևին զուգահեռ կամ դրանից առաջ *կին* բառի և *կնոչ* հոլովաձևերի նախապես գոյություն ունենալու մասին, ուստի և բնական է, որ Վանի բարբառում այս հոլովումը որոշակի քանակության բառեր է ընդգրկում: Մնում է ենթադրել, որ Բայազետի բարբառում, ի տարբերություն Վանի և այլ բարբառների, *կընիկ* ձևը *կին* բառին լիովին փոխարինել է նախքան միջինհայերենյան շրջանում Ոջ հոլովման ձևավորումը:

[1085] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ *տէր* բառն Արարատյան բարբառում ենթարկվում է Ու հոլովման, սակայն մի շարք խոսվածքներում (Լոռու, Աբովյանի, Աշտարակի, Վայոց ձորի, Սևանի, Հրազդանի) այն ենթարկվել է նաև *օչ* հոլովման՝ *ն* հավելվածով՝ *տէր - տիրօնչ* (տե՛ս ԱԲ, էջ 112): Ոջ հոլովումը միայն *տէր - տիրօնչ, տանտէր - տանտիրօնչ* ձևերով է ներկայացված նաև Փարպիի խոսվածքում (ՀԲԱ ծրագրով հավաքված նյութեր, թիվ 9 տետր): Բայազետի բարբառում այս բառի սեռականի *տիրու* ձև գործածվում է հայհոյանքներում և անեծքներում: Վանի բարբառում *տիրոչ, տիրոչից* ձևերին զուգահեռ գործառում են *տիրու, տիրուց* ձևերը (տե՛ս ՔՎԲ, էջ 127):

գություն են ցույց տալիս[1086]: Հոլովման օրինակ՝ եզ. թիվ. *տէր, տիրոջ, տիրոջը, տիրոջը, տիրոջից, տիրոջով*, հոգն. թիվ. *տիրվանք, տիրվանքի, տիրվանքին, տիրվանքին, տիրվանքից, տիրվանքով*: Բոլոր բարբառներում մյուս թեք հոլովները ձևավորվում են սեռականից՝ համապատասխան վերջավորություններով:

Ց հոլովում

Այս հոլովման ենթարկվում են տոհմ, գերդաստան, խմբակցություն ցույց տվող հավաքական անեզականները, որոնք վերջավորվում են *անք, ենք* կամ *ոնք* մասնիկներով: Քանի որ այս հոլովման դեպքում սեռականը ձևավորվում է *ք / գ* հերթագայությամբ, ուստի նշված մասնիկների *ք* տարրը ձեռք է բերում հոգնակի ուղղականի վերջավորության արժեք: Բայազետի բարբառում *անք* մասնիկով ունենք՝ *խէրանք, °ներանք, կէսրանք*, նաև՝ *Տէրդէրանք*, *ոնք* մասնիկով՝ *խընամոնք, ք°ռոնք, պ°ոնք*, ինչպես նաև՝ *իմոնք, քոնոնք, մերոնք, ձ´երոնք*: Այս մասնիկով հատուկ անունները գերդաստան են ցույց տալիս՝ *Չիչոնք, Գ°ռգըռցոնք, Կ°դվալոնք*: *Ենք* մասնիկով ունենք միայն հատուկ անուններ. Դ´եղոյենք, Դ´առփընենք, Վառթանենք, Տիկոյենք): Վանի և Դիադինի բարբառներում Ց հոլովման ենթարկվում են այն բառերը, որոնք վերջավորվում են *անքʲ* մասնիկով (Վ. ճոճ°նքյ, Դ. Աշոտանքʲ), Մշո բարբառում՝ *ենք* մասնիկով (Գ´իրքօրենք), Խոյ-Մարաղայի բարբառում՝ *անք, էնքʲ, օնք* մասնիկներով (քʲէռանք, Ս°րքʲիսէնք, իմօնք), Արարատյան բարբառում՝ *անք, էնք, օնք* մասնիկներով (հէրանք, Սօղոյէնք, խընամօնք): Բոլոր բարբառներում էլ, այսպիսով, Ց հոլովումն ունի ձևաիմաստային հիմք: Հոլովման օրինակ. *ք°ռոնք, ք°ռոնց* (սեռ., տր., հյց.), *ք°ռոնցից, ք°ռոնցով*: Բոլոր բարբառներում բացառականն ու գործիականը կազմվում են սեռականից:

Ա արտաքին հոլովում

Այս հոլովումը կանոնավորապես դրսևորվում է հիմնականում Բայազետի և Մշո բարբառներում: Բայազետի բարբառում այս հոլով-

[1086] Վանի բարբառում Ոչ հոլովման ենթարկվում են *աներ, ինգʲեր* (ընկեր), *կիսուր, քʲավոր, քʲոր* (քույր), *տէքʲր, տանդըկին, տէր, տալվ* (տալ), *քʲենի*, երբեմն նաև՝ *պ°ռէկամ* բառերը, Դիադինի բարբառում՝ *աներ, հընգʲեր, կիսուր, քավոր, տէքʲըր, տէր, տալվ, քʲենի, քʲուր* բառերը, Մշո բարբառում՝ *քուր, տալվ, կիսուր, աներ, հընգեր, տէր, մօրքուր, հօրքուր, քավօրքուր* բառերը, Խոյ-Մարաղայի բարբառում՝ *անէր, ինգʲէր, քավոր, տէքր, տէր, քʲիւր* բառերը:

ման ենթարկվում են հատուկ տեղանունները[1087] (Հ՛էրէվան, Քº՛վº՛ռ, Սէվան), սրանց պես նաև՝ *թունդիր* և *բ՛անակ* բառերը[1088]: Մշո բարբառում այս հոլովման ենթարկվում են *Սասգ, Մէսրոփ* հատուկ անունները, *իգ*-ով վերջացող հատուկ և հասարակ մի քանի անուններ (Հօվսիգ, Ավիգ, Մայրիգ, Ծաղիգ, ախչիգ, իրիգ, կընիգ), մի շարք հատուկ տեղանուններ (Խըլաթ, Կոփ, Հ՛էռզըռում, Վան, Սասուն, Հացիգ, Բ՛ուլանըխ,), *մարդ* ամսանունը[1089]: Ալաշկերտի խոսվածքում Ա արտաքին հոլովման ենթարկվում են երկրների, բնակավայրերի, լեռների, գետերի հատուկ անուններ, բոլոր ամսանունները, ինչպես նաև *թունդիր* (տր. թունդրա, բց. թունդրէն/թունդրած), *ախճիգ, կընիգ, իրիգ, սանիգ, ավազան* բառերը[1090]: Բայազետի բարբառում հատուկ տեղանունների հոլովման ժամանակ *ա* հոլովիչը դրսևորվում է բոլոր թեք հոլովներում՝ բացի գործիականը. օրինակ՝ *Հ՛էրէվան, Հ՛էրէվնա, Հ՛էրէվնան, Հ՛էրէվան, Հ՛էրէվնա, Հ՛էրէվնօվ. Վէդի, Վէդիյա, Վէդիիյան, Վէդի, Վէդիյա, Վէդիյօվ*: Մշո բարբառում Ա հոլովիչը դրսևորվում է սեռական և բացառական հոլովներում, բայց բացառականում հանդիպում են նաև զուգահեռ ձևեր՝ առանց Ա հոլովիչի. օրինակ՝ *Խըլաթ, Խըլաթա, Խըլաթին, ըզԽըլաթըն, Խըլաթա* /ից, էն/, *Խըլաթօվ*: Մինչդեռ Ալաշկերտի խոսվածքում հատուկ տեղանունների բացառականը ձևով միշտ նման է տրականին, ինչպես՝ տր. *Աբարանա*, բց. *Աբարանա*[1091]:

Բայազետի բարբառում հատուկ տեղանունների պես են հոլովվում *թունդիր* և *բ՛անակ* բառերը, սակայն վերջինիս տրականում հանդես է գալիս Ի հոլովիչը. *թունդիր, թունդըրա, թունդըրան, թունդիր, թունդըրա, թունդըրօվ. բ՛անակ, բ՛անակա, բ՛անակին, բ՛անակ, բ՛անակա, բ՛անակօվ*: Բարբառումս եզակի սեռական-տրականում *ա* հոլովակազմիչ են ստանում նաև *°ախճիկ, կընիկ,*

[1087] Հատուկ տեղանունների՝ այս հոլովման ենթարկվելու հատկությունը իր ակունքներն ունի հին հայերենում, որտեղ հատուկ անունների մեծ մասը ենթարկվում էր Ա վերջադրական հոլովման (տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 25): Ինչպես վկայում է Հ.Աճառյանը, «*ա* հոլովումը հատուկ անուններից իսպառ վերացած չէր, այլ գործածական էր նաև Կիլիկյան ժամանակ» (ԼՔՀԼ, հ. 3, էջ 538):

[1088] Ա ձայնավորով ավարտվող հատուկ տեղանունները, ինչպես հին հայերենում, ենթարկվում են Ի հոլովման՝ սեռականում ունենալով *յ* կամ *ի*՝ Մօսկըվայ / Մօսկըվայի, Գէրմանյայ /Գէրմանյայի:

[1089] Տե՛ս ՄԲ, էջ 88-89:

[1090] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 79-80:

[1091] Տե՛ս նշվ. աշխ., էջ 79:

հ՛օռթիկ, ճընջուխ բառերը, որոնք բացառականը կազմում են որոշյալ տրականից: Այսպես, *կընիկ, կընգա, կընգա /ն/, կընգա /ն/, կընգընից, կընգով / կընգընով. °խճիկ, °խճընկա, °խճընկա/ն/, °խճընկա/ն/, °խճընկանից, °խճընկով*: Մարաղայի խոսվածքում այս կերպ են հոլովվում «անխտիր -իկ վերջացող բոլոր բառերը»[1092], ինչպես՝ *ախչիկ՝, ախչկա/ն/, ախչիկէն, ախչիկ՝ով*[1093]:

Բայազետի բարբառում նշված բառերի, Մարաղայի խոսվածքում *իկ* և Մշո բարբառում *իգ* հնչյունախմբով ավարտվող հատուկ և հասարակ անունների՝ Ահոլովիչով հոլովումը (Մրդ. *կընիկ՝ – կնգա/ կընական, զ°տիկ՝ - զ°տական,* Մ. *Թաթիգ - Թաթիգա, Ավիգ - Ավիգա, ախչիգ - ախչընգա*) ակնհայտորեն առնչվում է նման բառերի՝ Վանի բարբառում Ան հոլովման ենթարկվելու իրողությանը (*ախչիկ – ախչական, կնիկ – կնգ՝°ն, վորթիկ – վորթական, ճընջղուկ - ճնջընական*)[1094], և այս երկուսն էլ առնչվում են հինհայերենյան Ա ներդրական հոլովմանը (աղջիկ - աղջական, Յուսիկ – Յուսական, Սաթէնիկ – Սաթինական)[1095]: Ի դեպ, Հ.Աճառյանը ծագումնաբանորեն հինհայերենյան Ա ներքին հոլովմանը վերաբերող բոլոր ձևերը ընդգրկում է մեկ հոլովման մեջ[1096]: Այս կարգի բառերի դեպքում, ըստ երևույթին, Բայազետի և Մշո բարբառներում թեքված ձևի *ն* հնչյունը ընկալվել է իբրև որոշիչ հոդ և սեռականում ընկել է (ինչպես վան > վա անցման դեպքում)՝ այդպիսով պատճառ դառնալով Ան հոլովումից Ահոլովման անցնելուն, մինչդեռ Վանի բարբառում այդ երևույթը տեղի չի ունեցել, չնայած այստեղ Վա հոլովման դեպքում թյուրըմբռնումը առաջ է բերել *վան / վա* զուգաձևություն[1097]:

[1092] Տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 594:

[1093] Տե՛ս նույն տեղում:

[1094] Այս մասին Հ.Աճառյանը գրել է, որ «Գործածության մեջ զանազան բարբառներում այս -ան մասնիկը երբեմն մնում է -ան, երբեմն էլ դառնում է սեռ. –ա, տր. –ա, -ան» (ԼՔՀԼ, հ. 3, էջ 554):

[1095] Այս մասին տե՛ս նաև նշվ. աշխ., էջ 554-555:

[1096] Տե՛ս նշվ. աշխ., էջ 555:

[1097] Մարաղայի խոսվածքում *իկ* - ով ավարտվող բառերը սովորաբար սեռական-տրականում ստանում են *ա* հոլովակազմիչ, սակայն մի շարք դեպքերում առկա է հոլովակազմիչների *ա/ան* զուգաձևություն, ինչպես՝ *ախչիկ՝ – ախչկա/ ախչական, կընիկ՝ – կնգա/ կընական, տաճիկ՝ – տաչկա, տաչական* (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 594): Եվ քանի որ Խոյ-Մարաղայի բարբառում ևս (Վանի բարբառի պես) առկա է նաև *վան / վա* զուգաձևություն, ուստի հնարավոր է, որ թե՛ Խոյ-Մարաղայի, թե՛ Վանի բարբառներում հոլովակազմիչների *ն* հնչյունի դրսևորման անկայունությունը պայմանավորված է դրանցում որոշյալության կարգի արտահայտման յուրահատկություններով:

Մյուս բարբառներում առկա են Ա վերջադրական հոլովման արտահայտության մասնավոր դեպքեր: Արարատյան բարբառում այս հոլովման ենթարկվում են *ախջիգ, կընիգ, թունդիր* բառերը (օրինակ՝ կընիգ /ը/, կընգա, կընգան, կընգանից /ը/, կընգանով /ը/), իսկ հատուկ տեղանունները Ա հոլովիչ ունենում են միայն սեռական հոլովում, ինչպես՝ *Հ՛աշտարակ, Հ՛աշտարակա, Հ՛աշտարակից /ը/*: Վանի, Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներում (Մարաղայի խոսվածքից բացի) Ա արտաքին հոլովման հատկանիշ դրսևորվում է միայն հատուկ տեղանունների բացառական հոլովում՝ Վ. *Թավրէզա*, Դ. *Հ՛էրէվնա*, Խ. *Էշմիյազնա*: Վանի բարբառի նման ձևերի մասին Հ.Աճառյանը գրել է. «Սրանք գրաբարի հատուկ անունների հոլովման մնացորդներն են՝ նախդրից զրկված. ինչ. յԵրուսաղեմայ, ի Գանձակայ, ի Վանայ և այլն»[1098]:

Փաստորեն, դիտարկվող բարբառներում եզակի սեռական-տրականի ձևով նույնացել են նախնական Ա ներքին և Ա արտաքին հոլովումների արձագանքները ներկայացնող բառախմբեր, ընդ որում՝ մի շարք հասարակ, որոշ դեպքերում նաև՝ հատուկ անունների՝ բարբառներում Ա արտաքին հոլովման ենթարկվելը արձագանքն է հինհայերենյան Ա ներդրական հոլովման, իսկ հատուկ տեղանունների նման հոլովումը արձագանքն է հինհայերենյան Ա վերջադրական հոլովման: Նկատելի է, որ Բայազետի և Մշո բարբառները հատուկ տեղանունների հոլովական յուրահատկություններով ավելի մոտ են հինհայերենյան համակարգին, քան մյուս բարբառները:

Ա ներքին հոլովում

Բայազետի բարբառում այս հոլովման բառերն են՝ *ձ՛ուն, տուն, շուն, սուն* : *Ութուն* (*ութիւն*) ածանց ունեցող բառերն այստեղ (ինչպես և Վանի, Խոյ-Մարաղայի, Մշո բարբառներում) ենթարկվում են Ի հոլովման՝ *հ՛ընգերութուն - հ՛ընգերութունի*, սակայն նոր սերնդի խոսքում գրական լեզվի ազդեցությամբ գործածական են նաև *ություն* ածանցով կազմություններ, որոնք ենթարկվում են Ա ներքին հոլովման: Մյուս բարբառներում ևս բառամիջի *ու* (կամ *իւ*) /

[1098] ՔՎԲ, էջ 116:

ա հերթագայությամբ[1099] արտահայտվող այս հոլովման ենթարկվում են սակավաթիվ բառեր[1100]: Ա ներքին հոլովման դեպքում մյուս թեք հոլովները ձևավորվում են ուղղականից[1101] (Բ. ձ՛ուն - ձ՛ընից - ձ՛ընօվ, Վ. սուն - սնից - սնօվ, Դ. շուն - շընից - շընօվ, Ա. տուն - տընից - տընօվ. Խ. տուն - տընէն - տընօվ): Բարբառներում, այսպիսով, Ա ներքին հոլովումը դրսևորվում է հինհայերենյան նույն այդ հոլովման սակավաթիվ բառերով, այսինքն՝ հանդես է գալիս իբրև պատմական հոլովում[1102]:

Ո հոլովում

Այս հոլովման ենթարկվում են *հայր, մայր, եղբայր* բառերի բարբառային տարբերակները՝ *ախպէր, հէր / խէր, մէր* (Վ.,Խ.,Դ.,Մ.): Բայազետի բարբառում այս հոլովման ենթարկվում են °*խպէր, խէր, մէր, քուր* բառերը, իսկ Արարատյան բարբառում՝ *ախպէր, հէր, մէր, քուր, տէքըր, անէր* բառերը[1103]: Հոլովման օրինակ՝ *քուր, քըվոր, քըվորը, քըվորը, քըվորից, քըվորօվ*: Եթե նկատի ունենանք, որ հինհայերենյան *քոյր* բառը սեռականի սովորական *քեռ* ձևից բացի

[1099] Բացառություն է *անուն* բառը, որը հոլովվում է ոչ թե հերթագայությամբ, այլ *ա* հոլովիչի ներմուծմամբ, որից առաջ *ու*-ն դառնում է *վ՝ անուն - անուան – անվան*: Բայազետի բարբառում այս բառը ենթարկվում է Ի հոլովման՝ °ընի:

[1100] Այսպես՝ Վ. *անուն - անվան, ծիւն* (ձյուն) - *ծ°ն, շուն – շան, սուն - սան, տուն – տան*, Դ. *սուն – սան, բ՛ուն - բ՛ան, տուն – տան, շուն – շան*, Խ. *տուն – տան, շիւն* (շուն) - *շան, սուն – սան, ծիւն - ծ°ն*, Ալ. *անուն - անվան, տուն – տան, ձ՛ուն – ձ՛ան, շուն – շան, սուն – սան* (Ալ.): Արարատյան բարբառում այս հոլովման ենթարկվում են « - *ութուն* ածանց ունեցող և *տուն, շուն* գոյականները: .... – *Ութուն* ածանց ունեցող որոշ բառեր կարող են ենթարկվել նաև *ի* հոլովման՝ լավութուն - *լավութունի*» (ԱԲ., էջ 116):

[1101] Միջին հայերենում այս հոլովման բառերի մյուս թեք հոլովները կազմվում էին սեռականից, ինչպես՝ *ծառութիւն* (ծառայութիւն) – *ծառութեան / ծառութեն - ի ծառութենէ – ծառութենով. տուն - տան - ի տանէ - տանով / տնով* (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 539):

[1102] Տե՛ս նաև Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 84: Միջին հայերենում ուսումնասիրողները կատարում են այդ բառերի բաշխում հոլովական երկու տիպերի միջև՝ Եահոլովում և Ահոլովում: Եա ներքին հոլովման են ենթարկվում *իւն, ութիւն* հանգով հիմքերը, ինչպես՝ *առողջութիւն - առողջութեան, ձիւն - ձեան*: Ա ներքին հոլովման (բաղաձայն+*ն* խմբով ավարտվող բառերի հետ) ենթարկվում են նաև *շուն* (շան), *տուն* (տան) բառերը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 28-30): Բարբառային հայերենում՝ քննարկվող բառախմբի վերաբերյալ ունենք Հ.Աճառյանի հետևյալ դիտարկումը. «-*ութիւն* մասնիկի հետ կապվում են նաև մի խումբ առանձին բառեր, ինչ. *տուն, շուն, սիւն, ձիւն*, որոնք բարբառներում տեղ տեղ պահված են *տան, շան, սան, ձան* ձևերով, թեև կարող են լինել նաև՝ *տունի, շունի, սունի, ձունի*» (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 555): Ինչպես տեսանք, Բայազետի և նրա շրջակա բարբառներում այս բառերը պահպանել են նախնական ներքին թեքման ձևերը:

[1103] Արարատյան բարբառում, ըստ Հ.Աճառյանի, այս հոլովման են ենթարկվում նաև *ընկեր* (ընկօր), *կեսուր* (կեսօր) բառերը: Լեզվաբանի կարծիքով՝ այս բարբառում այլ բառերի՝ *հայր, մայր, եղբայր* խմբի նման հոլովումը սկսվել է *քոյր* բառից, որը միջին հայերենում ունենում է *քոոջ*, բայց նաև՝ *քկօր* ձևեր, որով մտնում է *հայր - հօր* հոլովման մեջ (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 691):

մատենագրության մեջ երբեմն ունենում է նաև *քուեր* ձևը[1104], ապա դժվար չի լինի ենթադրել, որ լինելով ազգակցություն ցույց տվող բառ՝ այն որոշ բարբառներում ենթարկվել է *հայր, մայր, եղբայր* բառերի հոլովական ազդեցությանը և անցել Ո ներքին հոլովման՝ *քըվոր*[1105]: Նույն այդպիսի ազդեցությամբ պետք է բացատրել Արարատյան բարբառում *տէքըր* և *անէր* բառերի՝ Ո հոլովման ենթարկվելը: Բարբառներում Ո ներքին հոլովման են ենթարկվում նաև այն բաղադրությունները, որոնք վերջավորվում են *հայր, մայր* կամ *եղբայր* բառերից որևէ մեկով: Բոլոր բարբառներում Ո հոլովման դեպքում բացառական և գործիական հոլովները ձևավորվում են սեռականից:

Հոլովական քարացած ձևեր

Բարբառներում հանդիպում են հոլովական քարացած ձևեր, որոնք տվյալ բառի հոլովական հարացույցից դուրս են և գրաբարյան կամ միջինհայերենյան համակարգից որոշակի կապակցություններում (երբեմն նաև՝ առանձնաբար) աշխարհաբար հասած իրողություններ են: Հ.Աճառյանը իր «Քննություն Վանի բարբառի» աշխատության մեջ «Գրաբարաձև հոլովում» վերնագրի տակ գրաբարյան Ա ներդրական հոլովման օրինակով հոլովվող բառերի հետ բերում է նաև Վանի բարբառում հանդիպող քարացած հոլովաձևերի հետևյալ օրինակները. *աչիչ* (աչից), *էրկնուց, խել °ց, խոսաց, ծեռաց* (ձեռաց), *մեղաց, մէճ°ց* (մեջքի), *մտաց, վոտաց, տէկ՚եր* (տայգեր), *տեղաց, վ°նից, ք՚ընոց կ՚°խ* (քնելու ժամանակ), *ավուր*[1106]: Բերված բոլոր ձևերն էլ սեռական հոլովով են, հիմնականում՝ հոգնակի թվով: Գրաբարյան քարացած նույն հոլովաձևերն են հանդես գալիս Մշո բարբառի որոշ արտահայտություններում. Քո *մեղաց* տակ մըդավ. Ընի իմ *ձ՛էռաց* տագ է մէձցի. *խէլաց* կըդուր է. Ընի *խոսաց* տագ չըմնա. Իմ *մըդաց* գ՛ացէր է. Իմ *օդաց* տագ. *Սերման* սոխ ևն[1107]: Բայազետի բարբառում քարացած ձևեր քիչ են հանդիպում. օրինակ՝ *°սխան, սերման, վոտաց, ն°խնյաց, չ օրէք կօղմանց, հ՛ավուր*: Հետաքրքրական են *միտ* բառի հինհայերենյան *ի մտէ* բացառականից

[1104] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 56:
[1105] Այս բառի միջինհայերենյան հոլովաձևերի (քուեր, քօր, քուրոջ) մասին տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 539-540:
[1106] ՔՎԲ, էջ 127-128:
[1107] ՄԲ, էջ 90:

մնացած *մտէ* (ս,դ,ն) ձևի կիրառությունները: Հաճախ այն գործածվում է բացառական հոլովի իմաստով, ինչպես՝ *մըտէն էթալ* (մտքից գնալ, մոռանալ), *մըտէս գ՛ացե*: Սակայն այդ նույն ձևը կիրառվում է նաև ներգոյականի իմաստով, ինչպես՝ *մըտէս ա* (մտքումս է, հիշում եմ), *պ°խե մըտէն* (պահել է մտքում, հիշում է): Այլ դեպքերում բարբառումս գործածական է *միտկ* անեզականը: Անկանոն հոլովման է ենթարկվում *տէքըր* (տեգր) բառը՝ *տէք°ր, տէք°րը, տէքըրից / տէք°րից, տէքըրով*: Ըստ ամենայնի՝ հինհայերենյան ե ներդրական հոլովման արձագանքն է այս ձևը, մանավանդ որ Վանի բարբառն ունի *տէկ՛եր* սեռականը, և թերևս Բայազետի բարբառում *ե*-ի ավելի բաց արտասանությունը հանգեցրել է *ե* > ° հնչյունափոխության, ինչը առկա է նաև *ք°ռի* (քեռի) ձևում[1108]: Բարբառումս գործառում են նաև միջինհայերենյան քարացած հոլովաձևեր:

1.3. *Առկայացման կարգը*

Բարբառներում առկայացման կարգի հիմնական դրսևորումներն են որոշյալությունը և ստացականությունը. գրական լեզվի պես դիմորոշ և ցուցական հոդերը համեմատաբար սակավ կիրառություն ունեն:

Բայազետի բարբառում գործառում են *ը* և *ն* որոշիչ հոդերը: Այստեղ, ինչպես Վանի, Մշո և Դիադինի բարբառներում, որոշիչ հոդ ընդունում են միայն ուղղական, տրական և հայցական հոլովները. *ը* հոդ ստանում են բաղաձայնահանգ բառերը (Վառթանը, գ՛իրքը), իսկ *ն* հոդ՝ ձայնավորահանգ բառերը (տըղէն, Կ°ռօն): Ձայնավորով սկսվող բառից առաջ *ը* հոդի փոխարինումը *ն*–ով պարտադիր չէ. ասվում է և՛ «Վառթանը °սավ», և՛ «Վառթանն °սավ»: Բարբառումս *հ՛* շփականով սկսվող բառերից առաջ նախորդ բառը սովորաբար ունենում է *ն* հոդ, ինչպես՝ *Սօֆիկն հ՛իշում. Վաղուշն հ՛էլ ավ* [1109] : Դրսևորվում են կրկնակի հոդառության դեպքեր, երբ ձայնավորով ավարտվող բառը

[1108] Վանի բարբառումս «անսովոր ձևի» հոլովում է հանդիպում. այստեղ *իկ* խմբով ավարտվող մի քանի հասարակ և հատուկ անձնանուններ սեռականում ունենում են *է* վերջավորություն, ինչպես՝ *պապիկ – պապկէ, մամիկ – մամկէ, Ծօղիկ – Ծօղկէ, Օղիկ – Օղկէ*: Ինչպես վկայում է Հ.Աճառյանը, այսպիսի ձևեր դիտարկվում են միջին հայերենում և ավելի ուշ (տե՛ս ՔՎԲ, էջ 129):

[1109] Համանման երևույթ դիտարկվել է նաև Ալաշկերտի խոսվածքում, սակայն այնտեղ բառասկզբի *հ՛* –ն ընկնում (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 97):

միաժամանակ ստանում է և՛ *ն* հոդ, և՛ *ը*, ինչպես՝ մ°*մանը, բօգինը, ձ՛ինը*: Այս հատկանիշը դիտարկվում է առանձին բարբառախոսների մոտ և նույնիսկ որևէ խոսվածքի համար ամբողջապես բնութագրական չէ: Բայազետի բարբառում անորոշ հոդն է *մէ*, որը միշտ նախադաս է գործածվում՝ *մէ գ՛իրք, մէ քար*[1110]:

Մերձավոր բարբառները հոդերի գործառության առումով հանդես են բերում որոշակի յուրահատկություններ: Վանի բարբառում միակ որոշիչ հոդն է *ն*[1111], որը դրվում է ձայնավորով ավարտվող բառերի վրա (խոկ՝ին խասավ պէրան), ինչպես նաև բաղաձայնով ավարտվող բառերի վրա, եթե հաջորդ բառն սկսվում է ձայնավորով (Յես քՀ՝ո խէր*ն* եմ): Բաղաձայնահանգ բառերը բաղաձայնով սկսվող բառից առաջ հոդ չեն ստանում (ճիւր խամեղ ի)[1112]: Ինչպես նկատում է Հ.Աճառյանը, «Վանի բարբառը ընդունակ չէ բառավերջում արտասանելու *ը* ձայնավորը»[1113], սակայն, այնուամենայնիվ, այստեղ ևս, ինչպես Բայազետի բարբառում, երբեմն *ն* և *ը* հոդերը միասին են դրվում նույն գոյականի վրա՝ *կատունը, պառվունը*[1114]: Վանի բարբառը առանձնանում է անորոշ հոդի հետադաս կիրառությամբ՝ *խացը մտուր* (մի հաց տուր)[1115]:

Մշո բարբառում *ն* որոշիչ հոդ ստանում են ձայնավորահանգ բառերը (ձ՛ին, կադուն), իսկ *ը* հոդ ստանում են բաղաձայնով ավարտվող բառերը (տունը, շունը), սակայն ձայնավորով սկսվող բառից առաջ *ը*-ն չի դառնում *ն*՝ բացառությամբ այն դեպքի, երբ հաջորդ բառն է *լ է* (էլ՝ հացընլ է կէրավ: Այս բարբառում որոշյալ հայցակա-

---

[1110] «Միջին հայերենում արդեն նկատվում են *մի* թվականի, որպես անորոշության իմաստ արտահայտող հատուկ մասնիկի, գործածության հատուկենտ դեպքեր... սակայն այսպիսի օրինակները խիստ սակավ են, *մի* մասնիկը դեռ ձեռք չի բերել իմաստային և ֆունկցիոնալ այն հստակությունը, որ հատուկ է ժամանակակից հայերենին» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 79):

[1111] Տե՛ս նաև Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 139:

[1112] Բաղաձայնահանգ բառը կարող է հոդ չստանալ նաև ձայնավորով սկսվող բառից առաջ (մարթ էկավ), բայց այդ անպայմանորեն չի նշանակում անորոշ առում. համապատասխան շեշտադրումը կարող է տարբերակել որոշյալ առումը (մարթ էկա՛վ՝ մարդը եկավ) անորոշից (մա՛րթ էկավ՝ մի մարդ եկավ): Այսպիսով, *ը* հոդի բացակայությունը չի նշանակում, թե Վանի բարբառը «չի գիտակցում բառի որոշյալ թե անորոշ լինելը» (ՔՎԲ, էջ 143): Վանի բարբառում հատուկ անձնանունները որոշիչ հոդ ստանում են, իսկ տեղանունները՝ ոչ (տե՛ս նշվ. աշխ., էջ 145):

[1113] ՔՎԲ, էջ 143:

[1114] Տե՛ս նշվ. աշխ., էջ 144:

[1115] Այս բարբառում անորոշ հոդը կարող է դրվել նաև նախադաս՝ *մէկ* խաց կամ *մէյ* խաց, *մէկ* աթոռ, ինչպես նաև՝ «անորոշի գաղափարը զորացնելու համար» ուղեկցվել *խա*/հատ/ բառով՝ *մէյ խա*մարթ /մեկ հատ մարդ/ (տե՛ս ՔՎԲ, էջ 142):

նը ստանում է *զ* նախդիր (ըզտուն, ըզհաց, զաստված, զիրիգ): Ի տարբերություն Մշո բարբառի՝ Ալաշկերտի խոսվածքը չունի *զ* նախդրի կիրառություն[1116]: Դիադինի բարբառում ևս որոշիչ միակ հոդն է *ն*՝ շունը *ն* խատավ, փաշէ *ն* վ°զ°վ: Այս բարբառում ևս հատուկ անձնանունները կարող են գործածվել առանց որոշիչ հոդի՝ *Վառթան բ՛էրեց*: Անորոշ *մէ* հոդը գործածվում է միայն նախադաս՝ *մէ մառթ, մէ տուն*: Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում որոշիչ հոդերն են *ը* և *ն*, որոնք ունեն կիրառական նույն յուրահատկությունները, ինչ գրական արևելահայերենում: Բայց ի տարբերություն մյուս բարբառների և գրականի՝ այս երկու բարբառներում որոշիչ հոդ ստանալ կարող են բոլոր հոլովները՝ սեռականից բացի[1117]: Խոյ-Մարաղայի բարբառում անորոշ հոդն է *մէ*, Արարատյանում՝ *մի, մին* կամ *մէ*: Խոյ-Մարաղայի բարբառի որոշ խոսվածքներում որոշիչ հոդը *ը*-ի փոխարեն արտահայտվում է *ա* կամ ° հնչյունով, ինչպես՝ *պ°տուղա* (պտուղը), *տ°շտ°* (դաշտը):

Այսպիսով, որոշյալության կարգի դրսևորման առումով բարբառները յուրահատկություններ են հանդես բերում ըստ արտահայտության միջոցների ու եղանակների, ըստընդգրկման: Ըստ այդմ՝ *ը* և *ն* որոշիչ հոդերի գործածությամբ բնութագրվում են Բայազետի, Մշո, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառները, միայն *ն* որոշիչ հոդ ունեն Վանի, Դիադինի բարբառները և Ալաշկերտի խոսվածքը: Սեռականից բացի՝ բոլոր հոլովներում որոշիչ հոդի կիրառությամբ բնութագրվում են Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառները: Բոլոր բարբառներում անորոշ հոդը ունի նախադաս

[1116] Այս խոսվածքում գործածվում է միայն *ն* որոշիչ հոդը, ընդ որում՝ մի շարք դեպքերում ենթական կամ խնդիրը գործածվում են առանց հոդի, ինչպես՝ *Առշագ գ՛ընած գ՛եղ. Գ՛էվօն ո՛ւր առդ* քաղեծ. Էրէխէն *մօր* շատ գուզա և այլն: Փաստորեն, Ալաշկերտի խոսվածքում որոշիչ հոդը հաստատուն կիրառություն չունի, և հաճախ որոշյալ բառը գործածվում է առանց հոդի (տե՛ս Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, էջ 97): Այս առումով, ինչպես նաև *ը* հոդ չունենալու հանգամանքով Ալաշկերտի խոսվածքը նմանվում է Վանի բարբառին, ուստի իրավացի է Ք.Մադաթյանը, երբ գրում է. «Այս տեսակետից Ալաշկերտի խոսվածքը միջին դիրք է գրավում Վանի և Մշո բարբառների համեմատությամբ» (նույն տեղում): Այս խոսվածքը Վանի բարբառին նմանվում է նաև անորոշ հոդի հետադաս կիրառություն ունենալով, ինչպես՝ *կընիգ մ՛* ըսեծ (մի կին ասաց), *տունը մ՛* քանդըվավ (մի տուն քանդվեց): Անորոշ հոդը Վանի բարբառի պես կարող է դրվել նաև նախադաս, ինչպես նաև՝ ուղեկցվել *հատ* բառով (Վանի բարբառում՝ *խա*), ինչպես՝ *մէ տուն, մէ հատ տուն*:

[1117] «Որոշիչ հոդը միջին հայերենում միանգամայն զուրկ է հոլովատարբերակիչ ֆունկցիայից, ձևաբանական մակարդակում դիրքային ոչ մի

կիրառություն, Վանի բարբառում և Ալաշկերտի խոսվածքում՝ նաև հետադաս կիրառություն:

Բոլոր բարբառների համար ընդհանուր են *ն* որոշիչ հոդի առկայությունը[1118] և սեռական հոլովի՝ որոշիչ հոդ չընդունելու հատկությունը[1119]: Միայն մեկ բարբառային միավորում հանդիպող հատկանիշ է Մշո բարբառում որոշյալ հայցականի ձևավորումը *զ* նախդրով: Վանի և Բայազետի բարբառներում երբեմն հանդիպող կրկնակի հոդառությունը ընդհանուր առմամբ բնութագրական չէ այդ բարբառների կամ ավելի փոքր բարբառային որևէ միավորի համար, թերևս երկուսում էլ մարող հատկանիշ է:

Ինչ վերաբերում է ստացականությանը, ապա բոլոր բարբառներում էլ այն դրսևորվում է *ս, տ, ն (ը)* հոդերով[1120], որոնք կարող են դրվել բոլոր հոլովների վրա, ինչպես՝ *զ՛իրքըս, զ՛ըրքիտ, զ՛ըրքիցըս, զ՛ըրքօվըտ* ևն: *Ն (ը)* հոդը ստացականության իմաստ սակավ դեպքերում է դրսևորում: Այդ իմաստը ընկալելի է, երբ հոդը դրվում է մարմնի մաս, ազգակցություն կամ անձին պատկանող առարկա անվանող բառի վրա: Եթե *ս* և *տ* հոդերի դեպքում ստացականության իմաստը հասկանալի է նաև խոսքից դուրս, ապա երրորդ դեմքի ստացականությունը սովորաբար հասկանալի է միայն կապակցության մեջ, ընդ որում՝ կախված կապակցության բնույթից՝ *ն(ը)* հոդը մի դեպքում կարող է նշանակել «իր, սեփական», մեկ այլ դեպքում՝ «ուրիշի», ինչպես որ հոդի բացակայության դեպքում է: Օր., «Վառթանը քիթը ջ՛առթե» նախադասության մեջ խոսքը Վարդանի՝ իր քիթը ջարդելու մասին է, մինչդեռ «Վառթանը քիթ աջ՛առթե» կամ «Վառթանը Տիկօյ քիթը ջ՛առթե» նախադասություններում խոսքը ուրիշի քթի մասին է, և վերջին դեպքում *քիթը* բառի *ը* բաղադրիչը որոշիչ հոդ է, ինչպես որ է *իմ քիթը* կապակցության մեջ:

պայմանավորվածություն չունի և կարող է կցվել ցանկացած հոլովաձևին՝ լինի այն եզակի, թե հոգնակի» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 80):

[1118] Ինչպես նկատվել է, «Միջին հայերենում *ն* որոշիչ հոդը չունի իր դիրքային տարբերակը՝ ը, որ ավելի նոր ժամանակների ծնունդ է և զարգացել է միայն աշխարհաբարում՝ հնչյունական որոշ օրենքների գործողության հետևանքով» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 79):

[1119] Ինչպես նշում է Ա.Ղարիբյանը, Ում ճյուղի գրեթե բոլոր բարբառներում, Լ և Ս ճյուղերի բարբառներում սեռականը որոշիչ հոդ չի ստանում, իսկ Կը ճյուղի բարբառների մեծ մասում ստանում է: «Այդպես չէ *Վանի, Մշո, Կարնո, Մոկսի* բարբառներում» (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 140):

Համեմատի՛ր նաև հետևյալ զույգերը. *Թաքուշը սիրում ա °խաղը* և *Թաքուշը սիրում ա Վառթուշի °խաղը. Ն°զիկը գ՛ըլխարկը կուրցըրեց* և *Ն°զիկը Թամարի գ՛ըլխարկը կուրցըրեց*: Հետևում է, որ *ն(ը)* հոդին ստացականության իմաստկարող է վերագրվել միայն այն դեպքում, երբ պատկանյալ առարկայի անունը չի ուղեկցվում հատկացուցչով:

Մշո բարբառում ստացական հոդերը ունեն դրսևորման յուրահատկություն. *ս* և *տ* հոդերից հետո այստեղ բառերի վրա իբրև աճական ավելանում է *հ* ձայնավորը՝ *ձ՛էռքսի – ձեռքս, էրթալ սի - գնալ ս, տուն տի – տուն դ, պապտի – հայրդ*[1121]:

Բարբառները գործածում են նաև հոգնակի ստացականության ձևեր, երբ *ս, տ, ն* հոդերը նշանակում են ոչ թե *իմ, քո, նրա*, այլ *մեր, ձեր, նրանց* (իրենց): Բայազետի բարբառում հոգնակի ստացականություն արտահայտելու համար թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերը ստացական հոդից առաջ ստանում են *ներ* հոգնակերտը, ընդ որում՝ միավանկ բառերի դեպքում սովորական հոգնակին այլ ձև ունի, ինչպես՝ *ձ՛եռներըս* (իմ ձեռքերը) - *ձ՛եռնըներըս* (մեր ձեռքերը), *ձ՛էներ* (ձայներ) - *ձ՛ենըներըտ* (ձեր ձայները): Բազմավանկ բառերը, ձևային զանազանություն հանդես չբերելով, հոգնակի ստացականության իմաստ ունենում են միայն այն դեպքում, եթե անվանում են այնպիսի իրողություն, որից մարդը ունենում է միայն մեկը՝ *գ՛ըլխները* (իրենց գլուխները), *ճ°կտներըտ* (ձեր ճակատները): Երբ բազմավանկ բառով անվանվում է մարդու ունեցած ոչ եզակի իրողություն, ապա եզակի և հոգնակի ստացականություն արտահայտելու համար առանձին ձևեր չեն գործածվում, ինչպես՝ «հանգըժներըս» ձևը կարող է նշանակել և՛ *իմ ականջները*, և՛ *մեր ականջները* (հմմտ. *Հէսօր հանգըժներըս ցավում են* և *Հանգըժներըս բ՛ըռնինք ու փախանք*): Ալաշկերտի խոսվածքում հոգնակի ստացականությունն արտահայտվում է հոգնակի դերանունների միջոցով, ինչպես՝ *մեր ձ՛եռներ, ձ՛եր ձ՛եռներ, ընդոնց ձ՛եռներ*: Դերանունները կարող են նաև հետադաս գործածվել, ինչպես՝ *գ՛ըլօխ մըզի, գ՛ըլօխ ձ՛ըզի* (մեր

[1120] Միջին հայերենում ստացականության իմաստն սկսում է արտահայտվել հիմնականում *ս, դ* հոդերով, իսկ *ն* հոդը առաջին հերթին որոշյալություն է արտահայտում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 79):

գլուխներին, ձեր գլուխներին): Այդ դիրքում *մեր, ձ՛եր* դերանունները ենթարկվում են կրճատման՝ *ձ՛էներ մե, ձ՛եռներ ձ՛ե*: Համանման երևույթ նկատվում է Բայազետի բարբառի Նորատուսի խոսվածքում, ինչպես՝ *վոտը մե* (մեր ոտքերը), *ձ՛եռը մե* (մեր ձեռքերը):

Բարբառներում գործառող դիմորոշ հոդերն են *ս* և *տ*[1122], որոնք դրվում են անձնանիշ գոյականների կամ իբրև այդպիսիք գործածվող այլ բառերի բոլոր հոլովական ձևերի վրա՝ *քախկըցիքըտ* (դուք՝ քաղաքացիներդ), *բոյօվներըս* (մենք՝ բարձրահասակներս), *իրեքիցըտ* (ձեզնից՝ երեքիցդ), °*մէքըս*, °*մէքըտ*, *ի՛ըմընիցըս* (բոլորիցս), *մեղավորըս* (ես՝ մեղավորս) ևն: Այդպես նաև Արարատյան բարբառում՝ *գ՛եղացիքըս*, *երկուսս*, *ամմէնքըս*, *քաղվորնէրիս*, *քաղվորնէրիցըս*, *քաղվորնէրօվըս* ևն:

Արդի հայերենին ընդհանրապես բնորոշ չէ *ս, դ, ն* հոդերի ցուցական գործածությունը, միայն որոշակի կապակցություններում և որոշակի բառերի հետ *ս* հոդը արտահայտում է ցուցականության իմաստ[1123]: Բայազետի բարբառում *ս* հոդի՝ ցուցական իմաստով կիրառության սակավ դեպքերից են՝ *մէկէլ օրներըս*, °*խզարքըս*: Արարատյան բարբառում *ս* հոդը ցուցականության իմաստ ունի ժամանականիշ որոշ բառերի հետ. *քըշէրս, օրէրըս*: Մշո բարբառում, որտեղ բացակայում է *այս* դերանունը, ցուցական հոդն է *ն* – ն, որը հավասարապես կարող է գործածվել և՛ *այս*, և՛ *այն* դերանունների իմաստն արտահայտելու համար, ուստի *գ՛իրքըն, տունըն* ձևերը միաժամանակ նշանակում են և՛ *այս գիրքը*, *այս տունը*, և՛ *այն գիրքը*, *այն տունը*[1124]:

2. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Բարբառային հայենում ածականները հետաքրքրություն են ներկայացնում թե՛ ըստ կազմության, թե՛ ըստ ծագման ու ձևա-

---

[1121] Տե՛ս ՄԲ, էջ 102:
[1122] Ոմանք համարում են, որ գոյություն ունի նաև դիմորոշ *ն/ը/* հոդ: Կարծում ենք՝ *ս* կամ *տ* հոդերի բացակայությունը արդեն նշանակում է երրորդ դեմք, ուստի *ն/ը/* հոդի առկայությունը չէ, որ որոշում է երրորդ դեմքը:
[1123] Տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 90:
[1124] Տե՛ս ՄԲ, էջ 103:

իմաստային փոխհարաբերությունների[1125]: Ածականները կազմությամբ կարող են լինել պարզ, բարդ և ածանցավոր: Բայազետի բարբառում գործառող պարզ ածականներից են՝ *բ՛էտ, գ՛օթի* (անբան, ծույլ), *դ՛ախ, լախ* (փչացած /ձուլ/), *լիժ, խորոտ, կ°կուղ, կըռունձ, ճեղ, ջ՛ոչ, փըմփուխ, սՊղ* ևն: Համադրական բարդություն ներկայացնող ածականներ են՝ *լենուբոլ, դ՛արուփոս, բ՛ացսիռտ, նեխսիռտ, խաբարբըգիկ, °նեսկաբ՛երան, խոսկաշէն, ջ՛ըրխամ, հ՛էրկէնքիթ, լ°մփՊռվոդներ, կիսախուզ, կ°կուղհ՛իրես, լուսաթըթաղ* ևն: Քիչ չեն նաև վերլուծական բարդությամբ արտահայտվածները՝ *խելքը գ՛ըլխին, հ՛°շկը կուշտ, խելքի մոտիկ, լեն-լըփոշ, թիզ ու կես, գ՛ողոբ՛ոգ, բիզ-բիզ, նեղ-նեղ, կ°ռճ-կ°ռճ* ևն: Ածականներ կերտում են *ան* և *չ* նախածանցները (°նխամ, °նկըդրել, չըտես, չըբ՛եր) և բազում վերջածանցներ, ինչպես՝ *ածուրիկ* (գ՛ըթածուրիկ, ջ՛օկածուրիկ), *ական* (խորական, տընական), *ան* (կըծան, պըսպըղան), *անի* (լիզվանի, քըթանի), *աշ* (մ°դղաշ, թըթվաշ), *ավոր* (°ռնակավոր, դ՛առցըվոր), *ացու* (մ°ռթացու, պիտանացու), *է* (էրկըթէ, փէդէ), *ի* (°լնի, վայրի), *իչ* (վարաքիչ, խառնակիչ), *կան* (լ°լկան, մըռսըկան), *կոտ* (°մչըկոտ, բ՛ամփասկոտ), *ման* (յեռման, վառման), *ոտ* (°րկոտ, ձ՛ընոտ), *ու* (ծ°խու, կըթու), *ուն* (խաքուն-խըփուն, ճըլպըտուն), *օվի* (քըցօվի, ջ՛ըրօվի): Ածականներ առաջանում են նաև հոլովական ու բայական ձևերից, ինչպես՝ *խամօվ, հ՛իրսօվ, թըռուկ, քընուկ, դ՛ուսհ՛ընգուկ, սօրվօղ, խըմօղ* ևն: Գործառում են նաև փոխառյալ շատածականներ՝ *°զաբ, °խմախ, խարամ, թ°մուզ, դօստ, բ°րիշ, չըփլաղ, °ֆէրիստ*, նաև դրանցով ձևավորված բաղադրություններ՝ *քօռաֆ°յմ, °ժբ°տես, յօլաստ°րիկ, զ°յլ °ստ°րիկ* ևն:

Բայազետի բարբառում ևս ածականները հանդես են բերում իմաստաբանական յուրահատկություններ: Կարելի է կազմել ածականական հոմանիշների բազմանդամ շատ շարքեր[1126]: Օր., °*քայ* - °նկըշտում - ծ°կհ՛°շկ - բըգլատ - գ՛ելփо – թամախք°ր - նըֆսատ - ցիգան, *հ՛ընդիր* -

[1125] Ինչպես նկատել է Հ.Մեսրոպյանը, բարբառագիտական աշխատություններում ուսումնասիրողները հիմնականում ուշադրություն են դարձրել ածականների համեմատության աստիճանների կազմության առանձնահատկություններին, և բառագիտական-իմաստաբանական տեսանկյունից ածականները պատշաճ քննության չեն ենթարկվել (տե՛ս Հ.Մեսրոպյան, Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010, էջ 11):

[1126] Հայերենի բարբառներում ածականական հոմանիշների մասին ավելի հանգամանորեն տե՛ս Հ.Մեսրոպյան, նշվ. աշխ:

գօզ°լ - գօզ°լական - խաս - վիրի հ՛առտի կըռութ (ծղր.) - խալուկ-թափուկ - պ°խու - պ°խըստըրական - ջ՛օկօվի, *չաղ* - թըմբըլիկ - գընդըլ - գըմփըռ - դըմփան - կըլորհ՛իրես - խաստաքամակ - կըլավ - փըմփուխ-լըխտիկ - լըխլըխան - ցըմփոր ևն: Բնականաբար շատ են նաև հականիշ բառազույգերը՝ *չաղ - բ՛արակ ծ՛որի °ղվէզ, խոբոտ - °ժբ°տես, մ°ռդ - ն°մ°ռդ, ն°մուսօվ - °ննմուս, շէն - °վեր* ևն: Ածականները կարող են վերաբերել տարբեր ոլորտների ու իրողությունների: Օր., մարմնի մասերին վերաբերող ածականներից են՝ *լօլօզ* (գ՛ըլօխ), *կ°խանակ* (գ՛ըլօխ), *ճիճըռնեկ* (հ՛°շկեր), *մուճուճուրիկ* (հ՛°շկեր), *փ°սոտ* (մըռթըներ), *ջ՛ախ* (բ՛երան), *դըֆա* (է°ն°), *սուլուլիկ* (պըռկըներ, քիթ), *կ°լատակ* (հ՛իրես), *բըլըխկան* (հ՛°շկեր), *լ°մփ°ռ* (վոդներ) ևն: Մարդու հատկանիշները, վարքը ներկայացնող ածականներից են՝ *մըդմըտուկ, ճ°ռախօս, հազարան խելքի տէր, ֆէլուֆ°նդօվ, խառնըկէի, կ°ր°էի, էրկուհ՛իրեսանի, վայվադա, °յլէվ°յլէ, թըռթըփան, °նաֆռտըկէլի, բէֆ°յմ, բէյնից կ°լին, դ՛աստաքամակ, խամավոր, կօտկօտ* ևն: Զգայական օրգանների կողմից ընկալվող հատկանիշների անվանումներից են՝ *յաղու, մըռու, դ՛°ռնախամ, թըթվախամ, °լնի, խընձըրխըմուկ, °նքաջ, քըռփըշտուն, լիժ ու կոկ, խըրխիր, փուխըր, շօռ-բ՛օրակ, °նխամ, ճըմախամ* ևն, գույներին վերաբերող անվանումներից են՝ *ճընդըրիկ սեվ, թ°ռ սիֆտ°կ, մուք կ°պուտ, °լ կ°ր°միր, մօխրագ՛ույն, խընգըռուկ, տըխպուկ, մօռ* (գազարը), *գ՛ույնը թ°լուկ, բէդռ°նգ, մեռնի գ՛ույն, թուխ շէկ, կ°ժ* ևն:

Բոլոր բարբառներում էլ որակական ածականը քերականորեն բնորոշվում է համեմատության աստիճաններով:

Բաղդատական աստիճանը Բայազետի և մերձավոր բարբառներում արտահայտվում է երկու հիմնական եղանակով[1127].

1. Ծարահյուսական միջոցներով.

ա) համեմատելի առարկայի բացառական հոլովով[1128]. օր.՝ Բ. *Մեր ջ՛ուրը ծ՛երուց խամօվ ա.* Վ. *Բարդին ուռից պանցր ի.* Խ. *Էտախչիկ՝ը*

[1127] Գրաբարյան բաղդատականի *գոյն* վերջածանցը միջին հայերենում այլևս իբրև բաղդատականի կազմիչ չէր գործածվում (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 242):

[1128] Բաղդատականի կազմության այս եղանակը հանդիպում է միջնադարյան հայ գրականության մեջ: Ս.Ղազարյանը փաստում է, որ ածականների համեմատական աստիճանը կազմելու այս եղանակը շատ տարածված է հայերենի բարբառներում (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 242-243):

էն ախչըկէն խորոտի. Դ. *Տունըն գ՚ումից ջ՚ոչ ա*. Մ. *Իդա կընիգ ինա կընգընէն խորոդ է*. Ա. *Երէվանը Սէվանից մէնձ ա*.

բ) ստորադասական կապակցությամբ, երբ համեմատությունը կատարվում է *քան* բառով, մյուս բարբառներում՝ նաև դրա տարբերակներով (*քանց, քընց, չ°նձ*/քան գ/[1129]). օր.՝ Բ. *Հ՛ամ էլ իսկականից էսի հ՛ավէլի խորոտա, քան քո °ռուկը*. Ա. *Ակունքը ավէլի հարուստա, քանց Զառը*. Վ. *էն չ°նձ գի ճոչ ի*. Դ. *Էսի ավելի լավ գոռծ ա, ք՚°ն թէ էն մէկէլըն*. Մ. *Մըր ավէդրան է՛լ զօրէղ է, քընց ձ՛ըր խուռան*.

գ) *վրա* կապ ունեցող կապակցությամբ. օր.՝ Բ. *Էնի քո վըրէն էրկու °միս ջոչ ա*, Վ. *Բարդին վէր ուռին պանցր ի:*

2.Վերլուծական եղանակով.

ա) ածականի դրական աստիճանի վրա ավելացնելով *ավելի* բառի բարբառային տարբերակը. օր.՝ Բ. *հ՛ավէլի լավ*, Վ. *°վիլի պանցր*, Խ. *°վէլի /°վէլը/ խորոտ*, Դ. *հէվէլի ջ՛ոչ*, Մ. *յէվէլի մենձ*, Ա. *ավէլի /էվէլի/ սիրուն*.

բ) *ավելի* բառին համարժեք բնիկ կամ փոխառյալ որևէ բառով. օր.՝ Բ. *դըհա*[1130] բ՛անցը. Վ. *դհա* պանցր, Խ. *դըհա* խորոտ, Ալ. *դըհա* հաստ, Լ. *դըհա* սիրուն. Լ. *ջիլիս // գիլիս* մենձ, Ալ. *ջըլիզ* գ՛էշ. Մ. *է՛լ* մենձ:

Բայ ազետի բարբառում (նաև մյուս բարբառներում) բաղդատական աստիճանի արտահայտման որոշ եղանակներ կարող են միասնաբար դրսևորվել՝ *Էնի Սիրուշից հ՛ավէլի խորոտա. Էնի հավէլի խորոտա, քան Սիրուշը*:

Բարբառներում գործածվում են նաև բաղդատական աստիճանի իմաստը սաստկացնող կամ նվազեցնող միջոցներ: Նման դերով կարող է գործառել *էլ* բառը, և ստացված կառույցը կնշանակի, թե համեմատվող առարկան օժտված է տվյալ հատկանիշի բավականին բարձր աստիճանով, մինչդեռ բուն առարկան այդ հատկանիշով գերազանցում է նրան, ինչպես՝ Բ. Վանը Սէվանա *յէլ* ջոչ ա. Ա. Հադիսը

[1129] Ըստ Ս.Ղազարյանի՝ «*Քան* նախադրությունը և *ց* նախդիրը ձուլվել էին միմյանց, որի հետևանքով ստացվել էր *քանց* նախադրությունը, որով կազմվում էր միջին հայերենի ածականի բաղդատական կամ համեմատական աստիճանը» (Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 242):

[1130] Թրք. daha «ավելի, է՛լ, դեռ» ձևից:

Գ՛ութանասարից *էլ բ՛արցըր ա*[1131]: Կան նաև բաղդատականի իմաստը նվազեցնող միջոցներ: Վանի բարբառում այդպիսիք են. *գոյն> կ՚ոն՝ կարմրակ՚ոն* (կարմրագույն), *սիվտըկակ՚ոն* (սպիտակագույն), և *նմուշ՝ կարմըրանըմուշ* (կարմրավուն), *սիվտկանըմուշ* (սպիտակավուն) ձևերը[1132]: Արարատյան բարբառում այդպիսի դեր կատարում է *ավուն* ածանցը՝ *դեղնավուն* (քիչ դեղին), *թըխավուն* (քիչ թուխ): Բայազետի բարբառում բաղդատականի իմաստի նվազեցման համար գործածվում են *գ՛ույն* և *թ°վուր* (նման, տեսակ) բառերը՝ *սիֆտըկագ՛ույն, դ՛եղնագ՛ույն, գըժաթ°վուր, ծըռաթ°վուր*: Թերևս հատկանիշի մեղմացման իմաստ են արտահայտում նաև *զ°նօղ* բայաձևը (կ°ըմըրին *զ°նօղ*[1133]), *ոտ*ածանցը (ջ՛ոչոտ՝ մի քիչ մեծ):

Գերադրական աստիճանը դիտարկվող բարբառներում արտահայտվում է հետևյալ կերպ[1134].

1.Վերլուծական եղանակով.

ա) *ամեն* դերանվան բարբառային ձևերի բացառական հոլովով, որը դրվում է ածականի ուղիղ ձևի վրա. օր.՝ Բ. *հ՛ըմընից կ°ռճ* [1135], Վ. *հըմմէնից /զըմմէնից/ պանցըր*, Դ. *հըմնուց գ՚էշ*, Խ. *հըմընէն խօրօտ*, Մ. *հ՛ըմնուց մենձ*, Ա. *ամմէնից բ՛արցըր*.

բ) *ամեն* դերանվան սեռական հոլովով, որը դրվում է ածականի ուղիղ ձևի վրա. օր.՝ Բ. *հ՛ըմընի ջ՛ոչ*. Խ. *հըմընը խօրօտ*, Դ. *հըմնու խօրօտ*.

գ) *ամեն* դերանվանը փոխարինող այլ բառով. օր.՝ Բ. *ս°ղից ցաճըր*, Վ. *հ°ն*[1136] *պանցըր* «ամենաբարձր», Լ. *չիմնու լավ* «բոլորից լավ».

2.Ածանցմամբ. *ամենա* նախածանցի տարբերակներով. օր.՝ Բ. *հ՛ըմընալ ավ*, Լ. *ամէնամենձ*.

3.Բառաբարդմամբ.

[1131] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ Արարատյան բարբառում ածականին սաստկական իմաստ է հաղորդում *լիկ* ածանցը, ինչպես՝ *բ՛արալիկ* (շատ բարակ), *հաստլիկ* (շատ հաստ) (տե՛ս ԱԲ, էջ 123):

[1132] ՔՎԲ, էջ 146:

[1133] Հ.Աճառյանը պարսկերենի ազդեցությամբ առաջացած ոճերի մեջ բերում է նաև *կարմրի զարնել* ձևը (տե՛ս ՀԼՊ, մաս 1, էջ 321):

[1134] Միջին հայերենում ածականի գերադրական աստիճանը կազմվում է *խիստ, ամեն, շատ* և այլ բառերով, ինչպես՝ *խիստամուր, ամենախոնարհ* ևն (տե՛ս Ս.Ղազարյան, Նշվ. աշխ., էջ 243):

[1135] Գերադրականի այս ձևի համաբանությամբ Բայազետի բարբառում հաճախկարելի է հանդիպել բաղդատականի *ց*-ով ձևերի՝ *հ՛ավէլից լավ, հ՛ավէլից բ՚անցըր*:

[1136] Թրք. *e'n* մասնիկից, որ ունի *ամենա* նախածանցի իմաստը:

ա) ածականի կրկնությամբ[1137]. օր.՝ Բ. *ջ՛ոշ-ջ՛ոչ, դ՛ափ-դ՛առտակ, կեծ ու կ°րմիր*[1138], Մ. *սիփ-սիվդագ, կաս-կարմիր*, Ա. *ջ՛ոչ-ջ՛ոչ, դ՛ատարկ-դ՛ատարկ, սէվ-սէվ*, Դ. *կաս-կարմիր, դ՛°փ-դ՛°ռտ°կ*, Խ. *փիս-փիս, մանդըր-մանդըր, ծուռ-մուռ*:

Բայազետի բարբառում կրկնավոր ածականի լրացյալ գոյականը որպես կանոն գործածվում է հոգնակի թվով, ինչպես՝ *ջ՛ոշ-ջ՛ոչ հ՛°շկեր, լէն-լէն թըփեր, մութ-մութ տեղրանք, ցից-ցից °դմըներ, խին ու մին շորեր* են:

բ) բաղհյուսական հարադրություններով, որոնցում բառերից մեկը հաճախփոխառյալ է լինում, օր.՝ *լէն – լըփոշ* (շատ լայն), *դ°ռը – յաղու* (շատ դառը), *քախծըր - շ°րբ°թ* (շատ քաղցր), *շոռ - բ՛որակ* (շատ աղի), *ցուռտ – կըյամաթ* (շատ ցուրտ), *շոք – խեխտոց* (շատ շոգ), *ա°ղ – ազգի կըտոր* (շատ սառը) են:

4. Նկարագրական եղանակով. դրական աստիճանի վրա դրվող բառերով, որոնք սաստկացնում են հատկանիշի իմաստը. օր.՝ Բ. *ճընդըրիկ* սեվ, *թ°ռ* սիֆտ°կ, *թոփ* թ°զ°, *շ°տ* կօլ օտ, *լավ* բ՛անցը, *բոլ* խըպառտ, *զըռ* կ°րմիր, Մ. *ճընդրիգ* սէվ , *թոփ* թըժա, Ա. *շատ* վատ, Դ. *շատ* գ՝էշ, *լափ* լավ, *թուն դ* կարմիր, *սըփ* սաղ են.

5. Հնչերագով. հատկանիշի առավելագույն դրսևորում արտահայտվում է նաև ածականի ուղիղ ձևի ձայնավորը երկարաձգելով[1139], ինչպես՝ *ցա~ա~ծը* (շատ ցածր), *հէ~է~րկէն* (շատ երկար), *շ°~°~տ* (շատ-շատ), *ապ~ը~խտոր* (շատ պղտոր) են[1140]:

Կարելի է ասել, որ բարբառներում գերադրական աստիճանի արտահայտման ամենագործուն եղանակը ածականի ուղիղ ձևի և *ամեն* դերանվան բացառական հոլովի զուգորդումն է. բոլոր բարբառներում դրսևորվող այս ձևը տարբեր բարբառներում ուղեկցվում է գերադրականի իմաստի արտահայտման մի շարք այլ, ոչ շատտարածված եղանակներով[1141]:

[1137] Ըստ Հ.Աճառյանի՝ «Գերադրականի այն ձևը, որ գտնվում է զանազան բարբառներում (շիփ-շիտակ, լեփ-լեցուն և այլն) գործածական չէ Վանի բարբառում» (ՔՎԲ, էջ 146):

[1138] Հավանաբար առաջացել է *կաս-կարմիր* ձևի վրա *կէծ* /կայծ/ բառի ազդեցությամբ:

[1139] Կարծում ենք՝ գերադրականի իմաստի արտահայտման այս եղանակը դրսևորվում է նաև մյուս բարբառներում, սակայն ուսումնասիրողները դրան չեն անդրադարձել:

[1140] Հետաքրքրական է, որ երկվանկ բառերում երկարաձգվում է ոչ թե երկրորդ, այլ առաջին վանկը:

[1141] Այս մասին տե՛ս նաև Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 113-115:

Բայազետի և մերձավոր բարբառներում ավելի տարածված են *է* վերջածանցով ձևավորված հարաբերական ածականները, օրինակ՝ Բ. *պողընձէ, բ՛ամբըկէ, փէդէ*, Խ. *փէտէ, էրկըթէ, պըրթէ*, Ա. *բ՛ըռթէ, կավէ, փէդէ*, Մ. *քարէ, օսկէ, արձըթէ*, Դ. *շուշէ, քՈ՛արէ, բ՛ըռթէ*: Կան նաև այլ ածանցներով ձևավորվածներ, ինչպես՝ Բ. *թուլնավոր, պուտավոր, տընական, աՊական*, Ա. *գ՛ուլնավոր, արչավոր, յերգրային*, Խ. *խօրական, մօրական, պապական, խըրէղէն*, Վ. *խուրնիխըրեղէն*: *Խըրեղեն և խուր ու խըրեղեն* ձևեր («չափազանց գեղեցիկ» իմաստով) կան նաև Բայազետի բարբառում:

Դիտարկվող բոլոր բարբառներում էլ ածականները գոյականների հետ ունեն նախադաս կիրառություն[1142], նախադասության մեջ դառնում են որոշիչ, ստորոգելիական վերադիր, ձևի պարագա: Շատ որակական ածականներ կարող են գործածվել գոյականաբար՝ ձեռք բերելով գոյականին հատուկ քերականական հատկանիշներ: Բոլոր բարբառներում էլ գոյականաբար գործածվելիս ածականները ենթարկվում են Ի հոլովման: Բայազետի բարբառում *պըստիկ* բառը[1143] որոշչային կիրառություններում կամ մակբայաբար գործածվելիս հանդես է գալիս *պըստի* ձևով (պըստի տըղա, մէ պըստի յետընալ), իսկ գոյականաբար կամ իբրև ստորոգելի գործածվելիս՝ *պըստիկ* ձևով (պըստիկը գ՛ընաց, էնի լը պըստիկ ա):

Ածականի կրկնությամբ կազմությունները Բայազետի բարբառում հաճախ ունեն մակբայական կիրառություն, ինչպես՝ *ջ՛ոչ-ջ՛ոչ* խօսալ, *խում-խում* ուտել, *բ՛էտ-բ՛էտ* բ՛ըռթել, *չոր-չոր* դ՛ընել, *քիչ-քիչ* հ՛ավըլնալ:

3. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ինչպես նշել է Հ.Աճառյանը, «Բարբառների մեջ թվականները ընդհանրապես միայն ձայնական փոփոխությունների են ենթարկ-

---

[1142] Արդեն միջին հայերենում ածականները ունեին նախադաս կիրառություն և լրացյալների հետորևէ կերպչէին համաձայնում (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 242):

[1143] Ըստ Հ.Աճառյանի՝ պարսկական այս փոխառյալ բառը սովորական է արդի բարբառներում և արևմտյան գրականում: Բառի հայերեն հնագույն ձևն է *պստիկ*, որի մեջ *իկ*-ը նոր ավելացած մասնիկ է, իսկ բուն ձևն է *պստ-*: Բարբառային բազմաթիվ ձևերից է նաև *պստի* (տե՛ս ՀԱԲ, հ.4, էջ 77):

ված»[1144]: Բայազետի բարբառում արմատական բառերով արտահայտվող բացարձակ թվականներն են՝ *մէկ, էրկու, իրեք, չորս /ը/*[1145], *խինգ /ը/, վեց /ը/, յօթ /ը/ (օխտ/ը/), ութ /ը/, ինը, տ°ս /ը/, քըսան, հ՛արուր / հ՛արիր / խարիր / խ°րիր, հազար / խազար*[1146]: Արարատյան բարբառում *չորսից* մինչև *տասը* թվականները գործածվում են հոդով: Խոյ-Մարաղայի բարբառում այդ թվականները հոդով գործածվում են հիմնականում բաղաձայնով սկսվող բառերից առաջ (վեցը խէտ), իսկ ձայնավորով սկսվող բառերից առաջ սովորաբար գործածվում են առանց հոդի, չնայած չի ժխտվում նաև հոդով գործածությունը[1147]: Այդպես է և Բայազետի բարբառում՝ *խինգը գ՛իրք, խինգ °խճիկ*, նաև՝ *խինգը °խճիկ*, սակայն այստեղ թվականները կարող են առանց հոդի գործածվել նաև բաղաձայնով սկսվող բառերից առաջ, ինչպես՝ *խինգ տղղա*: Ինչպես Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում, Բայազետի բարբառում ևս *յօթ* թվականի հետգործառում է նաև *օխտ/ը/* ձևը[1148], այստեղ զուգահեռ գործառում են նաև սրանցով ձևավորված բաղադրություններ՝ *յօթանասուն, օխտանասուն, յօթէք, օխտէք*: *Հարյուր* թվականի արտահայտության զուգահեռ ձևեր ունեն Բայազետի և Արարատյան բարբառները: Ճիշտ է, *հարուր* ձև ունի նաև Ալաշկերտի խոսվածքը, սակայն նկատելի է, որ բարբառների դիտարկվող խմբում ավելի տարածված է *հ*-ով ձևը (հ՛արիր, խարիր, խ°րիր, խ°յիր): Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառները Բայազետի և մյուս բարբառներից առանձնանում են նշյալ թվականներում արմատական բաղաձայնի կրկնության հատկանիշով:

Տասնավորների անվանումները Բայազետի և մերձավոր բարբառներում, բացի Վանի բարբառը, ընդհանուր առմամբ զանազա-

---

[1144] ԼՔՀԼ, հ. 1, էջ 249:

[1145] *Մեկ, իրեք, չորս* ձևերը գալիս են միջինհայերենյան շրջանից (տե՛ս ԼՔՀԼ, հ. 1, էջ 247):

[1146] Շրջակա բարբառներում սրանց համապատասխանություններն ունեն հետևյալ արտահայտությունը. Վ. *մէկ, էրկու, իրեք՝, չորս, խինգ՝, վեց, յօթ, ութ, ին, տաս, կսան, խարիր, խ°զ°ր*. Խ. *մէկ՝, էրկու, իրէք՝, չորս, խինգ՝ /ը/, վէց /ցը/, օխտ/ը/, ութ /թը/, ինը, տաս /սը/, քըսան, խ°յիր, խ°զզ°ր*. Մ. *մէգ, էրգու /ս/, իրեք, չորս, հինգ, վեց, յօթ, ութ, ինը, տաս, քըսան, հարիր, հըզար*. Դ. *մէկ, էրկու, իրեք՝, չորս, խինգ՝, վեց, յօթ, ութ, ին, տաս, քըսան, խ°րիր, խ°զ°ր*. Ա. *մէկ, էրկու, իրէք, չորսը, հինգը, վեցը, օխտը, ութը, ինը, տասը, քըսան, հարուր /իր/, հազար*:

[1147] Տե՛ս ԽԲ, էջ 86: Մարաղայի խոսվածքում այս թվականների գործառության հետ կապված իրողություններին անդրադարձել է նաև Հ.Աճառյանը (տե՛ս ԼՔՀԼ, հ. 1, էջ 255-256):

[1148] Այս և սրանով կազմված ձևերը սովորաբար հանդիպում են ավագ սերնդի խոսքում:

նություններ հանդես չեն բերում: Բարբառ ունի հետևյալ ձևերը՝ *յեռսուն, քառսուն, հ՛իցուն, վացուն, յօթանասուն / յօցուն / օխտանասուն, ութանասուն / ուցուն, ինըսուն*: Վանի բարբառը առանձնանում է ոչ միայն *իսուն, վաթսուն* ձևերով, այլ նաև *յոթանասուն, ութսուն, իննսուն* ձևերի դիմաց թուրքերեն միավորներ ունենալով (յեթմիշ, ս°հ՚ս°ն, դօխսան)[1149]: Բայազետի բարբառում *տասնմեկից տասնինը* թվականները ունեն հետևյալ արտահայտությունը. *տընընմէկ, տընսէրկու / տընսվէրկու, տընսիրեք / տընսվիրեք, տընընչորս / տընսչորս, տընընխինգ / տընսխինգ, տընընվեց / տընսվեց, տընընյօթ / տընսյօթ / տընսնօխտ, տընսնութ, տընսինը*: Կարճ ձևերը գործառում են հատկապես հաշվելիս: Այս թվականները *տընն* հիմքով են ձևավորում նաև Վանի (տընընմէկ) և Մշո (տընսնումէգ) բարբառները: Վերջինումս տասնավորը և միավորը *ու* շաղկապով են կապակցվում 11-17 թվականներում: Բայազետի բարբառի պես *տասներկու* և *տասներեք* թվականների դրսևորումներում *ու>վ* անցում ունեն Մշո (տընսվէրգուս, տընսվիրեք) և Վանի (տընսվէրկու, տընսվիրեք՚) բարբառները[1150]: Այս երկու բարբառներում 18 և 19 թվականների բաղադրիչները կապակցվում են *և* շաղկապով (տընսնէվութ, տընսնէվին): Արարատյան, Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառներում հանդես է գալիս *տասն* հիմքը, բաղադրիչները կապակցվում են առանց շաղկապի: Բայազետի և Վանի, Դիադինի բարբառներում մյուս տասնավորների և միավորների միջև որևէ հնչյուն կամ մասնիկ հանդես չի գալիս, ինչպես՝ Բ. *քընսանիրեք, յեռսունչորս*, Վ. *կսանմէկ, իսունին*, Դ. *քընսանէրկու, հիցունվեց*[1151]: Բայազետի բարբառում տարածված է *յեռսուն, քառսուն*

[1149] Այս իրողությունը Հ.Աճառյանը համարել է «բարբառների մեջ ավելի տարօրինակ երևույթ» և արձանագրել մի շարք այլ տարածքներում ևս, դրանց թվում՝ նաև Ալաշկերտում ու Մուշում (տե՛ս ԼՔՀԼ, հ.1, էջ 265): Նկատենք, սակայն, որ բարբառային այս երկու միավորների ուսումնասիրողները այդ հատկանիշը չեն արձանագրել (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 89, ՄԲ, էջ 93: Այդ իրողությունը չի հանդիպել նաև մեզ ՀՀ Մարտունու տարածաշրջանում բարբառագիտական հետազոտություններ կատարելու ընթացքում):

[1150] *Ու* շաղկապով ձևերը գալիս են միջինհայերենյան շրջանից (տե՛ս ԼՔՀԼ, հ.1, էջ 248):

[1151] Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում կցական բարդություններում, եթե միավորը սկսվում է բաղաձայնով, բաղադրիչների միջև ավելանում է *ը* ձայնավորը, ինչպես՝ Ա. *քընսանընիինգ, վացցունընչորս*, Խ. *քընսանընչորս, հցցունընվեց*, իսկ Մշո բարբառում տասնավորի և միավորի կապակցությունը բոլոր դեպքերում կատարվում է նույն կերպ, ինչ *տասը* թվականի դեպքում է, այսինքն՝ *քընսանումեգ, քընսանվէրգուս, քընսանվիրեք, քընսանուչորս, քընսանույօթ, քընսանէվութ, քընսանէվին*:

տասնավորների և դրանցով կազմված կցականների կրճատ գործածությունը, ինչպես՝ *յեռ, յեռմէկ, քառ, քառկու* ևն[1152]:

Դիտարկվող բարբառներում հարյուրավորները և հազարավորները այլ միավորների հետ կապակցվում են առանց միացման որևէ կապի՝ *հարուր քառսունխինգ, հ՛ազար էրկու հ՛արիր յեռսունվեց*: Բացառություն է Մշո բարբառը, որտեղ հարադիր բարդության բաղադրիչները կապակցվում են *ու* շաղկապով, եթե երկբաղադրիչ կառույցի երկրորդ բաղադրիչը հարյուրավոր կամ հազարավոր չէ, օրինակ՝ *հըզար ու տըսնէվութ, հըզար ու քըսանուչորս*, մյուս դեպքերում կապակցման միջոցներ չեն գործածվում:

Բացարձակ թվականները բարբառներում գոյականաբար գործածվելիս հոլովվում են և ենթարկվում Ի հոլովման[1153], ինչպես՝ *մէկի, խընգից, ութին*: Վանի բարբառում *մէկ* թվականը ենթարկվում է ՈՒ հոլովման՝ *մէկու, մէկուց*: *Երկու* թվականի բարբառային ձևերը հոլովվելիս իրենց կազմում ունենում են *ս*. *էրկըսի, էրկըսից*:

Դիտարկվող բարբառները դասական թվականի հատուկ ձևեր հիմնականում չունեն[1154], գործածական են միայն *առաջին* բառի ձևերը. Բ. *հ՛առչի*, Վ. °*ռճին*, Խ. °*ռչին*, Մ. *հ՛առչի*, Դ. *հ°ռչին*, Ա. *առաջին*: Բայազետի և Արարատյան բարբառներում դասականի իմաստը երբեմն արտահայտվում է բացարձակ թվականների փոխանվանաբար գործածված ձևերով, ինչպես՝ Բ. Հ՛էսօր *ութերը* (ութերորդցիները) քէֆի յեն, Ա. Կարօյի մէնձ տըղէն սօվօրավ մինչէվ *օխտը* (յոթերորդը)[1155]: Մշո բարբառում դասական թվականի իմաստ արտահայտվում է *վըր* կապի և թվականի տրական հոլովի կապակցությամբ, ինչպես՝ «Վըր իրէքին օր տէսա .... «Երրորդ անգամ որ տեսա....»»[1156]: Ալաշկերտի խոսվածքում գործածվում է *վըրա* ձևը՝ *վըրա իրէկին,*

[1152] Ըստ Հ.Աճառյանի՝ «....մարդիկ ստիպված են հաճախ ամենակարճ ժամանակի մեջ հարյուրավոր թվեր հաշվել. այս դեպքում բառերի կրճատումը ստիպողական երևույթ է» (ԼՔՀԼ, հ. 1, էջ 264): Նա նաև նկատում է, որ եթե հայերենում միավորները կրճատվելու պատճառ և հնարավորություն չունեն, ապա տասնավորները շատ տեղերում ենթարկվում են կրճատման (տե՛ս նշվ. աշխ., էջ 264-265):

[1153] Այդպես էր և միջին հայերենում (տե՛ս ԼՔՀԼ, հ. 1, էջ 249):

[1154] Ընդհանուր առմամբ նկատելի է, որ գրական լեզվի ազդեցությամբ բարբառները արդեն գործածում են դասական թվականի ձևեր՝ *որոդ* և *երորդ* մասնիկներով, ինչպես՝ Բ. *յերգըրորդ, յեռորդ, չորորդ, խինգերորդ*, Խ. *յէրգըրորդ, յէրորդ, չորորդ, խիյյէրորդ, վէսյէրորդ, օխտըյէրորդ*, Դ. *յերգըրորդ, յերորդ, յեռսունյերորդ* ևն:

[1155] ԱԲ, էջ 126:

[1156] ՄԲ, էջ 94:

վրա չոռսին: Թերևս այստեղից կառույցը ներթափանցել է Բայազետի բարբառ[1157], օր.՝ Քանի տըրէթ գ՛ընաց - էկավ, *վըր° խընգին* նոր նեռս թօղին: Միայն Մարաղայի խոսվածքում գործածական են դասական թվականի առանձին ձևեր, ընդ որում՝ դրանք «կազմվում են թրք. *իմջի, ըմջը, ումջը* մասնիկներով, որոնք կցվում են բացարձակներին»[1158], ինչպես՝ *իրիք՝ իմջի, տասըմջը, ութումջը* ևն:

Բաշխական թվականները Բայազետի և շրջակա բարբառներում ձևավորվում են բացարձակ թվականի կրկնությամբ, ինչպես՝ Բ. *մէգ – մէկ, էրկու - էրկու, իրեք – իրեք*, Վ. *մէյ մէկ, էրկու էրկու, իրեք՝ իրեք՝*, Դ. *խինգ՝ – խինգ՝, վեց – վեց, յօթ – յօթ* ևն: Վանի բարբառում, ըստ Հ.Աճառյանի, բաշխական թվականներ ձևավորվում են նաև *ական* մասնիկով (մէկական, իրեք՝ական, չորսական, խընգ՝ական), ընդ որում՝ այդպիսի «բաշխականները սովորական չեն. ավելի լավ են համարվում կրկնական ձևերը»[1159]: Դիտարկվող բարբառները չունեն կոտորակային թվականներ, սակայն դրանց իմաստը այս կամ այն կերպ արտահայտելու եղանակներ ունեն[1160]: Կոտորակային թվականի իմաստ արտահայտվում է *կես* բառով, նաև թվականներով ձևավորված հարադրությամբ, որի առաջին բաղադրիչն արտահայտվում է բացառական հոլովով, ինչպես՝ Բ. *խընգից չոռսը, վեցից խինգը*, Ա. *տասից մէկը, օխտից էրկուսը* ևն[1161]:

4. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Դերանունների ձևաբանական յուրահատկությունները հաճախ ունեն համակարգային բնույթ և լեզվական զգալի նյութ են

[1157] Բայազետի բարբառում *վրա*կապը նախադաս չի գործառում:

[1158] ԼՔՀԼ, հ. 1, էջ 291:

[1159] ՔՎԲ, էջ 148:

[1160] Հ.Աճառյանը նշում է, որ միջին հայերենը կոտորակային թվական արտահայտելու համար գործածում էր վերլուծական կամ նկարագրական ձևեր (յերեք բաժնէն մէկն $^1/_3$, ի չորս բաժնէն մէկն $^1/_4$), որոնց շարունակությունը բարբառներում բացառական ձևի գործածությունն է (տե՛ս ԼՔՀԼ, հ. 1, էջ 315): Միջին հայերենում իբրև կոտորակային թվական արտահայտելու միջոց նշվում են նաև *կէս* և պարսկերենից փոխառյալ *չարեկ* բառերը (տե՛ս նույն տեղում):

[1161] Հետաքրքրական է, որ Բայազետի բարբառում գործածվող *չ°ոէք* բառի «քառորդ» իմաստը փոխարինված է «շատ փոքր մասը» իմաստով, ընդ որում՝ այդ բառը գործածվում է միայն մեկ կառույցում, երբ երկու իրողությունների համեմատության մեջ մատնացույց է արվում երկրորդի առավելությունը առաջինից, ինչպես՝ Տիկօն Ս°մօյ *չ°ոէքը* չ°ժի: Անձերի համեմատության դեպքում տարբերությունը ավելի ընդգծելու համար *չ°ոէք* բառի փոխարեն գործածվում է *ճըկուր* (ճկույթ) բառը, ինչպես՝ Տիկօն Գ՛էվօյ ճըկուրը չ°ժի:

պարունակում[1162]՝ բարբառների միջև համեմատություններ անցկացնելու առումով, և իրավացի է Ա.Ղարիբյանը, երբ գրում է. «Շատ հաճախ կարելի է դերանունների նմանությունից որոշել բարբառների հարևան լինելը կամ հարևան եղած լինելը»[1163]:

4.1. *Անձնական դերանուններ*

Բայազետի բարբառում առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունները ունեն հոլովական հետևյալ պատկերը[1164].

	ԵՍ		ԴՈՒ	
Ու.	յես, իես	մենք	դ՛ու, դ՛ուն	դ՛ուք
Ս.	Իմ	մեր	քо	ձ՛եր
Տ.	ընձի, ընձիկ	մեզի, մե, մեզիկ	քեզի, քե, քեզիկ	ձ՛եզի, ձ՛ե, ձ՛եզիկ
Հ.	ընձի, ընձիկ	մեզի, մե, մեզիկ	քեզի, քե, քեզիկ	ձ՛եզի, ձ՛ե, ձ՛եզիկ
Բ.	ընձնից, ընձնե	մեզնից, մեզնե	քեզնից,	քեզնե, քենե ձ՛եզնից, ձ՛եզնե
Գ.	ընձնով	մեզնով	քեզնով	ձ՛եզնով

Այս դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերի ուղղական հոլովում մերձավոր բոլոր բարբառներում ևս ունեն նույն ձևերը[1165]: Բարբառումս երբեմն հանդիպում է *դ՛ուն* ձևը՝ հատկապես *էլ* շաղկապից և օժանդակ բայից առաջ՝ *Դ՛ուն էլ գիցար…., Դ՛ուն իր*

[1162] Արդի հայերենի դերանունների հանգամանալի նկարագրությունը տե՛ս Ս.Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., 1956, 354 էջ:

[1163] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 144:

[1164] Մյուս բարբառների համապատասխան դերանունների հոլովական հարացույցները տե՛ս Հավելված 2,3-ում:

[1165] Հաշվի չենք առնում հնչյունաբանական յուրահատկություններով պայմանավորված զանազանությունները: Բայազետի բարբառի հնչյունաբանական յուրահատկություններով չի պայմանավորվում որոշ խոսվածքներում *իես* ձևում *իե* երկբարբառի դրսևորումը. այլ դեպքերում բառասկզբում միշտ ունենք *յե*, օրինակ՝ Ընդուց *իես* խինգը *յերք* լըսացի, խինգըն էլ՝ *յեզան* մ°սին. Էնի միշտ հիրա *յեսն* ա պ°շպանում: Վերջին օրինակը ցույց է տալիս, որ երբ նույն բառը գործածվում է ոչ իբրև դերանուն, ապա արտասանությունը փոխվում է (իես>յես): Թվում է՝ դերանվան *իես* արտասանությունը հետևանք է սեփական անձը հատկապես չընդգծելու խոսողների մղումի:

բ՛էրե[1166]:Ուղղական հոլովի ձևերում յուրահատկություն դրսևորում է և Խոյ-Մարաղայի բարբառը. եթե այլ բարբառներում անձնական դերանունները *իկ* մասնիկով ընդարձակվում են տրական և հայցական հոլովներում, ապա այս բարբառում նման ընդարձակում դիտվում է նաև ուղղական հոլովում՝ *յէսիկ՝, մէնք՝ իկ՝, մէհիկ՝* ևն: *Ես* և *դու* դերանունների սեռական հոլովի ձևերում ևս բարբառները էական զանազանություններ չեն դրսևորում. *իմ* ձևը ընդհանուր է բոլորի համար, իսկ մյուսները *քո, մեր, ձեր* սեռականների հնչյունական տարատեսակներն են: Իրենց *քու* ձևով առանձնանում են Արարատյան և Մշո բարբառները[1167]: Միայն Մշո բարբառին հատուկ սեռականի ձևեր է նկատել Ս.Բաղդասարյանը՝ *իմ, քու, մեր, ձ՛եր* սեռականներին զուգահեռ բերելով *ուն* մասնիկով ձևավորված *իմուն, քումուն, մէրուն, ձ՚էրուն* ձևերը[1168]: Տրական հոլովում Բայազետի և մերձավոր բարբառների բոլոր ձևերը բառային նույն միավորներն են՝ տվյալ բարբառի արտասանական բազային հատուկ ձևավորումով, ինչպես նաև կառուցվածքային որոշ առանձնահատկություններով: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ կերպ. ա) *գրաբարատիպ տրական*. Ա. *ինձ, քէզ, մէզ, ձ՛էզ*, բ) *ի կամ իկ հավելվածով ձևեր*[1169]. Վանի բարբառում հավելված ունեն միայն առաջին դեմքի եզակի տրականի *ձի, ձիկ, զիկ, զի* ձևերը[1170], Դիադինի

[1166] Տարբեր բարբառներում հանդիպող *դուն* ձևի (ինչպես նաև դրա հնչյունական տարբերակների) առաջացման մասին Հ.Աճառյանը գրում է. «*Դու* բառը ստացել է *ն* հավելվածը նմանությամբ *այն, ան, էն* դերանունների, որի հետ գործածվում էր հաճախ (*ես, դուն, ան.- ան, դուն*)» (ԼՔՀԼ, հ. 2, էջ 60): Ապա խոսելով Ղարաբաղի բարբառի *տուվ* (դու) ձևի *վ* հավելվածի մասին՝ Հ.Աճառյանը գրում է, որ այն «առաջանում է ներդաշնակության օրենքով՝ խուսափելու համար հորանջից (hiatus). ըստ այսմ *տուվ* ձևը գոյություն ունի միայն ձայնավորի մոտ (ինչ. *տուվ ըս* < դու ես)» (նույն տեղում): Կարծում ենք՝ *դուն* ձևի *ն* հավելվածի առաջացումը ևս պետք է բացատրել ձայնավորով սկսվող բառերից առաջ հորանջից խուսափելու մղումով, մանավանդ որ, ինչպես վերը տեսանք, Բայազետի բարբառում այդ ձևը հանդես է գալիս ձայնավորասկիզբ բառից առաջ: Այլ բարբառներում *դուն* ձևը, գուցե և *այն, ան, էն* դերանունների նմանությամբ, ժամանակի ընթացքում ընդհանրացել է՝դուրս մղելով *դու* ձևը:

[1167] Ըստ Հ. Աճառյանի՝ այդ ձևը առաջացել է *դու* բառի ազդեցությամբ (տե՛ս ԼՔՀԼ, հ. 2,, էջ 73):

[1168] ՄԲ, էջ 95: Նշենք, որ սեռականի այսպիսի ձևեր Մշո բարբառում այլ ուսումնասիրողների կողմից չեն դիտարկվել, նման ձևեր չեն դիտարկվում և Ալաշկերտի խոսվածքում, ուստի հակված ենք կարծելու, որ դրանք ստացական դերանվան ձևեր են:

[1169] Այսպիսիք առավել տարածված են արևմտյան բարբառախոս վայրերում (տե՛ս ՀԲՆ, էջ 88-99), դիտարկվել են նաև միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 91-92:)

[1170] *Զի* ձևը, ինչպես նկատում է Հ.Աճառյանը, առաջացել է *ընձի* ձևից՝ *ըն* նախավանկի կրճատումով (տե՛ս ԼՔՀԼ, հ. 2, էջ 73): Իհարկե, ասվածը վերաբերում է և *զի* ձևին: Հասկանալի է, որ *ձիկ* ձևն էլ պիտի առաջացած լինի *ընձիկ* ձևից: Ինչ վերաբերում է *ձի*, *ձիկ* ձևերի հետ *զի, զիկ* ձևերի առկայությանը, ապա այն թերևս

բարբառում գործառում է միայն *ի* հավելվածը, իսկ Բայազետի, Խոյ-Մարաղայի և Մշո բարբառներում տրականի ձևեր կազմվում են և՛ *ի*, և՛ *իկ* մասնիկներով[1171] (Բայազետի բարբառում ավելի գործածական են *ի* – ով ձևերը), գ) *առանց զ բաղաձայի ձևեր*[1172]. այս հատկանիշը բնորոշ է Վանի և Բայազետի բարբառներին: Վանի բարբառում գործառում են տրական հոլովի միայն կարճ ձևեր՝ *մե, ք՛ե, ծե*: Բայազետի բարբառում *քե, մե, ձ՛ե* կարճ ձևերը գործառում են *քեզի, մեզի, ձ՛եզի* ձևերին զուգահեռ (ոչ բոլոր խոսվածքներում)[1173]: Կարճ ձևերի հետքեր Մշո բարբառում արձանագրել է Հ.Աճառյանը՝ *ըզմըզի, ըզմի* և *ըզքըզի, ըզքի*[1174]: Ալաշկերտի խոսվածքում *քէզի, քըզի* ձևերին զուգահեռ նշվում է նաև *քե* կրճատձևը[1175]:

Բարբառներում առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների հայցական հոլովի ձևերը նույնանում են տրականի ձևերի հետ: Մշո բարբառում հայցականի ձևերը տրականից տարբերվում են *զ* նախդրով (տր. ընձի, քըզի – հյց. զընձի, ըզքըզի): Բայազետի բարբառում հայցականի իմաստով ավելի գործածական են *քեզի, մեզի, ձ՛եզի* ձևերը: Բացառական հոլովում բոլոր դեպքերում վերջավորությունից առաջ հանդես է գալիս ոչ արմատական *ն* (ձիզնից, զիզնից, մեզնից, ինձանից, ընձնէ, ընձնից, մըզնից,

---

բացատրվում է Վանի բարբառում (նաև Բայազետի բարբառում) նկատվող այն օրինաչափությամբ, որ *ն*-ին հաջորդող դիրքում տեղի է ունենում *զ>ձ* անցում (քան զ > չանձ), իսկ նախորդող *ն*-ի անկումը հանգեցնում է *ձ>զ* անցման (կընձկընձտալ > կզմըզտալ): Ուրեմն, *զի, զիկ* ձևերում շփականի դրսևորումը կարելի է պայմանավորել նախորդող *ն*-ի անկմամբ:

[1171] Հ.Աճառյանի կարծիք է հայտնել, որ *ի* հավելվածը դերանունները ստացել են՝ «ազդվելով գոյականների հոլովումից, ուր տրականն ունի միշտ *ի* վերջավորությունը. այսպես են առաջացել *ինձի* (*ինծի*), *քեզի, մեզի, ձեզի* ձևերը: Ավելի հետո *ի* ձայնավորը *ն* – ի մոտ սղվելով՝ ստացվել է *ընձի* ձևը (հմմտ. *անկողին>ընկողին, անկանիլ>ընկնիլ*)» (նույն տեղում): Մեզ թվում է, որ *ի* հավելվածը *իկ* մասնիկի կրճատված ձևն է, մանավանդ որ «Կրճատումը սովորական երևույթ է դերանունների մեջ» (նույն տեղում): Հետաքրքրական է, որ Ա.Ղարիբյանը, *ի* և *իկ* մասնիկների առնչությանը առանձին չանդրադառնալով, կարծես թե դրանք ընկալում է իբրև մեկ միավորի տարբերակներ: Այսպես, նա գրում է, որ Վանի բարբառը «*ընձի*(*կ*)» ձևից դուրս է գցել առաջին երկու հնչյունը, կամ՝ «Ծամախու բարբառը այդ «*ի*» - «*իզ*» ձևը այնքան է սիրում, որ....» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 145): Այդ մասին դիտարկում ունի նաև Գ.Ջահուկյանը. «Ցուցական դերանունների *իկ*-ը ամենայն հավանականությամբ հին հայերենի համապատասխան ձևերի մնացորդն է: Անձնական դերանունների թեք հոլովաձևերի դեպքում մենք գործ ունենք նոր, թերևս համաբանական (անալոգիական) կազմությունների հետ» (տե՛ս ՀԲՆ, էջ 87):

[1172] *Քե* ձևն դիտարկվել է միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 92):

[1173] Չենք բացառում, որ ավելի նախնական կարող ենք լինել կարճ ձևերը, իսկ երկար ձևերը, հնարավոր է, առաջացել են հայցականի ձևերի ազդեցությամբ:

[1174] ԼՔՀԼ, հ. 2, էջ 64:

[1175] Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 91:

ծեզնից, ծեզնէ, քʲեզնից, քէզանից, քենէ): Միայն Խոյ-Մարաղայի բարբառում և առանձին դեպքերում՝ Վանի բարբառում *ն*-ի փոխարեն առկա է *մ* (ընձըմէն, մէզըմէն, մէզըմանց, քʲէզըմանց, ծէզըմէն, զիզմից, ձիզմէ): Բացառականի այս ձևերում *ն*-ի կամ *մ*-ի առկայությունը ունի ընդհանուրհայերենյան բնույթ[1176]: Բացառական հոլովի ձևերի բարբառային տարբերությունները հիմնականում պայմանավորված են յուրաքանչյուր բարբառում այդ հոլովի ձևավորման յուրահատկություններով (հմմտ. ընձընից, մեզնից, քեզնից և ընձնէ, ընձնէն, մըզնէ, քըզնէն, ընձըմէն, մէզմէն), ինչպես նաև հնչյունական առանձնահատկություններով (հմմտ. ընձնից, մեզնից, ընձնէ, մըզնէ և ինձանից, քէզանից, մէզանից): Միայն առանձին դեպքերում բարբառները հանդես են բերում յուրահատկություններ[1177]: Քննարկվող դերանունները բարբառներում գործիական հոլովի դրսևորման զանազանություններ հանդես չեն բերում: Բոլոր բարբառներում հոլովական վերջավորությունից առաջ դարձյալ առկա է *մ* կամ *ն*, և բոլոր բարբառներում գործիականը կազմվում է տրականից (ձիզ*ն*օվ, զիզ*ն*օվ, մեզ*ն*օվ, ընձը*ն*օվ, ինձա*ն*օվ, ընձա*ն*ով, ընձը*մ*օվ, մէզը*մ*օվ, ծէզը*մ*օվ):

Բարբառներում իբրև երրորդ դեմքի անձնական դերանուն, որպես կանոն, հանդես է գալիս ցուցական դերանվան՝ արմատական *ն* հնչյուն ունեցող ձևը: Բայց գործածական են նաև *ինքը* դերանվան ձևերը: Բայազետի բարբառում այդ դերանվան հոլովական ձևերն են՝ *հ՛ինքը, հ՛իր / հ՛իրա, հ՛իրան/ը/, հ՛իրանը, հ՛իրնից / հ՛իրանից / հ՛իրնէ, հ՛իրնօվ / հ՛իրանօվ, հ՛իրանք, հ՛իրանց, հ՛իրանը, հ՛իրանցից, հ՛իրանցօվ:* Դիտարկվող բարբառների հոլովական ձևերում նախ և առաջ նկատելի է *ր* – ով հիմքի հանդես գալը: Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի տրականից և ենթարկվում անվանական Ց հոլովման: Միայն Խոյ-Մարաղայի բարբառում հոգնակի

[1176] Այդ հատկանիշը կա գրաբարյան (յինէն, ի քէն, ի մէնջ, ի ձենջ), միջինհայերնյան (յիսնէ, յիսմէ, ի քենէ, ի քեզնէ, ի քեզմէ, ի մեզնէ, ի մենէ, ի մեզմէ, ձեզնէ, ձեզմէ) և բարբառային բոլոր ձևերում (ԼՔՀԼ, հ. 2, էջ 72): Հ.Աճառյանը բարբառների բացառական հոլովում *ն* մասնիկի առաջացումը բխեցնում է գրաբարյան *յինէն* բացառականից, որն արդեն 12-րդ դարում ուներ *յինէ* ձևը, իսկ հետագայում նախդիրի կորուստով՝ *ինէ* ձևը (տե՛ս նշվ. աշխ., էջ 77):

[1177] Օրինակ, Խոյ-Մարաղայի բարբառում սովորական ձևերին զուգահեռ գործառում են նաև սեռականից կազմվող բացառականներ (իմէն, մերէն), Վանի բարբառում առաջին դեմքի եզակի թվի ձևերում վերջավորությունից առաջ հանդես է գալիս *զ* (ձիզնից, զիզնից, զիզմից, ձիզմէ):

ուղղականը ձևավորվում է եզակի ուղղականից՝ *զինքՅը - զինքՅերը*, սակայն այստեղ ևս հոգնակի թեք հոլովները ձևավորվում են եզակի սեռականի հիմքից և հանդես են բերում Ց հոլովման հատկանիշներ[1178]: *Ինքը* դերանվան թեք հոլովներում բարբառները տարբերություններ են հանդես բերում նախ հնչյունական ձևավորմամբ: Հինհայերենյան *իւր* դերանվան *իւ* երկբարբառի դիմաց Բայազետի և Արարատյան բարբառներն ունեն *ի*, Վանի և Մշո բարբառները՝ *ու*, Խոյ-Մարաղայի բարբառը՝ *իւ*: Բացի այդ՝ Բայազետի և Արարատյան բարբառներում տրականն ու հայցականը ձևով նույնն են, իսկ սեռականը նրանցից տարբերվում է բառավերջի *ն*-ի բացակայությամբ[1179]: Մշո բարբառում տրականը գոյականների պես ունենում է *ին* վերջավորություն (սեռ. *ուր*, տր. *ուրին*), իսկ հայցականը կազմվում է ուղղականից՝ *զ* նախդրով (զինք): Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում սեռական, տրական և հայցական հոլովների ձևերը նույնական են: Արարատյան և Բայազետի բարբառներում Եզակի թվի բացառական և գործիական հոլովներում, բոլոր բարբառներում հոգնակի թվում դրսևորվում են օրինաչափ ձևեր. նկատելի է միայն, որ Բայազետի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում հոգնակի տրականն ու հայցականը միշտ ունեն որոշիչ հոդ, Վանի բարբառը հոգնակի թվում ունի հնչյունական զուգաձևություն, իսկ Արարատյան բարբառը եզակի թվում ունի նաև ներգոյականի ձև:

4.2. *Ցուցական դերանուններ*

Ցուցական *այս, այդ, այն* դերանունների դիմաց գործառում են հետևյալ ձևերը. Բ. *էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսա, էտա, էնա, էսիկ, էտիկ, էնիկ, էսակ, էտակ, էնակ*, Ա. *էս, էտ, էն*, Վ. *էս, էտ, էն, էսա, էտա, էնա, էսիկ, էտիկ, էնիկ*, Խ. -, *էտ, էն*, -, *էտիկՅ, էնիկՅ*, Դ. *էս, էտ, էն, էսի,*

[1178] Ընդհանրապես, անձնական *ինքը* դերանվան հոլովական ձևերը արդյունք են հինհայերենյան *ինքն* և *իւր* դերանունների միավորման, որ, ինչպես վկայում է Հ.Աճառյանը, տեղի է ունեցել միջին հայերենում (տե՛ս ԼՔՀԼ, հ. 2, էջ 120): Հետաքրքրական է, որ Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում իբրև ուղղական է դրսևորվում հայցականի հին ձևը՝ Վ. *զինքՅ*, Խ. *զինքՅը*: Վանի բարբառի պես եզակի ուղղականը հոդ չունի նաև Մշո բարբառում՝ *ի՛ինք*:

[1179] Այս իրողության առնչությամբ Հ.Աճառյանը գրում է, որ Ում ճյուղի բարբառներում «*իրան* ձևը համարվելով տրական, սեռական ստանալու համար կրճատելով վերջի *ն* ձայնը՝ առաջացել է Երև. Թբիլ. *իրա*, ճիշտ ինչպես ունենք *աղջկան* ձևից *աղջկա*» (ԼՔՀԼ, հ. 2, էջ 128):

էտի, էնի, էսան, էտան, էնան, Մ. -, *իդա, ինա, ըդի, ընի*: Ինչպես երևում է, բոլոր բարբառներում էլ հանդես են գալիս *էս, էտ, էն* հիմքերը, միայն Մշո բարբառում առկա են հնչյունափոխված ձևեր՝ *իդա, ինա, ըդի, ընի*: Էական է Խոյ-Մարաղայի և Մշո բարբառներում *այս* ցուցական դերանվան իմաստով հատուկ ձևերի բացակայությունը[1180]: Ըստ ցուցական դերանունների կազմության՝ դիտարկվող բարբառները կարելի է բաժանել երեք խմբի. ա) միայն պարզ կազմության դերանուններ ունեցող (Արարատյան բարբառ). բ) միայն հավելվածավոր կազմության դերանուններ ունեցող (Մշո բարբառ). գ) և՛ պարզ, և՛ հավելվածավոր կազմության դերանուններ ունեցողներ (Բայազետի, Վանի, Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառներ):

Դերանվանական հավելվածները բարբառներում կարող են ունենալ տարբեր դերեր: Եթե *ի* կամ *իկ* (նաև՝ *ակ*) հավելվածը Բայազետի բարբառում դերանվանը տալիս է կիրառական յուրահատկություն, ապա *ա* հավելվածը ունենում է ցուցականությունը ընդգծող արժեք[1181]: Այստեղ *էս, էտ, էն* ձևերը, սրանց պես և *էսա, էտա, էնա* ձևերը խոսքում դառնում են միայն որոշիչ և չեն հոլովվում: Մինչդեռ *ի* կամ *իկ, ակ* հավելված ունեցող ձևերը իրենց դրսևորում են *սա, դա, նա* դերանունների օրինակով և իմաստով. խոսքում որոշիչ չեն դառնում, *ի* հավելվածով ձևերը հոլովվում են և կատարում գոյականին հատուկ դերեր[1182], իսկ *իկ* կամ *ակ* հավելվածով ձևերը գործածվում են միայն եզակի թվի ուղղական և հայցական հոլովներով (էտիկ հընգավ. էտիկ դ՛ի տեղը, Էտակ էթում. Էտակ տու ընձի): Ըստ Հ.Աճառյանի՝ հայերենի բարբառներում *իկ* մասնիկով բոլոր ցուցականներն էլ չեն հոլովվում և հոգնակի չունեն, «*Իկ* նշանը դրվում է դերանունը ածականի հետ չշփոթելու համար. շփոթությունը կարող է տեղի ունենալ միմիայն եզակի և անհոլով

[1180] Այդ չի նշանակում նաև իմաստի բացակայություն. *էտ, էտիկյ* ձևերը Խոյ-Մարաղայի բարբառում և *իդա, ըդի* ձևերը Մշո բարբառում կիրառվում են նաև *այս* դերանվան իմաստով:

[1181] Հետաքրքրական է, որ այդ մասնիկը հանդես է գալիս նաև բաղադրության ներսում, ինչպես՝ *էսքան – էսաքան, ըստու – էսատու, ըստե – էսատե* ևն:

[1182] Ցուցական դերանունների պարզ և մասնիկավոր ձևերի քերականական հատկանիշների տարբերություններ Ալաշկերտի խոսվածքում նկատել է Ք.Մադաթյանը. այստեղ *էդա* (այս), *էդ, էն* դերանունները ունեն միայն ուղղական հոլով, իսկ *էդա* (սա), *էդի, էնի* դերանունները ունեն բոլոր հոլովաձևերը (Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 92):

դեպքում, այն է՝ եզ. ուղ. և հյց., հետևաբար *-իկ* մասնիկը դրվում է միայն այս դեպքերում, ուրիշ խոսքով՝ անհոլով է»[1183]: Ըստ նրա՝ հայերենի բարբառները պարզ ձևերը (այս, սա) դարձրել են ածական (այսինքն՝ որոշչային կիրառություն ունեցող), իսկ սրանց վրա ավելացնելով *իկ* մասնիկը՝ վերածել են դերանվան, որտեղից էլ վերջածայն *կ*-ի կրճատումով առաջացել են *ի* մասնիկով ավարտվող ձևերը, ինչպես՝ *ասի, ադի, անի, իսի, իդի, ինի* ևն[1184]: Այդպես և Բայազետի բարբառում ածականական արժեք ունեցող *էս, էտ, էն* ձևերից *իկ* մասնիկով ձևավորվել են դերանվանական արժեք ունեցող *էսիկ, էտիկ, էնիկ* ձևերը, որոնցից էլ *կ* վերջածայնի անկումով առաջացել են *էսի, էտի, էնի* դերանունները:

Բայազետի բարբառում ցուցական դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

Եզակի թիվ

Ուղղ.	էսի	էտի	էնի
Սեռ.	ըստու	ըտու	ընդու
Տր.	Ըստուն	ըտուն	ընդուն
Հայց.	էսի,ըստուն	էտի,ըտուն	էնի, ընդուն
Բաց.	ըստուց	ըտուց	ընդուց
Գործ.	Ըստով	ըտով	ընդով

Հոգնակի թիվ

Ուղղ.	/ը/ստոնք	ըտոնք	ընդոնք
Սեռ.	/ը/ստոնց	ըտոնց	ընդոնց
Տր.	/ը/ստոնցը	ըտոնց	ընդոնց
Հայց.	/ը/ստոնք,/ը/ստոնցը	ըտոնք,ըտոնցը	ընդոնք,ընդոնցը
Բաց.	/ը/ստոնցից	ըտոնցից	ընդոնցից
Գործ.	/ը/ստոնցով	ըտոնցով	ընդոնցով

[1183] Նշվ. աշխ., էջ 235:
[1184] ԼՔՀԼ, հ. 2,, էջ 195-196:

Ի տարբերություն Բայազետի բարբառի՝ մերձավոր բոլոր բարբառները ցուցական դերանունների եզակի սեռականի ձևերում ունեն *ր* (իսոր, իդոր, տ°ր, ըստոր, ըստուր, ինոր, ընդրա)[1185]: Կարելի էր ենթադրել, թե Բայազետի բարբառում ցուցական դերանունների եզակի սեռականում տեղի է ունեցել *ր*-ի անկում, մանավանդ որ Արարատյան բարբառի համապատասխան ձևերը Բայազետի բարբառի ձևերից տարբերվում են միայն *ր* ունենալով՝ Ա. *ըստուր, ըստուր, ընդուր* – Բ. *ըստու, ըստու, ընդու*: Սակայն Բայազետի բարբառի իրողությունների դիտարկումը մեզ բերում է այլ համոզման: Թվում է՝ բարբառումս *կ*-ի անկումով (էսիկ, էտիկ, էնիկ > էսի, էտի, էնի) դերանունների վերջում հայտնված *հ*-ն հիմք է դարձել այդ բառերի՝ ՈՒ հոլովման ենթարկվելու[1186]: Այլ կերպ ասած՝ եթե համեմատվող բարբառներում ցուցական հիշյալ դերանունները եզակի թվում ենթարկվում են դերանվանական հոլովման, ապա Բայազետի բարբառում նույն այդ դերանունները ենթարկվում են անվանական ՈՒ հոլովման:

Մերձավոր բարբառներում ցուցական դերանունները եզակի սեռականում ունենում են *որ, ուր* մասնիկներ. Վանի, Մշո և Դիադինի բարբառներում՝ *որ* (իսոր, իդոր, ըստոր), Արարատյան բարբառում՝ *ուր* (ըստուր, ըստուր, ընդուր): Կարծում ենք՝ այս երկուսն էլ առնչվում են հինհայերենյան *որ* մասնիկին (այսորիկ, այդորիկ, այնորիկ)[1187]: Թվում է՝ Արարատյան բարբառում *որ*-ի դիմաց *ուր* մասնիկի դրսևորումը արդյունք է ՈՒ հոլովման ազդեցության, մանավանդ եթե նկատի ունենանք բացառականի ձևը՝ *ըստուց*: Ամենայն

[1185] Հայերենում դերանունների հոլովման մեջ սեռական հոլովում *ր* տարրը տարածված իրողություն է (մեր, իր, սորա, սորին, այսր, այսորիկ, ոյր, է°ր, ուրումն և այլն), և բարբառներում ցուցական դերանունների սեռական հոլովաձևերում *ր*–ի առկայությունը այդ իրողության արտահայտություն է:

[1186] Ի դեպ, Բայազետի բարբառում *էսի, էտի, էնի* դերանունները ոչ միայն առարկայանիշ են, այլ նաև անձնանիշ, և կան անձնանիշ մի շարք բառեր, որոնք հոլովվում են նույն այդ դերանունների պես, այն է՝ եզակի թվում բառերը ենթարկվում են ՈՒ հոլովման, իսկ հոգնակի ուղղականում ունենում են *ոնք* հոգնակերտ և ենթարկվում են Ց անվանական հոլովման (հմմտ. *էսի, ըստու, ըստոնք, ըստոնց* և *խընամի, խընամու, խընամոնք, խընամոնց*):

[1187] Հ.Աճառյանը կարծում է, թե *իսոր, իդոր, ըստոր, ըստուր* և այդ կարգի մյուս սեռականները առաջացել են գրաբարյան *այսր, այդր, այնր* ձևերից, և բարբառային ձևերում *ո* և *ու* ձայնավորները ներմուծված են ներդաշնակության համար և իրար հետկապչունեն (տե՛ս ԼՔՀԼ, հ.2, էջ 227 – 230):

հավանականությամբ՝ հինհայերենյան *որ* մասնիկը առկա է նաև Խոյ – Մարաղայի բարբառի *տ°ր, դ°ր* սեռականներում[1188]:

Ցուցական դերանունների եզակի սեռականում կարևոր հատկանիշ է նաև *տ*-ի հավելումը: Ա.Ղարիբյանը նշում է, որ Կը ճյուղի բարբառները «ցուցական դերանունների հոլովված ձևերի մեջ *տ*-ն չեն ունենում»[1189]: Գ.Ջահուկյանի բերած փաստերը ևս վկայում են, որ *տ*-ի հավելումը հատուկ է արևելյան բարբառներին, իսկ արևմտյաններից այդ հատկանիշն ունեն Մուշն ու Դիադինը[1190]: Մեր կողմից դիտարկվող բարբառներում, այսպիսով, *տ*-ի հավելում չունի միայն Վանի բարբառը: Այս հավելման վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Աճառյանը երևույթը մեկնաբանում է այսպես. «Ընդհանուր ձայնաբանական երևույթ է բոլոր լեզուների մեջ էլ՝ *դ* ատամնականի հավելումը *ն* և *ր* բաղաձայնների միջև. հայերենից իբրև օրինակ հիշենք *ծանր – ծանդր, մանր – մանդր*: Այս օրենքի համաձայն՝ *նրա* դարձավ *նդրա* և հնչման հեշտության համար հենարանի հավելումով՝ *ընդրա*: Այսպես ձևացան Ղրբ. *ընդըրա, ընդըրան*, Մրդ. *ինդ°ր, ինդ°ր°, ինդ°ր°ն* ձևերը»[1191]: Ցուցական դերանունների սեռականներում *տ*-ի ներմուծումը և ընդհանրապես այդ ձևերի կազմությունը բոլորովին այլ կերպ է բացատրում Ա.Ղարիբյանը: Նրա կարծիքով՝ Ում ճյուղի բարբառներում «ցուցական դերանունների հոլովման հիմքը ընդհանուր հայերենի «դա» դերանվան սեռական ձևն է, որը Ղարաբաղի բարբառում սկզբից ստանում է «էս», «էտ», «էն» ձևերը և

[1188] Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Վ.Կատվալյան, Ցուցական դերանունների դրսևորման առանձնահատկություններ հայերենի բարբառներում, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 2011, էջ 413-425:

[1189] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 157:

[1190] ՀԲՆ, էջ 88 – 99:

[1191] ԼՔՀԼ, հ.2, էջ 228: Այդ նույն եղանակով, ըստ Աճառյանի, «*այնր* ձևից *դ*-ի հավելումով առաջացել է **այնդր* > **էնդր*. և որովհետև վերջաձայն երեք բաղաձայնների հանդիպումը դժվար հնչելի երևույթ է, մեջտեղում ավելացել է *ու* ձայնավորը» (նշվ. աշխ., էջ 229: Արևելյան բարբառների այդ *ու* ձայնավորին Կը ճյուղի բարբառներում համապատասխանում է *աստր, աստր, անոր* սեռականների *ո*-ն: Բայց այդ երկուսի միջև Աճառյանը կապ չի տեսնում և համարում է, որ դրանք անկախաբար ներմուծված են ներդաշնակության համար /նույն տեղում/): *Ընդուր* ձևի նմանությամբ էլ, ըստ Աճառյանի, առաջացել են *էստուր, էտուր* ձևերը: Ի վերջո, լեզվաբանը *այս, այդ, այն* (*էս, էտ, էն*) ցուցական դերանունների սեռականների ծագումը ներկայացնում է հետևյալ կերպ. «Այսպիսով *էստուր, էտուր, էնդուր* և *աստր, ադոր, անոր* միևնույն ձևերն են և հավասարապես ծագում են գրբ. *այսր, այդր, այնր* ձևերից, նախաձայնը (*այ*) դարձնելով մի տեղ *է*, մյուս տեղ *ա*, և բացի սրանից առաջին խմբի մեջ ներմուծելով *դ*, որ *ն* և *ր* բաղաձայնների

կորցնում «ո»-ն. էս + դորա > էստրա > ըստրա և այլն: Իսկ մյուս բարբառներում, ընդհակառակը, «դորա» ձևը կորցնում է «ա»-ն և սկզբից ավելացնում նույն էս, էդ, էն. էս + դորա > էսդոր > էստուր – ըստուր > էստու»[1192]: Լեզվաբանը եզրակացնում է, որ Ում ճյուղի բարբառները «պահել են ընդհանուր հայերենի *այս, այդ, այն* դերանունների ուղղական ձևը՝ կորցնելով մյուս հոլովները, իսկ *սա, դա, նա* դերանունների՝ մյուս հոլովները, կորցնելով ուղղական ձևը»[1193]:

Կարծում ենք՝ բարբառներում թե՛ ցուցական դերանունների սեռականի ձևերի կազմությունն ընդհանրապես և թե՛ դրանցում *տ* կամ *դ* տարրի ներմուծումը կարելի է մեկնաբանել այլ կերպ: Նախ, ինչպես կարելի է բխեցնել վերն ասվածից, բարբառներում *այս, այդ, այն* դերանուններին համապատասխանող ձևերը (*էս, էտ, էն, աս, ատ, ան, էսի, էտի, էնի* և լն) սեռական հոլովում ուղղականի վրա ստանում են *օր, որ, ուր* կամ °*ր* վերջավորություն, որոնք բոլորն էլ առնչվում են հինհայերենյան *այսր* (այդր, այնր) և հատկապես *այսորիկ* (այդորիկ, այնորիկ) ձևերին: Այսինքն՝ ցուցական դերանվան՝ բարբառներում հանդիպող սեռականի բոլոր ձևերը (իսոր, իտոր, ինոր, ասոր, ատոր, անոր, ըստուր, ըտուր, ընդուր, ստուր, տուր, ըսուր, ընուր, անուր, °սիւր, °դիւր, °նիւր, ասօր, ադօր, անօր ևն), որոնք ավարտվում են *ր* ձայնորդով և նախընթաց որևէ ձայնավորով կամ երկբարբառով (օ, ո, ու, °, իւ), վերաբերում են *այս, այդ, այն* դերանուններին, և բավարար հիմքեր չունենք կարծելու, թե դրանք (և մյուս թեք հոլովաձևերը ընդհանրապես) վերաբերում են *սա, դա, նա* դերանուններին: Հակառակ իրողությունն է հավաստում նաև այն հանգամանքը, որ կան բարբառներ, որոնք զուգահեռաբար պահպանել են *սա, դա, նա* դերանունները, և դրանց հոլովաձևերը կազմությամբ

հենարանն է, ինչպես նաև ներդաշնակության համար ավելացնելով մի տեղ *ու*, մյուս տեղ *ո*» (նշվ. աշխ, էջ 230):

[1192] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ, էջ 158:

[1193] Նույն տեղում: Երևույթին Ա.Ղարիբյանը հակասական մեկնաբանություն է տալիս Կը ճյուղի բարբառների առնչությամբ: Նախ նա գրում է, որ այստեղ ցուցական դերանունների սեռականը կազմվում է՝ ուղղականի վրա ավելացնելով *օր, որ, ուր* կամ նույնիսկ *ու* վերջավորություն (նույն տեղում): Սակայն անմիջապես անում է ասվածին հակասող հետևություն. «Ուրեմն «Կը» ճյուղի բարբառների ցուցական դերանունների հոլովումը տարբեր հիմքով է: Այստեղ հոլովման հիմք են դառնում *սա, դա, նա* դերանունների սեռական *սորա, դորա, նորա* ձևերը, որոնք կորցնում են վերջին «ա» - ն և սկզբից ստանում *էս, էտ, էն*» (նույն տեղում):

էականորեն տարբերվում են *էս, էտ, էն* դերանունների հոլովաձևերից, ինչպես՝ Պլ. *սա, սրա* և *ա, ասր*, Թբ. *սա, սրա* և *էս, էստու*, Ագլ. *սս, սրս* և *ա, աստուր* ևն[1194]: Ցուցական դերանունների թեք հոլովաձևերում առաջնալեզվային պայթականի ներմուծման հարցի առնչությամբ, ինչ խոսք, ընդունելի է Հ.Աճառյանի տեսակետը դրա՝ հնչյունական հավելումլինելու վերաբերյալ: Սակայն անհամոզիչ է թվում այն պնդումը, թե այդ ներմուծումը սկիզբ է առել *նրա*կամ *այնր* ձևերից և ապա տարածվել նաև մյուս ձևերում: Երևույթի դիտարկումը Բայազետի բարբառում մեզ թույլ է տալիս ենթադրել, որ *Էսի* և *Էնի* դերանունների *ըստու* և *ընդու* սեռականներում առաջնալեզվային հավելական հնչյունի առկայությունը նախ և առաջ հետևանք է *Էտի* դերանվան *ըտու* օրինաչափ սեռականի համաբանական ազդեցության, ընդ որում՝ *ընդու* ձևում ներմուծված պայթականի ձայնեղությունը ակնհայտորեն հետևանք է *ն* ձայնորդի ազդեցության: Չենք բացառում, որ պայթականի ներմուծման հարցում կարող է դեր խաղացած լինել և այն հանգամանքը, որ Բայազետի բարբառում (ինչպես և այլ բարբառներում) թե՛ *ս*, թե՛ *ն* հնչյուններից հետո նկատվում է *տ*-ի, *դ*-ի հավելման միտում, ինչպես՝ *աէստ, կ°լ բաստ, հու ստակ, ծ°նդը, թու նդիր* (թոնիր): Սակայն առավել կարևորում ենք մեկ այլ իրողություն: Արդի գրական արևելահայերենում դիտարկում ենք հնչյունական մի

[1194] Չի բացառվում, որ որոշ դեպքերում *սա, դա, նա* դերանունների թեք ձևերը կարող են իրոք դուրս մղած լինել *այս, այդ, այն* դերանունների թեք ձևերը՝ ձևավորելով խառը համակարգեր: Մասնավորապես, ասվածը կարող է վերաբերել Ղարաբաղի բարբառի ձևերին՝ էս, ըստըրա, ըստըրանա, ըստըրանավ ևն: Կարելի է ասել, որ *այս, այդ, այն* և *սա, դա, նա* ցուցական դերանունների փոխհարաբերությունների առումով հայերենի բարբառները ներկայացնում են երեք կարգի իրավիճակ. 1) Ցուցականների երկու տիպերի առկայություն՝ իրենց առանձին հոլովաձևերով: Այսպիսի վիճակ ներկայացնում են, օրինակ, Թբիլիսիի, Պոլսի, Ագուլիսի, Նոր Նախիջևանի բարբառները: 2) Միայն *այս, այդ, այն* տիպի դերանուններ ունեցող բարբառներ, ինչպիսիք են, օրինակ, Բայազետի, Արարատյան, Խոյ-Մարաղայի, Վանի, Դիադինի, ընդհանուր առմամբ նաև Մշո բարբառները: Նկատենք, որ այս բարբառներում ցուցական դերանվան թեք հոլովաձևերը իրականում արտահայտում են *սա, դա, նա* ցուցականների իմաստ, իսկ ուղիղ ձևերը կարող են արտահայտել և՛ *այս, այդ, այն*, և՛ *սա, դա, նա* ցուցականների իմաստ: Ի դեպ, Բայազետի բարբառում եզակի ուղղականում երկու տիպերի ցուցականների իմաստային տարբերությունը դրսևորվում է նաև ձևային տարբերությամբ. *այս, այդ, այն* դերանունների իմաստը արտահայտվում է *էս, էտ, էն, էսա, էտա, էնա* ձևերով, իսկ *սա, դա, նա* դերանունների իմաստը արտահայտվում է *էսի, էտի, էնի, էսիկ, էտիկ, էնիկ, էսակ, էտակ, էնակ* ձևերով: 3) Ցուցականների երկու տիպերի խառնուրդ ունեցող բարբառներ, ինչպիսին է, օրինակ, Ղարաբաղի բարբառը: Բոլոր դեպքերում պարզ է, որ բարբառներում նշված ցուցական դերանունների թեք հոլովաձևերը միշտ ունեն առարկայական, այսինքն՝ *սա, դա, նա* դերանունների իմաստ:

օրինաչափություն, համաձայն որի՝ միայն ձայնավորից բաղկացած վանկ (նկատի չունենք միահնչյուն բառերը) հնարավոր է երկու դեպքում. ա) բառասկզբում, եթե ձայնավորին հաջորդում է մեկ բաղաձայն (ասել, էլեկտրոն, իմանալ, օտար, ուրախ), բ) այլ դիրքերում, եթե բառում իրար են հանդիպում երկու ձայնավորներ (էի, չէի, էակ, բերեի, կակաո, Լաոսի): Գրական հայերենում *ը* ձայնավորը երբեք մեկ այլ ձայնավորի չի նախորդում և բառասկզբում մեկ բաղաձայնից առաջ չի հանդիպում, հետևաբար՝ *ը*-ն երբեք ինքնուրույն վանկ չի դառնում[1195]: Այդպես է և Բայազետի բարբառում: Նշանակում է՝ *էսի* > *ըսու*, *էնի* > *ընու* ձևերը Բայազետի բարբառում դառնում են անհնար՝ բարբառի օրենքներին հակասող վանկակազմության (ը – սու, ը - նու) պատճառով: Ահա թե ինչու՝ վիճակը շտկվել է *ը*-ից հետո բաղաձայնական խմբի ձևավորումով, ինչին նպաստել են նախորդ երկու հանգամանքները[1196]: Հավելենք նաև, որ Բայազետի բարբառում արտահայտվում է նաև հակառակ իրողությունը, երբ բաղաձայնական խմբի տարրալուծումը պատճառ է դառնում *ը*-ի հնչյունափոխության, ինչպես՝ *ըստե – էսատե, ըստու – էսատու*: Ցուցական դերանվան սեռական հոլովում առաջնալեզվային պայթականի ներմուծման հանգամանքները բոլոր բարբառներում թերևս բացարձակապես նույնը լինել չեն կարող, սակայն Բայազետի բարբառի առումով կատարված դիտարկումները թույլ են տալիս նույն հայեցակետով անդրադառնալ մյուս բարբառների իրողություններին: Թվում է՝ սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Վանի բարբառի *իսոր, ինոր* սեռականներում առաջնալեզվային պայթականի ներմուծումը անհրաժեշտ չի եղել, քանի որ բառասկզբում առկա է ոչ թե *ը*, այլ *ի*: Մինչդեռ Դիադինի և Արարատյան բարբառներում այդ ներմուծումը առկա է և ուղեկցվում է բառասկզբի *ը* ձայնավորով (ըստոր, ընդոր, ըստուր,

[1195] Այդպես էր և գրաբարում: Օրինակ՝ բոլոր դեպքերում, երբ *ինն* թվականի թեք ձևերում բաղաձայնական խմբից հետո հանդես էր գալիս մեկ այլ ձայնավոր, տեղի էր ունենում *ի* > *ը* փոփոխություն (ընևի, յընևէ, ընևից), բայց երբ *ը* – ն պիտի հայտնվեր մեկ բաղաձայնից առաջ, նման փոփոխություն տեղի չէր ունենում (ինունք, զինունս):

[1196] Թվում է, թե ասվածին կարող են հակասել *ըտու* (ը - տու) սեռականը և դրանից կազմված ձևերը (ըտուց, ըտով, ըտունք և լն), սակայն նախ այս դիրքը միակն է, որտեղ *ը* – ին հաջորդում է մեկ բաղաձայն (ուստի այն չէր կարող խանգարել ընդհանուր օրինաչափությանը), և բացի այդ՝ *տ* – ի հպման ամենափոքր երկարաձգումն իսկ կարող է ընկալվել իբրև *ըտ–տու* օրինաչափվանկակառույց:

ընդուր): Իսկ Մշո բարբառում *իդա* դերանվան *իդոր* սեռականում մեկ բաղաձայնից առաջ ունենք *ի*, մինչդեռ *ինա* դերանվան *ընդոր* սեռականում *ի* > *ը* փոփոխությունն ուղեկցվում է պայթականի ներմուծմամբ և բաղաձայնական խմբի ձևավորումով: Ի վերջո, մեր կողմից դիտարկվող բարբառներում նկատելի է դառնում որոշակի օրինաչափություն. դերանվան թեքված ձևերում առաջնալեզվային պայթականի ներմուծումը և հնչյունափոխության արդյունքում բառասկզբում *ը* հնչյունի հանդես գալը փոխկապակցված իրողություններ են:

Դիտարկվող դերանունների եզակի տրականը Բայազետի և Խոյ – Մարաղայի բարբառներում սեռականից տարբերվում է որոշիչ հոդի առկայությամբ (Բ. *ըստու*, *ըստուն*, Խ. *տ՞ր*, *տ՞րը*, *տ՞րիկյը*), իսկ Վանի, Մշո, Արարատյան և Դիադինի բարբառներում սեռականի և տրականի ձևերը նույնական են: Բայազետի բարբառում այս յուրահատկությունը թերևս պայմանավորված է *էսի*, *էտի*, *էնի* դերանունների՝ անվանական հոլովման ենթարկվելու հանգամանքով[1197]: Հայցական հոլովը Մշո բարբառում ունենում է *զ* նախդիր (*զիդա*, *զինա*): Մյուս բարբառներում հայցականը մեկ նման է ուղղականին, մեկ տրականին՝ ըստ անձի և իրի առման[1198]: Ցուցական դերանունների եզակի բացառական և գործիական հոլովները բարբառներում ձևավորվում են տրական հոլովից: Արարատյան բարբառում բացառականը և գործիականը նմանվում են Բայազետի բարբառի ձևերին (ըստուց, ըստով):

Ցուցական դերանունների հոգնակի ուղղականի ձևերի վերաբերյալ Հ.Աճառյանը գրում է, որ բարբառներում ամենատարածված *ասոնք*, *ադոնք*, *անոնք* ձևերի և դրանց բոլոր տարբերակների (*իսոնք*, *իդոնք*, *ինոնք*, *ըսունք*, *ընունք*, *ասունք*, *ադունք*, *անունք* ևն) նախաձևերն են միջինհայերենյան «*այսոք*, *այդոք*, *այնոք*, որոնք առաջանում են գրբ. *այսք*, *այդք*, *այնք* ձևերից՝ ներդաշնակության

[1197] Բարբառումս անվանական հոլովման մեջ որոշյալ առման դեպքում տրական հոլովը միշտ ունենում է որոշիչ հոդ, և քանի որ ցուցական դերանունները մատնացույց անելու իրենց հատկությամբ միշտ որոշյալ իմաստ ունեն, այդ պատճառով էլ տրական հոլովում միշտ ունեն որոշիչ հոդ:

[1198] Վանի բարբառում Հ.Աճառյանը հայցականի՝ տրականին նմանվող ձևեր հոլովական հարացույցում չի բերում (տե՛ս ՔՎԲ, էջ 152), սակայն այլ առիթով բերված օրինակից (Յես շատկուզեմ ինոր) երևում է, որ այստեղ ևս անձի առման դեպքում հայցականը նման է տրականին (տե՛ս նշվ. աշխ., էջ 115):

համար ներմուծելով *ո* ձայնավորը», իսկ այնուհետև ավելացել է «...*ն* (*այսոնք, այդոնք, այնոնք*)՝ նմանությամբ բազմաթիվ այլ կարգի հոգնակիների *անք, եանք, ունք*՝ ինչ. *հիմունք, շարժմունք* և այլն»[1199]: Հարկավ, բոլոր այս ձևերը՝ թե՛ գրաբարյան, թե՛ միջինհայերենյան և թե՛ բարբառային, միմյանց հետ փոխկապակցված են և նույն իրողության տարատեսակ դրսևորումներն են՝ ներկայացնելով լեզվի զարգացման տարբեր փուլերը: Սակայն համոզիչ չէ միջինհայերենյան և բարբառային ձևերում *ո* կամ *ու* ձայնավորների առկայությունը ներդաշնակության համար իբրև ձայնավորական ներմուծում ներկայացնելը: Թվում է՝ միջինհայերենյան, ապա և բարբառային ձևերը առնչվում են հինհայրենյան *այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ* ձևերին, ինչպես որ եզակի սեռականի ձևերը առնչվում են հինհայերենյան *այսորիկ, այդորիկ, այնորիկ* ձևերին: Կարծում ենք՝ երկու դեպքում էլ բարբառային ձևերում *ո* կամ *ու* ձայնավորի առկայությունը ներդաշնակության համար հետագա ներմուծում չէ, այլ արձագանքն է հնագույն իրողության, որի մասին վկայում է հենց ինքը՝ Հ. Աճառյանը: Խոսելով ցուցական *այս, այդ, այն* դերանունների հինհայերենյան կարճ ու երկար ձևերի մասին՝ նա գրում է. «Երկար ձևը ունի միշտ *-իկ* վերջավորությունը, որ պատճառ է դառնում նախորդ ձայնավորի պահպանման.- այսպես՝ երկար ձևն է *այնորիկ*, կարճը՝ *այնր*, որ առաջացել է նախավոր **այնոր* ձևից»[1200], ապա և համաձայնում է Մեյեի հետ՝ *այս, այդ, այն* ցուցականների հին արմատներ համարելով *այսո, այդո, այնո* ձևերը[1201]:

Բարբառներում ցուցական դերանունները հոգնակի թվում ենթարկվում են Ց անվանական հոլովման (Բ. ըտոնց, Վ. իտոնց, Մ. ընդոնց, Խ. տ°նց, Դ. /է/ըտոնց, Ա. /է/ըտօնց): Հոգնակի տրականի դեպքում ևս առանձնանում են Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառները, որոնք ունենում են սեռականից որոշյալությամբ տարբերվող ձևեր՝ Բ. *ըտոնցը*, Խ. *տ°նցը*: Հոգնակի հայցականը ուղղականի հետևությունական է Վանի բարբառում (իտոնքʲ), ուղղականի վրա *գ* նախդրի հավելումով է կազմվում Մշո բարբառում (գընդոնք): Հայցականում

[1199] ԼՔՀԼ, հ. 2, էջ 231:
[1200] Նույն տեղում, էջ 174:
[1201] Նույն տեղում, էջ 181:

ուղղականաձև և տրականաձև տարբերակներ ունեն Բայազետի (ընոնք, ընոնցը) և Խոյ-Մարաղայի (տ°նքյ/իկ/, տ°նցը) բարբառները, հայցականը նույնանում է տրականին Արարատյան և Դիադինի բարբառներում: Ցուցական դերանունների հոգնակի բացառականը և գործիականը բարբառներում կազմվում են տրականից՝ համապատասխան վերջավորություններով:

Բայազետի բարբառում գործառում են նաև բաղադրյալ ցուցականներ, ինչպես՝ *էսենց, էտենց, էնենց* (այսպես, այդպես, այնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի), *էսքան, էսաքան, էտքան, էնքան* (այսքան, այդքան, այնքան), *էստ°, էտտ°, էնդ°* (այսքան, այդքան, այնքան), *էսակընդ°* (այսչափ), *էսմալ , էդմալ , էմմալ* (այսպես, այդպես, այնպես), *ըստե, ըտե, ընդե, էսատե, էտատե, էնատե* (այստեղ, այդտեղ, այնտեղ) ևն: Այդպիսիք տարածված են և մերձավոր բարբառներում, ինչպես՝ Ա. *էսպէս, էտպէս, էնպէս, ըսէնց, ըտէնց, ընէնց էսքան, էտքան, էնքան, էստար, էտտար, էնդար, ըզդար, ըտդար, ընդար*, *ըստէղ / ըստէ, ըտէղ / ըտէ, ընդէղ/ ընդէ*, Մ. *իդատեղ, ինատեխ*(այստեղ, այնտեղ), *իդաքան, ինաքան*, *իդաչէշիդ, ինաչէշիդ* (այսկերպ, այնկերպ), *իդամլա, ինամլա* (այսպես, այնպես), Ալ. *էդըմլա, էնըմլա* (այսպես, այնպես), *հ՛օդա, հ՛օդի, հ՛օնի* և *էդատեղ, էդտեղ, էնտեղ* (այստեղ, այդտեղ, այնտեղ), *էդաքան, էդքան, էնքան* ևն: Բոլոր բարբառներում էլ առկա են կազմության նույն եղանակն ունեցող բաղադրյալ ցուցականներ, որոնցում *այս, այդ, այն* դերանունների տարբերակների վրա ավելանում են կամ արմատներ, կամ մասնիկներ: Առավել տարածված են *քան* և *տեղ* արմատներով կազմությունները, ընդ որում՝ եթե առաջինը սովորաբար անհնչյունափոխ է, ապա *տեղ* արմատը Մշո բարբառում ունի նաև *տեխ* (ինատեխ) ձևը, Արարատյան բարբառում՝ նաև առանց *ղ* վերջնահնչյունի ձև, իսկ Բայազետի բարբառում՝ միայն առանց *ղ* - ի ձև: Սակայն հոլովման ժամանակ Բայազետի բարբառում *ղ*-ն եզակի թվի ձևերում վերականգնվում է՝ *ըստե, ըստեղի, ըստեղին, ըստեղից* կամ *ըստուց, ըստեղով* կամ *ըստով*[1202], իսկ հոգնակի թվում կարող է և չլինել՝ *ըստերանք* կամ *ըստեղրանք*: Բայազետի և Արարատյան բարբառներում գործառում են թուրքերեն *կընդար* (չափ) բառով կազմություններ: Արարատյան

բարբառում դերանվան մեջ մնացել է այդ բառի վերջին վանկը (*էստար, էտտար, էնդար, ըզդար, ըտդար, ընդար*)[1203]: Բայազետի բարբառում վերոհիշյալ բառը արտահայտվում է *կըդ°* ձևով, ամբողջական ձևով հանդես է գալիս *էսկըդ°, էսակըդ°* (այսչափ) ձևերում, իսկ մյուս դեպքերում առկա է միայն վերջին վանկը (էստ°, էտտ°, էնդ°): Մշո բարբառում և Ալաշկերտի խոսվածքում գործառում են *մլա* ձևով ավարտվող դերանուններ՝ *իդամլա, ինամլա* (Մ.) և *էդըմլա, էնըմլա* (Ալ.)՝ *այսպես, այնպես* նշանակություններով: Բայազետի բարբառում դրանց համապատասխանում են *մալ* ձևով ավարտվող *էսմալ, էդմալ, էմմալ* (էնմալ) դերանունները՝ *այսպես, այդպես, այնպես* իմաստներով: Կարծում ենք՝ թե՛ *մլա* և թե՛ *մալ* ձևերը առաջացել են *նման* բառից՝ տարնմանական և դրափոխական հնչյունափոխությունների, ինչպես նաև հնչյունի անկման հետևանքով, ինչը հավաստելու են գալիս *նման, նմանել* բառերի բարբառային մի շարք ձևեր. *մնան* (Գոր., Ղրբ., Ծմ., Սլմ.), *լման* (Խրբ., Մրղ., Ջղ.), *լմանէլ* (Մրղ., Ննխ.), *ըլմանիլ* (Ասլ., Պլ., Ռ., Սեբ.), *մանիլ* (Վան), *մ°նիլ* (Մուշ) և այլն[1204]: Բայազետի բարբառում կարելի է ենթադրել հնչյունափոխական հետևյալ գործընթացը. *էսնըման > էսման > էսմալ* [1205]:

Մասնիկավոր ցուցական դերանունները դիտարկվող բարբառներում ավելի քիչ են: Բայազետի և Արարատյան բարբառներում կան *ենց / էնց* մասնիկով ձևեր (Բ. *էսենց, էտենց, էնենց*, Ա. *ըսէնց, ըտէնց, ընէնց*), որոնք կապվում են *այս, այդ, այն* դերանունների հինհայերենյան հոգնակի սեռական-տրական հոլովաձևերի հետ[1206]:

Բայազետի բարբառում ցուցականությունն ավելի ընդգծելու համար դերանվան հետ գործածվում է *այ* ձայնարկությունը, որը սովորաբար միանում է բառին՝ առաջ բերելով հնչյունական փոփոխություններ, ինչպես՝ *այսի* (< այ էսի), *այսա* (< այ էսա), *այսիկ* (< այ էսիկ), *այսակ* (< այ էսակ), *այսենց* (< այ էսենց), *այսաքան* (< այ էսաքան), *այսատե* (< այ էսատե), *այսակըդ°* (< այ

[1202] Բացառական և գործիական հոլովներում ավելի գործածական են կրճատ ձևերը: Ամբողջական ձևերը գործածվում են հասկանալիություն ապահովելու մղումով:

[1203] Նման ձևեր հանդիպում են նաև Բայազետի բարբառի որոշ խոսվածքներում (Գավառ, Նորատուս)՝ */ը/սդ°ր, ըտ°ր, ընդ°ր:*

[1204] Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 459:

[1205] ՀԳԲ-ում արձանագրված են *էման, էմալ* (էջ 332), *էդման, էդմալ* զուգահեռ ձևեր (էջ 329):

էսակը դ°), *այսմալ* (< այ էսմալ): Հետաքրքրական է, որ այս ձևերի հետ դարձյալ կարող է գործածվել *այ* բառը՝ էլ ավելի ընդգծելով ցուցականությունը՝ *այ այսի, այ այսիկ, այ այսենց*:

4.3. *Ստացական դերանուններ*

Բայազետի բարբառում ևս ստացական կոչված դերանունները անձնական դերանունների սեռական հոլովաձևերն են, որ հոդի միջոցով ձևավորվում են իբրև սկզբնաձևեր, ձեռք բերում ինքնուրույն իմաստու գործածություն և հոլովվում: Բարբառիս ստացական դերանուններն են՝ *իմը, քոնը, մերը, ձ՛երը, հ՛իրանը, հ՛իրանցը*, որոնց հոգնակիներն են՝ *իմոնք, քոնոնք, մերոնք, ձ՛երոնք*: Սրանց եզակիի ձևերը ենթարկվում են Ու հոլովման (իմը, իմու, իմուն, իմուց, իմով), իսկ հոգնակիի ձևերը՝ Ց հոլովման (իմոնք, իմոնց, իմոնցը, իմոնցից, իմոնցով)[1207]: Տրական հոլովը սեռականից տարբերվում է որոշիչ հոդով[1208]:

Բարբառներում բավականին տարածված իրողություն է, երբ ստացական դերանունների սկզբնական ձևերի հետ գործածվում են նաև հավելյալ մասնիկներով կազմություններ[1209]: Ի

[1206] Ջ.Բառնասյան, Ցուցական դերանունների ձևաիմաստային դրսևորումները հայերենի բարբառներում, 2008, էջ 31:

[1207] Այս դեպքում ևս գործում է Բայազետի բարբառին բնորոշ այն օրինաչափությունը, որ եթե անձի վերաբերող բառը եզակի թվում ենթարկվում է ՈՒ հոլովման, ապա նրա հոգնակին ունենում է *ոնք* կազմիչ և ենթարկվում է Ց հոլովման (հմմտ. խընամի, խընամու, խընամոնք, խընամոնց, էսի, ըստու, ըստոնք, ըստոնց, Չիչու, Չիչոնք, Չիչոնց): Մյուս կողմից, թերևս գործ ունենք հինհայերենյան ստացական դերանունների հոլովական յուրահատկությունների արձագանքի հետ (հմմտ. իմ, իմոյ, իմում, զիմ, յիմմէ, իմով, իմք, իմոց, իմոց, զիմս, յիմոց, իմովք):

[1208] Մերձավոր բարբառներում ստացական դերանուններն ունեն հետևյալ արտահայտությունը. Վանի բարբառ՝ եզ. թիվ. *իմուն, իմս, իմն, քյումուն / քյումուն, քյոն, մերուն, ծերուն*, հոգն. թիվ. *իմոնք՝, քՈնոնք՝, մերոնք՝, ծերոնք՝, մերոհ՝ներ, մերուհ՝տեր, ծերոհ՝ներ, ծերունհ՝տեր, իմոհ՝ներ, իմոհ՝տեր, իմոնք՝ներ, քՈնոհ՝ներ, քՈնոհ՝տեր*, Մշո բարբառ՝ *իմ / իմուն, քում / քումուն, էնոր, մըր / մեր / մէրուն, ձ՛ըր / ձ՛եր / ձէրուն, էնոնց*, Դիադինի բարբառ՝ եզ. թիվ. *իմըս, քՈնըտ, մեր, ձ՛եր*, հոգն. թիվ. *մերոնք՝, ձ՛երոնք՝* , Արարատյան բարբառ՝ եզ. թիվ. *իմը, քունը / քօնը, մէրը / մերը, ձ՛երը / ծէրը*, հոգն. թիվ. *իմօնք / իմնօնք, քունօնք, մէրօնք / մէրնօնք, ձ՛երօնք / ձ՛երնօնք / ծէրօնք*, Խոյ-Մարաղայի բարբառ՝ եզ. թիվ. *իմը / իմինը, քՈնը / քՈնինը, իւրը, մերը / մերինը, ծերը / ծերինը*, հոգն. թիվ. *իւրէնցը / իւրէնցինը, մերօնքը / մերօնքինը, ծերօնքը / ծերօնքինը, իւրէնցօնքը / իւրէնցինօնքը*:

[1209] Այս ձևերը սովորաբար արտահայտում են կրկնակի ստացականություն: Ինչպես նկատել է Հ.Աճառյանը, «Բարբառների մի ուրիշ հատկությունն էլ այն է, որ ոչ միայն պարփակում է ստացյալը ստացականի մեջ (ինչ. *իմը, քոնը*, այսինքն «իմ ունեցածը, քո ունեցածը»), այլև սրա հատկացուցիչը: Սրա համար դրվում է -ին

տարբերություն Բայազետի բարբառի՝ շրջակա բոլոր բարբառներն ունեն այդպիսի ձևեր[1210]: Այս դերանունները զանազանություններ են հանդես բերում նաև իրենց քերականական հատկանիշներով: Սրանք ավելի հաճախ ենթարկվում են Ի հոլովման (Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներում՝ բոլորը, Վանի և Արարատյան բարբառներում՝ մեծ մասը): Ու հոլովման հատկանիշներ դրսևորվում են Մշո բարբառի ստացականների երկար ձևերում (իմուն, զիմուն, իմունե, իմունով), այս հոլովման են ենթարկվում Վանի բարբառի *իմս, իմն* ձևերը, Արարատյան բարբառի զուգահեռ մի շարք ձևեր: Ստացական դերանունների հոգնակիի ձևերը բոլոր բարբառներում կազմվում են *ոնք* մասնիկով, Վանի բարբառում ձևավորվում են նաև կրկնակի հոգնակի մասնիկ ունեցող զուգահեռ ձևեր՝ սովորական հոգնակիների վրա հավելելով *տեր* կամ *ներ* մասնիկները: Հոգնակի ստացականները ենթարկվում են Ցհոլովման, միայն Խոյ-Մարաղայի բարբառում դրանք ենթարկվում են Ի հոլովման, և Վանի բարբառի կրկնակի հոգնակիություն ունեցողները սեռական, տրական, բացառական հոլովներում ունենում են *աց* վերջավորություն: Բայազետի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում ստացական բոլոր դերանունների տրականը, ի տարբերություն սեռականի, ունենում է որոշիչ հոդ, Դիադինի բարբառում *մեր, ձ՛եր* ստացական-ների եզակի տրականը սեռականից տարբերվում է որոշիչ հոդով, Վանի և Մշո բարբառներում ստացական դերանունների սեռական և տրական հոլովաձևերը նույնական են:

4.4. *Հարցահարաբերական դերանուններ*

Բայազետի բարբառի հարցահարաբերական դերանուններն են՝ *վորը / վոն, վոր, վոր մէ / մէկը, ինչ, ի՛ընչի, ինշքան, իշտ°, քանի,*

մասնիկը, որ սեռականի վերջավորությունն է՝ *ն* որոշիչ հոդով, այսպես *մերինը, ձերինը* «մեր ունեցածինը, ձեր ունեցածինը»» (ԼՔՀԼ, հ. 2, էջ 337):

[1210] Այսպես, Վանի և Մշո բարբառներում զուգահեռ ձևեր կազմվում են *ուն* մասնիկով (Վ. իմն / իմուն, քյոն / քյումուն / քյոմուն, Մ. իմ / իմուն, քում / քումուն, մեր / մէրուն, ձ՛եր / ձ՛էրուն), Խոյ-Մարաղայի բարբառում՝ *ին* մասնիկով (իմը / իմինը, քʲոնը / քʲոնինը, մէրը / մէրինը, ծէրը / ծէրինը, իւրէնցը / իւրէնցինը, իւրէնցօնքը / իւրէնցինօնքը): Արարատյան բարբառում *ին* կամ *ուն* մասնիկից մնացած *ն* - ով զուգահեռ ձևեր կան հոգնակի բոլոր հոլովներում (իմօնք / իմնօնք, մէրօնք / մէրնօնք, իմօնցօվը / իմնօնցօվը), եզակի թեք ձևերում (իմու / իմնու, իմի / իմնի, ձ՛երի / ձ՛երնու / ծէրնի): Դիադինի բարբառում եզակի թվի թեք հոլովներում առկա են միայն *ն* ունեցող ձևեր (իմնիս, քʲօնիտ, մերնի, ձ՛երնի, իմնից, քʲօնից, մերնից, ձ՛երնից):

վորդե, յեկ, դոր, հ՛ուր, իմալ, հ՛ուստ: Սրանցից *վորը* և *վոն* ձևերն արտահայտում են *ով* դերանվան իմաստը, չունեն հոգնակիի ձև և հոլովվում են տարբեր կերպ. *վորը, վիր, վիրը, վիրը, վիրնից, վիրնօվ* և *վոն/ը/, վի, վին, վին, վինից, վինօվ*: *Վորը* ձևը բարբառում ավելի տարածված է, իսկ *վոն/ը/* դերանունը գործածական է միայն Գավառի, Հացառատի և Գեղարքունիքի խոսվածքներում: *Վոր* դերանունը բարբառումս չի հոլովվում և հոգնակիի ձև չունի: Ունի որոշչային կիրառություն և կարող է դրվել ինչպես անձի, այնպես էլ իրի անվան վրա՝ *վոր գ՛իրքը, վոր տղէն*: Այս դերանվամբ արտահայտվում է նաև *որերորդ* իմաստը (Մըկա վո՞ր դ՛ասարանն ես սօրվում): *Վոր մէ / մէկը* ձևը ունի *որ* դերանվան իմաստը, կարող է վերաբերել ինչպես անձի, այնպես էլ իրի: *Վոր մէ* ձևը գործածվում է միայն որոշչի դերում՝ *վոր մէ գ՛իրքը, վոր մէ ուսանօղին*: *Վոր մէկը* ձևը գործածվում է գոյականաբար, ենթարկվում է Ի անվանական հոլովման (վոր մէկի, վոր մէկից): Գործածական է (ոչ բոլոր խոսվածքներում) *վոր մէկը* դերանվան հոգնակիի *վորդոնք* ձևը (թերևս ձևավորվել է *ընդոնք* ցուցականի համաբանությամբ՝ *ընդոնք, վորդոնք* /նրանք, որոնք/): Սա ենթարկվում է Ց հոլովման. *վորդոնց, վորդոնցից*: *Ինչ* դերանունը իր բուն նշանակությամբ վերաբերում է միայն իրերի, և գործածվում է գոյականաբար: Ենթարկվում է Ի հոլովման եզակի և հոգնակի թվերում: Այս դերանունը *ինչպիսի, ինչքան* նշանակություններով կարող է ակնարկել առարկայի հատկանիշ, հատկանիշի հատկանիշ. *Ինչ տղղայա* (Ինչպիսի տղաէ), *Ինչ խորո՞տ ա* (Որքա՜ն սիրուն է)[1211]: *Հ՛ընչի* (ինչու) դերանունը քերականական որևէ կարգ չունի, արտահայտում է հարցում իրողության նպատակի կամ պատճառի վերաբերյալ: Օժանդակ բայից առաջ սրա *ի* վերջնահնչյունն ընկնում է, և օժանդակ բայը միանում է դերանվանը. *հընչեմ* էթում (ինչու եմ գնում): *Ինշքան* և *իշտ՞* դերանունները ակնարկում են քանակ և կարող են ունենալ ինչպես

[1211] *Ինչ* դերանունը կարող է վերաբերել ոչ միայն կոնկրետ առարկայի կամ հատկանիշի, այլ նաև պարզաբանման ենթակա ցանկացած իրողության (խոսողը ասում է «ի՞նչ», երբ իր համար ինչ-որ բան անհասկանալի է, երբ լավ չի լսել ասվածը, երբ անակնկալի է եկել, երբ խոսակիցը խոսքը կիսատ է թողնում ևն). այդ իմաստով այն թերևս ամենաընդհանրական հարցում արտահայտող բառն է (ի դեպ՝ այդպես է և գրական հայերենում):

որոշչային, այնպես էլ պարագայական կիրառություն: *Ինշքան* ձևը ավելի գործածական է, այն նաև հոլովվում է՝ *ինշքանի, ինշքանից*: *Քանի* դերանունը ևս ակնարկում է քանակ և խոսքում դառնում է որոշիչ: Գոյականաբար գործածվելիս ունենում է *քանիսը* ձևը, ենթարկվում է Ի հոլովման: Ժամանակ ակնարկող *յեփ* դերանունը անկախ գործածություն ունի, գործառում են այս դերանվան *յեփվա* և *յեփվանից* հոլովաձևերը: Բայազետի բարբառի հարցահարաբերական դերանուններից տեղ են ակնարկում *վորդե* (որտեղ), *դոր* (ուր), *հ՛ուր* (ուր), *հ՛ուստ* (որտեղից) բառերը: *Վորդե* ձևը վերաբերում է առարկայի գտնվելու վայրին: Սրա հոլովաձևերն են՝ *վորդեղի, վորդեղին, վորդեն, վորդուց / վորդեղից, վորդով / վորդեղով*: Այս դերանվան հոգնակին է՝ *վորդերանք*, որը նույնպես ենթարկվում է Ի հոլովման՝ *վորդերանքի, վորդերանքից, վորդերանքով*: *Դոր, հ՛ուր և հ՛ուստ* դերանունները քերականական փոփոխությունների չեն ենթարկվում: *Դոր* (< ընդ որ) դերանունը վերաբերում է և՛ առարկայի գտնվելու վայրին (Իմ գ՛իրքը դո՞ր ա), և՛ տարածական ուղղությանը (Դո՞ր ես էթում): *Հ՛ուր* (ուր) դերանունը միշտ նախորդում է օժանդակ բային և արտահայտում է հարցում առարկայի գտնվելու վայրի մասին: *Հ՛ուստ* (<ուստ) դերանունը արտահայտում է հարցում եղելության սկզբնակետի վերաբերյալ: *Իմալ* դերանունը ունի *ինչպես* իմաստը, քերականական որևէ փոփոխության չի ենթարկվում, վերաբերում է գործողության, եղելության հատկանիշի: Այս դերանունը կարող է արտահայտել նաև *ինչ* կամ *ինչքան* դերանունների իմաստ. *Իմալ ձ՛ունը դ՛ըրե* (Ինչ ձյունը նստել է). *Էս իմալ ցուռտաըստե* (Այստեղ այս ինչքան ցուրտ է): *Իմալ* դերանունը կազմությամբ նմանվում է ցուցական *էմալ, էդմալ էմմալ* (այսպես, այդպես, այնպես) դերանուններին[1212] և, կարծում ենք, բաղադրված է *ինչ* և *նման* բառերից՝ հնչյունափոխություններով[1213]:

Հարցահարաբերական դերանունների դրսևորումների առումով Բայազետի և շրջակա բարբառների փոխհարաբերությունները բնու-

[1212] Տե՛ս ՀԳԲ, էջ 330:

[1213] *Իմալ* ձևի հետ թերևս համեմատելի են հայերենի մի շարք բարբառներում հանդիպող *ինչեխ* (Ակն), *ինչխ* (Ախք., Ախց., Կր., Ոզմ., Վ.), *իշխա* (Դվ., Խ.) «ինչպես» ձևերը, որոնք, ըստ Հ.Աճառյանի ենթադրության, կազմված են *ինչ ցեղ* ձևի կրճատումով (ՀԳԲ, էջ 398):

թագրվում են հետևյալ իրողություններով[1214]: Հինհայերենյան *ո, ով* դերանունների դիմաց հանդես եկող *վոն* ձևը[1215] Մշո բարբառում գործառում է *օվ* ձևին զուգահեռ, Դիադինի բարբառում *ով* իմաստի միակ արտահայտիչն է: Մշո բարբառում այս դերանվան սեռականի ձևն է *վիր,* տրականինը՝ *վին*: Բայազետի և Դիադինի բարբառներում համապատասխան հոլովաձևերն են՝ *վի, վին*: Բայազետի և Դիադինի բարբառների թեք հոլովաձևերում, ինչպես նաև Մշո բարբառի տրականում թերևս տեղի է ունեցել *ր*-ի անկում, և բոլոր այդ ձևերն էլ առնչվում են հինհայերենյան *ոյր* սեռականին: *Ով* դերանվան ձևեր գործառում են Արարատյան (օվ), Մշո (օվ), Վանի (վով) և Խոյ-Մարաղայի (վ°վ) բարբառներում: Եթե Արարատյան և Մշո բարբառներում *օվ* դերանվան սեռականը համապատասխանում է հինհայերենյան *ում* տրականին (*ում* և *հ՛ում*), ապա Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում սեռականի ձևն է *վիր*[1216]: Ալաշկերտի խոսվածքում ևս *ով* դերանվան իմաստի բուն արտահայտիչ է *վորը / վոր* ձևը՝ թեք հոլովներում, սակայն, պահպանելով *ոյր* սեռականին առնչվող ձևերը (վիր, վիրնից/վիրնէ): Առարկայական նշանակությամբ Բայազետի, Մշո և Դիադինի բարբառներում գործառում են հարադիր կազմություններ՝ *վոր մէկը* (Բ.), *վոր մէգ* (Մ.), *վոր մէկըն* (Դ.): Ինչպես Վանի, այնպես էլ մյուս բարբառներում գործածվում են *որ* դերանվան նույնարմատ տարբերակներ (*վոր, վօր, վ°ր*): *Ինչ* դերանունը բոլոր բարբառներում եզակի թվում ենթարկվում է Ի հոլովման: Բայազետի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում այս դերանվան հոգնակին ենթարկվում է Ի հոլովման, իսկ Մշո,

---

[1214] Շրջակա բարբառներում հարցահարաբերական դերանուններն ունեն հետևյալ դրսևորումները: Վանի բարբառ՝ *վով, վոր, վո՞ր մէկ, ինչ, ք՚անի, յեփ,* Մշո բարբառ՝ *օվ, վոն* (ով), *ինչ, վոր, վոր մէգ* (որ մեկը), *հ՛օրի, հ՛ընչի, իմալ, հ՛ուր, դոր* (ուր), *յեփ, քընի, ինչխընդըր* (որքան), *ինչտեխ* (որտեղ), *ինչչէշիդ* (ինչկերպ), Ալաշկերտի խոսվածք՝ *վոր* (ով), *ինճ, քանի, ինճքան, վոր մէգ, դորվի* (դեպի ուր), *դոր, յեպ, հ՛օրի, հ՛ընճի, հուստ* (որտեղից), *իմալ, վորտեղ*, Դիադինի բարբառ՝ *վոն, վոր մէկըն, վորընի* (որը), *վոր մէկ վոր* (որ մեկ որ), *վորը* (որ), *վոն վոր* (ով որ), *ինչ, դոր* (ուր), *հընչի, իմ°լ, ինչք՚°ն, վորք՚°ն, ք՚°նիս*, Արարատյան բարբառ՝ *օվ, վոր / վօր, ուր / հուր, վօրդէղ, քանի, յերփ/ յեփ, ինչքան / իշքան, իժդար* (որքան), *ինչ, ընչի / հընչի*, նաև՝ *խի՞* (*հի* «ինչ, ինչ բան» բնիկ հայերեն արմատից) /տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 92/, Խոյ-Մարաղայի բարբառ՝ *վ°վ* (ով), *վ°ր* (որ), *վ°րը* (որը), *ինչ, ինչը, վ°վ վոր* (ով որ), *վ°րը վոր* (որը որ), *իշ վոր* (ինչ որ), *իշթ°ր* (ինչպես), *վ°րտէ* (որտեղ), *ք՚°նի(ս), յիւր* (ուր), *իշքան* (ինչքան), *դոր* (որտեղից), *դորէն* (որտեղից), *յէփ*(երբ):

[1215] Հ.Աճառյանը *ո՞* դերանվան արձագանքներ տեսնում է միայն Ղարաբաղի (հո՞ւ) և Նոր Նախիջևանի (վօ՞) բարբառներում (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 549):

[1216] Այս մասին տե՛ս նաև ԼՔՀԼ, հ. 2, էջ 395,396:

Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում՝ Ու հոլովման: Վանի բարբառում հոգնակի սեռականն ունի *ինչերաց* ձևը:

4.5. *Որոշյալ դերանուններ*

Ընդհանուր առմամբ բարբառներում որոշյալ դերանունները սակավ քանակություն ունեն: Բայազետի բարբառի որոշյալ դերանուններն են՝ *հ՛ըմէն / հ՛ըմբէն, հ՛ըմէն մէ, հ՛ըմէն մէկը, հ՛ըմէն ինչ, °մէք, °մէք մէկը, °մէք մէ, ս°ղ*: *Հ՛ըմէն* (*հ՛ըմբէն*, ձևը գործածական է հիմնականում Գավառի և Հացառատի խոսվածքներում) դերանունը գործածվում է և՛ առարկայական, և՛ հատկանշային իմաստներով: Առարկայական իմաստով գործածության դեպքում կարող է ակնարկել և՛ անձ, և՛ իր: Անձի առման դեպքում այս դերանուն ունի «ամենքը, բոլորը» իմաստը՝ *Հ՛ըմէն գ՛ացին*, իրի առման դեպքում՝ «ամենը, բոլորը, ամբողջը» իմաստը. *Էտ հ՛ըմէն վէրցա*. Առարկայական իմաստով գործածվելիս այս դերանունը ենթարկվում է Ի հոլովման (հ՛ըմընի, հ՛ըմընից), ուղղականում և ուղղականաձև հայցականում սովորաբար որոշիչ հոդ չի ունենում: Հատկանշային իմաստով կիրառության դեպքում *հ՛ըմէն* դերանունն ունի «ամեն, բոլոր» իմաստը և կարող է գործածվել ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի գոյականների հետ. *հ՛ըմէն տեղ, հ՛ըմէն գ՛ըրքերը*: Եզակի գոյականի հետ *հ՛ըմէն* բառն ունի «ամեն» իմաստը (հ՛ըմէն գ՛իշեր), իսկ հոգնակի գոյականի հետ՝ «բոլոր» իմաստը (հ՛ըմէն գ՛ըրքերը), ընդ որում՝ այս դերանվան հետ եզակի գոյականը գործածվում է անորոշ առումով, իսկ հոգնակի գոյականը՝ որոշյալ առումով: *Հ՛ըմէն մէ* (ամեն մի) դերանունն ունի հատկանշային իմաստ (հ՛ըմէն մէ քար), իսկ *հ՛ըմէն մէկը* (ամեն մեկը) դերանունը՝ առարկայական, ընդ որում՝ անձի առումով: *Հ՛ըմէն մէկը* ձևը ենթարկվում է Ի հոլովման (հ՛ըմէն մէկի, հ՛ըմէն մէկից): *Հ՛ըմէն ինչ* (ամեն ինչ) դերանունը ունի առարկայական իմաստ և միայն իր է նշանակում, ենթարկվում է Ի հոլովման (հ՛ըմէն ինչի, հ՛ըմէն ինչից): «Յուրաքանչյուր/ը/, ամեն մի / մեկը» իմաստն ունի *°մէք դերանունը*: Որոշյալ առումով գործածվում է առարկայական իմաստով. *°մէքը մէ բ՛ան գ՛ըրե*, իսկ անորոշ առումով ունի հատկանշային իմաստով կիրառություն. *°մէք մ°ռթ*: Առարկայական իմաստով գործածվելիս

այս դերանունը ենթարկվում է Ի հոլովման. *°մէքի, °մէքից*: Հատկանշային իմաստով կիրառություն ունի *°մէք մէ* (ամեն մի, յուրաքանչյուր) դերանունը. *°մէք մէ գ՛եղ*: Առարկայական իմաստով կիրառություն ունի *°մէք մէկը* (ամեն մեկը, յուրաքանչյուրը) ձևը, որը ենթարկվում է Ի հոլովման (°մէք մէկի, °մէք մէկից) և ակնարկում է ինչպես անձ, այնպես էլ իր: Բայազետի բարբառում *ս°ղ* (ողջ, բոլոր) դերանունը ևս գործածվում է և՛ հատկանշային, և՛ առարկայական իմաստներով: Հատկանշային իմաստով գործածվում է իբրև որոշիչ. *ս°ղ գ՛իշեր, ս°ղ կընանիքը*: Առարկայական իմաստով այս դերանունը կարող է գործածվել և՛ անձի, և՛ իրի առումներով, ենթարկվում է Ի հոլովման (ս°ղի, ս°ղից), ուղղականում և ուղղականաձև հայցականում կարող է և որոշիչ հոդ չունենալ. ս°*ղ/ը/ գիդումեն.* ս°*ղ/ն/ °վիրվավ*: Բայազետի բարբառում գործածական է նաև *բիթուն* (ողջ, ամբողջ) բառը, բայց միայն՝ *օրը բիթուն* (ողջ օրը), *տ°ոին բիթուն* (ամբողջ օրը) կապակցություններում՝ առանց որևէ քերականական փոփոխության:

Ծրջակաբոլոր բարբառներում[1217] գործառում են *ամեն* դերանվան համապատասխանություններ: Բայազետի, Արարատյան, Վանի և Խոյ-Մարաղայի բարբառների ձևերը ենթարկվում են Ի հոլովման (հ՛ըմընի, ամէնի, հըմէնի, հըմմընի), Մշո բարբառում (նաև Ալաշկերտի խոսվածքում) դերանունը ենթարկվում է Ու հոլովման (հ՛ըմնու), Դիադինի բարբառում *հ՛ըմէն* դերանվան սեռականը կազմվում է *ու* հոլովիչով (հըմնու), բայց մյուս հոլովները ունենում են *ի* հոլովիչ (հըմնին, հըմնից): Բարբառներում տարածված են *ամեն* բառով և *մեկ, մի, ինչ* բաղադրիչներով կազմված բաղադրյալ դերանուններ, ինչպես նաև՝ փոխառյալ *սաղ* ձևը: Բայազետի բարբառի *°մէք, °մէք մէկը, °մէք մէ* ձևերին համապատասխան դերանուն ունեն Ալաշկերտի խոսվածքը (ամէգ) և Դիադինի բարբառը (ամեք՝ մէկըն):

[1217] Ծրջակա բարբառներում արձանագրվել են որոշյալ դերանվան հետևյալ դրսևորումները. Վանի բարբառ՝ *հըմէն* (նաև՝ *գըմէն*), *հըմէն մէկ*, նաև՝ թուրքերենից փոխառյալ *բիւթիւն* (ամբողջ, բոլոր), Մշո բարբառ՝ *հ՛ըմմէն, սախ*, Ալաշկերտի խոսվածք՝ *հ՛ըմէն, ամէգ* (ամեն), *սաղ, հըմէն ինճ*, Դիադինի բարբառ՝ *հ՛ըմէն, ամեք՝ մէկըն* (յուրաքանչյուրոք), Արարատյան բարբառ՝ *ամէն, բ՛օլ օրը, ամէն մէկը, ամէն մի, ամէն ինչ, սաղ*, Խոյ-Մարաղայի բարբառ՝ *հըմմէն, հ°ոը, հ°ո մէկ՝ը, ըմմէն մէ*:

4.6. *Անորոշ դերանուններ*

Բարբառներում անորոշ դերանվան դրսևորումները առանձնապես բազմազան չեն: Բայազետի բարբառի անորոշ դերանուններն են՝ *մէ / մէկը, մէ քանի/սը/, մէգնումէկը, հ՛ուրիշ, էսինչ, էս ու էն, ինքը, ֆըլան* (այսինչ), *ֆըլան-ֆըստան* (այսինչ-այնինչ), *ֆըլան-բէֆան* (այսինչ-այնինչ), *ֆըլանք°ս* (այսինչ): *Մէ* դերանունը միշտ գործածվում է գոյականին նախադաս՝ *մէ տըղա, մէ գ՛իրք*: *Մէկը* ձևը գործածվում է առարկայական նշանակությամբ՝ ակնարկելով ինչպես անձ, այնպես էլ իր, ենթարկվում է Ի հոլովման՝ *մէկի, մէկից*: *Մէ քանի* դերանունը հատկանշային իմաստունի (մէ քանի տըղա, մէ քանի գ՛իրք), իսկ *մէ քանիսը* ձևը՝ առարկայական (Մէ քանիսը գ՛ացին): *Մէ քանիսը* ձևը ենթարկվում է Ի հոլովման՝ *մէ քանըսի, մէ քանըսից*: *Մէգնումէկը* դերանունը ակնարկում է ինչպես անձ, այնպես էլ իր: Սա ևս ենթարկվում է Ի հոլովման՝ *մէգնումէկի, մէգնումէկից*: *Հ՛ուրիշ* դերանունը գործածվում է և՛ հատկանշային, և առարկայական իմաստներով: Ենթարկվում է Ի հոլովման եզակի և հոգնակի թվերում (հ՛ուրիշի, հ՛ուրիշների): *Էսինչ* դերանունը ևս գործածվում է հատկանշային և առարկայական իմաստներով: *Էս ու էն* ձևը վերաբերում է միայն անձերի: Այս դերանունը հոլովվում է հետևյալ կերպ. *էս ու էնը, ըստու ընդու, ըստուն ընդուն, ըստուց ընդուց, ըստով ընդով*[1218]: Անորոշ *ինքը*[1219] դերանունը Բայազետի բարբառում գործածվում է անձի կամ առարկայի մոռացված անվան փոխարեն (Էն ինքը դո՞ր դ՛ըրի. Մեր էնա ինքի տըղէն բ՛անակա էկե՞): Այս դերանունը եզակի և հոգնակի թվերում ենթարկվում է Ի հոլովման (ինքի, ինքից, ինքերի, ինքէրից): Բայազետի բարբառի փոխառյալ բոլոր անորոշ դերանուններն էլ հիմնականում նույն

[1218] Ի դեպ, այս դերանվան համարժեք ձև ունեն Պոլսի (աս ան), Համշենի (°ս ըն), Զեյթունի (°ս °ն) բարբառները, որոնցում ևս հոլովվում են դերանվան երկու բաղադրիչներն էլ (տե՛ս ԼՔՀԼ, հ. 2, էջ 418):

[1219] Ինչպես նշում է Հ.Աճառյանը, սաառաջացել է հնագույն հայերենի *ինք* (ի-ք) /բան/ բառից, որ գրաբարում կորել է, իսկ բարբառներում տեղ-տեղ շփոթվելով *ինքը* դերանվան հետ՝ դարձել է *ինքը* (տե՛ս նշվ. աշխ., էջ 420): Նկատենք, որ Բայազետի բարբառում անձնական դերանվան սկզբում *հ՛*-ի հավելումով (հ՛ինքը) այդ ձևերը տարբերակվել են:

իմաստն են արտահայտում և ենթարկվում են Ի հոլովման (ֆըլանի, ֆըլանք°սի, ֆըլան-ֆըստանի, ֆըլանբէֆանի):

Շրջակաբոլոր բարբառներում [1220]արձանագրվել են *ուրիշ* և *մի / մեկ* դերանունների համապատասխանություններ (իւրիւշ, իւրիշ, ուրիշ, հուրիշըն, հուրիշ. մէ, մը, մի, մին, մէգ, մէյ, մէկ, մէկը, մէկ՝): *Ուրիշ* դերանվան ձևերը գործածվում են հատկանշային և առարկայական իմաստներով՝ վերջին դեպքում նաև հոլովվելով: *Մի* և *մեկ* ձևերի համապատասխանությունները Դիադինի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում միայն նախադաս կիրառություն ունեն, իսկ Վանի և Մշո բարբառներում, նաև Ալաշկերտի խոսվածքում գործառում են ինչպես գոյականին նախադաս, այնպես էլ հետադաս դիրքերում: Մշո բարբառում նույն գոյականը միաժամանակ կարող է ունենալ նախադաս և հետադաս անորոշ դերանուններ. *Մէգ* մարթ *մը տեսա*: Փոխառյալ *ֆըլան, բէֆան, ֆըլանք°ս* և այլ դերանուններով հարուստ է նաև Ալաշկերտի խոսվածքը:

4.7. *Փոխադարձ դերանուններ*

Բարբառիս փոխադարձ դերանուններն են՝ *հ՛իրար / հիրուր, մէգ-մէկու*: *Հ՛իրար* և *մէգմէկու* դերանունների թեք հոլովաձևերն են՝ հ՛իրարից, հ՛իրարօվ. մէգմէկուց, մէգմէկօվ: *Հ՛իրուր* դերանունը սակավ գործածական է: Դիտարկվող բոլոր բարբառներում փոխադարձ դերանունները ներկայանում են *իրար* և *մեկմեկու / մեկմեկի* բառերի տարբերակներով: Նույն տարբերակային ձևերն ունեն Բայազետի (հ՛իրար, հ՛իրուր, մէգմէկու), Մշո (հ՛իրար, հ՛իրուր, մէգմէգու) և Դիադինի (հ՛իրար, հ՛իրուր, մէկմէկու) բարբառները, ընդ որում՝ *հ՛իրուր* ձևը հատուկ է միայն այս երեք բարբառներին, սրանցում *իրար* դերանվան տարբերակները բացառական հոլովում

[1220] Մերձավոր բարբառներն ունեն անորոշ դերանվան հետևյալ ձևերը. Վանի բարբառ՝ *մէկ, մէյ, իւրիւշ* (այլ ոք), *ք՝°նի մ՛*, Մշո բարբառ՝ *մէ, մը, մէգ*, Ալաշկերտի խոսվածք՝ *մէգ, մէ, մի, ֆըլան* (այսինչ), *բէֆան* (այնինչ), *ֆըլանքյաս* (այսինչ), *բէֆանքյաս* (այնինչ), *ուրիշ*, Դիադինի բարբառ՝ *ֆըլանք՝°սըն* (որևէ մեկը), *հ՛ուրիշըն, մէկըն ու մէկըն, մէ*, Արարատյան բարբառ՝ *մին, մի / մէ, օքմին* (ոք մի), *մի քանի/սը/, մէկը, էն մէկը, մէկնումէկը, ինչ-ինչ / հինչ-հինչ, ուրիշ/հուրիշ, էսինչ, էտինչ, էնինչ*, Խոյ-Մարաղայի բարբառ՝ *մէ, մէկյ, իւրիշ, ինք՝°* (մի բան), *մէ ք՝°նի*:

ունեն նույն ձևավորումը (հ՛իրարից, հ՛իրուրից, *հիր°ից*): Բարբառային մյուս միավորներում *իրար*-ի տարբերակները բացառականում ունեն *ու*-ով ձև (Վ. *իր°ուց*, Ար. *իրարուց*, Ալ. *հ՛իրարուծ*) կամ էն-ով ձև (Մ. *հ՛իրուրէն*, Մրղ. *իւրիւրէն*):

4.8. *Ժխտական դերանուններ*

Բազմազան չեն ժխտական դերանունների դրսևորումները: Բայազետի բարբառի ժխտական դերանուններն են՝ *վոշ մէ, վոշ մէկը, վոշ մէ բ՛ան* (ոչինչ): Առաջին երկու դերանունները կարող են վերաբերել ինչպես անձի, այնպես էլ իրի: *Վոշ մէ* ձևն ունի հատկանշային իմաստ, իսկ *վոշ մէկը*՝ առարկայական իմաստ: *Վոշ մէ բ՛ան* դերանունը վերաբերում է միայն իրի: *Վոշ մէկը և վոշ մէ բ՛ան* դերանունները ենթարկվում են Ի հոլովման. վոշ մէկի, վոշ մէկից, վօշ մէ բ՛անի, վօշ մէ բ՛անից: Բոլոր բարբառներում[1221] ժխտական դերանվան կազմության սկզբունքը նույնն է. *ոչ մի, ոչ մեկը, ոչ ոք* իմաստներն արտահայտելու համար ժխտական որևէ բառ հարադրություն է կազմում *մի, մեկ* բառերի հետ(վոչ մէկ, վօչ մի, հէչ մէ, հեչ մէգ, իսկի մէկ$^{ յ}$°, ըսկի մէ ևն), իսկ *ոչինչ* իմաստն արտահայտելու համար նույն այդ ժխտական բառերը հարադրվում են ընդհանրական իմաստ ունեցող *բան, զատ* (բան) բառերին՝ *վոչ մէ բ՛°ն, հէչ բ՛ան, իսկի զ°դ*: Արարատյան բարբառն ունի *ոչինչ* բառի համապատասխան ձև՝ *վօչինչ / վոնչինչ*:

5. ԲԱՅ

5.1. *Բայի կազմությունը*

Իբրև բառային միավորներ՝ բայերը կազմությամբ լինում են վերլուծական և համադրական[1222]: Վերլուծական կամ հարադրական բայերը բարբառներում մեծ գործածականություն ունեն: Բայազետի

[1221] Շրջակաբարբառներն ունեն ժխտական հետևյալ դերանունները՝ Վանի բարբառ՝ *վոչ մէկ*, Մշո բարբառ՝ *հեչ մէգ, վոչ մէգ (ոչ ոք), հեչ, հեչ բ՛ան* (ոչինչ), Դիադինի բարբառ՝ *վոչ մէկը ն* (ոչ ոք), *վոչ մէ բ՛°ն*, Արարատյան բարբառ՝ *վօչ մի / վօչ մէկը, ըսկի մէկը, ըսկի մէ, հէչ, հէչ մէ / հէչ մէկը, վօչինչ / վոնչինչ*, Մարաղայի խոսվածք՝ *իսկի մէկ$^{ յ}$°* (ոչ մեկը, ոչ ոք), *իսկի զ°դ* (ոչ մի բան, ոչինչ):

[1222] Գրաբարի բայերի կազմությանն անդրադառնալով՝ Գ.Խաչատրյանը գրում է, որ իբրև բառ՝ բայերը կազմությամբ պարզ ածանցավոր են կամ բարդ ածանցավոր, որոնցից վերջինները ըստ կազմության եղանակի լինում են համադրական կամ վերլուծական բարդություններ: Իսկ իբրև բայ՝ այդ բառերը պարզ են կամ

բարբառում առավել տարածված են *°նել* բայով և անվանական որևէ հարադրով կազմությունները (°րև °նել, բ՛ուք °նել, գ՛իր °նել, °վելխոռթ °նել, հ°զ °նել, °խ °նել, բօշութուն °նել, կըս° °նել, կուզուպ°ռզ °նել, տ°ք ու խով °նել, խաչ °նել, հ՛ուստակ °նել, բ՛ոցառք °նել ևն): Շատ են նաև վերացական այլ բայերով հարադրությունները, ինչպես՝ *°ռնել* (°րև °ռնել, խօսկ °ռնել), *°սել* (բ՛ան °սել, գ՛օվք °սել), *բ՛անալ*, *բ՛ացել* (գ՛ըլօխը բ՛անալ, հ°շկը բ՛անալ, բ°խտը բ՛ասվել), *բ՛էրել* (բ°խտը բ՛էրել, խօսկին խօսկ բ՛էրել), *բ՛ըռնել* (հ°շկերը բ՛ըռնել, թըթու բ՛ռնել), *գ՛ալ* (°նձըրեվ գ՛ալ, գ՛ըլօխ գ՛ալ), *դ՛ընել* (բ՛անատեղ դ՛ընել, °ղ դ՛նել), *էթալ* (կուտէթալ, պուճէթալ), *թ°լել* (գ՛ույնը թ°լել, հ°շկը թ°լել), *թափել* (մոմ թափել, °ընէ °ռսունք թափել), *ծըռել* (վիզ ծըռել, վըրէն ծըռել), *կ°յնել* (°թանդա կ°յնել, գ՛ըլխին կ°յնել), *կըդրել* (ճ°րը կըդրել, վոտը կըդրել), *կօդրել* (կուդումը կօդրել, թափը կօդրել), *մընալ* (կ°ռօտ մընալ, տունը մընալ), *պ°խել* (հաշկը վըրէն պ°խել, սիրած պ°խել), *տալ* (°խ տալ, բ՛ըթնօլոր տալ), *տ°նել* (զ°յլ° տ°նել, նիյաթը տ°նել), *տէնալ* (կ°մ տէնալ, խէր տէնալ /օգուտ ունենալ/), *քաշել* (քար քաշել, վոտը քաշել), *քըշել* (քէն քըշել, ձ՛եվ քըշել), *քըցել* (սիռտը °խքըցել, գ՛ույնը քըցել) ևն: Սրանցում անվանական հարադրի դերում հանդես են գալիս գոյականի ուղիղ և թեքված ձևեր (բ՛ուռթը գ՛ըզել, դ՛ըռները մընալ, բ՛անէ խանել, ձ՛եռօվ °նել), ածականներ (լավ °նել, ծուռ հ՛իշկալ), թվականներ (հազար °սել, մէկ հ՛ըլնել), դերանուններ (հ՛իրար գ՛ալ, հ՛իրնօվ °նել), դերբայական ձևեր (°սէլիք հ՛ըլնել, ծըռուկ ունէնալ), մակբայներ (զատը մընալ, գէժ-գէժ խօսալ), կապեր (վըրէն խօսալ, խէտը խըռօվել), առանձին անգործածական բայարմատներ ու կազմություններ (վառ թողել, մեղ դ՛ընել, տ°քուխով °նել, իզկուրուս հ՛ըլնել) ևն: Մեծ քանակություն են կազմում նաև փոխառյալ բառերով ձևավորված հարադրավոր բայերը՝ *բօյ քաշել*, *խարամ °նել*, *դ°նգը տալ*, *կուլուղ °նել*, *ճեռօքներ բ՛անցընել*, *°տկօզ տալ*, *°խստ ունէնալ*, *զուբռիտ °նել* ևն[1223]: Բարբառումս զգալի քանակություն են կազմում

ածանցավոր՝ պայմանավորված բայածանցի բացակայությամբ կամ առկայությամբ (տե՛ս Գ.Խաչատրյան, Գրաբար, Ե., 2014, էջ 170):

[1223] Նկատվել է, որ դեռևս 15-17-րդ դարերում լայն կիրառություն են ստանում «...թուրքերեն - արաբերեն բառերով և հայերենի *առնել*, *տալ*, *լինիլ*, *մնալ* և այլ օժանդակ բայերի հարադրությամբ կազմվող բայաձևերը» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 364-365):

զուգադիր բայերը՝ *°մնել-դամնել, բ՛ըռնել-կ°յնել, բօռալ - ճըչալ, գ՛ալ-էթալ, էթալ-գ՛ալ, գ՛ույն տալ-գ՛ույն °ռնել, դ՛ընել-վէրցել, զ°նել-թափել, զ°նել - զ°րկըվել, խասնել - դ՛առնալ, խօրել - թաղել, ծըռել-ծըռթըփել* ևն:

Բարբառները, ընդհանուր հայերենյան ձևերից բացի, ունեն նաև համադրական բայերի սեփական կազմություններ, որոնցում իբրև բայահիմք հանդես են գալիս ընդհանուր հայերեն արմատներ, բարբառային բառեր, կազմություններ, փոխառյալ բառեր: Բայազետի բարբառում այդպիսի բայերից են՝ *գ՛ըլխել, թ°փկել, հ՛°շկըռել, բ՛ըռնըպըտել, °տատօրել, բ°ռօժվել, գ՛ըթլել, թ°քսըզել, ժըղլել, լըժկընալ, խելքել, խըռճըկել, կօղբըսել, հ՛առչել, ձընձըխկըտալ, ճըժօվնալ, մէտեղվել, մըտկել, յադընալ, չորփորել, ջըղընձել, վըռըշնել, վոնդըռկըվել, տղլել* ևն: Բայի բառակազմական այս հատկանիշներն արտահայտվում են շրջակա բարբառային բոլոր միավորներում[1224]: Խոնարհման համակարգում բայաձևերի արտահայտության յուրահատկությունները հաճախ պայմանավորված են բայի կազմությամբ՝ պարզ կամ ածանցավոր լինելով: Բայազետի բարբառում ևս գործառում են բաղադրական-քերականական և քերականական բայածանցներ: Բաղադրական-քերականական ածանցներն են *ն, էն* և *ան*: *Ն* ածանցը համապատասխանում է հինհայերենյան *ն* (°ռնել /առնուլ/, դ՛առնալ), չ (թըռնել /թռչել/, փախնել /փախչել/)[1225], *ան* (խառցընել /հարցանել/, գ՛օղնալ /գողանալ/)[1226] ածանցներին: Բայազետի բարբառի բայական համակարգի համար կարևոր նշանակություն ունի այն, որ և՛ Ե, և՛ Ա խոնարհումների բայերում հինհայերենյան *ան* ածանցի դիմաց հանդես է գալիս *ն* ածանց, և այդ բայերի կազմությունը շարունակում է տարբերակվել միայն լծորդությամբ, ու ըստ այդմ էլ բայերը հանդես են բերում յուրա-

[1224] Ալաշկերտի խոսվածքի համանման իրողություններին հանգամանորեն անդրադարձել է Ք.Մադաթյանը (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 98-102): Մյուս բարբառային միավորների դեպքում եզրահանգումների հնարավորություն են տալիս դրանց նվիրված աշխատություններում առկա բառացանկերը:

[1225] Չ ածանցի դիմաց *ն* ունեցող զուգահեռ ձևեր վկայված են հենց գրաբարում (տվյալ դեպքում՝ *թռչել // թռնուլ, փախչել // փախնուլ*), նույնիսկ՝ 5-րդ դարից (տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 104):

[1226] Ինչպես հայտնի է, միջինհայերենյան շրջանում և՛ Ե, և՛ Ա խոնարհումների՝ *ան* ածանց ունեցող բայերում *ա*-ի անկման արդյունքում գործառում էր *ն* ածանց (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 301, 303, նաև՝ Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 222): Ըստ Ա.Աբրահամյանի՝ միջին հայերենում բաղադրական ածանցներից

հատկություններ խոնարհման համակարգում: Այդպես է և Մշո, Դիադինի, հիմնականում նաև Վանի բարբառներում[1227], մինչդեռ Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում Ա խոնարհման բայերում գործառում է *ան* ածանց[1228]: Բայազետի բարբառում *ան* ածանց ունեցող սակավաթիվ բայերը փոխառություններ են գրական լեզվից (դ՛իմանալ, զարքանալ, խօստանալ, հ՛ընգերանալ, վէրանալ)[1229]: Ավելի սակավ են *էն* ածանց ունեցող բայերը. *կ°մէնալ, վախէնալ, ունէնալ*: Բարբառումս *չ* բայածանց գոյություն չունի, հայերենի այլ տարբերակներում գործառող այդ ածանցի դիմաց ունենք կա՛մ *ն*, կա՛մ ոչինչ. *փախնել, թըռնել, կըբնել* կամ *կըպել, դիբել, խալել, հ՛անքել, կուրել, ուռել*: Ծրջակա բարբառային միավորներում միայն Արարատյանի որոշ խոսվածքներ ունեն բայական *չ* ածանց[1230]: Բաղադրական-քերականական ածանցներից Բայազետի բարբառում կենսունակ է Ախոնարհման բայեր ձևավորող *ն*-ն՝ *բոյօվնալ, թիթիզնալ, կ°լբընալ, խօրօդնալ, վիրեվնալ, իշընալ, վըռազնալ, °նօթնալ, բիծընալ, դուխօվնալ, թ°մբըլնալ, լախընալ* ևն: Ե խոնարհման հինհայերենյան *ամաչել, իշխել, կանաչել, կարել, կարօտել, ճանաչել, վազել* պարզ բայերի դիմաց Բայազետի բարբառում գործառում են ածանցավոր *°մչընալ, իշխընալ, կ°նչընալ, կ°նալ* (կարել > կարենալ > *կառնալ > կանալ), *կ°րօդնալ, ճ°նչընալ / ճ°շնալ, վազնել* ձևերը: Համանման ձևեր ունեն նաև Վանի, Դիադինի, Մշո, Խոյ-Մարաղայի բարբառները[1231]: Հիշյալ բայերը հիմնականում պարզ կազմություն ունեն Արարատյան բարբառի խոսվածքներում[1232]: Այս բարբառի բազմաթիվ խոսվածքներում *վազել* բայը վերածվել է ածանցավորի՝ *վազնել*[1233]: Գրական հայերենի *լցնել, վերցնել, թողնել*

ամենատարածվածը *ն* ածանցն էր (տե՛ս Ա.Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 63):

[1227] Վանի բարբառի վերաբերյալ Հ.Աճառյանի բերած օրինակներում կան ինչպես *ն*, այնպես էլ *ան* ածանցներով բայեր, ինչպես՝ *իմն°լ, լօխկնալ, խասկնալ, խիվընդնալ, մոռնալ*, բայց և՝ *խաստանալ, պ°ռկանալ, պանցրանալ* (տե՛ս ՔՎԲ, էջ 167-168):

[1228] Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում ևս *ան* ածանցի դիմաց առկա է *ն* (տե՛ս ԱԲ, էջ 166):

[1229] Այդպես է և *անալ* > *նալ* անցում ունեցող մյուս բարբառներում:

[1230] Տե՛ս ԱԲ, էջ 165:

[1231] Տե՛ս ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 7 (Վան), 8 (Դիադին) տետրեր, 661 կետ, ՄԲ, էջ 142, ԽԲ, էջ 191-208:

[1232] Տե՛ս ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 9 (Փարպի) տետր, 661 կետ:

[1233] Ռ.Մարկոսյանի կարծիքով՝ այդ անցումը տեղի է ունեցել *հասնել* բայի նմանակությամբ (տե՛ս ԱԲ, էջ 166): Թերևս նկատի է առնվում այն, որ *վազել*-ով բաղադրվում *վազել – հասնել* զուգադիր բայը:

ձևերի դիմաց էլ Բայազետի բարբառում գործառում են *լըցել*, *վէրցել*, *թօղել* պարզ բայեր, Արարատյան բարբառի խոսվածքներում ևս գործածվում են *լըցէլ*, *թօղէլ* ձևեր[1234]:

Քերականական ածանցները բարբառներում ևս լինում են բազմապատկական, կրավորական և պատճառական: Բայազետի բարբառում ամենատարածված բազմապատկական ածանցն է *ռտ*, որով ձևավորվում են հիմնականում Ե խոնարհման բայեր. °*մբըռտել*, *բ՛ըռթըռտել*, *թափըռտել*, *հավքըռտել*, *ճըղըռտել*, *փոնթըռտել* ևն, նաև՝ Ա խոնարհման բայեր. *բըկըռտալ*, *գընգըռտալ*, *լընգըռտալ*, *հ՛իշկըռտալ*, *շըփըռտալ* ևն: Բազմապատկական մյուս ածանցները պակաս գործածական են. *կըտ-խօռմըռկըտալ*, *ծըմըրկըտալ*, *ձ՛ընձըխկըտալ*. *տ – կըտըռտել*, *թափլտալ*, *ճըմըռտել*. *ռթ - ճ°նգըռթել*, *ճէնջըռթալ*. *կ – ծէսկել*, *մըքըլկել*. *պըռտ - դ՛օխպըռտալ*, *խօսպըռտալ*. *ռկ - բ՛էտըռկել*. *ռճ - կօղըռճել*. *դ - մըթընդել*. *լ - քօմըլել*. *շտ- թռմըշտել*: Բազմապատկականության որոշ իմաստով սաստկականություն է արտահայտում *վոր* ածանցը՝ *խընթըրվորել* (շատ, երկար խնդրել), *զառթըրվորել* (շատ ցայտուն զարդարվել): Մոտավորապես նույն կարգի բազմապատկական ածանցներ են արձանագրվել նաև Վանի բարբառում (ռ, տ, ռտ)[1235], Ալաշկերտի խոսվածքում (դ, ռդ, կ, կռդ, կդ, շտ)[1236]: Բայազետի բարբառի *ռտ* ածանցին համապատասխանում են Մշո բարբառի այս կարգի ամենագործուն *ըրդ* ածանցը (ծագըրդել), Խոյ-Մարաղայի բարբառի բազմապատկական հիմնական *(ը)ռտ* ածանցը (ժօղըռտէլ): Արարատյան բարբառում ևս *ռտ* ածանցով շատ բայեր են ձևավորվում (կապըռտէլ), այստեղ գործառում են նաև *տ*, *օտ*, *օր* ածանցներ[1237]: Բայազետի բարբառում ևս շատ տարածված է բազմապատկականության գաղափարի արտահայտումը նաև բայարմատի կրկնությամբ, օրինակ՝ *բօռբըռալ*, *բ՛ընբ՛ընալ*, *խէվխըվալ* ևն: Կրավորական *վ* ածանցը[1238], որ ընդհանուր դրսևորումներ ունի դիտարկվող բարբառներում, կարող է դրվել Ե խոնարհման

[1234] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ *թօղէլ* բայի դեպքում Արարատյան բարբառը պահպանել է հին մատենագրության մեջ վկայված ածանցազուրկ *թողուլ* ձևը (տե՛ս ԱԲ, էջ 166):
[1235] Տե՛ս ՔՎԲ, էջ 187:
[1236] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ, էջ 104 – 105:
[1237] Տե՛ս ԱԲ, էջ 171:
[1238] Ինչպես հայտնի է, այս ածանցը սկսել է գործառել միջին հայերենում, ըստ Հ.Աճառյանի՝ 12-րդ դարում կրավորականի այս նոր ձևը արդեն հաստատված իրողություն էր (տե՛ս ԼՔՀԼ, հ.4Բ, էջ 328):

ներգործական սեռի բայերի ներկայի հիմքի վրա (տըփվել, օլըրվել), Ախոնարհման ներգործական սեռի բայերի անցյալի հիմքի վրա (խաս-կըսվել, հիմասվել)[1239], երբեմն նաև՝ ներկայի հիմքի վրա (լըսալ – լըսվել, խօսալ – խօսվել): Բայազետի բարբառում կրավորական *վ* ածանցը ներգործական սեռի բայերը վերածում է առավելաբար չեզոք սեռի, այդ պատճառով էլ ներգործական շատ բայեր, որոնց ցույց տված գործողությունը անհամատեղելի է չեզոքությանը, այդ ածանցը կա՛մ ընդհանրապես չեն ընդունում, կա՛մ հազվադեպեն ընդունում: Նման բայերից են. *բուռմել, գ՛օղնալ, դըմսըկել, թօղել, ժընջըլել, խավնել, տէնալ, խաքնել, խափըռտել, խելքել, խօվնել, խօրել-թաղել, կ°մէնալ, կ°նալ, կըլջել, հ՛հշկալ, հ՛իստըկջ՛ըրել, մ°ժել, մ°նգըղել, չափըռնել, պըշկըռտել, ջ՛օկըռտել, տընդըղել, փագել-փագըռտել, փիդել, փինել, քաշքըռնել* են: Ի տարբերություն այս կարգի բայերի՝ կան բայեր էլ, որոնցում *վ*-ն ունի բաղադրական արժեք՝ *բ°ռօժվել, թէդրափոխվել, ճըբըղվել, քամբըխվել, թ°ռսըվել, ափընձվել, ջ՛ըրփոխվել, օցիփըշվել* են: Որոշ դեպքերում էլ *վ* ածանցի հավելումը փոխում է ոչ միայն բայի սեռը, այլ նաև բառային իմաստը, օր.՝ *թալնել* (թալանել) – *թալնըվել* (ստիպված բոլոր միջոցները ծախսել), *խրթել* (մտցնել) – *խրթվել* (խրվել և չկարողանալ պոկ գալ), *կըսկել* (կծկել) – *կըսկըվել* (կուչ գալ), *ձ՛ըկտել* (ձգտել) – *ձ՛ըկտըվել* (մարմնով ձգվել՝ մի բանի հասնելու), *մ°շել* (մաշել) - *մ°շվել* (նիհարել), *քաշել* – *քաշվել* (ամաչել) են: Բայազետի բարբառում պատճառական ածանցն է *ցըն*[1240], որն ավելանում է պարզ և բաղադրական-քերականական ածանց ունեցող բայերի բացարձակ հիմքի վրա. *դ՛օխծընել, °ռասցընել, էրէսցընել*[1241], *°մչըցընել, խաքցընել* են: Սակավ դեպքերում պատճառական ածանցը փոխում է բայի բառային իմաստը, օրինակ՝ *բ՛ըռնել* - *բ՛ըռնընցընել* (բռնել հանցանքի վրա), *լըսալ* - *լըսըցընել* (ակնարկ-

[1239] Վ ածանցն այդպես է գործառում նաև շրջակա բարբառներում: Խոյ-Մարաղայի բարբառում ևս *վ*-ից առաջ անցյալի հիմքի *ց*-ն դառնում է *ս*: Բացի այդ՝ այս բարբառում մի շարք բայեր կրավորականի ձևում ունենում են նաև *ն*՝ *թ°փէլ* - *թ°փնըվէլ, խրփէլ – խրփնըվէլ* (տե՛ս ԽԲ, էջ 125):

[1240] Միջին հայերենի զարգացման առաջին շրջանին բնորոշ է եղել պատճառական բայերի գրաբարյան *ուցանել* վերջավորության և *ցնել* տարբերակի զուգահեռ գործածությունը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 303), իսկ երկրորդ շրջանում հաղթել է ժողովրդական *ցնել* ձևը (տե՛ս նշվ. աշխ., էջ 364):

ներով մի բան հասկացնել), *ծ°խել - ծ°խկըցընել* (ճոխացնել) ևն: Բազմապատկական ածանց ունեցող բայերը հազվադեպեն պատճառական ածանց ստանում, ինչպես՝ *մըզմըստալ – մըզմըստցընել, ձ՛ընձըխկըտալ – ձ՛ընձըխկըտցընել, դըլըլվորել – դըլըլվորցընել*: Բաղադրական *վ* ածանց ունեցող բայերը ևս հազվադեպեն ստանում պատճառական ածանց՝ պահպանելով կամ կորցնելով *վ* - ն. *սխկըվել – սխկըվցընել, քամբըխվել – քամբըխցընել*: Բարբառումս կան նաև բայեր, որոնցում պատճառական ածանցը բաղադրական է՝ *կըլցընել, թալցընել, շըվըցընել, ճեռօքցընել*: Սակավ դեպքերում պատճառական ածանցը չեզոք բայի սեռը չի փոխում, օրինակ՝ *դ՛օխծընել, խըռըցընել, չըփչըփցընել, փընչըցընել, բըլբըլցընել*, ևն: Բայազետի բարբառում ևս բոլոր բայերը չէ, որ կարող են ստանալ պատճառական *ցըն* ածանց, ուստի պատճառականությունը երբեմն արտահայտվում է *տալ* բայի հարադրությամբ՝ *տըփել տալ, խըրկել տալ*: Այդպես է և մյուս բարբառներում: Ծրջակա բարբառներից Բայազետի բարբառի պես *ցըն* պատճառական ածանց ունի միայն Արարատյան բարբառը (լացացընել, մըռսեցնել): Մյուս բարբառներն ունեն *ցուց* և *ուց* (Խ. զըզվացուցել, մէռուցել, Մ. քէլցուցել, քէլուցել, Ալ. բ՛ըլուծել, խըմծուծել, Դ. նըստըցուցել, խաքՅուցել, Վ. խասկըցուցել, խատուցել):

5.2. *Խոնարհիչ և խոնարհում*

Բայազետի բարբառում բայն ունի երկու խոնարհում՝ Ե և Ա: Ընդհանուր առմամբ այդպես է նաև Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում[1242]: Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում, սակայն, դրսևորվում են նաև Ի և Ու խոնարհումներ[1243]: Դիադինի բարբառում ևս բայը հիմնականում ունի Ե և Ա խոնարհումներ, սակայն այստեղ պետք է ընդունել նաև Ու խոնարհման առկայությունը, որը դրսևորվում է պատճառական բայերի խոնարհման դեպքում, ինչպես՝ *կօ կը նըստըցում, նըստըցուցի, նըստըցում,*

[1241] Ինչպես երևում է օրինակներից, *ցըն* ածանցի հավելումով հնչյունափոխության կարող են ենթարկվել և՛ ածանցը (փախնել - փախծըընել), և՛ հիմքի բաղադրիչ բաղաձայնը (°ռաձալ - °ռասցընել, երէցել - երէսցընել) ևն:

[1242] Տե՛ս ԱԲ, էջ 142, ԽԲ, էջ 97-98:

[1243] Տե՛ս ԱԲ, նույն տեղում:

նըստըցո՛ւ: Հավանաբար Դիադինի բարբառից են այս կարգի որոշ ձևեր ներթափանցել Բայազետի բարբառ և սահմանափակ ձևով գործառում են բուն ձևերին զուգահեռ, ինչպես՝ *նըստըցընեմ – նըստըցում, նըստըցըրա – նըստըցո՛ւ*: Մշո բարբառում բայն ունի չորս խոնարհիչ՝ *ա, ե, ի, ու*[1244], սակայն *ե* և *ի* խոնարհիչները մի դեպքում ազատ տարբերակներ են, մյուս դեպքում տարբերակում են ներգործական և կրավորական խոնարհումները[1245]: Վանի բարբառում Հ.Աճառյանը փաստորեն ընդունում է բայի երկու լծորդություն (Ե և Ա)[1246]:

Բայազետի բարբառում գերակշռում են Ե խոնարհման բայերը: Այս խոնարհման են պատկանում հինհայերենյան ծագման գրեթե բոլոր այն բայերը, որոնք գրաբարում ունեին *ե* խոնարհիչ (բ՛ած-նել, բ՛էրել, դ՛իզել, էփել, խանել, °խտել, նըստել, օլըրել, ուտել ևն), բարբառային ու նորակազմ բայերի մեծ մասը (°ռեվել, բէզըրել, գըմել, ծ°կօսկըռել, կըմիշել, ճիրել, մըխտըռել, շ°նջույել), *ն* ածանց ունեցող բայեր (խաքնել, հ՛իշնել, թըռնել, փախնել, վազնել), բազմապատկական ածանց ունեցող բայեր (սըռփըռտել, փըռըռտել, ծէսկել, կօղըռճել), *վոր*, կրավորական և պատճառական ածանցներ ունեցող բոլոր բայերը: Ե խոնարհման բայեր ունենք գրաբարյան Ի խոնարհման բայերի մեծ մասի դիմաց (ագանիլ - խաքնել, գանգատիլ - գ՛անգըտել, խաւարիլ - խավրել, կատաղիլ - կ°դղել, հաւանիլ - խավնել, մոլորիլ - մօլըրել, պրծանիլ - պռծընել), Ու խոնարհման *առնուլ, թողուլ* բայերի դիմաց (°ռնել, թօղել): *Ա* խոնարհման են պատկանում հինհայերենյան ծագման գրեթե բոլոր այն բայերը, որոնք գրաբարում ունեին *ա* խոնարհիչ (բ՛անալ, էթալ, լ°լ, լըվալ,

---

[1244] Տե՛ս ՄԲ, էջ 116:

[1245] Տե՛ս ՄԲ, էջ 116-117, 125 – 127: Դիտարկվող բարբառներից Մշո բարբառը բայական լծորդությունների արտահայտության առումով ամենամոտն է միջին հայերենին, որը պահպանել էր գրաբարյան չորս լծորդությունները (տե՛ս նաև ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 301):

[1246] Առաջինի մեջ իրենց խոնարհման յուրահատկություններով տարանջատում է Ե խոնարհման ներգործական սեռի պարզ բայերը (Ա լծորդության առաջին տիպար) Ե խոնարհման ածանցավոր /ներգ. և կրավ. սեռերի/ բայերից ու չեզոք սեռի պարզ բայերից (Ա լծորդության երկրորդ տիպար և Բ լծորդության առաջին և երկրորդ տիպարներ), իսկ երկրորդի մեջ առանձնացնում է Ա խոնարհման պարզ (Գ լծ. ա տիպար) և ածանցավոր (Գ լծ. բ տիպար) բայերը (տե՛ս ՔՎԲ, էջ 159): Այնուամենայնիվ, Հ.Աճառյանը Վանի բարբառի բայերի լծորդությունները ներկայացնում է ըստ գրաբարի (տե՛ս ՔՎԲ, էջ 156-168): Նկատենք, որ լծորդությունների այս կարգի բաշխումը լիովին համապատասխանում է նաև Բայազետի բարբառի իրավիճակին, ինչին կանդրադառնանք բայերի խոնարհման պատկերը ներկայացնելիս:

կ°ռթալ, խազալ, °վատալ, օռնալ, օրօճալ ևն), այս խոնարհման են պատկանում նաև *ն* (*ան* - ին համարժեք), *էն* ածանց ունեցող թե՛ հինհայերենյան ծագման, թե՛ բարբառային կազմություններ (խասկընալ, խիվընալ, վախէնալ, բ՛արկընալ, բ՛էտընալ, թափօվնալ, խօրօդնալ, ճըժօվնալ, պըստըգնալ, յետընալ ևն), նաև գրական լեզվից փոխառված բայեր (խօստանալ, դ՛իմանալ, հանգըստանալ, նեղանալ, ուրանալ ևն): Ա խոնարհման բայերի մեջ մեծ թիվ են կազմում բնաձայնական բառերը, կրկնավորները (բօռալ, բ՛ընբ՛ընալ, բըռբըռալ, գըռգըռալ, դընդընալ, դըռդըռալ, ճըլճըլալ, չըռչըռալ, պըլպըլալ ևն), կան նաև բազմապատկական ածանց ունեցող բայեր (բըկըռտալ, ծըմըրկըտալ, ճըգըռկըտալ, օռծըկըտալ. մըզմըստալ, խօսպըռտալ): Ա խոնարհման բայեր ունենք գրաբարյան Ի, Ե խոնարհումների մի շարք բայերի դիմաց (անագանիլ – հ՛անքընալ, զզուիլ - զզվալ, խօսիլ - խօսալ, ծիծաղիլ - ծըղզալ, կաթիլ - կ°թալ, սարսափիլ - սըռսըփալ, ցաւիլ - ցավալ, արածել - °ռածալ, ափսոսել - °փսօսալ, գովել - գօվալ, լսել - լսալ, հաջել - խաչալ, հոտոտել - խօնթխընթալ, քայլել - քէլալ): Նման անցումներ դիտարկվել են բոլոր բարբառներում էլ, բայց Մշո բարբառում երևույթը ավելի ընդգրկուն է. այստեղ տարածված է անորոշ դերբայի վերջավորությունների՝ մեկը մյուսով փոխարինվելը, *ն* ածանց ունեցող որոշ բայերի անորոշ դերբայները հանդես են գալիս դերբայական զուգահեռ՝ *ել*, *ալ* վերջավորություններով ևն[1247]:

5.3. *Բայահիմքեր*

Բարբառները յուրահատկություններ են հանդես բերում նաև բայի ներկայի և անցյալի հիմքերի կազմության առումով: Նախ՝ որոշ դեպքերում ներկայի՝ հինհայերենյան ածանցավոր բայահիմքի դիմաց Բայազետի բարբառում առկա է պարզ հիմք՝ *բուսանիլ - բ՛ուսել, ժրանալ - ժըրել, լուանալ – լըվալ, կորնչիլ – կուրել, հատանիլ - խատել, յառնել - հ՛արել, ուռչիլ - ուռել, աշնուլ - աշշալ* ևն: Այլ դեպքերում պարզ բայահիմքի դիմաց

[1247] Տե՛ս ՄԲ, էջ 104-105: Լծորդությունների փոխանցումներով հարուստ էին և՛ գրաբարը (տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 103-104), և՛ միջին հայերենը (Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 251):

բարբառում առկաէ ներկայի ածանցավոր հիմք (ծարաւիլ -ծ°րվընալ, կանաչել -կ°նչընալ, կարօտիլ -կ°րօդնալ, յօրանջել -օրօշկընտալ, ործկալ -օռծընկընտալ, պապանձիլ - պ°պընձվել, պառաւել -պ°ռվընալ, վազել - վազնել): Առանձին խումբ են կազմում ներկայի բայահիմքում բարբառային հնչյունական փոփոխություններ կրած բայերը: Նման փոփոխություններից են արմատական որևէ բաղաձայնի կամ հնչյունախմբի անկումը (արժել -°ժել, գիտենալ - գիդալ /գիտենալ < գիտնալ < գիդնալ < գիդալ/, կարենալ - կ°նալ /կարենալ <կարնալ <կառնալ <կանալ/, տեսանել - տէնալ /տեսանել < տէսնալ < տէնալ/, շարժիլ -ժ°ժել), հավելումը (բորբոսիլ - բ՛օրփընսել, բորբոքել - բ՛օրբ՛ընքել, հոտոտել - խօնթխընթալ), հնչյունափոխական այլ իրողություններ: Այս փոփոխությունների հետևանքով որոշ բայերի (°նել, գիդալ, կ°նալ, տէնալ) խոնարհման համակարգում առաջ են եկել անհամապատասխանություններ՝ անցյալի հիմքի ձևավորման և դրանից կազմվող ժամանակաձևերում բայերի խոնարհման առումով, ինչի մասին կխոսվի իր տեղում: Որոշ դեպքերում բայերը հանդես են բերում ներկայի հիմքի ոչ բայական ածանցման յուրահատկություններ՝ այդպիսով տարբերվելով գրաբարյան ձևերից, ինչպես՝ թամբել -թ°մքել (թամբք), խշտել - խըշտըկել (խշտիկ), հիւսել -հ՛ուստըկել (հուստակ), քաղահանել - քախընքել (քաղհանք), մօտենալ -մօտկընալ (մօտիկ), ճեղքել - ճըղել (ճեղ), մտածել – մըտկել (միտք) ևն: Հետաքրքրություն են ներկայացնում *լօխկընալ* և *շիքել* (շինել) բայերը: Առաջին ձևում, ինչպես նշում է Հ.Աճառյանը[1248], միմյանց են խառնվել *լոգանալ* (Բայազետի բարբառում՝ լօկընալ) և *լողանալ* բայերը, երկրորդ ձևը, կարծում ենք, առաջացել է *սարքել* բայի համաբանությամբ: Ներկայի հիմքի նոր ձևեր առաջացել են նաև առանձին բայերի անցյալի հիմքի քարացումով, ինչպես՝ *աղալ* (աղաց) - °*խծել*, *այրել* (այրեաց) - *էրէցել*, *բանալ* (բաց) - *բ՛ացել*, *բառնալ* (բարձ) - *բ՛առցել*, *թանալ* (թաց) - *թացընցընել*, *լնուլ* (լից) - *լցել*: Ներկայի հիմքի կազմությանը վերաբերող նման իրողություններ դրսևորվում են նաև շրջակա բարբառներում:

[1248] Նշվ. աշխ., էջ 291:

Անցյալի հիմքի զանազանությունների պատճառ են տարբեր գործոններ: Եթե գրական հայերենում անցյալի հիմքի ձևավորումը ուղղակիորեն պայմանավորված է բայի լծորդությամբ և կազմությամբ, ապա Բայազետի բարբառում որոշ դեր է խաղում նաև բայի սեռը: Բարբառումս անցյալի հիմքը լինում է երեք տեսակ՝ անցոյական, ցոյական և ռեական: Անցյալի անցոյական հիմք ունենում են Ե խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող չեզոք սեռի բայերը (քընել – *քընա*-ա, պ°ոկել – *պ°ոկա*-ա, կուրել – *կուրա*-ա, պ°տըռտել – *պ°տըռտա*-ավ), *ն* և *վ* ածանց ունեցող բայերը (խաքնել – *խաքնա*-ա, թըռնել – թըռ-ա, գ՛ըրվել - գ՛ըրվ-ա): Ե խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող ներգործական սեռի բայերը սովորաբար նույնպես ունենում են անցոյական անցյալի հիմք (նըկարել – *նըկար*-ի, °սել - °*ս*-ի, ճըմըռտել - *ճըմըռտ*-ի), բայց նույն հաջողությամբ կարող են ունենալ նաև անցյալի ցոյական հիմք (*նըկարեց*-ի, °*սէց*-ի, *ճըմըռտէց*-ի): Ա խոնարհման բոլոր բայերի անցյալի հիմքը ցոյական է (կ°ռթալ - *կ°ռթաց*-ի, խօսալ – *խօսաց*-ի, ջ՛օչընալ – *ջ՛օչըց*-ա, քօռնալ – *քօռց*-ա, ծըմըրկըտալ – *ծըմըրկըտաց*-ի): Պատճառական ածանց ունեցող բայերն ունենում են անցյալի ռեական հիմք (հ՛ավըլցընել – *հ՛ավըլցըր*-ի, փախծընել - *փախծըր*-ի): Սրանց հետևողությամբ ռեական անցյալի հիմք ունի նաև *խառցընել* բայը՝ *խառցըր*-ի: Ծրջակա բարբառներից միայն Արարատյանում է ձևավորվում անցյալի ռեական հիմք: Հիշյալ բարբառները զանազանություններ են հանդես բերում Ե խոնարհման պարզ, բազմապատկական ու կրավորական ածանցներ ունեցող, ինչպես նաև պատճառական բայերի անցյալի հիմքի ձևավորման հարցում: Մշո, Դիադինի բարբառները և Ալաշկերտի խոսվածքը բայի հիմքակազմության առումով Բայազետի բարբառից տարբերվում են միայն պատճառական բայերի դեպքում՝ չունենալով անցյալի ռեական հիմք[1249]: Խոյ-Մարաղայի բարբառում բացակայում է անցյալի ռեական հիմքը, և Ե խոնարհման բայերը ցոյական հիմք չունեն[1250]: Վանի բարբառում ևս բացակայում է անցյալի ռեական հիմքը, բայց այստեղ Ե խոնարհման ներգործական և խոնարհվող պարզ բայերի

[1249] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ, էջ 115-117:
[1250] Տե՛ս ԽԲ, էջ 106:

անցյալ կատարյալի հիմքը միայն ցոյական է[1251]: Արարատյան բարբառում անցյալի հիմքի կազմությունը Բայազետի բարբառի նկատմամբ տարբերություններ երևան չի հանում[1252]:

5.4. *Բայի սեռը*

Բարբառներում բայի սեռի դրսևորման եղանակները բազմազան են: Սրանցում սեռի կարգի արտահայտությունը կարող է ձևային որևէ ցուցիչ չունենալ և պայմանավորված լինել բայիմաստով, կարող է դրսևորվել ածանցմամբ, բայական համապատասխան վերջավորություններով և, վերջապես, շարահյուսական միջոցներով: Բայազետի բարբառում ևս բայի սեռի կարգը նախ և առաջ արտահայտվում է սկզբնաձևային բայերի՝ ուղիղ խնդիր առնելու կամ չառնելու հատկությամբ, որով տարբերակվում են ներգործական (օր.՝ կօռծել, գ՛օղնալ, մօռթել, ջ՛ըրել) և չեզոք (օր.՝ °սըռել, փախնել, կ°դղել, զաբընել) սեռերի բայերը[1253]: Սկզբնաձևային բայերը սեռային հատկանիշով փոփոխության ենթարկելու համար բարբառումս գործառում են հայերենի ընդհանուր ձևաբանական եղանակներն ու միջոցները. *վ* ածանցը՝ անանցողականության իմաստ ձևավորելու (կօռծել – կօռծըվել, ջ՛ըրել – ջ՛ըրվել) և *ցըն* ածանցը՝ անցողականության իմաստ դրսևորելու (կ°դղել - կ°դղըցընել, փախնել - փախծընել) համար: Բայազետի բարբառում բայերի սեռային տարբերությունները ձևաբանական մակարդակում կարող են արտահայտվել նաև ներգործաձև և կրավորաձև առանձին վերջավորություններով: Այս կերպ սեռի կարգի արտահայտում, ինչպես հայտնի է, բնորոշ էր գրաբարին, սակայն այդ իրողությունը համընդհանուր չէր, և հաճախ խոնարհման ձևի և բայի սեռի միջև չկար համապատասխանություն[1254]: Այդպես է նաև Բայազետի բարբառում, որտեղ ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ հանդես են գալիս անցյալ կատարյալում (*ի, իր*, ø / *եց, ինք, իք, ին* և *ա, ար, ավ, անք, աք, ան*), ըղձական, ենթադրական և հարկադրական ապառնիների եզակի թվի

[1251] Տե՛ս ՔՎԲ, էջ 159-162:
[1252] Տե՛ս ԱԲ, էջ 149:
[1253] Տե՛ս նաև Աբրահամյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 279:
[1254] Տե՛ս նաև Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 104-106:

երրորդ դեմքում (*ա* և *ի*), եզակի հրամայականում (*ա* և *ի*): Ընդ որում՝ այդ տարբերակումը չի առնչվում Ա խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող բայերին: Բացի այդ՝ *Ա* խոնարհման *ն* (*ան*-ին համապատասխանող), *էն* ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալում խոնարհվում են կրավորաձև, սակայն այդտեղ դեր է խաղում ոչ թե բայի սեռը, այլ կազմությունը, և ներգործական ու չեզոք բայերը խոնարհվում են նույն կերպ (խասկընալ – խասկըցա, մօտկընալ – մօտկըցա, ունէնալ – ունէցա, վախէնալ – վախէցա. ըղձ. խասկընա, մօտկընա, ունէնա, վախէնա): Ընդհանրապես, Ա խոնարհման բայերի խոնարհման համակարգում վերջավորությունները սեռի արտահայտման դեր չունեն: Այդպես է և Ե խոնարհման *ն* ածանց ունեցող բայերի դեպքում, որոնք, սեռից անկախ, խոնարհվում են կրավորաձև (գ՛ըթա, մըտա): Պատճառական ածանց ունեցող բոլոր բայերն էլ, անկախ սեռից, խոնարհվում են ներգործաձև (կուրցըրի, խասկըցըրի, դ՛օխծըրի): Ե խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող ներգործական սեռի բայերը խոնարհվում են ներգործաձև (թափի/թափէցի, թափեց. խափըռտի, խափըռտեց. ըղձ. թափա, խափըռտա): Նույն այդ կարգի չեզոք սեռի բայերը, որպես կանոն, խոնարհվում են կրավորաձև (մըռսա, մըռսավ. թօռմըշտավ, թօռմըշտան, խընթըրվորա, խընթըրվորավ. ըղձ. մըռսի, թօռմըշտի, խընթըրվորի): Սակայն կան երկու խումբ բայեր, որոնք, լինելով չեզոք, այնուամենայնիվ խոնարհվում են ներգործաձև: Դրանց առաջին խումբը կազմում են բնության երևույթներ ցույց տվող միադիմի բայերը (°մբել, °մբըռտել, °ռեվել, ձ՛ընել, մըքըլկել, պ°ռզել, մըթընդել)[1255]: Երկրորդ խումբը կազմում են այն բայերը, որոնց ցույց տված գործողությունը չի ենթադրում առարկայի վիճակի փոփոխություն: Օրինակ, եթե *նստել* գործողության արդյունքը այդ գործողությունը կատարողի նստած վիճակն է, ապա *գ՛անգըտել* գործողությունը վիճակի փոփոխություն՝ իբրև հետևանք, չի ենթադրում: Չեզոք սեռի ներգործաձև խոնարհվող այս կարգի բայերից են՝ *բ՛անել, բ՛էտըռկել, բ՛ըլկել, գ°վզըկել, թ°փկել, թ°փչըկել, թըրքել, խօքէսխընել, ծըլկել, կէյբըթել, հ°փսել* ևն:

[1255] Թվում է՝ այստեղ դեր ունի մարդկանց նախնական պատկերացումը երկնային ուժերի վերաբերյալ, և, օրինակ, «Մէշու °ռեվեց, յետո էլի °մբըռտեց» տիպի

Այսպիսով, Ե խոնարհման չեզոք սեռի պարզ (մասամբ նաև՝ բազմապատկական ածանց ունեցող) բայերը կարող են խոնարհվել ներգործաձև կամ կրավորաձև՝ ըստ իրենց իմաստային յուրահատկության. եթե նման բայերը ենթադրում են դրություն կամ վիճակ, ապա խոնարհվում են կրավորաձև, իսկ եթե չեն ենթադրում, ապա խոնարհվում են ներգործաձև: Կրավորաձև են խոնարհվում *վ* ածանց ունեցող բոլոր բայերը (նեղվա, նեղվար, նեղվավ. բ°ռօժվա, բ°ռօժվար, բ°ռօժվավ):

Այսպիսով, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակումը Բայազետի բարբառում բազմաշերտ իրողություն է և պայմանավորված է՝ ա) բայի կազմությամբ (*ն, էն* և *վ* ածանցներ ունեցող բայերը խոնարհվում են կրավորաձև, իսկ *ցըն* ածանց ունեցողները՝ ներգործաձև), բ) լծորդությամբ (Ա խոնարհման պարզ բայերը խոնարհվում են ներգործաձև, իսկ Ե խոնարհման նույն կարգի /նաև բազմապատկական ածանց ունեցող/ բայերը կարող են խոնարհվել ներգործաձև և կրավորաձև), գ) բայի սեռով (Ե խոնարհման պարզ, ինչպես նաև բազմապատկական ածանց ունեցող ներգործական սեռի բայերը խոնարհվում են ներգործաձև, իսկ նույն կարգի չեզոք բայերը որպես կանոն խոնարհվում են կրավորաձև) և դ) բայիմաստով (Ե խոնարհման պարզ, ինչպես նաև բազմապատկական ածանց ունեցող՝ վիճակ և դրություն ցույց տվող բայերը խոնարհվում են կրավորաձև, իսկ նույն կարգի՝ վիճակ և դրություն ցույց չտվող, նաև բնության երևույթներ ներկայացնող միադիմի բայերը խոնարհվում են ներգործաձև): Բայազետի բարբառում կան բայեր, որոնք համապատասխան ժամանակաձևերում կարող են խոնարհվել և՛ ներգործաձև (արտահայտելով ներգործական սեռի իմաստ), և՛ կրավորաձև (արտահայտելով չեզոք կամ կրավորական սեռի իմաստ), օրինակ՝ անց.կատ. *ջ՛արթեց* (ջարդեց) – *ջ՛արթավ* (ջարդվեց). ըղձ. *ջ՛արթա* (ջարդի) – *ջ՛արթի* (ջ՛արդվի). հրամ. *ջ՛արթա՛* (ջարդի՛ր) – *ջ՛արթի՛* (ջարդվի՛ր): Այդպիսի բայերի ցույց տված իրողությունը խոսողների պատկերացմամբ կարող է կատարվել ինչպես ակտիվ ներգործության արդյունքում, այնպես էլ ինքնիրեն, օրինակ՝ ծառի ճյուղը կարող է ինչ-որ մեկը ջարդել,

նախադասություններում թերևս ենթադրվում է երկնային ուժի

բայց ճյուղը կարող է և ինքնիրեն ջարդվել: Նման բայերը զգալի քանակություն են կազմում. *°լ ը ր օ տ ե լ, բ՛ ը ռ թ ե լ, բ ը թ լ ե լ, թ ա ց օ տ ե լ, թ ա փ ե լ, թ ա փ ը ռ տ ե լ, թ ը մ ե լ, թ ը ր բ ե լ, թ ը ռ չ ե լ (թ ր ջ ե լ), ճ ը լ խ ե լ, լ օ խ կ ե լ, խ ա ր ա մ ե լ, խ ը խ մ ե լ, խ ը ռ շ ե լ, խ ը ր բ ե լ, խ ո ղ օ տ ե լ, ծ ը ռ ե լ, կ ը դ ր ե լ, կ օ դ ր ե լ, կ ը խ ա ռ օ տ ե լ, կ°վ ճ օ տ ե լ, ճ օ ռ թ ե լ, ճ ը մ ը ռ տ ե լ, մ աշ ե լ, մ ը խ ա ղ ռ ե լ, մ ը ր օ տ ե լ, շ ը ռ ճ ե լ, պ ը ն դ ե լ, ջ՛ ա ռ թ ե լ, վ ա ռ ե լ* ևն: Սրանք այլ ժամանակաձևերում նույն ձևով կարող են արտահայտել ինչպես ներգործականության, այնպես էլ չեզոքության կամ կրավորականության իմաստներ[1256]: Օրինակ, «Յես քե խառցընում եմ՝ էս բ՛ աժակը վո՞րն *ա կօդրե*, դ՛ ու °սում ես՝՛ հիրան-հ՛ իրան *ա կօդրե*, բ՛ այց յես գիդում եմ, վոր էտի քօ ձ՛ եռօվ *ա կօդրե*» նախադասության մեջ *կօդրել* (կոտրել) բայի առաջին կիրառությունը ներգործական սեռ ունի (ո՞վ է կոտրել), երկրորդ կիրառությունը՝ չեզոք սեռ (ինքնիրեն է կոտրվել), երրորդ կիրառությունը՝ կրավորական սեռ (ինչ-որ մեկի կողմից է կոտրվել)[1257]: Այսպիսով, նման դեպքերում էլ բայի սեռը որոշվում է շարահյուսական հարաբերություններով: Խոսքում կամ խոսքից դուրս բայի սեռի դրսևորման տարբեր եղանակները կարող են զուգորդվել: Օր., անցյալ կատարյալ ժամանակաձևում *վ* կրավորական ածանցը միշտ զուգորդվում է կրավորաձև վերջավորություններով, նույն այդ ժամանակաձևում ներգործական և չեզոք սեռային իմաստները որոշակի դեպքերում ուղեկցվում են համապատասխան վերջավորություններով, խոսքում երեք սեռերի հստակ արտահայտմանը հաճախ նպաստում են շարահյուսական հարաբերությունները:

Բայազետի բարբառում ներգործական սեռի են Ե խոնարհման պարզ բայերի մեծ մասը (°խ ծ ե լ, խ օ ր ե լ, խ ու զ ե լ, հ՛ ավ ք ե լ, ճ°ր ե լ, ջ՛ ը-

---

գործողություն, որն ունի կրող առարկա:

[1256] Համանման երևույթ Արարատյան բարբառի՝ նախկին Հոկտեմբերյանի շրջանի խոսվածքներում նկատել է Ս. Բաղդասարյան-Թափալցյանը՝ այն համարելով դրանց վրա Բայազետի բարբառի Սուրմալուի ենթաբարբառի ազդեցության հետևանք: Միաժամանակ, լեզվաբանը նշել է, որ նաև առանց *վ* ածանցի կրավորականի իմաստ արտահայտելը շատբնորոշ է Կը ճյուղի Մշո, Վանի, Սասունի բարբառներին (տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 142):

[1257] Բայերի նույն հատկությունը ներկայացնող օրինակներ Ալաշկերտի բարբառի վերաբերյալ ներկայացրել է Ք.Մադաթյանը. *տաշտի կատ թապե – տաշտի կաթ քու մեխկօվ ա թապե – տաշտի կատ կադուն ա թապե*՝ հավելելով, որ նման

ել, սղոցել, տրշել, ցանել, քանդել ևն), բազմապատկական ածանց ունեցող բայեր (բ՛ռթռռտել, ժրխշռռտել, կ°պռռտել), *ն* ածանց ունեցող բայեր (գ՛ռթնել, դ՛ռնել, խաքնել, տ°նել), պատճառական ածանց ունեցող գրեթե բոլոր բայերը, Ա խոնարհման սակավաթիվ բայեր (գիդալ, լռվալ, կ°ռթալ, խասկռնալ, հ՛իմանալ, ուրանալ, հ՛իշկռռտալ, գօվալ ևն): Ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ տարբերակող ժամանակաձևերում ներգործական սեռի բայերը առավելաբար խոնարհվում են ներգործաձև: Կրավորաձև են խոնարհվում Ե խոնարհման *ն* ածանց ունեցող բայեր (°ռնել - °ռա, գ՛ռթնել - գ՛ռթա, խաքնել – խաքա, ղղձ. °ռնի, գ՛ռթնի, խաքնի), միայն անցյալ կատարյալում՝ Ա խոնարհման մի շարք անկանոն (գիդալ - գիցա, կ°նալ – կ°ռցա, խաղալ – խախծա) և ածանցավոր (խասկռնալ – խասկռցա, խօստանալ – խօստացա, հիմանալ – հիմացա) բայեր:

Չեզոք սեռի են Ա խոնարհման բայերի մեծ մասը (°վատալ, °քլօրնալ, ծրմրրկռտալ, ճրլճրլալ, զարքանալ, զատրնալ, թօփլալ, ծրղզալ, կ°թալ, քէլալ ևն), Ե խոնարհման պարզ բայերի փոքր մասը (°բրել,էրէցել, թավրլել, խրնձրրել, ծրլել, խատել, խրնգրռել, մօլրրել, նեխել, ցամքել, փրդել ևն), *ն* ածանց ունեցող բայերի մեծ մասը (հ՛ռլնել, հ՛իշնել, մրդնել, թրռնել, մեռնել, փախնել, հ՛ռնցնել, հ՛ռնգրնել, խասնել), *վոր* ածանց ունեցող բոլոր բայերը (ծ°նդրրվորել, նիյաթվորել, մրռթրշվորել, խրնթրրվորել ևն), *ցրն* ածանց ունեցող սակավաթիվ բայեր (բրլբրլցրնել, խրռրցրնել, դ՛օխծրնել, փրնչրցրնել, ֆրշֆրշցրնել), բաղադրական *վ* ածանց ունեցող բայերը (զրխմրվել, օցիփրշվել, քամբրխվել ևն): Բայազետի բարբառում շատ ներգործական բայեր, ստանալով *վ* ածանց, առավելաբար արտահայտում են չեզոք սեռի իմաստ՝ ձևավորելով կրավորակերպ չեզոք բայեր: Սրանք կարող են ցույց տալ անձի ֆիզիկական (օլրրվել, գ՛ռնդրվել, դրզվել), հոգեկան (նեղվել, հարմրրվել, մերվել) վիճակ կամ փոփոխություն, դրության փոփոխություն (թալնրվել, կ°ռքրվել, նրշանվել, բ՛աժվել), առարկայի վիճակի փոփոխություն (դ՛առտրգվել, ժրժնրվել, լրղօզվել): Առանձին խմբեր են կազմում անդրադարձ (հ°զրրվել, պրռտրվել, քրսվել, ս°բնրվել, սրրփրվել, փալնրվել), փոխադարձ (ա°չպրչվել,

գործածություն ունեն Ե խոնարհման ներգործական բայերի մի մասը (տե՛ս

գ՛ըրկըվել, փատըտվել), համատեղ գործողության իմաստ ունեցող (հավքըվել, մէտեղվել, ջէրգըվել, շ°րվել) բայերը:

Չեզոք սեռի Ա խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալում խոնարհվում են ներգործաձև, իսկ *ն (ան), էն* ածանց ունեցող բայերը՝ կրավորաձև: Ե խոնարհման չեզոք սեռի բայերից համապատասխան ձևերում ներգործաձև են խոնարհվում վիճակ և դրություն չենթադրող պարզ բայերը, *ցըն* ածանց ունեցող բայերը, իսկ մնացած պարզ բայերը, *ն, վոր* և *վ* ածանց ունեցողները խոնարհվում են կրավորաձև:

Կրավորական սեռի իմաստը Բայազետի բարբառում արտահայտվում է շատ ավելի թույլ, քան գրական հայերենում: Բարբառում սովորաբար կրավորական բայ կամ ձև գործածվում է ոչ թե ցույց տալու համար, որ մի առարկա ազդվում է մեկ այլ առարկայի կողմից, այլ ընդամենը ներկայացնելու, որ տվյալ առարկայի հետ ինչ-որ բան է կատարվում, ուստի նախադասության մեջ ավելի սովորական է գործողության կատարման պատճառը կամ միջոցը, քան ներգործման խնդիրը[1258]: Գուցե բնության երևույթների անվանումները դիտվեն իբրև ներգործման խնդիր հետևյալ կարգի նախադասություններում. «Դ՛ուռը քամուց բ՛ասվավ», «Ցօրենի դ՛աշտը °րեվից խանձըվե»: Սակայն այդ նախադասություններում *քամուց* և *°ռևից* անդամները նույն հաջողությամբ կարող են ընկալվել իբրև պատճառի պարագա, մանավանդ եթե հաշվի առնենք, որ բնության այդ երևույթները որևէ գործողություն չեն ծավալում, նրանք գոյություն ունեն և կարող են պատճառ դառնալ զանազան իրողությունների[1259]:

Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 107):

[1258] Ինչպես նշել է Մ.Ասատրյանը, կրավորական կառուցվածքի նախադասության բուն էությունից է բխում «....իջեցնել գործողի, որպես ռեալ տրամաբանական սուբյեկտի դերը, ցույց տալ օբյեկտի հետ կատարված որոշ գործողության փաստ՝ մեծ մասամբ անկախ գործողից: Ահա այս է պատճառը, որ կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունների մեջ ներգործող խնդիրը, տրամաբանական սուբյեկտը մեծ մասամբ չի հիշատակվում, չի արտահայտվում» (Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 213):

[1259] Ի դեպ, նման նախադասություններում, առանց առարկաների հարաբերությունների փոփոխության, կարող են գործածվել նաև չեզոք սեռի բայեր, ինչպես՝ «Դ՛ուռը քամուց հ՛իրար էկավ», «Ցօրենի դ՛աշտը °ռեվից կըռընձե»: Իսկ երբ կրավորական կառույցի նախադասության գործողության բուն կատարողը անձ է, ապա այն նախադասության մեջ որպես կանոն չի արտահայտվում («Վառթիվորին բոլ ջ՛ըրվանք», «Էրէվում՝ դ՛ու հէսօր էլի կըտըփվես», «Հ՛էսօր խանութից իրեք կիլօ պիսօք աբ՛էրվե»): Կրավորական կառույցի նման նախադասություններում կարող են դրսևորվել տարբեր պարագաներ («*Քօ պ°ճառօվ* ընդու խառսը խըրկըվավ», «Էտդիվանին *քօ °սէլօվ* ապ°տի տ°կը դ՛ըրվե», «*Ընդու մեխվով* յես շ°տծէսկըվա»)

Այնուամենայնիվ, հազվադեպ հանդիպում է անձի անունով արտահայտված ներգործման խնդիր, որը և դրվում է բացառական հոլովով. *Դ՛ու էլի ընդուց բ՛ըշտըվար*:

Հ.Աճառյանը նշել է, որ Վանի բարբառում կրավորական բայերը գործածվում են նաև իբրև կարողական բայ, ինչպես՝ *էրթ°լ - էրթ°ցվել, կ՚°լ - կ՚°ցվել , էլնել - էլնըվել, տալ – տըրվել, էճնել - էճնըվել*: Հեղինակը չի մանրամասնում, սակայն նրա բերած նախադասությունների օրինակներում այդ բայերը գործածված են միայն երրորդ դեմքով[1260]: Նման իրողություն դրսևորվում է և Բայազետի բարբառում: Այստեղ կրավորական բայերի երրորդ դեմքով արտահայտվում է երկու կարգի իրողություն. ա) պարբերաբար կրկնվող, օրինաչափ երևույթ, սահմանված կարգ, ինչպես՝ *Կ°ռտալը մ°յիսին ա ցանվում. Հ՛առէչ խաշլամէն ա քաշվում, նոր յետո՝ քուֆտէն*. բ) նպատակ, կարելիություն, անհրաժեշտություն կամ պարտադրողականություն, ինչպես. *Հ՛էսօր հ՛իրկուն էթըսվում °խճիկ ուզէլու. Էտ գ՛ըթլօվ ճ°շ չուտըսվի. Հ՛էքուց ձ՛եզի կ°սըսվի՝ ինչ պըտի °նէք*: Հետաքրքրական է այս կարգի կիրառություններ ունեցող բայերի կազմությունը: Որպես կանոն, սկզբնաձևային չեզոք սեռի բայերը *վ* ածանց ստանում են պատճառականի հիմքի վրա. *նըստել – նըստըցընել – նըստըսվել, կ°ռճընալ – կ°ռճըցընել – կ°ռճըսվել, բ՛անցընալ - բ՛անցընցընել - բ՛անցընցըվել*: Թերևս սրանց նմանությամբ *վ* ածանցով այսպես կոչված «կարողական» բայեր կազմվել են նաև ներգործական ու չեզոք այնպիսի բայերից, որոնք բարբառումս պատճառականի ձևեր չունեն կամ նման կերպով չէին կարող ունենալ. օրինակ՝ *°սել - °սըսվել, հ՛ըլնել – հ՛ըլնըսվել, էթալ - էթըսվել, գալ - գ՛ալըսվել, տալ – տ°լըսվել, գ՛ըրել - գ՛ըրըսվել, փօրել - փօրըսվել, ուտել – ուտըսվել* ևն:

Բարբառներում ևս կրկնասեռություն տարածված երևույթ է[1261]: Ինչպես տեսանք, շատ բայեր կարող են արտահայտել և՛ չեզոք, և՛

կամ միջոցի խնդիր («Էտ °ռաղը *քօ ձ՛եռօվ* պըտի բ՛ասվի»): Այնուամենայնիվ, հազվադեպ հանդիպում է անձի անունով արտահայտված ներգործման խնդիր, որը և դրվում է բացառական հոլովով. «Դ՛ու էլի *ընդուց* բ՛ըշտըվար», «Դ՛ու *Սէրօժից* կըրվար, Սէրօժն էլ՝*Վառթանից*»:

[1260] ՔՎԲ, էջ 183:

[1261] Տե՛ս նաև ԽԲ, էջ 126:

կրավորական սեռերի իմաստներ (Ժողովուռթը լըսվավ հ°յ°թը – Կ°ռտօլը լըսվավ խորը): Շատ բայեր էլ նույն ձևով կարող են արտահայտել և՛ ներգործականության, և՛ չեզոքության իմաստներ: Նման բայերից են՝ *սօրվել* (դ՛ասը սօրվել – շոքին սօրվել/վարժվել/), *հ՛իշկալ* (կինօ հ՛իշկալ – ս°ռէրին հիշկալ), *թըքել* (°ռուն թըքել - թըքել հ՛իրսին), *խօսալ* (վատբ՛աներ խօսալ – մէկի խէտխօսալ), *լըսալ* (ձ՛էն լըսալ – ջ՛ոչ ինլըսալ), *ցըրվել* (փող ցըրվել – ցըրվել տընները), *տէնալ* (խիվանդ հ՛°շկը °ռթէն տէնում - ծ°ռ տէնալ):

Ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակումը իր դրսևորումներն ունի նաև շրջակա Դիադինի, Մշո, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում[1262]: Դիադինի բարբառում իրողությունը ամբողջովին նույնական դրսևորումներ ունի, ինչ Բայազետի բարբառում. *գ՚ըրի, նըստա, հախտըվա* (անց. կատ.), *գ՚ըրա, նըստի, հախտըվի* (ըղձ. ապառնի և դրանից կազմվող ձևեր), *գ՚ըրա՛, նըստի՛, հախտըվի՛* (եզակի հրամայական): Մշո բարբառում «նույն բայը կարող է խոնարհվել և կրավորաձև, և ներգործաձև ու լինել չեզոք սեռի բայ»[1263], սակայն ավելի կարևոր է, որ «բարբառում կան բայեր, որոնք խոնարհվում են և կրավորաձև, և ներգործաձև մի դեպքում կրավորական, մյուս դեպքում ներգործական իմաստ են արտահայտում»[1264]: Այս բարբառում ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերությունն արտահայտվում է նաև Ե խոնարհման պարզ բայերի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում՝ *կազադի* (ազատվում է) – *կազադէ* (ազատում է)[1265]: Բայազետի բարբառի պես Մշո բարբառում էլ ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ դրսևորվում են անցյալ կատարյալում (խըմի, քընա, գ՛ըրվա), եզակի հրամայականում (խըմա կամ խըմէ, քընի, գ՛ըրվի), ըղձական ապառնու և դրանից կազմվող եղանակային այլ ձևերի եզակի թվի երրորդ

[1262] Այս հատկանիշը ավելի բնորոշ է արևմտյան բարբառախոս վայրերին (տե՛ս ՀԲՆ, էջ 108-119):
[1263] ՄԲ, էջ 117:
[1264] Տե՛ս նույն տեղում:
[1265] Տե՛ս նշվ. աշխ., էջ 127: Ծագումնաբանորեն Մշո բարբառի ներկային համապատասխանում է Բայազետի բարբառի ենթադրական ներկան, որտեղ ևս եզակի թվի երրորդ դեմքում ձևաբանորեն դրսևորվում են խոնարհման սեռային տարբերություններ՝ *կըկօդրի* (կկոտրվի) – *կըկօդրա* (կկոտրի):

դեմքում (խըմէ, քընի, գ՛ըրվի)[1266]: Վանի բարբառում ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ տարբերվում են միայն անցյալ կատարյալում (ուզիցի, սօվրա, °զ°տվա), իսկ հրամայականի եզակի թվում (ուզի՛, սօվրի՛, °զ°տվի՛), ըղձականի եզակի թվի երրորդ դեմքում (ուզի, սօվրի, °զ°տվի) ձևերը նույնն են[1267]: Այդպես է և Խոյ-Մարաղայի բարբառում. *կ՚իրիմ, ք՚ընամ, էրվամ* (անցյալ կատարյալ), *կ՚իրի* /ը/, *ք՚ընի* /ը/, *էրվի* /ը/ (ըղձական ապառնի), *կ՚իրի՛* /ը/, *ք՚ընի՛* /ը/, էրվի՛ /ը/ (եզակի հրամայական)[1268]: Արարատյան բարբառում միայն անցյալ կատարյալում դրսևորվող ձևավորման տարբերությունները, ինչպես և գրական արևելահայերենում, պայմանավորված են ոչ թե բայերի սեռային հատկանիշներով, այլ կազմության յուրահատկություններով (բ՛էրէցի, տէսա, զարկըվամ)[1269]:

5.5. *Դերբայներ*

Բայազետի բարբառում բայն ունի 7 դերբայ՝ անորոշ, հարակատար, ենթակայական, անկատար, վաղակատար, ժխտական և ձևի: Անորոշ դերբայն ունի *ել* և *ալ* վերջավորություններ (°վիրել, բ՛էտրոկել, խաքնել, բ°ռօժվել, բօռալ, ծըմըրկըտալ, ջ՛օչընալ): Հոլովվում է միայն եզակի թվում՝ Ու հոլովմամբ[1270]. *էթալ, էթալու, էթալուն, էթալը, էթալուց, էթալօվ*: Կարող է ստանալ հոդեր՝ *էթալըս, էթալըտ, էթալը*: Բայական ժամանակաձևերի կազմությանը չի մասնակցում[1271]: Գործածվում է գոյականաբար՝ նախադասության մեջ դառնալով ենթակա, ստորոգելի, խնդիր, որոշիչ, պարագա: Բազմազան են անորոշի՝ ժամանակային իմաստով գործածությունները: Այս դերբայը ժամանակի պարագա է դառնում ինչպես հոլովաձևերով, այնպես էլ կապերի հետ: Անորոշի տրականը ցույց է տալիս

[1266] Տե՛ս նշվ. աշխ., էջ 129-154:
[1267] Տե՛ս ՔՎԲ, էջ 159-163:
[1268] Տե՛ս ԽԲ, էջ 106-108, 125-127:
[1269] Տե՛ս ԱԲ, էջ 149:
[1270] Ու վերջավորությամբ անորոշի սեռական հանդիպում է միջին հայերենի զարգացման արդեն առաջին շրջանում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 304):
[1271] Չնայած Ռ.Մարկոսյանը նշում է, որ Արարատյան բարբառում անորոշ դերբայն ունի միայն շարահյուսական կիրառություն (նշվ. աշխ., էջ 144), սակայն Ա.Աբրահամյանը փաստում է, որ Արարատյան բարբառում անորոշը հարկադրական եղանակի եղանակիչի հետ կազմում է հարկադրական եղանակի ժամանակներ՝ գըրիլ պըտէմ, գըրիլ պըտի, նաև հնչյունափոխությամբ՝ *մընալ տէմ, մընալ տի* (Տե՛ս Ա.Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 274-275):

իրադարձություն, որի ընթացքում կատարվում է ենթակայի գործողությունը. *Քօ գ՛ալուն յես մէ քուֆտա կէրա Ընդու կ°ոքըվէլուն մենք գ՛եղը չինք*: Բացառականով ցույց է տրվում կատարելի գործողություն, որին պետք է նախորդի դիմավոր բայով արտահայտված գործողությունը. *Խօսալուց մըտածա, նոր խօսա էթալուց ընձի կըտէնաս, նոր կէթաս:* Նման կարգի նախադասություններում անորոշի բացառականը կարող է նաև զուգորդվել *հ՛առէջ* կապով՝ *խօսալուց հ՛առէջ, էթալուց հ՛առէջ*, և թվում է՝ այդպիսի կապակցությունները ավելի նախնական են, ու դրանցում *հ՛առէջ* կապի անկումով անորոշի բացառականը ձեռք է բերել ժամանակային իմաստ: *Խըթ* նախադրության և *գ՛ախ, վըրէն* ու այլ հետադրությունների հետանորոշ դերբայը ցույց է տալիս մեկ այլ գործողության ժամանակը. *Խըթ էթալը* (գնալուն պես)[1272], *էթալու գ՛ախ* (գնալու ժամանակ)[1273], *էթալու վըրէն* (գնալուց հետո, գնալու համեմատությամբ), *էթալուց հ՛առէջ, էթալուց յետո*: Այս դերբայը, ստանալով *էն* դերանունը կամ *մէ* անորոշ հոդը և դրվելով իր դիմավոր բայի հետ, արտահայտում է գործողության սաստկություն. *էն ուտելը կէրա մէ ուտել կէրա*[1274]: Անորոշի գործիականը երբեմն կարող է արտահայտել ապառնի դերբային մոտիմաստ՝ օժանդակ բայի հետ ձևավորելով մի կառույց, որը ցույց է տալիս վերահաս գործողություն. *Մէշօլ համփէրէք, ճ°շը °ռթէն էփէլօվ ա Ընդոնք °ռթէն խասնէլօվ են*: Բարբառումս այս դերբայը բառակազմական լայն հնարավորություններ է հանդես բերում՝ *ան* նախածանցը ընդունելով: Այդպես ձևավորում են մակբայներ, նաև՝ ածականներ. *°ն°լվել, °նբ՛ացել, °նէթալ, °նգիդալ* ևն: Ծրջակա բոլոր բարբառներում

[1272] Այսպիսի կառույց գործառում է նաև Մշո բարբառում՝ *խըտնըստէլուն* (տե՛ս ՄԲ, էջ 104):
[1273] Այսպիսի կառույց գործառում է նաև Վանի բարբառում՝ *էրթ°լու կ՚°խ*: Այստեղ գործածական են նաև անորոշի և *պէս, իք՚ան* բառերի կապակցությունները՝ *տիսնալու պէս, ասել իք՚ան* (տե՛ս ՔՎԲ, էջ 102 - 103):
[1274] Համանման երևույթ նկատել է Հ.Աճառյանը Պոլսի բարբառում (տե՛ս ԼՔՀԼ, հ. 5, էջ 39):

անորոշ դերբայ ունի *ել / էլ, ալ* վերջավորություններ[1275] և եզակի թվում ենթարկվում է Ու հոլովման[1276]:

Հարակատար դերբայը Բայազետի բարբառում բոլոր դեպքերում ունի *ուկ* վերջավորություն[1277], չնայած Հ.Աճառյանը[1278] և, նրան հետևելով, Ռ.Բաղրամյանը նշում են, թե այստեղ ներգործական սեռի բայերը հարակատարը կազմում են *ած* մասնիկով[1279]: Իրականում բարբառումս *ած* մասնիկով հարակատարի սակավադեպ ձևերը արդեն գոյականի վերածված փոխառություններ են գրական լեզվից (սիրած, նըշանած, խօրօված) կամ գրական լեզվի ազդեցությամբ գործածվող զուգահեռներ (°սած - °սուկ, բ՛երած - բ՛երուկ, տէսած – տէսուկ, գ՛ացած – գ՛ացուկ ևն): Բացի այդ, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում հանդես է գալիս *ած*-ով ձև, սակայն վաղակատարի նշանակությամբ (գ՛ացէր են – գ՛ացած / գ՛ացած ա / գ՛ացած են), ընդ որում՝ այս դեպքում *ուկ*-ով ձևի գործածությունը բացառված է[1280]: Հարակատարի *ուկ* վերջավորությունը Բայազետի բարբառում բայասեռից անկախ դրվում է Ե խոնարհման պարզ, բազմապատկական, կրավորական ածանց ունեցող բայերի ներկայի հիմքի վրա (կօդրուկ, քընուկ, ճըմըռտուկ, կըրվուկ), իսկ Ե խոնարհման *ն, ցն* ածանց ունեցող և Ա

[1275] Ըստ Ա.Գրիգորյանի՝ Երևանի բարբառում անորոշ դերբայն ունի *էլ, ալ, իլ* մասնիկներ, Մշո բարբառը՝ *իլ, ալ* մասնիկներ (տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 146):

[1276] Վանի բարբառում Հ.Աճառյանը ներկայացրել է նաև անորոշի հոգնակի թվով հոլովական հարացույց (տե՛ս ՔՎԲ, էջ 191): Բայազետի բարբառում գործածական են անորոշի հոգնակի ստացական ձևեր՝ *Գ՛ալ ըներ տի՛ ըլ նի, էթալ ներ ըտչ ըլ նի*:

[1277] Ինչպես նշում է Ա.Աբրահամյանը, հարակատար դերբայի այս տարբերակի հետքերը կան դեռևս գրաբարում (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 222):

[1278] ԼՔՀԼ, հ. 5, էջ 45:

[1279] Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 31:

[1280] Ընդհանրապես, հայերենի բարբառներում հարակատարի *ուկ* մասնիկով ձևը *ած* մասնիկով ձևի համեմատությամբ սակավ տարածված իրողություն է (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 220): Ըստ Հ.Աճառյանի՝ *ուկ* մասնիկով հարակատար ունեն Բայազետի և Մշո բարբառները, իսկ այլ վայրերում (Ակն, Արաբկիր, Չենկիլեր, Չարսանջաք, Սուրմալու, Դերսիմ, Վան, Եվդոկիա, Պոլիս) գործածական է հատուկենտ բառերի մեջ (տե՛ս ԼՔՀԼ, հ. 5,էջ 45): Ա.Ղարիբյանը նշում է, որ հարակատարը *ուկ* վերջավորությամբ է կազմվում Մշո, Դիադինի, Մոկաց բարբառներում և Նոր Բայազետի ենթաբարբառում, ընդ որում՝ Դիադինի բարբառի առումով կարծում է, որ ««ուկ» վերջավորությունը պետք է ընդունել Մշո բարբառի սեփականություն, որը փոխանցվել է Դիադինի բարբառին» (Ար.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 201): Ըստ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակների՝ դերբայական այս ձևը բնորոշ է արևմտյան խմբակցության մի շարք բարբառների (Եվդոկիա, Ծապին-Գարահիսար, Սեբաստիա, Ակն, Երզնկա, Սասուն, Տիգրանակերտ, Մուշ, Վան և այլն), իսկ արևելյան խմբակցության բարբառներից այս հատկանիշն ունեն միայն Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառները (տե՛ս ՀԲՆ, էջ 101, 108-119):

խոնարհման բոլոր բայերի՝ անցյալի հիմքի վրա (գ՛ըթուկ, խասցըրուկ, խախծուկ, գ՛օխծուկ, վախէցուկ, ջ՛օչըցուկ): Քանի որ հարակատար դերբայի մեջ միահյուսված են գործողության և դրության ու վիճակի իմաստները, Բայազետի բարբառում սովորական չեն չեզոք (հազվադեպ նաև՝ ներգործական) այն բայերի հարակատարի ձևերը, որոնց ցույց տված գործողությունը վիճակ ու դրություն չի ենթադրում (օր.՝ թոռթըռալ, կօնձկընձալ, օրօշկըտալ, °ռեվել, գըլվըլալ, գօմփել, լըժալ, խըռալ, հ՛առչել, հ՛°փսել ևն): Այս դերբայը նախադասության մեջ դառնում է որոշիչ, կարող է գործածվել գոյականաբար, նաև մակբայաբար, մի շարք դեպքերում մասնակցում է սահմանական եղանակի ժամանակաձևերի կազմությանը: Իբրև որոշիչ՝ չեզոք սեռի բայերի հարակատար դերբայը ունի սովորական գործածություն (քընուկ °խճիկ, կուրուկ հօռթիկ, բ՛ուսուկ խոտ), մյուս սեռերի հարակատարը, սակայն, հանդես է բերում յուրահատկություններ՝ ըստ ներգործական և կրավորական սեռային իմաստների արտահայտության: Ինչպես հայտնի է, հայերենում ներգործական սեռի բայերը հարակատարի նույն ձևով կարող են արտահայտել նաև կրավորականության իմաստ[1281]: Բայազետի բարբառում ներգործական սեռի բայերը հարակատար դերբայի դեպքում նաև կրավորականության իմաստ արտահայտում են ընդհանրապես առանց *վ* ածանցի (բ՛էրուկ - բերած և բերված, գ՛ըթուկ - գտած և գտնված, գ՛օխծուկ - գողացած և գողացված, ջ՛առթուկ – ջարդած և ջարդված)[1282]: Բարբառումս հարակատար դերբայի՝ *վ* ածանց չունեցող ձևով կարելի

[1281] Տե՛ս Մ.Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, էջ 237:

[1282] Ըստ Մ.Ասատրյանի՝ ներգործական հարակատար դերբայի ներգործական և կրավորական նշանակությունները որոշչային կիրառության դեպքում կարելի է տարբերակել հետևյալ կերպ. «....երբ ներգործական որոշիչ հարակատար դերբայի դրսևորած գործողության կատարողը որոշյալ է, ուրեմն հարակատար դերբայն ունի անցողական նշանակություն, իսկ երբ որոշյալը գործողության կրողն է, ուրեմն հարակատար դերբայն ունի անանցողական նշանակություն» (Մ.Ասատրյան, նույն տեղում): Ըստ այդմ՝ *խոտ հնձած գյուղացի* կապակցության մեջ *հնձած* դերբայն ունի անցողական նշանակություն, իսկ *հնձած խոտ* կապակցության մեջ՝ անանցողական նշանակություն (նշվ. աշխ., էջ 238): Եվ քանի որ Բայազետի բարբառում ևս հարակատար դերբայը իր կազմում որպես կանոն կրավորական ածանց չի ունենում, Մ.Ասատրյանի առաջարկած՝ սեռային նշանակությունների տարբերակման եղանակը գործադրելի է դառնում նաև այստեղ: Ըստ այդմ, օրինակ, *դ՛ըրուկ դ՛ուռ* կապակցության մեջ դերբայն ունի անանցողական իմաստ, իսկ *գ՛ըլխարկ դ՛ըրուկ մ°ռթ* կապակցության մեջ՝ անցողական իմաստ: Այդպես նաև՝ *խըմուկ °ռաղ* կապակցության մեջ հարակատարն ունի անանցողական իմաստ, իսկ *խըմուկ մ°ռթ* կապակցության մեջ՝ անցողական:

է հստակորեն արտահայտել բայի երեք սեռերն էլ, օրինակ, *կըդրուկ կ°թ* կապակցության մեջ դերբայն ունի չեզոք սեռի իմաստ, *կըդրուկ ծ°ռ* կապակցության մեջ՝ կրավորական սեռի իմաստ, իսկ *ծ°ռը կըդրուկ մ°ռթ* կապակցության մեջ՝ ներգործական սեռի իմաստ: Բաղադրական *վ* ածանցը հարակատար դերբայում պահպանվում է. գըժվուկ, թէդրափոխվուկ, քամբըխվուկ ևն: Իրենց *վ* ածանցը պահպանում են նաև կրավորակերպ չեզոք մյուս բոլոր բայերը, ինչպես՝ *օլըրվուկ, կըսկըվուկ, մ°շվուկ, կ°ոքըվուկ, թըրաշվուկ, ս°նդըրվուկ* ևն: Հետաքրքրական է, որ այս խմբի բայերի հարակատար դերբայը առանց *վ* ածանցի կարող է արտահայտել կրավորականության և ներգործականության իմաստներ: Այսպես, *թըրաշվուկ տղա* կապակցության մեջ դերբայը չեզոք սեռի է, մինչդեռ *թըրաշուկ գ՛ըլ օխ* կապակցության մեջ՝ կրավորական սեռի, իսկ *իմ գ՛ըլ օխը թըրաշուկ տղա* կապակցության մեջ՝ ներգործական սեռի: Որոշչային կիրառության հետևանքով Բայազետի բարբառում հարակատար դերբայի մի շարք ձևեր վերածվել են նաև ածականի՝ *քընուկ, ճըլխուկ* (փոքրամարմին), *կիստուկ* (կարճահասակ), *թըռուկ* (անհավասարակշիռ), *նեխուկ* (նեղացկոտ), *խախտըվուկ* (խանգարված), *խասուկ* (հասուն), *տ°փուկ* (ծածկամիտ), *գ՛ըրօղի գ՛ալուկ, գ՛էտինմըտուկ* ևն: Գոյականաբար գործածվելով՝ հարակատար դերբայը ենթարկվում է Ի հոլովման, ստանում *ներ* հոգնակերտ մասնիկ և հոդեր (նըստուկի, նըստուգները, գ՛ըրուկըս, գ՛ըրուկըտ): Նախադասության մեջ կարող է ունենալ գոյականին բնորոշ բոլոր կիրառությունները: Այս դերբայը առանձին կամ դերբայական դարձվածի կազմում հաճախ դառնում է ձևի պարագա (*Կ°յնուկ* լավ աերէվում), ժամանակի պարագա (Լը տեղ չըխասուկ՝ յետդ՛ առցար): Իր անկախ կիրառություններին զուգահեռ՝ այս դերբայը մասնակցում է նաև սահմանական եղանակի հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևերի կազմությանը կրավորական սեռի և չեզոք սեռի՝ վիճակ և դրություն ցույց տվող բայերի դեպքում[1283]:

Արարատյան բարբառից բացի՝ մերձավոր բոլոր բարբառներն ունեն *ուկ* մասնիկով հարակատար: Վանի բարբառում, ըստ Հ.Աճառ-

[1283] Ա.Աբրահամյանը ներկայացրել է բարբառիս *պ°ոկել* և *նեղնալ* բայերի խոնարհման պատկերը այդ ժամանակաձևերում, ինչպես՝ *պպոկուկ եմ, նեղցուկ եմ, պպոկուկ ի, նեղցուկ ի* ևն (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 393):

յանի, *ած*-ով դերբայի գործածությունը սահմանափակվում է նրանով, որ այն չի մասնակցում դիմավոր ձևերի կազմությանը, իսկ չեզոք և կրավորական բայերի համար իբրև դերբայական մասնիկ գործածվում է *ուկ*-ը [1284]: Լեզվաբանը նշում է, որ վերջինս «....միջին հայերենում հնարված էր հատկապես կրավորական իմաստի համար, ուստի առանց *վ* մասնիկի: Իսկ Վանի բարբառում կրավորական բայերն էլ իրենց *վ* մասնիկով կազմում են այսպիսի դերբայներ»[1285]: Մշո բարբառի համար ևս նշվում է, որ *ուգ* վերջավորությամբ դերբայական ձևը ներգործական նշանակությամբ չի գործածվում: Ինչպես Բայազետի բարբառում, հարակատարի *ած* վերջավորությամբ ձև հանդես է գալիս վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում[1286]: Այս նույն իրողությունը դիտարկելով Ալաշկերտի խոսվածքում՝ Ք.Մադաթյանը իրավացիորեն գրում է, որ այստեղ *ած* վերջավորությամբ դերբայը ցույց է տալիս անցյալում կատարված գործողություն, բայց առանց հետևանքայնության, չունի ինքնուրույն գործածություն, մինչդեռ խոսվածքում բուն հարակատար դերբայը կազմվում է *ուգ* վերջավորությամբ[1287]: Այս նույն իրավիճակն է ներկայացնում նաև Դիադինի բարբառը: Խոյ-Մարաղայի բարբառում, ինչպես նշվում է, *ած* և *ուկ* վերջավորվող դերբայական ձևերը իմաստով և գործածությամբ գրեթե միմյանցից չեն տարբերվում, սակայն ավելի գործուն և կենսունակ է առաջինը[1288]: Արարատյան բարբառում հարակատար դերբայը ձևավորվում է *ած* մասնիկով[1289]: Բոլոր բարբառների համար ընդհանուր են հարակատար դերբայի հիմքակազմությունը և կիրառությունները[1290]:

[1284] Տե՛ս ՔՎԲ, էջ 193: Ինչպես վերևում տեսանք, նույն իրողությունը սխալմամբ վերագրվել է նաև Բայազետի բարբառին:
[1285] Նշվ. աշխ., էջ 194:
[1286] Տե՛ս ՄԲ, էջ 110:
[1287] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 109:
[1288] Տե՛ս ԽԲ, էջ 102:
[1289] Ռ.Մարկոսյանը գրում է, որ բարբառի մի քանի խոսվածքներ Բայազետի և Մշո բարբառների նման չեզոք և կրավորական բայերի հարակատարը կազմում են *ուկ* մասնիկով (տե՛ս ԱԲ, էջ 145): Իրականում այդ խոսվածքները կամ ներկայացնում են այլ բարբառներ, կամ էլ կրել են այլ բարբառների ազդեցություն, ուստի իրողությունը Արարատյան բարբառին հատուկ չի կարող համարվել:
[1290] Այս առումով դիտարկվող բոլոր բարբառները նմանվում են գրական արևելահայերենին: Փաստորեն, դիտարկվող բոլոր բարբառներն էլ, ըստ հարակատար դերբայի ձևաբանական արժեքի, ներկայացնում են Ա.Աբրահամյանի առանձնացրած՝ հայերենի բարբառների և գրավոր լեզվի տարբեր շրջանների

Ենթակայական դերբայը Բայազետի բարբառում ունի *օղ* վերջավորություն, որն ավելանում է Ե խոնարհման բոլոր բայերի ներկայի հիմքի վրա. *°ճօղ, թըռնօղ, կըտըռտօղ, կըրվօղ, կ°ռթըսվօղ, մօտկըցընօղ*: Պատճառական բայերը *օղ* մասնիկ կարող են ստանալ նաև անցյալի հիմքի վրա. *մօտկըցըրօղ, խասկըցըրօղ, հ՛իչըցըրօղ*: Ա խոնարհման բայերը ենթակայականի *օղ* մասնիկ ստանում են և՛ անցյալի, և՛ ներկայի հիմքերի վրա. *բօռացօղ / բօռօղ, գիցօղ / գիդօղ, մ°ցօղ / մընօղ, ճ°նչըցօղ / ճ°նչընօղ* ևն[1291]: *Գ՛ալ* և *լ°լ* բայերը *էկօղ, լ°ցօղ* ձևերին զուգահեռ ունեն *գ՛ալօղ, լ°լօղ* ձևեր: Կրկնասեռ բայերը ենթակայական դերբայում ևս նույն ձևով կարող են արտահայտել և՛ ներգործականության, և՛ կրավորականության ու չեզոքության իմաստներ, ինչպես՝ *բ՛աժակ ջ՛առթօղ ճիժ* (բաժակ կոտրող երեխա) և *ջ՛առթօղ բ՛աժակ* (կոտրվող բաժակ):

Ինչպես հայտնի է, ենթակայական դերբայը ցույց է տալիս առարկայի՝ գործողության կատարման հետ կապված վիճակ, ունակություն[1292], այսինքն՝ այն համատեղում է գործողության և հատկանիշի գաղափարներ: Ենթակայական դերբայի արտահայտած գործողության գաղափարը որոշակիորեն ընդգծվում է, երբ դերբայը օժանդակ բայի ժխտական ձևերի հետ արտահայտում է գործողության կատարումից հրաժարում կամ գործողության անկարելիության վերաբերյալ համոզմունք, ինչպես՝ *Յես էտի խաքնօղ/ը/չեմ* (Ես այդ չեմ հագնի), *Դ՛ու էտի գ՛ըթնօղ/ը/չես* (Դու այդ գտնել չես կարող), *Էնի էտի ուտօղ/ը/չէ* (Նա այդ չի ուտի), իսկ նույն կարգի դրական ձևերով արտահայտվում է համոզմունք դժվար իրականանալի գործողության կատարման վերաբերյալ. *Դ՛ու էտի ն°ղդ գ՛ըթնօղ ես* (Դու այդ հաստատ գտնելու ես), *Էնի հաստատ էտ փողը բ՛էրօղ ա* (Նա հաստատ այդ փողը բերելու է): Այսպիսի կիրառություններում, փաստորեն, առաջնահերթ է ենթակայական

առաջին խումբը, որտեղ «....հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմվող բաղադրյալ ժամանակներում հարակատար դերբայը սովորաբար ներգործական սեռի չի լինում, այլ լինում է կամ չեզոք սեռի, կամ կրավորական» (Ա.Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 367):

[1291] Նկատվել է, որ առանձին խոսվածքներում Ա խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքից, և իբրև օրինակ բերվել են Սևանի և Ն.Բայազետի շրջանների առանձին խոսվածքներ (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 236):

[1292] Տե՛ս Ս.Աբրահամյան և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 311:

դերբայի՝ որևէ գործողություն ցույց տալու հատկանիշը՝ կամային երանգով և ապառնու իմաստով: Ի դեպ, խոսակցական լեզվում ժխտական օժանդակ բայի հետ ենթակայական դերբայի նման կիրառությանն անդրադառնալով՝ լեզվաբանները նշում են, որ կառույցն արտահայտում է ապառնիության իմաստ[1293]: Ենթակայական դերբայի հատկանշային իմաստը ընդգծվում է, երբ այն օժանդակ բայի հետ անորոշ առումով ցույց է տալիս գործողությունը իբրև առարկայի բնորոշ հատկանիշ կամ ունակություն, ինչպես՝ *Էտ °խճիկը լավ երքող ա Քամին շ°տծ°կող ա*[1294]: Հատկանշային իմաստից է բխում նաև այն, որ այս դերբայը կարող է գործածվել գոյականաբար՝ ստանալով որոշիչ հոդ և հոլովվելով: Այս դեպքում ստորոգելիի դերում որոշյալ ենթակայականը ցույց է տալիս առարկայի ով կամ ինչ լինելը՝ այդ բնութագրելով գործողությամբ, օրինակ՝ *Էսի քո գ՛իրք բ՛էրողն ա*: Ենթակայական դերբայի ամենատարածված կիրառությունը, իհարկե, որոշչի դերում հանդես գալն է. *գ՛ալող տ°րի, խասկըցող °խճիկ* ևն: Գոյականաբար գործածվելով՝ այս դերբայը ենթարկվում է Ի հոլովման, ստանում հոդեր, ունենում հոգնակիի ձև և նախադասության մեջ կատարում գոյականին հատուկ դերեր: Ենթակայական դերբայի ածականական և գոյականական կիրառությունների արդյունքում այդ դերբայից առաջացել են ածականներ, ինչպես՝ *լըսող, հ՛իմացող, խըմող, կ°մէցող, խասնող, մ°ն էկող, բաշարող, սորվող, շուն °ռնող-շուն ծ°խող* (առևտրի մարմաջ ունեցող), նաև գոյականներ՝ *սիրող* (սիրեկան), *հ՛իշկող* (գուշակ), *վարող-վաստըկող* (նխտ. ծնող), *մ°զ կըդրող* (վարսավիր), *գ՛աճ քաշող* (գաջող վարպետ), *դ՛աս տըվող* (վատ խորհրդատու), *շոր կ°րող* (դերձակ), *միս °րող* (մսագործ), *դ°մ պատող* (նվագակից), *տեղ փորող* (գերեզմանափոր) ևն: Ինչպես նկատել է Ա.Աբրահամյանը, ի տարբերություն գրաբարի՝ միջին հայերենում, աշխարհաբարում և բոլոր բարբառներում ենթակայական դերբայի կիրառությունն անսահմանափակ է, բոլոր բայերը առանց բացա-

[1293] Տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 395, Մ.Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, էջ 249:

[1294] Մ.Ասատրյանը գտնում է, որ ենթակայական դերբայի՝ որպես ստորոգելիական վերադիր նման գործածությունը բխում է նրա որոշչային պաշտոնից (նույն տեղում):

ռության կարող են արտահայտվել ենթակայական դերբայով[1295]: Բոլոր այդ դրսևորումներում այս դերբայի ձևերը անցյալի հիմքից կազմվում են միայն Ախոնարհման բայերի դեպքում[1296]: Մեր կողմից դիտարկվող բոլոր բարբառներում ենթակայական դերբայի վերջավորությունն է *օղ*, նույնն են նաև կազմությունները ըստ ներկայի ու անցյալի հիմքերի:

Անկատար դերբայը Բայազետի բարբառում ունի *ում* վերջավորություն, որն ավելանում է բոլոր բայերի ներկայի հիմքի վրա, ինչպես՝ *բ՛ըրում, վազնում, կըտրռտում, օլ ըրվում, թըռցընում, մը-նում, գ՛օղնում, ծըմըրկըտում* ևն: *Գ՛ալ, լ°լ, տալ* բայերի դեպքում *ում* վերջավորությունն ավելանում է անորոշի վրա՝ *գ՛ալում, լ°լում, տ°լում*: Այս դերբայը մասնակցում է սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի կազմությանը և օժանդակ բայի հետ նախադասության մեջ դառնում է ստորոգյալ: Այս դերբայական ձևն ունի նաև Արարատյան բարբառը՝ *ըմ, ում* վերջավորություններով. Այստեղ դերբայն ունի նույն կիրառությունները, ինչ Բայազետի բարբառում[1297]: Ս.Բաղդասարյան-Թափալցյանը փաստում է, որ Արարատյան բարբառի խոսվածքներում ավելի տարածված են *ըմ*-ով ձևերը[1298]: Լեզվաբանը կարծում է, որ բարբառի որոշ խոսվածքներում հանդիպող *տալում, տալըմ, լալում, լալըմ, գալում, գալըմ* ձևերը Արարատյան բարբառի համար բնորոշ չեն և արդյունք են Բայազետի բարբառի ազդեցության[1299]: Անկատար դերբայ ունի նաև Խոյ-Մարաղայի բարբառը՝ *լիս*-ից առաջացած իր երկու տարբերակներով[1300]: Ինչպես հայտնի է, հայ լեզվաբանությունը անկատար դերբայի *ում* մասնիկը կապում է ներգոյական հոլովի *ում* վերջավորության հետ[1301]: Փաստվել է, որ

[1295] Տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 233:
[1296] Տե՛ս նշվ. աշխ, էջ 235:
[1297] Տե՛ս ԱԲ, էջ 144:
[1298] Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 126:
[1299] Տե՛ս նշվ. աշխ, էջ 127:
[1300] Մ.Ասատրյանը գրում է, որ այս բարբառում անկատար դերբայն ունի 2 տարբերակ՝ *ս* և *հ* (*ը*): Առաջին ձևը կազմվում է անորոշից՝ նրա *լ* լծորդը փոխելով *ս*-ի (կյիրէս, մընաս), երկրորդը անորոշի վրա ավելացնում է *հ* (էփէլի) կամ *ը* (էփէլը), այլ խոսվածքներում՝ ոչինչ (մընալ) (տե՛ս ԽԲ, էջ 99):
[1301] Տե՛ս Ա.Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, էջ 203, Մ.Աբեղյան, նշվ. աշխ, էջ 254, Հ.Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935, էջ 263, Ա.Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 84, Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Ե., 1964, էջ 46:

այս դերբայն ունեցող բոլոր բարբառները միաժամանակ ունեն նաև ներգոյական հոլով, և ընդհակառակը՝ ներգոյական հոլով չունեցող բարբառները չունեն նաև *ում* վերջավորությամբ անկատար դերբայ[1302]: Բայազետի բարբառը դուրս է մնում այս օրինաչափությունից, որովհետև ներգոյական հոլով չունի: Լիովին ընդունելի համարելով անկատարի առաջացման վերաբերյալ հայագիտության մեջ տարածված տեսակետը՝ պետք է եզրակացնենք, որ Բայազետի բարբառում *ում* վերջավորությամբ դերբայը արդյունք է ոչ թե համակարգի ինքնուրույն զարգացման, այլ Արարատյան բարբառի ազդեցության: Դժվար է ճշգրիտ որոշել Բայազետի բարբառում այս դերբայի առաջացման ժամանակը, բայց ակնհայտ է, որ դրա գործառությունը բարբառումս պետք է սկսված լինի Արարատյան բարբառում այդ դերբայի ամբողջական ձևավորվածության ու կիրառության պայմաններում, Արարատյանի հետ շփումները ավելի սերտ դառնալու պարագայում և սահմանական ներկայի՝ այդ բարբառին բնորոշ ձևը կիրառելու շնորհիվ: Եթե նկատի ունենանք, որ միջին հայերենի զարգացման առաջին շրջանում *ում* վերջավորությամբ անկատար դերբայով կազմված ժամանակաձևերի դեռևս մեկ-երկու օրինակներ են հանդիպում[1303], բայց 17-րդ դարի կեսերից արդեն տարբեր հեղինակներ լայնորեն օգտագործում են *ում* և *իս* վերջավորություններով անկատար դերբայի, ներգոյական հոլովի ձևեր[1304], ինչպես նաև այն, որ վաղ աշխարհաբարի ենթաշրջանում է (17-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի կեսերը), որ Արարատյան բարբառն արդեն ուներ Ում բարբառաճյուղի ձևավորված հատկանիշները[1305], պետք է կարծել, որ նրա ազդեցությամբ Բայազետի բարբառում *ում*-ով ներկայի ի հայտգալը կարող է տեղի ունեցած լինել թերևս 18-րդ դարում: Համենայն դեպս, վստահաբար կարող ենք ասել, որ Բայազետի բարբառը *ում*-ով անկատար դերբայ ուներ 19-րդ դարի սկզբին՝ նախքան իր բնօրրանից կտրվելը, այսինքն՝ նախքան 1830 թվականը: Այդ է վկայում այն, որ Բայազետից 1830թ. գաղթած և Վարդենիսի տարածաշրջանի Ակունք

[1302] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ, էջ 164, նաև՝ Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 90:
[1303] Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 304:
[1304] Տե՛ս նշվ. աշխ, էջ 365:
[1305] Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 50:

գյուղում հաստատված բայազետցիների խոսվածքը[1306], ամբողջովին գտնվելով Կը ճյուղի բարբառային միջավայրում, թեև հնչյունական համակարգի առումով մեծապես ազդվել է Դիադինի բարբառից, սակայն ներկայի արտահայտության հարցում պահպանել է ընդհանրությունը մայր բարբառի հետ՝ ունենալով *ում*-ով դերբայ և դրանով ձևավորվող ժամանակաձևեր, ընդ որում՝ այստեղ ևս ներգոյական հոլովը բացակայում է:

Վաղակատար դերբայը Բայազետի բարբառում ունի *էր* (*եր,ե*) վերջավորություն[1307], որն ավելանում է Ե խոնարհման պարզ, բազմապատկական, կրավորական ածանց ունեցող բայերի ներկայի հիմքի վրա (թափէր, կուրէր, թափը ռտէր, կը րվէր) և Ե խոնարհման *ն, ցն* ածանց ունեցող ու Ա խոնարհման բոլոր բայերի անցյալի հիմքի վրա (խաքէր, կը ռվը ցը րէր, բօռացէր, ջ՛օչ ը ցէր): Ըստ կիրառության՝ *էր* վերջավորությունը կրում է հնչյունական փոփոխություններ. Օժանդակ բայի եզակի թվի երրորդ դեմքի հետ գործածվելիս վաղակատարի վերջավորությունն է *եր* (գ՛ ը ր եր ա), իսկ օժանդակ բային հաջորդելիս վաղակատարը ր-ի անկումով միշտ ունենում է *ե* (յես եմ գ՛ ը ր ե) վերջավորություն: Այս դերբայը մասնակցում է սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի կազմությանը և օժանդակ բայի հետ նախադասության մեջ դառնում է ստորոգյալ: Որոշ բայերի վաղակատար դերբայի ձևեր հաճախ իբրև եղանակավորող գործածվում են դիմավոր բայի ներկայի և անցյալի ձևերի հետ, ինչպես՝ *վէրցե °սե, կ°յնե °սում, նը ստե կ°ռթում, բ՛ ը ռնե °սե* ևն[1308]: Վաղակատար դերբայը *ր*-ով է վերջավորվում նաև Մշո (էր), Վանի (իր, եր, ե), Դիադինի (էր), Խոյ-Մարաղայի (իր) բարբառներում, *լ*-ով՝ Արարատյան բարբառում[1309]: Ծագելով հինհայերենյան անցյալ

[1306] Այս մասին տե՛ս նաև Հայաստանի հանրապետության բնակավայրերի բառարան, Ե., 2008, էջ 12:

[1307] Վաղակատարի այս ձևը վկայված է միջին հայերենի շրջանից (տե՛ս ԱՄԳՀՊ, էջ 307-30): Այս ձևն արձանագրելով Նոր-Բայազետի ենթաբարբառում (նաև Ում ճյուղի բարբառային այլ միավորներում)՝ Ա.Աբրահամյանը դրա առաջացումը բացատրում է *լ>ր* անցումով և հավանական չի համարում Կը ճյուղի բարբառների ազդեցությամբ առաջացած լինելը (Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 184-185):

[1308] Նման ձևեր արձանագրվել են նաև Մշո բարբառում (տե՛ս ՄԲ, էջ 108-109), Արարատյան բարբառում (տե՛ս Ս.Բաղդասարյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 129):

[1309] Նկատվել է, որ վաղակատարի *լ*-ով ձևեր գործառում են Ում ճյուղի Արարատյան, Աստրախանի, Ջուղայի, Ագուլիսի բարբառներում, իսկ ր-ով ձևեր՝ Կը ճյուղի

դերբայից՝ վաղակատարը միջին հայերենում արդեն դրսևորվում էր *ել* և *եր* վերջավորություններ ունեցող տարբերակներով[1310]: Ծրջակա բարբառները վաղակատար դերբայի հիմքակազմությամբ և կիրառությամբ Բայազետի բարբառից չեն տարբերվում: Ծրջուն շարադասության դեպքում *ր* - ն ընկնում է[1311], իսկ *լ* – ն հիմնականում պահպանվում է[1312]:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է համարել, որ ժխտական դերբայը, որ դրսևորվում է բայի՝ *կը* մասնիկով կազմվող ժամանակաձևերի ժխտական բնույթի խոնարհման մեջ, ծագում է անորոշ դերբայից, և դա ընդհանուր երևույթ է հայերենի համար[1313]: Եթե գրական հայերենում (նաև Արարատյան[1314] և Խոյ-Մարաղայի[1315] բարբառներում) ժխտական դերբայը վերջնականապես ձևավորվել է Ա խոնարհման բայերի *ա* (խաղա, հեռանա) և Ե խոնարհման բայերի *ի* (գրի, մտնի, մոտեցնի) վերջավորություններով, ապա բարբառներում հաճախման միասնական ձևավորում գոյություն չունի: Այսպես, Բայազետի բարբառում իբրև ժխտական դերբայ դիտվող բաղադրիչը, մասնակցելով ժխտական խոնարհման ենթադրական ապառնի և ենթադրական անցյալ ժամանակաձևերի կազմությանը, երկու դեպքում էլ հանդես է բերում կազմության զանազանություններ: Ճիշտ է, ենթադրական ապառնի ժամանակաձևում Ե խոնարհման բայերի ժխտա-

---

բարբառներում (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 180-182): Նշվել է, որ միջին հայերենի զարգացման երկրորդ շրջանում դեռ վաղ է վաղակատար դերբայի ձևերի զատորոշված կիրառություն փնտրել, ինչպիսին առկա է այժմ. մի կողմից՝ գրական արևմտահայերենում և Կը ճյուղի բարբառներում՝ *ր* վերջավորությամբ, մյուս կողմից՝ արևելահայ գրականում և Ոմ ճյուղի բարբառներում՝ *լ* վերջավորությամբ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 374):

[1310] Տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 172-177: Ըստ Հ.Աճառյանի՝ *եր* ձևը հնարվել է անորոշ և անցյալ դերբայների նույն ձևերի առաջացրած շփոթության առաջն առնելու համար (տե՛ս ԼՔՀԼ, հ. 5, էջ 30-31):

[1311] Տե՛ս ԽԲ, էջ 100, Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, էջ 111, ՔՎԲ, էջ 196: Հ.Աճառյանը կարծում է, որ *ր*-ի անկումը հաջորդ ձայնավոր հենարանի պակասության պատճառով է (տե՛ս նույն տեղում):

[1312] Ռ.Մարկոսյանը նշել է, որ Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներում ևս շրջուն շարադասության դեպքում վաղակատարի *լ*-ի անկում տեղի ունենում է (տե՛ս ԱԲ, էջ 148):

[1313] Տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 260-261: Ընդունված է այն տեսակետը, որ ժխտական դերբայը հատուկ է հայերենի բոլոր դրսևորումներին (գրաբարից բացի), առավել ապես Կը ճյուղի բարբառներին (տե՛ս ԱՄԳՀՊ, էջ 315):

[1314] Տե՛ս ԱԲ, էջ 146: Ա.Աբրահամյանը գրել է, որ Արարատյան բարբառում ժխտականի կազմության ժամանակ անորոշ դերբայը ոչ մի հնչյուն չի կորցնում, սակայն բարբառի մի շարք խոսվածքներում *լ*-ի անկում նկատելի է (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 258-259):

[1315] Այս բարբառի որոշ խոսվածքներում ժխտման դերբայի *ի*-ն թուլանալով դառնում է *ը* (տե՛ս ԽԲ, էջ 102):

կան դերբայն ունենում է *ի* վերջավորություն, իսկ Ա խոնարհման բայերի դեպքում՝ *ա* վերջավորություն, որոնք ավելանում են բայերի ներկայի հիմքի վրա (գ՛ըրի, նըստի, օլըրվի, խասկըցընի, էթա, մօտկընա), սակայն այդ ժամանակաձևում եզակի թվի երրորդ դեմքը ձևավորվում է ոչ թե ժխտական դերբայով և օժանդակ բայով, այլ դրական խոնարհման համապատասխան ձևից՝ *կը* եղանակիչը փոխարինելով *չը* ժխտական մասնիկով (կըգ՛ըրա - չըգ՛ըրա, կընըստի - չընըստի, կօլըրվի – չօլըրվի, կըկ°ռթա - չըկ°ռթա, կըսիֆտըկցընա - չըսիֆտըկցընա)[1316]: Ենթադրական անցյալի կազմում ժխտական դերբայը միշտ (նաև Ա խոնարհման բայերի դեպքում) ունենում է *ի* վերջավորություն, որն ավելանում է բոլոր բայերի ներկայի հիմքի վրա (կ°ռթի, խասկընի, խաքնի, ջ՛առթի, խասկըցընի): Այս իրավիճակը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Բայազետի բարբառում ժխտական դերբայի ձևավորման գործընթացը նույն կերպ չի ընթացել, ինչ հայերենի այլ դրսևորումներում: Թվում է՝ այստեղ ենթադրական եղանակի ժխտական ձևերը իրականում կազմվում են հաստատականի ձևերից (և ոչ թե անորոշ դերբայից՝ լ-ի անկումով)՝ հնչյունափոխական որոշ գործընթացներով, ինչպիսիք կարող են լինել՝ ա) օժանդակ բայի ժխտական ձևերում դիմաթվային վերջավորությունների առկայության պատճառով բուն բայաձևերում այդ վերջավորությունների անկում, ինչպես՝ կըկ°ռթամ – *չե*մ* կ°ռթա*մ* > չեմ կ°ռթա, կըկ°ռթաս – *չե*ս* կ°ռթա*ս* > չես կ°ռթա, կըկ°ռթանք – *չե*նք* կ°ռթա*նք* > չենք կ°ռթա, կըկ°ռթաք – *չէ*ք* կ°ռթա*ք* > չէք կ°ռթա, կըկ°ռթան – *չե*ն* կ°ռթա*ն* > չեն կ°ռթա, կըկ°ռթիր /կկարդայիր/ - *չի*ր* կ°ռթի*ր* > չիր կ°ռթի, կըկ°ռթինք /կկարդայինք/ - *չի*նք* կ°ռթի*նք* > չինք կ°ռթի, կըգ՛ըրի*ր* – *չիր գ՛ըրի*ր* > չիր գ՛ըրի, կըգ՛ըրիք – *չի*ք* գ՛ըրի*ք* > չիք գ՛ըրի ևն, բ) *ե* > *ի* անցում՝ թերևս վաղակատարի ժխտականի նույն ձևերից տարբերակվելու համար, ինչպես՝ կըգ՛ըրեմ – *չե*մ* գ՛ըրե*մ* > *չեմ գ՛ըրե (= չեմ գրել) > չեմ գ՛ըրի, կըգ՛ըրես – *չե*ս* գ՛ըրե*ս* > *չես գ՛ըրե (= չես գրել) > չես գ՛ըրի, կըգ՛ըրենք – *չե*նք* գ՛ըրե*նք* > *չենք գ՛ըրե (= չենք գրել) > չենք գ՛ըրի, կըգ՛ըրեն – *չեն գ՛ըրեն > *չեն գ՛ըրե (= չեն գրել) >

[1316] Դրական խոնարհման ենթադրական ապառնու եզակի երրորդ դեմքում ե խոնարհման բայերը ունենում են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ, որն արտահայտվում է նաև ժխտական խոնարհման դեպքում:

չեն գ՛ըրի ևն[1317], գ) համաբանություն, որի դրսևորում կարելի է տեսնել երկու դեպքում՝ 1. ապառնի ժամանակաձևում Ե խոնարհման մյուս բայերի ազդեցություն Ե խոնարհման *ն* ածանց ունեցող բայերի վրա, ինչպես՝ կըխաքնեմ – *չե*մ* խաքնե*մ* > *չեմ խաքնե > չեմ խաքնի (չեմ գ՛ըրի, չեմ գ՛ըրվի, չեմ թափըռտի), կըխաքնես – *չե*ս* խաքնե*ս* > *չես խաքնե > չես խաքնի (չես գ՛ըրի, չես գ՛ըրվի, չես թափըռտի) ևն, 2. անցյալ ժամանակաձևում եզակի թվի երրորդ դեմքի փոփոխություն մյուս ձևերի ազդեցությամբ, ինչպես՝ կըգ՛ըրէր – *չէ*ր* գ՛ըրէ*ր* > *չէր գ՛ըրէ > չէր գ՛ըրի (չի գ՛ըրի, չիր գ՛ըրի, չինք գ՛ըրի, չիք գ՛ըրի, չին գ՛ըրի), կըկ°ռթէր – *չէ*ր* կ°ռթէ*ր* > *չէր կ°ռթէ > չէր կ°ռթի (չի կ°ռթի, չիր կ°ռթի, չէր կ°ռթի, չինք կ°ռթի, չիք կ°ռթի, չին կ°ռթի): Դիմաթվային վերջավորությունների բացակայության դեպքում ուղղակի հաստատականի *կը*-ն փոխարինվում է *չ* ժխտականով (կըգ՛ըրա – չըգ՛ըրա, կընըստի – չընըստի, կըխաքնի – չըխաքնի, կըկ°ռթա - չըկ°ռթա, կըխասկընա – չըխասկընա ևն): Բայազետի բարբառում այս դերբայի արտահայտության յուրահատկությունների որոշ արձագանքներ կարելի է տեսնել Վանի բարբառում: Հ.Աճառյանը գրում է, որ այստեղ «Սահմանականի ներկան և անկատարը կազմելու համար վերցնում ենք բայի անորոշը, կտրում ծայրից *լ* ձայնը և խոնարհում էական բայի ներկայի և անկատարի հետ»[1318], սակայն այստեղ ևս անցյալի ձևերում Ա խոնարհման բայերի դերբայը *ա* վերջավորություն չունի՝ *չի խաղե, չիր խաղե, չէր խաղե*[1319]: Ալաշկերտի խոսվածքում արձանագրելով, որ Ե խոնարհման բայերի ներկաժամանակի ժխտական ձևերում դերբայն ունի *ի* վերջավորություն, իսկ անցյալի ձևերում՝ *է* վերջավորություն՝ Ք.Մադաթյանը եզրակացնում է, որ խոսվածքում «*ե* խոնարհման բայերի ժխտական դերբայի ձևավորումը դեռևս լրիվ չափով չի

[1317] Վանի բարբառում, ի տարբերություն Բայազետի բարբառի, Ե խոնարհման բայերի դեպքում ե>ի անցում տեղի չի ունենում, ուստի, ինչպես նշում է Հ.Աճառյանը, *չեմ լսե* նշանակում է և՛ *չեմ լսում*, և՛ *չեմ լսել*, և այդ երկուսը իրարից զանազանել անհնարին է (տե՛ս ՔՎԲ, էջ 185): Խոյ-Մարաղայի բարբառում «Է խոնարհման պարզ բայերի ժխտման դերբայը (կյիրի, վ°րի, պէրի և այլն) ձևով նույնանում է շրջուն ձևերում գործածված վաղակատար դերբայի հետ» (ԽԲ, էջ 103):

[1318] Տե՛ս ՔՎԲ, էջ 184;

[1319] Հ.Աճառյանը սա համարում է «...մի զարմանալի ձայնական երևույթ, որ ինձ անբացատրելի մնաց» (նշվ. աշխ., էջ 186):

ավարտվել է[1320]: Մշո բարբառում ժխտական դերբայն ունենում է *ի, ա, է* վերջավորություններ, ընդ որում՝ նույն բայը, ունենալով տարբեր լծորդություններով ձևեր, համապատասխանաբար կարող է ունենալ ժխտական դերբայի զուգահեռ ձևեր, ինչպես՝ (չըմ) *մըդնի, մըդնա*[1321]:

Ձևի կամ ընթացակցական դերբայը[1322] Բայազետի բարբառում ձևավորվում է *էն* կամ *ուն* մասնիկներով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վրա. *բօռբըռալ էն, խէվխըվալ էն, շօրօրալ էն, դ՛օղ-դ՛ըղալ էն, թ°լէլուն, թափէլուն, խօսալուն, հ՛իշկըռտալ էն, ցըրվէլուն, ցըփնէլուն, ծըղգալուն* ևն: Սրանք իմաստով նման են անորոշի գործիական հոլովաձևին և ցույց են տալիս գործողության կատարման ձև, սակայն, ի տարբերություն անորոշի գործիականի, բոլոր բայերից ձևի կամ ընթացակցական դերբայ չի կազմվում, որովհետև այս դերբայը ձևի հետ միասին արտահայտում է տվյալ գործողության՝ մեկ այլ գործողության հետ զուգորդման իմաստ, ինչը բոլոր բայերով չէ, որ հնարավոր է արտահայտել: Բայազետի բարբառում այս կազմության դերբայով արտահայտվում է նաև փոխհատուցման իմաստ. *նըստէլ էն* (նստելու համար կամ դիմաց), *տ°նէլ էն, բ՛էրէլ էն, կ°րէլ էն, ջ՛ըրէլ էն, փօրէլ էն, վարէլ էն, սըրըսկէլ էն, խօսալ էն, շ°րէլ էն, քաշէլ էն, քաղէլ էն, ա°խէլ էն, բ՛ացէլ էն* ևն: Ծրջակա բարբառներում ընթացակցական դերբայի առկայությունն արձանագրվել է՝ հիմնականում նույն ձևավորմամբ ու կիրառությամբ:

Բայազետի բարբառը չունի ապառնի դերբայ: Այս դերբայը չունեն նաև Մշո, Դիադինի բարբառները[1323]: Բայազետի բարբառը

[1320] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ, էջ 113-114:

[1321] Տե՛ս ՄԲ, էջ 114:

[1322] Ըստ Ա.Աբրահամյանի՝ այս դերբայը գոյություն ունի հայերենի մի զգալի մասում՝ միջին հայերենում, գրական արևմտահայերենում, Աստապատի ենթաբարբառում, Սևանի, Ն.Բայազետի, Ախտայի, Կոտայքի և այլ շրջանների խոսվածքներում և շատ օգտագործվում ժողովրդի խոսակցական լեզվում (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 262-263):

[1323] Ա.Աբրահամյանը այս դերբայի առկայությունը արձանագրել է Մշո բարբառում՝ բերելով «Էթանք չայիր, տէսնանք *քաղէլու* չէ°» օրինակը (տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 147), որտեղ, սակայն, *քաղէլու* ձևը ակնհայտորեն անորոշ դերբայի հոլովաձև է: Ս.Բաղդասարյան-Թափալցյանը, Մշո բարբառում ապառնի դերբայի լայն կիրառություն վկայելով, բերում է անորոշի սեռականի ձևեր՝ *ուդէլու հաց, կարքէլու տըղա* ևն (տե՛ս ՄԲ., էջ 107): Ճիշտ է, բերվում են նաև ապառնի դերբայով ժամանակային ձևեր, բայց նշվում է, որ դրանք բարբառում տարածված կիրառություն չունեն (նույն տեղում):

չունի նաև անորոշից *իք* մասնիկով ձևավորված դերբայական ձև: Նման ձևավորում ունեցող սակավաթիվ բառերը այստեղ գոյականներ են, ինչպես՝ *°նէլ իք, °սէլ իք, գ՛ալ իք, տ°լ իք, հ՛իրեսսիֆտըկցընէլ իք, կըշտընալ իք*, նաև՝ *տ°լ իք-տուլ ուք, տ°լ իք-°ռնէլ իք*: Որպես ածական գործածվում է *գ՛ալ իք* ձևը՝ *գ՛ալ իք տ°րի*, սրա կրճատ ձևն է՝ *գ՛ալ տ°րի*, նույն իմաստով հանդիպում է նաև՝ *գ՛ալ օղ տ°րի*: Վանի բարբառում արձանագրելով իք-ով ձև՝ Հ.Աճառյանը նշում է, որ այդ ձևը «....իբրև զուտ դերբայ չի գործածվում: Նա ավելի գոյական է և նշանակում է «այդպիսի բանե և կարող է փոխանակվել համանիշ մի գոյականով[1324]: Այդպես է և Բայազետի բարբառում: Ըստ Ս.Բաղդասարյան-Թափալցյանի՝ «Մշո բարբառում չափազանց տարածված է ապառնի դերբայի *իք* վերջավորությամբ ձևը»[1325]: Այս ձևը միայն շարահյուսական դեր ունի նաև Արարատյան բարբառում[1326]:

5.6. *Եղանակաժամանակային ձևեր*

Բայազետի բարբառում բայն ունի արդի հայերենին հատուկ հինգ եղանակներն ու գրեթե նույն ժամանակաձևերը: Ապառնի դերբայի բացակայությունը, բնականաբար, նշանակում է նաև դրանով կազմված ժամանակաձևերի բացակայություն: Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*[1327]: Ներկայի ձևերում Բայազետի բարբառին բնորոշ է եզակի թվի երրորդ դեմքում *է*-ի դիմաց *ա*-ի հանդես գալը, և այդ իրողությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ շատ տարածված է արդի խոսակցական հայերենում [1328]: Օժանդակ բայի *ա* ձևը արևելահայ բարբառներին բնորոշ իրողություն է: Ըստ Գ.Ջահուկյանի

[1324] ՔՎԲ, էջ 196:
[1325] ՄԲ, էջ 106:
[1326] Տե՛ս ԱԲ., էջ 144:
[1327] Շրջակա բարբառների համապատասխան ձևերն են՝ Վ. *եմ, ես, ի, ենք՝, էք՝, են* և *ի, իր, էր, ինք՝, իք՝, ին*, Մ. *իմ, իս, է, ինք, իք, ին* և *ի, իր, էր, ինք, իք, ին*, Դ. *եմ, ես, ա, ենք՝, էք՝, են* և *ի, իր, էր, ինք՝, իք՝, ին*, Ա. *էմ, էս, ա, էնք, էք, էն* և *ի, իր, էր, ինք, իք, ին*, Խ. *էմ, էս, ի, էնք՝, էք՝, էն* և *էմ էր, էս էր, էր, էնք՝ էր, էք՝ էր, էն էր*: Միջին հայերենի ձևերն են՝ եմ, ես, է, ենք , էք, են և էի, էիր, էր, էինք, էիք, էին (տե՛ս Ս.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 259):
[1328] Երևույթի դրսևորման առաջին վկայությունը վերաբերում է 13-րդ դարին (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 83):

բազմահատկանիշ դասակարգման աղյուսակների՝ այս հատկանիշը[1329] հատուկ է բարբառների արևելյան խմբակցության գրեթե բոլոր բարբառներին՝ բացառությամբ Խոյ-Մարաղայի, Արդվին-Թբիլիսիի և մի երկու այլ բարբառների: Արևմտյան խմբակցության բարբառներում այս հատկանիշը խիստ սակավադեպ է, եղած դեպքերում էլ հիմնականում ոչ լիարժեք է դրսևորվում[1330]: Անդրադառնալով հայերենի բարբառներում օժանդակ բայի դրսևորումներին՝ Հ.Աճառյանը նկատում է. «Հայտնի չէ ինչ պատճառով եզակի Գ դեմքի *է* ձևը դառնում է *ա*»[1331], ապա մի շարք բարբառների առնչությամբ, որոնցում ընդհանրապես օժանդակ բայը հանդես է գալիս *ա* արմատով, գրում է. «Ներկա եզակի Գ դեմքի *ա* ձևն սկսում է ազդել մյուս դեմքերի ձայնավորի վրա և նրանք էլ վերածում իր երանգին»[1332]: Հայերենի բարբառներում օժանդակ բայի ներկայի ձևերի վերաբերյալ Ա.Ղարիբյանը գրում է, որ տարբեր բարբառներ օժանդակ բայերի տարբեր արմատներ են օգտագործում, և դրանք բոլորը կապում է հնդեվրոպական բառերի թեմատիկ ձայնավորներին[1333]: Ինչ խոսք, տարբեր բարբառներում օժանդակ բայի դրսևորումների զանազանությունների պատճառ կարող են դառնալ տարբեր հանգամանքներ, սակայն դիտարկումները երևան են հանում մի ընդհանուր օրինաչափություն. որպես կանոն, եզակի թվի երրորդ դեմքում հանդես է գալիս մյուս ձևերի արմատական ձայնավորի համեմատությամբ ավելի բաց ձայնավոր, ինչպես՝ Թբիլիսիի բարբառում՝ *ի* - *է* (իմ, իս, է), Արարատյան և Աստրախանի բարբառներում՝ է - ա (էմ, էս, ա), Բայազետի բարբառում՝ ե - ա (եմ, ես, ա), Ղարաբաղի և Ագուլիսի բարբառներում՝ ը - ա (ըմ, ըս, ա), Կիլիկիայի բարբառում՝ ի - ը (իմ, իս, ը) ևն: Բայազետի բարբառում օժանդակ բայի *ա* ձևի առաջացումը թերևս հնարավոր է բացատրել հենց բարբառիս իրողություններով: Օժանդակ բայի ներկայի ձևերը այստեղ համընկնում են Ե խոնարհման բայերի ըղձական ապառնու ներգործաձև վերջավորություններին (գ՛ըրեմ, գ՛ըրես, գ՛ըրա, գ՛րենք, գ՛ըրէք, գ՛ըրեն և եմ, ես, ա, ենք, էք, են), մինչդեռ

[1329] «88. Օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի ա-ով ձև», ՀԲՆ, էջ 101:
[1330] Տե՛ս նշվ.աշխ., էջ 108-119:
[1331] ԼՔՀԼ, հ. 4 Բ, Ե., 1961, էջ 64:
[1332] Նշվ. աշխ., էջ 65:
[1333] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 169-170:

կրավորական խոնարհման դեպքում եզակի երրորդ դեմքում առկա է տարբերություն (գ՛ըրվեմ, գ՛ըրվես, գ՛ըրվի կամ նըստեմ, նըստես, նըստի)[1334]: Դիտարկվող *ա* ձևը, այսպիսով, Բայազետի բարբառում ուղղակիորեն կապվում է ըղձական ապառնու (ծագումով՝ հինհայերենյան ներկայի) համապատասխան ներգործական վերջավորության հետ և կարող է բխեցվել հենց դրանից[1335]: Բայց պարզվում է՝ այդ վերջավորությունն էլ իր հերթին ընդհանրություն ունի Ե խոնարհման բայերի եզակի հրամայականի ներգործական *ա* վերջավորության հետ. *գ՛ըրա՛, մօտկըցըրա՛*, ընդ որում՝ ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի կրավորական վերջավորությունն էլ համընկնում է եզակի հրամայականի կրավորական վերջավորությանը. ըղձ. *գ՛ըրվի, նըստի* - հրամ. գ՛*ըրվի, նըստի՛*: Եվ քանի որ Ե խոնարհման բայերի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի և եզակի հրամայականի վերջավորությունները բարբառումս նույնական են, ուրեմն օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի *ա* ձևը ընդհանրություններ ունի Ե խոնարհման բայերի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի ներգործական *ա* վերջավորության և նույն բայերի եզակի հրամայականի ներգործական *ա* վերջավորության հետ: Ի դեպ, ըղձական ապառնու երրորդ դեմքի ձևերը ևս *թо* (թող) եղանակավորող բառի հետ արտահայտում են հորդոր, պահանջ, հրաման (թо գ՛ըրա՛, թо բ՛երա՛, թо նըստի՛, թо կըրվի՛), և այս իրողությունը հայերենում (նաև բարբառներում) բավականին լայն տարածում ունի[1336]: Ասվածից կարելի է հետևեցնել, որ *եմ* բայի *ա* ձևը անուղղակիորեն կապվում է հրամայականի *ա* վերջավորության (գ՛ըրա՛) հետ, ուստի անհրաժեշտ

[1334] Այդպես էր և գրաբարում, որտեղ օժանդակ բայի ներկայի ձևերը համընկնում էին Ե խոնարհման բայերի ներկայի ներգործական վերջավորություններին (գրեմ, գրես, գրե, գրեմք, գրէք, գրեն և եմ, ես, է, եմք, էք, են) և արմատական հնչյունով տարբերվում կրավորական վերջավորություններից (գրիմ, գրիս, գրի, գրիմք, գրիք, գրին): Համապատասխանություն առկա է և Թբիլիսիի բարբառում (գըրիմ, գըրիս, գրէ և իմ, իս, է), մինչդեռ Արարատյան բարբառում (նաև գրական արևելահայերենում) համապատասխանությունը խախտված է (գ՛ըրէմ, գ՛ըրէս, գ՛ըրի և էմ, էս, ա):

[1335] Ըստ Ա.Ղարիբյանի՝ «Հայերեն լեզուն «ե» խոնարհման բայերի ներկայի և անցյալի անկատարի խոնարհումը կազմել է էյական բային զուգահեռ ձևով: ....բայարմատը մնացել է իբրև բայահիմք, իսկ էական բայերն ու դերանունները դարձել են նրահամար վերջավորություններ» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 163):

[1336] Հ.Աճառյանը անդրադարձել է *թո՛ղ* բառով և ըղձականի ձևերով կազմված կառույցներին և դրանք անվանել բարդ հրամայական (տե՛ս ԼՔՀԼ, հ. 4 Բ, էջ 163-171, ՔՎԲ, էջ 177-178):

է անդրադառնալ նաև հրամայականի բարբառային այդ ձևի ծագմանը: Եթե նկատի ունենանք, որ գրաբարում ներգործաձև խոնարհման դեպքում ցոյական հիմք ունեցող բայերի բուն հրամայականի եզակին կազմվում էր այդ հիմքի *ց*-ի անկումով և դրան նախորդող *ա*-ի շեշտումով (գրել - գրեաց – գրեա՛, ասել - ասաց – ասա՛, աղալ - աղաց – աղա՛), իսկ կրավորաձև խոնարհման դեպքում հրամայականն ուներ *հր* վերջավորություն, ապա կարելի է ենթադրել, որ հրամայականի բարբառային *ա* և *հ* վերջավորությունները հինհայերենյան հրամայականի արձագանքն են՝ համապատասխան հնչյունափոխություններով (գրաբ. գրեա՛ - բրբռ. գ՛ըրա՛, գրաբ. փախի՛ր - բրբռ. փախի՛):

Այսպիսով, պետք է կարծել, որ հինհայերենյան ձևից (գրեա՛) բխող *ա*վերջավորությամբ հրամայականի բարբառային ձևի (գ՛ըրա՛) համաբանական ազդեցությամբ Բայազետի բարբառում նախ *ա* է դարձել ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի ներգործաձև վերջավորությունը (թերևս *թo* եղանակավորողի հետ հրաման արտահայտելու իր գործառության շնորհիվ՝ *թo գ՛ըրա* /գ՛ըրեմ, գ՛ըրես, գ՛ըրա/, *թo պ°դմա* /պ°դմեմ, պ°դմես, պ°դմա/), ապա և օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի ձևը: Այն, որ գործընթացը տեղի է ունեցել այս ուղղությամբ, և օժանդակ բայի նախնական *է* ձևը վերածվել է *ա*-ի, վկայում է ժխտականի՝ *է*-ն պահպանած *չէ* ձևը (չեմ, չես, չէ, չենք, չէք, չեն): Հետաքրքրական է, որ այլ բարբառներում ևս դիտարկվում է ուղղակի համապատասխանություն օժանդակ բայի՝ քննության առարկա ձևի, ե խոնարհման բայերի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի և եզակի հրամայականի վերջավորությունների միջև[1337]: Հավանական է, որ Բայազետի և այլ բարբառներում կամ խոսվածքներում առաջացած օժանդակ բայի *ա* ձևը վերևում հիշատակված՝ եզակի երրորդ դեմքում ավելի բաց ձայնավորի դրսևորման միտումի շնորհիվ տարածվել է նաև այլ բարբառներում և ընդհանրացել խոսակցական հայերենում: Ինչ

[1337] Այսպես, Վանի բարբառում օժանդակ բայի համապատասխան ձևն է *հ*, և ե խոնարհման բայերի ստորադասական ներկայի եզակի երրորդ դեմքն ու եզակի հրամայականը ունեն *հ* վերջավորություն, Խոյ-Մարաղայի բարբառում նույնպես երեք դեպքերում էլ առկա է *հ*, Դիադինի բարբառում և Ալաշկերտի խոսվածքում երեք դեպքում էլ առկա է *ա*, Կարնո և Երզնկայի բարբառներում՝ *է*, Համշենի բարբառում՝ °:

վերաբերում է օժանդակ բայի անցյալի ձևերին, ապա Բայազետի բարբառում առկա է երկձայնավոր ձևերի մեջ (նաև ըղձական անցյալում) *է*-ի սղում (էի, էիր, էինք, էիք, էին ~ ի, իր, ինք, իք, ին): Այս դեպքում ևս յուրահատուկ ձևերի առաջացումը գալիս է ըղձականի ձևերից, մանավանդ որ ըղձական անցյալում խոնարհիչը բացակայում է ոչ միայն Ե, այլ նաև Ա խոնարհման բայերի դեպքում. *գ՛ըրել – գ՛ըրի, գ՛ըրիր, գ՛ըրէր, գ՛ըրինք, գ՛ըրիք, գ՛ըրին. մընալ – մընի, մընիր, մընէր, մընինք, մընիք, մընին*: Այսինքն՝ Բայազետի բարբառի այս ժամանակաձևում վերջավորությունների և բայահիմքի միջև բացակայում է խոնարհիչը, և հենց այդ վերջավորություններն էլ հանդես են գալիս իբրև օժանդակ բայի անցյալի ձևեր: Այս իրողությունը ևս բնորոշ է արևելյան խմբակցության բարբառներին (բացառությամբ Աստրախանի, Թբիլիսիի, Մեղրու, Ագուլիսի, Խոյ-Մարաղայի բարբառների): Արևմտյան խմբակցությունում այս հատկանիշը հատուկ է Մշո, Վանի և Դիադինի բարբառներին: Այսպիսով, Բայազետի բարբառում առկա է ուղղակի համապատասխանություն *եմ* բայի ձևերի և ըղձականի համապատասխան վերջավորությունների միջև, և առաջինների յուրահատկությունները պայմանավորված են երկրորդներով[1338]:

եմ օժանդակ բայի ներկայի ձևերի դրսևորումներով Բայազետի բարբառին ավելի մոտ են Դիադինի (*եմ, ես, ա, ենք՝, էք՝, են*) և Արարատյան՝ (*էմ, էս, ա, էնք, էք, էն*) բարբառները: Իր ձևերով առանձնանում է Մշո բարբառը (*իմ, իս, է, ինք, իք, ին*): Անցյալի ձևերը դիտարկվող բոլոր բարբառներում նույնն են, բացառություն են Խոյ-Մարաղայի բարբառի յուրահատուկ կազմությունները (*էմ էր, էս էր, էր, էնք՝ էր, էք՝ էր, էն էր*)[1339]: Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում անցյալ ժամանակի եզակի թվի առաջին դեմքում

[1338] Փաստելով որոշ բարբառներում օժանդակ բայի անցյալի անկատարի ձևերի և ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակի վերջավորությունների զուգահեռ բացակայությունը՝ Ա.Ղարիբյանը գրում է. «Այդ մի ուժեղ ապացույց է այն բանի, որ հայերեն դիմավոր բայերի վերջավորությունները օժանդակ բայի ձևերն են» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 178):

[1339] Ինչպես նշում է Մ.Ասատրյանը, այս բարբառում օժանդակ բայի անցյալի իմաստ արտահայտելու համար գործածվում է *էր* բառ-մասնիկը, որը դրվում է ներկայի ձևերի վրա (տե՛ս ԽԲ, էջ 103): Ա.Ղարիբյանը նշում է, որ այդ *էր* մասնիկը օժանդակ բայի երրորդ դեմքի *էր* ձևն է, որը դիմազրկվելով ցույց է տալիս միայն անցյալի գաղափար (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 180):

հանդես է գալիս *մ* մասնիկով ձև՝ *իմ* (գըրըմ իմ – գրում էի)[1340]: Ուշագրավ է նաև, որ Մշո բարբառում օժանդակ բայի հոգնակի թվի ներկայի և անցյալի ձևերը նույնն են՝ *ինք, իք, ին*:

5.6.1. *Սահմանական եղանակ*

Բայազետի բարբառում այս եղանակն ունի մեկ համադրական (անցյալ կատարյալ) և վեց վերլուծական ժամանակաձևեր: Վերլուծական ժամանակաձևերն են՝ անկատար ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ: Անկատար ներկա և հարակատար ներկա ժամանակաձևերը վերաբերում են ներկա ժամանակին, մյուսները՝ անցյալ ժամանակին: Բարբառումս սահմանական եղանակը ապառնի ժամանակի ձևեր չունի:

Անկատար ներկա

Այս ժամանակաձևը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, ինչպես՝ *գ՛ըրում* եմ, ես, ա, ենք, էք, են. *կ°ռթում* եմ, ես, ա, ենք, էք, են: Հաճախ եզակի թվի երրորդ դեմքը արտահայտվում է առանց օժանդակ բայի, ինչի գոյությունը, սակայն, հասկացվում է. օրինակ՝ *°սված ս°րը տէնում /ա/, ձ՛ունը դ՛ընում /ա/*: Դերբային նախորդող դիրքում *ա* օժանդակ բայը միշտ արտահայտվում է, ինչպես՝ *Բիզը սըրօղին ա ծ°կում*: Անկատար ներկա ժամանակաձև ունենում են բոլոր բայերը: *Գալ, լալ, տալ* անկանոն բայերը այս (և անկատար անցյալ) ժամանակաձևը կազմում են դերբայական անկանոն *գ՛ալում, լ°լում, տ°լում* ձևերով: Պակասավոր բայերը այս ժամանակաձևի իմաստն արտահայտում են համադրական ձևերով՝ *գիդամ, կ°մ, եմ, ունեմ, °ժեմ:* Ներկայում կատարվող գործողությունից բացի՝ այս ժամանակաձևով արտահայտվում են նաև առկա իրողություններ (Մեր գ՛եղի ճ°մփէն Հ՛ացառատամը չ օվ ա հ՛ընցնում), կրկնվող երևույթներ (Բօստընները հ՛օկտեմբերին ենք քանդում), կատարվելիք գործողություն (Հ՛էքուց էթում եմ Հ՛երէվան): Ժամանակաձևը շատ գործածական է ասացվածքներում՝ *Յարէն տիրոշն ա ցավ տ°լում*: Այս ժամանակաձևով կարող է

[1340] Ա.Ղարիբյանը նշում է, որ այդ *մ*-ն հայերենի առաջին դեմքի սովորական վերջավորություն է (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 178):

արտահայտվել նաև պատմական ներկան. *Մէ օր էլ էտխառնէթում խօրտունը, մօրը գ՛անգըտում*: Սակայն ի տարբերություն Ում ճյուղի այլ բարբառների՝ Բայազետի բարբառում պատմական ներկան հաճախ արտահայտվում է ենթադրական ապառնու ձևերով: Անկատար ներկա ժամանակաձևը նույն կերպ է արտահայտվում Արարատյան բարբառում՝ *էթըմ էմ, կարթըմ էմ*[1341]: Խոյ-Մարաղայի բարբառում ևս ներկան կազմվում է իրեն հատուկ անկատար դերբայով՝ *կ՚իրէս էմ, կ՚°ռթաս էմ* : Վանի, Մշո, Դիադինի բարբառներում ներկան արտահայտվում է Կը ճյուղի բարբառներին հատուկ եղանակով[1342]:

Հարակատար ներկա[1343]

Կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով: Այս ժամանակաձևն ունեն վիճակ, դրություն ցույց տվող չեզոք բայերը, ինչպես նաև չեզոք կամ կրավորական սեռերի իմաստով գործածվող ներգործական բայերը, ինչպես՝ *նըստուկ* եմ, ես, ա, ենք, էք, են. *կ°ոքըվուկ* եմ, ես, ա, ենք, էք, են. *խաքուկ* եմ, ես, ա, ենք, էք, են. *կէրուկ* եմ, ես, ա, ենք, էք, են: Այս ժամանակաձևում առկա են դիմաթվային սահմանափակումներ: Բոլոր ձևերը հնարավոր են, եթե խոսքը կարող է վերաբերել նաև անձի վիճակին կամ դրությանը, բայց երբ խոսքը վերաբերում է միայն առարկայի բնորոշ վիճակների, ապա գործածական են միայն երրորդ դեմքի ձևեր. *դ՚ըրուկ ա, են. բ՚ուսուկ* ա, են. *ճըղուկ* ա, են. *գ՚ըծուկ* ա, են. *ճըմըռտուկ* ա, են: Ի տարբերություն օժանդակ բայի ներկայի ձևերով կազմված այլ ժամանակաձևերի, որոնցում եզակի թվի երրորդ դեմքում օժանդակ բայը հաճախ չի արտահայտվում (գ՚ըրում ա–գ՚ըրում, գ՚ըրեր ա–գ՚ըրե), այս ժամանակաձևում օժանդակ բայը միշտ արտահայտվում է (քընուկ ա): Դիտարկվող բարբառները ներգործական սեռի բայերով հարակատար ներկա չեն կազմում:

Անկատար անցյալ

[1341] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ Թումանյանի և Նոյեմբերյանի տարածաշրջանների խոսվածքներում ներկան և անցյալ անկատարը գրաբարաձև կազմություն ունեն (տե՛ս ԱԲ, էջ 147):

[1342] Դիադինի բարբառն ունի նաև շարունակական ներկայի ձևեր, որոնք կազմվում են *կօ* մասնիկով, ինչպես՝ *կօ կը գ՚ըրեմ, կօ կը կառթամ*:

[1343] Հարակատար դերբայով ձևավորված ինչպես այս, այնպես էլ *հարակատար անցյալ* կառույցները ժամանակաձև համարելու հարցում կան տարակարծություններ (տե՛ս Ռ.Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 155, Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 243):

Կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով. *գ՛ըրում* ի, իր, էր, ինք, իք, ին. *կ°ռթում* ի, իր , էր, ինք, իք, ին: Պակասավոր բայերը այս ժամանակաձևի իմաստն արտահայտում են համադրական ձևերով՝ *գիդի* (գիտեի), *կի* (կայի), *ունի* (ունեի), *°ժի* (արժեի): Այս ժամանակաձևով կարող է արտահայտվել նաև անցյալում պարբերաբար կատարված գործողություն. *Հ՛ըմընօր հ՛առավոտ հ՛ըլնում ի, էթում ի հ՛ախպուրը*: Սակայն այդ իմաստը հաճախ արտահայտվում է ենթադրական անցյալով: Մերձավոր բարբառներում այս ժամանակաձևն արտահայտվում է նույն եղանակներով, ինչ անկատար ներկան, ուղղակի համադրական ձևերում հանդես են գալիս անցյալի վերջավորությունները, իսկ վերլուծական ձևերում՝ օժանդակ բայի անցյալի ձևերը:

Հարակատար անցյալ

Ձևավորվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով: Այս ձևն ունեն նույն այն բայերը, որոնք ունեն հարակատար ներկայի ձևեր, օրինակ՝ *նըստուկ* ի, իր, էր, ինք, իք, ին. *կ°ռքըվուկ* ի, իր, էր, ինք, իք, ին: Այստեղ ևս առկա են դիմաթվային նույն սահմանափակումները, ինչ հարակատար ներկայի դեպքում: Մերձավոր բարբառները, ըստ ժամանակաձևի կազմության եղանակի, ներկայացնում են նույն պատկերը, ինչ հարակատար ներկայի դեպքում:

Վաղակատար ներկա

Ձևավորվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով. *գ՛ըրէր եմ, գ՛ըրէր ես , գ՛ըրեր ա / գ՛ըրե, գ՛ըրէր ենք, գ՛ըրէր էք, գ՛ըրած / գըրէր են. կ°ռթացէր եմ, կ°ռթացէր ես, կ°ռթացեր ա / կ°ռթացե, կ°ռթացէր ենք, կ°ռթացէր էք, կ°ռթացած / կ°ռթացէր են*: Այս ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքում *ա* օժանդակ բայից առաջ դերբայն ունի *եր* վերջավորություն՝ մյուս ձևերի *էր* վերջավորության դիմաց[1344]: Բացի այդ՝ երկու թվերի երրորդ դեմքերում առկա է զուգաձևություն: Եզակի թվում ամբողջական

[1344] Վանի բարբառում նույնպես եզակի երրորդ դեմքում *ի* դարձած օժանդակ բայից առաջ վաղակատարի *իր* վերջավորությունը դառնում է *եր*, ինչպես՝ *ուզիր եմ, ուզիր ես, ուզեր ի* ևն (տե՛ս ՔՎԲ, էջ 180):

ձևին զուգահեռ գործածվում է նաև միայն դերբայը, այն էլ՝ *ր*-ի անկումով (*դ՛ըրեր ա - դ՛ըրե*), իսկ հոգնակի երրորդ դեմքում վաղակատար ներկայի նշանակությամբ հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև՝ առանց օժանդակ բայի, որին զուգահեռ գործածական է նաև կանոնավոր վաղակատար ներկան (Ընդոնք *գ՛ացած* թադրոն - Ընդոնք *գ՛ացէր են* թադրոն): Հոգնակի երրորդ դեմքում գործառում են նաև *գ՛ացած ա, գ՛ացած են* տիպի ձևեր, որոնցում օժանդակ բայի թիվը, փաստորեն, էական չէ: Համանման արտահայտություն ունի վաղակատար ներկան Ալաշկերտի խոսվածքում: Այստեղ ևս եզակի երրորդ դեմքը կարող է գործածվել նաև առանց օժանդակ բայի (Կարօն ցօրեն քաղե, ախծե պըռձե), իսկ վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակաձևերի հոգնակի երրորդ դեմքի ձևերում հանդես է գալիս *աձ* վերջավորությամբ դերբայական ձև (*քաղաձ ա՝* քաղել են, *քաղաձ էն՝* քաղել էին)՝ ի տարբերություն եզակի թվի ու հոգնակի առաջին ու երկրորդ դեմքերի՝ *եր* վերջավորությամբ ձևերի (քաղեր իմ, քաղեր իս, քաղեր ա, քաղեր ինկ, քաղեր իկ)[1345]: Ալաշկերտի խոսվածքում ևս *աձ* վերջավորությամբ դերբայական ձևը այլ կիրառություն չունի, իսկ հարակատար դերբայը ձևավորվում է *ուգ* վերջավորությամբ[1346]: Դիտարկումները ցույց են տալիս, որ Ալաշկերտի խոսվածքի իրողություններով հնարավոր է բացատրել Բայազետի բարբառի վաղակատար ներկայում *աձ*-ով ձևի հանդես գալը: Այդ խոսվածքում ներկաժամանակում օժանդակ բայի եզակի և հոգնակի թվերի երրորդ դեմքերի համար գործառում է նույն *ա* ձևը (իմ, իս, *ա*, ինկ, իկ, *ա*)[1347], ուստի, օրինակ, *քաղեր ա* ձևը կարող էր նշանակել և՛ *քաղել է*, և՛ *քաղել են*: Իմաստային այս շփոթը վերացնելու համար էլ, կարծում ենք, խոսվածքում վաղակատար ներկայի հոգնակի թվի երրորդ դեմքի արտահայտության համար գործածական է դարձել Մշո բարբառում գործառող՝ հարակատարի *աձ*-ով ձևը[1348], և *քաղել է* իմաստն արտահայ-

[1345] Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 123:
[1346] Նշվ. աշխ., էջ 109, 111:
[1347] Տե՛ս նշվ. աշխ., էջ 117:
[1348] Ի դեպ, Մշո բարբառում ևս (տե՛ս ՄԲ, էջ 110) *աձ* վերջավորությամբ հարակատար դերբայով և համապատասխան օժանդակ բայով արտահայտվում են նաև վաղակատար ներկայի և վաղակատար անցյալի իմաստներ, ընդ որում՝ միայն հոգնակի թվում: Հետաքրքրական է, որ թեև Ս.Բաղդասարյան-Թափալցյանը չի նշում, բայց նրա բերած օրինակները վերաբերում են միայն հոգնակի թվի երրորդ դեմքին (Մըշու

տելու համար պահպանվել է *քաղեր ա* ձևը, իսկ *քաղել են* իմաստն արտահայտվել է *քաղած ա* ձևով: Կարծում ենք՝ Ալաշկերտի խոսվածքի ազդեցությամբ էլ Բայազետի բարբառում ի հայտ են եկել վաղակատար ժամանակների *ած*-ով ձևերը, մանավանդ որ այստեղ, ի տարբերություն Ալաշկերտի խոսվածքի, գործառում են նաև վաղակատար դերբայով զուգահեռ ձևեր (*գ՛ըրած / գ՛ըրէր են*): Բացի այդ՝ Բայազետի բարբառի օրինաչափություններով որևէ կերպ բացատրելի չէ *գ՛ըրած ա* (գրել են) տիպի կառույցը, մինչդեռ Ալաշկերտի խոսվածքում *ա*-ն նաև հոգնակիի իմաստ է արտահայտում: Եվ, ի վերջո, պատահական չէ, որ Բայազետի բարբառում հոգնակի թվի երրորդ դեմքում այդ *ա*-ին երբեմն փոխարինում է *են*-ը (*գ՛ըրած են*), կամ էլ *ա*-ն սովորաբար չի գործածվում (բարբառումս հոգնակիի իմաստ չունենալու պատճառով), և դերբայական ձևը առանձին արտահայտում է նաև հոգնակի երրորդ դեմքի իմաստ (*գ՛ըրած՝* գրել են): Նշենք, որ համանման իրողություններ առկա են նաև Դիադինի բարբառում, և այստեղ ևս պետք է տեսնել Ալաշկերտի խոսվածքի ազդեցությունը: Վանի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառները վաղակատար ներկայի ձևավորման հարցում յուրահատկություններ հանդես չեն բերում: Վաղակատար ներկան հաճախ է դրսևորվում ասացվածքներում, ինչպես՝ *Բ՛ուռթը կընդե, խառվե գ՛առնէրին. Գ՛իլվանքի °նուննա հ՛էլե, °ղվըզներն °շխարքն °վիրած*: Այս ժամանակաձևով կարող է արտահայտվել նաև ապառնու իմաստ՝ *Վոր հ՛էլէրեմ կ°յնէրեմ, չէ՛, բ՛ուռթըտքամուն կըտամ*:

Վաղակատար անցյալ

Կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով. *գ՛ըրէր ի, գ՛ըրէր իր , գ՛ըրէր էր, գ՛ըրէր ինք, գ՛ըրէր իք, գ՛ըրէր ին / գ՛ըրած ին. կ°ռթացէր ի, կ°ռթացէր իր, կ°ռթացէր էր, կ°ռթացէր ինք, կ°ռթացէր իք, կ°ռթացէր ին / կ°ռթացած ին*: Ի տարբերություն վաղակատար ներկայի՝ այս ժամանակաձևում բոլոր ձևերում դերբայն ունի *էր* վերջավորություն: Զուգաձևություն

էգած է, մըր գ՛եղ ախչիգ է հավնած – Մուշից եկել են մեր գյուղը, աղջիկ են հավանել)[1348]: Նկատենք, որ Մշո բարբառում նույնական են օժանդակ բայի ներկայի և անցյալի հոգնակի թվի ձևերը՝ *ինք, իք, ին*, և *գ՛ըրէր ին* նշանակում է և՛ *գրել են*, և՛ *գրել էին*, ուստի այստեղ էլ *էգած է* (եկել են), *հավնած է* (հավանել են) ձևերի գործածությամբ վաղակատար ներկայի ձևերը տարբերակվում են վաղակատար անցյալի ձևերից (*հավնէր ին, հավնած ին*՝ հավանել էին):

կա միայն հոգնակի թվի երրորդ դեմքում, և ավելի սովորականը վաղակատարի բուն ձևով կազմվածն է (գ՛ըրէր ին), իսկ *ած*-ով կազմությունը (գ՛ըրած ին) թերևս գործածվում է վաղակատար ներկայի հոգնակի երրորդ դեմքի ձևի (գ՛ացած) համաբանությամբ: Ինչպես վաղակատար ներկա, այնպես էլ վաղակատար անցյալ ժամանակաձևերում շրջուն շարադասության դեպքում վաղակատարի վերջավորության *ր-ն* ընկնում է:

Մերձավոր բարբառները, ըստ վաղակատար անցյալ ժամանակաձևի կազմության եղանակի, հիմնականում ներկայացնում են նույն պատկերը, ինչ վաղակատար ներկայի դեպքում: Մշո բարբառում վաղակատար ներկայի և անցյալի հոգնակիի ձևերը նույնական են (երկու դեպքում էլ՝ խըմէր ինք, իք, ին), Ալաշկերտի խոսվածքում վաղակատար անցյալի երրորդ դեմքում գործառում է ներկայից տարբեր ձև՝ *քաղած էն*: Խոյ-Մարաղայի բարբառում անցյալի կազմությունն առանձնանում է օժանդակ բայի յուրահատուկ ձևով՝ *կ՚իրիր էմ էր*:

Անցյալ կատարյալ

Սահմանական եղանակի միակ պարզ ժամանակաձևն է: Բայազետի բարբառում ունի ներգործաձև և կրավորաձև առանձին վերջավորություններ: Ներգործաձև վերջավորություններն են՝ *ի, իր, եց / ø, ինք, իք, ին*, կրավորաձև վերջավորություններն են՝ *ա, ար, ավ, անք, աք, ան*:

Ներգործաձև են խոնարհվում.

ա) Ե խոնարհման ներգործական սեռի պարզ և բազմապատկական ածանց ունեցող բայերը, չեզոք սեռի՝ վիճակ, դրություն չենթադրող մի շարք բայեր: Սրանց անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է անցոյական հիմքից, ինչպես՝ *գ՛ըրի, գ՛ըրիր, գ՛ըրեց, գ՛ըրինք, գ՛ըրիք, գ՛ըրին. ճ°նգըռթի, ճ°նգըռթիր. գ՛անգըտի, գ՛անգըտիր*: Բայց և գործածվում են նաև այս բայերի՝ անցյալի ցոյական հիմքից կազմված ձևերը. *գ՛ըրէցի, գ՛ըրէցիր, ճ°նգըռթէցինք, ճ°նգըռթէցիք, գ՛անգըտէցին* ևն:

բ) Ե խոնարհման պատճառական բայերը՝ անցյալի ռեական հիմքով՝ *մօտկըցըրի, մօտկըցըրիր, մօտկըցըրեց, մօտկըցըրինք, մօտկըցըրիք, մօտկըցըրին*:

գ) Ա խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող բայերը՝ անցյալի ցոյական հիմքով, ինչպես՝ *կ°ռթացի, կ°ռթացիր, կ°ռթաց, կ°ռթացինք, կ°ռթացիք, կ°ռթացին. հ՛իշկըռտացի, հ՛իշկըռտացիր, հ՛իշկըռտաց* ևն:

Կրավորական են խոնարհվում.

ա) Ե խոնարհման չեզոք սեռի պարզ, բազմապատկական և կրավորական ածանց ունեցող բայերը՝ անցոյական հիմքով, ինչպես՝ *նըստա, նըստար, նըստավ, նըստանք, նըստաք, նըստան. փոնթըռտավ, փոնթըռտան*[1349]. *խընթըրվորա, խընթըրվորար, խընթըրվորավ, խընթըրվորանք, խընթըրվորաք, խընթըրվորան. փըրգըվա, փըրգըվար, փըրգըվավ, փըրգըվանք, փըրգըվաք, փըրգըվան*:

բ) Ե խոնարհման *ն* ածանց ունեցող բայերը, ինչպես՝ *խաքա, խաքար, խաքավ, խաքանք, խաքաք, խաքան*:

գ) Ա խոնարհման *ն, էն* ածանց ունեցող բայերը՝ ցոյական հիմքով, ինչպես՝ *խասկըցա, խասկըցար, խասկըցավ, խասկըցանք, խասկը-ցաք, խասկըցան. վախէցա, վախէցար, վախէցավ, վախէցանք, վախէցաք, վախէցան*:

Կրկնասեռ բայերը անցյալ կատարյալում խոնարհվում են և՛ ներգործական, և՛ կրավորական՝ յուրաքանչյուր դեպքում արտահայտելով համապատասխան անցողական կամ անանցողական սեռային իմաստ, ինչպես՝ *վառի /էցի/, վառիր /էցիր/, վառեց, վառինք /էցինք/, վառիք /էցիք/, վառին /էցին/ - վառա, վառար, վառավ, վառանք, վառաք, վառան*: Բայերի՝ ըստ ներգործական և կրավորական խոնարհումների այս տարբերակումը դրսևորվում է նաև այդ խոնարհումների համար տարբեր ձևեր ունեցող մյուս բոլոր դեպքերում: Անցյալ կատարյալով կարելի է արտահայտել նաև անմիջական ապառնի (Դը լավ, յես գ՛ացի), ըղձական ապառնի (Յեփ վոր էկար, էն գ՛ախ էլ կըստանաս) ժամանակների իմաստներ:

Անցյալ կատարյալ ժամանակաձևը շատ է գործածվում ասացվածքներում, ինչպես՝ *°նձըրեվից փախանք, հ՛ընգանք կ°ոկըթի տ°կ. էշը կէրավ՝ պոչին խըռովավ*:

Շրջակա բարբառներից անցյալ կատարյալ ժամանակաձևում ներգործական և կրավորական խոնարհումների առկայությամբ Բայազե-

տի բարբառի հետ ընդհանրություն ունեն Դիադինի, Խոյ-Մարաղայի, Մշո և Վանի բարբառները, Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերի հիմքակազմությամբ՝ Մշո, Դիադինի բարբառները (և՛ ոչ ցոյական, և՛ ցոյական հիմքերով): Ինչպես վերևում տեսանք, Խոյ-Մարաղայի բարբառում այս բայերի անցյալ կատարյալը ունի միայն ոչ ցոյական հիմք, իսկ Վանի բարբառում՝ հիմնականում ցոյական հիմք: Խոյ-Մարաղայի բարբառը անցյալ կատարյալի եզակի թվի առաջին դեմքում ունենում է *մ՝ կ՚իրիմ, կ՚°ռթացիմ, փախամ* ևն: Այս իրողությունը դրսևորվում է նաև Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում[1350]:

5.6.2. *Ըղձական եղանակ*

Այս եղանակի ապառնի և անցյալ ժամանակաձևերը ձևավորվում են բոլոր բայերի ներկայի հիմքից: Ըղձական ապառնի ժամանակաձևում Ա խոնարհման բայերն ունենում են *ամ, աս, ա, անք, աք, ան* վերջավորությունները, ինչպես՝ *կ°ռթամ, կ°ռթաս, կ°ռթա, կ°ռթանք, կ°ռթաք, կ°ռթան*: Ե խոնարհման բայերն ունենում են *եմ, ես, ա/ի, ենք, էք, են* վերջավորություններ: Եզակի թվի երրորդ դեմքի զուգահեռ վերջավորությունները ներգործաձև և կրավորաձև խոնարհումների արտահայտիչներ են. եթե բայը խոնարհվում է ներգործաձև, եզակի երրորդ դեմքում ունենում է *ա* վերջավորություն[1351], իսկ եթե խոնարհվում է կրավորաձև՝ *ի* վերջավորություն, ինչպես՝ ներգ. *գ՛ըրեմ, գ՛ըրես, գ՛ըրա, գ՛ըրենք, գ՛ըրէք, գ՛ըրեն*. կրավ. *նըստեմ, նըստես, նըստի, նըստենք, նըստէք, նըստեն*: Կրկնասեռ բայերը ևս իրենց սեռային յուրահատկությունները դրսևորում են եզակի երրորդ դեմքում, ինչպես՝ ներգ. *վառեմ, վառես, վառա, կրավ. վառեմ, վառես, վառի*: Ժխտական խոնարհման ըղձական ապառնու երկրորդ դեմքի ձևերը հրամայական հնչերանգով արտահայտում են հրաման, պատվեր, ինչպես՝ *Զ՛եռ չի՛տաս, մէջը տօկ կ°. Չէ՛թաս ըտոնց տունը*: Երրորդ դեմքի ձևերով և *թօ* (թող) եղանակավորող բառով արտահայտվում է մի երրորդ անձի (կամ՝ անձերի) վերաբերող հորդոր կամ

[1349] Կան այս կարգի բայեր, որոնք ունեն միայն երրորդ դեմքի ձևեր, որովհետև անձի կատարած գործողություն չեն ցույց տալիս:
[1350] Տե՛ս ԱԲ, էջ 149:

պահանջ, ինչպես՝ *թո մէշու շուտքընից հ՛ըլնի*[1352]: Այս ժամանակաձևով կարելի է արտահայտել նաև անցյալում կատարված գործողություն՝ *էթամ տէնամ՝ տունը բ՛առցած °քլօրի*: Ըղձական ապառնիով են հիմնականում արտահայտվում օրհնանքներն ու անեծքները՝ *Չոր տեղ էթաս՝ կ°նանչ բ՛ուսի. °քլօր նըստես՝ բ՛ըփկօվ քըշես*: Ծրջակա բոլոր բարբառներում ըղձական ապառնու կազմության եղանակները և միջոցները նույնն են (Ա. տանէմ, իմանամ, Վ. ուզեմ, խաղամ, Խ. կ՝իրէմ, կ՝°ռթամ, Մ. խըմիմ, մընամ): Միայն Դիադինի բարբառում և Ալաշկերտի խոսվածքում, ինչպես Բայազետի բարբառում, եզակի թվի երրորդ դեմքում Ե խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող բայերի դեպքում հանդես են գալիս ներգործաձև և կրավորաձև առանձին վերջավորություններ (Դ. գ՛ըրա, նըստի, Ալ. քաղա, նըստի):

Ըղձական անցյալը Բայազետի բարբառում բոլոր բայերի դեպքում ունի միևնույն վերջավորությունները՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*, ինչպես՝ *կ°ռթի, կ°ռթիր, կ°ռթէր, կ°ռթինք, կ°ռթիք, կ°ռթին. գ՛ըրի, գ՛ըրիր, գ՛ըրէր, գ՛ըրինք, գ՛ըրիք, գ՛ըրին*[1353]: Կրկնասեռ բայերը նույն ձևով կարող են արտահայտել և՛ անցողականության, և՛ անանցողականության իմաստներ, ինչպես՝ *մ°շի* (մաշեի, մաշվեի), *մ°շիր* (մաշեիր, մաշվեիր), *մ°շէր* (մաշեր, մաշվեր), *մ°շինք* (մաշեինք, մաշվեինք), *մ°շիք* (մաշեիք, մաշվեիք), *մ°շին* (մաշեին, մաշվեին): Ըղձական անցյալի ձևերով կարող է արտահայտվել նաև խիստ ցանկալի, բայց դժվար իրականանալի գործողության իմաստ, ինչպես՝ *Հ°շկ հ՛ըլնէր՝ մեր խողերը յետտին, էթինք մեր յերգիր*: Վանի, Դիադինի և Մշո բարբառներում ըղձական անցյալը ձևավորվում է նույն կերպ, ինչ Բայազետի բարբառում, այսպես՝ Վ. *ուզի, խաղի*, Դ. *գ՝ըրի, կառթի*, Մ. *խըմի, մընի*: Արարատյան բարբառի

[1351] Այս հատկանիշը, Բայազետի բարբառից բացի, ունեն միայն արևմտյան բարբառախոս մի քանի վայրեր (տե՛ս ՀԲՆ, էջ 108-119):

[1352] *Թող* եղանակիչ-բառով և ըղձականի 1-ին, բայց առավելապես 3-րդ դեմքերի բայաձևերով թելադրանքի բնույթ ունեցող կառույցներ գործառում էին դեռևս միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 342): Վանի բարբառում *թող / թո* մասնիկով կառույցը դիտարկելով՝ Հ.Աճառյանը այն համարել է հրամայականի բարդ ձև (տե՛ս ՔՎԲ, էջ 177-178):

[1353] Ինչպես Ե, այնպես էլ Ա խոնարհման բայերի ըղձական անցյալի ձևերում ժամանակաձևի ընդհանուր վերջավորություններից առաջ, երկձայնավոր կառույցներից խուսափելու մղումով, եղանակիչներն ընկնում են (գ՛ըրե+ի > գ՛ըրի, կ°ռթա+ի > կ°ռթի), և ձևավորվում են երկու խոնարհումների համար ընդհանուր վերջավորություններ:

որոշ խոսվածքներում եղանակիչների անկում տեղի չի ունենում, և բայերն ըստ խոնարհումների ունենում են *էյի, էյիր, էր, էյինք, էյիք, էյին, այի, այիր, ար, այինք, այիք, ային* վերջավորությունները[1354]: Խոյ-Մարաղայի բարբառում ըղձական անցյալը կազմվում է ապառնուց՝ *էր* մասնիկի հավելումով (կ՚իրէմ-կ՚իրէմ էր)[1355], իսկ Ալաշկերտի խոսվածքում երկու խոնարհումների համար ընդհանուր վերջավորություններն են՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*[1356]:

5.6.3. *Ենթադրական եղանակ*

Ըղձականի պես ունի երկու ժամանակաձև՝ ապառնի և անցյալ, որոնք համապատասխանաբար ձևավորվում են ըղձական ապառնի և ըղձական անցյալ ժամանակաձևերից՝ *կը* եղանակիչի հավելումով: Ենթադրական ապառնիի օրինակներ. Ա խոնարհում՝ *կըկ°ռթամ, կըկ°ռթաս, կըկ°ռթա, կըկ°ռթանք, կըկ°ռթաք, կըկ°ռթան*, Ե խոնարհում ներգործաձև՝ *կըգ՛ըրեմ, կըգ՛ըրես, կըգ՛ըրա, կըգ՛ըրենք, կըգ՛ըրէք, կըգ՛ըրեն*. կրավորաձև՝ *կընըստեմ, կընըստես, կընըստի, կընըստենք, կընըստէք, կընըստեն*: Ենթադրական ապառնիում ևս կրկնասեռ բայերը միայն եզակի երրորդ դեմքում ունեն ներգործաձև և կրավորաձև առանձին վերջավորություններ, իսկ մյուս դեպքերում՝ վերջավորությունները ընդհանուր են՝ *կըծըռեմ* (կծռեմ, կծռվեմ), *կըծըռես* (կծռես, կծռվես), *կըծըռա* (կծռի) / *կըծըռի* (կծռվի), *կըծըռենք* (կծռենք, կծռվենք), *կըծըռէք* (կծռեք, կծռվեք), *կըծըռեն* (կծռեն, կծռվեն):

Այս ժամանակաձևով Բայազետի բարբառում արտահայտվում են նաև պարբերաբար կրկնվող գործողություններ[1357], ինչպես՝ *Հ՛ըմընօր լուսը չըբ՛ասվուկ գ՛ըքա կ°սա °րի էթանք մեր տուն՝ կօֆէ խըմենք*: Այս ժամանակաձևը Բայազետի բարբառում շատ հաճախ

[1354] Տե՛ս ԱԲ, էջ 150;
[1355] Տե՛ս ԽԲ, էջ 107:
[1356] Տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 120, 124:
[1357] Նշվել է, որ այս դեպքում ենթադրական ապառնին կորցնում է իր եղանակային նշանակությունը և հավասարարժեք է դառնում սահմանական եղանակի ներկա ժամանակին: Ընդ որում՝ նման կիրառությունը հատուկ է հատկապես ժողովրդախոսակցական լեզվին (տե՛ս Աբրահամյան Ս. և ուրիշներ, ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 394):

գործառում է իբրև պատմական ներկա[1358], ինչպես՝ *Վոր կըխասնի ք°վ°ռ, դուզը կէթաէտ մ°ռթի տունը, դ՛ուռը կըտըփա, կ°սա՝ հ՛էլի, էկէր եմ °խճիկըտ °ռնեմ:* Կարծում ենք՝ Կը ճյուղի բարբառների ներկային բնորոշ այս կարգի կիրառությունները թույլ են տալիս ենթադրել, որ Բայազետի բարբառը, նաև ներգոյական հոլով չունենալով, նախկինում պատկանել է բարբառների Կը ճյուղին: Եթե ներկա ժամանակի հիմնական կիրառության դեպքում անցումը Ում ճյուղին լիակատար է, ապա այլ դեպքերում Կը ճյուղին բնորոշ իրողություններ են պահպանվել:

Այս ժամանակաձևի երկրորդ դեմքի ձևերը բարբառումս գործառում են նաև հրամայականի իմաստով, ինչպես՝ *Հ՛մա մըկա գ՛ըլ նե՛ս, կէթա՛ս շօրերըտկըփոխե՛ս*:

Ծրջակա բարբառային միավորներում ևս համապատասխան ձևերը կազմվում են ըղձականի ապառնու վրա *կը* -ի հավելումով, սակայն Վանի, Մշո, Դիադինի բարբառներում ձևավորված կառույցները ոչ թե ենթադրական եղանակի, այլ սահմանականի ներկայի ձևեր են[1359]: Վանի բարբառում միավանկ *գամ, տամ, լամ* բայերի մոտ դրվում է *կու*[1360], Մշո բարբառում՝ *գ՛ի* կամ *կի*[1361], Դիադինի բարբառում՝ *գ՛ու* կամ *կու*[1362]: Դիադինի բարբառում այս ձևը *կօ* մասնիկի հետ արտահայտում է շարունակական ներկայի իմաստ՝ *կօ կը գ՝ըրեմ*:

Ենթադրական անցյալի օրինակներ. *կըկ°ռթի, կըկ°ռթիր, կըկ°ռ-թէր, կըկ°ռթինք, կըկ°ռթիք, կըկ°ռթին, կըգ՛ըրի, կըգ՛ըրիր, կըգ՛ըրէր, կըգ՛ըրինք, կըգ՛ըրիք, կըգ՛ըրին*: Կրկնասեռ բայերը նույն ձևով արտահայտում են և՛ անցողականության, և՛ անան-ցողականության իմաստներ՝ *կըմ°շի* (կմաշեի, կմաշվեի), *կըմ°շիր* (կմաշեիր, կմաշվեիր), *կըմ°շէր* (կմաշէր, կմաշվէր), *կըմ°շինք* (կմաշեինք, կմաշվեինք), *կըմ°շիք* (կմաշեիք, կմաշվեիք), *կըմ°շին* (կմաշեին, կմաշվեին): Բայազետի բարբառում շատ տարածված է

[1358] Պատմական ներկայի մասին տե՛ս նշվ. աշխ., էջ 362:

[1359] Ս.Բաղդասարյան-Թափալ ցյանը նշում է, որ սահմանականի ներկայի ձևերը Մշո բարբառում գործածվում են նաև ապառնի ժամանակը և պայմանական եղանակը արտահայտելու համար (տե՛ս ՄԲ, էջ 118): Ինչպես հավաստում է Ա.Ղարիբյանը, «Վանի բարբառում այդ ձևը միաժամանակ նշանակում է և՛ ներկա, և՛ սահմանական ապառնի, և՛ պայմանական ապառնի: Յես կըկ՝իրեմ -նշանակում է՝ ես գրում եմ, ես գրելու եմ, ես կգրեմ» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 175): Այդպես է և Դիադինի բարբառում (տե՛ս նաև ԴԲ, էջ 80-81):

[1360] Տե՛ս ՔՎԲ, էջ 176:

[1361] Տե՛ս ՄԲ, էջ 167-168:

ենթադրական անցյալի կիրառությունը անցյալում պարբերաբար կատարված գործողություն ցույց տալու համար[1363], ինչպես՝ *Վայ վադա մ°ռթ էր, կէթէր կըկ°յնէր ըստու ընդու պ°տի տ°կը, վոր մէ բ՛ան լ ըսէր, մ°դնըչութուն °նէր*:

Ըղձականից *կը* մասնիկով կազմված ձևերը Վանի, Մշո և Դիադինի բարբառներում կազմում են սահմանական անցյալի անկատար ժամանակաձևը, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում՝ ենթադրական եղանակի ձևեր:

5.6.4. *Հարկադրական եղանակ*

Ապառնի և անցյալ ժամանակաձևերը ձևավորվում են համապատասխանաբար ըղձական ապառնի և ըղձական անցյալ ժամանակաձևերից՝ *պըտի* եղանակիչի հավելումով[1364]: Հարկադրական ապառնու օրինակներ. *պըտի կ°ռթամ, պըտի կ°ռթաս, պըտի կ°ռթա, պըտի կ°ռթանք, պըտի կ°ռթաք, պըտի կ°ռթան, պըտի գ՛ըրեմ, պըտի գ՛ըրես, պըտի գ՛ըրա, պըտի գ՛ըրենք, պըտի գ՛ըրէք, պըտի գ՛ըրեն*. կրավորական՝ *պըտի նըստեմ, պըտի նըստես, պըտի նըստի, պըտի նըստենք, պըտի նըստէք, պըտի նըստեն*: Բայազետի բարբառում այս ձևով է արտահայտվում նաև սահմանականի ապառնու իմաստը՝ *Հ՛էքուց պըտի էթամ Սէվան*:

Հարկադրական անցյալի օրինակներ. *պըտի կ°ռթի, պըտի կ°ռթիր, պըտի կ°ռթէր, պըտի կ°ռթինք, պըտի կ°ռթիք, պըտի կ°ռթին, պըտի գ՛ըրի, պըտի գ՛ըրիր, պըտի գ՛ըրէր, պըտի գ՛ըրինք, պըտի գ՛ըրիք, պըտի գ՛ըրին*: Հարկադրական եղանակում կրկնասեռ բայերը իրենց դրսևորում են այնպես, ինչպես ըղձական և ենթադրական եղանակներում: Բայազետի բարբառում ևս հարկադրականի եղանա-

---

[1362] Տե՛ս ԴԲ, էջ 99-100:

[1363] Այսպիսի կիրառությունը բայաձևերին սահմանականի անցյալ անկատարի իմաստ է հաղորդում (տե՛ս Աբրահամյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 397): Պետք է կարծել, որ ինչպես այս, այնպես էլ ենթադրական ապառնու՝ պատմական ներկայի իմաստով կիրառությունները գալիս են միջինհայերենյան շրջանից:

[1364] Բայազետի բարբառում գործառում է *քե ինչ պիտի* «լիովին բավարար. ինչ որ անհրաժեշտ է» արտահայտությունը, որում հետաքրքրականորեն պահպանվել է *պիտիմ* բայի դիմավոր ձև. *Էնքան շոր էր բ՛էրե՝ քե ինչ պիտի*: Ունենք նաև *մ°ռթ պիտի* («մարդ եմ ասել, որ...») քարացած կառույցը, ինչպես՝ *Մ°ռթ պիտի, վոր ընդու ն°զ ու տուզը կ°նա տ°նա*: Միջին հայերենում շարունակել են գործունլինել *պիտիմ* բայի ներկայի և անկատարի ձևերը, գրեթե մեր օրերում էլ այդ բայը իր բուն իմաստով գործածական է եղել (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 345):

կիչի և բուն բայաձևի միջև կարող են հանդես գալ այլ բառեր. *Յես պըտի՛ էսօր՝ հրկունշուտգ՛ամ*:

Ծրջակա բարբառները նույնպես հարկադրական եղանակի իրենց ձևերը կազմում են ըղձականից՝ համապատասխան եղանակիչներով: Վանի բարբառում գործառում է *պիտի* եղանակիչը (Մոկաց ենթաբարբառում՝ *տը*)[1365], Դիադինի բարբառում՝ *պըտի*, Մշո բարբառում՝ *բըդի*: Արարատյան բարբառում գործառում են *պիտի* եղանակիչի հնչյունական զանազան տարբերակներ՝ *տէմ, տէս, տի, տէնք, տէք, տէն, պըտէմ, պըտէս, պըտի* ևն, որոնք կարող են նաև հետադաս կիրառվել [1366]: Այս բարբառում հարկադրականի յուրօրինակ կազմություն է ներկայացնում Ա.Ղարիբյանը՝ *գ՛ըրիլ պըտէմ, գ՛ըրիլ պըտէս, գ՛ըրիլ պըտի, գ՛ըրիլ պըտենք* ևն[1367]: Խոյ-Մարաղայի բարբառը այս եղանակի ձևերը կազմում է *տի, տիկ՚ի*[1368], նաև *կիպտ°, կ՚ըտը*[1369] մասնիկներով:

5.6.5. *Հրամայական եղանակ*

Հրամայական եղանակի եզակի թվի վերջավորություններն են՝ *ա, ի*, հոգնակի թվինը՝ *էք*: Եզակի թվում *ա* վերջավորություն ստանում են նաև անցյալ կատարյալում ներգործաձև խոնարհվող բայերը՝ *գ՛ըրա՛, ճ°նգըռթա՛, մօտկըցըրա՛, դ՛օխծըրա՛*[1370], *կ°ռթա՛, օրօշկըտա՛*: Եզակի թվում *ի* վերջավորություն ստանում են նաև անցյալ կատարյալում կրավորաձև խոնարհվող բայերը. *նըստի՛, դըլըլվորի՛, սնդըրվի, խաքի՛, թըռի՛, խասկըցի՛, վախէցի՛*: Կրկնասեռ բայերը հոգնակի հրամայականի նույն ձևով կարող են արտահայտել անցողականության և անանցողականության իմաստներ, իսկ եզակի հրամայականում այդ իմաստներն արտահայտում են համապատասխան վերջավորություններով. *վառա՛* (վառի՛ր), *վառի՛*

[1365] Տե՛ս ՔՎԲ, էջ 176-177:
[1366] Տե՛ս ԱԲ, էջ 150-151:
[1367] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ, էջ 207:
[1368] Տե՛ս ԽԲ, էջ 108:
[1369] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ, էջ 213-214:
[1370] Պատճառական բայերի եզակի հրամայականում սակավ, բայց գործածական են նաև *ու* վերջավորությամբ ձևեր՝ *մօտկըցո՛ւ, խասկըցո՛ւ*, որոնք հատուկ են Դիադինի, Վանի և Մշո բարբառներին և, ուրեմն, այդ բարբառների ազդեցության արդյունք են: Կը ճյուղի բարբառներում գործառող՝ պատճառական բայերի հրամայականի այս ձևերը անշուշտ միջինհայերենյան *ցամաքեցո՛ւր, կակղացո՛ւր, կերցո՛ւր* (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 339) տիպի ձևերից են առաջացել՝ *ր*-ի անկումով:

(վառվի՛ր), *վառէ՛ք* (վառե՛ք, վառվե՛ք): Բարբառումս հրամայականի ձևերը թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերում առավելաբար կազմվում են ներկայի և անցյալի համար ընդհանուր անցոյական հիմքից: Անցյալի ցոյական հիմքից են կազմվում Ախոնարհման պարզ բայերի հոգնակի թվի ձևերը (կ°ռթացէ՛ք), Ախոնարհման ածանցավոր բայերի եզակի և հոգնակի ձևերը (խասկըցի՛, խասկըցէ՛ք), անցյալի պարզ կամ արմատական հիմքով են կազմվում Ե խոնարհման *ն* ածանց ունեցող բայերի ձևերը (խաքի՛, խաքէ՛ք), ռեական հիմքով են կազմվում պատճառական բայերի ձևերը (խասկըցըրա՛, խասկըցըրէ՛ք):

Հրամայականի արտահայտությունը Բայազետի բարբառի հետ նույնական է Դիադինի բարբառում՝ չհաշված պատճառականի ձևերը (նըստըցու, նըստըցուցէք[յ]): Այս բարբառի ազդեցություն պետք է համարել Բայազետի բարբառի որոշ խոսվածքներում պատճառականի եզակի հրամայականի *նըստըցու, խասկըցու* կարգի ձևերի գործածությունը: Հիմնականում նույն կերպէ արտահայտվում հրամայականը նաև Մշո բարբառում: Խոյ-Մարաղայի և Վանի բարբառներում հրամայականում ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ չեն տարբերակվում: Վանի բարբառում եզակի արգելականը ձևավորվում է ներկայի հիմքից՝ *խակ[յ]ի – մի խայնե*, *խաստացի – մի խաստանա*[1371]: Արարատյան բարբառն առանձնանում է պատճառականի եզակի հրամայականի ձևով՝ *քընա՛ցրու*, որոշ խոսվածքներում *մի* (մէք/միք) արգելականի հետադաս կիրառությամբ, ինչպես նաև բայաձևի արտահայտությամբ, ինչպես՝ *մի՛ վազի, մի՛ բ՛ըռնիլ, ո՛ւտիլ մի, մէ՛ք ուտի, ո՛ւտիլ մէք* ևն[1372]:

5.7. *Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր*

Այսպիսիք Բայազետի բարբառում ձևավորվում են *ի՛ըլնել* (լինել) բայի խոնարհված ձևերով և հարակատար դերբայով.

կ°յնուկեմ ի՛ըլնում	կ°յնուկ ի՛ըլնի
կ°յնուկի ի՛ըլնում	կ°յնուկգ՛ըլնեմ
կ°յնուկեմ ի՛էլե	կ°յնուկգ՛ըլնի
կ°յնուկի ի՛էլե	կ°յնուկպըտի ի՛ըլնեմ

[1371] Տե՛ս ՔՎԲ, էջ 165, 167:

կ°յնուկ հ՛էլա կ°յնուկ պըտի հ՛ըլնի
կ°յնուկ հ՛ըլնեմ կ°յնուկ հ՛էլի

Գործածական են նաև *կամ* բայով և հարակատարով կազմված ձևեր, որոնցով ներկայացվում են քիչ հնարավոր իրողություններ՝ *խաքուկ կ°ս, տէսուկ կ°ս, խաքուկ կիր, տէսուկ կիր, խաքուկ չըկամ, տէսուկ չըկամ, խաքուկ չըկի, տէսուկ չըկի*[1373]:

5.8. *Անկանոն բայեր*

Բայազետի բարբառում անկանոն են *գ՛ալ, լ°լ, տալ, °սել, բ՛երել, բ՛ացել, գ°նել, թողել, էթալ, մընալ, խաղալ, գիդալ, քէլալ, լըցել, խանել, խըմել, ուտել, °նել, հ՛ըլնել, տ°նել, °ռնել, տէնալ, կ°նալ* բայերը: *Գ՛ալ, լ°լ, տալ* բայերը Բայազետի բարբառում ևս չունեն անկատարի կանոնավոր ձևեր. այստեղ *ում* մասնիկը ավելանում է անորոշ դերբայի վրա՝ *գ՛ալում, լ°լում, տ°լում*[1374]: Ինչպես իրավացիորեն նկատում է Մ.Ասատրյանը, այս բայերը «միահնչյուն արմատներ ունեն, և դրանց անկանոնությունը գուցե բացատրվում է հենց դրանով»[1375]: Բայաձևերի միավանկությունը առաջ է բերել անկանոնություններ ժխտական խոնարհման համակարգում: Եթե կանոնավոր բայերի ժխտական խոնարհման ըղձական եղանակի ժամանակաձևերում ժխտականությունը դրսևորվում է *չը* մասնիկով (*չըգ՛ըրեմ, չըգ՛ըրի* ևն), ապա *գ՛ալ, լ°լ, տալ* բայերի դեպքում ժխտականությունը արտահայտվում է *չի* ձևով. *չիգ՛ամ, չիգ՛ի, չիլ°ս, չիլիր, չիտա, չիտէր* ևն: Բայազետի բարբառում, գրական հայերենի

[1372] Տե՛ս ԱԲ, էջ 151-152:

[1373] Միջին հայերենի առաջին շրջանին յուրահատուկ են հարակատար դերբայով ու *լինիմ, կամ, ունիմ* և այլ օժանդակ բայերով կազմվող բաղադրյալ ժամանակներ (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 348): Հ.Աճառյանը նշել է, որ Վանի բարբառը հարուստ է բաղադրյալ ժամանակներով: Այս բարբառում ևս արձանագրվել են միայն հարակատար դերբայով (*ած* վերջավորությամբ) և *կամ, էլնեմ* բայերով կառույցներ (տե՛ս ՔՎԲ, էջ 178-179): Խոյ-Մարաղայի բարբառում ևս երկրորդական բաղադրյալ ժամանակները լայն կիրառություն չունեն, այստեղ դրանք ձևավորվում են ապառնի ու հարակատար դերբայներով և *լինել* բայի ձևերով (տե՛ս ԽԲ, էջ 135-136): Այս ժամանակաձևերը ավելի լայն կիրառություն ունեն Արարատյան բարբառում, որտեղ կազմվում են անկատար, ապառնի և հարակատար դերբայներով ու *լինել* բայի ձևերով (ԱԲ, էջ 181-182): Դիադինի բարբառում բաղադրյալ ժամանակաձևեր ձևավորվում են հարակատար, նաև ապառնի դերբայներով (տե՛ս ԴԲ, էջ 98): Մշո բարբառում այսպիսի ժամանակաձևեր կազմվում են ապառնի և հարակատար դերբայներով և *էղնալ* բայի ձևերով (ՄԲ, էջ 166-167);

[1374] Անկանոն են նաև սրանցով ձևավորված անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը: Շրջակա բարբառային միավորներից նման ձևեր ունեն Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներ:

[1375] Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 323:

անկանոն ձևերի համապատասխանություններից բացի[1376], անկանոն են նաև *գ՛ալ* բայի ենթակայական դերբայը (գ՛ալօղ, էկօղ), հարակատար դերբայը (գ՛ալուկ, էկուկ), հրամայականի ձևերը (հ՛արի՛, °րի՛, հ՛արէ՛ք, °րէ՛ք, մի՛ հ՛արի, մի՛ °րի) ևն: *Լ°լ* բայի բարբառային անկանոնություններն են. անցյալ կատարյալում ներգործաձև վերջավորությունների փոխարեն ունենում է կրավորաձև վերջավորություններ (լ°ցա, լ°ցար, լ°ցավ, լ°ցանք, լ°ցաք, լ°ցան), եզակի հրամայականը անցյալի շեշտակիր հիմքն է (լ°՛ց /մի՛ լ°ց/): Անկանոն են *տալ* բայի անցյալ կատարյալը (տըվի / տըվէցի, տըվիր / տըվէցիր), հրամայականի ձևերը՝ (տո՛ւ, մի՛ տու):*Գ՛ալ, լ°լ, տալ* բայերի ժխտական խոնարհման ենթադրական անցյալի եզակի երրորդ դեմքի կանոնավոր *չէր գ՛ի, չէր լի, չէր տի* ձևերին զուգահեռ հանդես են գալիս անկանոն *չէր գ՛ե, չէր լե, չէր տե* ձևերը[1377]: Վանի բարբառում ևս արձանագրվել են նման անկանոն ձևեր՝ *չի տե, չի լե, չի կ՚ե*[1378]:Ի տարբերություն գրաբարի և գրական հայերենի անկանոն *ասաց* ձևի, բարբառումս °*սել* բայի անցյալի հիմքը արմատական և կանոնավոր է (°ս), ինչպես Ե խոնարհման մյուս պարզ բայերի դեպքում (գ՛ըրել – գ՛ըր, խափել - խափ): Անկանոն է այս բայի անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքի ձևը միայն. °*սի, °սիր, °սավ*[1379]: Գրական հայերենում անկանոն հրամայականի *ասա՛* կազմությունը բարբառումս կանոնավոր է. ինչպես՝ *գ՛ըրել - գ՛ըրա՛*, այնպես էլ՝ °*սել - °սա՛*: *Բ՛էրել, բ՛ացել, գ°նել, թօղել, լըցել, խանել, °ռնել* բայերը անկանոն են միայն եզակի հրամայականում. *բ՛ե՛ / բ՛ե՛ր,*

[1376] Այսուհետ գրական լեզվի հետ համընկնող անկանոնությունները ըստ հնարավորին չենք բերի:

[1377] *Գալ, լալ, տալ* բայերը գրեթե անկանոն նույն ձևերն ունեն Արարատյան բարբառում (տե՛ս ԱԲ, էջ 177), Դիադինի բարբառում, որտեղ մի շարք ձևերում Բայազետի բարբառի *կը*-ի դիմաց առկա է *գ՛ու* կամ *կու* /գ՛ուգ՚°մ, գ՛ուլ°մ, կուտամ/ (տե՛ս ԴԲ, էջ 99-101), և թերևս սրա ազդեցությամբ են Բայազետի բարբառում գործառում նաև *գ՛ուքամ, գ՛ուքաս* ձևեր: Վանի բարբառում անցյալի հիմքից ձևավորվող հիմնականում նույն ձևերի առկայությամբ առանձնանում են *ի* նախահավելվածով ձևերը՝ *իկէ՛ք՚, իկեր, իլ°ց*, ինչպես նաև՝ *լալ* բայի անցյալ կատարյալի ձևերը՝ *լ°ցի, լ°ցիր* ևն (տե՛ս ՔՎԲ, էջ 172-173): Խոյ-Մարաղայի բարբառում *գալ* բայի դիմաց գործառում է *իկ՚°լ* ձևը՝ անցյալի *էկ* հիմքով և հրամայականի *հ՛°ր, հ՛°ռէք՚* ձևերով (տե՛ս ԽԲ, էջ 131): Մշո բարբառում տարբերվում են ներկայի հիմքից կազմվող ձևերը՝ *գիքամ, գիքան, գիքի, բըդի հ՛իքամ, հ՛իքանք, կիդամ, կիդի*, Ալ.՝ *գիլամ, գիլէր* ևն, իսկ անցյալի հիմքից կազմվող ձևերը հիմնականում նման են Բայազետի բարբառի ձևերին (տե՛ս ՄԲ, էջ 167-169, Ք.Մադաթյան, նշվ.աշխ., էջ 134-135):

[1378] Տե՛ս ՔՎԲ, էջ 186:

[1379] *Ասել* բայի *ասիր, ասին, ասաս* ձևեր վկայված են միջին հայերենի զարգացման երկրորդ շրջանում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 387):

բ՛ա՛ց, գ°՛ն, թո՛ղ, լի՛ց, խա՛ն, °՛ռ[1380]: *Հ°նել* և *թողել* բայերին զուգահեռ գործառող *գ°ոկել* և *թոոգել* բայերի եզակի հրամայականը ևս անկանոն է՝ *գ°՛ոկ, թո՛ոգ*: *Քէլալ* բայը բոլոր ձևերում կանոնավորապես խոնարհվում է Ա խոնարհման պարզ բայերի օրինակով, սակայն հոգնակի հրամայականի կանոնավոր *քէլացէ՛ք* ձևին զուգահեռ ունի *քէլէ՛ք* անկանոն ձևը[1381]: Բայազետի բարբառում *էթալ* (երթալ) և *գնալ* նույնիմաստ բայերը ձուլվել են և միմյանց միջև բաշխել բայաձևերը. ներկայի հիմքում և նրանից կազմվող ձևերում հանդես է գալիս *էթ* արմատը (էթալ, էթում, էթամ ևն), իսկ անցյալի հիմքում և նրանից կազմվող ձևերում՝ *գ՛ացգ* ձևը՝ *գնալ* բայից[1382]: Հարակատար դերբայն ունի *գ՛ացգուկ, էթացգուկ, էթուկ* ձևերը, ենթակայականը՝ *գ՛ացող, էթող* ձևերը, վաղակատարը՝ *գ՛ացէր / գ՛ացեր / գ՛ացե* ձևերը, ժխտականը՝ *էթա / էթի* ձևերը: Անցյալ կատարյալի ձևերն են՝ *գ՛ացի, գ՛ացիր, գ՛ընաց, գ՛ացինք, գ՛ացիք, գ՛ացին*: Եզակի երրորդ դեմքի *գ՛ընաց* ձևում *ն* -ն պահպանվել է

[1380] Այս բայերի՝ միայն եզակի հրամայականում դրսևորվող անկանոնությունը (որ դիտարկվել է նաև շրջակա բարբառներում) գալիս է լեզվի հինհայերենյան շրջանից: Այսպես, գրաբարում *բերել* և *հանել* բայերը մի երկու այլ բայերի հետ անցյալի բաղադրյալ -ցոյական հիմքի փոխարեն բացառության կարգով ունենում էին անցոյական հիմքեր (բեր, հան), որոնք էլ շեշտվելով հանդես էին գալիս իբրև եզակի հրամայականի ձևեր (բե՛ր, հա՛ն): Գրաբարյան *բանալ* և *լնուլ* բայերի անցյալի հիմքի *ց*-ն ձուլվել էր արմատին և բուն հրամայականում պահպանվում էր՝ *բա՛ց, լի՛ց*: Այդպես էր նաև *լալ* բայի դեպքում՝ *լա՛ց*: Բարբառային *թողել, °ռնել* բայերի հինհայերենյան համապատասխանությունները են *առնուլ, թողուլ*, որոնք, իբրև Ու խոնարհման բայեր, ունենում էին անցյալի արմատական հիմքեր, որոնք էլ շեշտվելով դառնում էին եզակի հրամայական՝ *թո՛ղ, ա՛ռ*: Գրաբարյան *զարկանել* բայի դիմաց բարբառս ունի *գ°նել, գ°ոկել* ձևերը: Իբրև Ե խոնարհման ածանցավոր բայ՝ *զարկանել*-ը ուներ անցյալի արմատական *զարկ* հիմքը և եզակի հրամայականի *զա՛ոկ* ձևը, որից էլ ունենք բարբառային *գ°՛ն, գ°՛ոկ* հրամայականները: Ի դեպ, Պոլսի, Կարնո, Սեբաստիայի և մի շարք այլ բարբառների *զարնէլ* ձևը (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 84) խոսում է *զարկանել* > *զարնել* > *զանել* հնչյունափոխական գործընթացի մասին, որին զուգահեռ տեղի է ունեցել *զարկանել* > *զարկել* փոփոխությունը: Հ.Աճառյանը Վանի բարբառում դիտարկելով նման որոշ բայեր, նշում է, որ դրանք «կատարյալի, հրամայականի և դերբայների մեջ մասամբ պահում են հին զարտուղի ձևերը և մասամբ էլ ստեղծել են նոր կանոնավոր ձևեր» (ՔՎԲ, էջ 170):

[1381] *Քէլէք* ձևի բառային իմաստը տարբերվում է «քայլել» իմաստից. այդ ձևով (ինչպես նաև եզակիի կանոնավոր *քէլա՛*, սրա կրճատված *քէ՛լ* ձևերով) արտահայտվում է որևէ գործողություն կատարելու հրավեր՝ *քէլէք նըստենք, քէլէք ուտենք, քէլէք գ՛ընենք*, ինչը սովորական է նաև *էկէ՛ք* ձևի համար և գուցե արդյունք է այդ ձևի ազդեցության: Մ.Ասատրյանը Խոյ-Մարաղայի բարբառում իբրև *էթ°լ* բայի հրամայականի ձևեր բերում է՝ *քʲէ՛լ, քʲէլէ՛քʲ*:

[1382] *Երթալ* և *գնալ* բայերի այսպիսի միաձուլումով անկանոն բայ առկա է նաև Մշո, Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում, հայերենի այլ բարբառներում (օրինակ՝ Կարնո և Երզնկայի բարբառներում): Մշո և Դիադինի բարբառներում այս բայի անցյալի հիմքը նմանվում է Բայազետի բարբառի ձևին (գ՛ աց), իսկ Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում գործառում է *ն*-ով ձև (կընո°ց):

թերևս միավանկ հնարավոր ձևից խուսափելու միտումով: Հրամայականի ձևերն են՝ *գ՛ընա՛ (մի՛ գ՛ընա), գ՛ացէ՛ք (մի՛ գ՛ացէք): Մընալ* բայը իր անկանոնություններով նման է *էթալ* բային՝ անցյալի հիմքում ունենալով *մ°գ*: Դերբայական ձևերն են՝ *մ°գուկ, մ°գօղ, մ°գէր / մ°գեր / մ°գե, մընա / մընի*: Անցյալ կատարյալի ձևերն են՝ *մ°գի, մ°գիր, մընաց, մ°գինք, մ°գիք, մ°գին*, հրամայականի ձևերը՝ *մ°՛գ, մ°գէ՛ք, մի՛ մ°գ, մի՛ մ°գէք*[1383]: *Խաղալ* բայի անցյալի հիմքը Բայազետի բարբառում ձևավորվում է հիմքակազմիչ *ա*-ի անկանոն անկումով և փոխազդեցական հնչյունափոխություններով. *խաղաց – խաղց – խախց – խախծ*: Այս *խախծ* հիմքով էլ ձևավորվում են հարակատար (*խախծուկ*), ենթակայական (*խախծօղ*), վաղակատար (*խախծէր / խախծեր / խախծե*) դերբայները: Անցյալ կատարյալում և հրամայականում բայը խոնարհվում է Ա խոնարհման *ն* ածանց ունեցող բայերի օրինակով՝ *խախծա, խախծար, խախծավ, խախծանք, խախծաք, խախծան* և *խախծի՛, խախծէ՛ք*[1384]: *Գիդալ* ձևը Բայազետի բարբառում առաջացել է *գիտենալ* բայից՝ հնչյունափոխական գործընթացների արդյունքում. *գիտենալ > գիտնալ > գիդնալ > գիդալ* [1385]: Ներկայի *գիդ* հիմքով կանոնավորապես կազմվում են անորոշ (գիդալ), անկատար (գիդում), ժխտական (գիդա / գիդի) դերբայները, ըղձականի (նաև ենթադրականի ու հարկադրականի) ձևերը (գիդամ, գիդաս, գիդա, գիդի, գիդիր, գիդէր ևն)[1386]: Անցյալի հիմքն ունի *գից*

[1383] Մշո բարբառում *մնալ* բայն ունի անցյալի հիմքի երեք տարբերակ՝ *մանց, մաց, մընաց*, որոնցից էլ կազմվում են ինչպես զուգահեռ դերբայական ձևեր՝ *մընացէր / մանցէր, մընացուգ / մանցուգ / մընացած / մանցած / մացած*, այնպես էլ դիմավոր ձևեր. անցյալ կատարյալ՝ *մանցի, մանցիր, մընաց, մանցինք, մանցիք, մանցին* և *մացի, մացիր, մընաց, մացինք, մացիք, մացին*, հրամայական՝ *մընա / մանցի / մընացի, մընացէք / մացէք / մանցէք*:

[1384] *Խաղալ* բայի նման յուրահատկություն դրսևորվում է նաև Մշո բարբառում, որտեղ առկա են նաև զուգահեռ կանոնավոր ձևեր՝ *աց* հիմքակազմիչով. *խաղացի, խաղացիր, խաղացավ, խաղացինք, խաղացիք, խաղացին* և *խաղցա, խաղցար, խաղցավ, խաղցանք, խաղցաք, խաղցան:*

[1385] Բարբառներում տարածված երևույթ է, երբ հնչյունափոխություն առաջ բերած գործոնի վերացումը հնչյունափոխության արդյունքի վրա չի ազդում. տվյալ դեպքում՝ *ն*-ի ազդեցությամբ *տ*-ն դարձել է *դ*, բայց *ն*-ի անկումը *դ*-ի վրա չի ազդել: Ընդհակառակը, բառամիջի *դ*-ն ազդել է բառասկզբի *գ*-ի վրա և նրան հաղորդել պարզ ձայնեղություն, որը տարածվել է բայի բոլոր դրսևորումների վրա: Խոյ-Մարաղայի բարբառում գործառում է *գ՚ինՕլ* ձևով (Բայազետի բարբառում էլ *գիդալ* ձևին զուգահեռ հանդիպում է *գինալ* ձևը), անցյալի հիմքն է *գ՚ից* (տե՛ս ԽԲ, էջ 131-133): Վանի բարբառի *կիտեմ* բայի անցյալի հիմքն է *կից* (տե՛ս ՔՎԲ, էջ 175):

[1386] Ըղձականի ձևերը գործառում են նաև իբրև պակասավոր բայի ներկայի և անցյալ անկատարի ձևեր. օրինակ՝ *Դ՛ու գիդաս՝ ինչ ես Օնում* (Դու գիտես՝ ինչ ես անում), *Դ՛ու գիդիր՝ ինչ իր Օնում* (Դու գիտեիր՝ ինչ էիր անում), *Յես գիդամ՝ ընդոնք հ՛էսօր չեն գ՛ա* (Ես գիտեմ՝ նրանք այսօր չեն գա):

ձևը, որն առաջացել է *գիդնալ* անորոշի՝ անցյալի հիմքից կազմվող ձևերում կատարված հնչյունական սղումների արդյունքում (*գիդցա - գիտցա - գիցա*): Անցյալի հիմքից կազմվող դերբայական ձևերն են. վաղակատար՝ *գիցէր / գիցեր / գիցե*, ենթակայական՝ *գիցող* (նաև՝ գիդօղ), հարակատար՝ *գիցուկ*: Անցյալ կատարյալում խոնարհվում է Ա խոնարհման *ն* ածանց ունեցող բայերի օրինակով՝ կրավորական. *գիցա, գիցար, գիցավ, գիցանք, գիցաք, գիցան*: Հրամայականի ձևերն են՝ *գիցի՛, գիցէ՛ք*[1387]: *Խըմել* բայը անկանոն է անցյալ կատարյալում, որտեղ ունի զուգահեռ ներգործական և կրավորական վերջավորություններով ձևեր՝ երկու դեպքում էլ ներգործական սեռի իմաստով, ինչպես՝ *խըմի, խըմիր, խըմեց, խըմինք, խըմիք, խըմին* և *խըմա, խըմար, խըմավ, խըմանք, խըմաք, խըման*: Հնարավոր է, որ անկանոն ձևերը առաջացած լինեն *ուտել* բայի անցյալի ձևերի ազդեցությամբ, եթե նկատի ունենանք դրանց համատեղ հաճախակի գործածությունը՝ *կէրա խըմա, կէրավ խըմավ* ևն: *Ուտել* բայի անցյալի հիմքը, ինչպես ողջ հայերենում, արտահայտվում է *կեր* արմատով: Այս հիմքով են կազմվում հարակատար (կէրուկ), վաղակատար (կէրէր / կէրեր / կէրե) դերբայները: Անցյալ կատարյալում բայը խոնարհվում է կրավորական. *կէրա, կէրար, կէրավ, կէրանք, կէրաք, կէրան*: Հրամայականի ձևերն են՝ *կե՛ր, կե՛, կէրէ՛ք*[1388]: Հինհայերենյան իր անկանոնության արձագանքը պահպանել է °*նել* (գրբ. առնել) բայը՝ անցյալի հիմքում ունենալով °*ր* ձևը: Այս հիմքից են կազմվում հարակատար (°րուկ), վաղակատար (°րէր / °րեր / °րե) դերբայները, նաև ենթակայականի °*նող* կանոնավոր ձևին զուգահեռ գործառող °*ող* տարբերակը: Անցյալ կատարյալում, հիմքի անկանոնությունից բացի, անկանոն է նաև եզակի երրորդ դեմքի ձևը, որը, ի տարբերություն ներգործական մյուս ձևերի, կրավորական է. °*ռի, °ռիր, °ռավ, °ռինք, °ռիք, °ռին*[1389]: Հրամայականի

[1387] Այստեղ և այսուհետ արգելական հրամայականի ձևերը բերելը կարևոր չենք համարում, քանի որ կազմվում են հաստատականի ձևերից և նոր անկանոնություն չեն ներկայացնում:

[1388] Այս բայի անկանոնությունները նույնն են բոլոր բարբառներում, միայն Վանի բարբառը *ուտող* ձևին զուգահեռ ունի նաև կիրող (տե՛ս ՔՎԲ, էջ 173);

[1389] Ե՛վ °*նել*, և՛ °*սել* բայերի այս անկանոնությունը բավականին տարածված է արևմտյան բարբառներում և ընդգրկում է ավելի մեծ թվով բայեր, օրինակ, Կարնո բարբառում այդ անկանոնությունն ունեն *բ՛էրէլ, ըսէլ, էնէլ* բայերը (տե՛ս Հ.Մկրտչյան, Կարնո բարբառը, էջ 69, 85): Վանի բարբառի ձևերն են *արի, արիր, արաց*,

ձևերն են՝*°ռա՛, °ռէ՛ք* [1390]:*Դ՛ընել* բայը իր անկանոնություններով նմանվում է *°նել* բային՝ անցյալի հիմքում *ն*-ի փոխարեն ունենալով *ռ*: Անցյալի հիմքից կազմվող դերբայական ձևերն են. *դ՛ռուկ, դ՛ռէռ / դ՛ռեռ / դ՛ռե, դ՛ռօղ* (նաև՝ *դ՛ընօղ*): Անցյալ կատարյալում խոնարհվում է ներգործաձև՝ *դ՛ռի / դ՛ռէցի, դ՛ռիր / դ՛ռէցիր, դ՛ռեց, դ՛ռինք / դ՛ռէցինք, դ՛ռիք / դ՛ռէցիք, դ՛ռին / դ՛ռէցին*: Հրամայականի ձևերն են՝ *դ՛ի՛, դ՛ի՛ռ, դ՛ռէ՛ք* [1391]: *Տ°նել* բայը *°նել, դ՛ընել* բայերի պես ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ե խոնարհման ներգործական սեռի պարզ բայերի օրինակով (ըղձ. ապառնի եզ. երրորդ դեմք՝ գ՛ռա, °նա, դ՛ նա, *տ°նա*, ժխտ. խոն. ենթ. ապ.՝ չ ռգ՛ռա, չ անա, չ ռդ՛ նա, *չ ռտ°նա*): Անցյալի *տ°ռ* հիմքով կազմվող դերբայական ձևերն են՝ *տ°ռուկ, տ°ռէռ / տ°ռեռ / տ°ռե, տ°ռօղ* (նաև՝ տ°նօղ): Անցյալ կատարյալում կրավորաձև է խոնարհվում՝ *տ°ռա, տ°ռար, տ°ռավ, տ°ռանք, տ°ռաք, տ°ռան*: Հրամայականի ձևերն են՝ *տ°՛ռ, տ°ռէ՛ք* [1392]: *Տէնալ* ձևն առաջացել է հնչյունափոխությունների արդյունքում՝ *տեսանել* > *տէսնալ* > *տէնալ*: Ներկայի *տէն* հիմքից բայաձևերը կազմվում են Ա խոնարհման բայերի օրինակով (տէնում, տէնամ, տէնի): *Տէն* հիմքով է կազմվում նաև ենթակայական դերբայը՝ *տէնօղ*: Անցյալի հիմքում հանդես է գալիս *տէս* արմատը, որից կազմվում են վաղակատար (*տէսէռ/ տէսեռ / տէսե*) և հարակատար (*տէսուկ*) դերբայները: Անցյալ կատարյալում խոնարհվում է կրավորաձև՝ *տէսա, տէսար, տէսավ, տէսանք, տէսաք, տէսան*: Հրամայականի ձևերն են՝ *տե՛ս, տե՛, տէսէ՛ք* [1393]: *Կ°նալ* բարբառային ձևը նույնպես հնչյունափոխական գործընթացների արդյունք է՝ *կարենալ – կարնալ – կառնալ – կանալ*: Այս շարքի *կառնալ* ձևի համար անցյալի

Ալաշկերտի խոսվածքինը՝ *էրի, էրիր, էրէծ*, Խոյ-Մարաղայինը՝ *°ռիմ, °ռիր, °ռէց*, Արարատյանինը՝ *արի/մ/, արիր, արէց*:

[1390] Դեռևս միջինհայերենյան շրջանում էին ընդհանրացել *արէ՛ք, դրէ՛ք* ձևերը (տե՛ս ԱՄԳՀՊ, էջ 350): Միջին հայերենի երկրորդ շրջանից են գալիս *անել* և *դնել* բայերի հետևյալ ձևերը՝ *արի, արիր, արեց* կամ *արաւ, դրիք, դրին, արա՛, դի՛ր, դրէ՛ք* նոր ձևերը (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 399-400):

[1391] Նույն կարգի ձևեր ունեն դիտարկվող բոլոր բարբառները:

[1392] Նույն անկանոնությունները դրսևորվում են դիտարկվող բոլոր բարբառներում:

[1393] Արարատյան բարբառում գործառում են ինչպես *տէսնէլ*, այնպես էլ *տէնալ* ձևերը, բայց անցյալի հիմքում գործառում է *տէս*-ը: Լոռու խոսվածքում հանդես են գալիս *տէհա, տէհար, տէհավ* ձևեր (տե՛ս Մ.Ասատրյան, Լոռու խոսվածքը, էջ 142): Վանի բարբառում տիսնալ բայը դրսևորվում է *տիս* և *տիսն* հիմքերով, միայն հրամայականում՝ *տե՛ս, տե՛* (տե՛ս ՔՎԲ, էջ 171):

կանոնավոր հիմքն է *կ°ռg*, որը և պահպանվել է իբրև անցյալի հիմք հնչյունափոխական առումով ավելի առաջ գնացած *կ°նալ* ձևի համար՝ այս դեպքում արդեն դառնալով անկանոն ձև: Այս բայի ներկայի *կ°ն* հիմքից կազմվող բոլոր ձևերը կանոնավոր են (կ°նում, կ°նամ, կ°նի): Անցյալի *կ°ռg* հիմքից են ձևավորվում հարակատար (կ°ռցուկ), ենթակայական (կ°ռցoղ, նաև՝ կ°նoղ), վաղակատար (կ°ռցէր / կ°ռցեր / կ°ռցե) դերբայները: Անցյալ կատարյալում այս բայը խոնարհվում է կրավորաձև՝ *կ°ռցա, կ°ռցար, կ°ռցավ, կ°ռցանք, կ°ռցաք, կ°ռցան*: Հրամայականի ձևերն են՝ *կ°ռցի՛, կ°ռցէ՛ք* [1394]: *Հ՛ըլնել* բայը համատեղում է *լինել* և *ելնել* բայերի իմաստները[1395]: Ներկայի հիմքից կազմվող ձևերը ներկայացնում են *լինել* բայը, իսկ անցյալի *հ՛էլ* հիմքը և դրանից կազմվող ձևերը՝ *ելնել* բայը, և այս դեպքում ունենք երկու բայերի միաձուլում մեկ բայի մեջ և՛ իմաստներով, և՛ ձևերով: Անցյալի հիմքից կազմվում են հարակատար (հ՛էլուկ) և վաղակատար (հ՛էլէր / հ՛էլեր / հ՛էլե) դերբայները: Անցյալ կատարյալում բայը խոնարհվում է կրավորաձև. *հ՛էլա, հ՛էլար, հ՛էլավ, հ՛էլանք, հ՛էլաք, հ՛էլան*: Հրամայականի ձևերն են՝ *հ՛էլի՛, հ՛էլէ՛ք*:

Այսպիսով, Բայազետի բարբառում բայերի անկանոնությունները պայմանավորված են զանազան գործոններով, որոնցից են բայերի միավանկությունը, լեզվի զարգացման նախորդ փուլերից ձևերի, նաև անկանոնությունների ժառանգումը, նույնիմաստ բայերի միաձուլումը, այլ բայերի համաբանական ազդեցությունը, ներկայի և անցյալի հիմքերի հնչյունափոխական անհամապատասխանությունը ևն: Նույն կարգի շեղումներ դիտարկվել են նաև շրջակաբարբառներում:

5.9. *Պակասավոր բայեր*

Բայազետի բարբառում պակասավոր են *եմ, կ°մ, ունեմ, °ժեմ* բայերը: Բոլորն էլ ունեն միայն սահմանականի ներկայի և անցյալ անկատարի ձևեր. *եմ, ես, ա, ենք, էք, են, ի, իր, էր, ինք, իք, ին. կ°մ, կ°ս, կ°, կ°նք, կ°ք, կ°ն, կի, կիր, կէր / կ°ր, կինք, կիք, կին.ունեմ, ունես, ունի, ունենք, ունէք, ունեն, ունի, ունիր, ունէր, ունինք, ունիք,*

[1394] Այս կարգի անկանոնություններ *կանալ* բայն ունի նաև Դիադինի բարբառում:

ունին. °ժեմ, °ժես, °ժի, °ժենք, °ժէք, °ժեն, °ժի, °ժիր, °ժէր, °ժինք, °ժիք, °ժին[1396]:

5.10. *Հարադրական բայերի խոնարհումը*

Բայական բաղադրիչով և ոչ բայական հարադրով ձևավորված հարադրությունների խոնարհման ժամանակ քերականական փոփոխության ենթարկվում է միայն բայական բաղադրիչը, և հաստատական խոնարհման պարզ ժամանակաձևերում հարադրական բայը խոնարհման առանձնահատկություն սովորաբար հանդես չի բերում՝ *գ՛ըլօխ գ՛օվաց, ձ՛եռ °ռնեմ*: Այլ դեպքերում հարադրական բայերի խոնարհման համար բնորոշ են հետևյալ յուրահատկությունները. ա) վերլուծական ժամանակաձևերում օժանդակ բայը ընկնում է հարադրի և բուն բայի միջև. *ջ՛ուր եմ °նում, ջ՛ուր չեմ °նում, ձ՛եռ ատըվե, դ՛ուս չես գ՛ա* բ) *կը* եղանակիչը դրվում է բուն բայաձևի վրա՝ *հ՛աշկով կ°նեմ, °նձըրեվ կըբ՛ըռնա* գ) *պըտի* եղանակիչը սովորաբար նախորդում է հարադրին (պըտի լըվասկ °նես, պըտի ջաֆա քաշա), սակայն կարող է և հաջորդել նրան, երբ տրամաբանական շեշտն ընկնում է անվանական հարադրի վրա (տէր պըտի կ°յնեմ, տուն պըտի պ°խես). դ) պարզ ժամանակաձևերում, ինչպես նաև վերլուծական որոշ ժամանակաձևերի եզակի երրորդ դեմքում ժխտական *չը* մասնիկը դրվում է բուն բայաձևի վրա. *ձ՛էն չըտըվի, խելքը չըկըդրա, քաղ չանեմ, գ՛ույնը չըթ°լե, մըտէն չէթում.* ե) արգելականի *մի՛* մասնիկը սովորաբար դրվում է բուն բայաձևից առաջ (զ°յլամի՛ տ°ր, ձ՛էն մի՛ խանէք), կարող է դրվել նաև հարադրից առաջ (մի՛ մէջ հ՛ընգի):

Զուգաբայական հարադրություններն ունեն խոնարհման հետևյալ յուրահատկությունները. ա) համադրական ժամանակաձևերում խոնարհվում են երկու բաղադրիչ բայերն էլ. *վէրցի °սի, զ°նի թափի.* բ) վերլուծական ժամանակաձևերում օժանդակ բայը կրկնվում է. *զ°նէր եմ ջ՛առթէր եմ, զ°նէր են ջ՛առթէր են*, եզակի թվի երրորդ դեմքում օժանդակ բայը կարող է նաև

[1395] Այդպես է նաև Արարատյան, Խոյ-Մարաղայի, Վանի բարբառներում:

[1396] Վանի բարբառում համանման ձևերն ունեն *կամ* և *ունիմ* բայերը (ՔՎԲ, էջ 175): Բայազետի բարբառից տարբեր արտահայտություն ունեն Արարատյան բարբառի *կամ, ունէմ* բայերը (տե՛ս ԱԲ, էջ 180-181), Ալաշկերտի խոսվածքի *կամ, ունիմ* բայերը (տե՛ս Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 136-137):

ընդհանրապես բացակայել (զ°նում ջ՛առթում, զ°նե ջ՛առթե) կամ դրվել միայն հարադրության վերջում (զ°նում ջ՛առթում ա, զ°նե ջ՛առթեր ա). գ) *չը* ժխտական մասնիկը, օժանդակ բայի ժխտական ձևը, արգելական *մի՛* մասնիկը, *պըտի* եղանակիչը դրվում են հարադրությունից առաջ և չեն կրկնվում. *չըկէրար պըռծար, չէթիր գ՛իր, չես հ՛ըլնում կ°յնում, չէր էկե գ՛ացե, մի՛ տ°րէք բ՛էրէք, մի՛ վէրցադ՛ի, պըտի վազնէր խասնէր.* դ) *կը* եղանակիչը դրվում է երկու բաղադրիչների վրա էլ. *կէթա կըտէնա, կըտ°նի կըբ՛էրի, կ°ռնես գ՛ըքաս*: Բայց երբ տրամաբանական շեշտը կամ հարցումը ընկնում է առաջին բաղադրիչի վրա, *կը* եղանակիչը դրվում է առաջին բաղադրիչի վրա. *կըտ°՛նա բ՛էրա, կէթա՞ս գ՛աս*:

5.11. *Ժխտական խոնարհում*[1397]

Բայազետի բարբառում ևս բայի ժխտական ձևերը կազմվում են *չը* և *մի՛* մասնիկներով, որոնք ավելանում են հաստատական ձևերի վրա: *Մի՛* մասնիկը, ավելանալով հաստատական հրամայականի ձևերի վրա, կազմում է արգելական հրամայականի ձևերը. *մի՛ գ՛ըրա, մի՛ նըստի, մի՛ կ°ռթա, մի՛ խասկըցի, մի՛ խաքի, մի՛ գ՛ըրէք, մի՛ կ°ռթացէք, մի՛ խասկըցէք, մի՛ մօտկըցըրէք* ևն:

Չը ժխտական մասնիկը դրվում է.

ա) Անցյալ կատարյալի և ըղձական եղանակի ձևերի սկզբից. *չըգ՛ըրի, չընըստար, չըկ°ռթամ, չըխասկընի*:

բ) Սահմանական եղանակի վերլուծական ժամանակաձևերի օժանդակ բայի վրա (չեմ, չես, չէ, չենք, չէք, չեն, չի, չիր, չէր, չինք, չիք, չին), որը դրվում է դերբայական ձևից առաջ: Օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքը այս դեպքում չի արտահայտվում, և *չը* մասնիկը ուղղակի դրվում է դերբայի վրա. *չեմ գ՛ըրում, չես գ՛ըրում, չըգ՛ըրում, չենք գ՛ըրում, չէք գ՛ըրում, չեն գ՛ըրում*: Ժխտական խոնարհման ձևերում վաղակատար դերբայի *ր*-ն ընկնում է. *չեմ գ՛ըրե, չես գ՛ըրե, չըգ՛ըրե, չըգ՛ըրած / չեն գ՛ըրած / չեն գ՛ըրե*: Դերբայական ձևերից հետո օժանդակ բայը կարող է կրկնվել հաստատական ձևով. *չեմ գ՛ըրէր եմ, չըգ՛ըրեր ա, չըգ՛ըրած ա, չես*

[1397] Բայազետի բարբառի բայի խոնարհման ընդհանուր հարացույցը տե՛ս Հավելված 4-ում:

կ°ռթում ես, չին կ°ռթում ին ևն[1398]: Հարակատարով կազմություններում օժանդակ բայի ժխտականը իր դիրքը չի փոխում. *նըստուկ չեմ, նըստուկ չէք*:

գ) Եթադրական եղանակի ժխտական ձևերը կազմվում են ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով. *չեմ գ՛ըրի, չես գ՛ըրի, չենք գ՛ըրի, չէք գ՛ըրի, չեն գ՛ըրի, չեմ կ°ռթա, չես կ°ռթա, չենք կ°ռթա, չէք կ°ռթա, չեն կ°ռթա, չի գ՛ըրի, չի կ°ռթի* ևն: Ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքում *չը-ն* դրվում է հաստատականի ձևի վրա՝ *կը* եղանակիչի փոխարեն. *կըգ՛ըրա - չըգ՛ըրա, կըկ°ռթա - չըկ°ռթա*.

դ) Հարկադրական եղանակի ժխտական ձևերը կազմելիս *չը* ժխտականը սովորաբար դրվում է բայաձևի վրա. *պըտի չէթամ, պըտի չասիր, պըտի չուտա*, բայց կարող է դրվել *պըտի* եղանակիչի վրա. *չըպըտի հ՛իշկիր, չըպըտի խասկընաս*:

Ժխտական խոնարհման ժամանակ բայաձևերի կազմության եղանակներն ու միջոցները հիմնականում նույնն են մերձավոր բարբառներում [1399]:

6. ՄԱԿԲԱՅ

[1398] Այս ձևը արձանագրվել է նաև Մշո բարբառում (ՄԲ, էջ 156):

[1399] Ի տարբերություն Բայազետի բարբառի՝ Մշո բարբառում ժխտական մասնիկը կարող է դրվել նաև ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա՝ *յես չըկէրէր իմ* (տե՛ս ՄԲ, էջ 156), Խոյ-Մարաղայի բարբառում ներկա և անցյալ անկատար ժամանակների ժխտականը կազմվում է անկատար դերբայի երկրորդ ձևի և օժանդակ բայի ժխտական ձևերի միջոցով՝ *նըստէս էմ – չէմ նըստէլ հ/ը/, նըստէս էմ էր – չէմ էր նըստէլ հ /ը/* (տե՛ս ԽԲ, էջ 117), Դիադինի բարբառում ժխտական ձևերը հաջորդում են շարունակականի *կо*-ին՝ *կо չեմ նըստե, կо չի նըստե*: Ժխտականի կազմության յուրահատկություններով հատկապես առանձնանում են Վանի և Արարատյան բարբառները: Վանի բարբառում միավանկ *գալ, լալ, տալ* բայերի համապատասխանությունները ներկայի կազմության ժամանակ ստանում են *հ* (չեմ ի տա, չես ի լ°, չի /հ/ կ՝°), *պիտի*-ն չ մասնիկ չի ստանում (պիտի չլսեմ), *պիտի*-ից հետո միավանկ բայերը ժխտականում ստանում են *չի*, որն իր կազմում ունի միավանկ բայերի *հ* նախդիրը (պիտի չիտամ), արգելականն ունի *մի, մը, մ* տարբերակները (մի՛ լսե, մը լը՛սե, մ'ասե), նաև *մէք՝* հոգնակին՝ *մէք՝ լսե* (տե՛ս ՔՎԲ, էջ 186-187): Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներում ժխտական խոնարհմանը մասնակցում են *չ, վոչ / վօչ, մի, մէք* մասնիկները: Որոշ խոսվածքներում ժխտման ձևերը հաջորդում են դերբային (գ՛ընըմ չէմ, գ՛ըրիլ չէնք, տէսավ վօչ, վա՛խիլ մի, ա՛ռնիլ մէք, խօսամ վօչ, տայինք վօչ, պըտի խօսայինք վօչ, խօ՛սալ մի, խօ՛սիլ մէք), ժխտական դերբայը ձևով նման է

Մակբայները Բայազետի բարբառում ևս կազմությամբ լինում են պարզ կամ արմատական, բարդ, ածանցավոր, քերականական ձևերից կազմված, նկարագրական: Կազմությամբ պարզ են. *շուտ, յետ, մըկա, լը / հըլը, դ՛ուս, նեռս, էլ* (այլևս), *յեռու, դ՛էմը, տեղ, հազիվ, յել, վըռազ, անջախ, յետո, հ՛ա* (միշտ, շարունակ), *զատ, չում, չուր, նոր* ևն: Բարդ մակբայների մեջ մեծ թիվ են կազմում կրկնավորները՝ *գ՛ախ-գ՛ախ, յետ-յետ, հ՛առէջ-հ՛առէջ, ջ՛ոչիկ-ջ՛ոչիկ, պ°ռապ-ս°ռապ, քռ-քռ, հ՛ըմէն-հ՛ըմէն, քե-քե, հանքուռ-հանքուռ, ծըռնէծուռ, մըչէմէջ, օրէօր, կըզէկուզ, գ՛ախի բէ գ՛ախի, հ՛իրկընէ հ՛իրկուն, քիթ քըթի, գ՛ըլ օխ գ՛ըլ խի, տեղըստեղ, շուշուտ, խրթխէտուն, փոր ու փոշման* ևն: Վերլուծական կամ համադրական կազմության մակբայներ են ձևավորվում նաև տարբեր արմատներով. *ըստե-ընդե, հ՛էքուց-մէկէլ օր, լուս-կէսօր, գ՛օխտուկ - °լէնի, յետու հ՛առէջ, քըռքաշ, հառավնախառ, քռակ°յդի, վըրքամկի, մէշտեղ, խանքակըտուր, քիթուբ՛էրնի, հ՛անգըճախառը, մէշու* (մէ փըշուր), *գ՛ըլխըվեր, ս°ղօր, հ՛ըմընօր* ևն: Ածանցավոր մակբայների մեջ մեծ քանակություն են կազմում *°ն* նախածանցով և անորոշ դերբայով կազմվածները, ինչպես՝ *°ն°սել, °նկ°ռթալ, °նէփել* ևն: Գործառում են մակբայակերտ հետևյալ վերջածանցները. *նեց* - հ՛առավնեց, հ՛իրկընեց, ցերէգնեց. *անց* - տըկանց, հ՛իրսանց, մըչանց, դ՛ըսանց, հ՛իդվանց, գ՛ըլխանց. *վարի / վորի* - գ՛եղավարի, քախկըվորի, գ՛ազանավարի. *անակ / ընակ / նակ* – ջ՛ոչանակ, ջ°յէլնակ, դուշմընն°կ, տըղամ°ռթանակ. *ու* - °մօթու, հ՛ախու, ինադու, հ՛իրա գ՛ըլխու. *էն* - լենքէն, հ՛երկընքէն: Քերականական ձևերից կազմված մակբայների մեջ կան հինհայերենյան սակավ կազմություններ՝ *ն°խնյաց, չօրէք կօղմանց*: Շատ են բացառական հոլովի տարբեր ձևերով կազմված մակբայները. *գ՛ախուց, հառչուց* (սկզբից), *հառչից* (առջևից), *վըրվից, տըկից, օղոռթից, թ°զուց, նորուց, շուտուց, գ՛ախէ, օրէ, օրէ բ՛ընէ, էն գ՛ըլխէն, մըկավնէ, հ՛իրկըվորէ, հ՛առավտընէ, մօրէ, շուդվընէ, խէրվընէ* ևն: Կան նաև տրական հոլովով մակբայներ՝ *գ՛ախին, վախտին, կէսօրին, հ՛իրկըվանը, ցըռտին, մըթին, շոքին, ձ՛ան ու բ՛ըքին, լուսուդ՛եմին*, գործիականով կազմվածներ՝

անորոշին՝ *խօսիլ չէմ* ևն (տե՛ս ԱԲ, էջ 176-177): Նման ձևեր վկայված են դեռևս միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 405):

էթալ օվ, °մառ - °մըռնոցով, գ՛ըշերով, տ°րով, զօռով, զօռով-շ°ռով, թափով, հ՛ավէսով, մ°լ °լ օվ, մէ խանքով ևն:

Մակբայական շատիմաստներ էլ արտահայտվում են նկարագրական եղանակով, ինչպես՝ *հ՛էքուց չէ մէկէլ օր, հ՛ըմէն գ՛ախ, հ՛ըմէն վախտ, հ՛առէչ ժամանակ, կէսօրնէ յետ, մըտկէրի խէտ, հ՛էրէկ մէկ՝ հ՛էսօր էրկու, չուր մըկա, հ՛առավնէ չուր հ՛իրկուն, մէկ օրան մէկ օր, մէ դ°ն, քօ խավնուկ, տ°րէն կից, մէ տէսակ, հ՛ըմընի հ՛°շկի դ՛էմը, հազար դ°ն, հ՛առչի թափը, տ°րին տ°րվավըր°, օրը մէչ, էրկօրը մէկ, մըտկի մէչը, չուր մ°խ գ՛էրէզման, չուր լուս, հ՛իրսի զօռով, մէ հ՛ավի* ևն:

Բայազետի բարբառում մակբայներն ըստ իմաստ լինում են՝ ժամանակի, տեղի, ձևի, չափի և պատճառի:

Ժամանակի մակբայներ. հ՛ա, մըկա, հ՛առէչ, հ՛էսօր, հ՛էրէկ, հ՛էքուց, գ՛ախ-գ՛ախ, հ՛առավտուն, կէսօրին, հ՛իրկըվանը, մըթըվեր, ցըռտին, օրէ, պըստըկուց, մէ գ՛ախ, լը / հըլը, վախտին, °վ°լ, նօյի թըվին, օրէօր, չուր մըկա, ս°ղօր, ըստօվ դէն ևն:

Տեղի մակբայներ. յեռու, մօտիկ, հ՛ըմէն տեղ, դ՛էմէսդ՛էմ, գ՛ըլխըվեր, հ՛օլթըլաղ, մէշտեղ, յել, յելըվեր, °ռանք, նեռս, դ՛ուս, հ՛առէչ, դ՛ըռնէդ՛ուռ, տըմբէտուն, տեղըստեղ, գ՛եղէսգ՛եղ, վըրվից, տըկից, հ՛իրսանց, հ՛իդվից, զատը, կողու կուշտը, բ՛օլորը ևն:

Ձևի մակբայներ. գէժէգէժ, քիթուբ՛էրնի, թ°վ°քլի, կըզէկուզ, ջ՛ոչիկ-ջ՛ոչիկ, վըռազ, °նջախ, տ°փէտ°փ, շուշուտ, գ՛օխտուկ, ճըժանակ, վայրէնավարի, գ՛ողէգ՛ող, գ՛ըլօխ գ՛ըլխի, լէնքէն, քըռքաշ, վըրքամկի, գ՛եղավըր°, մէկէսմէկ ևն:

Չափի մակբայներ. թ°քուբիր, մէշու, քիչ-քիչ, բ՛էրնէբ՛էրան, բօլ-բօլ, հ՛ավել, հ՛ավէլի, քանի դ°ն, ըսկի, հ՛իր չափավոր, չափից դ՛ուս, լըռիվ, յ°ք°, շ°տ գ՛ախ, կիսին խէտ, մէ թեթըվ, հ՛ավէլի շ°տ, հ՛ամայրա, հ՛ըմէն-հ՛ըմէն, °նուն, բ՛ընավ, հէչ ևն:

Պատճառի մակբայներ. °մօթու, հ՛ախու, ինադու, կ°ստու, կըսկը-ծու:

Բարբառումս ևս մի շարք մակբայներ կարող են համատեղել տարբեր իմաստներ, ինչպես՝ ձևի և չափի, ժամանակի և չափի ևն: Օրինակ *հ՛ազիվ* մակբայն արտահայտում է ձևի (Ընդոնք հ՛ազիվ ին

քէլում) և չափի (Ռ՛ազիվ մէ դ°ն խէտը խօսացի) իմաստներ, *յետ* մակբայը արտահայտում է ժամանակի (Ռ՛էսօր յետ ես զառթընե) և տեղի (Լը յետի՛ իշկա) իմաստներ, *հ՛ըմընօր* մակբայը համատեղում է չափի և ժամանակի իմաստներ (Ռ՛ըմընօր էթում ս°ը, գ՛ալում) ևն:

Ծրջակա բարբառների՝ Բայազետի բարբառում իրենց համապատասխանություններն ունեցող մակբայներից են՝ Վ. *առավտուն, °վել, կ՚°խտիկ, տիւս, տըսանց, էրէկ, զատ, սկի, խետխետուն, մկա, խէրու, մէկէց մէկ, յետ, վեր, վիրվանց, ամօթու, ախտու, հիրսանց, տկանց, իտիվանց*, Մ. *մըգա, հէրու, գ՛ըլ խէգ՛ըլ օխ, անջախ, շուդուց, սաբախտան, փըշում, հ՛ուշիգ, մէգօցմէգ, բադյավա, հանքակըդուր, հէրվընէ, հ՛իրգվօրնէ, հ՛ըմէն գ՛ախ, հ՛էդէվանց*, Խ. *աղվորթ, առատունը, °ռ°չ, օսօրվորէ, ըսկ՚ի, իրկըվորէ, խէրիւ, խէրվորէ, մէկ՚ըսմէկ՚, մըկա, յէտ, յէտօ, ամօթու, ախտու, անջաղ*, Ա. *ահու, հէրու, հախսաթաթիկ, տարվէցտարի, քըշէր-ցէրէկ, էրէգ, հեռու, վիրէվ, մէթիքա, անուն, ըսկի, բ՛էրնէբ՛էրան, իրիգուն*, Դ. *անջախ, °վ°լ, դուզ, դ՛ուս, խէրու, հըմնօր, հուշիկ-հուշիկ, մըկ°, մին°կ, շուտվընից, վըռազ, հօռթըլաղ* ևն:

7. ԿԱՊ

Բայազետի բարբառում գործառում են հետևյալ կապերը և կապական բառերը. *°ռանց, բ՛ացի, բ՛օլորը, գ՛ախ, գօր°, դըբա, դ՛էմը, դ՛ուս, թողգի, լայեղին, խէտ, խըթ, խըմար / խամար, կ°յդի, կուշտը, հ՛ակառակին, հ՛ամէմատ, հ՛աշվին, հ՛առէչ, հ՛իդեվը / հ՛էդեվը, հ՛իրսից, ձ՛եռօվ, ձ՛եվի, մ°սին, մէչը, մինչեվ / մինչեվի, յանը, յեռու, յետօ, նեռս, նըման, չափ, չում, չուր, չուրի, չուրքի, պ°ճառօվ, ս°վայի, վախտ, վընասին, վըրէն, վիրեվ, տ°կը, տեղը, ցաճըր, քան / քանց, օքտին:*

Ըստ շարադասության կապերը լինում են. ա) *նախադրություններ*. °ռանց, դըբա, մինչեվ / մինչեվի, չում, չուր, չուրի, չուրքի, խըթ, թողգի, խեռը, քան / քանց, ս°բ°բ. բ) *հետադրություններ*. մ°սին, խըմար / խամար, խէտ, կ°յդի, կուշտը, վըրէն, մէչը, տ°կը, դ՛էմը, հ՛առէչ, հ՛ակառակին, չափ, գօր°, յետօ, գ՛ախ, վախտ, վիրեվ, ցաճըր, նեռս, դ՛ուս, յանը, յեռու, ձ՛եվի, հ՛իդեվը /

հ՛էդեվը, նըման, տեղը, բ՛օլորը, պ°ճառօվ, ձ՛եռօվ, հ՛իրսից, օքտին, վընասին, լայեղին, հաշվին. գ) *երկդրություններ*. *բ՛ացի, ս°վայի*:

Կապերն արտահայտում են հետևյալ կարգի հարաբերություններ.

ա) տարածական. *դըբա, մինչեվ / մինչեվի, չում, չուր, չուրի, չուրքի, կուշտը, վըրէն, մէջը, յանը, տ°կը, դ՛էմը, հ՛առէջը, վիրեվ, ցաճըր, նեռս, դ՛ուս, տեղ, յեռու, հ՛իդեվը / հ՛էդեվը, բ՛օլորը*. բ) ժամանակային. *մինչեվ / մինչեվի, չում, չուր, չուրի, չուրքի, խըթ, վըրէն, դ՛էմը, հ՛առէջ, յետո, գ՛ախ, վախտ, մէջ*. գ) վերաբերության. *մ°սին*. դ) բացառման. *°ռանց, թողգի, խեռը, բ՛ացի, ս°վայի*. ե) պատճառի և հիմունքի. *պ°ճառօվ, ս°բ°բ, խըմար / խամար, հ՛իրսից*. զ) նպատակի. *խըմար / խամար*. է) փոխարինության. *տեղը*. ը) համապատասխանության և ձևի. *հ՛աշվին, նըման, ձևի, կ°յդի, լայեղին*. թ) ընդդիմության և հակառակության. *դ՛էմը, հ՛ակառակին*. ժ) միասնության. *խէտ*. ժա) չափի. *չափ, գօր°*. ժբ) համեմատության. *դ՛էմը, քան / քանց, հ՛ամէմատ, վըրէն*. ժգ) շահի. *օքտին, վընասին*. ժդ) միջոցի. *ձ՛եռօվ:*

Հոլովառության առումով կապերը Բայազետի բարբառում ունեն հետևյալ յուրահատկությունները.

ա) Նախադրությունները, որպես կանոն, գործածվում են հայ-ցական հոլովի հետ. °ռանց *տուն, գ՛իրք, էթալ*. դըբա *ծօվը, մեր յանը*. մինչեվ / մինչեվի / չում / չուր / չուրի / չուրքի *տուն*. խըթ *էթալը*. թողգի *գ՛իրքը*. քան / քանց մեր գ՛եղը. ս°բ°բ *հ՛առտը*: Բացառությունն է կազմում *խեռը* նախադրությունը, որ գործածվում է բացառական հոլովի հետ՝ խեռը *ճըժէրից*: Հավասարապես նաև անորոշ դերբայի և գոյականների տրական հոլովաձևերի հետ է գործածվում °*ռանց* կապը, ինչպես՝ °ռանց բ՛էրել[1400] - °ռանց *բ՛էրէլու*, °ռանց կընիկ - °ռանց *կընգա*, սակայն անձնական դերանունների դեպքում պահանջում է միայն տրական հոլով. °ռանց *ընձի, քեզի, մեզի, ընդու, ընդոնց*:

բ) Հետադրությունների մեծ մասը (մ°սին, խըմար/խամար, խէտ, կ°յդի, կուշտ/ը/, վըրէն / վըր°, մէջ/ը/, տ°կ/ը/, դ՛էմ/ը/, հ՛ակառակին, չափ, գօր°, յան/ը/, ձ՛եվի, հ՛իդեվ/ը/ // հ՛էդեվ/ը/, նըման, տեղ/ը/, բ՛օլոր/ը/, պ°ճառօվ, ձ՛եռօվ, հ՛իրսից, օքտին, վընասին, լայեղին, հ՛աշվին) գործածվում է միայն սեռական հոլովի հետ: Ինչպես երևում է, սրանց մի մասը (օքտին, վընասին, հ՛աշվին, լայեղին,

հ՛ակառակին) գործածվում է միայն որոշյալ առումով: Տարածական իմաստունեցող կապերը սովորաբար կապակցվող բառի հետ որոշակի տեղի իմաստեն արտահայտում և նման դեպքերում գործածվում են որոշյալ առումով (տ°ն կուշտը, °թոռի վըրէն, գ՛ըրքի մէջը, բ՛առցի տ°կը, լուսամութի դ՛էմը, ձ՛որի յանը, տ°ն հ՛իդեվը, °խճըկա բ՛օլորը), սակայն երբ կապակցվող բառն ունենում է որոշիչ հոդը բացառող լրացում, կապը գործածվում է անորոշ առումով (հ՛ըմէն տ°ն կուշտ, մէ °թոռի վըր°, վոշ մէ գ՛ըրքի մէջ, հըմէն տ°ն հ՛իդեվ, մէ °խճըկաբ՛օլոր): Այս կապերը կարող են անորոշ գործածվել նաև այն դեպքում, երբ կապակցվող բառի հետ ձեռք են բերել այլ, դարձվածային իմաստ, ինչպես՝ *հ՛ընգե մըտկէրի մէջ, ըսկի խոսկի տակ չըմընում*: *Տեղ/ը/* կապը ևս կոնկրետ հարաբերություն արտահայտելիս գործածվում է որոշյալ առումով (Հ՛ընգերիտ տեղը դ՛ու մի խոսա), իսկ վերացական հարաբերություն արտահայտելիս՝ անորոշ առումով (Քեզի գըժի տեղ ա դ՛ըրած): *Մէջ* կապը ժամանակային սահմանափակում արտահայտելու դեպքում որոշիչ հոդ չի ընդունում (Երկու օրվամէջ):

գ) Տարածական իմաստ ունեցող *տեղ* կապը գործածվում է հայցական հոլովի հետ՝ *քաղաք տեղ, գ՛եղ տեղ, բ՛անակ տեղ*, արտահայտում է ներգոյական հոլովի (քաղաք տեղ – քաղաքում, բ՛անակ տեղ - բանակում), նաև որոշիչ-որոշյալ հարաբերության (քաղաք տեղ – քաղաքային վայր, գ՛եղ տեղ – գյուղական վայր) իմաստներ:

դ) Միայն բացառական հոլովի հետեն գործածվում *նեռս, դ՛ուս, յեռու* հետադրությունները (դ՛ըռնէն նեռս, գ՛եղից դ՛ուս, հ՛ըմընից յեռու):

ե) Որոշ հետադրություններ էլ գործածվում են տարբեր հոլովների հետ. *մէ տ°րի հ՛առէջ, էթալուց հ՛առէջ, մէ տ°րի յետո, խառնըսից յետո* ևն:

Կապերը Բայազետի բարբառում ևս ներկայանում են իբրև ընդհանուր առմամբ չթեքվող բառեր: Սակայն տարածական և ժամանակային իմաստ արտահայտող մի քանի կապեր, այնուամենայնիվ, հանդես են գալիս նաև տարբեր հոլովաձևերով. *կուշտը, կըշտից,*

[1400] °*ռանց բ՛էրէլ* տիպի կառույցների նշանակությամբ հաճախ գործածվում են °*ն* նախածանցով կազմված ձևեր՝ °*նբ՛էրել*:

կըշտով, վըր°/վըրէն, վըրվի, վըրվից, վըրվով[1401], *մէջը, մըջի, մըջից, մըջով, տ°կը, տըկի, տըկից, տըկով* ևն: Ծրջակա բարբառների՝ Բայազետի բարբառում իրենց համապատասխանություններն ունեցող կապերից են՝ Վ. *առանց, °ռ°ճ, պիւլոր, տէմ, կուշտ, խամար, խետ, մէջ, չում/չուր, վէր/վէրէն, տակ, չ°նձ*, Մ. *առանց, չուրի, դ՛ըբա, սավայի, համար, հ՛առէջ, հ՛էդէվ, տագ, կուշտ, դ՛եմ, ցաձըր, բ՛օլոր, վըր, հեդ/խըտ, մէջ*, Խ. *առանց, °ռ°չը, յէտո, ընչիկ՝, խէտը, խըմար, կուշտը, մէջը, սէվայ (բացի), վըր°ն, տակը, տէմը*[1402], Ա. *առանց, դ՛էմ, էրէսից, կըշտին, համար, մէջ, յէդէվ, վրա, վէրէվ, տակ, տեղ, հէդ, նըման, չափ, գօրա, ինատու, վախտը, խաթրին, առաջ, դէբի, մինչէվ / մինչէվի, դ՛ուրս / դ՛ուս, հէդօ, հէռու, սէվայ*, Դ. *առանց, դ՛ըպա, չուր, դ՛ուս, զատ, հ°ռէջ, դ՛եմ, խետ, մէջ, սավայի, կուշտ, տակ, խամար, վըրէն*: Բոլոր բարբառներում արձանագրված են *առանց, առաջ, դեմ, կուշտ, համար, հետ, մեջ, մինչև, վրա, տակ* կապերի համապատասխան ձևեր: Վանի և Մշո բարբառներում *հետ, մեջ, վրա* կապերի համապատասխան ձևերը գործածվում են և՛ նախադաս, և՛ հետադաս (Վ. խետմե – մե խետ, մէջ մե – մեր մէջ, վէր քյե – քյո վէրէն[1403], Մ. խըտքըզի - քու խեդ, վըր սէղնին – սէղնի վըրէն, մըջ քըզի – քու մէջ[1404]):

8. ՇԱՂԿԱՊ

Բայազետի բարբառում գործառում են համադասական հետևյալ շաղկապները. *ու, բ՛այց, բը / բա, յա, կ°մ, կ°մ էլ, էլ, համ էլ, համ ... համ, չում բիլ °, մինչեվ °նքամ, մ°նավանդ, ուրեմ, վոնչ ... վոնչ, յա... յա, յաթե չէ, թե չէ, վոնչ թե միյն°կ ... էլ, էլ ... էլ, հ՛ըմա, վոնչ թե, միյն°կ թե, իլ °քչի, թե, թե ... թե*:

Ու շաղկապը ամենագործածականն է: Գավառ քաղաքի խոսվածքում բաղիյուսական բարդություններում այս շաղկապը փոխարինվում է *ը*-ով. *ս°ր ու ձ՛որ – ս°րը ձ՛որ, տուն ու տեղ – տունը տեղ*[1405]: *Ու* – ից բացի՝ միավորիչ-հավելական մյուս շաղկապներն են՝ *էլ, համ*

[1401] Հնարավոր է, որ սրանցում *վ*-ի հավելումը տեղի է ունեցել *վիրեվ* բառի ազդեցությամբ:
[1402] Խոյ-Մարաղայի բարբառում մի շարք կապեր գործածվում են հոդով (տե՛ս ԽԲ, էջ 140, տողատակ):
[1403] Տե՛ս ՔՎԲ, էջ 198:
[1404] Տե՛ս ՄԲ, էջ 174:
[1405] Այդպես նաև Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներում (տե՛ս ԱԲ, էջ 194):

էլ, համ...համ, չում բիլ°, մինչեվ°նքամ, վոնչ...վոնչ, վոնչ թէ միյն°կ ... էլ, էլ...էլ, թէ...թէ:

Ներհակական շաղկապները ավելի քիչ են: *Բը* շաղկապն ունի «իսկ, բայց» նշանակությունները. *Յես մըկա կինոյեմ տէնում, բը դ՛ո՞ւ ինչ ես°նում*: Նորատուսի խոսվածքում այս շաղկապն ունի *բա* տարբերակը. *Բա դ՛ու չի՞ր ջ՛ինում*: Ավելի գործածական է *բ՛այց* շաղկապը: Սրա իմաստով գործածական է նաև *հ՛ըմա* բառը. *Հ՛ըմէն ինչ էլ խասկընում եմ, հ՛ըմա ձեռըս ճ°ր չըկա*: Ներհակական մյուս շաղկապներն են՝ *թէ չէ, վոնչ թէ, միյն°կ թէ*: Տրոհական շաղկապներ հիմնականում ձևավորվում են *յա, կ°մ* արմատներով: *Յա* շաղկապը գործածական է ավագ սերնդի խոսքում, երիտասարդ սերունդը ավելի շատ գործածում է *կ°մ* շաղկապը, այդպես նաև՝ սրանցով ձևավորված կրկնադիրները՝ *յա..յա, կ°մ...կ°մ*, բաղադրյալ մյուս շաղկապները՝ *յա թէ չէ, կ°մ թէ չէ, կ°մ էլ*: Տրոհական արժեքով գործառում է նաև *թէ* շաղկապը. *Մըկա ի՞նչ ես ուզում՝ տըղա՞ թէ °խճիկ*: Առանձնացման-սաստկական իմաստունեն *մ°նավանդ, իլ °քչի* շաղկապները:

Բարբառում գործառում են ստորադասական շաղկապների հետևյալ խմբերը. ա) մեկնական. *վոր, թէ, ինչ*, բ) ժամանակի. *հըմա, հըմավոր, խըթ, մինչեվ / մինչեվի, չում, չուր, չուրի, չուրքի, քանի, քանի լը, ինչ, մինչեվ վոր, թէ չէ, վոր, յեփ վոր, իմալ վոր*, գ) պայմանի. *թէ, թէ վոր, վոր, միյն°կ թէ*, դ) պատճառի և հիմունքի. *քանի վոր, վոր, ինչ աթէ*, ե) զիջական. *թէկուզ, էլ, փոխանակ*, զ) նպատակի. *վոր, միյնակ թէ, թ°քիլ դ°ն*, է) համեմատության. *ինչ օր, կ°սես, կ°սիր, կ°սես թէ, քան, քան թէ, իմալ վոր*:

Ծրջակա բարբառների՝ Բայազետի բարբառում համապատասխանություններ ունեցող շաղկապներից են՝ Վ. *էլ, թէ, համա* (բայց), *քյանի վոր, վոր*[1406], *համ... համ, յա, յան... յան* (կամ... կամ), Մ. *ու, լէ* (էլ), *յէփոր, կամ, յա, օր, թէ, համա, քընի, քանի որ, խ էլ, թէ, վոր, յա, բը, համ... համ, համը* (բայց), *կամ*, Ա. *բա, էլ, ու, թէ չէ, յա, բավոր, ինչ աթէ, թէ վոր, վոր, քանց թէ*, Դ. *հըմ°, հ°մ... հ°մ, յա..յա, յ°նի (իբր թե), ըբ°վոր* (բաոր):

[1406] Հ.Աճառյանը Վանի բարբառում արձանագրել է վոր շաղկապի հետաքրքրական մի գործածություն, երբ այն հանդես է գալիս կրկնված բայի հետ՝ *անշուշտ, անտարակույս* իմաստով, ինչպես՝ *Չի ուզե վոր չի ուզե* (տե՛ս ՔՎԲ, էջ 206): Նման կիրառությունը տարածված է նաև Բայազետի բարբառում, ինչպես՝ *Գ՛ալում եմ վոր գ՛ալում եմ*:

9. ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Բարբառումս ավելի տարածված են հաստատական և երկբայական վերաբերականները, օր.՝ ա) հաստատական. *խա, խխ*[1407], *բ°/բա, բը ի՞մալ, բը ի՞նչ, բը դ՛ու ի՞մալ իր գիդում, իսկականից, իսկականից վոր, դուզը վոր, օղոռթից, օղոռթ վոր, հաստադ, հաստադից, է՞լ հ՛ընչի՝ չէ, հ՛ընչի՞ չէ, էլի վոր, ըհը*, բ) երկբայական. *յերեվի, վայթէ, ինչ օր, բ°լքի, թոբաթէ, յենի, գիվ°, գիվ° թէ, կ°սես, յարաբ, չըլնի՞, °վատա, չըմդէ*[1408], *կ°՝ չըկա, դ՛ըժվար թէ, հազիվ թէ, խո:* Գործառում են նաև այլ կարգի վերաբերականներ՝ գ) զգացական. *°փսոս, էրնէկ, խոզի/խոզնի, ափսոս, հ՛ուր էր թէ, միյն°կ թէ*, դ) կամային. *դը, դը թո, թո, մէ*, ե) ցուցական. *ահա/ըհը*[1409], *հ՛էսա, հ՛էտա, հ՛էնա*, զ) սահմանափակման. *գ՛օնէ, միյն°կ, թ°ք*, է) սաստկական. *հըմա, չումբիլ°, մ°նավանդ, դաժէ*, ը) զիջական. *ինչվորայա, ինչ էլ հ՛ըլնի, օղոռթ, ինչ ուզում հ՛ըլնի. ինչ գ՛ընօվ ուզում հ՛ըլնի*, թ) ժխտական. *°նուն* (ամենևին), *չէ:*

Բայազետի բարբառում գործառող երաբերականներին համապատասխան ձևեր արձանագրվել են Արարատյան բարբառում (բա, դուզ վոր, ըղորթ, ինչ ուզըմ աըլի, բալքի, թոբաթէ, կասէս, կարօղա, յանի թէ, յարաբ, վայ թէ, ըհը, էսա, էտա, էնա, դէ վոր, էրնէկ, ինչ էլ ըլնի, անուն, չէ), Ալաշկերտի խոսվածքում (վըյտէ, ըսիս, չէղնի՞ թէ, ահան, գ՛օյնա, հա, չէ, իպըր, գյըվա, թըխ, դը, ի՞նճ հ՛իմնաս, ըխ, բա), Վանի բարբառում (ափսոս, էրանէկ, խոզէ[1410]):

10. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բայազետի բարբառում, ըստ իրենց արտահայտած զգացումների, ձայնարկությունները լինում են. ա) ուրախության, բավականության. *օ՛խ, ո՛ւխ, ջա՛ն, օխա~յ, վա՛խ, օխ*, բ) ցավի, վշտի. *վա~յ, վայ-վայ, յամա~ն, վա~խ, օ~ֆ*, գ) դժգոհության,. *տո՛, քա՛, օ՛ֆ, հ~, է՛լ հ, ա~*

[1407] Ներառական *խխ* արտասանությունը ներկայացնող վերաբերականը թերևս առաջացել է *խա* վերաբերականից և գործածվում է իբրև նրա կրճատ տեսակ հաստատական պատասխան տալիս. – *Հէսօր էթո՞լ մես:* - *խխ*(այո):

[1408] Առաջացել է *չեմ գիդեր* ձևի կրճատումով:

[1409] Ցուցական *ըհը*-ն արտասանվում է նույն կերպ, ինչ հաստատական *ըհը*-ն:

[1410] Այս բառերը Հ.Աճառյանը դիտարկել է ձայնարկությունների շարքում (տե՛ս ՔՎԲ, էջ 207):

աՙ, էՙ, դէ-դէ,. դ) զզվանքի, արհամարհանքի. *°խկ, վ°խկ, թու. վաՙյ, վայ-վայ-վայ*, ե) ծաղրի, հեգնանքի. *հու ~ ու ~, պահ-պահ-պահ, աՙ հաՙ հաՙ*, զ) ափսոսանքի. *թ°՛, վաՙաՙյ, է է~, հաՙյ գիդի հաՙ*, է) զարմանքի. *վա՞յ, պաՙ հо~, հյ աՙ, յ աՙ, վաՙյ, վաՙշ, լ ը՛, հաաՙ*, ը) պատասխանի. *ջան, ջանէ, հաջան, հաՙ:* Ձայնարկությունները արտահայտում են նաև սաստում (*յ աՙ, վաՙյ, լ ը-լ ը*), հետաքրքրասիրություն (*հ°՞, է՛*), սպառնալիք (*հաՙ*), հիասթափություն (*ը22222*), վանում (*փը՛խկ*), ըմբռնում (*հաաՙ*) ևն: Կոչական ձայնարկությունները լինում են. ա) մարդկանց ուղղված. *տо, քա, էյ, °ր°, գ°, գ°դ°, °գ, °գիգ, ջան, աՙյ*, բ) կենդանիներին ուղղված. *քը2°, հ՛հռռի, քէջ, փը2տ, փը2տ°, հо2, оհо, չо2, ճու-ճու-ճու, հ՛հ՛շառ, բըժ-բը ժ-բը ժ, քու թ-քու թ, հ՛ը ռռռ* ևն:

Ծրջակաբարբառների՝ Բայազետի բարբառում իրենց համապատասխանանություններն ունեցող ձայնարկություններից են՝ Վ. *հ°յդ°, տо, քյ ա, ճու ճու, փշի փշի, քշաքշա, փշտա, փշտ, հо2, չо2*, Խ. *ախ, հէյ, оֆ, վայ, թիւ, տо, ճու ճու, բիժի բիժի, քշ°քշ°, փը2տ°, հо2 հо2, չо2, հо հо*, Մ. *ախ, վայ, յ ամ ան, оֆ, оխայ, դէ-դէ, թ°, հէ՛յ գիդի, հաՙհաՙհա, չо2, քը2, հը ռռի*, Ա. *ախ, ու խայ, ջան, ջանը մ, պահ-պահ, оխ, ախկ, վախկ, թու, էՙ, վայ, оֆ, վախ, յ ա, պահ, պահо, հայ գիդի հայ, դէ-դէ, փը խկ, հավար, բը ժի-բը ժի, оհо-оհо, քը2, քը2ա, ճու – ճու, փը2տ*, Դ. *աՙ, ահա, բ°, գյ°, թ°, հայ դէ, հо2, ճու-ճու, չо2, հо-հо, փը2հ-փը2հ, փը2տ, оխ, оխայ* ևն:

ԳԼՈՒԽ V

ԲԱՅԱԶԵՏԻ ԵՎ ԱՌՆՉԱԿԻՑ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՈՒ ԳԱԲԱՆԱԿԱՆ - ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԵՏ

Բայազետի բարբառի հատկանիշների՝ վերը բերված նկարագրությունն ու քննությունը թերևս թույլ է տալիս ըստ հնարավորին ամբողջական պատկերացում կազմել բարբառիս և շրջակա բարբառների հետ նրա առնչությունների վերաբերյալ: Սակայն Բայազետի և շրջակա բարբառների փոխհարաբերությունները վիճակագրորեն ճշգրտելու և անհրաժեշտ եզրակացությունների հանգելու համար հարկ ենք համարում

գործադրել նաև հայ բարբառների դասակարգման՝ Գ.Ջահուկյանի առաջ քաշած զուգաբանական – վիճակագրական սկզբունքը [1411]. այն թույլ է տալիս հնչյունական և քերականական 100 բարբառային հատկանիշների միջոցով կատարել բարբառային միավորների համեմատություններ, պարզել դրանց ընդհանրությունների և տարբերությունների քանակը՝ այդպիսով ստանալով նաև բարբառային միավորների փոխհարաբերությունների վիճակագրական պատկերը: Ըստ Գ.Ջահուկյանի՝ «բարբառային հատկանիշները հարյուրով չեն սահմանափակվում»[1412], ուստի նա կատարել է հատկանիշների ընտրություն՝ իբրև չափանիշ կիրառելով դրանց կարևորությունը և տարածվածությունը: Թերևս իր ուսումնասիրության նպատակներից ելնելով՝ Գ.Ջահուկյանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ բարբառային հատկանիշները կարող են տարբեր լինել նաև ըստ բնույթի: Մասնավորապես՝ չի կարևորվել այն, որ որոշ հատկանիշներ կարող են բնութագրվել առկայությամբ / բացակայությամբ, մինչդեռ այլ հատկանիշներ կարող են բնութագրվել նույն լեզվական իրողության՝ իրար համապատասխանող բարբառային տարբեր դրսևորումների հակադրությամբ, որոնք տեսականորեն միմյանց բացառում են[1413], և այս դեպքում, փաստորեն, գործ ունենք միմյանց հակադիր բարբառային մեկից ավելի հատկանիշների հետ: Օրինակ, «նախաբաղաձայնական դիրքում կիսաշփականների շփականություն» (13) բարբառային հատկանիշին բնորոշ է բարբառներում առկայությունը կամ բացակայությունը, այն չունի իրեն համարժեք հակադիր և դրական արժեք ունեցող այլ հատկանիշ: Մինչդեռ բառասկզբում նախնական համարվող ձայնեղ կիսաշփականների և պայթականների դիմաց դրսևորումները բնութագրվում են միմյանց համարժեք, միմյանց փոխբացառող դրական հետևյալ հատկանիշներով՝ բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ

[1411] Այս սկզբունքի մասին տե՛ս ՀԲՆ, էջ 28:
[1412] Տե՛ս ՀԲՆ, էջ 36:
[1413] Նույն իրողության տարբերակային կամ հակադիր դրսևորումները բարբառային լեզվում հաճախ տեսականորեն են միայն միմյանց փոխբացառող: Բարբառներում համատեղ գործառում են լեզվական տարբեր շեր-տեր, փոխներթափանցումներ ներկայացնող իրողություններ, որի հետևանքով կարող են գոյակցել նաև փոխբացառող իրողություններ, օրինակ, Բայազետի բարբառում

խլություն (1), բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփական-ների շնչեղ ձայնեղություն (2) և բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլություն (3)[1414]: Բարբառային միավորների համեմատությունների դեպքում բարբառային ցանկացած հատկանիշ, իհարկե, կարող է ունենալ տարբերակող դեր: Սակայն ինչպես Գ.Ջահուկյանի բերած 100, այնպես էլ դրանցում չարտահայտված այլ հատկանիշների մեջ առկա՝ նույն իրողության տարբեր դրսևորումները ներկայացնող և նվազագույն հակադրության մեջ եղող երկանդամ կամ բազմանդամ հատկանիշները, որպես կանոն չդրսևորվելով նույն բարբառային միավորում և տեսականորեն գտնվելով փոխբացառող հարաբերության մեջ, ներկայացնում են բարբառային համակարգում առկա տարբեր հնարավորություններն ու դրանց յուրօրինակ իրացումները, զարգացման տարբեր ուղիները, վերջին հաշվով՝ նույն իրողությունը տարբեր կերպ ներկայացնող հատկանիշների փունջ: Այս կարգի հակադիր հատկանիշները միշտ բարբառային միավորները տարբերակող արժեք ունեն: Ինչ վերաբերում է առկայությամբ / բացակայությամբ բնութագրվող միանդամ հատկա-նիշներին, որոնք կարող են դրսևորվել տարբեր բարբառներում՝ ունենալով կամ չունենալով դրսևորման քանակական, տարածական ընդգրկման տարբերություններ, ապա այդպիսիք, իբրև իրողության հետագա զարգացման արդյունք հակադրության մեջ լինելով հայտնի կամ ենթադրվող նախաձևերի կամ գրական լեզուների համապատասխան ձևերի հետ, թերևս միշտ չէ, որ բարբառները տարբերակող արժեք ունեն[1415]. դրանք կարող են ունենալ դրսևորման տարբերություններ թե՛ տարբեր բարբառներում, թե՛ նույն բարբառի շրջանակներում: Օրինակ, քմայնացած °ձայնավորը տարբեր բարբառներում գործառում է տարբեր հիմունքներով ու տարածվա-ծության տարբեր ընդգրկումներով, բայց այդ կարգի

g-ով ձևերի կիրառությունները չեն խոչընդոտում նաև շատ դեպքերում է-ով ձևերի հանդես գալուն:

[1414] Գ.Ջահուկյանի մոտ նույն իրողության տարբեր, նաև որոշ իմաստով հակադիր դրսևորումները երբեմն ներկայացվում են իբրև նույն հատկանիշի ներքին տարբերակումներ: Տե՛ս նաև 26, 68, 87 հատկանիշների ձևակերպումները (ՀԲՆ, էջ 62, 84, 101):

տարբերություններ հաճախ դրսևորվում են նաև նույն բարբառի շրջանակներում՝ տարբերակելով խոսվածքներ և ունենալով նաև խոսվածքային հատկանիշի արժեք: Մինչդեռ հակադրական հարաբերության մեջ եղող հատկանիշներից որևէ մեկի առկայությունը որպես կանոն բացառում է շարքի մյուս հատկանիշների գործառությունը նույն բարբառի շրջանակներում՝ այդպիսով տվյալ բարբառը առանձնացնելով հակադիր հատկանիշ ունեցող բարբառներից: Հակադրության մեջ եղող հատկանիշները վկայում են բարբառային միավորների տարբերակման և զարգացման յուրահատկությունների մասին, մինչդեռ այս կամ այն հատկանիշի առանձնակի դրսևորումները կարող են վկայել բարբառային փոխներթափանցումների, նոր ձևավորվող կամ վերացող իրողությունների, ինչպես նաև բարբառային տվյալ միավորի կամ միավորների յուրահատկությունների մասին: Միանդամ հատկանիշները ունեն ծավալման ավելի մեծ հնարավորություններ[1416]: Եվ ընդհակառակը, հակադրական հարաբերությունների մեջ եղող հատկանիշները որպես կանոն ունեն տարածվածության փոքր ցուցիչներ[1417]: Հնարավոր են նաև հանգամանքների բերումով հակադրական հատկանիշների փոխներթափանցումներ, նաև հատկանիշներից մեկի փոխարինումը մյուսով, որը, օրինակ, հնչյունական համակարգի ոլորտում կնշանակի տվյալ բարբառային միավորում հնչյունական օրենքի ձևավորում, քերականական համակարգում՝ անգամ բարբառային միավորի ճյուղային վերաբերության փոփոխություն:

Թվում է՝ բարբառների փոխհարաբերությունները որոշելիս կարևոր է հաշվի առնել նաև տարբերությունների ամբողջական, թե մասնակի դրսևորված լինելը: Կարծում ենք՝ ամբողջական տարբերությունների գերակշռության չափը կարող է բարբառային

[1415] Խոսքը, անշուշտ, չի վերաբերում ընդհանրապես կամ տվյալ տարածքում միայն մեկ բարբառի հատուկ հատկանիշներին, հասկանալի է, որ այդպիսիք միշտ ունեն տարբերակող դեր:

[1416] Այդ են վկայում նաև Գ.Ջահուկյանի՝ աղյուսակներում բերված տվյալները, համաձայն որոնց՝ տարածման 60 միավորից բարձր ցուցիչ ունեցող 25 հատկանիշներից 24-ը միանդամ հատկանիշներ են ներկայացնում, և միայն մեկը (*կու*-ով ներկա) բազմանդամ հակադրության մեջ եղող հատկանիշ է (տե՛ս ՀԲՆ, էջ 51-119):

[1417] Օրինակ, ձայնեղների դիմաց՝ շնչեղ խուլեր՝ 8,0 - շնչեղ ձայնեղներ՝ 28,0 – խուլեր՝ 54,0. Հ-ի դիմաց խ՝ 19,5 – հ-ի դիմաց ֆ՝ 40,0 և նն:

տարբերակվածության աստիճանի որոշման լրացուցիչ միջոց լինել:

Նկատի ունենալով ասվածը՝ կարծում ենք, որ Գ.Ջահուկյանի առաջ քաշած՝ հայ բարբառների դասակարգման և հետազոտման զուգաբանական-վիճակագրական սկզբունքը[1418], որի գիտական հիմնավորման ու կիրառման փորձ է հեղինակի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը[1419], ունի տեսական ու գործնական հետագա զարգացման լայն հնարավորություններ, իսկ զուգաբանական-վիճակագրական սկզբունքի ընձեռած հնարավորությունները մենք գործադրել ենք՝ ելնելով աշխատանքում մեր առաջադրած խնդիրներից:

Շրջակա բարբառների հետ Բայազետի բարբառի փոխհարաբերությունները ներկայացնում ենք ըստ Գ.Ջահուկյանի ընտրած բաղաձայնական, ձայնավորական, անվանական ու բայական բարբառային հատկանիշների[1420]՝ հաշվի առնելով նաև Բայազետի բարբառի վերաբերյալ Գ.Ջահուկյանի բերած տվյալներում մեր կատարած որոշ ճշգրտումները[1421]: Միաժամանակ հարկ ենք համարել Գ.Ջահուկյանի աղյուսակներում ըստ հնարավորին կատարել մյուս բարբառների վերաբերյալ որոշ ճշգրտումներ ևս[1422]: Բացի այդ, Գ.Ջահուկյանի աղյուսակներում Մշո, Վանի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների բոլոր խոսվածքների տվյալներով մեր աղյուսակները չծանրաբեռնելու նպատակով այդ բարբառների

[1418] Գ.Ջահուկյանը իրավացիորեն նշում է, որ այն «հնարավորություն է տալիս խուսափելու միակողմանիությունից, բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքներն առանձնացնելիս ելնել օբյեկտիվ չափանիշներից և հնչյունաբանական ու քերականական առանձնահատկությունները բաշխել ըստ պատմաաշխարհագրական սկզբունքների» (տե՛ս ՀԲՆ, էջ 28):

[1419] Տե՛ս նշվ. աշխ., էջ 28:

[1420] Տե՛ս նշվ. աշխ., էջ 45-119: Իր ընտրած և բազմահատկանիշ դասակարգման համար գործածած հարյուր բարբառային հատկանիշներից Գ.Ջահուկյանը Բայազետի բարբառին վերագրել է 39,5 միավոր հատկանիշներ, որոնցից ձայնավորական են 9,5-ը, բաղաձայնական՝ 9,5-ը, անվանական՝ 11-ը, բայական՝ 9,5-ը:

[1421] Տե՛ս նաև Վ.Կատվալյան, Բայազետի բարբառը ըստ բարբառների բազմահատկանիշ դասակարգման, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Ե., 2010, թիվ 2, էջ 181-186: Պետք է նշել, որ բազմահատկանիշ դասակարգում կատարելիս հեղինակը հենվել է ժամանակին եղած տվյալների վրա, որոնք մի շարք դեպքերում խիստ պակաս են եղել, և Գ.Ջահուկյանը այդ հանգամանքը չի թաքցնում (տե՛ս ՀԲՆ, էջ 6-7):

[1422] Յուրաքանչյուր նման դեպքում ճշգրտում կատարում ենք բարբառային խոսքի մեր դիտարկումներով կամ բարբառագիտական գրականության մեջ եղած փաստերը հաշվի առնելով:

համար ներկայացնում ենք միջինացված ցուցանիշներ[1423]: Մյուս կողմից՝ բարբառների առնչությունների պատմական զարգացումը վիճակագրորեն ցույց տալու համար օգտագործել ենք Գ.Ջահուկյանի կողմից 5-րդ դարի համար հնարավոր համարված 40 հնչյունաքերականական հատկանիշներ ներկայացնող Աղյուսակ 10-ի տվյալները[1424]:

1.1. Առնչությունները ըստ հնչյունական հատկանիշների

Առնչությունները ըստ բաղաձայնական հատկանիշների[1425]

Ծրջակա բարբառներում բաղաձայնական հատկանիշների դրսևորումների (տե՛ս Հավելված 6, Աղյուսակ 1) առումով կատարել ենք հետևյալ ճշգրտումները. ըստ Գ.Ջահուկյանի՝ Դիադինի բարբառին բնորոշ չէ բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղությունը (2), սակայն այդ հատկանիշը բարբառն ունի որոշ յուրահատկությամբ: Նույն բարբառին մասամբ վերագրված՝ քմայնացած հետնալեզվայինների առկայությունն (8) հատկանիշն ունի ամբողջական դրսևորում: Բաղաձայնական վեց հատկանիշներ որևէ դրսևորում չունեն դիտարկվող բարբառ-

---

[1423] Այսպես, եթե հատկանիշը բնորոշ է տվյալ բարբառի բոլոր խոսվածքներին կամ խոսվածքների ճնշող մեծամասնությանը, իրողությունը գնահատել ենք 1 միավոր և արտահայտել ենք + նշանով, իսկ եթե հատկանիշը որևէ բարբառի բնորոշ չէ կամ խոսվածքների ճնշող մեծամասնությանը բնորոշ չէ, վերագրել ենք 0 միավոր և արտահայտել ենք - նշանով: Խոսվածքների մեծ մասին բնորոշ հատկանիշը գնահատել ենք 0,5 միավոր՝ արտահայտելով ± նշանով, իսկ խոսվածքների փոքր մասին բնորոշ հատկանիշը՝ դարձյալ 0,5 արժեքով, ներկայացրել ենք ∓ նշանով: Օրինակ, թիվ 3 հատկանիշը, ըստ Գ.Ջահուկյանի տվյալների, հատուկ է Մշո բարբառի 9 խոսվածքներից միայն Արճեշին (տե՛ս ՀԲՆ, էջ 56-57), ուստի Մշո բարբառի համար մենք այդ հատկանիշի դիմաց կատարում ենք - նշումը: Նույն այդ բարբառի միայն երկու խոսվածք չունեն թիվ 4 հատկանիշը, ուստի ընդհանուր բարբառի համար մենք նախընտրել ենք կատարել + նշումը: Թիվ 2 հատկանիշը Մշո բարբառի 4 խոսվածքների է բնորոշ և հատուկ չէ բարբառի 5 խոսվածքներին, ուստի բարբառի համար մենք գործածել ենք ∓ նշանը, իսկ թիվ 14 հատկանիշը բնորոշ է 5 խոսվածքների և հատուկ չէ 4-ին, ուստի ներկայացրել ենք ± նշանով: Այսպիսով, եթե Գ.Ջահուկյանը ∓ և ± նշանակումները գործածում է այն դեպքերում, «երբ տվյալ վայրում տվյալ հատկանիշը գտնվում է սկզբնավորման կամ մահացման պրոցեսում, չի ընդգրկում բոլոր կարևոր բառերը, նույն վայրում տալիս է զուգահեռ ձևեր և այլն» (տե՛ս նշվ. աշխ., էջ 40), ապա մենք այդ նշանները գործածում ենք նաև բարբառում հատկանիշի մասնակի տարածական ընդգրկումը ցույց տալու համար: Մեր կողմից միջինացված ցուցանիշը տարբերակելու համար գործածում ենք աստղանիշ, ինչպես՝ +*, -*, ±* ևն (տե՛ս Հավելված 6):

[1424] Տե՛ս ՀԲՆ, էջ 162-166:

ներում[1426], դրանցում բարբառային մի շարք հատկանիշներ սակավ տարածում ունեն[1427]:

Բայազետի և շրջակա բոլոր բարբառներում այս կամ այն կերպ դրսևորվող հատկանիշներն են՝ 1. ր-ից հետո, նաև միջձայնավորային ու բառավերջի ձայնավորային դիրքերում գտնվող ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-խլությունը (4), 2. Ֆ-ի առկայությունը (21), 3. բառասկզբում ձայնավորից առաջ հավելական հ-ի առկայությունը (15), 4. քմայնացած հետնալեզվայինների առկայությունը ոչ փոխառյալ բառերում /նաև՝ գ, կ, ք – ի դիմաց ջ, ճ, չ/ (8): Եթե առաջին երկու հատկանիշները բարբառային հայերենում գրեթե ընդհանրական են իրենց տարածվածությամբ (համապատասխանաբար՝ 98,0 և 94,0 ցուցիչներով), ապա երրորդ հատկանիշը ունի տարածվածության 63,5 ցուցիչ[1428] և ավելի բնորոշ է արևելյան խմբակցության բարբառներին՝ տարածվածության 39,5 ցուցիչով՝ արևմտյանների 24-ի դիմաց: Ընդ որում՝ այդ 24-ից 14,5-ը վերաբերում է Մշո, Վանի և Դիադինի բարբառներին[1429]: Տարածվածության գրեթե նույն ցուցիչն ունի 4-րդ հատկանիշը՝ 65,5[1430]: Այս հատկանիշը ևս ավելի տարածված է արևելահայ բարբառներում (39,5), իսկ արևմտյաններում ունի 26 միավոր ցուցիչ, որից 10-ն է վերաբերում Վանի, Դիադինի և Մշո բարբառներին:

Չկա բաղաձայնական որևէ հատկանիշ, որի առկայությունը կամ բացակայությունը բնորոշ է միայն Բայազետի բարբառին: Այդպես նաև՝ Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառների դեպքում: Միայն

[1425] Տե՛ս ՀԲՆ, էջ 45-62 և Հավելված 6:

[1426] Այդպիսիք են՝ բառասկզբի ձայնեղների շնչեղ-խլությունը (1) և խուլերի ձայնեղությունը (5), միջձայնավորային բաղաձայնների ոչ-սաստկական և ոչ-առնմանական կրկնությունը (12), *ր*-ի քմայնացածությունը (22), *ռ*-ի և *ր*-ի շփոթությունը ոչ նախաբաղաձայնական դիրքում (23) և բաղաձայնահաջորդ *և*-ի պահպանվածությունը (24): Գ.Ջահուկյանի աղյուսակում Վանի բարբառին վերագրված է *ր*-ի քմայնացածություն (տե՛ս ՀԲՆ, էջ 57), սակայն նման իրողություն վկայված չէ բարբառագետների կողմից (տե՛ս ՔՎԲ, էջ 87-92. ՀԼՊՔ, էջ 219-224), ուստի պետք է կարծել, որ այս հատկանիշը դիտարկվող տարածքում չի գործառում:

[1427] Միայն Արարատյան բարբառին են հատուկ բառասկզբում՝ *ր*-ից առաջ *հ*-ի դիմաց շրթնային *ֆ*-ի դրսևորումը (17), *խ*-ի դիմաց տարնմանական *հ*-ն (18) և միջձայնավորային *ս*-ի դիմաց *հ*-ն (25): Միայն Մշո բարբառին է հատուկ բառասկզբում (հայերեն և օտար բառերում) *ղ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը (19): Միայն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում բառասկզբի ձայնեղների դիմաց առկա են խուլեր (3), առկա է նախաբաղաձայնական դիրքում հետնալեզվային պայթականների շփականություն (10) ևն:

[1428] Տե՛ս ՀԲՆ, էջ 62:

[1429] Տե՛ս նշվ. աշխ., էջ 56-58:

Արարատյան բարբառը չունի *նգն, նկն*-ի դիմաց *յն* (9), բառասկզբի *հ*-ի դիմաց ոչ առնմանական *խ*(16) հատկանիշները:

Բաղաձայնական հատկանիշների առումով Բայազետի և Դիադինի բարբառների տարբերությունների ցուցիչը ամենափոքրն է՝ 3,0, ընդ որում՝ դեպքերի մի մասում Բայազետը ունի հատկանիշի մասնակի դրսևորում՝ Դիադինում այդ հատկանիշի բացակայության դիմաց (ձայնեղացում /6/, ապաշնչեղացում /7/, առնմանական փոփոխություններ /11/), այլ դեպքերում՝ Դիադինին ամբողջովին հատուկ հատկանիշը մասամբ է դրսևորվում Բայազետում (հետնալեզվայինների քմայնացման առկայություն /8/ և *նգն, նկն*–ի դիմաց *յն* /9/), կամ Բայազետի բարբառին բնորոշ հատկանիշը Դիադինում ունի մասնակի դրսևորում (կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում /13/): Փաստորեն, Բայազետի և Դիադինի բարբառների միջև բաղաձայնական առկա բոլոր տարբերությունները ունեն մասնակի բնույթ: Երկու բարբառները տարբերակող և միմյանց հակադրվող բաղաձայնական հատկանիշներ չեն դրսևորվում:

Բայազետի և Մշո, ինչպես նաև Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառների տարբերությունների ցուցիչը նույնն է՝ 7: Բայազետի և Մշո բարբառների բաղաձայնական տարբերությունները ևս մի շարք դեպքերում ունեն մասնակի բնույթ՝ ավելի հաճախ հատկանիշի ամբողջական և մասնակի դրսևորումներով (2, 6, 8, 9, 14, 16), երբեմն՝ նաև մասնակի առկայության դիմաց բացակայությամբ (7, 11): Սակայն առկա են նաև ամբողջական տարբերություններ. այսպես, նախաբաղաձայնական դիրքում կիսաշփականների շփականությունը (13) և օտար *կ՛* հնչյունի առկայությունը (20) հատուկ են միայն Բայազետի բարբառին, իսկ բառասկզբում *ղ*-ի դիմաց *խ*-ի դրսևորումը (19) հատուկ է Մշո բարբառին: Նկատենք, որ Բայազետի բարբառում *կ՛* հնչյունը ևս առկա է բառասկզբում *ղ*-ի դիմաց, ուստի երկու բարբառները տարբերակող վերջին երկու (19 և 20) հատկանիշները հակադրության մեջ գտնվող իրողություններ են:

Բայազետի և Խոյ-Մարաղայի միջև ամբողջական տարբերությունները չորսն են: Դրանցից երկուսը ներկայանում են

[1430] Տե՛ս նշվ. աշխ., էջ 62:

Բայազետին բնորոշ հատկանիշներով (ձայնեղների դիմաց շնչեղ ձայնեղներ /2/, *հ*-ի դիմաց որևէ դիրքում *յ* /14/), իսկ երկուսը՝ Խոյ-Մարաղայի բնորոշ հատկանիշներով (ձայնեղների դիմաց խուլեր /3/, նախաբաղաձայնական դիրքում պայթականների շփականություն /10/): Ընդ որում՝ ձայնեղների դիմաց մի դեպքում շնչեղ ձայնեղների և մյուս դեպքում՝ խուլերի առկայությունը հակադրություն կազմող հատկանիշներ են: Այլ դեպքերում (6, 8, 9, 11, 15, 21) երկու բարբառների միջև տարբերություններն ունեն մասնակի բնույթ, և որպես կանոն ներկայանում են հատկանիշի ամբողջական և մասնակի դրսևորումներով: Միայն մեկ դեպքում (6) առկա է հատկանիշի մասնակի առկայություն՝ բացակայության դիմաց:

Բայազետի և Արարատյան բարբառների միջև տարբերությունների ցուցիչն է 8,5: Դրանցից վեցը ներկայանում են հատկանիշի ամբողջական առկայություն / բացակայություն հակադրությամբ: Հետաքրքրական է, որ այս բոլոր տարբերությունները վերաբերում կամ որևէ կերպ առնչվում են *հ,ղ,խ* շփականներին: Այսպես, Բայազետի բարբառին հատուկ են որևէ դիրքում *հ*-ի դիմաց *յ* (14), *հ*-ի դիմաց *խ*(16), *ղ*-ի դիմաց *կ՛* (20), իսկ Արարատյան բարբառին՝ *ո*-ից առաջ *հ*-ի դիմաց *ֆ* (17), *խ*-ի դիմաց տարնմանական *հ* (18) և *ս*-ի դիմաց *հ* (25) հատկանիշները: Սրանցից միմյանց հակադրվում են Բայազետի բարբառին հատուկ՝ *հ*-ի դիմաց *խ*-ն և Արարատյանին հատուկ՝ *հ*-ի դիմաց *ֆ*-ն (թեկուզ և մասնավոր դիրքում): Բայազետի և Արարատյան բարբառների միջև մասնակի տարբերությունները հիմնականում ներկայանում են հատկանիշի ամբողջական և մասնակի դրսևորումներով (2, 8, 13, 15), մեկ դեպքում՝ հատկանիշի մասնակի առկայություն/բացակայությամբ (9):

Բայազետի բարբառը բաղաձայնական հատկանիշներով ավելի շատ տարբերվում է Վանի բարբառից; Երկու բարբառների տարբերությունների ցուցիչն է 9: Այս դեպքում տարբերություններից հինգը ներկայանում են հատկանիշի ամբողջական առկայություն / բացակայություն հակադրությամբ: Դրանցից երկուսը արտահայտվում են բառասկզբում ձայնեղների դիմաց երկու բարբառներում տարբեր դրսևորումներով և ներկայանում են իբրև իրար բացառող հատկանիշներ (2, 3): Մյուս

տարբերությունները պայմանավորված են Բայազետի բարբառին հատուկ երեք հատկանիշներով (նախաբաղաձայնական դիրքում կիսաշփականների շփականություն /13/, *հ*-ի դիմաց *յ* /14/, *կ՛*-ի առկայություն /20/): Մասնակի տարբերությունները պայմանավորված են ինչպես հատկանիշների ամբողջական և մասնակի դրսևորումներով (4, 8, 9, 15), այնպես էլ հատկանիշի մասնավոր առկայություն/բացակայությամբ (6, 7, 10, 11):

Բայազետի և շրջակա բարբառներում բաղաձայնական համակարգերին վերաբերող զուգաբանությունների դրսևորումների վիճակագրական դիտարկումը թույլ է տալիս կարևորել հետևյալ իրողությունները: 1) Չկան բոլոր բարբառներում ամբողջականորեն դրսևորվող բաղաձայնական հատկանիշներ, սակայն չորս հատկանիշներ այս կամ այն չափով կամ այս կամ այն կերպ ունեն իրենց արտահայտությունը համեմատվող բոլոր բարբառներում: Դրանցից երկուսը (4, 21) թերևս միջինհայերենյան շրջանում գրեթե ողջ լեզուն ընդգրկած զարգացումների արդյունք են, մյուսները (8, 15), ավելի բնորոշ լինելով արևելյան բարբառներին, իրենց տարածումն են գտել նաև Վանի, Մշո և Դիադինի բարբառներում: 2) Որոշակիորեն առանձնանում է Արարատյան բարբառը, որը մյուսներից տարբերվում է միայն իրեն հատուկ 3 և միայն իրեն ոչ հատուկ երկու հատկանիշներով: Միայն իրեն հատուկ բաղաձայնական մեկ հատկանիշ ունի Մշո բարբառը, իսկ Բայազետի, Դիադինի, Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները նման հատկանիշներ չունեն: 3) Բաղաձայնական համակարգի առումով Բայազետի բարբառին ամենամերձավորը Դիադինի բարբառն է: Բացի այն, որ տարբերությունների ցուցիչն այս դեպքում ամենափոքրն է, այս երկու բարբառների միջև չկան հատկանիշի բացակայության դիմաց ամբողջական դրսևորմամբ, ինչպես նաև հատկանիշների հակադրական հարաբերությամբ պայմանավորված տարբերություններ: Տարբերությունների ցուցիչի աճման կարգով հաջորդող Մշո, Խոյ-Մարաղայի, Արարատյան և Վանի բարբառները Բայազետի բարբառի հետ համեմատությամբ ունեն և՛ առաջին, և՛ երկրորդ կարգի տարբերություններ: 4) Բայազետի բարբառին հատուկ 10,5 միավոր բաղաձայնական հատկանիշներից ամբողջական դրսևորում ունեն 8-ը:

Բայազետի և շրջակա բարբառների միջև առկա են ամբողջական բաղաձայնական հետևյալ քանակի տարբերություններ. Բ/Դ – 0, Բ/Մ – 3, Բ/Խ – 4, Բ/Վ – 5, Բ/Ա – 6: 5) Ըստ բաղաձայնական հատկանիշների՝ Բայազետի և այլ բարբառների փոխհարաբերություններում դիտարկվում են հակադրվող հետևյալ հատկանիշները. ձայնեղի դիմաց շնչեղ ձայնեղ/ձայնեղի դիմաց խուլ (Բ/Խ և Վ). *ղ*-ի դիմաց *կ՛*/*ղ*-ի դիմաց *խ*(Բ/Մ). *հ*-ի դիմաց *խ*/*հ*-ի դիմաց *ֆ* (Բ/Ա):

Առնչությունները ըստ ձայնավորական հատկանիշների[1431]

Ձայնավորական հատկանիշների (տե՛ս Հավելված 6, Աղյուսակ 2) առումով նշենք, որ Դիադինին վերագրված «ը-ի դիմաց խառն ձայնավորների առկայություն» (50) հատկանիշը այդ բարբառին հատուկ չէ: Դիտարկվող բարբառներում չեն դրսևորվում ձայնավորական 6 հատկանիշներ, որոնցից 5-ը վերաբերում են ձայնավորների ավելի բաց կամ ավելի փակ արտասանությանը (40, 41, 43, 44, 45), իսկ մեկը՝ շեշտակիր *ո*-ի ապաշրթնայնացմանը (47):

Միայն Բայազետի բարբառին է հատուկ *ա*-ի շրթնայնացածություն (46) հատկանիշը: Այլ բարբառներ ևս ունեն միայն իրենց հատուկ հատկանիշներ[1432]: Սակավ տարածված են որոշ այլ հատկանիշներ ևս[1433]: Բոլոր բարբառներն ամբողջովին ընդգրկում են շեշտակիր վանկում *այ*-ի դիմաց *է* (26), միավանկ բառերի սկզբնային *ե*-ից առաջ *յ*-ի (32) և *ո*-ից առաջ շրթնային տարրի (33) հավելում հատկանիշները: Երեքն էլ միջինհայերենյան (գուցե նաև հինհայերենյան) շրջանից եկող հատկանիշներ են, որ բարբառներում շատ լայն տարածում ունեն՝ համապատասխանաբար տարածման 82,5, 90,5 և

[1431] Տե՛ս ՀԲՆ, էջ 63-81:

[1432] Այսպես, միայն Արարատյանին են հատուկ *ույ*-ի (<ոյ) դիմաց ոչ շրթնային ձայնավոր (27), *ը*-ով չվերջացող բառերի նախավերջավանկային շեշտակրություն (49) հատկանիշները, և միայն Խոյ-Մարաղայի բարբառում մասնակի դրսևորում ունի *ը*-ից տարբեր խառն («միջին շարքի») ձայնավորների (*ա*ᵊ, ᵊ*է*, *ը*ʰ) առկայություն (50) հատկանիշը:

[1433] Ձայնավորների ներդաշնակություն (38) առկա է Խոյ-Մարաղայի, մասամբ նաև Վանի բարբառներում: Միջին շարքի («խառը») *ը*, *ը*ʰ, *ա*ᵊ ձայնավորների վերջավանկային շեշտակրություն ոչ բնաձայն բառերում (48) հատկանիշը դրսևորվում է Արարատյան, մասամբ նաև Խոյ-Մարաղայի բարբառներում: Արարատյան բարբառին, մասամբ նաև Վանի և Դիադինի բարբառներին հատուկ է *յու*-ի (<իւ) դիմաց ոչ-շրթնային ձայնավոր (28) հատկանիշը, իսկ Ու-ի դիմաց քմայնացած ձայնավոր (37) հատկանիշը հատուկ է միայն Խոյ-Մարաղայի և Վանի բարբառներին, *ը*-ի լիաձայնություն (39) առկաէ Խոյ-Մարաղայի, մասամբ նաև Վանի և Դիադինի բարբառներում:

90,5 ցուցիչներով: Միայն Արարատյան բարբառը չունի երկբարբառներ (29, 30, 31), քմայնացած ձայնավորներ (34):

Ձայնավորական հատկանիշների առումով Բայազետի բարբառն ամենաքիչ տարբերություններ ունի Դիադինի և Մշո բարբառներից՝ 3,5: Բայազետի և Դիադինի բարբառների միջև ամբողջական տարբերությունները երկուսն են. *ո*-ի դիմաց քմայնացած ձայնավոր (36) հատկանիշն ունի Դիադինի բարբառը, իսկ շրթնայնացած *ա* (46) հատկանիշը բնորոշ է Բայազետի բարբառին: Մյուս տարբերություններն ունեն մասնակի բնույթ: Այսպես, Դիադինի բարբառում մասնակի դրսևորվում են *յու*-ի (<իւ) դիմաց ոչ-շրթնային ձայնավոր (28) և *ը*-ի լիաձայնություն (39) հատկանիշները: *Ա*-ի դիմաց քմայնացած ձայնավոր (35) հատկանիշը օրինաչափորեն դրսևորվում է Դիադինի բարբառում, իսկ Բայազետի բարբառում՝ առավելաբար փոխառյալ բառերում:

Բայազետի և Մշո բարբառները տարբերվում են ձայնավորական ամբողջական մեկ հատկանիշով՝ Բայազետի բարբառի շրթնայնացած *ա*-ով: Մնացած դեպքերում տարբերությունները մասնակի են և պայմանավորված են Մշո բարբառի որոշ խոսվածքներում երկբարբառների բացակայությամբ (29, 30, 31), ինչպես նաև՝ այս բարբառում քմայնացած ձայնավորների ավելի սահմանափակ դրսևորմամբ (34, 35):

Բայազետի և Դիադինի, Բայազետի և Մշո բարբառների տարբերություններում, ըստ Գ.Ջահուկյանի 100 հատկանիշների, չկան իրար բացառող և հակադրական հարաբերության մեջ եղող հատկանիշներ: *Ա*-ի դիմաց քմայնացած և շրթնայնացած հնչյունների դրսևորումները միմյանց չեն հակասում, և այդ շատ լավ արտահայտվում է Բայազետի բարբառում:

Բայազետի և Վանի բարբառների տարբերությունների ցուցիչն է 4,5, որից ամբողջական տարբերությունները երեքն են՝ քմայնացած *օ*-ն (36) և *ու*-ն (37)՝ Վանի բարբառում, և շրթնայնացած *ա*-ն՝ Բայազետի բարբառում: Այլ դեպքերում Վանի բարբառին մասամբ հատուկ հատկանիշները (28. *յու*-ի /<իւ/ դիմաց ոչ-շրթնային ձայնավոր, 38. Ձայնավորների ներդաշնակություն) բացակայում են Բայազետի բարբառում: Բացի այդ, եթե *ա*-ի քմայնացածությունը (35) Վանի

բարբառում ունի օրինաչափ դրսևորում, ապա, ինչպես տեսանք, Բայազետի բարբառում այն ունի մասնակի դրսևորում:

Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառների միջև տարբերությունների ցուցիչն է 7,5, որից ամբողջական են 5 տարբերություններ՝ Բայազետին հատուկ *ա*-ի շրթնայնացումը և Խոյ-Մարաղային հատուկ՝ *ո*-ի և *ու*-ի քմայնացման, ձայնավորների ներդաշնակության, *ը*-ի լիաձայնության հատկանիշները: Մասնակի տարբերություններ առաջ են գալիս Բայազետի բարբառում բացակայող մի շարք հատկանիշների դիմաց Խոյ-Մարաղայի բարբառում դրանց մասնակի դրսևորմամբ (42, 48, 50), ինչպես նաև *ա*-ի քմայնացման (Խոյ-Մարաղայում այս հատկանիշն ունի օրինաչափ դրսևորում) և երկբարբառային *ե*-ի առկայության (Խոյ-Մարաղայում ունի մասնակի դրսևորում) ոչ հավասարաչափ արտահայտություններով:

Բայազետի բարբառը ձայնավորական հատկանիշներով ամենից շատ (9,5 միավորով) տարբերվում է Արարատյան բարբառից: Ընդ որում՝ տարբերություններից 9-ը ամբողջական են և պայմանավորված են Արարատյան բարբառում *ույ*-ի և *յու* –ի դիմաց ոչ շրթնային ձայնավորների առկայությամբ (27, 28)[1434], Բայազետի բարբառում երկբարբառների (29, 30, 31), քմայնացած (34) ու շրթնայնացած (46) ձայնավորների առկայությամբ: Արարատյան բարբառում հանդիպում են նաև միջին շարքի ձայնավորների վերջավանկային շեշտադրություն (48) և *ը*-ով չվերջացող բառերի նախավերջնավանկային շեշտակրություն (49): Բայազետի բարբառում *ա*-ի քմայնացումը մասնակի բնույթունի, իսկ Արարատյանում ամբողջովին բացակայում է:

Փաստորեն, Գ.Ջահուկյանի բերած ձայնավորական հատկանիշների շրջանակում Բայազետի բարբառը մյուս բարբառներից տարբերակող հակադրական հարաբերությամբ հատկանիշներ չկան, սակայն այդ շրջանակից դուրս նման հարաբերության մեջ են *ույ*-ի և *յու*-ի դիմաց ոչ շրթնային ձայնավորների առկայությունն (27 և 28), նաև *ույ*-ի և *յու*-ի դիմաց շրթնային ձայնավորների առկայությունն

[1434] Այս հատկանիշների հետկարող էին ներառված լինել նաև *ույ*-ի և *յու*-ի դիմաց շրթնային ձայնավորների առկայությանը վերաբերող հատկանիշներ (ույ<ու, յու<ու), որ նշանակում է, թե տվյալ դեպքերում Արարատյան (ինչպես նաև՝ Դիադինի և Վանի) և Բայազետի բարբառները տարբերվում են հակադրության մեջ եղող հատկանիշներով:

հատկանիշները, որոնցով Բայազետի բարբառը տարբերվում է Արարատյան, Վանի և Դիադինի բարբառներից:

Բարբառներում ձայնավորներին վերաբերող զուգաբանությունների դրսևորումների վիճակագրական դիտարկումը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները: 1) Բոլոր բարբառներում ամբողջականորեն դրսևորվում են ձայնավորական հատկանիշներից երեքը (26, 32, 33). դրանք թերևս միջինհայերենյան շրջանում գրեթե ողջ լեզուն ընդգրկած զարգացումների արդյունք են: 2) Ըստ ձայնավորական հատկանիշ-ների ևս առանձնանում է Արարատյան բարբառը՝ մյուս բոլոր բարբառներից տարբերվելով միայն իրեն հատուկ 2 և միայն իրեն ոչ հատուկ 4 հատկանիշներով: Միայն իրենց հատուկ ձայնավորական մեկական հատկանիշ ունեն Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառները: 3) Բայազետի բարբառին ձայնավորական հատկանիշների առումով ամենամերձավորը Դիադինի և Մշո բարբառներն են: Եթե Բայազետի և Դիադինի բարբառների միջև առկա է հատկանիշի բացակայության դիմաց ամբողջական դրսևորմամբ երկու, ապա Բայազետի և Մշո բարբառների միջև առկա է այդ կարգի մեկ տարբերություն: Տարբերությունների ցուցիչի աճման կարգով հաջորդող Վանի, Խոյ-Մարաղայի և Արարատյան բարբառները Բայազետի բարբառի հետ համեմատությամբ ևս ունեն նման տարբերություններ՝ համապատասխանաբար երեք, հինգ և ինը: 4) Բայազետի բարբառին հատուկ 8,5 միավոր ձայնավորական հատկանիշներից ամբողջական դրսևորում ունեն 8-ը: Բայազետի և շրջակա բարբառների միջև առկա են ամբողջական ձայնավորական հետևյալ քանակի տարբերություններ. Բ/Մ – 1, Բ/Դ – 2, Բ/Վ – 3, Բ/Խ – 5, Բ/Ա – 9:

Այսպիսով, Բայազետի և շրջակա բոլոր բարբառները ունեն հնչյունական 7 ընդհանուր հատկանիշներ, իսկ 50 հնչյունական հատկանիշներից 12-ը որևէ բարբառում չի դրսևորվում:

Ըստ հնչյունական հատկանիշների՝ շրջակաբարբառներից Բայա-զետի տարբերությունները արտահայտվում են հետևյալ ցուցիչներով. Դիադին՝ 6,5, Մուշ՝ 10, Վան՝ 13,5, Խոյ-Մարաղա՝ 14,5, Արարատյան՝ 18: Ընդ որում՝ Արարատյան բարբառը ոչ միայն ամենաշատ տարբերություններն ունի Բայազետի բարբառից, այլ

նաև համեմատվող բոլոր բարբառներից առանձնանում է միայն իրեն հատուկ զգալի քանակությամբ (11՝ առկա և բացակա) հնչյունական հատկանիշներով: Բայազետի բարբառը միայն իրեն բնորոշ բաղաձայնական որևէ հատկանիշ չունի, սակայն շրջակա բոլոր բարբառներից առանձնանում է ձայնավորական մեկ հատկանիշով:

Բայազետի և շրջակա բարբառների միջև առկա են ամբողջական հնչյունական հետևյալ քանակի տարբերություններ. Բ/Դ– 2, Բ/Մ– 4, Բ/Վ – 8, Բ/Խ – 9, Բ/Ա– 15:

Նկատելի է, որ ըստ հնչյունական ամբողջական տարբերությունների աճման՝ շրջակա բարբառները Բայազետի բարբառից գտնվում են նույն հաջորդական հեռավորության վրա, ինչ որ ըստ ընդհանուր հնչյունական տարբերությունների:

1.2. Առնչությունները ըստքերականական հատկանիշների

Առնչությունները ըստանվանական հատկանիշների[1435]

Անվանական հատկանիշների առումով հարկ ենք համարում կատարել հետևյալ ճշգրտումները (տե՛ս Հավելված 6, Աղյուսակ 3): Ըստ Գ.Ջահուկյանի տվյալների՝ «*վի* և նրանով բաղադրված հոգնակերտներ» հատկանիշը (51) հատուկ է նաև Խոյ-Մարաղայի բարբառին[1436], սակայն Մ.Ասատրյանը այդ բարբառում հոգնակիի նման կազմություններ չի արձանագրում[1437], ուստի հետևելով բարբառն ուսումնասիրողին՝ մենք համարում ենք, որ հիշյալ հատկանիշը Խոյ-Մարաղայի բարբառում բացակայում է: Համաձայն աղյուսակի՝ Վանի բարբառի Մոկսի և Ծատախի խոսվածքներին վերագրված է ցուցական դերանունների երկադիմություն (68)[1438] հատկանիշը, սակայն այդ խոսվածքներն ուսումնասիրող Մ.Մուրադյանը նման իրողություն չի արձանագրել, և նրա բերած օրինակները փաստում են եռադիմության առկայություն[1439]:

[1435] Տե՛ս ՀԲՆ, էջ 82-99:
[1436] Տե՛ս ՀԲՆ, էջ 99:
[1437] Տե՛ս ԽԲ, էջ 63-74: Նման կազմություններ Մարաղայի խոսվածքում չի դիտարկում նաև Հ.Աճառյանը (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 749-754):
[1438] Տե՛ս ՀԲՆ, էջ 94:
[1439] Տե՛ս Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, էջ 150-154, Մ.Մուրադյան, Ծատախի բարբառը, էջ 118-119:

Դիտարկվող բարբառներում չեն դրսևորվում անվանական 6 հատկանիշներ[1440]: Միայն իրենց հատուկ հատկանիշներ ունեն Վանի (վերլուծական բացառական՝ մասնակի /60/) և Արարատյան (*ում*-ով ներգոյական /64/) բարբառները: Սակավ տարածված են որոշ այլ հատկանիշներ ևս[1441]: Բոլոր բարբառներն ամբողջովին ընդգրկում են հոգնակերտ մասնիկներին վերաբերող երկու հատկանիշներ (53, 55), որոնք հայ բարբառներում ունեն տարածվածության բավականին բարձր ցուցիչներ, համապատասխանաբար՝ 87,5 և 63,0: Այլ դեպքերում բարբառները բնութագրվում են հատկանիշի՝ միայն իրենց հատուկ բացակայությամբ[1442]:

Անվանական հատկանիշների առումով Բայազետի բարբառն ամենաքիչ տարբերություններ ունի Դիադինի բարբառից՝ 3: Ամբողջական տարբերությունները երկուսն են. */ն/եր*-ով հոգնակիի Ի հոլովում (56) հատկանիշն ունի Բայազետի բարբառը, իսկ ուղղականում որոշիչ հոդի սահմանափակ կիրառությունը (75) բնորոշ է Դիադինի բարբառին[1443]: Այս երկու հատկանիշներն էլ բարբառներում ունեն իրենց հակադիր դրսևորումները, որոնք կարող էին ձևակերպվել մի դեպքում՝ որպես */ն/եր*-ով հոգնակիի Ու հոլովում, մյուս դեպքում՝ որպես որոշիչ *ը* և *ն* հոդերի կիրառություն: Սակայն Գ.Ջահուկյանի բերած 100 հատկանիշներում վերջիններս ներառված չեն: Մյուս տարբերություններն ունեն մասնակի բնույթ: Այսպես, Դիադինի բարբառում, ի տարբերություն Բայազետի բարբառի, հանդիպում է նաև *ք+եր* հոգնակի (55), և այդ

[1440] Դրանք վերաբերում են հոգնակիի կազմությանը (*նի*-ով հոգնակի /52/), հոլովմանը (*շուն, տուն* բառերի վերջավորական հոլովում /57/), գործիական հոլովի կազմությանը (*ով*-ից տարբեր վերջավորությամբ (61), վերլուծական կազմությամբ /62/), դասական թվականի՝ *ինջի*-ով կազմությանն (69) ու հատկացուցչի հոդառությանը (70):

[1441] Միայն Վանի և Մշո բարբառներում են հանդիպում *վի*-ն և նրանով բաղադրված հոգնակերտները (51), անորոշ հոդի ետադասությունը (71), *զ* նախդրի կիրառությունը (72), գրական հայերենի հետադաս կապերի նախադաս գործածությունը (73): Բացառականի ձևերում *մ*-ի առկայություն (63) ունեն միայն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները, ցուցական դերանունների երկադիմություն դրսևորվում է միայն Մշո և Խոյ-Մարաղայի բարբառներում (68), ուղղականում որոշյալ հոդի կիրառությունը սահմանափակ է (75. +[2]) Դիադինի և Վանի բարբառներում և այլն:

[1442] Միայն Արարատյան բարբառը չունի *է*-ով բացառական (58), դերանունների թեք հոլովաձևերում *ի* (65), *ին*-ով դերանվանական ձևեր (66): Միայն Խոյ-Մարաղայի բարբառը չունի *ց*-ով բացառական (59), միայն Վանի բարբառը ցուցականների թեք ձևերում չունի հավելական *ա, դ* (67), միայն Մշո բարբառը չունի անձի և իրի առումների տարբերություն (74):

բարբառում *է*-ով բացառականը (58) ավելի ընդգրկուն է, քան Բայազետի բարբառում:

Բայազետի և Արարատյան բարբառների տարբերությունների ցուցիչը ըստ անվանական հատկանիշների կազմում է 4,5 միավոր: Ամբողջական տարբերությունները չորսն են: Բայազետի բարբառին են բնորոշ դերանունների թեք հոլովաձևերում *հ*-ի առկայությունը (65), *հկ*-ով դերանվանական ձևերը (66) և ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառությունը (75.+[3]): Արարատյան բարբառին է բնորոշ *ում*-ով ներգոյականը (64): Բարբառների միջև միակ մասնակի տարբերությունը առաջանում է Բայազետի բարբառում նաև *է*-ով բացառականի գործառությամբ (58):

Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառների տարբերությունների ցուցիչն է 5,5, որից ամբողջական տարբերություններ են առաջ բերում երեք հատկանիշներ. Բայազետի բարբառին բնորոշ են *ց*-ով բացառականը (59) և ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառությունը (75.+[3]), իսկ Խոյ-Մարաղայի բարբառին բնորոշ է ցուցական դերանունների երկադիմություն հատկանիշը (68): Սրանցից *ց*-ով բացառական հատկանիշը հակադրական հարաբերության մեջ է *է*-ով բացառական հատկանիշի հետ, չնայած Բայազետի բարբառում առկա է նաև վերջինիս մասնակի դրսևորում: Երկու բարբառների միջև մասնակի տարբերությունների մի մասը պայմանավորված է բարբառներից մեկում հատկանիշի ամբողջական, իսկ մյուսում՝ մասնակի առկայությամբ (58, 66), մասնակի առկայություն / բացակայությամբ (54, 63), մեկ դեպքում էլ՝ հատկանիշի հավելուրդային դրսևորմամբ (55. նաև *ք*+եր հոգնակերտ):

Բայազետի և Վանի բարբառների տարբերությունները կազմում են 10,5 միավոր, որոնցից ամբողջական են յոթը: Ամբողջական այդ տարբերությունները առաջ բերող հատկանիշներից հինգը բնորոշ են Վանի բարբառին (*կ/հ*-ով հոգնակերտ /51/, բացառականի ձևերում *մ*-ի առկայություն /63/, անորոշ հոդի ետադասություն /71/, գրականի ետադաս կապերի նախադաս կիրառություն /73/, ուղղականում որոշյալ հոդի սահմանափակ կիրառություն /75. +[2]/): Բայազետի բարբառին բնորոշ են հիշյալ կարգի երկու հատկանիշներ՝ *(ն)եր* –

[1443] Ընդ որում՝ խոսքը վերաբերում է *ն* հոդի սահմանափակ կիրառությանը և *ը*

ով հոգնակիի Ի հոլովում (56) և ցուցական դերանունների թեք հոլովաձևերում հավելական *ադ* (67): Սրանցից հակադրական հարաբերությամբ զուգահեռ հատկանիշներ, 100 հատկանիշների շրջանակներից դուրս, կարող են ունենալ երկուսը (56 և 75. +[2]): Երկու բարբառների միջև մասնակի տարբերությունների մի մասը պայմանավորված է բարբառներից մեկում հատկանիշի ամբողջական, իսկ մյուսում՝ մասնակի առկայությամբ (58, 66, 75.+[3]), մասնակի առկայություն / բացակայությամբ (54, 60, 72), մեկ դեպքում էլ՝ հատկանիշի հավելուրդային դրսևորմամբ (55):

Անվանական համակարգում Բայազետի և Մշո բարբառները ևս միմյանցից տարբերվում են 10,5 միավոր հատկանիշներով, որոնցից ամբողջական բնույթ ունեն տասը: Դրանց մեծ մասը բնորոշ են Մշո բարբառին (*վ/հ*-ով /51/, նաև *ստան, ստար* մասնիկներով /54/ հոգնակիները, ցուցական դերանունների երկադիմությունը /68/, անորոշ հոդի հետադասությունը /71/, *զ* նախդրի կիրառությունը /72/, հետադաս կապերի նախադաս գործածությունը /73/, ստացական հոդերից հետո ի-ի դրսևորումը /75. +[04]/): Բայազետի բարբառին են բնորոշ *(ն)եր*-ով հոգնակիի Ի հոլովումը (56), անձի ն իրի առումների տարբերակումը (74) և ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառությունը (75. +[3]): Գ.Ջահուկյանի բերած հատկանիշների ցանկում սրանց հակադիր կամ բացառող հատկանիշներ արձանագրված չեն: Միայն մեկ դեպքում տարբերությունը մասնակի է և պայմանավորված է նրանով, որ Մշո բարբառում *Է*-ով բացառականը (58) ավելի ընդգրկուն է, քան Բայազետի բարբառում:

Բարբառներում անվանական համակարգերին վերաբերող զուգաբանությունների դրսևորումների վիճակագրական դիտարկումը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները: 1) Բոլոր բարբառներում (ընդ որում՝ ամբողջականորեն) դրսևորվում են անվանական հատկանիշներից երկուսը (53 և 55). դրանք վերաբերում են հոգնակիի կազմությանը և իրենց արմատներով հասնում են մինչև հայերենի գործառության հին շրջան: 2) Ըստ անվանական հատկանիշների ևս որոշակիորեն առանձնանում է Արարատյան բարբառը, որը մյուս բոլոր բարբառներից տարբերվում է միայն իրեն հատուկ

հոդի բացակայությանը:

1 և միայն իրեն ոչ հատուկ 3 հատկանիշներով: Միայն իրեն հատուկ անվանական մեկ հատկանիշ ունի Վանը: Միայն իրենց ոչ հատուկ մեկական հատկանիշներով մյուսներից առանձնանում են Վանի, Խոյ-Մարաղայի և Մշո բարբառները: 3) Բայազետի բարբառին անվանական հատկանիշների առումով ամենամերձավորը դարձյալ Դիադինի բարբառն է՝ ընդամենը 3 միավոր տարբերությամբ: Այնուհետև ըստ տարբերությունների աճման հաջորդում են Արարատյան (4,5), Խոյ-Մարաղայի (5,5) բարբառները: Վանի և Մշո բարբառները Բայազետի բարբառից ավելի շատ անվանական հատկանիշներով են տարբերվում՝ յուրաքանչյուրը 10,5 միավորով: 4) Բայազետի բարբառին հատուկ 9,5 միավոր անվանական հատկանիշներից ամբողջական դրսևորում ունեն 9-ը: Բայազետի և շրջակա բարբառների միջև առկա են ամբողջական անվանական հետևյալ քանակի տարբերություններ. Բ/Դ – 2, Բ/Խ – 3, Բ/Ա – 4, Բ/Վ – 7, Բ/Մ – 10: 5) Բայազետի և շրջակա բարբառների փոխհարաբերություններում դիտարկվում են հակադրական հարաբերությամբ (երբ երկու ձևերն էլ ունեն բարբառային հատկանիշի արժեք) անվանական հետևյալ հատկանիշները. *(ն)եր*-ով հոգնակիի Ի հոլովում / *(ն)եր*-ով հոգնակիի Ու հոլովում (Բ/Դ,Մ,Վ)[1444]. *ց*-ով բացառական / *է(ն)*-ով բացառական (Բ/Խ, Ա/Բ)[1445]. *ը* և *ն* որոշյալ հոդերի առկայություն / ուղղականում որոշյալ հոդի սահմանափակ կիրառություն (Բ/Դ,Վ):

Առնչությունները ըստբայական հատկանիշների[1446]

Բայական հատկանիշների առումով հարկ ենք համարել կատարել հետևյալ ճշգրտումները (տե՛ս Հավելված 6, Աղյուսակ 4): Ըստ լծորդությունների՝ խոնարհման ձևերի տարբերակվածությանը վերաբերող 76-րդ հատկանիշը Դիադինի, Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում դրսևորվում է նույն կերպ, ինչ Բայազետի բարբառում, ուստի վերջիններիս դիմաց ևս պետք է լինի ոչ թե -, այլ

[1444] Վերջին հատկանիշը Գ.Ջահուկյանի 100 հատկանիշներում ընդգրկված չէ:

[1445] Եթե այս հակադրական հարաբերությունը դրսևորվում է Բայազետի և Խոյ-Մարաղայի, Բայազետի և Արարատյան բարբառների միջև, որովհետև Բայազետի բարբառում *ց*-ով ձևի գերակայությամբ գործառում է նաև *է*-ով ձևը, իսկ Խոյ-Մարաղայում գործառում է միայն *է*-ով ձևը, և Արարատյան բարբառում գործառում է միայն *ց*-ով ձևը, ապա Բայազետի և Դիադինի, Վանի, Մշո բարբառների փոխհարաբերություններում հատկանիշների հակադրական դրսևորում չկա, որովհետև այդ բարբառներում ևս, թերևս յուրահատուկ պատմական զարգացման հետևանքով, բացառականի կազմության երկու ձևերը զուգորդվում են:

[1446] Տե՛ս ՀԲՆ, էջ 100-119:

± նշան: Դիադինի բարբառի վերաբերյալ 78-րդ հատկանիշը նշված է +[2] (*կի*-ով ներկա), մինչդեռ պիտի լինի + (*կու*-ով ներկա), 84-րդ (*ման*-ով դերբայ) հատկանիշի դիմաց պետք է լինի ոչ թե +, այլ – նշան (այս բարբառը *ման*-ով դերբայ չունի), 87-րդ հատկանիշի դիմաց պետք է լինի ոչ թե +, այլ +[2] (ըղձականում ոչ թե *գ՛ըրի*, այլ գ՛*ըրա*), 90-րդ հատկանիշի դիմաց պետք է լինի ոչ թե +[3], այլ – (բարբառում ապառնի դերբայ չկա): Մշո բարբառի վերաբերյալ 95-րդ հատկանիշի դիմաց պետք է լինի ոչ թե +, այլ ± (բարբառում կա ոչ միայն *գ՛ըրի*, այլ նաև *գ՛ըրէցի*), Խոյ-Մարաղայի բարբառի վերաբերյալ 79-րդ հատկանիշի դիմաց պետք է լինի ոչ թե +[2], այլ – (որևէ ուսումնասիրող այդ հատկանիշը Խոյի, Մարաղայի կամ Ուրմիայի համար չի արձանագրել, այդ հատկանիշը չի դրսևորվում բարբառի համար բերված նմուշներում):

Դիտարկվող բարբառներում չեն դրսևորվում բայական 5 հատկանիշներ, որոնք վերաբերում են ներկայի այլ՝ շարունակականի կամ ծագումով շարունակականի մասնիկների առկայությանը (80), ապառնու կազմությանը (90 և 91), կատարյալի կազմությանը (94 և 96):

Միայն իրենց հատուկ հատկանիշներով առանձնանում են Դիադինը (79. ներկայի այլ մասնիկներ, 81. շարունակական ներկա), Խոյ-Մարաղան (93. բաղադրյալ անցյալի ձևեր՝ բառ-մասնիկով, 100. +[6] անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքի *մ*-ով ձև), Մուշը (100. +[3] անցյալ անկատարի եզակի 1-ին դեմքի փոխարեն հոգնակի ձև. 100. +[5]. անցյալ կատարյալի միավանկ հիմքերի եզակի 3-րդ դեմքի *ե* նախահավելված): Իսկ «ժխտական մասնիկների հետադաս գործածություն» հատկանիշը (97) դրսևորվում է միայն Արարատյան բարբառում, այն էլ՝ մասամբ:

Դիտարկվող բարբառներում քիչ են տարածված մի շարք այլ հատկանիշներ ևս: Այսպես, միայն Դիադինում և Մուշում է առկա *ուլ* լծորդությունը (77), *ում*-ով ներկա (82) ունեն միայն Բայազետի ու Արարատյան բարբառները, *լիս*-ով ներկա (83) ունի Խոյ-Մարաղան, և մասամբ՝ Արարատյան բարբառը, ման-ով դերբայ (84) ունի Մուշը, և մասամբ՝ Վանը, *պիտի* եղանակիչի սղված ձև (92) ունի Խոյ-Մարաղան, մասամբ՝ Վանը:

Բայական միայն մեկ հատկանիշ՝ ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայություն (99), հանդիպում է բոլոր բարբառներում, ընդ որում՝ Արարատյան բարբառում այն ունի մասնավոր դրսևորում: Հետաքրքրական է, որ այս հատկանիշը հայերենի բարբառներում այդքան էլ գործուն չէ և ունի տարածվածության 41,0 ցուցիչ[1447]:

Որոշ դեպքերում որևէ բարբառ մյուս բոլոր բարբառներից տարբերվում է հատկանիշի բացակայությամբ: Այսպես, միայն Արարատյան բարբառը չունի 1-ին և 2-րդ (*ել* և *իլ*) լծորդությունների անածանց բայերի խոնարհման ձևերի տարբերակվածություն (76), *ր*-ով վաղակատար (85), *ուկ*-ով հարակատար (86): Միայն Խոյ-Մարաղան չունի օժանդակ բայի անցյալ անկատար երկձայնավոր ձևերի մեջ ձայնավորներից մեկի սղում (89): Միայն Մուշը չունի առաջին լծորդության անածանց բայերի ըղձական եզակի 3-րդ դեմքի՝ *է*-ից տարբեր վերջավորություն (87):

Բայական հատկանիշների առումով ևս Բայազետի բարբառն ամենաքիչ տարբերություններ ունի Դիադինի բարբառից՝ 5,0 միավոր: Այս դեպքում բարբառների միջև բոլոր տարբերությունները ամբողջական են և հիմնականում վերաբերում են ներկայի կազմությանը (78, 79, 81, 82): Միայն մեկ դեպքում հատկանիշը վերաբերում է լծորդությանը (77): Տարբերակող հատկանիշներից միայն մեկը՝ *ում*-ով ներկա, վերաբերում է Բայազետի բարբառին: Վերջինիս հետ հակադրական հարաբերության մեջ է Դիադինի բարբառի՝ *կում*-ով ներկա (78) հատկանիշը:

Ըստ բայական հատկանիշների՝ Բայազետի և Արարատյան բարբառների տարբերությունների քանակը կազմում է վեց միավոր: Ամբողջական երեք տարբերությունները պայմանավորված են Բայազետի բարբառի հատկանիշներով (*ր*-ով վաղակատար, *ուկ*-ով հարակատար և բաղադրյալ ժխտականի կրկնադիմություն): Մասնակի տարբերություններն արտահայտվում են հատկանիշի մասնակի դրսևորում/բացակայությամբ (76, 83, 95, 97), հատկանիշի ամբողջական/մասնակի դրսևորումներով (99), հատկանիշի յուրօրինակ արտահայտությամբ (87):

[1447] Տե՛ս նույն տեղում:

Բայազետի և Վանի բարբառների տարբերությունների քանակը ըստ բայական հատկանիշների կազմում է 6,5 միավոր: Ամբողջական տարբերությունները չորսն են, որոնցից երկուսը վերաբերում են ներկայի կազմությանը (Բայազետ՝ *ում*-ով ներկա, Վան՝ *կու*-ով ներկա): Բացի այդ, Բայազետի բարբառն ունի օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* ձև (88) և ժխտական բաղադրյալ ձևերի կրկնադիմություն (98): Մասնակի տարբերությունները պայմանավորված են հատկանիշի մասնակի առկայություն/բացակայությամբ (84, 92, 95), իսկ երկու դեպքում՝ հատկանիշի յուրահատուկ դրսևորմամբ (87, 89):

Բայազետի և Մշո բարբառները միմյանցից տարբերակող բայական հատկանիշները կազմում են 8,5 միավոր: Առկա են 8 ամբողջական տարբերություններ, որոնցից Մշո բարբառին են վերաբերում *ուլ* լծորդության առկայությունը (77), *կու*-ով ներկան (78), *ման*-ով դերբայը (84), եզակիի դիմաց հոգնակի 1-ին դեմքը և *ե* նախահավելվածը անցյալ կատարյալում (100+[3] և +[5]): Հիշյալ տարբերություններից Բայազետի բարբառին են վերաբերում *ում*-ով ներկան (82), ըղձականի եզակի 3-րդ դեմքի՝ *է*-ից տարբեր վերջավորությունը (87), օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի *ա*-ով ձևը (88): Երկու բարբառների միջև միակ մասնակի տարբերությունը պայմանավորված է Մշո բարբառում հատկանիշի (76. 1-ին և 2-րդ /*ել* և /*իլ*/ լծորդությունների անածանց բայերի խոնարհման ձևերի տարբերակվածություն) ամբողջական, իսկ Բայազետի բարբառում մասնակի դրսևորումներով: Բայազետի և Մշո բարբառների միջև ևս առկաէ ներկայի ձևավորման հակադրական տարբերություն (78 և 82):

Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառների միջև տարբերությունների ցուցիչն է 9,5: Ամբողջական տարբերությունները ութն են: Դրանցից Բայազետի բարբառին են վերաբերում ներկայի *ում*-ով կազմությունը (82), օժանդակ բայի դրսևորման յուրահատկությունները (88, 89), ժխտական բաղադրյալ ձևերի կրկնադիմությունը (98), իսկ Խոյ-Մարաղայի բարբառին են վերաբերում ներկայի *լիս*-ով ձևը (83), *պիտի* եղանակիչի սղված ձևը (92), բառ-մասնիկով կազմվող անցյալի ձևերը (93), անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում *մ*-ի առկայությունը (100. +[6]): Այս դեպքում հակադրական

հարաբերության մեջ են ներկայի կազմության՝ *ում*-ով և *լիս*-ով ձևերը: Մասնակի տարբերությունները պայմանավորված են հատկանիշի ամբողջական ու մասնակի դրսևորումներով (86, 95), ինչպես նաև հատկանիշի յուրահատուկ դրսևորմամբ (87):

Բայական համակարգերին վերաբերող զուգաբանությունների դրսևորումների վերաբերյալ կարելի է անել հետևյալ եզրակացությունները: 1) Դիտարկվող բայական բոլոր համակարգերը բնութագրվում են ընդհանուր մեկ (ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայություն) հատկանիշով: 2) Արարատյան բարբառը մյուս բարբառներից տարբերվում է միայն իրեն հատուկ 1 և բացակայող 3 հատկանիշներով: Միայն իրենց հատուկ բայական երկուական հատկանիշներ ունեն Դիադինի, Խոյ-Մարաղայի և Մշո բարբառները: Վերջին երկուսը մյուսներից տարբերվում են մեկական բացակայող հատկանիշներով: 3) Բայազետի բարբառին բայական հատկանիշների առումով ամենամերձավորը դարձյալ Դիադինի բարբառն է՝ ամբողջական հինգ տարբերություններով: Տարբերությունների քանակի աճման կարգով հաջորդող Արարատյան (6), Վանի (6,5), Մշո (8,5) և Խոյ-Մարաղայի (9,5) բարբառները Բայազետի բարբառի համեմատությամբ ևս ունեն նման զգալի տարբերություններ (համապատասխանաբար՝ 4, 3, 8, 8): 4) Բայազետի բարբառին հատուկ 9,0 միավոր բայական հատկանիշներից ամբողջական դրսևորում ունեն 8-ը: Բայազետի և շրջակա բարբառների միջև առկա են ամբողջական բայական հետևյալ քանակի տարբերություններ. Բ/Դ – 5, Բ/Խ – 8, Բ/Ա – 4, Բ/Վ – 3, Բ/Մ – 8: 5) Բայազետի և շրջակա բարբառների փոխհարաբերություններում դիտարկվում են հակադրական հարաբերությամբ բայական հետևյալ հատկանիշները. *ում*-ով ներկա / *կը*-ով ներկա (Բ / Դ, Մ, Վ). *ում*-ով ներկա / *լիս*-ով ներկա (Բ/Խ). առաջին լծորդության անաածանց բայերի ըղձ. եզ. 3-րդ դեմքի՝ *է*-ից տարբեր վերջավորություն՝ *ա* / *ի* (Բ/Վ, Ա, Խ). օժանդակ բայի անցյալ անկատար երկձայնավոր ձևերի մեջ ձայնավորներից մեկի սղում՝ *է*-ի սղում / *ի*-ի սղում (Բ/Վ):

Ըստ քերականական հատկանիշների՝ շրջակա բարբառներից Բայազետի բարբառը ունի տարբերությունների հետևյալ ցուցիչները. Դիադին՝ 8, Արարատյան՝ 10,5, Խոյ-Մարաղա՝ 15, Վան՝ 17,

Մուշ՝ 19: Ըստ քերականական ամբողջական տարբերությունների՝ այդ փոխհարաբերություններն ունեն հետևյալ տեսքը. Բ/Դ – 7, Բ/Ա – 8, Բ/Վ – 10, Բ/Խ – 11, Բ/Մ – 18:

Այս դեպքում ևս, ըստ քերականական ամբողջական տարբերությունների աճման, շրջակա բարբառները Բայազետի բարբառից հիմնականում գտնվում են նույն հաջորդական հեռավորության վրա, ինչ որ ըստ ընդհանուր քերականական տարբերությունների: Փաստենք նաև, որ ըստ աղյուսակների՝ միայն Բայազետի բարբառին հատուկ քերականական որևէ հատկանիշ չկա:

Այսպիսով, Գ.Ջահուկյանի ներկայացրած 100 հատկանիշների շրջանակներում Բայազետի բարբառը բնութագրվում է 37,5 (10,5՝ բաղաձայնական, 8,5՝ ձայնավորական, 9,5՝ անվանական, 9,0՝ բայական) միավոր հատկանիշներով, որոնցից բարբառում ամբողջական դրսևորում ունեն 33-ը (8 բաղաձայնական, 8 ձայնավորական, 9 անվանական, 8 բայական): Բարբառային հատկանիշների առկայության ամենափոքր ցուցիչն ունի Արարատյան բարբառը, Բայազետի բարբառի հետ համեմատած՝ մյուս բոլոր բարբառներն ունեն ավելի բարձր ցուցիչներ: Բոլոր բարբառներում էլ ամբողջական հատկանիշների բարձր ցուցիչները վկայում են կայուն գործառող, բարբառային միասնական համակարգերի մասին[1448]:

Շրջակաբարբառներից Բայազետի բարբառին առավել մերձավոր է Դիադինի բարբառը՝ տարբերությունների 14,5 ցուցիչով[1449]: Մյուս բարբառները, կարելի է ասել, գտնվում են հավասար հեռավորության վրա՝ տարբերությունների 28,5-ից 30,5 ցուցիչներով: Հաջորդաբար Բայազետի բարբառին, այնուամենայնիվ, ավելի մոտ է Արարատյան բարբառը՝ տարբերությունների 28,5 ցուցիչով, իսկ Դիադինի բարբառին ավելի մոտ է Վանի բարբառը՝ տարբերությունների 24,0 ցուցիչով[1450], բայց հետաքրքրական է, որ Բայազետի բարբառն ամենաշատ տարբերություններ ունի Վանի բարբառից (30,5), իսկ Դիադինի բարբառը՝ Արարատյան բարբառից (38,0), ընդ որում՝

[1448] Բայազետի և շրջակա բարբառների համապատասխան ցուցանիշները տրվում են Հավելվածի Աղյուսակ 5-ում՝ փակագծերում նշելով ամբողջական հատկանիշների քանակը:
[1449] Բայազետի բարբառից շրջակա բարբառների տարբերությունների քանակական ցուցիչները ներկայացվում են Հավելվածի 6-ի Աղյուսակ 6-ում:
[1450] Տե՛ս Հավելվածի 6, Աղյուսակ 5:

Արարատյան և Վանի բարբառների տարբերությունների ցուցիչը կազմում է 42,0 միավոր[1451]: Այսպիսով, Բայազետի և Դիադինի բարբառները նույն բարբառի մեջ միավորվել չեն կարող, քանի որ տարբերվում են հատկանիշների ավելի մեծ քանակությամբ, քան երևան է հանում Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգումը[1452], և մյուս կողմից էլ՝ ո՛չ Բայազետի և ոչ էլ Դիադինի բարբառները չեն կարող Արարատյան և Վանի բարբառների միջև միջբարբառի կարգավիճակում լինել: Այդպես նաև Բայազետն ու Դիադինը միջբարբառի կարգավիճակում չեն կարող լինել նաև մյուս բարբառների համեմատությամբ, որովհետև նրանցից ավելի շատ տարբերություններ ունեն, քան միմյանցից, ինչպես նաև՝ Բայազետը՝ Արարատյանից, և Դիադինը՝ Վանից: Հետաքրքրական է, որ ըստ 5-րդ դարում հնարավոր համարված հնչյունաքերականական զուգաբանությունների ևս Կոգովիտի ենթաբարբառին (Բայազետի բարբառին) ամենամոտը (8,0 միավոր տարբերություններով) Դիադինի բարբառն է [1453], որն ըստ 5-րդ դարի բարբառների դասակարգման ընդգրկված է հարավ-կենտրոնական բարբառի Վասպուրական-Մոկքի ենթաբարբառում[1454]: Մինչդեռ Կոգովիտի ենթաբարբառի հետ հարավ-արևելյան միջբարբառում ընդգրկված Պարսկահայքի միջենթաբարբառը (Փայաջուկ, Ուրմիա, Խոյ)[1455] հանդես է բերում 9,0 միավոր տարբերություններ: Մյուս բարբառային միավորները, ըստ տարբերությունների աճման, ներկայացնում են հետևյալ պատկերը՝ հարավ-կենտրոնական բարբառի Տարոնի միջենթաբարբառ (Մուշ) - 13,0 միավոր, Վասպուրական - Մոկքի ենթաբարբառում ընդգրկված Վանի բարբառային միավոր – 14,0 միավոր, հյուսիս-արևելյան բարբառի Այրարատի միջենթաբարբառ – 14,5 միավոր: Բայազետի բարբառը, իր տարածական հիմքերի նախնական աշխարհագրական դիրքով պայմանավորված, զուգորդում է արևելյան և արևմտյան բարբառային միավորներին բնորոշ հատկանիշներ և

[1451] Նույն տեղում:
[1452] Տե՛ս Վ.Կատվալյան, Բայազետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունները, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2012, էջ 115-129:
[1453] Տե՛ս Հավելված 6, Աղյուսակ 7:
[1454] Տե՛ս ՀԲՆ, էջ 185:
[1455] Տե՛ս նույն տեղում:

զարգացումներ[1456]: Բարբառիս՝ առավելաբար արևմտյան կամ արևելյան բարբառներին հատուկ 26 հատկանիշների[1457] մեջ արևմտյան բարբառներին բնորոշ իրողությունները քանակով էականորեն գերազանցում են արևելյաններին բնորոշ իրողություններին: Առկա է արևմտյան և արևելյան հատկանիշների հետևյալ հարաբերակցությունը. ընդհանուր՝ 18 – 8, հնչյունական՝ 9 – 1, անվանական՝ 3 – 4, բայական՝ 5 – 3: Ուշագրավ է հատկապես հնչյունական հատկանիշների առումով Բայազետի բարբառի զգալի մերձավորությունը արևմտյան բարբառներին: Այս իրողությունները Բայազետի բարբառը արևելյանների շարքում ընդգրկելու հանգամանքը դարձնում են վիճահարույց[1458]: Բայազետի բարբառին մերձավոր Կը ճյուղի Վանի, Դիադինի, Մշո բարբառները ունեն արևելյաններին բնորոշ մի շարք հատկանիշներ, իսկ Խոյ-Մարաղայի բարբառը և Արարատյանի որոշ խոսվածքներ էլ ունեն արևմտյաններին բնորոշ հատկանիշներ: Բայազետի, Վանի, Դիադինի, Խոյ-Մարաղայի բարբառները, ինչպես նաև Մշո և Արարատյան բարբառների որոշ խոսվածքներ ներկայացնում են արևմտյան և արևելյան բարբառների շփման մի գոտի, որտեղ տարբեր բարբառային միավորներում առկա են հատկանիշների տարբեր աստիճանի փոխներթափանցումներ: Այս կարգի որոշ իրողությունների առումով Հ.Աճառյանը գրում է, որ «Վանի բարբառը գտնվում է «արևելյան» և «արևմտյան» կոչված բարբառների միջև»[1459]: Կարծում ենք՝ վերը բերված փաստերը մեզ ևս թույլ են տալիս պնդել, որ Բայազետի բարբառը (մերձավոր

[1456] Այս իրողությունը որոշակիորեն դիտարկվում է նաև Վանի, Խոյ-Մարաղայի և Դիադինի բարբառների պարագայում: Տե՛ս Վ.Կատվալյան, Արևելահայ և արևմտահայ լեզվական իրողությունները Բայազետի բարբառում, Արդի բանասիրության հիմնախնդիրները միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2015, էջ 130-138:

[1457] Բայազետի բարբառին բնորոշ մյուս հատկանիշները արևելյան և արևմտյան տարածքներում գրեթե հավասարապես են տարածված:

[1458] Խնդիրը միայն Բայազետի բարբառի կամ Բայազետի ու այլ բարբառների հարաբերությունների՝ ըստ բազմահատկանիշ դասակարգման մեկնաբանություն-ներով չի սահմանափակվում: Դեռևս Մ.Ասատրյանն է նկատել, որ այդ դասակարգմամբ երբեմն բարբառների նույն խմբակցությանը պատկանող խոսվածքները ավելի շատ տարբերակիչ հատկանիշներ ունեն, քան տարբեր խմբակցությունների պատկանող խոսվածքները (տե՛ս Մ.Ասատրյան, Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, Բանբեր Երևանի համալսարանի, 1982, թիվ 1, էջ 94-95):

բարբառային այլ միավորներ ևս) իր հատկանիշների զուգորդումներով գտնվում է արևելյան և արևմտյան բարբառների միջև, ուստի հայ բարբառների շարքում նրա դիրքը ճշգրտելու խնդիր է առաջանում[1460], և քանի որ հարցը միայն Բայազետի բարբառին չի վերաբերում, ուստի այն կարելի է լուծել բազմահատկանիշ դասակարգման սկզբունքների հետագա մշակումով ու ճշգրտմամբ[1461]:

2. ԲԱՅԱԶԵՏԻ ԵՎ ԾՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Բառավիճակագրական քննություն)

Բարբառների փոխհարաբերությունները, նրանց մերձավորության աստիճանը պարզելու առումով անհրաժեշտ է դիտարկել նաև դրանցում բառային զուգաբանությունների դրսևորումները: Հայ բարբառագիտության մեջ, ինչպես ժամանակին նշել է Գ.Ջահուկյանը, դեռևս քիչ ուշադրություն է դարձվում բառային զուգաբանություններին, բառապաշարի բնագավառում զուգահեռներ քիչ են անցկացվում, և այդ զուգահեռները բարբառների մերձավորության աստիճանը պարզելու համար քիչ են օգտագործվում[1462]: Մինչդեռ հնչյունական և ձևաբանական զուգաբանությունների հետ միասին բառային զուգաբանությունները կարող են ավելի ամբողջական պատկերացում տալ

[1459] ՔՎԲ, էջ 13: Ի դեպ, Գ.Ջահուկյանի տվյալներով՝ Վանի բարբառը գրական արևմտահայերենից տարբերվում է 35, իսկ գրական արևելահայերենից՝ 34 հատկանիշներով (տե՛ս ՀԲՆ, էջ 208, 212):

[1460] Մեր աշխատանքներից մեկում (Արևելահայ և արևմտահայ լեզվական իրողությունները Բայազետի բարբառում, «Արդի բանասիրության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2015, էջ 130-138) կարծիք ենք հայտնել, որ Բայազետի բարբառը կարող է դիտվել իբրև միջճյուղային բարբառ՝ նկատի ունենալով Հ.Պետրոսյանի այն դիտարկումը, որ «Ոմանք առանձնացնում են նաև միջճյուղային բարբառներ, երբ տվյալ բարբառը համատեղում է տարբեր բարբառների կամ բարբառաճյուղերի գծեր (ինչպես, օրինակ, Թբիլիսիի, Արեշ-Հավարիքի բարբառները)» (Հ.Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 128):

[1461] Այս դասակարգման հետագա մշակման անհրաժեշտությունը նկատել են նաև Լ.Հովսեփյանը (Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, թիվ 1, էջ 106-111), Հ.Մուրադյանը (Հայ բարբառագիտության անցած ուղին և զարգացման հեռանկարները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, թիվ 4, էջ 15-25), Գ.Հանանյանը (Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2016, թիվ 1, էջ 14-25):

բարբառային միավորների առնչությունների վերաբերյալ: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Գ.Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ բարբառների բառային հիմնական տարբերությունները օգտագործում է համաժամանակյա ուսումնասիրության նպատակով[1463] և ներկայացնում 100 միավոր ընդգրկող ցուցակով, ընդ որում՝ հեղինակը ցուցակը կազմելիս նկատի է առել բառերի կարևորությունը ըստ Մ.Սվոդեշի՝ այդպիսով հայ բարբառների տվյալները համաձայնեցնելով ընդհանուր լեզվաբանական ստանդարտի հետ[1464]: Օգտագործելով Գ.Ջահուկյանի կազմած 100 միավոր ընդգրկող ցուցակը, բառական միավորների գնահատման սկզբունքները[1465] և հետևելով նրա օրինակին[1466]՝ որոշել ենք Բայազետի բարբառի և շրջակա բարբառների բառային հիմնական տարբերությունները[1467]: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ բառային 100 զուգաբանությունների շրջանակում Բայազետի բարբառին առավել մերձավոր է Դիադինի բարբառը՝ տարբերությունների ընդամենը 1 միավոր ցուցիչով[1468] (Բ. խօքի, ջան – Դ. խօքʲի. Բ. վոն, վորը – Դ. վոն): Ըստ Բայազետի բարբառից ունեցած բառապաշարային տարբերությունների՝ հաջորդում են Վանի (10 միավոր. օր.՝ Բ. փօշի – Վ. մոխիր, Բ. կըլեփ – Վ. կորճ, կլեպ, Բ. կուշ – Վ. խավք, Բ. բըմբուլ – Վ. փիտուր ևն) և Խոյ-Մարաղայի (10,5 միավոր. օր.՝ Բ. վառել – Խ. երէլ, Բ. չօք – Խ. ծունգ, Բ. լավ – Խ. աղէկʲ, Բ. քիթ, պինչ – Խ. պինչ ևն) բարբառները: Տարբերությունների ավելի բարձր ցուցիչներ են հանդես բերում Մշո (12,5 միավոր. օր.՝ Բ. ջ՛ոչ – Մ. մենձ, Բ. կըլավ, չաղ – Մ. խըլավ, Բ. մուխ – Մ. մուխ, ծուխ, Բ. թ°զ° – Մ. թաժա, նոր ևն) և Արարատյան (13 միավոր. օր.՝ Բ. տէրեվ, թուփ – Ա. տերև,

---

[1462] Տե՛ս ՀԲՆ, էջ 144:

[1463] Հեղինակը նշում է, որ «....նպատակ չի դնում զբաղվելու բարբառների բառային զուգաբանությունների հանգամանալից ուսումնասիրությամբ, այլ այդ ուղղությամբ կատարելու առաջին, կարելի է ասել՝ նախապատրաստական քայլերը» (ՀԲՆ, էջ 145):

[1464] Տե՛ս նշվ. աշխ., էջ 146:

[1465] «....բառային բացարձակ տարբերությունը գնահատվում է որպես մեկ միավոր, մասնակի համընկումը (համընկնող հոմանիշների առկայությունը)՝ կես միավոր» (ՀԲՆ, էջ 146):

[1466] Տե՛ս նշվ. աշխ., էջ 147-154:

[1467] Տե՛ս Հավելված 5, Աղյուսակ 1-6:

[1468] Գ.Ջահուկյանը գրում է, որ «Գնալով կոպիտ ընդհանրացման ճանապարհով՝ կարելի է նշել, որ բարբառախմբերի բառային տարբերությունների ցուցիչը մեծ մասամբ մեկուկես տասնյակից երեք տասնյակ է, բարբառային տարբերությունների ցուցիչը՝ վեցից մեկուկես տասնյակ, խոսվածքներինը՝ մինչև հինգ միավոր» (ՀԲՆ, էջ 156):

Բ. կըլ ավ, չաղ – Ա. չաղ, Բ. խօքի, ջան – Ա. հոքի, օքմին, Բ. պըստիկ – Ա. պուճուր ևն) բարբառները: Մի շարք դեպքերում Բայազետի բարբառը բառային տարբերություններ է հանդես բերում միայն Մշո (Մ. խածանել – Բ. կծել, Մ. հ՛ավգիթ – Բ. ձու, Մ. իդա, ըդի – Բ. էս, Մ. հ՛ագռա – Բ. °տամ) և միայն Արարատյան (Ա. չանգ – Բ. ճ°նգ, Ա. պոզ – Բ. կօտոշ, Ա. վիզ, շլինք, ճիտ – Բ. վիզ, Ա. պուճուր – Բ. պըստիկ) բարբառներից, մինչդեռ այլ դեպքերում տարբերությունները վերաբերում են մեկից ավելի բարբառների (օր.՝ Վ. մոխիր, Խ. քյուլ, քյօզ, Մ. փոշի, մոխիր, Ա. քյուլ, մոխիր – Բ. փօշի. Վ. խավք, Մ. հավք – Բ. կուշ ևն): Ընդհանրապես նկատելի է, որ ցուցակում ընդգրկված 100 բառերից 27-ի դեպքում է, որ Բայազետի բարբառը հանդես է բերում տարբերություններ համեմատվող բարբառների նկատմամբ: Բառային նման զուգաբանությունները ներկայացնում են մարմնին (մագիլ, փետուր, մազ, եղջյուր, ծունկ, լյարդ, պարանոց, քիթ, գեր, անձ, ատամ), կենդանական ու բուսական աշխարհին (կեղև, թռչուն, ձու, տերև), կենցաղին ու առօրյային (մոխիր, այրել, ընկողմանել, ծուխ, խածանել, երթալ), հատկանիշներին (մեծ, լավ, նոր, փոքր) վերաբերող հասկացություններ, նաև դերանուններ (այս, ով): Այս զուգաբանությունները իրենց բնույթով թերևս հուշում են դիտարկվող տարածական տարբերակներում արձանագրված տարբերությունների՝ բավականին հին ծագում ունենալու մասին, մանավանդ որ, ինչպես նկատել է Գ.Ջահուկյանը, բառային որոշ կարգի տարբերությունների հիմքերը գալիս են գրաբարի շրջանից (ինչպես՝ խածանել – կծանել, մազ – ծամ, պարանոց – վիզ, ծուխ – մուխ, երթալ – գնալ և այլն)[1469]: Ի դեպ, Գ.Ջահուկյանը բարբառախոս մի շարք վայրերի թվում ըստ 100 բառանոց ցուցակի ներկայացրել է նաև Մուշի, Երևանի, Խոյի, Վանի ունեցած բառային տարբերությունները գրաբարից[1470]: Ըստ այդմ՝ Մուշն ունի 24,5 միավոր տարբերու-թյուններ[1471], Խոյը՝ 23 միավոր[1472], Վանը՝ 22 միավոր, Երևանը՝ 20

[1469] Տե՛ս ՀԲՆ, էջ 244:
[1470] Տե՛ս ՀԲՆ, էջ 237-242:
[1471] Գ.Ջահուկյանի աղյուսակում (նշվ. աշխ., էջ 242) նշվում է 25 միավոր, սակայն *լավ* բառի դիմաց կատարված - նշման փոխարեն պետք է լինի ±, որովհետև, ինչպես երևում է հենց Գ.Ջահուկյանի բերած մեկ այլ աղյուսակից (տե՛ս նշվ. աշխ., էջ 146), Մշո բարբառն *աղէգ* ձևից բացի ունի նաև *լավ* բառը:
[1472] Այս դեպքում Գ.Ջահուկյանի աղյուսակի տվյալը՝ 23 միավոր (տե՛ս նշվ. աշխ., էջ 146) պահպանվում է, սակայն *երթալ* բայի դիմաց արված ± նշանի դիմաց պետք է

միավոր: Ինչ վերաբերում է Բայազետի և Դիադինի բարբառներին, ապա առաջինը գրաբարից ունի 28,5 միավոր բառային տարբերություններ, երկրորդը՝ 27,5 միավոր: Այսինքն՝ ըստ բառային հիշյալ 100 զուգաբանությունների դրսևորումների՝ դիտարկվող միավորներից գրաբարին ավելի մոտ է Երևանը, իսկ ամենահեռուն Բայազետը և Դիադինն են[1473]:

Որքան էլ «....բառապաշարի միջուկի հավասարաչափ փոփոխության հայեցակետը և մանավանդ այդ միջուկին պատկանող բառերի սվոդեշյան ցուցակը խոցելի են»[1474], այնուամենայնիվ բառավիճակագրական մեթոդի նման կիրառությունը հնարավորություն տալիս է բառային հիմնական տարբերությունների հաշվառումով գաղափար կազմելու դիտարկվող բարբառների, ինչպես նաև գրաբարի հետ դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ:

Կարծում ենք՝ բառավիճակագրության մեթոդը կարելի է կիրառել նաև բարբառային միավորների առնչությունները ընդհանրությունների միջոցով վեր հանելու համար՝ ընդգրկելով բարբառային լեզվին բնորոշ բառային ավելի մեծ քանակի զուգաբանություններ: Այդ նպատակով մենք Բայազետի և Արարատյան, Մշո, Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառների բառապաշարների առնչությունները դիտարկում ենք ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում ներկայացված հասկացական-բառանվանողական 478 զուգաբանությունների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է որևէ հասկացություն և դրա արտահայտության հնարավոր տարբերակները

լիներ +, քանի որ բարբառում լիարժեք գործառում է *էթալ* բառը (տե՛ս ԽԲ, էջ 195), իսկ *մաղ* բառի դիմաց արված + նշանի փոխարեն պետք է լիներ ±, քանի որ բարբառում գործառում է նաև այդ բառի *ծամ* հոմանիշը (տե՛ս ԽԲ, էջ 198):

[1473] Մենք չենք փորձի այս տվյալների հաշվառումով կատարել ժամանակագրական հաշվումներ՝ որոշելու բարբառների ձևավորման կամ միմյանցից առանձնացման ժամանակը, որովհետև կարծում ենք, որ ցանկացած լեզու իր ձևավորման նախնական փուլում իսկ ներկայացնում է բարբառային վիճակ և ունի բարբառային տարբերակային ձևեր, իսկ մերօրյա յուրաքանչյուր բարբառային միավոր անցել է ձևավորման մշտական ու շարունակական գործընթաց, և սովորաբար դժվար է ճշգրիտորոշել, թե հատկապես երբ այդ միավորը ունեցավ հատկանիշների այն համախումբը, որով կարող է ընկալվել իբրև ինքնուրույն ենթահամակարգ: Բացի այդ՝ Գ.Ջահուկյանը մատնանշել է լեզվաժամանակագրության մեթոդի տված արդյունքների պայմանականությունը, «....մանավանդ որ լեզվի գոյության ոչ մի շրջանում չի կարող լինել տարբեր հատվածների խոսվածքային բացարձակ նույնություն» (ՀԲՆ, էջ 245):

[1474] ՀԲՆ, էջ 243:

բարբառային հայերենում[1475]: Նման դիտարկումը թույլ կտա վեր հանել բարբառների փոխհարաբերությունները ըստ տարբեր ոլորտների հասկացություններ ներկայացնող բառանվանումների բավականին մեծ քանակության: Համեմատվող բարբառների ամբողջական բառապաշարները ներկայացնող աշխատանքների բացակայության պայմաններում մենք Բայազետի բարբառի բառապաշարի տվյալները համեմատում ենք դիտարկվող բարբառների մեկական խոսվածքի տվյալների հետ[1476], որոնք հավաքել են ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցները ըստ ՀԲԱ ծրագրի: Բնականաբար, մեր ստացած վիճակագրական տվյալները ներկայացնում են Բայազետի բարբառի և հենց այդ խոսվածքների փոխհարաբերությունները, սակայն դրանք կարող են ընդհանուր գաղափար տալ նաև ընդհանրապես բարբառների փոխհարաբերությունների վերաբերյալ: Մեր ուշադրության կենտրոնում բառանվանումների ընդհանրություններն են[1477],

---

[1475] Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977, էջ 25-71:

[1476] Հասկանալի է՝ աշխատանքի ծավալը և բուն նպատակը հնարավորություն չեն տալիս ուսումնասիրության ոլորտում ընդգրկելու յուրաքանչյուր բարբառի բոլոր խոսվածքների տվյալները: Մենք ընտրել ենք տվյալ բարբառը ըստ հնարավորին հարազատորեն ներկայացնող խոսվածքներ. Վանի բարբառի տվյալները քաղել ենք Վան քաղաքի խոսվածքը ներկայացնող թիվ 7 տետրից, Մշո բարբառի տվյալները՝ Ալաշկերտի խոսվածքը ներկայացնող թիվ 203 տետրից, Դիադինի բարբառինը՝ թիվ 8ա տետրից, Խոյ-Մարաղայի բարբառինը՝ Խոյը ներկայացնող թիվ 302 տետրից: Հետևում է, որ մեր ստացած տվյալները չեն կարող համընդգրկուն, ամբողջական ու ճշգրիտ լինել (այդպիսիք ստանալ թերևս հնարավոր էլ չէ), սակայն կարող են ներկայացնել փոխհարաբերությունների ընդհանուր բնույթը, որը պարզելն էլ համարել ենք մեր խնդիրը:

[1477] Բառապաշարային ընդհանրությունները դիտարկելիս որպես կանոն հաշվի չենք առնում բարբառների արտաբերական յուրահատկություններով ու հնչյունական օրենքներով, հնչյունափոխական իրողություններով պայմանավորված հնչյունական տարբերությունները (ինչպես՝ տղղասկան ~ տղղացկան ~ դ՛ղղածկան, ջ՛ղխճոր ~ ճղղջոր, վոռվէվերի ~ օռպէվերի, սՊանդոստիկ ~ սալանդոստիկ, իշունց ~ ուշունց, աշկալուս ~ աշկալիս, բ՛ալուլ ~ բարուր, ծընընթկան ~ ծընընտկան, կոլթուղ ~ ղոլթուղ, գ՛աքաթ ~ կՊկՊթ, խեղեղ ~ հէղէղ, հ՛առիք ~ առիք, թընխտրմոր ~ թընտխրմոր), հոդակապի առկայությունը կամ բացակայությունը (ինչպես՝ քավորգին ~ քավորագին, քառթաթոշ ~ քարաթաթոշ), մինչդեռ բառակազմական, քերականական իրողություններով պայմանավորված տարբերությունները (ինչպես՝ մողոզիգ ~ օցմողոզիկ, տՊնիս ~ տանիկ, հ՛էռթիս ~ հէռտիգ, հընգէր ~ հ՛ընգերք, գ՛երէզմըներ ~ կէրէզմանքէր ~ կէրէզմանատուն, փըլավքամիկ ~ փըլավքամիչ, հ՛Պշկալուսանք ~ աշկալուս, քավորկին ~ քավորկընիկ, մէ փըշուր ~ փըշում, վէրցուցել ~ վէրցել, հըմէնկըն ~ զըմէն ~ ամէն, վոն ~ վով ~ վոր), նաև իմաստային նրբերանգ հաղորդող հնչյունափոխական տարբերակները (ինչպես՝ թաթման ~ թաթպան, թէրխորով ~ թարախորով) համարել ենք բառապաշարային զուգաբանական դրսևորումներ: Առանձին դեպքերում բառապաշարային զուգաբանություն ենք համարել նաև հնչյունական օրենքներով չպայմանավորված և բարբառային խոսքի համար էական ու

որոնց քանակով էլ որոշում ենք դիտարկվող բարբառային միավորների մերձակցության աստիճանը:

Ըստ մեր հաշվումների՝ Բայազետի բարբառի և դիտարկվող բարբառային միավորների ընդհանուր բառանվանումները 90-ն են: Դրանցից 28-ը բնիկ բառեր կամ հայերեն կազմություններ են (°մբ[1478], բ՛ութ /մատը/, դ՛ալ, էթալ, թըռնել, թօռմել, լավ, ծ°ռզառթար, կ°րկութ, կէսրար, խէր /հայր/, ձ՛ընծաղիկ, մ°ծուն, մ°տ, մէր /մայր/, մուխ, վոռփէվէրի, վոտ, ս°ր, տ°դմէր, տէրդէր, տիկ, պուպու /բնձ./, նաև՝ գ՛եղ, գ՛էտին, կըպել, ձ՛ավար, ծ°մոն[1479]), 21-ը գավառաբառեր են (բ՛ըշտել, թըխել, կ°կուդ, կօշկել /կոճկել/, կօռծել, կօտ /պատյան, գանգ, ման/, ձ՛ըվածեղ, ճըգըռել, ճըղել, ճութ, մըռսել, պըզուկ, պոչ, պըպըզել, պուտ, ջ՛առթել, շեռ, շըշկըռվել, ցըմփոր, քեռի, քավոր)[1480], 34 -ը փոխառություններ են (°փսոս, բ՛աժնել, գ՛երէզման, ժամ, լալ /համր/, խամար /համար/, խամբըրել /համրել/, կ°պուտ, ն°մ /խոնավ/, պ°տ, չօբան, ս°վայի /բացի/, սիֆտ°կ, վառեկ, փէշ, ք°մ°ր, քիչ /իրան./, գօզլըկ, դըզել, ճիմ, յարա, շըթիլ, չարուխ, չըփխել, սուրու /թրք./, դ՛ըթում, ցեց /աքքադ./, թըզբեխ, վախտ /արաբ./, կ°րաս /խլդ. կամ կովկ./, կ°րիճ /փոքրաս./, կըլեփ /կեղև/, տըղա /ասոր./, ճըկութ /քարթվ./), անհայտ ծագման են 7 բառեր (°նձըրեվ, խօսալ, ծէր /ծայր/, մօռթել, շ°ղ, տ°նել, քամի):

Ճիշտ է, դիտարկվող բառաշերտում զգալի քանակություն են կազմում ընդհանուր հայերենյան բառերի տարբերակները (ամպ, հայր, մայր, տղա, մածուն, ոտք, սար, ձավար, պատ, համար, մորթել ևն), սակայն կարելի է որոշ գաղափար կազմել տվյալ տարածքում հնուց ի վեր (մինչև հայրենազրկումը) բնակված հայության ընդհանուր կենցաղի, պատկերացումների, հագ ու կապի, նաև բնական միջավայրի, բուսական ու կենդանական աշխարհի մասին: Օրինակ, *ամպ, անձրև, կարկուտ, շաղ, քամի, ձնծաղիկ, մրսել* բառերի առկայությունը թերևս կարող է վկայել տարածաշրջանի կլիմայական մոտավորապես նույն պայմանների մասին, *սար, ճիմ* բառերը՝ բնական միջավայրի

տարբերակիչ հնչաձևերը, ինչպես՝ հ՛իշկալ ~ իրիշկել, ցաձը՛ր ~ ցաձ, աձուխ ~ °նձոխ, նը՛շանց տալ ~ շանց տալ ևն:

[1478] Այս և մյուս օրինակները բերում ենք Բայազետի բարբառով:

[1479] Վերջին հինգ բառերը հնդեվրոպական ծագման է համարել Գ.Ջահուկյանը (տե՛ս Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010):

[1480] Ըստ ՀԳԲ-ի:

մասին: Զբաղմունքի, դրանից բխող՝ սննդամթերքի ընդհանրություններ են վկայում *չոբան, սուրու, պոչ, չբխել, մորթել, դալ, մածուն, շըթիլ, դդում, ծավար, ճութ, տիկ, կարաս, կոտ, կործել, վառեկ, ճկռել, ձվածեղ, թխել, մուխ,* նաև՝ *ջարդել, ճղել, բաժնել, դզել, համրել* բառերը: Ընտանեկան հարաբերություններ են ներկայացնում *հայր, մայր, տղա, սկեսրայր, տատմեր, քավոր, որբևայրի, քեռի* բառերը, կրոնական ընդհանուր պատկերացումներ՝ *տէրդէր, ծառզառթար, ժամ, գերեզման* բառերը, հագ ու կապի, գործածվող այլ պարագաների ընդհանրություններ՝ *փեշ, քամար, չարուխ, կոճկել, գոգլիկ, թըզբեհ* բառերը, մարմնի մասերի ընդհանուր անվանումները ներկայացնում են *ոտք, բութ, մատ, ճկույթ* բառերը ևն:

Բարբառային միավորների բառապաշարային ընդհանրություն-ները դիտարկելիս պետք է նկատի ունենալ, որ ինչպես Բայազետի, այնպես էլ մյուս բարբառները նույն հասկացությունը կարող են արտահայտել մեկից ավելի բառանվանումներով (հոմանիշներով) և այդպիսով՝ նույն հասկացությունը արտահայտող տարբեր բառերով ընդհանրություններ ունենալ տարբեր բարբառների հետ: Օրինակ, *սառույց* հասկացությունը Բայազետի բարբառում արտահայտվում է *պ°ղ, պուզ, ս°ռուց* բառանվանումներով. առաջին դեպքում բարբառն ընդհանրություն ունի Դիադինի և Վանի բարբառների հետ, երկրորդ դեպքում՝ Խոյ-Մարաղայի բարբառի և Ալաշկերտի խոսվածքի հետ, երրորդ դեպքում՝ Արարատյան բարբառի հետ: Բացի այդ, դիտարկվող հասկացությունների շրջանակում բարբառային տվյալ միավորը կարող է ունենալ միայն իրեն հատուկ բառանվանումներ, ապա՝ միայն իրեն և որևէ այլ բարբառի հատուկ բառանվանումներ, միայն իրեն և որևէ երկու այլ միավորների հատուկ բառանվանումներ և այդպես շարունակ: Այդ առումով նախ նկատենք, որ քննվող բարբառային միավորների բառապաշարների շրջանակում վերը հիշատակված 478 հասկացությունների բառանվանական դրսևորում-ներում միայն Բայազետի բարբառում արձանագրված բառային միավորների քանակը հասնում է մոտ երեք տասնյակի: Դրանք հիմնականում գավառաբառեր ու հայերեն կազմություններ են (ինչպես՝ լ°մբ°կ /քուղ/, կօծօծ /գարեկ/, պուշ /շիլ/, պըշկել /պոկել/,

տուճ /բղուղ/, °մէք /յուրաքանչյուր/, վոտատեղ /արտաքնոց/, խաց ու պ°նիր /փիփերթ/, խոտկեռ /խոտի խուրձը վերցնելու գործիք/, երկում°տ /եղան/, օցմօղօզիկ /մողես/, մէշու /մէ փշուր/, ծըռնէծըռթիկ /թեթևսոլիկ/, հ՛ընցըցընել /մարել/, կ°րմըրժըռել /երեսը կարմրել/ ևն), նաև փոքրաթիվ փոխառյալ բառեր (ինչպես՝ սէլաֆ /հեղեղ/, վիլկ /եղան/, բալթա /քլունգ/, պ°դարաք /հոգեհաց/): Բայազետի բարբառի հետ մերձավոր բարբառների ընդհանրությունները վերոհիշյալ 478 հասկացությունների բառային արտահայտություններում ունեն քանակական հետևյալ արտահայտությունը. Դիադինի բարբառի հետ՝ մոտավորապես 450 բառ, Վանի բարբառի հետ՝ մոտավորապես 360 բառ, Մշո բարբառի հետ՝ մոտավորապես 350 բառ, Արարատյան բարբառի հետ՝ մոտավորապես 330 բառ, Խոյ-Մարաղայի բարբառի հետ՝ մոտավորապես 330 բառ: Միայն Բայազետի և Դիադինի բարբառներում արձանագրված բառերը ևս քանակով ամենաշատն են՝ հինգ տասնյակից ավելի: Դրանք հիմնականում վերաբերում են *զբաղմունքին, կենցաղին, սննդին ու դրանց հետ կապված իրերին* (ինչպես՝ լաս[1481] /հնձած շերտ/, չօրոց /արոր/, լէսան /հեսան/, միրավ, փիդել /խոտը ձեռքով քաղել/, սաբաթ /զամբյուղ/, ջըռա /կարաս/, կայծ, տաշեղ /կպչան/, տաշտաքէր /ակիշ/, մուռթուղա /խորիզ/, թարախօրօվ, աղու, բըմբըլել, կըռճեփ /կեղև/, մաթ /դոշաբ/), *մարմնի մասերին* (ճիվ /ազդր/, կըռթըլակ /կոկորդ/, պըռունգ /շուրթ/, հափ /բուռ/, ճըտել /թարթել/), *ընտանեկան, միջանձնային հարաբերություններին* (ադէ, ափէր, խօզգին /խնամախոս/, հաշկալուսանք, վոխ, խըրկել /վռնդել/, մաժել, գըռըշտել /հրել/), *կենդանական աշխարհին* (կօտկիրիրա /կրիա/, մօղօզըրիկ): Կան նաև հատկանիշ արտահայտող բառեր (ժօղօվկըրան /մուրացկան/, պինդ /ժլատ/, հավայի /զուր/, ցաձըր, մէ պուտ), դերանուններ (սաղ /ամենքը/, վոն /ով/) ևն: Ինչպես երևում է բերված օրինակներից, դրանք հիմնականում գավառական բառեր են, կան նաև պարսկաարաբաթուրքական, քրդական որոշ փոխառություններ: Բառապաշարի բերված ընդհանրությունները առանձին դեպքերում կարող են վկայել ոչ միայն զուտլեզվական, այլ նաև իրողության

[1481] Երկու և ավելի բարբառների վերաբերող օրինակները բերում ենք ըստ հնարավորին ընդհանուր ձևերով՝ յուրաքանչյուր դեպքում չարտահայտելով բարբառային արտասանական յուրահատկությունները:

դրսևորման ու ընկալման ընդհանրությունների մասին: Օրինակ, «մուրացկան» հասկացության դիմաց երկու բարբառներում գործածվող *ժողովկըրան* բառանվանումը (բարբառային հայերենում գործառում են նաև *մուրական, ուզվոր, օգող, ճարընկան, փայ հըվաքող, ախկատ* բառանվանումները[1482]), որ բաղկացած է *ժողովկ* (ժողովք՝ աղքատի՝ ողորմություն հավաքելը) և *արան* (*անել* բայի *ար* արմատ + *ան* ածանց) բաղադրիչներից, ցույց է տալիս, որ տվյալ բարբառախոս տարածքներում մուրացկանությունը կրել է հանգանակության բնույթ: Հետաքրքրական է նաև «խնամախոս» հասկացության արտահայտումը *խոզգին* բառանվանման միջոցով (այլ բարբառներում՝ *ուզընգան, պատկամավոր, խընամախոս, էլչի*): Բայազետի և Դիադինի բարբառներում մեր արձանագրած *խոզգին* կամ *խոզգընի* բառանվանման առաջին բաղադրիչը, անշուշտ, *խոս* արմատն է, որի *ս* հնչյունը վերածվել է զ-ի հաջորդ ձայնեղի ազդեցությամբ: Դեռևս հին հայերենում այս արմատով կազմված *խոսել* բայն ուներ նաև *հարսնախոսություն անել, նշանել* իմաստները, իսկ *խոսնական* բառը նշանակում էր նաև *հարսնախոսության միջնորդ*[1483]: Կարծում ենք՝ հենց այս վերջին ձևից էլ հնչյունափոխությունների միջոցով ժամանակի ընթացքում կարող էր առաջանալ *խոզգին* բառը՝ *խոսնական* > **խոսընական* > **խոսընգան* > **խոսգան* > **խոզգան* > *խոզգնի* > *խոզգին*: Այս փոփոխություններում հնարավոր է նաև բարբառներում զուգահեռաբար գործառող *ուզընգան* ձևի համաբանական ազդեցությունը: Ընկալումների ընդհանրություն է ներկայացնում նաև *թերխաշ* (ձվի մասին է) հասկացության արտահայտումը *թարախոլով* բառով (այլ բարբառներում՝ *թերխաշ, ծիրանի, կիսաէփ, թէրախում, թէրխոլով*): Պարզ է, որ *թերախորով* բառից այս ձևը առաջացել է ժողովրդական ստուգաբանությամբ՝ իրողությունների որոշ նմանության շնորհիվ:

Բայազետի բարբառը գրեթե նույն քանակի բառանվանողական ընդհանրություններ ունի Վանի բարբառի և Ալաշկերտի խոսվածքի հետ, սակայն միայն Բայազետի և Վանի բարբառներում արձանագրված բառանվանումները ավելի շատ են (մոտ հինգ տասնյակ), քան միայն Բայազետի բարբառում և Ալաշկերտի խոսվածքում արձանա-

[1482] Տե՛ս ՀԲԱ նյութերի հավաքման ծրագիր, էջ 40:

գրվածները (երեք տասնյակից ավելի): Միայն Բայազետի և Վանի բարբառներում դիտված ընդհանուր բառանվանումներում դարձյալ հիմնական քանակությունը կազմում են զբաղմունքին, կենցաղին վերաբերող բառերը (ինչպես՝ *տարթ, փղթիր* /աթար/, *բղռ* /ոչխարի հոտ/, *ճենջ* /ճարպ/, *ծիրանի* /թերխաշ/, *քօք տալ* /արմատակալել/, *խանգուռց անել, քառկապանել* /թելը հանգուցել/, *կակղնալ* /կակղել/), կան նաև հատկանիշների (*բէտ* /մեծ/, *գուլ* /ոչ սուր/, *բօզ* /շեկ/, *լանգ / լընգօ* /կաղ/, *անգալ* /անբան/, *ձեռը խուփ* /ժլատ/, *չընլուդ* /մերկ/), միջանձնային հարաբերությունների (*շիրիք* /հասանելիքը կիսելու հավակնող անձ/, *խաթրին դիբել* /կոպտել/, *գիրկն առնել* /գրկել/, *բասանել* /խոսել/, հ/ընռընկել /խռովել/), անձին վերաբերող իրողությունների (*գընռոտել* /վերքերով պատվել/, *սիռտ թափել* /փսխել/, *լուլու անել* /միզել/, *ջընոտել / ջընջընոտել* /բարկանալ/) բառանվանումներ և այլն: Այս կարգի մի շարք բառեր կարող են վկայել ընդհանուր ընկալումների մասին, օրինակ՝ *ձեռը խուփ, գիրկն առնել, սիռտ թափել, պըտըտել* (զբոսնել), *դընել* (փակել), առնել (դիպչել)ևն:

Միայն Բայազետի բարբառի և Ալաշկերտի խոսվածքի բառանվանողական ընդհանրությունները հիմնականում վերաբերում են զբաղմունքին (կօրի /առու/, մօծիլ /կայծ/, ճավ /ճակնդեղի տերև/, ծոր /հնձած խոտի շերտ/, բընրուսօկ/բօրսօք /հեսան/, քավգիր /փլավքամիչ/, բընմբընլախան անել, լընպկել /պլոկել/) և մարմնի մասերին (ճանգ, փաչա/ազդր/, թիկունք, մընռութ), կան նաև դերանուններ (վոր /ով/, դաս /այստեղ/, դատ /այդտեղ/): Հետաքրքրական է, որ այս դեպքում արևելյան լեզուներից կատարված ընդհանուր փոխառություններին (քավգիր, փաչա, գօռ /գերեզման/, զաբուն /նիհար/) զուգահեռ առկա են նաև ռուսերենից կատարված փոխառություններ (ուբօռնի /արտաքնոց/, բրուսօկ/բօռսօք), որոնք թերևս կարող են փոխառված լինել նոր հայրենիքում[1484]:

Գրեթե հավասար քանակի բառանվանողական ընդհանրություններ Բայազետի բարբառն ունի միայն Խոյ-Մարաղայի և միայն Արարատյան բարբառների հետ (երեք տասնյակից պակաս): Միայն Խոյ-

[1483] Տե՛ս ՆՀԲ, հ. 1, 1979, էջ 997:
[1484] Երկու բարբառներում էլ շատ մեծ քանակություն են կազմում բնականաբար արդեն Արևելյան Հայաստանում ռուսերենից արված փոխառությունները:

Մարաղայի բարբառի հետ ունեցած բառանվանողական ընդհանրությունները վերաբերում են զբաղմունքին, կենցաղին (ինչպես՝ քիլաշ/քուլաշ /ծղոտ/, սըլա /զամբյուղ/, վեսկի /արոր/, բադյա /կովկիթ/, կուռծ /կովի/, աղանձ անել, ատամխատիկ /ատամհատիկ/), մարդու մարմնին (ակռա /սեղանատամ/, ճըպճըպցնել, տաքոց – դոդոց /տենդ/, կըսկըվել /կծկվել՝ ցրտից մատների կուչ գալը/), բնության իրողություններին (շըխկըռտան անձըրեվ /հեղեղ/, մաղրաբ/մըղրըբ /իրիկնապահ/) ևն: Միայն Արարատյան բարբառի հետ ընդհանուր բառանվանումները վերաբերում են շինությանը, տնային իրերին (պադըրհան /պահարան պատի մեջ/, կըտուր, գըլդօրան /կտուրի հողն ամրացնելու գլանաձև քար/, պարան, տէղէր /անկողին/), անվանում են հատկանիշներ (նըխշուն, նըվազ, շըլդիկ), տարբեր իրողություններ (ինչպես՝ տուտ /ծայր/, գըլխավոր /ամուսին/, հանքցընել /մարել/, քըցել, լըկըստըվել /երես առնել/ ևն): Ընդհանուր առմամբ, նկատելի է, որ եթե արևմտյան և Խոյ-Մարաղայի բարբառային միավորների հետ դիտարկվող կարգի ընդհանրություններում որոշակի խմբեր են կազմում զբաղմունքին, կենցաղին, ընտանիքին, մարմնին վերաբերող բառանվանումները, ապա Արարատյան բարբառի հետ ընդհանրություններում ուրվագծվում է շինության ու տնային իրերի անվանումների խումբ: Այս փաստը, հնարավոր է, կարող է վկայել, որ Բայազետի բարբառի առնչությունները մյուս բարբառների հետ ավելի սերտ ու հնից եկող են, քան Արարատյան բարբառի հետ:

Բայազետի բարբառում և միայն շրջակա երկու բարբառային միավորներում արձանագրված բառանվանումները, ըստ մեր հաշվարկների, ունեն քանակական հետևյալ արտահայտությունը. Բայազետի, Դիադինի բարբառներ և Ալաշկերտի խոսվածք՝ մոտ չորսուկես տասնյակ, Բայազետի, Դիադինի և Վանի բարբառներ՝ երեք տասնյակից ավելի, Բայազետի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներ՝ երկու տասնյակից ավելի, Բայազետի, Արարատյան և Դիադինի բարբառներ՝ մոտ երկու տասնյակ: Բայազետի բարբառի ընդգրկմամբ բարբառախոս երեք տարածքների մնացած զուգորդումներից յուրաքանչյուրում (Բ.- Ալ.- Վ., Բ. - Դ.- Խ., Բ.-Ա.-Ալ., Բ.-Վ.-Ար., Բ.-Ալ.-Խ., Բ.-Վ.-Խ.) միայն

դրանցում արձանագրված բառանվանողական ընդհանրությունները կազմում են մոտավորապես մեկ տասնյակ միավոր:

Միայն Բայազետի, Դիադինի բարբառներում ու Ալաշկերտի խոսվածքում արձանագրված բառանվանումներում առանձնանում են կենցաղին, առօրյային ու զբաղմունքին (ինչպես՝ շեմ, ժեխ /աղբ/, փոշի /մոխիր/, կողով, շըխպիկ /շեղբ/, փոկեմաղ /մեծ անցքերով մաղ/, պատալուր /ջրաղացքարի շրջակայքում նստած ալյուրի փոշի/, պառզոն /մածունի տոպրակ/, օղուն /ջրաղացի արկղ/, ջուլ /անկողին/, ջըխճոր /պարանով կապած օրորոց/, մալ /անասուն/, պեծ, պեծիկ /մսի վրայի մանր որդեր/, գըռթան /թուխս/, բըշկուլ /ոչխարի կղկղանք/, կըռընձել /կծղել/, հիստըկջըրել /պարզաջրել/), անձին (ջընազ /կրծքի երկճղի ոսկոր/, գոմփ /բռունցք/, սեվ թոք /լյարդ/, կաժ /շեկ/, պըստի /փոքր/, չըփլախ /մերկ/, սաղնալ /առողջանալ/), ընտանեկան հարաբերություններին (տըղացկան /ծննդկան/, ճիժ /երեխա/, ադե /մայրիկ/, մեկուճար /մինուճար/, կարքըվել /ամուսնանալ/), բուսական աշխարհին (կուտ /կորիզ/, շաֆթալու /դեղձ/, յեղըռճիկ /եղինջ/, սալոմ /ծղոտ/) վերաբերող բառախմբեր, կան նաև հատկանիշի անուններ (գեշ /վատ/, մըռու /կծու/, խախանդ /մարմանդ/) ևն:

Միայն Բայազետի, Դիադինի և Վանի բարբառներում արձանագրված բառանվանումներում ևս առանձնանում են բառապաշարի գործուն շերտին վերաբերող բառախմբեր, ինչպես՝ կենցաղին, զբաղմունքին վերաբերող բառեր (կալեմաղ /մեծ անցքերով մաղ/, փլավքամիկ /փլավքամիչ/, շուղ /շյուղ/, կու /թրիք/, բովել, լխճորել /ճզմել/, գըլորել, փակել , ցփնել /ցրել/, փչել /նվագել/, ֆռալ /զբոսնել/), անձին վերաբերող բառեր (հունթ /անութ/, կըլավ /գեր/, արկոտ /պեպենոտ/, մըտկափոխ /հղի/, թառթել /թարթել/, բետընալ /մեծանալ/, կուզ /կորամեջք/, ծակհաշկ /ագահ/, ծուռ /խենթ/, ճըլոթ /ապտակ/, զանել /հարվածել/, վըզնոց, նեղանալ /հոգնել/), սպասարկու բառեր (գախ/ժամանակ/, դան /անգամ/, չուր /մինչև/, կուշտ/մոտ/) ևն:

Միայն Բայազետի, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում արձանագրված բառանվանումներում դիտարկելի են բառաշերտի առանձին խմբեր ներկայացնող սակավաթիվ բառեր, ինչպես՝ *ցախ, պոպոկ, սիրի-սիրի, աղինջ* (բուսական աշխարհ), *տեղաշոր, ճոճ, թաթման, ոտաշոր* (կենցաղ, հագուստ), հարևան, կիսովի, պաչել, գժվել,

թամախքար, չոփուռ (միջանձնային հարաբերություններ, անձ) և այլն: Բերված այս փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ Բայազետի բարբառը բառապաշարի առումով ավելի սերտկապեր ունի արևմտյան կամ Կը ճյուղի Դիադինի, Վանի, Մշո բարբառների հետ, որն արտահայտվում է գործածական բառաշերտի ավելի մեծ ընդհանրությամբ, հիմնականում հայերենի արևմտյան տարբերակ-ներին բնորոշ բառային միավորների զգալի քանակությամբ (ինչպես՝ փոշի /մոխիր/, կուտ /կորիզ/, պարզոն /մածունի տոպրակ/, ջուլ /անկողին/, տղացկան /ծննդկան/, ճիժ /երեխա/, ադե /մայրիկ/, պեծ /մսի վրայի փոքր որդեր/, գռթան /թուխս/, մեկուճար /մինուճար/, կռնձել /կծղել/, կարգվել /ամուսնանալ/, իմալ /ինչպես/, պաղ, հունթ /անութ/, կու /թրիք/, գախ/ժամանակ/, կլավ /գեր/, ծուռ /խենթ/, բետընալ /մեծանալ/, զանել /հարվածել/, ցփնել /ցրվել/) ևն: Մինչդեռ միայն արևելյան բարբառների հետ արձանագրված բառապաշարային սակավաթիվ ընդհանրությունները ոչ միայն հիմնականում կենցաղին, զբաղմունքին չեն վերաբերում, այլ նաև երբեմն Բայազետի բարբառում ունեն իրենց՝ արևելահայ բարբառներին ոչ հատուկ հոմանիշները, որոնք սովորաբար ավելի գործածական են, ինչպես՝ *ցախ ~ փէդ, պոպոք ~ գուզ, °ղինջ ~ յեղըռճիկ, տեղաշոր ~ ջըլեր, հարևան ~ դ՛ըրկեց, կիսօվի ~ կիսրատ, գըժվել ~ ծըռել* ևն: Բայազետի և մերձավոր բարբառների բառապաշարային տարբերությունների և ընդհանրությունների տվյալների համադրումը ցույց է տալիս, որ երկու դեպքում էլ Դիադինի բարբառից հետո բարբառիս ավելի մերձավոր է Վանի բարբառը: Եթե Բայազետի բարբառից տարբերությունների քանակի աճմամբ այնուհետև հաջորդում են Խոյ-Մարաղայի, Մշո և Արարատյան բարբառները, ապա ընդհանրությունների քանակի նվազմամբ այնուհետև հաջորդում են Մշո, Խոյ-Մարաղայի և Արարատյան բարբառները: Բայազետի և շրջակա բարբառների բառապաշարային առնչությունների դիտարկումը, այսպիսով, թույլ չի տալիս վստահաբար պնդել, որ Բայազետի բարբառի ընդգրկումը բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում[1485] բավարար հիմքեր ունի:

[1485] Տե՛ս ՀԲՆ, էջ 135:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բայազետի բարբառի հնչյունաքերականական ու բառապաշարային համակարգերի, դրանց ձևավորման պատմական ընթացքի, շրջակա բարբառների հետ առնչությունների հետազոտությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները:

1. Պատմական հանգամանքների բերումով Բայազետի բարբառը 20-րդ դարի սկզբներին դադարել է գործառել իր բնօրրանում՝

Բայազետ քաղաքում և համանուն գավառում: 19-րդ դարի սկզբներին իրենց հայրենիքից գաղթած և ներկայիս Գավառ քաղաքում ու շրջակա մեկ տասնյակից ավելի բնակավայրերում հաստատված բայազետցիները պահպանել և սերունդներին են փոխանցել մայրենի խոսվածքը: Տարածական նոր պայմաններում, բայազետցիների սերունդների առավելապես միատարր միջավայրում բարբառը շարունակել և շարունակում է իր բնականոն զարգացումը և ներկայանում է իբրև բարբառային հայերենի ինքնատիպ կայուն միդրսևորում:

2. Բայազետի բարբառը բնութագրվում է հնչյունաքերականական ու բառապաշարային զուգաձևությունների առատությամբ: Խոսքի որոշակի տարբերակվածություն է արտահայտվում ըստ սեռատարիքային խմբերի: Բարբառը յուրահատկություններ է հանդես բերում տարածական բոլոր դրսևորումներում: Իրենց ընդհանրություններով խոսվածքները կազմում են խմբեր, և այդ խմբավորումը պայմանավորված է բարբառակիրների ծագումով:

3. Բարբառի հնչյունական համակարգի հիմքը կազմում են ընդհանուրհայերենյան հնչյունները, հնչյունաբանական ու հնչույթաբանական օրինաչափություններն ու իրողությունները: Բայազետի բարբառի համար բնութագրական են առանձին հնչյունների արտաբերական յուրահատկությունները, երկբարբառային, քմային ու շրթնայնացած ձայնավորների առկայությունը, քառաստիճան բաղաձայնական համակարգը, հնչյունների կապակցման և հնչաշղթայի ձևավորման որոշ առանձնահատկություններ:

Բարբառի ձայնավոր ինը հնչյունները ներկայացնում են նույնքան հնչույթներ, առկա է նաև գերհնչույթ (°/n): Բոլոր խոսվածքների համար ընդհանուր 36 բաղաձայն հնչյունները ներկայացնում են 35 հնչույթներ: Շեշտը վերջնավանկային է, սակայն բազմավանկ բառերի առաջին վանկին ևս բնորոշ է ուժգին արտասանություն, որը երբեմն ունենում է քերականական իմաստների տարբերակման դեր: Շեշտի հետ կապված հնչյունափոխությունները համակարգային հստակ պատկեր չեն ներկայացնում, սակայն որոշ չափով պայմանավորված են վանկաքանակի: Բայազետի բարբառում օրինաչափ բնույթ են կրում

փոխազդեցական հնչյունափոխության բազում դրսևորումներ (որոշակի դիրքերում բաղաձայնների ձայնեղացում, խլացում, ապաշնչեղացում, շնչեղացում, հպաշփականների շփականացում, շփականների հպաշփականացում, բաղաձայնների ձուլում, արտաբերության տեղի փոփոխություն, դրափոխություն, արտակարգ հնչյունափոխություն և այլն): Հնչյունական և հնչյունափոխական մի շարք իրողություններ տարբեր կերպ են դրսևորվում բառապաշարի պատմական տարբեր շերտերում: Առանձին դեպքերում բարբառային իրողությունների վերլուծությունները թույլ են տալիս նորովի մեկնաբանել նույն կարգի գրաբարյան երևույթները:

4. Բայազետի բարբառի հնչյունական համակարգի պատմական փոփոխությունները հիմնականում ներկայացնում են ընդհանուր-հայերենյան գործընթացներ (մենաբարբառացում, հնչյունական նոր միավորների առաջացում, հնչյունների համակարգային անկում և հավելում, այլ կարգի փոփոխություններ՝ արտահայտության որոշակի յուրահատկություններով: Բարբառը բնութագրվում է լեզվի զարգացման նախորդ փուլերին բնորոշ հնչյունական շատ իրողություններով: 5-րդ դարի բարբառային հայերենի համար բնութագրական համարված հիմնական զուգաբանություններից Բայազետի բարբառին բնորոշ են բառասկզբում շնչեղ ձայնեղների գործածությունը, *ն*-ին հաջորդող խուլ հպականների և հպաշփականների ձայնեղությունը, *հ*-ի դիմաց ոչ առնմանական *խ*-ի գործածությունը, *ա*-ի շրթնայնացման երևույթի օրինաչափ դրսևորումը, *ե*-ի և *ո*-ի երկբարբառային արտասանությունը և այլն: Դրսևորվում են նաև գրաբարյան համակարգին առնչվող բարբառային հնչյունական հատկանիշներ, ինչպիսիք են *է-ե, օ-ո, յ-հ* զույգերի՝ գրաբարին բնորոշ հարաբերությունների այս կամ այն կերպ արտացոլումը, բազմավանկ բառերի սկզբում *ե, ո* պարզ ձայնավորների անհնչյունափոխ վիճակի պահպանումը և այլն: Բարբառիս հինհայերենյան բառաշերտում նկատվում է բառասկզբի հպական ու հպաշփական բաղաձայններով ձևավորված հաջորդականություններում արտասանական լարվածության պահպանման կամ նվազման միտում: Միջինհայերենյան շրջանից եկող իրո-

ղություններ են °, *ֆ, կ՛, հ՛* հնչյունների գործածությունը (առաջին երեքը՝ հիմնականում փոխառյալ բառերում), հնչույթային համակարգում տեղի ունեցած տեղաշարժերը, շեշտի հետ կապված հնչյունափոխական իրողությունների ծավալումը և նախաշեշտ վանկում ձայնավորների անկման երևույթը, միավանկ բառերի սկզբում *ե,ո* երկբարբառներից առաջ բաղաձայնական տարրի հավելումը, ձայնավորով սկսվող բառերի սկզբում ձայնեղ հ-ի հավելումը, բառասկզբում ձայնեղ հպականների ու հպաշփականների գործածությունը, հնչյունական մասնավոր շատ փոփոխություններ: Բայազետի բարբառում հնչյունափոխության դրսևորումները գրաբարի և արդի գրական հայերենի համեմատությամբ ավելի ընդգրկուն ու բազմազան են և ավելի մոտ են միջինհայերենյան վիճակին: Գործող հնչյունափոխական օրինաչափությունները որպես կանոն ուղեկցվում են բացառություններով, շեղումներով, որոնք բխում են լեզվի բարբառային վիճակի էությունից և ներկայացնում են հինհայերենյան, միջինհայերենյան, նաև աշխարհաբարյան շրջաններին վերաբերող իրողությունների համադրություն:

5. Բայազետի բարբառի բառապաշարը ներառում է հայոց լեզվի զարգացման տարբեր փուլեր ներկայացնող բառաշերտեր, բարբառային բառեր, տարբեր լեզուներից, գրական հայերենից ու այլ բարբառներից արված փոխառություններ: Հինհայերենյան բառապաշարի ներսում առանձնանում են գրաբարի հետընդհանուր և գրաբարից տարբեր բառաշերտեր: Գրաբարի հետընդհանուր բառերի քանակը հասնում է մոտ 2000-ի: Բայազետի բարբառի՝ միջինհայերենյան գրավոր աղբյուրներում իրենց զուգահեռները ունեցող բառերի քանակը հասնում է մոտ 1000-ի: Դրանց մեջ զգալի քանակություն են կազմում արաբապարսկաթուրքական փոխառությունները, որոնք որոշ տեղաշարժեր են առաջ բերել նաև բարբառի հնչյունական համակարգում: Բայազետի բարբառի աշխարհաբարյան բառաշերտը կազմում են նախորդ փուլերին բնորոշ ձևերին զուգահեռ կամ համապատասխան այլ ձևեր ներկայացնող բառային միավորները, լեզվական նոր, աշխարհաբարյան իրողություններ պարունակող բառաձևերը, նոր ժամանակներին

բնորոշ երևույթներ ներկայացնող աշխարհաբարյան կազմությունները և այլն: Զգալի քանակություն են կազմում ռուսերենից կատարված փոխառությունները: Կատարվել են փոխառություններ նաև գրական լեզվից ու այլ բարբառներից: Բայազետի բարբառի բառապաշարը ներկայացնող մեր կազմած բառացանկում (առանց գրաբարի հետ ընդհանուր բառային միավորների) հաշվվում են 6500-ից ավելի բառային միավորներ:

Բարբառային հայերենի բառապաշարի առավել բնութագրական շերտը կազմող բարբառային բառերը հանդես են բերում տարածվածության տարբերություններ: Բայազետի բարբառի բառապաշարի այդ շերտում տարբերակվում են բառերի երեք խմբեր. ա) բառեր, որոնք հայերենի բարբառներում լայն տարածում ունեն, բ) Բայազետի և այլ, հատկապես՝ շրջակա բարբառներում գործածական բառեր, գ) միայն Բայազետի բարբառում հանդիպող բառեր: Բարբառում զգալի քանակություն են կազմում առավելապես արևմտյան բարբառներում հանդիպող բառերը, գործառվում են նաև բառային միավորներ, որոնք հանդիպում են հիմնականում արևելյան բարբառներում: Բարբառի բառապաշարը, հարուստ լինելով հին իրողություններին, կենցաղին ու գործունեությանը վերաբերող բառերով, հետաքրքրություն է ներկայացնում նաև այլ թեմատիկ խմբերով, դրանց յուրահատկություններով: Բարբառային բառապաշարի իմաստաբանական շատիրողություններ ներկայացնում են շրջակա աշխարհի ճանաչման ու ընկալման յուրահատկություններ: Լայնորեն դրսևորվում են բազմիմաստության, իմաստափոխության, բառերի ձևաիմաստային փոխհարաբերություններին վերաբերող երևույթներ: Բայազետի բարբառում դրսևորվում են բառաբարդման և ածանցման՝ հայերենին հատուկ եղանակները՝ որոշ յուրահատկություններով:

6. Բայազետի բարբառի անվանական համակարգը ընդհանուր առմամբ ներկայանում է աշխարհաբար հայերենին բնորոշ իրողություններով: Բարբառի համար բնութագրական են *եր* և *ներ* հոգնակերտների գործածության որոշ չկարգաբերվածությունը, սահմանափակ գործածություն ունեցող մի շարք այլ հոգնակերտների առկայությունը և դրանց փոխարեն հիմնական

հոգնակերտների գործածության հնարավորությունը, ներգոյական հոլովի բացակայությունը, սեռական և տրական հոլովների տարբերակումը որոշիչ հոդի գործածությամբ, հայցականի ձևային երկփեղկվածությունը (ուղղականաձև և տրականաձև), բացառականի՝ *ց*-ով ձևերի գերակշռությունը, եզակի և հոգնակի թվերում Ի հոլովման բացարձակ գերակշռությունը, Ու հոլովման գործառույթը միայն ձևային ու ձևաիմաստային հիմքերով, այլ, հատկապես՝ ներքին հոլովումների բառերի սակավությունը, որոշիչ հոդի (ը,ն) կիրառությունը միայն ուղղական, տրական և հայցական հոլովներում, կրկնակի հոդառության հնարավորությունը ևն:

7. Ընդհանուր իրողություններից բացի՝ բարբառում արտացոլվում են լեզվի պատմության նախորդ փուլերին բնորոշ՝ անվանական մի շարք այլ հատկանիշներ ևս: Հինհայերենյան շրջանից եկող իրողություններ են *ք, ոանք, անք, ենք* հոգնակերտները, բացառականի *է*-ով ձևը, Ա արտաքին հոլովման դրսևորումները և այլն: Միջինհայերենյան շրջանից եկող իրողություններ են հոգնակերտ մի շարք թեքույթներ (ընդհանրապես, բոլոր հոգնակերտներն էլ իրենց կազմում ունեն հինհայերենյան շրջանից եկող տարր, սակայն հիմնականում ձևավորվել են միջինհայերենյան շրջանում), Ու հոլովման դրսևորումները, Վա հոլովման բառերի բացառականի *է*-ով ձևերը, *հ* հոլովիչից առաջ բառավերջի *ա* ձայնավորի անկման երևույթը և այլն:

8. Բայազետի բարբառում ածականները բառակազմական և իմաստաբանական էական յուրահատկություններ հանդես չեն բերում: Բաղդատական աստիճանը արտահայտվում է շարահյուսական և վերլուծական եղանակներով, գործածվում են նաև բաղդատականի իմաստը նվազեցնող կամ սաստկացնող միջոցներ: Գերադրական աստիճանը արտահայտվում է վերլուծական ու նկարագրական եղանակներով, ածանցմամբ, բառաբարդմամբ, հնչերանգով: Գոյականաբար գործածվելիս ածականները և թվականները ենթարկվում են Ի հոլովման: Վերջիններս ևս էական առանձնահատկություններ չեն դրսևորում: Դասական և կոտորակային

թվականների բարբառային ձևեր չեն գործածվում: Բաշխական թվականները ձևավորվում են բացարձակ թվականի կրկնությամբ:

9. Դերանվանական համակարգում Բայազետի բարբառի համար բնութագրական են անձնական դերանունների՝ թեք հոլովներում զուգահեռ ձևերի առկայությունը, ցուցական դերանունների ձևաիմաստային բազմազանությունը, *ի*-ով ավարտվող ձևերի՝ եզակի թվում Ու հոլովման ենթարկվելը, սրանց թեք հոլովներում *տ*տարրի ներմուծումը, ստացական դերանունների՝ Ու հոլովման ենթարկվելը, *ով* հարցահարաբերական դերանվան իմաստով *վորը, վոն* ձևերի գործածությունը ևն: Ցուցական դերանունները իրենց հավելվածավոր ձևերով առնչվում են *այս, այդ, այն* ձևերի հինհայերենյան դրսևորումներին և թեք ձևերում *սա, դա, նա* դերանունները ներկայացնող իրողություններ չունեն: Հինհայերենյան շրջանից են գալիս նաև *վոն* (ո) ուղղականը և *վիր* (ոյր) սեռականը, միջինհայերենյան շրջանից եկող իրողություններ են անձնական դերանունների *ի, իկ* հավելվածներով, ինչպես նաև կրճատ ձևերը և այլն:

10. Բայազետի բարբառի բայական համակարգը ևս ընդհանուր առմամբ ներկայանում է աշխարհաբար հայերենին բնորոշ իրողություններով: Բարբառի համար բնութագրական իրողությունները այս դեպքում ավելի շատ են: Գործածվում են բաղադրական-քերականական *ն, էն, ան* ածանցները: Բայն ունի երկու խոնարհում՝ Ե և Ա: Ե խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող ներգործական սեռի բայերը ունենում են անցյալի ինչպես անցոյական, այնպես էլ ցոյական հիմք: Բայի սեռը հաճախպայմանավորված է բայիմաստով, կարող է դրսևորվել ածանցմամբ, բայական համապատասխան վերջավորություններով, նաև շարահյուսական միջոցներով: Կրկնասեռ բայերը որոշ դեպքերում ըստ սեռի տարբերակվում են վերջավորություններով, այլ դեպքերում նույն ձևով կարող են արտահայտել տարբեր սեռերի իմաստներ: Կրավորական սեռի իմաստը Բայազետի բարբառում արտահայտվում է շատ ավելի թույլ, քան գրական հայերենում: Բարբառը չունի համակատար և ապակատար դերբայներ: Չունենալով ներգոյական հոլով՝ Բայազետի բարբառն ունի անկատար դերբայ և սահմանական

եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը արտահայտում է վերլուծական եղանակներով: Բարբառում ժխտական դերբայի ձևավորումն ունեցել է յուրօրինակ ընթացք: Գործառում է նաև ձևի դերբայ: *Եմ* բայի անցյալի երկձայնավոր ձևերի մեջ առկա է *է*-ի սղում: Բարբառի վերլուծական ժամանակաձևերի (բացառությամբ հարակատար ներկայի) եզակի թվի երրորդ դեմքում օժանդակ բայի ներկայի ձևը հաճախչի գործածվում: Ենթադրական ապառնու ձևերը լայն կիրառություն ունեն պատմական ներկայի իմաստով: Հարկադրական եղանակի ձևերը Բայազետի բարբառում արտահայտում են նաև սահմանական եղանակի համապատասխան ժամանակների իմաստներ ևն:

11. Բայազետի բարբառում դրսևորվում են լեզվի պատմության նախորդ փուլերին բնորոշ մի շարք բայական հատկանիշներ: Հինհայերենյան շրջանից եկող հատկանիշներ են ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակումը (անցյալ կատարյալ ժամանակաձևում, ըղձական, ենթադրական, հարկադրական ապառնիների եզակի երրորդ դեմքերում, եզակի հրամայականում), *ուկ* վերջավորությամբ հարակատարի դրսևորումը, Ե խոնարհման ներգործական սեռի պարզ բայերի եզակի հրամայականի արտահայտությունը *ա*վերջավորությամբ, անկանոն բայերի որոշ ձևեր և այլն: Միջինհայերենյան շրջանից եկող իրողություններ են *եմ* բայի *ա* ձևը (այս հատկանիշը ներքին զարգացման արդյունք է և առնչվում է ըղձական ապառնու ու հրամայականի, ինչպես նաև հինհայերենյան եզակի հրամայականի համապատասխան ձևերին), պատճառական *ցը ն* ածանցը, վաղակատարի՝ *եր* վերջավորությամբ ձևը, Ա խոնարհման բայերի դեպքում *ան* ածանցի դիմաց *ն*-ի գործառությունը, *կը* եղանակիչով ձևերի՝ պատմական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ արտահայտելու հատկությունը, անկանոն բայերի որոշ ձևեր և այլն:

12. Բայազետի և շրջակա բարբառներն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Իբրև հայերենի դրսևորումներ՝ բոլոր բարբառների հիմքը կազմում են ընդհանուրհայերենյան իրողությունները: Պատմաաշխարհագրորեն մերձավոր լինելը արտահայտվում է նաև բարբառային ընդհանուր

հատկանիշներով, որոնցից են բառասկզբում ձայնավորից առաջ հավելական *հ*-ի առաջացումը, շեշտակիր վանկում *այ* > *է* զարգացումը, միավանկ բառերի սկզբնային *ե*-ից առաջ *յ*-ի և *ո*-ից առաջ շրթնային տարրի հավելումը, նոր փոխառություններում ձայնեղ հպականների ու շփականների դիրքային սահմանափակումների վերացումը, փոխազդեցական հնչյունափոխական ընդհանուր ու մասնավոր բնույթի մի շարք իրողություններ, *ք* հոգնակերտից առաջ *ա* > *է* հերթագայությունը, ընդհանուր մի շարք հոգնակերտների գործածությունը, սեռական և տրական հոլովների տարբերակումը որոշիչ հոդով, ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայությունը, ներգործական սեռի բայերով հարակատար ժամանակաձևեր չկազմելը, բարբառային ընդհանուր բառաշերտը, բառաբարդման ու ածանցման եղանակները ևն: Միայն Բայազետի բարբառին բնորոշ հատկանիշները հազվադեպ են (շրթնային *ա* ձայնավորի դրսևորման օրինաչափություն, *հ* հավելվածով ցուցական դերանունների՝ Ու հոլովմամբ հոլովում, ստացական դերանունների՝ հավելյալ մասնիկներով զուգահեռ կազմությունների բացակայություն):

13. Լեզվի զարգացման նախորդ փուլերից եկող հատկանիշներով ավելի շատ ընդհանրություններ Բայազետի բարբառն ունի Վանի, Դիադինի, Մշո և Խոյ-Մարաղայի բարբառների հետ (*հ-խ* համապատասխանություն, երկբարբառայինների, քմայնացած ձայնավորի առկայություն, վերջնավանկային շեշտ և ձայնավորների անկում բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում, ներգոյական հոլովի բացակայություն, *է*-ով բացառականի ձևերի առկայություն, *ա* հոլովիչի դրսևորում հատուկ տեղանունների բացառական հոլովում, դերանունների թեք հոլովաձևերում *հ*-ով և *հկ*-ով դերանվանական ձևերի առկայություն, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակում, *ուկ*-ով հարակատար և *ր*-ով վաղակատար դերբայների գործառություն և այլն), որը վկայում է բարբառային այդ միավորների հետ Բայազետի բարբառի՝ հնից եկող մերձավորության մասին: Մինչդեռ Արարատյան բարբառի հետ նման ընդհանրությունները քիչ են (շնչեղ ձայնեղների առկայություն /ունեն նաև Դիադինի և Մշո բարբառները/, Ու հոլովման

դրսևորումներ, Ան և Ոջ հոլովումների սակավ գործածականություն, պատճառական բայերի կազմություն *ցըն* մասնիկով), որը թույլ է տալիս ենթադրել, որ Արարատյան բարբառի հետնույն բարբառախմբում Բայազետի բարբառն ընդգրկելու հիմք դարձած ընդհանրությունները հիմնականում սկզբնավորվել են միջինհայերենյան շրջանի վերջերում և ձևավորվել աշխարհաբարյան շրջանում տեղի ունեցած ընդհանուր զարգացումների կամ ազդեցությունների արդյունքում:

14. Բայազետի բարբառը հարևան բարբառներից կրել է որոշակի ազդեցություններ: Այդպիսիք առկա են և՛ հնչյունական համակարգում (°հնչյունի դրսևորումներ հին և նոր բառաշերտերում, որոշ դեպքերում ր>ռ-ից հետո նախնական ձայնեղ հպաշփականի դիմաց պարզ խուլերի դրսևորում, առանձին բառերի ձևավորման յուրահատկություններ), և՛ բառապաշարում, և՛ անվանական (*g*-ով բացառական, հոլովական քարացած որոշ ձևեր) ու բայական (վաղակատար ներկայի հոգնակի երրորդ դեմքում *ած* վերջավորությամբ դերբայական ձևի գործառություն, պատճառական բայերի եզակի հրամայականի ոչ ռեական հիմքով ձևեր) համակարգերում: Սակայն ամենաէականը պետք է համարել, մեր ենթադրությամբ, Արարատյան բարբառի ազդեցությամբ անկատար դերբայի և դրանով կազմված դիմավոր ձևերի առաջացումը թերևս աշխարհաբարյան շրջանում, որի արդյունքում Բայազետի բարբառը, ամենայն հավանականությամբ, Կը ճյուղից անցում է կատարել Ում ճյուղի:

15. Բազմահատկանիշ դասակարգման 100 հատկանիշների շրջանակներում Բայազետի բարբառը բնութագրվում է 37,5 (10,5՝ բաղաձայնական, 8,5՝ ձայնավորական, 9,5՝ անվանական, 9,0՝ բայական) միավոր հատկանիշներով: Բոլոր բարբառներում էլ ամբողջական հատկանիշների բարձր ցուցիչները վկայում են կայուն գործառող, բարբառային միասնական համակարգերի մասին: Շրջակա բարբառներից Բայազետի բարբառին առավել մերձավոր է Դիադինի բարբառը՝ տարբերությունների 14,5 ցուցիչով, սակայն այս երկու միավորները նույն բարբառի մեջ միավորվել չեն կարող, քանի որ իրականում տարբերվում են հատկանիշների ավելի մեծ քանակությամբ: Մյուս բարբառները գտնվում են հավասար հեռավորության

վրա՝ տարբերությունների 28,5-ից 30,5 ցուցիչներով: Հաջորդաբար Բայազետի բարբառին ավելի մոտ է Արարատյան բարբառը՝ տարբերությունների 28,5 ցուցիչով: Ըստ 5-րդ դարում հնարավոր համարված հնչյունաքերականական զուգաբանությունների՝ Բայազետի բարբառին ամենամոտը Դիադինի և Խոյ-Մարաղայի բարբառներն են, իսկ տարբերությունների ամենամեծ ցուցիչն ունի Արարատյան բարբառը: Բայազետի բարբառը զուգորդում է արևելյան և արևմտյան բարբառային միավորներին բնորոշ հատկանիշներ և զարգացումներ: Բարբառի՝ առավելաբար արևմտյան կամ արևելյան բարբառներին հատուկ հատկանիշների մեջ արևմտյան բարբառներին բնորոշ իրողությունները քանակով էականորեն գերազանցում են արևելյաններին բնորոշ իրողություններին: Ուշագրավ է հատկապես հնչյունական հատկանիշների առումով Բայազետի բարբառի զգալի մերձավորությունը արևմտյան բարբառներին: Բայազետի բարբառը բառապաշարի առումով ևս ավելի սերտ առնչություններ ունի արևմտյան կամ Կը ճյուղի Դիադինի, Վանի, Մշո բարբառների հետ, որն արտահայտվում է գործածական բառաշերտի ավելի մեծ ընդհանրությամբ, հիմնականում հայերենի արևմտյան տարբերակներին բնորոշ բառային միավորների զգալի քանակությամբ: Այդպիսով, Բայազետի բարբառը Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում ընդգրկելու հանգամանքը դառնում է վիճահարույց, և բարբառիս դիրքը ճշգրտելու համար առաջ է գալիս բազմահատկանիշ դասակարգման սկզբունքների հետագա մշակման ու ճշգրտման անհրաժեշտություն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառ

ԱՀԲԲ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան

ԱՄԳՀՊ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության

ԴԲ Խաչատրյան Վ., Վարդենիսի (Դիադինի) բարբառը

ԼԲ Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարագյուլյան Թ., Լեզվաբանական բառարան

ԼՔՀԼ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի
ԽԲ Ասատրյան Մ., Ուրմիայի /Խոյի/ բարբառը
ծղր. ծաղրական
ՀԱԲ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան
ՀԲ Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն
ՀԲԱ Հայերենի բարբառագիտական ատլաս
ՀԲԲ Մալխասյանց Ս., Հայերէն բացատրական բառարան
ՀԲՆ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն
ՀԳԲ Աճառյան Հ., Հայերէն գաւառական բառարան
ՀԼԲԲ Հայոց լեզվի բարբառային բառարան
ՀԼՊ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն
ՀԼՊՔ Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն
ՄԲ Բաղդասարյան – Թափալցյան Ս., Մշո բարբառը
ՄՀԲ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան
նխտ. Նախատական
ՆՀԲ Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի
ՊԲՀ Պատմաբանասիրական հանդես
ՔՎԲ Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի

ԼԵԶՈՒՆԵՐ ԵՎ ԼԵԶՎԱՎԻՃԱԿՆԵՐ

արաբ. արաբերեն աշխ. աշխարհաբար
թրք. թուրքերեն բրբռ. բարբառ
պհլ. պահլավերեն գրաբ. գրաբար
պրսկ. պարսկերեն գրկ. գրական
միջ. միջին հայերեն

ԲԱՐԲԱՌՆԵՐ ԵՎ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ա. Արարատյան Ալ. Ալաշկերտի

Ասլ.	Ասլանբեկի	Արծ.	Արծվաքարի
Բ.	Բայազետի	Գ.	Գեղարքունիքի
Դ.	Դիադինի	Գնձ.	Գանձակի
Թբ.	Թբիլիսիի	Գոր.	Գորիսի
Խ.	Խոյ-Մարաղայի	Գվ.	Գավառի
Խրբ.	Խարբերդի	Լ.	Լանջաղբյուրի
Ղրբ.	Ղարաբաղի	Լոռ.	Լոռու
Մ.	Մշո	Ծշ.	Ծաղկաշենի
Ն.-Բզ.	Նոր Բայազետի	Կ.	Կարմիրգյուղի
Ծմ.	Ծամախի	Հյր.	Հայրավանքի
Պլ.	Պոլսի	Հց.	Հացառատի
Ջղ.	Ջուղայի	Մրղ.	Մարաղայի
Ռ.	Ռոդոսթոյի	Ն.	Նորատուսի
Սեբ.	Սեբաստիայի	Ս.	Սարուխանի
Սլմ.	Սալմաստի	Փ.	Փարպիի
Վ.	Վանի		

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբաջյան Ա.**, Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Ե., Երևանի համալս. հրատ., 2006, 444 էջ:
2. **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Զ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 848 էջ:
3. **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976, 558 էջ:
4. **Աբրահամյան Ա.**, Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 333 էջ:
5. **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1953, 441 էջ:
6. **Աբրահամյան Ս.**, Արդի հայերենի դերանունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1956, 354 էջ:
7. **Աբրահամյան Ս.**, **Պառնասյան Ն.**, **Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 585 էջ:
8. Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1906, XIII, 1906, XIV, 1910, XIX:

9. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 496 էջ, հ. Բ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 304 էջ:
10. **Աղաբեկյան Մ.**, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., «Նաիրի» հրատ., 2010, էջ 154-165:
11. **Աղայան Է.**, Գրաբարի քերականություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 363 էջ:
12. **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., Երևանի համալս. հրատ., 1984, 371 էջ:
13. **Աղայան Է.**, Լեզվաբանության հիմունքներ, Ե., Երևանի համալս. հրատ., 1987, 736 էջ:
14. **Աղայան Է.**, Մեղրու բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1954, 407 էջ:
15. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Ներածություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, 494 էջ:
16. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ.,, հ. 1, 1952, 494 էջ, հ. 2, 1954, 478 էջ, հ. 3, 1957, 1011էջ, հ. 4 Ա, 1959, 593 էջ, հ. 4 Բ, 1961, 543 էջ, հ. 5, 1965, 430 էջ, հ. 6, 1971, 845 էջ:
17. **Աճառյան Հ.**, Հայ բարբառագիտութիւն. - Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր-Նախիջեւան, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1911, 307 էջ:
18. **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, Ե., մաս 1, Երևանի համալս. հրատ., 1940, 357 էջ, մաս 2, Հայ պետհրատ, 1951, 609 էջ:
19. **Աճառյան Հ.**, Նոր ձայնական օրէնք մը. ՆՁ = Ձ, Հանդէս ամսօրեայ, 1905, էջ 346:
20. **Աճառյան Հ.**, Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., Պետհրատ, 1935, 399 էջ:
21. **Աճառյան Հ.**, Քննություն Մարաղայի բարբառի, Ե., ԵՊՀ հրատ., 1926, 456 էջ:
22. **Աճառյան Հ.**, Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Ե., 1925, 463 էջ:
23. **Աճառյան Հ.**, Քննություն Վանի բարբառի, Ե., ԵՊՀ հրատ., 1952, 300 էջ:

24. **Այտընյան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1866, 866 էջ:
25. **Առաքելյան Վ.**, **Խաչատրյան Ա.**, **Էլոյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 487 էջ:
26. **Ասատրյան Մ.**, Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, Ե., Բանբեր Երևանի համալսարանի, 1982, 1, էջ 85-102:
27. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1983, 470 էջ:
28. **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքը, Ե., «Միտք» հրատ., 1968. 198 էջ:
29. **Ասատրյան Մ.**, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Ե., ԵՊՀ հրատ., 1962, 256 էջ:
30. **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 400 էջ:
31. **Բաղդասարյան-Թախվեցյան Ս.**, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 356 էջ:
32. **Բաղդասարյան-Թախվեցյան Ս.**, Մշո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 277 էջ;
33. **Բաղրամյան Ռ.**, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., ա.հ., 1972, 226 էջ:
34. **Բաղրամյան Ռ.**, Ծամախիի բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 286 էջ:
35. **Բառնասյան Ջ.**, Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Ե., «Նաիրի» հրատ., 2009, 124 էջ:
36. **Բառնասյան Ջ.**, Ցուցական դերանունների ձևաիմաստային դրսևորումները հայերենի բարբառներում, Ջահուկյանական ընթերցումներ – 2008, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, էջ 25-34:
37. **Գրիգորյան Ա.**, Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., ԵՊՀ հրատ., 1957, 543 էջ:
38. **Գևորգյան Գ.**, Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագրերը, Ե., «Լիմուշ» հրատ., 2013, 242 էջ:
39. **Դանիելյան Թ.**, Մալաթիայի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 253 էջ:
40. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1901, 448 էջ:
41. **Թոխմախյան Ռ.**, Ժամանակակից հայերենի շեշտի բնույթը, Լեզվի և ոճի հարցեր, 3, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 123-207 էջ:

42. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 600 էջ:
43. **Խաչատրյան Ա. Ե.**, Աճառյանը և հայ բարբառագիտությունը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 28-107:
44. **Խաչատրյան Ա. Ե.**, Բարբառների քննության Աճառյանի սկզբունքները (հնչյունաբանություն), Պատմաբանասիրական հանդես, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1976, 1, էջ 145-158:
45. **Խաչատրյան Ա.Ե.**, Հնչյունաբանության ուսումնասիրության սկզբունքները հայ բարբառագիտական աշխատություններում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 2, 1985, ՀՍՍՀ ԳԱ, հրատ. էջ 91-135:
46. **Խաչատրյան Ա. Հ.**, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 220 էջ:
47. **Խաչատրյան Ա. Հ.**, Հ. Աճառյանը հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիր, Լեզվի և ոճի հարցեր, 5, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 59-69:
48. **Խաչատրյան Գ.**, Գրաբար, Ե., Ոսկան Երևանցի, 2014, 492 էջ:
49. **Խաչատրյան Հ.**, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., «Լուսաբաց» հրատ., 2009, 315 էջ:
50. **Խաչատրյան Վ.**, Վարդենիսի (Դիադինի) բարբառը, Ե., «Նաիրի» հրատ., 2004, 252 էջ:
51. **Կատվալյան Վ.**, «Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, ԵՊՀ հրատ., 2012, 2, էջ 48 – 63:
52. **Կատվալյան Վ.**, Արևելահայ և արևմտահայ լեզվական իրողությունները Բայազետի բարբառում, «Արդի բանասիրության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2015, «Վարդան Մկրտչյան Ֆեոդորի» ԱՁ, էջ 130-138:
53. **Կատվալյան Վ.**, Բայազետի բարբառը ըստ բարբառների բազմահատկանիշ դասակարգման, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Ե., «Զանգակ -97» հրատ., 2010, թիվ 2, էջ 181-186:

54. **Կառվալյան Վ.**, Բայազետի բարբառի ձայնավորների ընդհանուր բնութագիրը, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2013, Էդիթ Պրինտ, էջ 179-189:
55. **Կառվալյան Վ.**, Բայազետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունները, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., «Զանգակ» հրատ., 2012, էջ 115-129:
56. **Կառվալյան Վ.**, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., «Հայաստան» հրատ., 2014, 232 էջ:
57. **Կառվալյան Վ.**, Հ – Խ համապատասխանությունը հայերենի բարբառներում, Ե., Պատմաբանասիրական հանդես, 3, 2007, էջ 163-172:
58. **Կառվալյան Վ.**, Հնչյունների համակցական փոփոխությունները ժամանակակից հայերենում (թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր), Ե., 1991, 180 էջ:
59. **Կառվալյան Վ.**, Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը, Ե., «Ապոլոն» հրատ., 2006, 104 էջ:
60. **Կառվալյան Վ.**, Ռուսերեն փոխառություններ Բայազետի բարբառում, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 81-88:
61. **Կառվալյան Վ.**, Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 273-277:
62. **Կառվալյան Վ.**, Ցուցական դերանունների դրսևորման առանձնահատկություններ հայերենի բարբառներում, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԼԱ., Պէյրութ, հրատ. Հայկ. համալս. հայագիտ. ամբիոնի, 2011, էջ 413-425:
63. **Կառվալյան Վ.**, ՔՀՀռախՀնՀք - չՀնՀք (զվարճապատումներ Բայազետի բարբառով), Ե., «Հայաստան» հրատ., 2009, 232 էջ:
64. **Կարստ Յ.**, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., Երևանի համալսարանի հրատ., 2002, 412 էջ:
65. **Կոստանդյան Դ.**, Երզնկայի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 191 էջ:
66. **Հակոբյան Թ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., «Հայաստան», 1987, 256 էջ:

67. Հայ ազգագրություն և բանահյուսություն, 11, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 167 էջ:
68. Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 141 էջ:
69. **Հանանյան Գ.**, Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Ե., ԵՊՀ հրատ., 2016, 1, էջ 14-25:
70. **Հանեյան Ա.**, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., «Նաիրի» հրատ., 2010, էջ 166-231:
71. **Հանեյան Ա.**, Տիգրանակերտի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 230 էջ:
72. **Հարությունյան Հ.**, Նոր Բայազետի գավառը 1828 – 1913 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 294 էջ:
73. **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի և Ղարաբաղի բարբառների առնչության հարցի շուրջ, Ե., Պատմաբանասիրական հանդես, 1977, 1, էջ 144-153:
74. **Հովսեփյան Լ.**, Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Լրաբեր հասարակական գիտությունների, 1, Ե., 1974, էջ 106-111:
75. **Ղազարյան Ռ.**, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., Երևանի համալս. հրատ., 2001, 228 էջ:
76. **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., Երևանի համալս. հրատ., 1981, 402 էջ:
77. **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Ե., ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ. 1953, 457 էջ:
78. **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջ, Ե., Պատմաբանասիրական հանդես, 1958, 3, էջ 240-260:
79. **Ղափանցյան Գր.**, Ընդհանուր լեզվաբանություն, հ.1, Ե., պետհամալս. հրատ., 1939, 355 էջ:
80. **Մադաթյան Ք.**, Ալաշկերտի խոսվածքը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 251 էջ:
81. **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառ, Ե., «Լույս», 1989, 390 էջ:

82. **Մեժունց Բ.**, Ծամշադին-Դիլիջանի խոսվածքը, Ե., ԵՊՀ հրատ., 1989, 224 էջ:
83. **Մելքոնյան Ա.**, Ազգաբնակչության տեղաշարժերը Երզրումի նահանգի Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ գավառներում 19-րդ դ. առաջին երեսնամյակին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1988, 5, էջ 13-24:
84. **Մեյե Ա.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1978, 822 էջ:
85. **Մեսրոպյան Հ.**, Աճականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., «Նաիրի» հրատ., 2010, 320 էջ:
86. **Միքայելյան Ժ.**, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., «Նաիրի» հրատ., 2009, 144 էջ:
87. **Մկրտչյան Է.**, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1980, 152 էջ:
88. **Մկրտչյան Հ.**, Կարնո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, 191 էջ:
89. **Մկրտչյան Ն.**, Բուրդուրի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, 240 էջ:
90. **Մուրադյան Հ.**, Լեզվաբանական աշխարհագրությունը և նրա խնդիրները, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 6-27:
91. **Մուրադյան Հ.**, Հայ բարբառագիտության անցած ուղին և զարգացման հեռանկարները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, 4, էջ 15-25:
92. **Մուրադյան Հ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 347 էջ:
93. **Մուրադյան Մ.**, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 108-183:
94. **Մուրադյան Մ.**, Ծատախի բարբառը, Երևան, ԵՊՀ հրատ., 1962, 227 էջ:
95. **Նավասարդեանց Տ.**, Հայ ժողովրդական հէքիաթներ, Տփխիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 5-րդ գիրք, 1889, 144 էջ, 7-րդ գիրք, Տփղիս, 1891, 135 էջ:
96. **Ոսկանյան Վ.**, Գորան ցեղամիավորումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVI, Ե., 1996, էջ 186-192

97. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, տպ. Մայր աթոռոյ Ս.Էջմիածնի, 1896, 711 էջ:
98. **Պեդերսըն Հ.**, Հայերէն և դրացի լեզուները, Վիեննա, տպ. Մխիթարեան,1907, 264 էջ:
99. **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 346 էջ:
100. **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1959, 2-3, էջ 282-319:
101. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Ե., «Միտք» հրատ., 1964, 71 էջ:
102. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., «Միտք» հրատ., 1969, 290 էջ:
103. **Ջահուկյան Գ.**, **Աղայան Է.**, **Առաքելյան Վ.**, **Քոսյան Վ.**, Հայոց լեզու, Իմաս, Ապրակ, Ե., «Լույս» հրատ., 1980, 528 էջ:
104. **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., Երևանի համալս. հրատ., 1959, 409 էջ:
105. **Սաքապետյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Ե., Երևանի համալս. հրատ., 2006, 495 էջ:
106. **Սիմոնյան Ն.**, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանություններ, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 188-248:
107. **Սմբատյանց Մ.**, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, տպ. Մայր աթոռոյ Ս.Էջմիածնի, 1895, 843 էջ:
108. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., Երևանի համալս. հրատ., 1999, 352 էջ:
109. **Վարդանյան Ա.**, Վայոց ձորի միջբարբառը, Ե., «Տիգրան Մեծ», 2004, 208 էջ:
110. **Փիլոյան Ս.**, Կորած մարգարիտ. Նոր-Բայազէդի կեանքից, Թիֆլիս, տպ. Մ.Դ. Ռօտինեանցի, 1888, 175 էջ:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

111. **Багана Ж, Бондаренко Е, Чернова О**., Теоретические основания изучения проблемы языковой вариативности, Научные ведомости Белгородского государственного университета, Серия Гуманитарные науки. 2012. № 6 (125). Выпуск 13, с. 41-49.

112. **Бенвенист Э**, Проблемы армянского консонантизма, Вопросы языкознания, Москва, изд. АН СССР, 1961, 3, с. 37-39.

113. **Гамкрелидзе Т., Иванов Вяч.**, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, изд. Тбилисского университета, 1984, 1328 с.

114. **Гарибян А**., Об армянском консонантизме, Вопросы языкознания, Москва, изд. АН СССР, 1959, 5, с. 81-90.

115. **Капанцян Г**., Аштаракский говор, Историко-лингвистические работы, т. 2, Ереван, изд. АН Арм. ССР, 1975, с. 430-540.

116. **Зиндер Л**., Общая фонетика, Москва, изд. «Высшая школа», 1979, 312 с.

117. **Лайонз Дж**., Введение в теоретическую лингвистику, Москва, изд. «Прогресс», 1978, 540 с.

118. Меморандум о языковых универсалиях, Новое в лингвистике, выпуск 5, Москва, изд. «Прогресс», 1970, с. 31-44.

119. **Мсерианц Л**., Этюды по армянской диалектологии, ч. I, Москва, тип. Университетская, 1897, 147 с.

120. **Патканов К.**, Исследование о диалектах армянского языка, СПб, тип. Имп. АН, 1869, 109 с.

121. Русская диалектология, под ред. Касаткина Л., Москва, изд. центр «Академия», 2005, 288 с.

122. **Фогт Г**, Заметки по армянскому консонантизму, Вопросы языкознания, Москва, изд. АН СССР, 1961, 3, с. 40-43:

123. **Фурке Ж**, Генезис системы согласных в армянском языке, ВЯ, Москва, изд. АН СССР, 1959, 6, с. 68-77.

124. **Хачатрян А.А**., Природа звонких придыхательных в армянских диалектах, Միջազգայ ին հայ երենագիտական գիտաժողով - 1982, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 327-336.

125. **Хачатрян А.А.**, Природа звонких придыхательных в некоторых армянских диалектах, Лингвистическая география, диалектология и история языка, Ер., изд. АН Арм. ССР, 1976, с. 432-440.

126. **Хоккетт Ч.Ф**., Проблема языковых универсалий, Новое в лингвистике, вып. 5, Москва, изд. «Прогресс», 1970, с. 45-76.

127. **Якобсон Р**., Типологические исследожания и их вклад в сравнительно-историческое языкознание, Новое в лингвистике, вып. 3, Москва, изд. иностр. литер., 1963, с. 95-105.

128. **Allen W.S**., Notes on the phonetics of an Eastern Armenian speaker. Transactions of the Philological Society of America, 1950, 200p.,

129. **Chambers J.K**., Trudgill P., Dialectology, Cambridge, Cambridge university press, 1980, 218p.

130. **Pisowicz A**., Le developpement du consonantisme armenien, Krakow, Wyd. Polskiej Akademii Nauk, 1976, 115p.

131. **Vaux B**., The Phonology of Voiced Aspirates in the New Julfa Dialect of Armenian, 25 p., http://www.academia.edu/4101967

132. **Vaux B**., The Phonology of Armenian, Clarendon press, Oxford, 1998, 280 p.

133. **Weitenberg J.J.S**., Aspects of Armenian dialectology, Present-day Dialectology, Problems and Findings, Berlin –New York, 2002, p. 141-158.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

134. **Աղայան Է**., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976, 1615 էջ:

135. **Աճառյան Հ**., Հայերեն արմատական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., հ. Ա, 1971, 700 էջ, հ. Բ, 1973, 688 էջ, հ. Գ, 1977, 636 էջ, հ. Դ, 1979, 676 էջ:

136. **Աճառյան Հ**., Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1913, 1144 էջ:

137. **Աճառյան Հ**., Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ, համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր Նախիջևանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, հրատ. Հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1902, 386 էջ:

138. **Ամատունի Ս**., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, տպ. Մայր աթոռոյ Ս.Էջմիածնի, 1912, 707 էջ:

139. **Աւետիքեան Գ.**, Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, ի տպ. Ս.Ղազարու, հ.1, 1836, 1141 էջ, հ. 2, 1837, 1067 էջ:
140. **Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., Երևանի համալսարանի հրատ., հ. 1, 1986, 1008 էջ, հ. 2, 1988, 1024 էջ, հ. 3, 1991, 1010 էջ, հ. 4, 1998, 820 էջ:
141. Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Ե., Գեոքարտկենտրոն, ՊՈԱԿ, 2008, 184 էջ:
142. Հայկական սովետական հանրագիտարան, Ե., ՀՍՀ հրատ., հ. 5, 1979, 720 էջ:
143. Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., հ. Ա, 2001, 427 էջ, հ. Բ, 2002, 431 էջ, հ. Գ, 2004, 425 էջ, հ. Դ, 2007, 452 էջ, հ. Ե, 2008, 418 էջ, հ. Զ, 2010, 404 էջ, հ. Է, 2012, 207 էջ:
144. **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2000թ., հ. Ա, 686 էջ, հ. Բ, 658 էջ:
145. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, ԵՊՀ հրատ., հ. Ա., 1987, 420 էջ, հ. Բ, 1992, 472 էջ:
146. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2009, 840 էջ:
147. **Մալխասյանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան, ՀՍՍՌ պետ. հրատ., Ե., հ. Ա, 1944, 608 էջ, հ. Բ, 1944, 512 էջ, հ. Գ, 1944, 614 էջ, հ. Դ, 1945, 646 էջ:
148. **Նավասարդյանց Տ.**, Բառգիրք Արարատեան բարբառի, Տփխիս, տպ. Մովսէս Վարդանեանցի, 1903, 132 էջ:
149. **Պետրոսյան Հ.**, **Գալստյան Ս., Ղարագյուլյան Թ.**, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 317 էջ:
150. **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1987, 686 էջ:
151. **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Ասողիկ», 2010, 820 էջ: